

ՄԵՐ ՀԱՅԻՆՍԿԱՆԻ

Մ. ԹԱԿՄԱՆՅԱՆ

ԶՄՄՓԱՆԵՐԱԿ

9(47.925)

Ք - 79

Ա. ՅԱԿՈԿՅԱՆ
ԵՍԵՅԱՆ
ԾԱՆԿԻՆԵՐԿԻՎ

650
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ . 1975

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը իր նմանը չունի պատերազմների պատմության մեջ: Գերմանական ֆաշիզմի դեմ մեր երկրի տարած հաղթանակը վիթխարի դեր խաղաց հետպատերազմյան համաշխարհային զարգացման գործում: Հետպատերազմյան այս երեսնամյա բարձունքից դիտելով պատերազմի լայնատարած դաշտը, զգում ես, որ այն բաց է անում իր դեռևս չընթերցված էջերը: Պատերազմի ընդհանուր պատմությունը,— գրել է Սովետական Միության մարշալ Ի. Ս. Կոնևը,— կարող է ստեղծվել միայն շատ հիշողություններից: Դրանք ռազմաճակատների ու բանակների, դիվիզիաների ու գնդերի հրամանատարների, գումարտակների, վաշտերի հրամանատարների, կրտսեր հրամանատարների ու զինվորների հիշողություններն են: Միայն այս ամենը միասին վերցրած կարող է լրիվ պատկերացում տալ պատերազմի մասին:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս աշխատությունում շարադրվել է հեղինակի տեսածն ու վերապրածը, ընդգրկված են կարմիր բանակի երեք դիվիզիաների մարտական գործողությունները պատերազմի տարբեր էտապներում և ռազմաճակատի տարբեր տեղամասերում: Նրանցից 136-րդ դիվիզիան իր մարտական գործողությունների երկրորդ ամսում ներկայացվեց գվարդիական կոչման. 390-րդ դիվիզիան գլխավոր դեր խաղաց գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի ջախջախման գործում: Դեպքերի բերումով այդ դիվիզիայի վերջին մարտերի վերաբերյալ փաստաթղթերը չեն պահպանվել: Տողերիս հեղինակը քչերից մեկն է, որը կարող է շատ թե քիչ ամբողջական պատկերացում տալ այդ դիվիզիայի գործերի մասին. 61-րդ դիվիզիան այն դիվիզիաներից մեկն է, որոնք մաս-

նակցել են ֆաշիստական հորդաների ջախջախմանը Արևելյան Պրուսիայում ու Բեռլինում, ինչպես նաև Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրագայում: Պատերազմում իրադարձությունները հաճախ այնպես չեն դասավորվում, ինչպես պլանավորվում են շտաբներում: Հաջողությունների կողքին եղել են նաև սխալներ, երբեմն նույնիսկ աններելի սխալներ՝ մանավանդ պատերազմի առաջին շրջանում: Շատ բան դժվար է գտնել փաստաթղթերում: Մեմուարային գրականությունը որոշ չափով լրացնում է այդ բացը: Ռուսի աշխատեցինք ըստ հնարավորին ցույց տալ վերը նշված դիվիզիաների և նրանց մարդկանց դերը ֆաշիստական հորդաների ջախջախման գործում: Թե որքանով է դա մեզ հաջողվել, այն թողնում ենք ընթերցողին դատել: Լավ է ասել Սովետական Միության մարշալ Կ. Կ. Ռոկոսսոլսկին. «Չպետք է կոտրատվել պատմության հայելու առջև»: Մենք ձգտել ենք գրել այնպես, որ ընթերցողը թղթի տողերից տպագրական ներկի փոխարեն վառողի հոտ առնի:

Մեզ հաջողվել է պատերազմից անմիջապես հետո ներկայացվող նյութերը վերատուգել շտաբի և քաղաքային փաստաթղթերով, մարտերի մասնակիցների հետ անձնական հանդիպումներով և նամակագրությամբ: Պահպանվել են բազմաթիվ լուսանկարներ, իլյուստրացիոն նյութեր և այլն: Սակայն ժամանակն անգույթ է. հիշողության ծալքերից ջնջվել են շատերի անուն-ազգանունները: Թող մեզ ներե՛ն այն ընկերները, որոնց մասին չի խոսվել գրքում: Մեր հիշողություններում աշխատել ենք ցույց տալ Սովետական Միության կոմունիստական կուսակցության ղեկավար և որոշիչ դերը մեր մեծ հաղթանակի գործում: Կուսակցական-քաղաքական աշխատանքը և սովետական մարտիկների հայրենասնվեր գործերը նկարագրել ենք սովետական ժողովուրդների անխախտ բարեկամության, մարդկանց հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ջերմ զգացմունքներով դաստիարակելու հարցերի հետ սերտորեն կապակցված:

Հեղինակ

I. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ

Կիրակի օր էր՝

Առավոտյան տանից դուրս եկա. և փողոցում հանդիպեցի պատանեկան տարիներիս ընկեր՝ Պարունակ Ղազարյանին: Սովորաբար հանգիստ, քախոս, մի փոքր էլ անտարբեր Պարունակը խիստ անհանգիստ էր, այլալվաժ:

— Որևէ բան է պատահել,— խիստ անհանգստացած հարցրի էս:

— Պատերազմ է,— շնչաց նա, թեև շուրջը ոչ ոք չկար:

— Ի՞նչ պատերազմ...

— Իմ հարևանը հաղորդում է լսել Բուխարեստից. այս գիշեր Գերմանիան հարձակվել է Սովետական Միության վրա: Սովետառուսիական սահմանի վրա մեր սահմանապահ զորամասերը ջախջախել են գերմանական մեկ դիվիզիա:

Զնավատացի Պարունակի խոսքերին:

— Զի կարող պատահել, այլապես Մոսկվան որևէ հաղորդում կտար... չէ որ բավական ժամանակ է անցել,— առարկեցի ես:

Պարունակն սկսեց կասկածել հարևանի հայտնած տեղեկությունների վրա... Նա, ինչպես շատերը, կարծում էր, թե ՆԳՖԿ-ն (եւ այն ժամանակ աշխատում էի հանրապետության ներքին գործերի ժողովում) ամեն ինչ գիտի:

— Ինչպես, դու պետք է որ իմանայիր,— տարակուսանքով առաց ես:

Ես բաժանվեցի Պարունակից: Շտապ գնացի ժողովատ: Օպերատիվ հերթապահությունում հետաքրքրվեցի նորություններով, այնուհետև զանգահարեցի Կենտկոմ: Ոչ ոք չկար, ամեն ինչ հանգիստ էր: Համոզվելով, որ ոչինչ չի պատահել, գնացի խաղասենյակ: Այստեղ նույնպես ոչ ոք ոչինչ չգիտեր: Բոլորն զբաղված էին իրենց խաղով, կատակում էին, սրախոսում: Հանկարծ լսվեց բարձ-

րախոսի թույլ ձայնը: Հաղորդավարի ձայնը նման չէր սովորակա-
նին: Հոգուս խորքում նորից գլուխ բարձրացրեց տարակուսանքը:
Խաղասենյակի «տնօրեն» ծերուկ Թաթոսին խնդրեցի բարձրացնել
ռադիոյի ձայնը... «Նույնպիսի կեղծիք ու պրովոկացիա է հանդի-
սանում Հիտլերի այսօրվա ամբողջ դեկլարացիան...»: Չայնը ծա-
նոթ էր, բայց իսկույն շկարողացա որոշել: «Սովետական կառա-
վարութիւնը մեր զորքերին հրաման է տվել ետ մղել ավազակային
հարձակումը և գերմանական զորքերին վռնդել մեր հայրենիքի
տերիտորիայից...»:

— Մոլոտովն է խոսում: Պատերազմ է, — ակամա դուրս թռավ
շուրթերիցս:

Մոլոտովի ձայնը միայն մեկ անգամ էի լսել, Համկ(բ)Կ XVIII
համագումարում, և այն տպավորվել էր մեզս: «Ռուսաստանի վրա
Նապոլեոնի արշավանքին մեր ժողովուրդը պատասխանեց հայրե-
նական պատերազմով, և Նապոլեոնը պարտութիւն կրեց, կրախի
ենթարկվեց: Նույնը կլինի և գոռոզամիտ Հիտլերի հետ...», — շա-
րունակվում էր հաղորդումը, և մենք աշխատում էինք որսալ յուրա-
քանչյուր խոսք:

«Մեր գործն արդար է: Թշնամին կշախչախվի: Հաղթանակը
մերը կլինի»:

Բոլոր կատակածները փարատվեցին: Պատերազմ էր սկսվել...

Տազնապի ազդանշանով հավաքեցինք ժողկոմատի բոլոր աշ-
խատողներին: Դիմեցինք Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Ա.
Հարութիւնովին:

— Ի՞նչ անենք, ինչպիսի՞ ցուցումներ կան:

— Կսպասենք, — կարճ պատասխանեց Գրիգոր Արտեմովիչը:
Ժողկոմատն ուժեղացրեց հերթապահութիւնը, նրա կից օպե-
րատիվ խումբը, մարտական վիճակի բերեց սահմանապահ զորքե-
րը, ուժեղացրեց պետական սահմանների պաշտպանութիւնը, հա-
կաօդային պաշտպանութիւն անընդմեջ ծառայութիւնը, կազմա-
կերպեց արդյունաբերական ձեռնարկութիւնների, էլեկտրակայան-
ների, կարևորագույն կամուրջների, լեռնանցքների, ջրամբարների և
այլ օբյեկտների պաշտպանութիւնը, անցկացրեց հակահրդեհային
միջոցառումներ:

Պատերազմը խախտեց վիթխարի շինարարութիւնն ու ռիթմը,
ընդհատեց մարդկանց խաղաղ կյանքը, խաղաքարտի վրա դրեց

աշխարհի ժողովուրդների բախտը: Գաղտագողի սողոսկելով սո-
վետների երկիր, թշնամին անասնական ատելութիւնով էր տոգոր-
ված այն ամենի նկատմամբ, ինչ կոմունիստական էր: Երկրի արև-
մուտքում այրվում էին քաղաքներն ու գյուղերը, գործարաններն
ու ֆաբրիկաները, դպրոցներն ու հիվանդանոցները, փողոցներում
ու դաշտերում մեռնում էին մարդիկ... ամենուրեք, որտեղ ընկնում
էին թշնամու ումբերը, կործանվում էր ամեն ինչ: Կարմիր բանա-
կի զորամասերը ծանր մարտերով պաշտպանում էին հայրենի հողի
յուրաքանչյուր թիզը: Բայց թշնամին, խելագար մոլուցքով բռնը-
ված, հաշվի չառնելով իր կրած վիթխարի կորուստները, շարժվում
էր մեր երկրի խորքը:

Անծայրածիր սովետական երկիրը լսեց կառավարութիւն հա-
ղորդումը գերմանական ֆաշիստների ուխտադրուժ հարձակման
մասին, մարդիկ, ամբողջովին լսողութիւն դարձած, հավաքվեցին
բարձրախոսների շուրջը: Կայծակի արագութիւնով տարածվեց պա-
տերազմի լուրը: Սովետական ժողովուրդը ցասումով լցվեց ֆա-
շիզմի նկատմամբ: Գործարանների ու ֆաբրիկաների, տրանսպոր-
տի և կապի ձեռնարկութիւնների, կառույցների ու հիմնարկու-
թիւնների, կոլտնտեսութիւնների և սովխոզների, բուհերի ու դըպ-
րոցների կոլեկտիվներում ծայր աստիճան լարված վիճակ էր տի-
րում: Սովետական մարդիկ պարզորոշ տեսնում էին երկրի վրա
կախված վտանգի խորութիւնը: Երկրով մեկ սկսեցին տեղի ունենալ
ցասումնալի միտինգներ: Ելույթ ունեցող բանվորների, կոլտնտե-
սականների, գիտութիւն և կուլտուրայի մարդկանց շուրթերին
հեշտում էին ոչ միայն նզովքի խոսքեր, այլև ամենից առաջ, երդ-
ման և հաղթանակի հավատ արտահայտող խոսքեր, կոմունիստա-
կան կուսակցութիւն և սովետական կառավարութիւն նկատմամբ
մեծ սիրո ու նվիրվածութիւն, հայրենիքի համար իրենց կյանքը
զոհաբերելու պատրաստակամութիւն արտահայտող խոսքեր:
«Մենք, գրողներս, — բոլորի անունից հայտարարեց Մովսես Արա-
զին, — պատրաստ ենք ուզած բոլորին գրիչը փոխարինել սվինով»¹:
Կոմսյոզիտոր Աշոտ Սաթյանն ասաց. «Մենք, Սովետական Հայաս-
տանի կոմպոզիտորներս, պատրաստ ենք մեր կառավարութիւն և
մեր կուսակցութիւն կոշով մտնել փառապանծ կարմիր բանակի

¹ «Սովետական Հայաստան», 24 հունիսի 1941:

շարքերը»¹։ Հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, որ այդ օրերին հանգստանում էր էսենտուկիում, գրեց իր նշանավոր «Ռեալ-մակոչը», «Յաշիգմն իր հետ շղթաներ է բերում, նա ուզում է ճրգմել մեր ազատ եղբայրներին և արատավորել մեր հայրենիքը», — գրում էր նա և կոչ էր անում պաշտպանել «Մեր իգեալների սուրբ արևի տակ» ապրող հզոր և ազատ սովետական հայրենիքը։

Ջեռնարկությունների, կոլտնտեսությունների և սովխոզների ժողովներում մարդիկ բարձր պարտավորություններ էին վերցնում։ Ջերթինսկու անվան հաստոցաշինական գործարանի կոլեկտիվը որոշեց 1941 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 53 տոկոսով, արտադրանքի ինքնարժեքն իջեցնել 22 տոկոսով, էլեկտրաէներգիայի ծախսումը կրճատել 40 տոկոսով, վերացնել խոտանք և թողարկել միայն բարձրորակ արտադրանք, պատրաստել տասնյակ երիտասարդ սրակյալ բանվորներ, կազմակերպել բոլոր բանվորների ու ծառայողների ռազմական ուսուցումը²։

Հայ ժողովրդի տասնյակ-հազարավոր զավակներ մեկնեցին ռազմաճակատ՝ համալրելու հարազատ կարմիր բանակի շարքերը, հարվածելու և ոչնչացնելու ատելի ֆաշիստներին։ Ռազմաճակատ ուղարկելով իրենց ամուսիններին ու որդիներին, կանայք պարտավորվեցին արտադրության մեջ և կոլտնտեսային դաշտերում գրավել նրանց տեղը, ապահովել սոցիալիստական ձեռնարկությունների և կոլտնտեսությունների անխափան աշխատանքը։

Եվ այսպես, սովետական երկիրը կենաց ու մահու գոտեմարտի բռնվեց գերմանական զավթիչների հետ։ Յաշիգմը բնաջնջելու սրբազան գործը դարձավ սովետական ժողովրդի անհետաձգելի խնդիրը։ Հայ ժողովուրդը, բացի այդ, իր առանձին հաշիվներն ուներ գերմանական իմպերիալիստների հետ։ Ամենևին էլ պատահական չէր, որ յուրաքանչյուր հայ իր հարազատին ռազմաճակատ ուղարկելիս կամ նրան նամակ գրելիս մշտապես հիշեցնում էր առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրք ջարդարանների կողմից Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի սովար հատվածի բնաջնջման մասին, որը խրախուսվել և հրահրվել էր

¹ «Սովետական Հայաստան», 24 հունիսի 1941։
² Տե՛ս «Կոմունիստ» թերթ, 3 սեպտեմբերի 1941։

գերմանական իմպերիալիզմի կողմից։ Այդ օրերին ամբողջ ուժով հեշեց հայ ժողովրդի ցասումնալի ձայնը, մի ժողովուրդ, որն իր զավակներին պատվիրան տվեց՝ վրեժ լուծել ֆաշիզմից։ Եվ, երբ թշնամու հորդաները սողոսկում էին մեր երկրի խորքը, սովետական ժողովուրդը կարգաց իր դատավճիռը՝ «Մահ գերմանական օկուպանտներին»։



Հունիսի 22-ի երեկոյան Հայաստանի կուսակցության Կենտկոմում տեղի ունեցավ նեղ խորհրդակցություն։ Հանրապետության ղինվորական կոմիսար գնդապետ Ասատրյանը հաղորդեց ղինկոմիսարիատի կողմից պատերազմի առաջին օրվա ընթացքում ձեռնարկված միջոցառումների մասին։ Անդրկովկասյան ղինվորական օկրուգի ռազմական խորհրդի առաջարկությամբ որոշվեց ստեղծել կործանիչ գումարտակներ՝ հակառակորդի օդային դեսանտների դեմ պայքարելու համար։

Ռազմաճակատներում դրույթունը գնալով բարդանում էր։ Թըշնամին ավելի ու ավելի էր մտնում երկրի խորքը։ Մարդիկ ցանկանում էին որքան հնարավոր է շուտ գրավել իրենց տեղը կատաղի թշնամու դեմ մղվող պայքարում։ Սակայն մարդկանց մի մասի մոտ էլ զգացվում էր վտանգի որոշակի թերազնահատում «Շուտով Բեռլինում կլինենք», — ասում էին նրանք։ Ոմանք էլ լուրեր էին տարածում, թե իբր մեր զորքերն «արդեն ետ են շարտել» թշնամուն, «գուրս են եկել վարչավայի ու ֆյունիգսբերգի մոտ» և այլն։ Այս վտանգավոր տրամադրություններին հակահարված էր տրվում։ Հարկավոր չէր թուլացնել մարդկանց զգոնությունը։ Կործանիչ գումարտակների խնդիրներից մեկն էլ մարդկանց զգոնության էլ ավելի բարձրացումն էր։

Տարակույս չկար, որ թշնամին կջախջախվի իր իսկ սեփական տերիտորիայում։ Սակայն դա հեշտ ու հանգիստ չէր կատարվելու, ինչպես կարծում էին այդ լուրերը տարածողները, թշնամին շատ ուժեղ էր, և պետք չէր թերազնահատել նրան։

Մարդիկ մտովի անդրադառնում էին 1939 թվականի դեպքերին և իրենց հոգեբանորեն նախապատրաստում էին նոր փորձություններին։ Նրանք հասկանում էին, որ կարմիր բանակի նահանջը ժա-

մանակավոր բնույթ է կրում, սակայն հենց այդ նահանջը վիրավորանք էր հարուցում, որը ոչ թե թուլացնում ,այլ, ընդհակառակն, ուժեղացնում էր կարմիր բանակի և սովետական կարգերի անպարտելիության հավատը:

Հուլիսի 1-ի օրվա վերջին տեղի ունեցավ Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի նիստը, որտեղ քննության առնվեց ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմսովետի 1941 թ. հունիսի 29-ի դիրեկտիվը:

Այդ ժամանակ թշնամին սրընթաց հարձակվում էր և, շնայելով մեծ կորուստներին, համառորեն առաջ էր շարժվում մեր երկրի խորքը: Կարմիր բանակը հանդես էր բերում անօրինակ քաջություն և հերոսություն, արյամբ էր պաշտպանում սովետական հողի յուրաքանչյուր թիղը: Գաղազած թշնամին անընդհատ ռազմաճակատ էր նետում նորանոր ուժեր և սպառնում էր ստրկացնել մեր ժողովրդին: Խոսքը սովետական պետության կենսաց և մահվան մասին էր՝ լինել թե չլինել՝ ասված էր դիրեկտիվում: Կուսակցության Կենտկոմը և սովետական կառավարությունը պահանջում էին վերջ դնել բարեհոգությանն ու անհոգությանը: Ամբողջ աշխատանքը ենթարկել գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարին, կովել մինչև արյան վերջին կաթիլը, պաշտպանել Հոկտեմբերյան մեծ հեղափոխության նվաճումները: ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի դիրեկտիվի հիմնական դրույթներն այնուհետև ավելի հանգամանորեն շարդրվեցին 1941 թ. հուլիսի 3-ին՝ Ի. Վ. Ստալինի ելույթի մեջ:

Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն այդ դիրեկտիվն ընդունեց ի ղեկավարություն. կուսակցական և սովետական օրգաններին պարտավորեցրեց «իրենց ամբողջ աշխատանքում ղեկավարվել այդ դիրեկտիվով»: Հանրապետության կուսակցական ակտիվից 16 ընկերներ գործուղվեցին շրջանները՝ ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմսովետի դիրեկտիվը պարզաբանելու և նրա կատարումը կազմակերպելու գործում քաղկոմներին ու շրջկոմներին օգնություն ցույց տալու համար¹:

Այդ օրերին ինձ հանձնարարվեց ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմսովետի որոշման կատարման առնչությամբ աշխատել Սիսիանի, Գորիսի և Ղափանի շրջաններում: Մարդիկ այդ օրերին դարձել էին ավելի զուսպ, կազմակերպված ու կարգապահ. ձեռ-

նարկություններում, կոլտնտեսություններում և հիմնարկություններում աշխատում էին կրկնապատկված եռանդով: Աշխատավոր մասսաների մեծ հետաքրքրությունը Հայրենական պատերազմի ռազմաճակատներում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ ուղեկցվում էր արտադրական ակտիվ գործունեությամբ: Թշնամուն հաղթելու մեր հավատը պայմանավորում էր կոմունիստների ու անկուսակցականների ակտիվության վիթխարի վերելքը:

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմսովետի դիրեկտիվը քննարկվեց շրջկոմների բյուրոների ընդլայնված նիստերում: Մարդիկ հասկանում էին երկրի վրա կախված վտանգի խորությունը, ինչպես նաև իրենց խնդիրները: «Ամեն ինչ ռազմաճակատի համար», «Կկովենք մինչև վերջին մարդը», «Կընկենք, բայց ընկնելով կհաղթենք», — ասում էին կոմունիստներն իրենց ելույթներում: Այս լողունները դարձան բոլոր բանվորների, կոլտնտեսականների, ծառայողների ու երիտասարդ հայրենասերների լողունները:

Երիտասարդությունը համալրում էր բանակի շարքերը: Հարազատները նրանց ճանապարհում էին այս պատվիրանով՝ վերադարձեք միայն հաղթանակով: Ավագ սերնդի ներկայացուցիչներից շատերը, մասնավորապես քաղաքացիական կոնվյուների մասնակիցները, դիմում էին վերադաս օրգաններին, համառորեն խնդրելով իրենց ուղարկել ռազմաճակատ կամ հակառակորդի թիկունք՝ Ֆաշիստական թշնամու դեմ պարտիզանական կովի: Գեռես շէի ամփոփել կատարված աշխատանքը, երբ ինձ կանչեցին ՀԿ(Բ)Կ Կենտկոմ: Տեղի ունեցավ նեղ խորհրդակցություն: Խնդիր էր դրված ստեղծել ժողովրդական աշխարհազոր: ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի ցուցումներին համապատասխան, շրջանների ժողովրդական աշխարհազորները պետք էր միավորել «օկրուզների» մեջ՝ ըստ տերիտորիալ սկզբունքի: «Օկրուզների» ղեկավարներ էին նշանակվում Կենտկոմի այն անդամները, որոնք լավ գիտեին «օկրուզի» մեջ մտնող շրջաններն ու նրանց բնակչությունը, իսկ բնակչությունը ճանաչում էր այդ ղեկավարներին: Հանրապետությունում ժողովրդական աշխարհազորի ստեղծման ժամկետ սահմանվեց 6 օր: Կենտկոմի բյուրոն հուլիսի 12-ին ընդունեց «Ժողովրդական աշխարհազորի կազմակերպման մասին» որոշումը: Ստեղծվեց ժողովրդական աշխարհազորի հանրապետական շտաբ, որի պետ նշանակվեց կապիտան Ա. Տ. Կյուրեղյանը, իսկ նրա տեղակալ և քա-

¹ ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 30, գ. 28, թթ. 122—124:

ղաքական պրոպագանդայի ղեկավար՝ Կենտկոմի պրոպագանդայի գծով քարտուղար Ս. Կ. Կարապետյանը: Ստեղծվեցին շտաբին կից բաժիններ:

Ժողովրդական աշխարհազորի կազմակերպումն օպերատիվ կերպով ղեկավարելու համար հանրապետության տերիտորիան բաժանվեց տեղամասերի, որոնցից յուրաքանչյուրի մեջ մտան մի քանի շրջաններ: Երևանի տեղամասի ղեկավար նշանակվեց Ս. Ա. Ղեվոնդյանը, Վաղարշապատինը (էջմիածին)՝ Ս. Ա. Միրբայելյանը, Աշտարակինը՝ Գ. Տ. Գևորգյանը, Լենինականինը՝ Շ. Մ. Առուշանյանը, Կիրովականինը՝ Մ. Պ. Պապյանը, Դիլիջանինը՝ Ե. Ռ. Հովսեփյանը, Սևանինը՝ Գ. Ա. Արզումանյանը, Ղամաղուտինը (Արտաշատ)՝ Ս. Ն. Ղազարյանը, Միկոյանինը (Նղբգնաձոր)՝ Ա. Ա. Մարտիրոսյանը, Գորիսինը՝ Ս. Հ. Թովմասյանը: Հաստատվեցին նաև տեղամասերի ժողովրդական աշխարհազորների շտաբների պետեր¹:

Պատերազմի դաժան իրականությունը մարդկանցից պահանջում էր սրբություն կենսագործել կուսակցության ու կառավարության բոլոր դիրեկտիվները: Իրենց ողջ էությունը և անզուսպ կրքոտությունը նրանք ոտքի էլան նենգ թշնամու դեմ: Դա վսեմ ցասում էր: Այն ամենը, ինչ ուղարկվում էր գործող բանակ, ռազմաճակատ, մարդկանց քիչ էր թվում: Նրանք ուզում էին անձամբ նետվել մարտի դաշտ և կռվի բռնվել թշնամու հետ: Այդպիսի խնդրանքով Գորիսում ու Ղափանում ինձ դիմում էին ուղղակի խմբերով: Այդ խմբերի անունից խոսում էին քաղաքացիական պատերազմի մասնակիցները՝ Արսեն Քյարունցը, Լևոն Հարությունյանը, Մակար Աղաբաբյանը և ուրիշներ. «Կա՛մ ռազմաճակատ, կա՛մ թշնամու թիկունք՝ պարտիզանական պայքարի: Այս է մեր ցանկությունը», — եզրափակում էին նրանք:

Ազնիվ, բարի «ծերունիներ»: Լսելով նրանց, կարելի էր համոզվել, որ Հայրենական պատերազմին նրանք նայում են քաղաքացիական պատերազմի և իրենց պարտիզանական կռվի դիրքերից: Նրանց համոզելու իմ բոլոր ջանքերը, որ նրանք տարեց մարդիկ են, շատ ավելի օգտակար կլինեն թիկունքում, մասնավորապես ժողովրդական աշխարհազորում և կործանիչ գումարտակներ-

ում, ապարդյուն անցան: Մի՞թե կարելի է մարդուն համոզել մի բանում, երբ նա հոգով ու մարմնով համակված է մեկ այլ բանով: Առաջ անցնելով, սրտի ցավով պետք է ասեմ, որ Արսեն Քյարունցն ու Լևոն Հարությունյանը ընկան մարտի դաշտում: Նրանց համոզում էի հտ կանգնել իրենց մտքից, իսկ ինքս դիմում էի, որ ինձ ևս ուղարկեն ռազմաճակատ: Իմ դիմումը ՀԿ(Բ)Կ Կենտկոմին՝ ինձ ռազմաճակատ ուղարկելու մասին կտրականապես մերժվեց: Ռազմաճակատ ուղարկելու համար Կենտկոմի քարտուղար Գ. Ա. Հարությունովին երկրորդ անգամ դիմեցի հուլիսի 6-ին: Այս անգամ էլ նա կտրականապես մերժեց:

Պետք է խոստովանեմ, որ այդ օրերին ինձ զբաղեցնող միտքը միայն կոմունիստի և սովետական քաղաքացու հայրենասիրական պարտքը չէր: Ինձ շատ էր զբաղեցնում նաև մի ուրիշ հարց, որին խիստ կարևոր նշանակություն էի տալիս: Երբեմն մեր ավագ ընկերները մեզ կշտամբում էին, որ մենք փորձություններ չենք տեսել, չենք պայքարել սովետական կարգերի հաստատման համար: Իմ «երնդակիցներից ոմանք վիրավորանքով էին ընդունում այս կշտամբանքը: Սակայն ես այլ կերպ էի ընկալում այն: Գտնում էի, որ ավագ ընկերները արդարացի են, մենք մեզ չենք փորձել մարտական պայմաններում, վառողի հոտ չենք առել, չենք ստուգել սեփական հաստատակամությունը այնպիսի իրադրությունում, երբ կոմունիստական համոզվածությունը դրսևորվում է կուսակցության գաղափարների համար անձնազոհության դիմելու վճռականության մեջ: Հասել էր զենքը ձեռքին հեղափոխության նվաճումները պաշտպանելու ժամը, ուրեմն պետք էր զնալ ռազմաճակատ և հարվածել թշնամուն:

Իմ համառությունն ստիպեց Հարությունովին տեղի տալ:

— Գե՛լավ, — վերջապես ասաց նա, — երևի դու ճիշտ ես: Կօպասենք: Հնարավոր է ,որ ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը մեզնից աշխատողներ պահանջի ռազմաճակատի համար, այն ժամանակ կտեսնենք:

Ես թեթևացած սրտով դուրս եկա նրա աշխատասենյակից:

Շուտով ՀամԿ(Բ)Կ Կենտկոմից ցուցում ստացվեց գործող բանակում քաղաքական աշխատանք կատարելու համար մորիլիզացնել կուսակցական և սովետական աշխատողներ:

Սգոստոսի 8-ի երեկոյան Կենտկոմի պրոպագանդայի և ազի-

¹ ՄԱ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 30, գ. 28, թթ. 169—171:

տացիայի բաժնի վարիչի տեղակալ Դավիթ Հարությունյանի, կազմբաժնի վարիչի տեղակալ Լիպարիտ Վարդանյանի, կուսակցության Լենինականի քաղկոմի նախկին քարտուղար Սերգեյ Իսրայելյանի, Երևանի քաղկոմի քարտուղար Պետրոս Մելքոնյանի հետ պատրաստվեցինք մեկնելու Թբիլիսի՝ Անդրկովկասյան զինվորական օկրուգ: Հաջորդ օրը մեզ ընդունեց օկրուգի քաղվարչության պետ, բրիգադային կոմիսար Սոլոմկոն: Դավիթ Հարությունյանը նշանակվեց օկրուգի քաղվարչության պրոպագանդայի և ազիտացիայի բաժնի պետ, մյուսներս՝ դիվիզիայի և բրիգադի քաղբաժինների պետերի տեղակալներ: Զրույցն ինձ հետ փոքր-ինչ երկարեց. ես պնդում էի ինձ գործող բանակ ուղարկել, իսկ Սոլոմկոն առարկում էր՝ «Դուք բանակում չեք ծառայել, պատրաստվել է պետք»: Սակայն ես համառոտեցի: Վերջապես նա զիջեց.

— Դե լավ, միայն թե մեր մեջ մնա: Շուտով որոշ զորամասեր ուղվաճակատ ենք ուղարկելու: Ձեզ կուղարկենք 136-րդ դիվիզիա, քաղբաժնի պետի տեղակալ, տեղն ազատ է:

— Ինձ գունդ ուղարկեք:

— Մի խնդրեք. հաջողություն եմ ցանկանում:

Ես մեկնեցի 136-րդ դիվիզիա:

136-րդ Լենինի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Անատոլի Իոսիֆովիչ Անդրեևին ես վաղուց գիտեի: Նա ինձ ընդունեց որպես ծանոթի, խորհուրդ տվեց գնալ դիվիզիայի կոմիսարի մոտ: Գնդային կոմիսար Իվան Ֆյոդորովիչ Աբաուլինի հետ մեր զրույցը աննկատելիորեն վերածվեց Թուրքիայի և Իրանի արտաքին քաղաքականության վերաբերյալ կարծիքների փոխանակության: Հետո նա անցավ գործնական խնդիրներին, համառոտակի ինձ ծանոթացրեց առաջիկայում իմ անելիքների հետ: Քաղբաժինը ղեռնա պետ շուներ, իսկ ես՝ բանակային աշխատանքի փորձ: Դրա փոխարեն քաղբաժնում կային փորձված և մարտերում կոփված աշխատողներ: Առաջին տասն օրում հիմնականում ծանոթացա դիվիզիայի, գնդերի, առանձին զումարտակների և դիվիզիոնների հրամանատարա-քաղաքական կազմի հետ, քաղբաժնի աշխատանքին:

136-րդ հրաձգային դիվիզիան կազմավորվել էր Գորկիում: Նա մասնակցել էր Կարելական պարանոցում մղված մարտերին և «Մաններհայմի գծի» ճեղքմանը: Դիվիզիայի 315 ռազմիկներ, հրամանատարներ և քաղաշխատողներ պարզևատրվել էին Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով, 12 մարդ արժանացել էր Սովետական Միության հերոսի բարձր կոչմանը: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության՝ 1940 թվականի ապրիլի 17-ի հրամանագրով դիվիզիան պարզևատրվել էր Լենինի շքանշանով: Մայիսի 28-ը անմոռանալի օր էր դիվիզիայի ռազմիկների համար. այդ օրը ՄՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Մ. Ի. Կալինինը դիվիզիային և նրա ռազմիկներին հանձնեց կառավարական պարգևները:

136-րդ դիվիզիան ֆիննական կամպանիայից հետո տեղա-

փոխվեց սովետա-Թուրքական սահմանի մոտ: Գիվիզիան համալրվեց: Այսպիսով, գիվիզիայի անձնակազմը հիմնականում բաղկացած էր ուսանողներից և հայերից:

Գիվիզիան իր կազմում ուներ 5 զունդ՝ 3 հրաձգային և 2 հրետանային (հատրիցային և թեթև), 6 առանձին զուսարտակ և գիվիզիոն, մի քանի վաշտ, թիկունքային ծառայություններ: Գա սերտորեն միաձուլվել, հզոր մարտական մի միավորում էր:

Գնում էր մարտական և քաղաքական լարված ուսուցում: Խնդիր էր դրված անձնակազմը, մասնավորապես համալրումը, դաստիարակել գիվիզիայի մարտական տրադիցիաներով և ռազմահակատում գվարդիականների ձեռք բերած մարտական փորձով: Կարմիր բանակի գործող զորամասերը գրավել էին գերմանական հրամանատարությունների մի շարք փաստաթղթեր: Գրանցում կային գաղտնի հրահանգներ և այլ փաստաթղթեր՝ քիմիական թունավոր նյութեր գործադրելու մասին: Այս կապակցությամբ գիվիզիայի շտաբը և քաղաքաժինը մեծ աշխատանք ծավալեցին անձնակազմին քիմիական պաշտպանություն նախապատրաստելու ուղղությամբ:

Օգոստոսի լույս 25-ի գիշերը, երբ մեր զորքերն անցան Իրանի սահմանը, 136-րդ հրաձգային գիվիզիան պաշտպանական բնադիծ գրավեց սովետա-Թուրքական սահմանին մոտ: Մենք բոլոր հիմքերն ունեինք զգուշանալու Թուրքիայի կողմից սպասվող պրովակացիայից: 1941 թվականի հունիսի 18-ին, ՍՍՀՄ-ի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակման նախօրեին, Թուրքիան բարեկամության պայմանագիր ստորագրեց Գերմանիայի հետ, գերմանական ռազմանավերին թողեց Սև ծով, հիտլերյան Գերմանիային մատակարարեց բրոմ և ստրատեգիական այլ նյութեր, երկրում սկսեց անսանձ հակասովետական պրոպագանդա մղել:

Սեպտեմբերի 1-ին հրաման ստացվեց, գիվիզիան մեկնում էր ռազմաճակատ: Ընդհանուր խանդավառություն սկսվեց, մարտիկներն ուրախ էին, որ մեկնում են ռազմաճակատ, սովետական հայրենիքի պաշտպանության համար մղվող պայքարի ամենավտանգավոր և վճռական տեղամասը:

Առաջին էշելոնները մեկնեցին սեպտեմբերի 3-ին: Հաջորդ

օրը, այն էշելոնի մեկնելուց առաջ, որով մեկնում էր գիվիզիայի շտաբը և քաղաքաժինը, 45-րդ բանակի քաղաքաժնի պետ գնդային կոմիսար Մայսայան գիվիզիայի կոմիսարին ներկայացրեց գիվիզիայի հենց նոր նշանակված քաղաքաժնի պետին՝ Վասիլի Տիմոֆևիին: Նա անմիջապես մեկնեց այդ էշելոնի հետ: Քաղաքաժնի մյուս աշխատողները էշելոնների հետ մեկնեցին համաձայն զորքերում տարվող քաղաքատանքի պլանի, իսկ ես հրամանատարության հրամանով մնացի վերջափակ ուժերի հետ:

Մեզ անսպասելիորեն բեռնաթափեցին Դոնի Ռոստովում: Ժամանեց Գերագույն Գլխավոր հրամանատարության Զորակայանի մեծ հանձնաժողովը: Պարզվեց, որ գիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Անդրեևը կասկած էր արտահայտել գիվիզիայի մարտունակության մասին: Բոլորը տարակուսանքի մեջ ընկան և միմյանց հարցնում էին՝ ի՞նչ է պատահել: Ինչպե՞ս էր նրա տարակուսանքը հայտնի դարձել Զորակայանին: Ինչո՞ւ ստուգումը չէր կարելի անցկացնել Անդրկովկասում, ռազմաճակատ մեկնելուց առաջ: Մենք բոլորս մի տեսակ ճնշող տրամադրության մեջ ընկանք:

Ժամանած հանձնաժողովը մեկ շաբաթ մանրակրկիտ ստուգեց գիվիզիան: Զորակայանի հանձնաժողովի անդամ բրիգադային կոմիսար Ավրամովը ինձ հանձնարարեց հույժ շտապ կազմել գիվիզիայի բնութագիրը՝ մարտունակությունը, անձնակազմի քաղաքական-բարոյական վիճակը, մարտական գործողություններին պատրաստ լինելը: «Ստիպված եք մենակ աշխատել, իսկ ժամանակը շատ կարճ է», — ասաց Ավրամովը և գնաց: Այսպես, ես մնացի Պերվոմայսկի զբոսայգում, որտեղ տեղավորված էր գիվիզիայի վարչությունը:

Ինձ՝ քաղաքացիական մարդուս, և գիվիզիայում՝ նորեկիս համար դա ծանր հանձնարարություն էր: Ստիպված էի ուշադիր ծանոթանալ շտաբի ու քաղաքաժնի որոշ փաստաթղթերին, մի շարք նյութեր խնդրել հատուկ բաժնի պետից: Աշխատեցի գիշեր ու ցերեկ: Գիվիզիայի մարտական և քաղաքական բնութագիրը Զորակայանի հանձնաժողովին հանձնվեց սահմանված ժամկետում:

1 Ավելի ուշ հայտնի դարձավ, որ գեներալ Անդրեևը, անտեսելով գիվիզիայի կոմիսար Արամովին, Զորակայանին հեռագիր էր ուղարկել, որտեղ պնդում էր, որ գիվիզիան «նախապատրաստ է» մարտական գործողություններին:

059

ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. Հ. Բովմայան
ՀԱՅԿԱԳՏՈՐԵՅԱՆ ԽՆՏԻՆ

Հաստատվեց այն կարծիքը, որ դիվիզիան մարտունակ է, անձնակազմը և ամբողջությամբ վերցրած դիվիզիան պատրաստ են մարտընչելու գերմանական Ֆաշիստների դեմ և սպասում են հրամանատարության հրամանին:

Գերագույն Գլխավոր հրամանատարության Զորակայանի հանձնաժողովը համոզվեց, որ դիվիզիան պատրաստ է մարտական գործողությունների և որ դա ոչ մի կասկած չի հարուցում: Գեներալ-մայոր Ա. Ի. Անդրեևը հանվեց դիվիզիայի հրամանատարի պաշտոնից: Նա մեկնեց Զորակայանի տրամադրության տակ: Դիվիզիայի հրամանատար նշանակվեց մարտական փորձ ունեցող փոխգնդապետ Ծմելյան Իվանովիչ Վասիլենկոն¹:

Սեպտեմբերի 15-ին, ժամը 12-ին, Ռոստովից դուրս եկան դիվիզիայի առաջապահ ստորաբաժանումներով բեռնավորված էշելոնները: Դրան հետևեցին մյուս էշելոնները: Շանապարհին, Վոլնովախայից այն կողմ, հանդիպեցինք վիրավորների էշելոնի: Ծայր առավ աշխույժ զրույց: Վիրավորները երիտասարդ տղաներ էին: Մի սերժանտ պատմում էր մարտերի մասին և կատակում. «Ֆրիցը ամենից շատ վախենում է սվինամարտից: Հենց որ սվինամարտ է սկսվում, անասելի վայնասուն է բարձրանում, ոմանք իրենց կորցնում են, ոմանք էլ աղաչում՝ «Ռո՛ւ, մի ծակիր»»:

Մի պատանի կարմիրբանակային, պատասխանելով մեր հարցին, ասաց.

— Ես չեմ վախենում: Դժվարը միայն առաջին մարտն է: Հետո սարսափելի չէ: Այ, շուտով ռազմաճակատ կվերադառնամ:

Վիրավորների տրամադրությունը բարձր էր: Նման մարդկանց չես հաղթի: Մենք աշխատեցինք, որ մեր մարտիկներից շատերը լսեն նրանց:

¹ Ս. Ի. Վասիլևի և Ա. Ի. Դիկանի «Տասնհինգերորդի զվարդիականները» գրքում (ՍՍՀՄ ՊՄ-ի գինհրատ., Մոսկվա, 1960 էջ 30) ասված է, թե իբր փոխգնդապետ Ե. Ի. Վասիլենկոն 136-րդ դիվիզիան ընդունել է գնդապետ Ս. Ի. Չերեչյակից և Մելիտոպոլի շրջանում: Սա չի համապատասխանում իրականությանը: Գեներալ-մայոր Չերեչյակը դիվիզիայից հեռացել էր դեռ մինչև դիվիզիան վերատեղաբաշխվելը: Չերեչյակից հետո դիվիզիայի հրամանատարն է եղել գեներալ-մայոր Օբորինը, հետո գեներալ-մայոր Անդրեևը: Վասիլենկոն 136-րդ դիվիզիան Անդրեևից ընդունեց 1941 թ. սեպտեմբերի 14-ին Դոնի Ռոստովում:

1. ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ

Թշնամին, իհարկե, հետևում էր մեր զորքերի շարժմանը: Նրա ինքնաթիռները հայտնվում էին մեր էշելոնների վրա: Դիվիզիայի զենիթայինները ըջում էին նրանց: Սեպտեմբերի 17-ին և 18-ին թշնամու մի քանի ինքնաթիռների հաջողվեց ուժեղորեն նետել: Բայց մեծ վնաս չպատճառեցին. մի ռազմիկ վիրավորվեց, երկու ձի սպանվեց: Սեպտեմբերի 18-ին դիվիզիան կենտրոնացավ Մելիտոպոլից հյուսիս-արևելք ընկած շրջանում: Այդ պահից սկսած նա համարյա ամբողջ ժամանակ գտնվում էր շարժման մեջ, մտնելով մերթ Թ-րդ, մերթ 18-րդ բանակների կազմի մեջ: Սեպտեմբերի 20-ին մեր ստորաբաժանումներից մեկը ենթարկվեց ուժգին ռումբակոծության:

18-րդ բանակի հրամանատարի հրամանով սեպտեմբերի 21-ին դիվիզիան դիրքեր գրավեց Պլոդորոդիե գյուղի շրջանում, պատրաստվելով հարձակման: Գնդերն անհամբերությամբ սպասում էին ազդանշանի, բայց այդպես էլ հարձակման ազդանշան չեղավ: Քիչ հեռու մարտեր էին մղում 15-րդ դիվիզիայի զորամասերը: 733-րդ գնդի հրամանատար գնդապետ Ալեքսանդր Տավանցևը առաջարկեց գնալ մոտակա մարտի հատվածը՝ դիտելու մարտը: Խրամատներում մարդիկ քիչ կային, և կրակի խտությունը չէր զգացվում: Մինչ մենք դիտում էինք, գերմանացիները փորձեցին գրոհի ենել, բայց, ընկնելով մեր ռազմիկների կրակի տակ, պառկեցին: Նրանք նույնպես շատ չէին:

— Կոմիսար,— ականջիս շնչաց Տավանցևը,— հավատացած եմ, որ իմ գունդը այս հատվածում արագորեն կջարդեր գերմանացիներին և հեռու, շատ հեռու կշարտեր նրանց: Դուք համոզված չե՞ք:

Ինձ մնում էր համաձայնել նրա հետ:

Այդ օրը մեր զենիթայինները խփեցին գերմանական մի ինքնաթիռ: Օդաչուն գերվեց: 22-ամյա հաղթանդամ շիկահեր երիտասարդ օդաչուն, որ կրում էր երկաթե խաչ, հարցերին պատասխանում էր հանգիստ, ինքնավստահ: Նա ցուցմունք տվեց, որ իր հաշվում ունի 30 մարտական թռիչք Վարշավայի և Լոնդոնի վրա: «Արևելյան ռազմաճակատում» առաջին իսկ թռիչքն անհաջող ավարտվեց:

Յրվա երկրորդ կեսին գերմանացիները մոտեցան մեր ստորաբաժանումներից մեկի դիրքերին և փորձեցին գրոհել: Ետ մզելով գրոհը, մեր հետակախիներն անցան հակահարձակման, ետ շարտեցին նրանց և սկսեցին հետապնդել: Բայց դիվիզիայի հրամանատարը նրանց հրամայեց վերադառնալ իրենց ելման դիրքերը:

Գա մեր դիվիզիայի ռազմիկների առաջին հանդիպումն էր հակառակորդի հետ:

Սեպտեմբերի 23—27-ը կրկին սկսվեցին մանևրները Ձապորոժեի մարզի Պլոդորոդիեի, Լյուբիմովկայի, Միխայելովկայի, Վոլկովկայի շրջաններում, ընդ որում զորամասերն իրենց դասավորման վայրերից հանվում էին հանկարծակի, մեծ անհարմարություններ ստեղծելով կապի սպանների, քաղբաժնի և այլ ծառայությունների աշխատողների համար: Գնդերը անսպասելի հանվում էին իրենց դիրքերից, իսկ ճանապարհին գտնվողները ստիպված էին լինում որոնել նրանց: Այդ մանևրների ժամանակ մեր առանձին ստորաբաժանումներ տեղ-տեղ անսպասելի ընդհարվում էին դեպի արևելք ճեղքող թշնամու զորքերի հետ:

Վոլկովկա գյուղում նման անսպասելի մարտերի ժամանակ գերվեցին մի քանի տասնյակ ռումինացիներ: Նրանց մեջ կային նաև սպաներ: Գերիներն արժեքավոր տեղեկություններ հայտնեցին ռումինական լեռնահրաձգային կորպուսի մասին: Ռումինացի զինվորներն աշխատում էին համոզել, որ իրենք հարկադրաբար են կռվում, գերմանացիները չեն վստահում ռումինացիներին, նրանց ետևում կարգում են արգելափակիչ ջոկատներ: Սպաները շարանում էին զինվորների վրա, բայց ոչինչ անել չէին կարող:

Մանր օրեր էին: Հակառակորդը, շնայելով իր վիթխարի մարդկային ու տեխնիկայի կորուստներին, համառորեն սողոսկում էր մեր երկրի խորքը: Օգոստոսի 21-ի իր հրամանի մեջ Հիտլերը «Հարավ» բանակախմբին առաջադրանք էր տվել մինչև ձմռան վրա հասնելը... գրավել Ղրիմը, Դոնեցի արգյունաբերական և ածխային շրջանները և, որպես «գլխավոր խնդիր», ռուսներին զրկել Կովկասից նավթ ստանալու հնարավորությունից»¹: Սեպտեմբերի

¹ Տե՛ս «Նիստ գաղտնի: Միայն հրամանատարության համար»: Յաշխտական հերմանիայի ստրատեգիան ՍՍՀՄ-ի դեմ մղած պատերազմում: Փաստաթղթեր և լույսիկներ «Նառվա» հրատարակչություն, Մոսկվա, 1967, էջ 317:

20-ին հակառակորդը գրավեց Կիևը, ազատելով կիևյան պլացդարմին գամված իր զորքերին: «Հարավ» բանակախումբը պատրաստվում էր նոր հարձակման, որի սկիզբը նշանակված էր հոկտեմբերի 2-ը: Հարձակմանն աջակցում էր շորրորդ օդային բանակը: Գերմանացիների 17-րդ և 1-ին տանկային բանակները հարձակումն սկսեցին Կրեմենչուգի շրջանից ուղղութուն վերցնելով դեպի Խարկով և Կուրսկ: Բերիսլավսկի և Խերսոնի պլացդարմից Ղրիմի վրա հարձակվեցին գերմանական 11-րդ բանակը և ռումինական զորքերը, սեպտեմբերի վերջին գրոհի ենթարկվեցին Պերեկոպի մեր դիրքերը: Կախովկայի և Փոքր ու Մեծ Բելոգերկաների շրջանում գերմանացիները կենտրոնացրել էին գերմանական երկու դիվիզիա և 1-ին ռումինական լեռնահրաձգային կորպուսը: Նրանց խնդիրն էր՝ 1-ին տանկային բանակի միավորումների հետ ճեղքել մեր զորքերի պաշտպանությունը, շրջապատել և ոչնչացնել մեր 9-րդ բանակը և դրանով իսկ ճանապարհ հարթել դեպի Ռոստով:

9-րդ բանակը ծանր մարտեր էր մղում Դնեպրի աջ ափին և գտնվում էր թշնամու կողմից օղակվելու սպառնալիքի տակ: Նա մարտերում թուլացել էր: Տեղ-տեղ շրջապատման մեջ ընկած մարտիկներն ու հրամանատարները շարունակում էին մանր խմբերով դուրս գալ շրջապատումից և միանալ մեր զորամասերին:

Սեպտեմբերի 27-ին 136-րդ դիվիզիան ստացավ Հարավային ռազմաճակատի մարտական հրամանը՝ անցնել հարձակման: Դիվիզիայի խնդիրն էր՝ Փոքր Բելոգերկայում ջախջախել 1-ին ռումինական լեռնահրաձգային կորպուսի զորամասերը և նրանց ետ շարտել արևմուտք: Օպերացիայի նպատակն էր՝ տապալել մեր 9-րդ բանակի շրջապատման՝ հակառակորդի պլանը: Հարձակման սկիզբը նշանակված էր սեպտեմբերի 28-ի առավոտյան: Դիվիզիայի համար դա մեծ իրադարձություն էր, առաջին մարտական մկրտությունը: Դիվիզիայի հրամանատար գնդապետ Վասիլենկոն շտաբում թելադրում էր հարձակման մարտական հրամանը, իսկ քաղբաժնում խորհրդակցություն էր. քաղբաժնի պետ Վասիլի Տիմոֆեևը առաջադրանքներ էր տալիս զորամասերի, առանձին գումարտակների և դիվիզիոնների կոմիսարներին, քաղբաժնի աշխատողներին, իսկ բանակի ներկայացուցիչը հաղորդում էր հրամանատարության ցուցումները:

Կապի առանձին գումարտակում անցկացրած միտինգից վերադարձավ կուսակցական հանձնաժողովի քարտուղար ավագ քաղաքի Դմիտրի Տարչինը: Տարչինն ասաց. «Խոսքեր չեմ գտնում պատմելու, թե ի՞նչ ցնծությամբ անցավ միտինգը, թե որքան մեծ էր ոգևորությունը: Ես ուղղակի հիացած եմ»: Ամենուրեք նման ոգևորություն էր տիրում: Քիչ է ասել, թե հարձակման հրամանը մարդիկ հրճվանքով ընդունեցին: Շատ միտինգներում սեփական նախաձեռնություններ բանաձևեր ընդունեցին՝ պայքարել գվարդիական դիվիզիայի կոչման համար: Դիվիզիան ելման դիրք գրավեց Օրլյանկա— Ն. Վլադիմիրովկա շրջանում: Մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները անհամբեր սպասում էին ազդանշանի:

Ազդանշան չեղավ: Խնդիրը մնաց նախկինը, իսկ հարձակման սկիզբը անորոշ ժամանակով հետաձգվեց: Գնդերը մնացին ելման դիրքերում: Մարդիկ մի տեսակ վիրավորանք զգացին հարձակման սկիզբը հետաձգելուց: Սակայն շիկացած վիճակը պահպանվեց: 291-րդ թեթև-հրետանային գնդի կոմիսար Լուկյանովի հետ այդ օրը շրջագայեցինք մարտկոցները: Թնդանոթները խնամքով քողարկված էին այգիներում առաջավոր գծից մոտավորապես 600 մետր հեռավորությամբ: 5-րդ մարտկոցի մարտիկները, որոնք դիվիզիայում առաջինն ընդունեցին գվարդիականի կոչման համար պայքարի բանաձև, ասում էին. «Մենք պատրաստ ենք մարտի, իսկ մեր լոգունգն է՝ հանուն գվարդիականի»:

Հակառակորդն արդեն գիտեր մեր հրամանատարություն մտադրությունը: Այդ մասին տեղեկացրել էին մեզ: Առավոտից օդում երևացին «մեսսերը միտներ» և «հեյնկելներ»: Նրանք զնդակոծեցին դիվիզիայի դիրքերը: Դիվիզիայի հրամանատարը առաջին էջելոնի 387-րդ և 541-րդ գնդերի հրամանատարներին հրամայեց սեպտեմբերի 29-ի գիշերը, օգտվելով մթությունից, ընդհուպ մոտենալ հակառակորդի դիրքերին և պատրաստվել գրոհի: Առաջ շարժվելու ընթացքում մեր գնդերի որոշ ստորաբաժանումներ գրոհի ենթարկվեցին ռումինական կորպուսի առաջավոր գծի զորամասերի կողմից: Այդ գրոհները հաջողություն բերեցին: 387-րդ գնդի 1-ին գումարտակը, ընդունելով մարտը, ընթացքից ներխուժեց հակառակորդի խրամատների առաջին շարքը, վերցրեց զերիններ և ամրացավ այնտեղ: Այդ գիշեր դիվիզիան վեցրեց մինչև 200 զերի:

Սեպտեմբերի 29-ի անձրևոտ օրը, ժամը 13-ին սկսվեց հրետանային պատրաստությունը: Անմիջապես դրան հետևեց հարձակման ազդանշանը: Չախաթեյան 387-րդ հրաձգային գունդը գրոհեց 1-ին ռումինական լեռնահրաձգային կորպուսի 1-ին բրիգադի դիրքերը նրա աջ թևում և, ճեղքելով նրա պաշտպանությունը, խորացավ 7 կիլոմետր: 541-րդ հրաձգային գունդը հակառակորդի պաշտպանությունը ճեղքեց ռումինական կորպուսի գլխավոր ուժի՝ 2-րդ բրիգադի հատվածում: Մեր դիվիզիայից աջ հարձակվում էր 4-րդ հրաձգային դիվիզիան: Սակայն դիվիզիաների կցվանքը բաց էր լայն տեղամասում: Երկրորդ էջելոնի 733-րդ հրաձգային գնդի հրամանատար գնդապետ Տավանցևը գիշերը իր գնդի 7-րդ վաշտը մտցրեց կցվանքի բաց մասը, նրա հրամանատարին հրամայեց վաշտը քողարկել Փոքր Բելոգերկա տանող ճանապարհի մոտ և ոչ մի գործողություն չձեռնարկել, մինչև հակառակորդը շփորձի մտնել այդ կցվանքի բաց տեղը:

Գրավելով Շմելկովկա և Ուլյանովկա բնակավայրերը, դիվիզիան շարունակեց առաջ շարժվել: Ժամը 18-ին 387-րդ գունդը 370-րդ հաուբիցային հրետանու 3-րդ դիվիզիոնի աջակցությամբ Փոքր Բելոգերկայի արևելյան ծայրամասում գրոհեց հակառակորդի վրա և ամրացավ Մեծ Բելոգերկա տանող ճանապարհի երկու կողմում: Այդ ժամանակ 541-րդ գունդը ընդհուպ մոտեցավ Փոքր Բելոգերկային: 387-րդ գնդի առաջին գումարտակը ծանր մարտեր մղեց Փոքր Բելոգերկայի հարավ-արևելյան ծայրամասում և զոհեր կրեց. հարձակման երկրորդ օրը վիրավորվեցին և շարքից դուրս եկան գումարտակի հրամանատարն ու կոմիսարը: Գնդի հրամանատար մայոր Ժուկովը մարտի մեջ մտցրեց ռեզերվային երկրորդ գումարտակը: Նրա հետ էր գնդի ազիտատոր ավագ քաղաքի Գրիգոր Բազյանը: Մարտի ընթացքում նա գնաց 1-ին գումարտակ, իր իշխանությունները գումարտակի հրամանատար նշանակեց վաշտի հրամանատար կրտսեր լեյտենանտ Եվսիկովին, իսկ ինքը ժամակավորապես փոխարինեց գումարտակի կոմիսարին: Գումարտակի հարձակումը վերսկսվեց: Այդ օրը 387-րդ գունդը առաջ շարժվեց 8 կիլոմետր ևս: Փոխգնդապետ Ա. Ս. Նազարովի 541-րդ գունդը ռումինական կորպուսի 2-րդ բրիգադին հարվածներ հասցրեց արդեն Փոքր Բելոգերկայում: Ռումինական բրիգադը գլխովին ջախջախվեց:

Գերմանական հրամանատարությունը շէր ուզում հանձնել Փոքր Բելոզերկան: Նա ավտոտրանսպորտով հապշտապ այնտեղ նետուց գերմանական մի գունդ: Մեր հրետանավորները հետևեցին գերմանացիներին այնքան ժամանակ, մինչև որ նրանք իջան ավտոմեքենաներից և նրանց վրա փոթորկալի կրակ տեղացին: Հրետանային զնդակոծությունից հետո սկսվեց 541-րդ գնդի գրոհը, հրետանին թողեց իր դիրքերը և հետևեց նրանց: Սեպտեմբերի 30-ի կեսօրին դիվիզիայի աջ թևի կցվանքում հայտնվեց մի բռնատար ավտոմեքենա, որի մեջ նստած էին 25 զինվոր: Մոտ թողնելով ավտոմեքենան, 733-րդ գնդի 7-րդ վաշտի լեյտենանտը բղավեց. «Հանձնվեք, դուք շրջապատված եք»: Հետևեց կրակոցը: Լեյտենանտը ծանր վիրավորվեց: Կրակողը ռումինական սպա էր, որը զնդակահարվեց մեր ավտոմատավորի կողմից: Հակառակորդի խումբը ոչնչացվեց: Հենց որ 541-րդ գունդը մտավ Փոքր Բելոզերկա, 7-րդ վաշտը շարժվեց առաջ և հակառակորդի վրա գրոհեց Փոքր Բելոզերկայի հյուսիս-արևելյան ծայրամասում: Գունդն անցավ առաջ, բայց վաշտը մնաց տեղում: Տավանցևը նրան հրամայեց դիվիզիայի աջ թևում պաշտպանել խճուղային ճանապարհը:

Մի փոքր շեղվելով նշենք, որ պատերազմում երբեմն դժվար է լինում խուսափել թյուրիմացություններից, որոնք հաճախ բարեհաջող վախճան են ունենում: Քաղբաժնում որոշեցինք նամակ ուղարկել Գորկի՝ 733-րդ գնդի 7-րդ վաշտի «զոհված» քաղղեկի մոտը: Նամակում մորը շնորհակալություն էինք հայտնել լավ՝ որդի դաստիարակելու համար: Մայրն իր հերթին պատասխան նամակում շնորհակալություն էր հայտնում որդու հայրենանվեր գործերին բարձր գնահատական տալու համար: Եկավ 1942 թվականի հունվարը: Քաղբաժնի ավագ հրահանգիչ Միխայիլ Լովցովը նամակ ստացավ Գորկուց՝ կնոջից: Լովցովը նամակը հանձնեց ինձ, մատը դնելով այս տողերի վրա. «Քաղղեկը, որին դուք համարում եք զոհված, ապաքինվում է Գորկու հոսպիտալներից մեկում: Նա պատրաստվում է շուտով վերադառնալ ձեզ մոտ»: Մենք շատ ուրախացանք, որ մեր մարտական ընկերը չի զոհվել, ապաքինվում է և շուտով կվերադառնա մեզ մոտ: 1942 թվականի փետրվարի սկզբներին քաղղեկը վերադարձավ: Նա ծանր վիրավորվել էր աջ ուսից և կորցրել գիտակցությունը, ուշքի էր եկել սանիտարական զնայքում: Հետագայում իմացել էր, որ մարտի

դաշտից նրան դուրս էին բերել 4-րդ հրաձգային դիվիզիայի հրետանավորները:

Փոքր Բելոզերկան գերմանական զավթիչներից մեր ազատագրած առաջին խոշոր բնակավայրերից մեկն էր: Բնականաբար, մեզ հետաքրքրում էր հակառակորդի վարմունքը տեղի բնակչության նկատմամբ: Գերմանացիներն այնտեղ ընդամենը մի քանի օր էին մնացել, բայց արդեն հասցրել էին ամեն ինչ թալանել՝ կոլտնտեսություններում ոչինչ չէր մնացել, պահեստները դատարկ էին, անասունները ջրել-տարել էին, կողոպտել էին կոլտնտեսականների ունեցվածքը: Շուրջն ամենուրեք ավերածության հետքեր էին: Երեկոյան մեզ մոտ եկան մարդիկ՝ ծերունիներ, կանայք ու երեխաներ, որոնք օկուպացիայի օրերին թաքնվել էին ով որտեղ պատահի: Նրանք սարսափով էին պատմում բռնությունների, կողոպուտի և սպանությունների մասին: Բելոզերկա էին մտել գերմանացիներն ու ռումինացիները: Բնակիչներին հրամայել էին ժողովրդի հավաքվել զբոսայգում: Գերմանացի սպան հայտարարել էր, թե գերմանական ու ռումինական զինվորները բնակիչներին չեն անհանգստացնում, նրանք ձեր «ազատարարներն են»: Այնուհետև սպան ասել է, որ եթե զինվորները որևէ կերպ վիրավորեն տեղացիներին, ապա նրանք այդ մասին պարտավոր են անհապաղ հայտնել կայազորի շտաբին: Այդ նույն օրը երկու կոլտնտեսական շտաբին բողբոքում են, որ զինվորները բռնաբարել են մի աղջկա: Նրանց հանգիստ լսել են և բաց թողել: Բայց զնդակահարել են փողբոցում: Գերմանական հրամանատարի խոստումները ի դերև են լինում: Փոքր Բելոզերկայից անհայտանում են 14—17 տարեկան մի քանի աղջիկ: Մարդիկ փնտրում են, բայց գտնում են նրանց այլանդակված դիակները: Սկսվում են կողոպուտը, թալանը, սպանությունները:

Դիվիզիայի շտաբը և քաղբաժինը ամփոփեցին առաջին մարտերի արդյունքները: Դիվիզիան ձեռքեց հակառակորդի պաշտպանությունը, շախջախեց 1-ին ռումինական լեռնահրաձգային կորպուսի երկու բրիգադներ, գերմանացիների մեկ գումարտակ: Հետապնդելով հակառակորդին, նա առաջ շարժվեց ավելի քան 20 կիլոմետր: Առաջին մարտական խնդիրը դիվիզիան պատվով կատարեց. աննշան կորուստներ կրելով, նա ձախողեց գերմանական

հրամանատարութեան պլանը՝ շրջապատել և ոչնչացնել մեր 9-րդ բանակը:

Բայց Գոնի Ռոստովի ուղղութեամբ ճեղքման վտանգը դեռևս մնում էր: Առաջին հաջող մարտերը չէին կարող հանգստացնել դիվիզիայի հրամանատարութեանը: Գերմանական զորամասերն ունեին մարզկային ուժի և տեխնիկայի առավելութուն: Դեռևս չէր կանգնեցվել նրա հարձակումը: Առջևում ծանր մարտեր էին:

2. ԿԼԵՅՍՏԻ ՏԱՆԿԵՐԻ ԴԵՄ-ՀԱՆԴԻՄԱՆ

Գեներալ Ֆոն Կլեյստ: Հիտլերյան Գերմանիայի տանկային պատերազմի հանրահայտ, գուցեև գլխավոր տեսաբաններից մեկը: Նրա տեսութեան էությունն այս էր. տանկային և մոտոմեքենայացված զորքերի խոշոր ուժերը կենտրոնացնել ոչ մեծ հատվածում, շժմեցուցիչ հարված հասցնել հակառակորդին, ճեղքել պաշտպանութունը, իսկ այնուհետև թևանցել նրան և, սեղմելով բնական արգելքներին, շրջապատել ու գլխովին ոչնչացնել: Ֆոն Կլեյստն անցել էր Բելգիայով ու Ֆրանսիայով և, քիչ թե շատ լուրջ դիմադրութեան չհանդիպելով, ստրկացրել նրանց: Նա եղել էր նաև Բալկաններում: Վերջապես, նա հայտնվեց Ուկրաինայում: Զավթեց Լվովը, հասավ մինչև Նիկոլաև, հետո Կրեմենչուկ: Կիևը գրավելուց հետո գեներալ Կլեյստը շտապում էր Գոնի Ռոստով, իսկ այնտեղից մինչև Կովկաս «մի քանի քայլ է միայն»: Շատ գոռոզ էր ֆոն հիտլերականը:

Ուկրաինայում գեներալ Կլեյստը հայտնվեց միանգամայն այլ աշխարհում՝ այլ մարդկանցով հանդերձ: Պատերազմի առաջին օրերին արդեն պատահեց այնպես, որ Կլեյստի զորքերն ստիպված եղան իրենց թիկունքը ցույց տալ կարմիր բանակի զորամասերին: Ամբարտավան գեներալը կատաղեց, գազազեց: Նա գնաց հարավարևելք՝ ճեղքելու կարմիր բանակի հարավային ռազմաճակատի պաշտպանութունը: Սեպտեմբերի վերջերին «Հարավ» բանակախմբի տանկային և մոտոմեքենայացված զորքերի խոշոր ուժեր հարձակման անցան Պավլոգրադի և Ռազդորի ուղղությամբ:

Հարավային ռազմաճակատի հրամանատարը սեպտեմբերի 30-ին 136-րդ դիվիզիային հրամայեց դադարեցնել հակառակորդի

հետապնդումը և անհապաղ Փոքր Բելոգերկայից երթով անցնել Պլոզորոդիև կայարանի շրջանը: Թուխպը պատել էր: Մանր անձրև էր մաղում: Զորամասերի ու ստորաբաժանումների մի մասը անմիջապես սկսեց երթը, իսկ մյուս մասը, դադարեցնելով հակառակորդի հետապնդումը, կենտրոնացավ Փոքր Բելոգերկայում: Գրնդերը շարժվեցին տարակենտրոնացված: Հակառակորդը իմացավ դիվիզիայի տեղաշարժի մասին: Հայտնվեցին հետախույզ-ինքնաթիռներ, որոնք թռչում էին փոքր բարձրության վրա: Մառախուղը խանգարում էր: Շմայլովկայի շրջանում անտառակում անսպասելի հայտնվեցին թշնամու ինքնաթիռներ: Մեզ գնդակոծեցին և անհայտացան մշուշի մեջ:

Դիվիզիան Ռազդորի-Ելիզավետովկա-Տրոիցկոե շրջանից դեպի արևելք տեղափոխելու համար Պլոզորոդիև և Մեծ Միխայլովկա եկավ ճակատային ավտոտրանսպորտը: Այդ պահից դիվիզիան անցավ 12-րդ բանակի կազմի մեջ: Մեքենայացված զորամասերը Տրոիցկոեում պետք է վառելանյութ վերցնեին և շարժվեին դեպի կենտրոնացման նոր վայրը: Բայց պարզվեց, որ Տրոիցկոեում վառելանյութ չկար: Դիվիզիայի հրամանատարը որոշեց 291-րդ թեթև-հրետանային գունդը և մի քանի այլ ստորաբաժանումներ ուղարկել երկաթուղով: Դիվիզիայի ավտոտրանսպորտը մնաց Տրոիցկոեում՝ տպասելով վառելանյութի: Այստեղ թողնվեց նաև 387-րդ գնդի առաջին գումարտակը:

Առաջին եանդիպումը: Հոկտեմբերի 2-ի առավոտյան դիվիզիայի գլխավոր ուժերը կենտրոնացան նոր շրջանում: Հրամանատարական կետը հաստատվեց Վոսկրեսենսկոե գյուղում՝ Պավլոգրադից մոտավորապես 20 կիլոմետր հարավ-արևմուտք: Դիվիզիան ձեռնամուխ եղավ պաշտպանական բնագծի ստեղծմանը: 733-րդ գունդը դասավորվեց աջ թևում, Ելիզավետովկայի շրջանում՝ Պիսարևկայից հյուսիս-արևելք: 541-րդ գունդը ձախ թևում՝ Պիսարևկա—Նովո Գերգիևսկի—Նովոսելիև շրջանում: Հրետանային գնդերը դիրքեր գրավեցին հրաձգային գնդերի մարտակարգերում՝ ըստ դիվիզիոնների: Հրետանու գլխավոր ուժերը հանձնվեցին 541-րդ գնդին: Սակայն 291-րդ թեթև-հրետանային գունդը դեռ գտնվում էր ճանապարհին: Նա եկավ այն պահին, երբ արդեն մարտեր էին գնում: Գունդը մարտական գործողություններ ծավալեց ընթացքից: Դիվիզիայի հրամանատարական կետի շուրջը, բացի շտաբային ստորա-

բաժանումներից, դասավորվեցին նաև առանձին հակատանկաչին դիվիզիոնի 2-րդ և 3-րդ մարտկոցները և առանձին մոտոհետախուզական գումարտակը՝ որպես դիվիզիայի հրամանատարի ղեկավար: 387-րդ գունդը, 1-ին գումարտակից բացի, 12-րդ բանակի հրամանատարի հրամանով դիվիզիայի մարտակարգերից հեռու, գնում էր Անդրեկախուտորի ուղղությամբ:

Հետախուզության տվյալներով, Ռազդորի ուղղությամբ, այսինքն՝ մեր դեմ, շարժվում էին Կլեյստի խմբի երկու տանկային և երկու հետևակային դիվիզիաները: Մեր գնդերը դեռ չէին կարգավորել դիրքերը, երբ գերմանական 1-ին տանկային բանակի գործառնաբերն անցան հարձակման: Գլխավոր հարվածն ուղղված էր 541-րդ գնդի դեմ: Մավալվեցին կատաղի մարտեր, կրկնվեցին անընդմեջ տանկային գրոհները: Այդպես շարունակվեց մինչև ուշ երեկո: Գունդը դիմացավ թշնամու ճնշմանը և հաջողությամբ ետ մղեց բոլոր գրոհները: 541-րդ գնդի մղած մարտերի համեմատությամբ 733-րդ գնդի հատվածում համեմատաբար հանգիստ էր: Երեկոյան գերմանացիները դադարեցրին գրոհները: Բայց ավիացիան ռմբակոծեց Վոսկրեսենսկոեն: Երկու ռումբ պայթեց դիվիզիայի հրամանատարական կետի մոտ, սակայն ամեն ինչ բարեհաջող անցավ:

Հոկտեմբերի 3-ի վաղ առավոտից հակառակորդը վերսկսեց հարձակումը: Գլխավոր հարվածը կրկին ուղղվեց 541-րդ գնդի դեմ: Թշնամու տանկերը բազմիցս սեպաձև խրվեցին գնդի պաշտպանության մեջ: Երբեմն թվում էր, թե ուր որ է կճզմեն գունդը: Տանկերը նետվում էին կրակակետերի վրա՝ ամեն ինչ տրորելու հույսով: Սակայն գնդի ռազմիկները շաստանվեցին: Իրար հետևից դեպի տանկերն էին թռչում հեղուկ վառելանյութով լի շշերը, թըրթուրների տակ՝ հակատանկային նռնակները: Հրետանավորները դիմահար խփում էին տանկերին: Հատկապես քաջաբար ու հմտորեն էին կռվում ավագ լեյտենանտներ Շումեյկոյի, Սերգեյչուկի և կապիտան Հարությունյանի հրետանավորները: Գունդը աննկուն պահպանում էր իր դիրքերը: Հրաձգային ստորաբաժանումները ժամանակ առ ժամանակ թշնամու հետևակը կտրում էին տանկերից և կոտորում: Կեսօրին հակառակորդն ուժեղացրեց ճնշումը 541-րդ գնդի ձախ հարևանի վրա: Հաղթահարելով դիմադրությունը, թշնամու տանկերը և հետևակը սեպաձև խրվեցին հարևանի

մարտակարգերի մեջ, նեղեցին հրաձգային ստորաբաժանումներին և շրջապատեցին հրետանային գունդը: Հակառակորդը դրանով սպառնում էր անցնել 541-րդ գնդի թիկունքը: Դիվիզիայի հրամանատար Վասիլենկոն դիվիզիայի ձախ թև, թշնամու տանկերի դեմ նետեց իր ղեկավարը՝ առանձին հակատանկային դիվիզիոնի մարտկոցները, իսկ դեպի Պիսարեկա՝ հետախուզական գումարտակը: Դիվիզիայի հրետանին իր կրակն ուղղեց հարևանի մարտակարգերը ներխուժած հակառակորդի դեմ, իսկ 541-րդ գնդի ձախաթևյան գումարտակը նրան հարվածեց թևից: Ոչնչացնելով մի քանի տանկ և մյուսներին ստիպելով ետ դառնալ, նրանք հարևանի հրետանային գնդին օգնեցին դուրս գալ շրջապատումից: Սակայն հարևանի դրուժյունը շիթեկացավ, դիվիզիայի ձախ թևը բաց էր: Հակառակորդի տանկային գրոհները կրկնվեցին:

Մոտավորապես ժամը 15-ին դիվիզիայի կոմիսար Աբաուլինը հայտնեց, որ ըստ տեղեկությունների՝ 387-րդ գունդը շրջապատված է հակառակորդի կողմից և ծանր մարտեր է մղում շրջապատման մեջ: Նա զգուշացրեց պատրաստ լինել անակնկալի: Հակառակորդը տանկերի և մոտոհետևակի նոր ուժեր նետեց 733-րդ գնդի դեմ: Դիվիզիայի պաշտպանության ամբողջ զծին մահացու վտանգ էր սպառնում: Դիվիզիան հերոսաբար դիմադրեց: Օրհասական պահեր շատ եղան: Սակրային գումարտակը առաջ բերվեց և մտցվեց 733-րդ գնդի մարտակարգերի մեջ: Շտաբային մյուս ստորաբաժանումները դիրքեր գրավեցին Վոսկրեսենսկոեից արևմուտք: Այնտեղ եկան նաև շտաբի ու քաղբաժնի բոլոր աշխատողները՝ հրացաններով, ավտոմատներով, նռնակներով: Մարտը շարունակվեց մինչև երեկո: Գերմանացիները կորցրին 7 տանկ և շատ կենդանի ուժ: Մոտոհետախուզական գումարտակի վաշտը կորցրեց 5 փոքր տանկ: Էլ ավելի ծանր էր 541-րդ գնդի դրուժյունը: Նրա 3-րդ գումարտակը համարյա լրիվ շրջապատված էր: Պահ եղավ, երբ մարդիկ սասանվեցին, իսկ գումարտակի հրամանատար կապիտան Ֆրոլովը կտրվեց վաշտից: Հենց այդ ժամանակ գումարտակում հայտնվեցին գնդի կոմիսար Ստրախովը և քաղբաժնի ավագ հրահանգիչ Քաիրյանը: Սրանց հայտնվելը ոգևորեց ռազմիկներին: Ֆրոլովի գումարտակը պաշտպանեց իր դիրքերը: Նա կոտորեց ավելի քան 300 հիտլերական, կորցնելով սպանված և վիրավոր 60 մարդ: Երեկոյան կողմ հակառակորդը ետ շարժվեց: Դիվիզիայի

զորամասերը հնարավորութիւն ստացան կարգի բերելու իրենց: Հոկտեմբերի 2-ին և 3-ին մղված մարտերում հակառակորդը լուրջ կորուստներ կրեց: Շարքից հանված 22 տանկերից 15-ը բաժին ընկավ 541-րդ գնդին: Այս էր հետլերյան գեներալ Կլեյստի տանկերի հետ առաջին հանդիպման արդյունքը:

Մինչ զորամասերն իրենց կարգի էին բերում, քաղբաժնի աշխատողներից ոմանք եկան հրամանատարական կետ՝ զեկուցելու: Կարճառոտ բնութագրելով ռազմաճակատի մեր հատվածի կացութիւնը, դիվիզիայի կոմիսարը հատկապես ընդգծեց զորամասերում զգոնութիւն բարձրացման անհրաժեշտութիւնը: Նրա ցուցումով քաղբաժնի աշխատողները իսկույն մեկնեցին գնդերը: «Հնարավոր է, որ գնդերը նոր խնդիր ստանան», — ասաց Աբաուլինը:

Շարունակում էր անորոշ մնալ 387-րդ գնդի վիճակը: Կոմիսարը միայն ասաց, որ գունդ տանող ճանապարհը փակ է, իսկ նրա վիճակի մասին ոչինչ հայտնի չէ: Հայտնի չէր նաև այնտեղ գտնվող քաղբաժնի հրահանգիչ Ալեքսանդր Պրենի վիճակը: Թեժ մարտերի ժամանակ, երբ հակառակորդը ճեղքեց ձախակողմյան հարևանի պաշտպանութիւնը, հրամանատարութիւնը տեղեկութիւններ ստացավ գնդի շրջապատման մասին: Մի փոքր ավելի ուշ հայտնվեց գնդի պրոպագանդիստ Բագյանը՝ զեկուցելու 1-ին գումարտակի կատարած երթի մասին:

Հենց որ մարտն ավարտվեց, մենք բոլորս ինչ-որ շափով մեզ մեղավոր զգացինք 387-րդ գնդի հանդեպ:

— Ի՞նչ եք անելու, — վերջապես հարցրեց Աբաուլինը:

Քաղբաժնի օպերատիվ աշխատողներից հրամանատարական կետում մնացել էինք Տիմոֆեևը և ես: Շտաբային սպաների մի մասը ևս մեկնել էր գնդերը:

— Թույլ տվեք զբաղվել գնդի վիճակով, — դիմեցի ես դիվիզիայի կոմիսարին:

Փոքր-ինչ մտածելուց հետո դիվիզիայի կոմիսարը մերժեց: Նա հրամայեց որոնել 1-ին գումարտակը:

Շտաբից ինձ հետ վերցրի միայն 387-րդ գնդի կարմիրբանակային-կապավորին: Տղան շատ էր անհանգստանում իր գնդի համար: Վերցրինք ձեռքի նոնակներ: Բացի դրանք կարմիրբանակայինի մոտ հրացան կար, ինձ մոտ «մաուզեր»: Մենք դուրս եկանք շտաբից, շրջանցեցինք 733-րդ գնդի ձախ թևը, 541-րդ գնդի մար-

տակարգերի միջով գնացինք դեպի հարավ-արևմուտք: Մեզ հայտնի էր, որ հակառակորդը ետ էր քաշվել՝ Բայց ո՞ւր: Տեսանելիութիւնը վատ չէր՝ լուսնկա գիշեր էր, փայլում էին աստղերը: Գնում էինք՝ զննելով, ունկնդրելով, ջանում էինք որսալ ամեն մի շշուկ: Գիշերային ծանր լուսթյուն էր տիրում: Զգիտես ինչու, գերմանացիները սովորականի պես հրթիռներով չէին լուսավորում իրենց առօջավոր գիծը: Այնուամենայնիվ, մենք կկողմնորոշվեինք: Խուսափելով անտառներից, ուր սովորաբար թաքնվում էին զորքերը թշնամու ավիացիայից աննկատ մնալու համար, մենք գնացինք այնպիսի հեռավորութիւն, որ լսելի լինեին ամեն մի խոսակցութիւն կամ շարժում: Ավելի քան երեք ժամ էր անցել այն պահից, երբ մենք դուրս եկանք Վոսկրեսենսկոեից: Հանկարծ կարմիրբանակայինը կանգնեց և ասաց. մերոնք են, լսեցի հրաման՝ «գումարտակի հրամանատարի մոտ»:

Մեր որոնումը բարեհաջող ավարտվեց: Գումարտակը տեղավորվել էր անտառում: Մի քանի ըոպե անց, կեսգիշերին, գումարտակը շարժվեց: Գնացինք դեպի հյուսիս-արևելք: Այդ ընթացքում պարզեցինք գումարտակի և գնդի հետ կապված մի քանի հարցեր. Բագյանը դադարեցրել է գումարտակի շարժումը Ռազդորի ուղղութիւնով: Նրանք արդեն գիտեին որ գերմանացիները գնացել են արևելք: Նրանցից հյուսիս-արևելք մարտեր էին գնում: Իրենց շարժման գոտում գումարտակը չի հանդիպել ո՛չ մեր և ո՛չ էլ գերմանական զորքերի: Պահպանելով բողարկման կանոնները, նրանք փորձել էին պարզել շրջապատի իրադրութիւնը: Բագյանը ու Եվսիկովը արդեն որոշ մանրամասներ գիտեին գնդի վիճակի մասին՝ պատահաբար նրանց մոտ էին եկել երկու կարմիրբանակային: Նրանք պատմել էին, որ մոտավորապես ժամը 12-ին գերմանացիները շրջապատել են գունդը: Գնդի հրամանատար մայր ժուկովը ժանր վիբրավոր է: Գնդի հրամանատարութիւնն ընդունել է կոմիսար Բարուտկինը: Նա հրամայել է ճեղքել գումարտակ առ գումարտակ, վաշտ առ վաշտ և դուրս գալ շրջապատումից, հավաքատեղի նշանակելով Ալեքսանդրովկայի շրջանը: Իրենք՝ կարմիրբանակայինները շրջապատումից դուրս են եկել փոքր խումբի հետ, բայց հակառակորդի կողմից հետապնդվելով ցրվել են:

Երբ վերադարձանք, դիվիզիան տեղում չէր: Շարժվեցինք նրա հետքերով: Լուսաբացին հասանք 733-րդ գնդի վերջապահ վաշ-

տին: Պարզվեց, որ 12-րդ բանակի հրամանին համապատասխան, դիվիզիան Վոլշի գետի ուղղությամբ ետ է քաշվել նոր դիրքեր: Մենք գումարտակի հրամանատարի համհարզին ուղարկեցինք դիվիզիայի հրամանատարի և կոմիսարի մոտ՝ զեկուցելու գումարտակի և 387-րդ զնդի մասին ինչ որ գիտեինք: Վերադառնալով, համհարզը հայտնեց, որ դիվիզիայի հրամանատարը միջոցներ է ձեռնարկել զունդը որոնելու: Գումարտակին հրամայվեց ժամանել Գորբովոլի գյուղը:

Կեսօրին Գորբովոլի եկավ 733-րդ զնդի շտաբի պետ կապիտան Սամսոնովը: Նա նշանակված էր 387-րդ զնդի հրամանատար: Սամսոնովը հայտնեց, որ կապ է հաստատված զնդի կոմիսար Բարուտկինի հետ, նա շտաբի և երկրորդ գումարտակի հետ գալիս է Գորբովոլի, մեքենա է ուղարկված մայր Ժուկովին էվակուացնելու:

Շուտով եկավ Բարուտկինը: Այդ փորձված մարտական կոմիսարը բոլորի մեջ տարիքով ավագն էր: Նա հուզված էր: Սրտի ցավով պատմեց. Գերմանացիները գրոհն սկսեցին հոկտեմբերի 2-ի երեկոյան: Գունդը հարևաններ չունեիր: Նա հաջողությամբ ետ մղեց բոլոր գրոհները, իսկ գիշերը դիրքերը սարքավորեց շրջանաձև պաշտպանության համար: Հաջորդ առավոտը հանգիստ անցավ: Բայց ժամը 12-ին հակառակորդի գերազանց ուժերի երկու զնդի և տանկերի կողմից գունդը վերցվեց օղակի մեջ: Հետո հայտնվեցին նոր տանկեր, ընդհանուր առմամբ դրանց թիվը հասնում էր 40-ի: Թիկունքի հետ զնդի կապը կտրվեց: Բազմաթիվ գրոհներից հետո հակառակորդը սեպածե խրվեց զնդի դասավորության մեջ: Մարտը զնալով կատաղի բնույթ ընդունեց: Ցաշիստները մեծ կորուստներ կրեցին, կորցրին 9 տանկ, բայց խելագարի պես առաջ նետվեցին: Գնդի հրամանատար Ժուկովը ծանր վիրավորվեց, քաղբաժնի հրահանգիչ ավագ քաղզեկ Պրենը զոհվեց... Գունդը ջախջախումից փրկելու համար երեկոյան հրամայեցի ձեղքել օղակը: Գնդի շտաբը, 2-րդ գումարտակը և թիկունքային ստորաբաժանումները ձեղքեցին դուրս եկան հյուսիս-արևմուտք: Սիրոտկինի 3-րդ գումարտակին հրամայվեց ձեղքել դուրս գալ դեպի հարավ:

Մարտի թեժ պահին մարտիկներից մեկը բղավում է. «Ընկեր կոմիսար, զգուշացեք, աչից թշնամու զնդացիին է»: Իսկ զերմանացիները բղավում են. «Կոմիսարին տվեք, ձեզ շնք սպանի»:

Բարուտկինը մի քանի մետրի վրա տեսնում է հակառակորդի զնդացիներ, նոնակ է նետում և ոչնչացնում այն:

— Իմ միակ միթարությունն այն է,— ասում է Բարուտկինը,— որ շեմ կարող հիշատակել թեկուզ մեկին, որն իրեն խնայեր կամ սասանվեր ահավոր մարտում:

Հետո պատմեցին այլ մանրամասներ: Երրորդ գումարտակի կարմիրբանակայինները հպարտությամբ պատմում էին այն մասին, թե ինչպես իրենց հրամանատար լեյտենանտ Ա. Պ. Սիրոտկինը օրհասական պահին իր վրայից դեն է նետել թիկնոցը և գոչել. «Մեկելի համարձակ, ընկերներ: Թող ֆաշիստները տեսնեն, որ այստեղ էլ մեզ հետ է կենինը», իր կրծքի վրա ցույց տալով կենինի շքանշանը և Սովետական Միության հերոսի ոսկե աստղը: «Առաջ, դեպի ձեղքում»:

Աչքի անցկացնելով կոմիսարի քարտեզը, դժվար չէր նկատել, որ զնդի հրամանատարը տանկերին սպասել է հարավից և հյուսիս-արևմուտքից: Իսկ նրանք հայտնվել են համարյա բոլոր կողմերից:

Լեյտենանտ Սիրոտկինի գումարտակի մասին մեզ հասած տեղեկությունները հակասական էին: Երեկոյան Սամսոնովը, Բարուտկինը, Բազյանը և ես զրուցում էինք տնակում: Հանկարծ ներս մտավ մի կարմիրբանակային: Նա խնդրում է իրեն ուղարկել պարտիզանների մոտ:

«— Ես տեղացի եմ, ուկրաինացի, պետք է վրեժխնդիր լինեմ, ոչնչացնեմ այդ ճիվաղներին... Ես մտերիմներ ունեմ...», — ասում է նա ու լալիս:

Բարուտկինը նկատելի շարանում է: Ես կարմիրբանակայինի հետ դուրս եկա տնակից:

— Ապա, ասա, ովքե՞ր են քո մտերիմները,— ասացի,— ո՞րտեղ են նրանք:

— Ահա նրանք,— ջահել կարմիրբանակայինը մատնացույց արեց դրսում կանգնած իրեն շատ նման երկու կարմիրբանակայինի:

Պարզվեց, որ նրանք բոլորն էլ 3-րդ գումարտակից են: Նրանց ուղարկել էր Սիրոտկինը, հրամայելով գտնել զնդի կենտրոն-սցման վայրը: Գունդը նրանք գտան, բայց ճանապարհին միջանց հետ պայմանավորվեցին «դառնալ պարտիզան»:

— Ոչ, եղբայրներս,— ասացի ես,— դուք պարտիզանի հա-

մար պիտանի շեք: Այնտեղ պետք է ամեն ինչ տեսնել, ամեն ինչ լսել և ոչինչ չմոռանալ: Իսկ դուք մոռացել եք ձեր գումարտակի հրամանատարի հրամանը: Եկեք վրեժ լուծենք ռազմաճակատում:

Տղաները շառագունեցին, բայց փորձեցին արդարանալ:

Դա հոկտեմբերի 5-ի երեկոյան էր: Սամսոնովը ջահել կարմիրբանակայինների հետ ուղարկեց շտաբային սպաներից մեկին: Հաջորդ առավոտյան գունդը հավաքվեց մի տեղում:

Նաեմը: Վոլչյա գետի մոտ պաշտպանություն առաջին օրերը հանդարտ էին: Դիվիզիան ձգված էր գետի արևելյան ափի երկարությամբ, Վասիլկովկայից հյուսիս, 25 կիլոմետր ճակատով: Կարճատև դադարը օգտագործվեց զորքերը կարգի բերելու, առաջին մարտերի արդյունքներն ամփոփելու, պաշտպանական բնագիծն ամրացնելու համար:

Չկարողանալով մեր զորքերի պաշտպանությունը ճեղքել Ռազգորիեի շրջանում, գերմանական առաջին տանկային բանակի զորքերն իրենց հարվածը կենտրոնացրին հարավ-արևելքում: Հետախուզության տվյալներով, մեր հատվածի դեմ կենտրոնացել էին իտալական կորպուսի երեք դիվիզիա: Եղանակը վատացավ՝ սկսվեցին ուժեղ անձրևներ, մշուշը ծածկեց պաշտպանության ամբողջ շերտը, տեսանելիությունը վատացավ, անանցանելի ցեխ էր: Իտալացիները, մշուշից օգտվելով, 733-րդ գնդի հատվածում սկսեցին մարտով հետախուզության գործողություններ, բայց հաջողություն չունեցան:

Հոկտեմբերի 8-ին միայն 387-րդ գնդի պաշտպանության հատվածում մեր պաշտպանությունը հետախուզելու շուրջ փորձ կատարվեց: Հետախուզիչների մի խումբ առավոտյան անսպասելի ընկավ գնդի ծուղակը, բայց չհանձնվեց: Խումբը բնաջնջվեց, իսկ մեկը գերի ընկավ: Մինչև կեսօր ոչնչացվեց հետախուզիչների երկու խումբ ևս: Այդ խմբերից մեկը գերմանացիներից էր կազմված: Գերվեց գերմանացի մի զինվոր: Վերջապես, իտալական հետախուզիչների մի խումբ թևանցեց գունդը: Մեր ռազմիկները նկատեցին, շրջանցեցին ու գերեցին ամբողջ խումբը: Գերիների ցուցմունքները հաստատեցին մեր հետախուզության տվյալները՝ հակառակորդը այդ հատվածում կենտրոնացրել էր իտալական երեք դիվիզիա և գերմանական մի քանի ստորաբաժանում: Դիվիզիայի

հրամանատարությունը ձեռնարկեց պաշտպանությունը ամրապնդելու միջոցառումներ:

Ռազմաճակատում տիրող իրավիճակն ու զորքերի կարգապահությունը ճնշող տպավորություն էին թողնում: Դիվիզիայի նահանջը Ռազգորիեի շրջանից տարակուսանքների առիթ ծառայեց: Ընդհանրացնելով մարտական գործողությունների փորձը դիվիզիայի զորամասերում և ստորաբաժանումներում կամ զրուցելով ռազմիկների հետ, հրամանատարներն ու քաղաշխատողները չէին կարող չնկատել, որ նահանջի ընդհանուր պատճառների բացատրությունը չէր բավարարում նրանց: Շատերն ասում էին. Փոքր Բելոգերկայում մենք ջարդեցինք հակառակորդին, նա նահանջեց, իսկ մեզ հրամայեցին դադարեցնել հետապնդումը, հանեցին այնտեղից, մերկացրին ռազմաճակատը: Չհանդիպելով դիմադրության, հակառակորդը խորացավ մեր տերիտորիայում: «Ինչո՞ւ մեր զորասյուններին քշեցին Տրոիցկոե՝ վառելանյութ վերցնելու, որտեղ գրավեց մի կաթիլ անգամ չկար», — հարցնում էին 291-րդ հրետգնդի հրետանավորները և ավելացնում. «Այդ էր պատճառը, որ մեր գունդն ու մի քանի այլ ստորաբաժանումներ չկարողացան ժամանակին իրենց դիրքերը գրավել այն դեպքում, երբ սպասվում էր հակառակորդի տանկերի խոշոր ուժերի հարձակում»: 387-րդ գնդի որոշ հրամանատարներ ասում էին. «Մի՞թե սա կարգ է, երբ գնդի գումարտակը աննպատակ թողնում են Տրոիցկոեում՝ հեռու մարտական գործողություններից, իսկ գունդը կտրում են դիվիզիայից, փաստորեն թողնում բախտի քմահաճույքին»:

Որոշ հրամանատարներ, ինչպես և ավագ գումարտակային կոմիսար Բարուտկինը, անում էին ընդհանրացված եզրակացություններ. զժգոհում, որը հիմնականում ուղղված էր 12-րդ բանակի հրամանատարության դեմ. «Գոնե այս բանակից շուտ տեղափոխվեինք մեկ ուրիշ բանակ», — ասում էին տարակուսանք արտահայտողները:

Այդ տրամադրությունների մասին զեկուցելով դիվիզիայի կոմիսար Աբաուլինին, մենք, մոտավորապես, նշում էինք, որ, չնայած մեր մարդկանց բարձր հայրենասիրությանն ու յուրաքանչյուր թիզ սովետական, հողը կրծքով պաշտպանելու պատրաստակամությանը, բանակի հրամանատարության նկատմամբ եղած տրամա-

գրութիւնները կարող են հանգեցնել զինվորական կարգապահութեան խախտման, որը բացասաբար կանդորդառնա ստորաբաժանումների մարտունակութեան վրա: Դիվիզիայի կոմիսարը պահանջեց մեր մարդկանց ետ պահել անառողջ տրամագրութիւններից, բացատրել ժամանակավոր նահանջի պատճառները, ուժեղացնել քաղմասսայական աշխատանքները:

Հոկտեմբերի 11-ի գիշերը Տիմոֆեևի հետ անցկացրինք 387-րդ զնդի հրամանատարական կետում՝ Ալեքսանդրովկայի հարավ-արևմտյան ծայրամասում: Այն տնակում, ուր տեղավորված էր զնդի հրամանատարական կետը, Տիմոֆեևը աշխույժ գրույցի բովանդակ տանտիրուհու հետ, հետաքրքրվելով նրա ընտանիքով: Տանտիրուհին ասաց, որ ամուսինը ռազմաճակատում է և երկու ամսից ավելի է, ինչ նամակ չի ստացել նրանից:

— Ես գիտեմ, նա զոհվել է, — տխուր ասաց կինը: — Միրտս վկայում է: Մնացել եմ երեխայիս հետ:

Մենք լուռ էինք և միմյանցից խոսքեր չէինք գտնում ասելու:

Մի կերպ հարմարվեցինք քնելու: Ինչ-որ անժանոթ ուժ արթնացրեց մեզ: Գնդի հրամանատար Սամսոնովը նստած էր սեղանի մոտ, շինելը հազին, ձեթի ճրագի առաջ: Կողքին կանգնած էր շտաբի պետը: Նայում էին քարտեզին: Հետո նայեցին շուրջը, լուրջուն էր: Զգույշ վեր կացանք, որ շխանդարենք տանտիրուհու և երեխայի քունը: Սեղանի վրա էր «Գիշերը դիրքերից դուրս գալ» հրամանը. «Նահանջ դեպի Կրասնոարմենյակոն՝ մոտ 100 կիլոմետր»: Երկօրյա ծանր ճանապարհ:

— Ես գիտեմ, դուք նահանջում եք: Ի՞նչ կլինի մեզ հետ, — լսվեց տանտիրուհու անհանգիստ ձայնը:

Ուրեմն նա էլ քնած չէր, ինչպես մենք: Կինը չէր շարժվում: Կարծես երագի մեջ էր խոսում: Մենք լուռ էինք: Իսկ ինչ կարելի էր ասել: Այդ պահին մեզ թվում էր, թե կնոջ բերանով ամբողջ ժողովուրդն է խոսում, որին, թեկուզ ժամանակավոր, թողնում ենք զազազած թշնամու ճիրաններում: Լուռ էինք...

Դիվիզիայի կապի սպան հաղորդեց, որ բանակի շտաբը արդեն մեկնել է: Գերմանացիները խորացել են մեր դիվիզիայի թիկունքը, շրջապատումից խուսափելու համար հարկավոր է արագ թողնել դիրքերը: Դիվիզիայի շտաբը նույնպես մեկնեց: Մենք որո-

շեցինք զնալ զնդի հետ: Հարկավոր էր շտապել, մինչ լուսաբաց կտրվել հակառակորդից, որքան կարելի է շատ հեռանալ նրանից:

Լուսանում էր: Վասիլկովկայի շրջանի դաշտերում հացի դեզեր կային: Այրելու ժամանակ շկար, հարկավոր էր մեկ օրում 50 կիլոմետր ճանապարհ անցնել: Յերեկը ցեխոտ ճանապարհներով դժվարութեամբ 20 կիլոմետր անցանք: Գնացինք նաև գիշերը: Ամբողջ գիշերը անձրև տեղաց: Մարդիկ մինչև ոսկորները թրջվել էին, սառել ցրտից: Մարտիկները դժվարութեամբ էին նահանջում: Մենք անհանգիստ էինք: Վախենում էինք անակնկալներից: Եվ այն շուշացավ: Առջևից գնացող բեռնասայլը պայթեց ականի վրա: Երկու կարմիրբանակային վիրավորվեցին, զոհվեց մի ձի: Զորասյունը կանգնեց: Մեր զորքերն էին ականապատել ճանապարհը: Սակայն չէին հասցրել զգուշացնել: Սակրավորներն առաջ գնացին անցումներ պատրաստելու:

Մարդիկ չէին ուզում հաշտվել այն մտքի հետ, որ մենք ստիպված ենք նահանջել: Մարտում հերոսի մահով ընկնելը նրանք գերազասում էին նահանջից: Մեր բացատրութիւնն այն մասին, թե հրամանատարութիւնն ավելի լավ գիտի իրադրութիւնը, միջոցներ է ձեռնարկում և այլն, ցանկալի տպավորութիւն չէր գործուէ: Մարդիկ դժգոհում էին, բայց հրամանատարների հրամանները կատարում էին բարեխղճութեամբ: Իսկ սա նշանակում էր, որ առաջիկա մարտերում նրանք կմարտնչեն մինչև արյան վերջին կաթիլը: Հրամանատարները, քաղաշխատողները համառու հետևողական աշխատանք կատարեցին կարգապահութիւնն ամրապնդելու, հավատը հրամանատարութեան նկատմամբ անսասան պահելու համար:

Երկօրյա հանդիպումը: Կրասնոարմենյակոն եկավ Հարավային ռազմաճակատի հրամանատարութեան հրամանը՝ դիվիզիան բարձել էշեյոնները: Դրանք զնում էին դեպի Իլովայսկ: Իրադրութիւնը փոխվելու կապակցութեամբ վերջին էշեյոններն ուղղվեցին Ռովենկի:

Թշնամին շարժվում էր դեպի Ռոստով: Անհրաժեշտ էր շտապ պաշտպանութիւն գրավել նոր տեղամասում: Հրաման ստացա սպաների փոքր խմբի հետ լինել բարձման կայարանում, խնդիր ունենալով ապահովել էշեյոնների բարձումն ու առաքումը և մեկնել վերջին էշեյոնով: Զորքերը տարակենտրոնացվել էին: Յուրա-

քանչյուր ստորաբաժանում գիտեր զնացք նստելու իր ժամն ու կարգը: Միջոցներ էին ձեռնարկվում բարձումը անվտանգ դարձնելու: Հենց որ մառախուղը ցրվեց, կայարանի վերևում փոքր խմբերով հայտնվեցին թշնամու ինքնաթիռները՝ յուրաքանչյուր խմբում 2—3, երբեմն էլ 4—5 ինքնաթիռ: Զենիթայինները հեռացրին նրանց: Թշնամու ոչ մի ինքնաթիռ չկարողացավ ուժը նետել կայարանի վրա:

Կրասնոարմեյսկոեում անհանգիստ վիճակ էր տիրում: Համառլուրի էին պատվում Ստալինո (Յուզովկա) քաղաքը թշնամու կողմից զավթելու մասին: Զեռնարկություններում ու հիմնարկներում բանվորներին ու ծառայողներին բաժանեցին որոշ քանակությամբ պարենամթերք և շուտով դադարեցրին աշխատանքը: Մի քանի ձեռնարկություններ պայթեցվեցին: Կայարանում մեծ քանակությամբ քաղաքացիներ էին հավաքվել. նրանք ուզում էին էվակուացվել: Բայց երկաթուղային էշելոնները տրվում էին միայն զորքերին:

Մենք շատ գործ ունեինք: Խմբի մի մասն զբաղված էր բարձման աշխատանքի կազմակերպմամբ, մյուս մասը՝ հանձնարարությունների կատարումով: Ամենազգժվարին գործը ճանապարհներին թաղված մեքենաները դուրս բերելն ու կայարան հասցնելն էր: Հարկավոր էր փնտրել դրանք, դուրս բաշել ցեխից, բերել կայարան և բարձել բաց վագոններին: Մեզ մոտ էր ավագ լեյտենանտ Լոմովը՝ մի ժիր հրամանատար: Իր տրամադրության տակ ունենալով հրկու տրակտոր և մի քանի կարմիրբանակային, Լոմովը դտավ բոլոր ավտոմեքենաները, ցեխից դուրս բերեց ճանապարհի վրա, որտեղից նրանք իրենց ընթացքով եկան կայարան:

Հոկտեմբերի 20-ին դիվիզիան կենտրոնացավ վորոշիլովգրադի մարզի Դյակովոյի շրջանում և մտավ 9-րդ բանակի կազմի մեջ, որի հրամանատարն էր գեներալ-մայոր Խարիտոնովը, Փոխարինելով 30-րդ հրաձգային դիվիզիային, մեր դիվիզիան անմիջապես ձեռնամուխ եղավ նոր դիրքերի պատրաստմանը: Հրետանային գունդն ուղարկվեց Դյակովոյի մերձավոր մատույցները՝ պաշտպանվող զորքերին օգնություն:

Դիվիզիան փութաշանորեն պատրաստվում էր առաջիկա մարտերին. Փորված էին հաղորդակցման անցուղիներով խրամատներ, սարքավորվել կրակակետեր, որոշված էին զենքի յուրա-

քանչյուր տեսակի տնսադաշտերն ու փոխգործողությունը: Հիմնականը հուսալի հակատանկային պաշտպանություն ստեղծելն էր: Հակատանկային պաշտպանության սիստեմի մեջ մտցվեցին դիվիզիայի և գնդերի ամբողջ հրետանին, հակատանկային զենքերը, տանկակործան խմբերը, որոնք զինված էին նռնակներով և հեղուկ վառելանյութի շշերով: Դիվիզիայի հրամանատարի ղեկավարում գտնվող շարժական հակատանկային խմբի և զենքի մյուս տեսակների կրակային դիրքերը բավարար քանակության գինապաշար բերվեց: Մեծ ուշադրություն դարձվեց կապի սիստեմի կազմակերպման վրա:

Հոկտեմբերի 21-ին քաղբաժնում տեղի ունեցավ խորհրդակցություն, որին ներկա էին դիվիզիայի կոմիսարը, շտաբի պետը, շտաբի բաժանմունքների, ծառայությունների պետերը, գնդերի, առանձին դումարտակների և դիվիզիոնների կոմիսարներն ու քաղբաժնի աշխատողները: Ես հակիրճ զեկուցեցի զորքերի բարոյաքաղաքական վիճակի մասին, ընդգծելով դիվիզիայի անձնակազմի վճռականությունն ու պատրաստակամությունը՝ ամեն զնով պաշտպանելու Ռոստովի մատույցները, կատարելու հրամանատարության մարտական հրամանը:

Անդրադառնալով ղեպի Կրասնոարմեյսկոե կատարված երթի ժամանակ եղած որոշ բացասական երևույթներին, խորհրդակցության մասնակիցները նշեցին, որ դրանք բացատրվում են անցանկալի նահանջով: Մատնանշվեց, որ կարմիրբանակայինները, հրամանատարներն ու քաղաշխատողները հստակորեն պատկերացնում են ռազմաճակատի ճեղքման վտանգը դիվիզիայի պաշտպանության տեղամասում, որի մասին վկայում է նրանց եռանդուն աշխատանքը՝ ստեղծելու կայուն պաշտպանություն: Խորհրդակցությունում ելույթ ունեցան դիվիզիայի կոմիսար Աբաուլինը, շտաբի պետ Կոնդրատևը և քաղբաժնի պետ Տիմոֆեևը:

Խորհրդակցության մասնակիցները տեղերը մեկնեցին այն պարզ գիտակցությամբ, որ զլխավոր խնդիրը անձնակազմը և պաշտպանական բնագիծը խնամքով նախապատրաստելն է սպասվող ծանր մարտերին: «Կյանքով պաշտպանել հայրենիքը, հանուն սովետական մարդու ոչինչ չխնայել»: այս էր օրվա լողունը:

Դիվիզիայի հրամանատարը, կոմիսարը, քաղբաժնի աշխատողները, դիվիզիայի շտաբի օպերատիվ կազմը, հրետանու պետը,

գնդերի, գումարտակների և դիվիզիոնների հրամանատարներն ու կոմիսսարները մեծ աշխատանք էին կատարում վաշտերում, մարտկոցներում, դասակներում, անհատապես զրուցում յուրաքանչյուր հրամանատարի և կարմիրբանակայինի հետ: Նրանք պարզաբանում էին իրադրությունը, դիվիզիայի և նրա յուրաքանչյուր ստորաբաժանման խնդիրը, այն կապելով պաշտպանության բարելավման, կրակակետերի տեղաբաշխման և դրանց սարքավորման, հանկարծակիության դեպքում ամեն մի ռազմիկի և անձնակազմի կոնկրետ գործողությունների հետ: Թիկունքի ծառայություններում և ստորաբաժանումներում առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում զորամասերը ռազմապաշարով և սննդամթերքով ապահովելուն, մարտերի ընթացքում վիրավորներին օգնություն ցույց տալուն և էվակուացնելուն: Կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները որոշում էին յուրաքանչյուր կոմունիստի և կոմերիտականի խնդիրը այդ մարտերում:

Բացառիկ անհաջողատ ու տագնապալի օրեր էին: Թշնամին գտնվում էր Մոսկվայի և Լենինգրադի մատույցներում: Հիտլերը պարօննում էր, որ նրա զորքերը շուտով կգրավեն Մոսկվան: Ռազմաճակատների շատ հատվածներում տիրող դրություն մասին հաղորդագրություններն անմխիթարական էին: Հիտլերյան զեներալ Կլեյստի տանկային բանակը նետվում էր դեպի Ռոստով: Ամենատղնապալի և ծանր զգացումն այն էր, որ Թշնամին գտնվում է Մոսկվայի պատերի մոտ: Միացնելով ռազմորդուհունիչները, մարդիկ անհամբեր սպասում էին Լեիտանի պատկառազու ձայնին, «Խոսում է Մոսկվան: Խոսում է Մոսկվան»: Մոսկվան կանգուն է, ուրեմն կանգուն ենք և մենք:

Մեր դիվիզիան 30-րդ հրաձգային դիվիզիայի և 132-րդ տանկային բրիգադի հետ խնամքով պատրաստվում էր առաջիկա ծանր մարտերին: Նա սպասում էր հակառակորդին: Պատրաստվում էր ու սպասում էր ու պատրաստվում:

Կլեյստի զորքերը ևս հրամանի էին սպասում: Հակառակորդի ինքնաթիռները հաճախ էին հայտնվում մեր պաշտպանության վերևում: Հետախույզները թռչում էին օր ու գիշեր: Նրանք թռչում էին ցածրից՝ հայտնվում էին ամպերի ետևից, խուզող թռիչքով սլանում դիրքերի վրայով, նետում էին մեկ-մեկու ռումբ և հեռանում: Գերմանական հրամանատարությունը փորձում էր մեր

պաշտպանությունը հետախուզել նաև ցամաքային միջոցներով: Մի անգամ հետաքրքրաշարժ դեպք տեղի ունեցավ: Դյակովոյի մոտ տեղի ունեցած մարտերի նախօրեին 9-րդ բանակի շտաբից ստացվեց մի հեռագիր, որով պահանջվում էր շտապ ներկայացնել կարմիրբանակային «Կետիսյանի» բնութագիրը: Յույց տալով հեռագիրը, դիվիզիայի կոմիսարը հարցրեց, արդյոք ես դիտե՞մ նրան:

— Պետք է որ Ավետիսյան լինի, իսկ այդպիսիք դիվիզիայում մի քանիսն են, — տարակուսանքով ասացի ես:

Որոշեցինք ստուգել: Կարմիրբանակային Ավետիսյանը 387-րդ զնդում էր: Նրանց վաշտը պաշտպանություն էր գրավել գումարտակի երկրորդ էշելոնում, դիվիզիայի աջ թևում, իսկ նա վաշտում չէր: Մինչև մենք կպարզեինք կատարվածը, բանակում նրան պարզեատրեցին Կարմիր դրոշի շքանշանով և ծառայության թողեցին բանակային ստորաբաժանումներից մեկում: Նա այլևս դիվիզիա չվերադարձավ: Վաշտից հեռանալով թիկունքի ուղղությամբ, խոտի զեզի մոտ Ավետիսյանը հակառակ կողմից ինչ-որ խոսակցություն է լսում: Գերմանացիներ են խոսում, հետախույզներ: Ավետիսյանն ունեյ հրացան և երկու նոնակ: Նա որոշում է գործել: Անցնելով զեզի հակառակ կողմը, նա ակնթարթորեն նետում է նոնակը և ավինով խոցում մեկին, մյուսին, երրորդին... յոթ հոգի ողնշանում են, ութերորդը բարձրացնում ձեռքերը: Ավետիսյանը հավաքելով հետախույզների ավտոմատները, ատրճանակները և մյուս սիտույքները, բարձում է գերված ֆաշիստին, տանում զնդի հրամանատարական կետը: Մառախլապատ օր էր: Ավետիսյանը շփոթեր հրամանատարական կետի տեղը: Ճանապարհին հանդիպում է մի ավագ լեյտենանտի, որը Ավետիսյանի հետ զերուն հասցնում է հարեան զորամասի հրամանատարական կետը: Այնտեղ ուրախանում են այդ օրերին «լեզու» ձեռք բերելը շատ կարևոր էր: Սպան և Ավետիսյանը զերուն հասցնում են բանակի շտաբը: Բանակի շտաբում հայտնի է դառնում, որ ֆաշիստական հետախույզին զերի վերցնող կարմիրբանակայինը 136-րդ դիվիզիայից է:

Դյակովո եկավ Ուկրաինայի Կ(բ)Կ Վորոշիլովգրադի մարզկոմի բարտուղար Ա. Ի. Գաևոյը: Նա հանդիպեց դիվիզիայի հրամանատարի և կոմիսարի հետ, այցելեց քաղբաժին: Անտոն Իվանովի-

չը չլինել չպահանջեց: Նա միայն լսեց մեզ, իսկ հրաժեշտ տալիս կարճ ասաց:

— Մեր ամբողջ հույսը ձեզ վրա է:

Առաջ անցնելով ասեմ, որ հետագայում ինձ վիճակվեց հաճախ հանդիպել Գաևույի հետ: Պատերազմից հետո նա աշխատում էր կուսակցության Դնեպրոպետրովսկի մարզկոմի քարտուղար, այնուհետև Ուկրաինայի կոմկուսի Կենտկոմի քարտուղար, բազմիցս ընտրվել է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի անդամ և ՍՍՀՄ Գերագույն սովետի ղեկուստատ: 1958 թվականին հանդատացել ենք միասին: Ուկրաինական ՍՍՀ-ի և Ուկրաինայի կոմունիստական կուսակցության քառասունամյակի օրերին Կիևում նա ընդունեց ու ճանապարհեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվիրակությանը:

Հոկտեմբերի 24-ի ուշ երեկոյան դիվիզիայի կոմիսարն առաջարկեց ստեղծել բրիգադներ զորամասերի ու թիկունքի պատրաստությունը ստուգելու համար: Թիկունքի պատրաստությունն ստուգող բրիգադի ղեկավարումը հանձնարարվեց ինձ: Ինձ հետ էին դիվիզիայի սանձառայությունն պետ Ն. Լ. Պյատնիցկին և թիկունքի գծով քաղբաժնի հրահանգիչ Մեդվեդևը:

Պատերազմում ստուգման կանոնն այս է. սեփական աչքերով տես, համոզվիր և պահանջիր: Ամենից առաջ ստուգեցինք ռազմամթերքը: Բնականաբար մենք գիտեինք, թե որքան ռազմամթերք է բերված կրակային դիրքերը և որքան կա պահեստներում: Մատակարարողներն աշխատում էին լարված՝ ումանք զինամթերք և զինք էին տեղափոխում բանակի պահեստներից, մյուսներն այդ ամենը ուղարկում էին կրակային դիրքերը: Մի քանի ժամով Ռովենկի եկավ նաև դիվիզիայի հրետանու պետ գնդապետ Ն. Ի. Տելեգինը, անձամբ ստուգեց հրետամատակարարման գործը և հրետանային արհեստանոցների պատրաստվածությունը, ավտոբատը նույնպես լարված էր աշխատում: Նախազգուշական միջոցներ էին ձեռնարկվում տրանսպորտի անխափան աշխատանքն ապահովելու համար: Փոխադրումները կատարվում էին մարտական բարդ պայմաններում: Հարկավոր էր համոզվել, որ վարորդները պատրաստ են և ի վիճակի ավիացիայի գործողությունների պայմաններում ռազմամթերք և սննդամթերք հասցնել զորամասերին: Ամեն ինչ կարգին էր: Անհանգստացնում էր ճանապարհը: Նա միակն էր,

իսկ մինչև գնդերը 25 կիլոմետրից ավել տարածություն կար: Հարկավոր էր խուսափել տրանսպորտը շարասյուններով օգտագործելուց՝ հատկապես ցերեկ ժամանակ, փոխադրումները կատարել առավելապես գիշերը, նպատակ ունենալով վիրավորներով և ռազմամթերքով բեռնված ավտոմեքենաները պահպանել ումբակոծությունից: Վարորդներն ունեին առանց լույսի գիշերային փոխադրումների փորձ:

Բուժսանգումարտակի հրամանատար Մ. Միխեևը պատմեց վիրավորների էվակուացմանն ու ընդունմանը գումարտակի պատրաստության մասին: Ռովենկիի ծայրամասում բուժսանգումարտակն արդեն պատրաստել էր մի քանի տնակներ և մի վիթխարի վրան բացել անտառում: Վիրավորներին ըստ գնդերի էվակուացնելու համար առանձնացրել էին բուժաշխատողներ և տրանսպորտ: Մարդկանց պատրաստում էին ծանր ու բարդ պայմաններում աշխատելու համար: Բայց գումարտակի հրամանատարի տրամադրությունը վատ էր: Ռովենկիի ճանապարհին, ինչ-որ մեկի մեղքով, բուժսանգումարտակը կորցրել էր իր ունցվածքի մի մասը, որի համար դիվիզիայի հրամանատարը Միխեևին հայտարարել էր նկատողություն: Սովորաբար հանդարտ, հավասարակշռված, ֆիննական կամպանիայում մեծ փորձ ձեռք բերած, լավ կազմակերպիչ էր Միխեևը:

Վերահատական դասակի հրամանատար Գրիգոր Ազարյանը կարճ զեկուցեց.

— Մեզ մոտ ամեն ինչ պատրաստ է: Հավատացեք, կաշխատենք ինչպես հարկն է:

Ազարյանին ես գիտեի Ղափանի շրջանից: Լենինյան հանքերի հիվանդանոցի եռանդուն զլխավոր բժիշկ և շրջանի զլխավոր վիրաբույժ, պրոֆեսոր Յուլյանի տաղանդավոր աշակերտներից էր, որից ժառանգել էր ոչ միայն մասնագիտությունը, այլև խստությունն ու պահանջկոտությունը աշխատանքում: Վերջինը նա, ըստ երևույթին, որոշ չափով շարաշահում էր: Բողոքում էին, որ կոպիտ է: Մի անգամ կատակով ասացի նրան.

— Գու, Գրիշա, ոչ թե բժիշկ պետք է լինելիր, այլ միլպետ:

Ի տարբերություն գումարտակի հրամանատարի, Ազարյանի տրամադրությունը մի փոքր բարձր էր: Թվում էր, թե ինչ-որ ուրախալի բան է կատարվել նրա կյանքում: Իրականում պատահել էր

նույնը, ինչ և Միխեևի հետ՝ նրան էլ էր բաժին «հասել»։ Ես նրան հարցնում եմ աշխատանքի, մարդկանց, գործիքների, դեղամիջոցների մասին... իսկ նա՝ «Ամեն ինչ կարգին է», իր հերթին հարցնելով՝ Լասիլենկոյի մասին և, շսպասելով, թե ես ինչպես կարծազանքեմ, ասաց.

— Ա՛յ, դա տղամարդ է։ Պահանջում ես՝ այնպես պահանջիր, որ ոսկորնձրը ճռոտան։

Ազարյանը արժանապատվությամբ անցավ ամբողջ պատերազմը, իսկ կյանքն ավարտեց տանը՝ պատահական, անհեթեթ մահով։

Գններալ Կլեյստի տանկային բանակը գալիս էր Ռոստովի վրա։ Նա վստահ էր իր և իր մշակած տակտիկայի վրա։ Ուզում էր ճեղքել մեր պաշտպանությունը, շրջանցել հարավում գործող սովետական դիվիզիաներին, նրանց սեղմել Գոնին ու Ազովի ծովին, ոչնչացնել և գրավել Ռոստովը... Ոչ ավել, ոչ պակաս՝ ոչնչացնել։ Այդպես էր հրամայել Հիտլերը, այդպես էր մտածում ու պլանավորում ֆոն Կլեյստը։ Ճանապարհը դեպի Ռոստով, ինչպես նա էր նշել, հյուսիսից անցնում էր Գյակովոյի, Նովոռախտինսկի և Շախտիի միջով։ Սովետական զորքերի դեմ Գյակովոյի մոտ Կլեյստը կենտրոնացրել էր 14-րդ և 16-րդ տանկային դիվիզիաները, ՍՍ-ի «Վիկինգ», «Ադոլֆ Հիտլեր» և «Մեծ Գերմանիա» դիվիզիաները։

Կլեյստի բանակի գլխավոր հարվածի ճանապարհին կանգնած էր 136-րդ հրաձգային դիվիզիան։ Նրա խնդիրը ծայր աստիճան պարզ էր ու նույնքան էլ բարդ։ Հարկավոր էր ինչ դնով լինի պաշտպանել դիրքերը, ձախողել Կլեյստի պլանը։ Հակառակորդն ուներ ուժերի, հատկապես տանկերի և զրահամեքենաների մեծ գերակշռություն։ Կլեյստի զորախմբի դեմ տարած հաղթանակի առթիվ Հարավային ռազմաճակատի ռազմական խորհուրդը 1941 թվականի նոյեմբերի 15-ին 136-րդ դիվիզիայի հրամանատարությանն ուղարկեց հեռագիր, որում նշված էր, որ հիտլերականները «հինգ անգամ մեզ գերազանցում էին տանկերի և զրահամեքենաների գծով»։ Երեք օր անց ռազմաճակատային «Во славу Родина» թերթը հաղորդեց ճշգրտված տվյալները՝ «գերմանական վեց տանկ սովետական ամեն մի տանկի դեմ»։ Թերթը գրում էր, որ 136-րդ և

30-րդ դիվիզիաների դեմ գններալ Կլեյստը նետել էր 216 տանկ¹։ Գրանցից ավելի քան հարյուրը գործում էր միայն 733-րդ գնդի դեմ, իսկ վաթսուներ՝ 541-րդ գնդի։ Այնինչ 132-րդ տանկային բրիգադից 136-րդ դիվիզիայի հրամանատարի տրամադրությամբ տակ դրված էր ընդամենը 18 տանկ։ Այսպիսով, 136-րդ դիվիզիայի տեղամասում տանկերի հարաբերակցությունը կազմում էր 9 : 1՝ հօգուտ հակառակորդի։

Հոկտեմբերի 29-ի դիշերը թշնամու ավիացիան հանկարծակի և ուժգին ուժրակոծեց Ռովեսկիի մոտ գտնվող անտառը։ Դա ապացուցում էր, որ հակառակորդը պատրաստ է հարձակման։ Ռումբերը պայթում էին հանրափորների տներին շատ մոտ։ Գրանից առաջ, հոկտեմբերի 28-ի երեկոյան, անտառ եկավ տանկային զորամասը։ Հավանաբար թշնամու հետախուզությունը նկատել էր զորամասի շարժումը և ուզում էր տանկերը ոչնչացնել մինչև մարտի մեջ մտնելը։ Բայց տանկերին նրանք վնասել չկարողացան։ Ռումբերը պայթեցին այնտեղ, որտեղ տեղավորված էր անասնաբուժական լազարեթը։ Մի կարմիրբանակային սպանվեց, երկուսը վիրավորվեցին։ Լազարեթի բոլոր 27 ձիերն էլ ոչնչացան։ Այդ օրվանից անասնաբուժական լազարեթը դադարեցրեց իր գոյությունը։

Տանկերը հեռացան։ Մենք թիկունքային զորամասերը տարակենտրոնացրինք։

◆
Հոկտեմբերի 31-ին հակառակորդի «ՍՍ-Վիկինգ» դիվիզիան և երկու տանկային դիվիզիաներ գրավեցին Էլման դիրքերը։ Օդում գտնվում էին հետախույզ ինքնաթիռները։

Առաջին հարվածն իր վրա ընդունեց 541-րդ գնդի կապիտան Ֆրոլովի գումարտակը։ Դա նոյեմբերի 1-ին էր, առավոտյան։ Գումարտակը դուրս էր բերվել գնդի պաշտպանական բնագծի առաջ, խնդիր ունենալով հակառակորդին ստիպել մարտն ընդունել մինչև գնդի պաշտպանության հիմնական բնագծին մոտենալը, կազմավորվել նրա մարտակարգերը։ Ֆրոլովի գումարտակը խրամատավորվել և սպասում էր։ Սկզբում գումարտակի վրա հարձակվեցին թշնամու երկու տանկային վաշտ և հետևակային մի գումարտակ։

¹ «Վո սլավու Ռոդինե» թերթ, № 306, 18 նոյեմբերի 1941:

Ֆրոլովի գումարտակը հաջողությամբ ետ մղեց նրանց գրոհները, ստիպելով ետ դառնալ ելման դիրքերը: Գերմանացիները աստիճանաբար ուժեղացրին ճնշումը: Տանկերի թիվը հասավ 38-ի, իսկ հետևակինը՝ երկու գումարտակի: Թշնամու տանկերը ձգտում էին ինչ զնով էլ լինի ներխուժել գումարտակի մարտակարգերը: Մարտերը բացառիկ լարված բնույթ են դռնեցին, ստեղծվեց կրիտիկական դրուժյուն, սակայն գումարտակի մարտիկները տոկունությամբ պաշտպանում էին իրենց դիրքերը, ցուցաբերում իսկական հերոսություն: Այսպես շարունակվեց երեք օր: Գերմանացիները կորցրին 400 զինվոր ու սպա և 10 տանկ: Գիշերները նրանք կազմակերպում էին ռադիոհաղորդումներ մեր գումարտակի համար, նրան անվանելով «կատաղիների գումարտակ» և սպառնալով բնաջնջել մինչև վերջին մարդը: 9-րդ բանակի ռազմական խորհուրդը ցուցաբերած հերոսության համար շնորհակալություն հայտնեց գումարտակի անձնակազմին:

Գիվիզիայի պաշտպանության մյուս հատվածներում թշնամին առայժմ շոշափում էր նրա ամրությունը: Կլեյստը գտնում էր, որ մեր պաշտպանության առաջին գիծը ձեղքելուց հետո նա այլևս լուրջ դիմադրության չի հանդիպի, անարգել կշարժվի դեպի նովոշախտինսկ: Սակայն այնպես ստացվեց, որ միայն կապիտան Ֆրոլովի գումարտակը նրան լուրջ մտորումների առիթ տվեց... Նոյեմբերի 4-ին նա հարված հասցրեց 541-րդ զնդի ամբողջ պաշտպանության գծին: Գալիս էին տանկերը, նրանց ետևից հետևակը:

541-րդ զնդի հրամանատար փոխգնդապետ Ա. Ս. Նազարովը հմտորեն կազմակերպեց զնդի ստորաբաժանումների և նրան հանձնված հրետանու պաշտպանությունն ու գործողությունները: Չնայած հակառակորդի մեծ զերակշռությանը, գունդը հաջողությամբ ետ մղեց նրա գրոհները: Ուժերն անհավասար էին, իսկ գոտեմարտը՝ մահացու: Բայց դիվիզիայում որոշակիորեն հասկանում էին, որ վճռական մարտերը առջևումն են, թշնամու գլխավոր հարվածը սպասվում է 733-րդ զնդի հատվածում:

Մի խումբ քաղաշխատողների հետ ես գտնվում էի 733-րդ զնդում: Նոյեմբերի 3-ի երեկոյան զնդի հրամանատար գնդապետ Ա. Ի. Տավանցիը այսպես գնահատեց իրադրությունը. «Առայժմ հակառակորդը հարվածում է 541-րդ զնդին: Մեր զնդի տեղամա-

սում նա միայն շոշափում է մարտական պաշտպանությունը և պաշտպանության առաջավոր գիծը: Վաղը նա կփորձի պարզել զնդի պաշտպանության հուսալիությունը, իսկ հաջորդ օրը մեզ վրա կնետվի ամբողջ ուժով»:

Նոյեմբերի 5-ի առավոտյան հակառակորդը բոլոր ուժերով անցավ հարձակման: Նա 733-րդ զնդի դեմ նետեց ավելի քան 100, իսկ 541-րդ զնդի դեմ՝ 60 տանկ: Տանկերի ետևից շարժվել սկսեցին «ՄՍ-Վիկինգ», «Ադոլֆ Հիտլեր» և «Մեծ Գերմանիա» դիվիզիաների զրահամեքենաներն ու հետևակը:

Ուժերն անհավասար էին: 30-րդ հրաձգային դիվիզան, որը նախորդ մարտերում զգալի կորուստներ էր կրել և սակավամարդ էր, պաշտպանությունը զրավեց մեր 136-րդ դիվիզիայի 541-րդ և 733-րդ զնդերի միջև:

Առաջին իսկ րոպեներից մարտերը բացառիկ կատաղի բնույթ են դրսևեցին: Այդ մարտերի մասնակիցները դրանց մասին խոսում էին ոչ այլ կերպ, քան «մսաղացի» մասին: Գերմանացիների գրոհները կրկնվում էին անընդհատ, ամբողջ տեղանքը պարուրված էր ծխով: Զենքի բոլոր տեսակները գործում էին միաժամանակ: Յուրաքանչյուր գրոհ զերմանացիների համար ավարտվում էր հարյուրավոր զինվորների ու սպաների, տասնյակ տանկերի ու զրահամեքենաների կորստով: Փաշխատները որոշել էին ինչ զնով լինի ձեղքել մեր պաշտպանությունը: Մեր բոլոր տրամաշափերի հրետանին և հակատանկային զենքերը ֆաշիստների տանկերին և զրահամեքենաներին սկզբում հարվածում էին հեռավորությունից, հետո՝ դիմահար, տանկեր կործանող հետևակայինները տանկերի ու զրահամեքենաների տակ էին նետում նռնակների խրձեր, օգտագործում էին հրկիզող շշեր, ականաձիգներն ու զնդացորդները հարվածում էին հարձակվող հետևակի շղթաներին, հրաձգային ստորաբաժանումները թշնամու հետևակը կտրում էին տանկերից ու նրան վերցնում փոթորկալի կրակի տակ, տեղ-տեղ բռնվելով ահեղ ձեռնամարտի: Թշնամու գլխին կարկուտի պես թափվում էին նռնակները: Բայց նա գալիս էր ու գալիս... Տեղ-տեղ հակառակորդին հաջողվում էր սեպվել մեր զնդերի պաշտպանության մեջ, մասնատել այս կամ այն գումարտակը, օղակել այս կամ այն վաշտը: Տանկերը ներխուժում էին զնդերի մարտակարգերը, ընթացքից կրակ վարելով զնում կրակակետերի ու դիրքերի վրա,

որպեսզի ճշմեն դրանք: Մեր մարտիկներից ոչ մեկը չթողեց իր դիրքը, շրջադարձերից կրակը թշնամու վրա, ցույց տվեց համառ դիմադրություն:

Ութ օր շարունակ 541-րդ գունդը տոկունություն մեջ դիմացավ հակառակորդի գերակշռող ուժերի բազմաթիվ գրոհներին: Կապիտան Ֆրոլովի գումարտակի հերոսության մասին պոստպելներ էին պատմում: Նրա օրինակը տարածվեց դիվիզիայում, ռազմաճակատում: Հերոսական գումարտակի օրինակը լցրեց ռազմաճակատային թերթերի բազմաթիվ էջեր: «Անօրինակ սխրագործություն», «անձնագրահուն», «տոկունություն», «բազադործություն», — այսպես էին որակում թերթերն անվահեր հրամանատարին ու նրա գումարտակին:

Ճաշիստներին հաջողվեց մի քանի անգամ սեպածե խրվել գնդի պաշտպանության մեջ, շրջանցել նրան թևից: Մի քանի ստորաբաժանումներ կտրվեցին գնդից ու ընկան շրջապատման մեջ: Բայց որքան դժվարին, թվում էր թե անելանելի էր դառնում նրանց դրությունը, այնքան հեռատես ու մտազգաց էին դառնում մարդիկ: Նրանք մարտը շարունակում էին օղակման մեջ և անխնա ջախջախում թշնամուն: Գնդի հրամանատար փոխգնդապետ Նազարովը հրետանու և ականանետների կրակի, շարժական խմբերի գրոհների միջոցով հմտորեն օգնություն էր կազմակերպում այդ ստորաբաժանումներին: Խիզախ հրամանատարը մի քանի անգամ այս խմբերին անձամբ գրոհի տարավ թշնամու գեմ: Գնդի կոմիսար Ստրախովը հայտնվում էր ամենադժվարին բնագծում, ողբշնչում, մարտի էր մղում մարդկանց: Սպասովկա գյուղում թշնամու տանկերը մարտիկների մի փոքրիկ խմբի, որի մեջ կոմիսար Ստրախովն էր, կտրել էին գումարտակից: Գյուղական տնակին շատ մոտ, որտեղ գտնվում էին մարտիկներն ու իրենց կոմիսարը, կանգնեցին հակառակորդի տանկերը: Կոմիսարը հրամայեց. «Չկրակել: Թող թշնամին կարծի, որ շուրջը ոչ ոք չկա»: Բացվեց մի տանկի դռնակը, տանկիստը դուրս եկավ: Կոմիսարն արգելեց կրակել նրա վրա: Իսկ երբ տանկերը շրջվեցին ետ, Ստրախովը հրամայեց հրկիզող շշերով «այրել»: Հինգ տանկերից երեքը բոցավառվեցին:

Ինչպես վերը նշեցինք, նոյեմբերի 5-ին հակառակորդը իր գլխավոր հարվածն ուղղեց 733-րդ գնդի դեմ: Ստեղծվեց մի այն-

պիսի դրություն. երբ մահացու գոտեմարտերը ծավալվեցին գնդի մարտակարգերում: Կանխատեսելով նման հնարավորություն, գրեհապետ Տավանցևը ստորաբաժանումները մարտի պատրաստեց այն հաշվով, որ կարողանա հակառակորդի հետևակը կտրել տանկերից և կործանել այն: Երբ թշնամու տանկերը սեպվեցին գնդի մարտակարգերի մեջ, նրանք մեկուսացվեցին հետևակից: Մեր հրետանավորներն սկսեցին գնդակոծել մեկուսացված տանկերին: Մայր Չոբանենկոյի գլխավորած 291-րդ գնդի հրետանավորները թշնամու տանկերի դեմ մարտնչելիս ցուցաբերեցին բացառիկ տոկունություն: Միայն կապիտան Շումեյկոյի մարտկոցը ոչնչացրեց թշնամու 12 տանկ: Նշանառու Շումիլովը 291-րդ գնդում առաջինը կրակ բացեց տանկերի վրա և առաջինը ուղիղ նշանառությամբ շարքից հանեց հակառակորդի մի տանկ: Նա օրինակ դարձավ մյուսների համար: Վիրավորվելով մի քանի տեղից, Շումիլովը շարունակում էր հարվածել տանկերին: 733-րդ գնդի ականանետային վաշտերից մեկը գտնվում էր ծանր դրության մեջ, շուրս կողմից նրա վրա նետվեցին թշնամու տանկերը: Նա շարունակեց մարտը: Մարտիկները նոսակների խրձեր նետեցին տանկերի տակ, որոնք գալիս էին իրենց վրա: Ոչ ոք չհարժվեց իր տեղից, մարդիկ գերադասում էին զոհվել, բայց շրջադարձեցին մարտը: Դա, հիրավի, կոլեկտիվ սխրագործություն էր: Դիվիզիայի հրամանատարը մարտի մեջ մտցրեց իր ռեզերվը՝ 132-րդ տանկային բրիգադը:

Նոյեմբերի 6-ին 733-րդ գնդի 1-ին վաշտի քաղղեկ Հուսեին Անդրուխանը սխրագործություն կատարեց, որն ընդմիշտ կմնա սովետական հերոսիկայի պատմության մեջ: Վաշտի մարտիկների մի փոքրիկ խումբ առաջ նետվեց գումարտակի դիրքերից, որտեղ նա պաշտպանություն էր գրավել: Խմբի հետ էր վաշտի քաղղեկ Անդրուխանը: Ընկնելով շրջապատման մեջ, խումբը տոկունությամբ պաշտպանում էր իր դիրքերը, անխնա ջարդելով թշնամուն: Խումբը գնալով նոսրանում էր՝ մնացել էին ընդամենը երեք մարտիկ և քաղղեկը, իսկ փամփուռները վերջանում էին: Այդ ճակատագրական բույններին քաղղեկը մտածում է ինչպես փրկել կենդանի մնացածների կյանքը: Նա պառկեց գնդացրի մոտ և մարտիկներին հրամայեց սողեսող դուրս գալ օղակից: Մարտիկները չէին ուզում մեռնել թողնել քաղղեկին և շենթարկվեցին նրա հրամանին: Բայց

Անդրուխանը անդրդվելի էր: Վերջին փամփուշտներն ու նանակները հանձնելով քաղղեկին, կարմիրբանակայինները սողեսող անցան գումարտակի կողմը, շրջվելով և ուշադիր նայելով քաղղեկին: Գերմանացիները «Ռուս, հանձնվիր» բղավելով անցան գրոհի: Անդրուխանը նրանց դիմավորեց գնդացրային կրակով, ստիպեց պռակել: Շուտով գնդացիրը լռեց: Քաղղեկը սկսեց կրակել հրացանից: Փամփուշտները վերջացան: Ֆաշիստները կրկին նետվեցին առաջ, կրկնելով՝ «Ռուս, հանձնվիր»: Նրանց վողմը թռավ մի նրոնակ, երկրորդը, երրորդը... Անդրուխանը կանգնեց հասակով մեկ և ասաց՝ «Դե՛, սողուններ, վերցրե՛ք»: Քաղղեկը հանեց վերջին հակատանկային նոնակը և մի ակնթարթում պայթեցրեց. քաղղեկը զոհվեց՝ ոչնչացնելով մի տասնյակ ֆաշիստներին: Սովետական ռազմիկների այդ փոքրիկ խումբը քաղղեկ Անդրուխանի գլխավորությամբ անհավասար մարտում ոչնչացրեց 100-ից ավելի հիտլերականների: Քաղղեկն իր կյանքը զոհեց հանուն հայրենիքի, հանուն իր ենթակաների: Նա դարձավ լեգենդար հերոս, դարձավ օրինակ այն բանի, թե ինչպես պետք է ապրի, պայքարի ու զոհվի կոմունիստը: Ռազմաճակատային մամուլը հրապարակեց Անդրուխանի հերոսությունը: «Հիշողությունից երբեք չի ջնջվի սովետական ժողովրդի հերոսական զավակ, կրտսեր քաղղեկ Հուսեին Անդրուխանի սխրագործությունը, որը հերոսաբար զոհվեց գերմանական զավթիչների դեմ մղված անհավասար մարտում», — գրեց «Պրավդա»-ն 1943 թվականի մարտի 28-ին:

Գնդի մարտակարգերում կատաղի կռիվները շարունակվեցին: Ֆաշիստները անընդհատ գրոհում էին գնդի պաշտպանության առջևում գտնվող թմբիկի մոտ պաշտպանվող Իվան Ֆեդերոկի ջոկի վրա: Ոչ մի տեղից օգնության հույս չկար. Ջոկը ետ էր մղում ֆաշիստների գրոհները. նրա խնդիրն էր՝ թույլ չտալ թշնամուն ներխուժել վաշտի մարտակարգերը: Ֆեդերոկի ջոկի յուրաքանչյուր մարտիկ ոչնչացրեց 10-ից ավելի ֆաշիստ: Բայց հիտլերականները հորից ու նորից էին գալիս շղթայով: Մարտիկները կանգուն էին: Ջոկի մարտիկների մի մասը զոհվեց, մյուսները վիրավորվեցին: Ծանր վիրավորվեց նաև Ֆեդերոկը: Բայց ջոկը պաշտպանեց թմբիկը:

387-րդ գունդը գտնվում էր դիվիզիայի պաշտպանության երկ-

րորդ էշելոնում: Բայց իրադրությունը ստիպեց հենց առաջին իսկ օրից այն մտցնել մարտի մեջ: Գումարտակներից մեկը գնդի շտաբային ստորաբաժանումների հետ մեկտեղ գործում էր 733-րդ գնդի հատվածում, մյուսը՝ դիվիզիայի հրամանատարի շարժական խմբի կազմում՝ 132-րդ բրիգադից հանձնված տանկերի հետ, երրորդը գտնվում էր ռեզերվում և պաշտպանում էր դիվիզիայի աջ թևը: Այդ գումարտակի մի վաշտ տեղավորվեց Դյակովոյից արևմուտք, խնդիր ունենալով հակառակորդի կողմից պաշտպանություն աջ թևը ձեղքելու դեպքում պաշտպանել դիվիզիայի հրամանատարական կետի մատուցները:

Նոյեմբերի 5-ին դիվիզիայի հրամանատարը գնդի հրամանատար Սոմոնովին հրամայեց մի գումարտակի և իր տրամադրություն տակ մնացած շտաբային ստորաբաժանումների ուժերով հարձակվել Պետրովսկի խուտորի վրա և օգնել 733-րդ գնդի ձախթևի ստորաբաժանումներին: Նույն օրը մարտի մեջ մտան շարժական խումբը, ինչպես նաև գվարդիական ականանետների դիվիզիոնը:

387-րդ գունդը (մի գումարտակով) համառ մարտեր էր մղում Պետրովսկի խուտորի շրջանում: Նոյեմբերի 6-ի օրվա երկրորդ կեսին հակառակորդը սեպվեց գումարտակի ու գնդի հրամանատարական կետի միջև և օղակի մեջ վերցրեց հրամանատարական կետը: Հեռախոսային կապը գնդի հրամանատարական կետի և գումարտակի միջև կտրվեց: Գումարտակը մարտը շարունակեց ինքնուրույն: Համառորեն մարտնշում էին շրջապատված շտաբականները: Շտաբի սպաները զինված էին միայն ատրճառակներով. 20 մարտիկ և սերժանտը՝ հրացաններով ու ավտոմատներով, նրանց տրամադրության տակ կար մեկ հաստցավոր և մեկ ձեռքի գնդացիր, 45 մմ մեկ հրանոթ: Քիչ է ասել, թե մարտը անհավասար էր: Գնդացրորդներից մեկն սպանվեց: Նրան փոխանեց մեկ ուրիշը: Հրանոթի նշանացույցը ջարդվեց, սակայն հանրամիտ նշանառու սերժանտ Ուսանկովը հրանոթը թշնամու տանկերի դեմ ուղղեց փողի միջոցով և արագ կրակ բացեց, նույնիսկ ոչնչացրեց մեկ տանկ: Շատերն սպանվեցին ու վիրավորվեցին: Մարտում ընկավ հատուկ բաժնի ավագ-օպերլիազոր ժուժեման: Հատուկ բաժնի օպերլիազորի օգնական Մադաբ Պետրոսյանին Բագյանը «Քյորփա» էր կոչում: Համագնդեցիները կարծում էին,

թե դա նրա անունն է: Պետրոսյանը ավելի շատ գնդի հրամանատարի ու կոմիսարի հանձնակատարն էր, քան թե հատուկ բաժնի օպերլիազորի օգնական: Բացառիկ եռանդի տեր և հնարամիտ Պետրոսյանը արագ և ճիշտ էր կատարում հրամանատարի ու կոմիսարի ամեն մի հանձնարարությունը: Այդ օրը Պետրոսյանը վազում էր կրակակետից կրակակետ, փոխանցում գնդի հրամանատարի հրամանները: Կապի ուրիշ միջոցներ չկային: Դժբախտաբար, Պետրոսյանը նույնպես վիրավորվեց: Ու թեև նա շարունակում էր կատարել հանձնարարությունները, բայց արդեն ուժերը լքել էին նրան: Հրամանատարն ու կոմիսարը ստիպված իրենք էին վազում մի կրակակետից մյուսը: Գրությունը օրհասական էր դառնում: Գնդի հրամանատար Սամսոնովին դժվարությամբ հաջողվեց ռադիոյով կապվել դիվիզիայի հրամանատարական կետի հետ: Նա խնդրեց շտապ հաղորդել մոտ կանչել ինձ, որպեսզի հայերեն խոսեմ Բագյանի հետ: Գնդի կոմիսար Վասիլենկոն և Աբաուլինը կռահեցին՝ վիճակը ծանր է, Սամսոնովը չի ուզում ռուսերեն խոսել, որպեսզի գերմանացիները չորսան: Գնդի կոմիսարը ղեկուցում էր հայերեն, բայց կասկածում էր՝ հանկարծ գերմանացիները հայերեն խոսակցությունը չորսա՞ն:

Մենք սկսեցինք խոսել Ղարաբաղի բարբառով: Ոչ ոք չէր կարող հասկանալ:

Նա դիվիզիայի հրամանատարին ու կոմիսարին հաղորդեցի Բագյանի զեկույցի բովանդակությունը:

— Կոմիսարին հաղորդիր, — ասաց դիվիզիայի հրամանատարը, — նրանց կօգնեմ: Հենց որ հրետանին կրակի թշնամու վրա թող նրանք դուրս գան անցքից, միայն զգույշ լինեն, որ չընկնեն մեր գնդակոծության տակ:

Այդ հրամանը մեծ դժվարությամբ հաղորդեցի Բագյանին¹: Ղարաբաղի բարբառով չէի կարող «չրջապատումից դուրս գալ» բառերն ընտրել:

Ամեն ինչ բարեհաջող անցավ: Մի ժամ հետո գնդի շտաբն արդեն անվտանգ տնդում էր: Ղազախ ժողովրդի զավակ, կարմիրբանակային Օսմանովը, միայնակ, ավտոմատով կրակ վարեց

¹ Գնդի կոմիսար Բարուսկինը գնացել էր հիվանդանոց: Նրա փոխարեն գնդի կոմիսար էր նշանակվել Գ. Բագյանը:

մինչև որ շտաբը դուրս եկավ շրջապատումից: Սակայն Օսմանովը անհայտացավ: Բոլորը խորապես ափսոսացին նրա կորստի համար: Եվ հանկարծ մեկ օր հետո Օսմանովը հայտնվեց: Նա թաքնվել էր փոսում և գիշերը դուրս բերել վիրավոր ընկերոջը՝ կարմիրբանակային Ավալովին:

Արյունահեղ մարտերից հետո Կլեյստի զորքերին հաջողվեց մի հատվածում ճեղքել մեր զորքերի պաշտպանությունը:

541-րդ գնդի և 30-րդ դիվիզիայի կցվանքում գերմանացիները հետևակի հետ միասին մարտի մեջ նետեցին ավելի քան 50 տանկ: Թշնամու այդ ահռելի ուժին դեմ-հանդիման կանգնեցին առանձին հետախուզական գումարտակը, որն ուներ ընդամենը 15 փոքր տանկ, և մեկ զրահամեքենա, 541-րդ գնդի կործանիչ վաշտը և 30-րդ դիվիզիայի ձախ թևի վաշտը: Ուժերն անհավասար էին, մղվում էր կենաց ու մահվան մարտ: Գերմանացիները խփեցին մեր 15 մեքենան, ճեղքեցին-անցան մեր պաշտպանության խորքը, այնուհետև ճեղքից առաջ շարժվեցին մեքենայացված զորքերը: Նոյեմբերի յոթի երեկոյան 541-րդ գնդի հրամանատար փոխգնդապետ Նազարովը դիվիզիայի հրամանատարին ղեկուցեց թշնամու կողմից մեր պաշտպանության ճեղքելու մասին: Հակառակորդի զորքերով բեռնված 600 ավտոմեքենա, տանկեր և զրահամեքենաներ առաջ են շարժվում Նովոշախտինսկի ուղղությամբ: Նազարովը հաղբրդեց նաև, որ ձեռնարկում է ճեղքվածքը փակելու միջոցներ:

Դյակովոյի մոտ գտնվող բարձունքից հեռադիտակով երևում էր գերմանական մեքենաների առաջ շարժվող շարասյունը: Վասիլենկոն Սամսոնովին հրամայեց երկու գումարտակի ուժերով թիկունքից հարվածել շարասյանը: Նա գումարտակներն ուժեղացրեց մի քանի տանկերով: Գումարտակները հարձակվեցին շարասյան վերջամասի վրա, երբ արդեն մթնում էր: Գումարտակները հաջող գործեցին: Մեզնից բավականաչափ հեռու, արևելքում նույնպես մարտ բորբոքվեց: Դրանք բանակի թիկունքում դասավորված ստորաբաժանումներն էին: Լուսադեմին դիվիզիայի շտաբում պարզ դարձավ, որ ոչնչացված էր Կլեյստի 14-րդ տանկային դիվիզիայի շտաբը, ավելի քան 200 ավտոմեքենա, տանկ և զրահամեքենա, 250 մոտոցիկլետ, սպանված էր ավելի քան 300 զինվոր ու սպա, զրավվել էին օպերատիվ քարտեզներ և շտաբային փաստաթղթեր: Շարասյան առաջամասը, օգտվելով մթնությունից,

փրկվեց՝ մարտադաշտում թողնելով 14-րդ տանկային դիվիզիայի հրամանատար գեներալ Ռեննի դիակը:

Թշնամին կատաղեց, սկսեց ռազիոհաղորդումներ տալ և սպաննալ ոչ միայն Ֆրոլովի գումարտակին, այլև ամբողջ դիվիզիային: Նրանք մերթ հայհոյում էին, մերթ սպանում ոչնչացնել մեզ: «Ռուս, մենք ձեզ գիտենք, դուք ունեք կենիւի շքանշան, մենք կջարդենք ձեզ և գերի կվերցնենք ձեր շքանշանը: Գժոխային մեքենան չի օգնի ձեզ» — գոռում էին գերմանական բարձրախոսները: Նրանք «գժոխային» էին համարում մեր «կատյուշան»: Նրանք առաջվա նման հայտարարում էին, որ «եւարիտոնովի բանակը ջախջախված է»:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 24-րդ տարեդարձի օրը՝ նոյեմբերի 7-ին, Մոսկվայի ժամանակով ժամը 17,30-ին սովետական ինֆորմբյուրոն հաղորդեց. «Հարավային ռազմաճակատի հատվածներից մեկում ընկ. ընկ. Վասիլենկոյի և Կուզմինի զորամասերը մեկ օրվա ընթացքում ոչնչացրին թշնամու 60 տանկ և հետևակի մեկ գումարտակ»:

Նոյեմբերի 11-ին սովինֆորմբյուրոն հաղորդեց. «Կլեյստի խմբավորումը կորցրել է 113 տանկ, 300 ավտոմեքենա, 200 մոտոցիկլետ, ավելի քան 6500 զինվոր ու սպա»:

Գեներալ Կլեյստը մանրակրկիտ պլանավորել և հավատացած էր, որ նոյեմբերի 7-ին կգրավի Ռոստովը: Նրա պլանները ի դերև եղան շնորհիվ սովետական ռազմիկների խիզախության ու տոկունության:

Հարավային ռազմաճակատի ռազմական խորհուրդը 1941 թվականի նոյեմբերի 15-ին հրամանով շնորհակալություն հայտնեց դիվիզիայի ամբողջ անձնակազմին և հաղորդեց.

«Գերմանացիները Կուլբիշևի ուղղությամբ կենտրոնացնելով գեներալ Կլեյստի՝ իր լավագույն զրահատանկային խմբավորման գլխավոր ուժերը, որի կազմի մեջ մտնում էին 2 տանկային (14-րդ և 16-րդ) և մեկ մոտոդիվիզիա, հույս ունեին մեր պաշտպանությունը ճեղքել Կուլբիշև-Բերյուկով ուղղությամբ կատարված հարվածով, դուրս գալ 9-րդ բանակի թիկունքը և գրավել Նովոչերկասկը և Ռոստովը»:

Նոյեմբերի 5-ի ժամը 8-ին հակառակորդը հարձակման անցավ 9-րդ բանակի աջ թևի ուղղությամբ 136-րդ հրաձգային դի-

վիզիայի և նրա հարևանի ճակատամասում, բայց հակառակորդի մտադրությունը ձախողվեց 136-րդ հրաձգային դիվիզիայի, ռեակտիվ ականանետների 8-րդ զվարդական գնդի 2 դիվիզիոնների, 132-րդ տանկային բրիգադի մարտիկների աննկուն, խիզախ դիմադրության շնորհիվ:

Առանձնահատուկ տոկունություն հանդես բերեց 733-րդ հրաձգային գունդը, որը ետ մղեց հակառակորդի մի քանի ուժեղ գրոհ: 1941 թվականի նոյեմբերի 5—7-ը տեղի ունեցած մարտերում Կլեյստի խմբավորումը կրեց հետևյալ կորուստները. ոչնչացվեց և խփվեց 113 տանկ, ջախջախվեց հակառակորդի մինչև 4 գումարտակ, ինչպես նաև մարտական տեխնիկա:

Հակառակորդի դիտավորությունը ձախողվեց, և Կլեյստի խմբավորումը կրեց մեծ կորուստներ:

Այս զորամասերի մարտիկները, հրամանատարները և քաղաշխատողները տանկերի և զրահամեքենաների թվով հնգապատիկ գերազանցող հակառակորդի դեմ մղված կատաղի մարտերում ցույց տվեցին քաջության, անձնազոհության և հերոսության հիանալի օրինակներ:

733-րդ հրաձգային գունդը, շնայած հակառակորդի 100 տանկերի հարվածին և ձախակողմյան թևանցմանը, ոչ մի քայլ չհանջեց պաշտպանվող բնագծից, այլ թշնամու տանկերին ստիպեց ետ վերադառնալ:

...136-րդ հրաձգային դիվիզիայի, 132-րդ տանկային բրիգադի, զվարդիական ականանետների 2 դիվիզիոնների գործողությունները կարող են մեր հայրենիքին, կոմունիստական կուսակցությանը անսահման նվիրվածության, իրենց զենքի հմուտ օգտագործման և զորքերի գերազանց ղեկավարման փայլուն օրինակ ծառայել:

Այնտեղ, որտեղ հակառակորդը, շնայած ունեցած գերակշռությունը, արժանի հակահարվածի էր հանդիպում, ետ էր շրջվում և ջանում էր թույլ տեղեր գտնել մեր պաշտպանության մեջ:

Նշելով 136-րդ հրաձգային դիվիզիայի և 132-րդ տանկային բրիգադի, զվարդիական ականանետների 2 դիվիզիոնների մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների անվեհերությունն ու խիզախությունը ֆաշիստական զավթիչների դեմ մղվող պայքարում, ռազմաճակատի ռազմական խորհուրդը շնորհակալու-

թյուն է հայտնում 1941 թվականի նոյեմբերի 5—7-ը մարտերին մասնակցած ամբողջ անձնակազմին.

Առավել աչքի ընկածներին ներկայացնել կառավարական պարգևներին:

— Փա՛ռք անվեհեր ռազմիկներին, որոնք ընկան մեր հայրենիքի ռիսերիմ թշնամու դեմ մղվող մարտերում՝ հանուն Լենինի կուսակցության, հանուն մեր հայրենիքի ազատության»: Հրամանն ստորագրել են.

Ռազմաճակատի հրամանատար Չերեխչենկո,

Ռազմական խորհրդի անդամ Ռյաբչին և

Շտաբի պետ Անտոնով¹:

Ռազդորին շրջանում և Գյակովոյի մոտ ֆոն Կլեյստի խմբավորման դեմ մղվող զոտնամարտերում ցուցաբերած խիզախության համար Լենինի շքանշանակիր 136-րդ հրաձգային դիվիզիան ռազմաճակատի հրամանատարության նախաձեռնությամբ ներկայացվեց զվարչիականի կոչման և պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: Գիվիզիայից 150 հոգի պարգևատրվեցին Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով, այդ թվում Լենինի շքանշանով՝ գումարտակի հրամանատար Ֆրոլովը, կարմիրբանակային գնդացրորդ Կազըր Կունզերուլատովը, դիվիզիայի կոմիսար Ի. Ֆ Աբաուլինը և ուրիշներ: Կրտսեր քաղղեկ Հուսեին Անդրուխաևը և սերժանտ Իվան Ֆեդերովը արժանացան Սովետական Միության հերոսի կոչման: Գիվիզիայի հրամանատար Ե. Ի. Վասիլենկոյին շնորհվեց գեներալ-մայորի կոչում:

Յ. ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎԻ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐԸ

Գեներալ Կլեյստի բանակը շարունակում էր մարտերը: Շախտի վրայով Դոնի Ռոստովը գրավելու օպերացիայի ձախողումից հետո գերմանական հրամանատարությունը վերախմբավորեց իր ուժերը, պատրաստվեց նոր արշավանքի Ռոստովի վրա: Մեր դիվիզիայի պաշտպանության հատվածի առջև հայտնվեցին թշնամու նոր թարմ ուժեր:

¹ Տե՛ս ՊՄ արխիվ, ֆոնդ 1078, դ. 1, դ. 3, թթ. 37—39:

9-րդ բանակի աջ թևն ամրացնելու նպատակով նոյեմբերի 9-ի առավոտից 136-րդ դիվիզիան ետ քաշվեց Ռովենկիի մոտ գտնվող Ալմազնայա կայարանի շրջանը: Հակառակորդը առանց մարտի գրավեց Գյակովոն, միաժամանակ ակտիվացրեց ավիացիայի գործողությունները: Առաջինը թշնամու հարվածի տակ ընկավ 387-րդ դուևդը: Այն պահին, երբ 132-րդ բրիգադի տանկերը, հեռանալով Գյակովոյից, երթով հասան գնդին, անսպասելի հայտնվեցին 27 «յունկերներ»: Նրանք կատարեցին մի քանի թռիչք և վայրասլաց ուժեղացրին ու գնդակոծեցին մեր զորքերին: Թվում էր, թե գունդը ջախջախվեց: Բայց երբ ճշգրտվեցին կորուստները, պարզվեց, որ կա մի սպանված և չորս վիրավոր: Ոչ մի տանկ չվնասվեց, թեև գերմանացիները ջանում էին նշանառության տակ վերցնել դրանք:

Այդ օրերին ես հաճախ էի լինում 387-րդ գնդում: Ուսումնասիրում էի նրա մարտական առօրյան ու քաղաքատիրակազմական աշխատանքների դրվածքը: Գնդի հրամանատար մայոր Սամսոնովը բավական հաջող էր կազմակերպել դեմ-դիմաց կանգնած հակառակորդի հետախուզությունը: Ակտիվ աշխատեցին տեղացի երկու կանայք: Նրանք ծանոթություն հաստատեցին սլովակ զինվորների հետ, իսկ զինվորներն օգնեցին նրանց անցնել ռազմավորների հետ, իսկ զինվորներն օգնեցին նրանց անցնել ռազմաճակատի դիժը և գնդի հրամանատարին տեղեկություններ բերել հակառակորդի մասին: «Լեզու» բռնելու առաջին իսկ փորձը հաջողություն բերեց գնդի հետախուզներին: Պարզվեց, որ «լեզուն» սլովակ ենթասպա է: Նա պատմեց, որ մեր դիվիզիայի պաշտպանության հատվածի առջև հակառակորդը կենտրոնացրել է 1-ին սլովակյան մոտոմեքենայացված և 1-ին գերմանական լեռնահետեակային դիվիզիաները: Գիվիզիաներն ստույգ գիտեին, որ գեներալ Կլեյստը արագորեն պատրաստվում է նոր արշավի Դոնի Ռոստովի վրա: Սլովակյան և գերմանական լեռնահետեակային դիվիզիաների խնդիրն էր՝ կաշկանդել 9-րդ բանակի գործողությունները, սովետական զորքերին թույլ չտալ անցնելու հարավ՝ Կլեյստի խմբավորման թևերին հարվածելու, ինչպես նաև ցուցադրել հարձակողական գործողություններ, նպատակ ունենալով շեղել 9-րդ բանակի ուշադրությունը Ռոստովից: Սլովակյան դիվիզիայի վերաբերյալ ենթասպան հաղորդեց, որ սլովակ զինվորները շեն ուզում կռվել, նրանցից շատերը դժգոհ են: Այն հարցին, թե ինչո՞ւ սլովակները չեն անցնում կարմիր բանակի կողմը, գերին

բացատրեց, որ սլովակյան դիվիզիայի ետևում կանգնած է ՍՍ-ի գունդը, որի միակ խնդիրը սլովակներին կռվել պարտադրելն է: Դիվիզիայում գերմանացիներն ստեղծել են լրտեսության լայն ցանց: Իրենց լրտեսներն ունեն սլովակ սպաները ևս: Աննշան դժգոհության դրսևորումն անգամ խստագույնս պատժվում է: Սլովակները վախենում են, որ գերի հանձնվելու դեպքում բռնություններ կգործադրվեն նրանց ընտանիքների նկատմամբ: Երբ նրան առաջարկեցինք ռադիոյով դիմել իր հայրենակիցներին, նա հրաժարվեց, պատճառաբանելով, որ դա առիթ կտա իր ընտանիքի և համագնդեցիների հալածանքի: Ենթասպայի ցուցմունքները հաստատվեցին ուրիշ գերիների և բանակի հետախուզության տվյալներով:

Ցուրտ, մառախլապատ օրեր էին: Որեշեցիք գնալ գնդի պաշտպանության առաջավոր գիծ:

— Ես էլ կմիանամ ձեզ, — ասաց գնդի հրամանատար Սամսոնովը:

Ստեղծվեց 13 մարդուց բաղկացած մի խումբ: Նոյեմբերի 14-ի գիշերը խումբն ուղղվեց դեպի առաջավոր գիծ, որը պարզորոշ գծագրվում էր հրթիռների լույսով: Լուսատու գնդակներն ակոսում էին օդը, մերթ լուսավորելով մեր ճանապարհը, մերթ ստիպելով կռանալ: Շուտով ամեն ինչ դադարեց: Լուսություն տիրեց, ամեն ինչ նորից ընկղմվեց թանձր խավարի մեջ: Հենց որ մոտեցանք մարտակարգերին, երեք հոգի՝ գնդի կուսբյուրոյի քարտուղար Իվան Թաիրյանի գլխավորությամբ, մի փոքր առաջ անցան և ընկան թշնամու տեսադաշտը: Սկսվեց հրաձգությունը: Կրակելով աշտոմատներից, Թաիրյանը և մյուսները սեղմվեցին մեր խմբին, խումբը բացառատվեց և մարտ ընդունեց: Գերմանացիները արդեն թափանցել էին մեր խրամատները, իսկ այնտեղ ոչ ոք չկար: Վաշտը թողել էր իր խրամատները և ձորակում տաքանում էր խարույկի մոտ: Մինչդեռ խումբը կվարեր մարտը, գնդի հրամանատարի համհարզը մի կարմիրբանակայինի հետ գնաց մեր ետևում գտնվող ձորակը: Համհարզը հաղորդեց հրամանը, վաշտը վերադարձավ, գերմանացիներին դուրս քշեց խրամատներից, վերստին գրավելով իր դիրքերը: Մենք գնացինք 2-րդ գումարտակի հրամանատարական կետը: Պարզվեց, որ վաշտերի հրամանատարները

գումարտակի հրամանատարի մոտ էին: Հենց որ հրաձգություն սկսվեց, նրանք մեկնեցին իրենց տեղերը: Հանդարտ ու հավասարակշռված Սամսոնովը շարացել էր: Նա հրամայեց գումարտակը պատրաստել մարտի և սպասել հարձակման հրամանի: Մենք դեռ չէինք հասել 1-ին գումարտակի հրամանատարական կետը, երբ 2-րդ գումարտակի հատվածամասում նորից բորբոքվեց մարտը: Վերադարձանք: Մարտը կարճ տևեց: Այն ղեկավարում էր գումարտակի հրամանատար լեյտենանտ Լյուբինը: Նա ղեկուցեց, որ հակառակորդը մի գումարտակի ուժով փորձում էր անցնել գնդի թիկունքը:

Գերին նույնպես ցուցմունքներ տվեց, որ գերմանացիներն այդ գիշեր պետք է ձեղքեին 387-րդ գնդի պաշտպանությունը և դուրս գային դիվիզիայի թիկունքը:

Լուռ, մռայլ վերադարձանք գնդի հրամանատարական կետը: Առաջինը լուսությունը խախտեց Սամսոնովը.

— ...Սատանան գիտի, թե ինչ կարող էր պատահել...

Տարօրինակ է, չէ՞. հաշող կազմակերպված հետազոտություն և ազդակող անհոգություն: Այդ հատվածում երկրորդ օրը ես հանդիպեցի հրամանատարին, կոմիսարին և հատուկ բաժնի օպերլիազորին, որոնք գյուղական խրճիթում գործարար կերպով զրուցում էին: Զրույցի ժամանակ սենյակը հավաքում էր մի երիտասարդ կին՝ տեղացի գերմանացիներից: Նա ասաց, որ գերմանական բնակչության էվակուացման ժամանակ ինքը բացակա է եղել: Օթևանել է իր ծանոթ ուկրաինուհու մոտ: Հրամանատարը, կոմիսարը և հատուկ բաժնի լիազորը լուսությամբ կուլ տվեցին նախատինքը՝ զգոնության բխացման համար:

— Շտապ մեկնիր Ռովենկի, կոմիսար: Այսօր համալրում է ժամանելու: Հարկավոր է անհապաղ բաշխել ըստ գնդերի և լրացնել վաշտերը: Ձեզ հետ վերցրեք շտաբի առաջին և չորրորդ բաժանմունքների պետերին: Գնդերի ներկայացուցիչները կլինեն Ռովենկիում: Գործը հույժ շտապ է կոմիսար, մեզ ուրախ օրեր են

սպասում, վաղը հարձակվում ենք,— ասաց դիվիզիայի հրամանատար Վասիլենկոն:

Նոյեմբերի 17-ին գեներալ Կլեյստի խմբավորումը խոշոր ուժով հարձակում սկսեց Գեներալսկոեի շրջանից և նոյեմբերի 21-ին գրավեց Ռոստովը:

Նույն օրը Հարավային ռազմաճակատի զորքերը անցան հակահարձակման: Գեներալ-մայոր Խարիտոնովի 9-րդ բանակը հարձակվեց հյուսիսից: 136-րդ դիվիզիան հարձակումն սկսեց նոյեմբերի 16-ին, ուղղութուն վերցնելով դեպի Դյակովո, այնուհետև Ռոստովի մարզի Կուլբիշևո քաղաքը: 733-րդ գունդը հարձակվում էր Եզորովկա-Դյակովո, 387-րդ գունդը՝ Գրիգովախա—Բորրիկովո—Նովոկրասնովկա—Դյակովո ուղղությամբ: Գլխավոր հարվածի ուղղությամբ գործում էր 541-րդ գունդը, նա մարտի մեջ մտավ երկու գնդերի կցվանքում, հակառակորդին հարվածեց Պլատոնովկա—Բորրիկովո—Դյակովո ուղղությամբ:

Դիվիզիայի առաջին հարվածը հաջողությամբ պսակվեց: Ալմազնայա կայարանի մոտ հակառակորդի պաշտպանությունը ձեղքվեց: Առավոտից մենք Տիմոֆեևի հետ 733-րդ գնդում էինք: Գնդապետ Տավանցևը գտնվում էր աջթևյան գումարտակի մարտակարգերում: Նա քաջալերում էր առջևից ու թևից տեղացող կրակի տակ առաջ գնացող մարտիկներին՝ «Ավելի խիզախ, տղաներ»,— հաճախ էր կրկնում նա: Շուտով գունդը գրավեց Եզորովկայից հյուսիս ընկած բարձունքները, հակառակորդը թողեց գյուղը: Բաց մնացած աջ թևը կրակով պաշտպանեց առանձին ականանետային դիվիզիոնը: Հրետանին հետ մնացող աջ հարևանի՝ Ռակսկու խմբին աջակցեց մոտենալու Եզորովկային:

541-րդ գունդը մտցվեց ձեղքվածքի մեջ, հարձակումն ավելի հաջող ընթացավ: Մենք գնդի կոմիսար Ստրախովի հետ շարունակեցինք առաջ շարժվել աջ թևի գումարտակի կազմում: Հարձակման երկրորդ օրը հակառակորդի դիմադրությունն ուժեղացավ: Առաջխաղացումը դանդաղեց, մարդիկ կրակի տակ հաղիվ էին շարժվում: Մեզ մոտ եկավ կուսհանձնաժողովի քարտուղար Տարաշինը: Նա զայրացած էր:

— Սատանան գիտի, թե ինչ է կատարվում, գումարտակներում են գտնվում և՛ հրամանատարը, և՛ կոմիսարը... Ո՞վ է ղեկավարում գունդը:

— Այդպես է պետք,— պատասխանեց Ստրախովը, շնայելով նրան:

— Ի՞նչ է նշանակում՝ «այդպես է պետք»: Սա խայտառակություն է,— զայրացած բղավեց Տարաշինը:

— Մի աղմկեք, գրողը տանի,— անվրդով ասաց Ստրախովը: Այդ ժամանակ հեռախոսավարը հայտնեց, թե ինձ հրամայված է շտապ մեկնել Ալմազնայա: Վե՞՞՞ր հարթելու համար ես ասացի հարաշինին:

— Այ, տեսնո՞ւմ ես, Դմիտրի, գրողի ծոցը բեզ են ուղարկում, բայց ստիպված եմ ես գնալ:

Մարտերի մասին ամեն ինչ պատմել անհնար է: Դյակովոն թողեցինք առանց մարտի, սակայն ետ գրավելու համար պահանջվեցին ութօրյա համառ մարտեր: Դիվիզիան ազատագրեց 10-ից ավելի բնակավայր: Նրանցից յուրաքանչյուրի համար ստիպված էինք հսկայական ջանքեր գործադրել: Այդ բնակավայրերը հակառակորդը վերածել էր հենակետերի: Նման հենակետ էր դարձվել Բորրիկովո գյուղը, տները կրակակետեր էին, իսկ մերձակա բարձունքներում համատարած խրամատներ: Մատուցները պաշտպանվում էին եկեղեցու գմբեթում դրված գնդացրով, հրետանու և ականանետների կրակով: 387-րդ գնդի 1-ին գումարտակի գրոհը ձախողվեց: Ընկնելով ուժեղ կրակի տակ, գումարտակը պսակեց: Գումարտակի հրամանատար Եվսիկովը որոշեց շրջանցել գյուղը և հենակետին հարվածել հարավ-արևելքից: Այդ փորձը նույնպես հաջողություն չունեցավ:

Գնդի կուսբյուրոյի քարտուղար Թաիրյանը Եվսիկովին առաջարկեց փորձեք գյուղը ներխուժել հարավից, գրավեք հենակետի կենտրոնը՝ եկեղեցին: Գումարտակի հրամանատարը առանձնապես կտրիճների մի խումբ՝ եկեղեցին գրավելու: Խմբի ղեկավարումը իրենց վրա վերցրին Թաիրյանը և քաղբաժնի ավագ հրահանգիչ Միխաիլ Լիտվինովը: Գումարտակի հրետանին ուժեղացրեց կրակը գյուղի վրա: Օգտվելով դրանից, խիզախները ներխուժեցին գյուղ և կովելով հասան եկեղեցուն, այնտեղ պայթուցիկ դրին: Պայթյունից գնդացրը անձնակազմը ողնաջացավ: Խումբը մտավ եկեղեցու մոտ գտնվող տան նկուղը և շրջանաձև պաշտպանություն դիրք գրավեց: Հյուսիսից գյուղի վրա հարձակվեց նաև 541-րդ գունդը: Բորրիկովոյում իրարանցում սկսվեց: Կտրիճների խումբը

կրակ տեղաց այս ու այն կողմ փախչող հիտլերականների վրա: Հակառակորդը խուճապահար թողեց գյուղը, իր վիրավորներին:

Հակառակորդը համառ դիմադրություն ցույց տվեց նաև Պլատոնովկայում: Նա 541-րդ զնդի վրա կրակ տեղաց զենքի բոլոր տեսակներին: Գնդի հրամանատար փոխզնդապետ Նազարովը անցնում էր մի թևից մյուսը, ստորաբաժանումից ստորաբաժանում, քաջալերում մարդկանց, անձամբ ուսումնասիրում հակառակորդի կրակային սիստեմը: Նա որոշեց Պլատոնովկան գրավել զիշերային թևանցիկ օպերացիայով, նոյեմբերի 18-ի գիշերը Նազարովը զնդի հիմնական ուժերով կեղծ հարձակում ցուցադրեց Պլատոնովկայի վրա: Հակառակորդը շփոթվեց: Այդ նույն ժամանակ զնդացիներով ուժեղացված երկու վաշտ թևանցեցին Պլատոնովկան և դուրս եկան նրա թիկունքը: Այնուհետև վաշտերը սրբնթաց ներխուժեցին Պլատոնովկա: Թշնամին հապճեպ նահանջեց, թողնելով վիրավորներին և ռազմաավար: Գիվիզիան թանկ գնով գրավեց Դյակովո դյուղը նոյեմբերի 23-ին: Ջոհվեց, ինչ հիանալի կոմունիստ, 541-րդ զնդի անվեհեր հրամանատար փոխզնդապետ Նազարովը և գումարտակի անմոռանալի հրամանատար կապիտան Ֆրոլովը: Ներկայումս Ռովենկի քաղաքի փողոցներից մեկը կրում է կուսակցության հավատարիմ զավակ Ալեքսանդր Սերգեևիչ Նազարովի անունը:

Դյակովոյում և նրան հարող բնակավայրերում գերմանացիները տեր ու տնօրինություն էին արել ընդամենը 13 օր: Սակայն հասցրել էին ամառացնել այդ վայրերը: Հաշմանդամ հանքափոր Գրիգորի Օժերեդովը, որը բնակվում էր Դյակովոյում, պատմում էր. «Բնակիչները սնվելու համար ոչինչ չունեն: Հավերք, թռչունները, կովերը և խոզերը խլում էին, իսկ տերերին կանչում էին պարետատուն, ստիպում էին նրանց հայտարարել, որ նրանք «կամովին» են իրենց ունեցվածքը հանձնում գերմանական իշխանություններին և «շնորհակալություն» են հայտնում իրենց «ազատագրելու» համար: Հրաժարվողներին գնդակահարում էին:

Ակսվեց հարձակման երկրորդ էտապը: Նոյեմբերի 27-ին Հարավային ռազմաճակատի զորքերը վճռական հարձակման անցան հիտլերյան զենքերալ Կլեյստի խմբավորման դեմ: Ռազմաճակատի զորքերը միաժամանակ հարձակվեցին հարավից, արևելքից և հյուսիսից, խնդիր ունենալով ջախջախել գերմանացիների առաջին

տանկային բանակը, ազատագրել Դոնի Ռոստովը, հակառակորդին շարտել Միուս գետից այն կողմ:

136-րդ դիվիզիան խնդիր ուներ շարունակել հարձակումը հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, կոտրել թշնամու դիմադրությունը Դյակովոյից այն կողմ և Ռոստովի մարզի Կուլբիշևո քաղաքի շրջանում դուրս գալ Միուս գետի մոտ:

Տեղում էր անձրևախառն ձյուն, ցելսը հասնում էր մինչև ծնկները, մինչև ուղնուծուծը թրջվել էին: Յուրտ, տհաճ եղանակ էր: Ենայած դրան, դիվիզիան, վերախմբավորելով ուժերը, վերսկսեց հարձակումը, որը շարունակվեց նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 3-ը: Ծանապարհները անանցանելի էին, տրանսպորտը թաղվում էր ցեխի մեջ, դժվարությամբ էր կարողանում զինամթերք և սննդամթերք հասցնել զորամասերին: Թրջված ու ցեխակուլ զինվորները դժվարությամբ, անասելի ծանր պայմաններում էին հաղթահարում թշնամու համառ դիմադրությունը: Հարձակվում էին անընդմեջ, գիշեր ու ցերեկ, հակառակորդին հնարավորություն չէին տալիս ամրանալու բնակավայրերում: Հաջողությունն ապահովվում էր մարտիկների վճռականությամբ՝ հաղթահարել դժվարությունները և ջարդել թշնամուն:

Հետախուզության տվյալներով և գերիների ցուցմունքներով, գերմանական 1-ին լեռնահրաձգային դիվիզիան այդ մարտերում կորցրել էր իր անձնակազմի կեսից ավելին: Քիչ չէին նաև սլովակյան դիվիզիայի կորուստները: Ընդհանուր առմամբ մեկ ամսում մեր դիվիզիան ոչնչացրեց հակառակորդի ավելի քան 8000 զինվոր ու սպա: Դեկտեմբերի 3-ին դիվիզիան գրավեց Կուլբիշևո քաղաքը և պաշտպանական բնագծեր գրավեց Միուս գետի ափին:

Նոյեմբերի 29-ին սովետական զորքերը ազատագրեցին Ռոստով քաղաքը, ջախջախելով ու ետ շարտելով գններալ Կլեյստի գովաբանած զորքերին: Գերմանական հրամանատարության փայփայած պլանը՝ անցնել Դոնը և 1941 թվականին գրավել Կովկասը, ձախողվեց: Ռոստովի ազատագրումը կարմիր բանակի ձմեռային կամպանիայի առաջին մեծ հաղթանակն էր: Ձմեռային կամպանիայի ժամանակ Մոսկվայի մոտ հիտլերյան ավելի քան 50 ընտիր դիվիզիաներ գլխավին ջախջախվեցին և հետ շարտվեցին: Հիտլերյան բանակի «անպարտելիություն» առասպելը հօդս ցնդեց:

4. ԶԱՂԲԱԺՆՈՒՄ

Կույրիշևույի, Դուբրովկայի և մյուս բնակավայրերի հրապարակներում ու տների պատերին փակցված էին Դոնբասի բնակչությանն ուղղված հայտարարություններ, հրամաններ ու դիմումներ: Դրանցում ասված էին. «Անպարտելի գերմանական բանակի նպատակը կարմիր բանակի ջախջախումն ու բոլշևիզմի ոչնչացումն է», «Գերմանական զորքերը չեն կռվում սովետական ժողովուրդների դեմ...», «Գերմանական բանակն ու ադմինիստրացիան ամենուրեք ստեղծում են նոր կարգ», «Գերմանական բանակը բնակիչներին աշխատանք կտրամադրի» և այլն: Լկտիացած ֆաշիստական պարագլուխները իրենց վրա զգալով կարմիր բանակի ջախջախիչ հարվածների ուժը, փոխել էին իրենց ամբարտաձան տոնը, սակայն բոլոր հրամանները ու կոչերը վերջանում էին՝ «ո՛վ չի կատարի գերմանական իշխանությունների կարգադրությունները, տեղնուտեղը կզնդակահարվի»:

Ֆաշիստական շարագործներն իրականում գերազանցեցին իրենց: Նրանք սկսել էին բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի ակտիվ մասի մասսայական ջարդը, կողոպուտն ու թալանը: Եթե պատերազմի առաջին շաբաթներին հիտլերյան պրոպագանդան, որ պնդում էր, թե արդեն ջախջախված է կարմիր բանակը և այն ներկայացնում էր իբրև կատարված փաստ, ապա 1941 թվականի աշնանը նա արդեն խոստովանում էր, որ կարմիր բանակը ոչնչացված չէ և թե իրենք նպատակ են դրել ոչնչացնել այն: Փաստորեն խոստովանում էին, որ ձախողվել է «բլիցկրիգը»: Գերելսյան պրոպագանդան մի կողմից բղավում էր, որ հիտլերյան բանակը իբր «չի կռվում» սովետական ժողովրդի դեմ, իսկ մյուս կողմից գլխատում ու բնաջնջում էր նրա զավակներին: Որքան էլ նրբամիտ պրոպագանդա մղեին հիտլերականները, միևնույն է, նրանք չէին կարող քողարկել ֆաշիզմի գազանային էությունը:

Պիվիզիայի քաղբաժինը լայն բացատրական աշխատանք էր տանում զորամասերում ու բնակչության մեջ, ակնառու կերպով ցույց տալիս հիտլերյան զորքերի հրեշավոր գազանությունները, նոր ուժով անհաշտ ատելություն էր բորբոքում անարգ թշնամունկատամբ: Մարդիկ համոզվել էին, որ ֆաշիզմը եկել է տրորելու մեր հողը, ոչնչացնելու մեր քրտինքով ստեղծածը, ստրկացնելու և



Ե. Բ. Վասիլենկո, դիվիզիայի հրամանատար



Ի. Յ. Աբաուլին, դիվիզիայի կոմիսար



Մի խումբ պարզևատրվածներ շքանշաններ ստանալուց հետո (Գոմբասում)

գերբնական բշխու մեր ժողովրդին, ամայացնելու մեր երկիրը: Դի-
վիզիայի հրամանատարական և քաղաքական կազմի ամբողջ
գատարակչական աշխատանքն ուղղված էր այն բանին, որ
բարձրացնի ատելության ու վրեժխնդրության ալիքը, մարդկանց
թույլ շտաբնկնել մոլորության մեջ:

Այդ շրջանում բուռն իրադարձություններ կատարվեցին աշ-
խարհում: Դեկտեմբերի 7-ին Ճապոնիան հարձակվեց Պիրլ Հար-
բորի վրա, իսկ դեկտեմբերի 8-ին պատերազմ հայտարարեց
ԱՄՆ-ին և Անգլիային: Նույն օրը Ճապոնական ավիացիան ուժե-
րացրեց Հավայան և Ֆիլիպինյան կղզիները: Կանադան և Նոր Զելան-
դիան պատերազմ հայտարարեցին Ճապոնիային: Խաղաղ օվկիա-
նոսը դարձավ պատերազմի նոր թատերաբեմ: Դեկտեմբերի 6-ին
շատ երկրների ռադիոներ հաղորդեցին, որ Անգլիան իրեն պատե-
րազմական դրություն մեջ է հայտարարում Ֆինլանդիայի, Ռումի-
նիայի և Հունգարիայի հետ: Երկրորդ համաշխարհային պատե-
րազմն ընդլայնվեց և ընդգրկեց երկրագնդի նորանոր մայրցա-
մաքներ:

Մովետա-դերմանական ռազմաճակատում ծավալվեցին խոշոր
օպերացիաներ, որոնց մասշտաբները զարմացրին ամբողջ աշ-
խարհին: Տիխվինի մոտ գերմանական զորքերի ջախջախումից,
Մալո-Չիշերսկայայի օպերացիայից, Ռոստովի ազատագրումից,
Մոսկվայի և Կալինինի մոտ հակառակորդին ջախջախելուց, Ելեցի,
Կերչ-Փենոպոլիսի, Տրոպեցկայայի, Բարվինո-Լոզովսկայայի օպե-
րացիաներից հետո ակտիվ գործողություններ ծավալեցին ռազմա-
ճակատի մյուս հատվածներում ևս, որոնք մարմնավորեցին սովե-
տական բանակի Գերագույն զլխավոր հրամանատարության ընդ-
հանուր ստրատեգիական մտահղացումը: 1941—1942 թվականնե-
րի ձմեռային վիթխարի կամպանիան հողմացրեց արեց հիտլերյան
բանակի «անսպարտելիության» առասպելը: Բեկում ստեղծվեց
երկրորդ համաշխարհային պատերազմում:

Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում հօգուտ
կարմիր բանակի կատարված շրջադարձային իրադարձությունները
և համաշխարհային ասպարեզում ուժերի վերաբաշխումը որոշե-
ցին կարմիր բանակի զորամասերում տարվող քաղաքական աշխա-
տանքի ուղղությունը:

Առաջին պլան մղվեց Հայրենական պատերազմի կոնկրետ

պայմանների սթափ գնահատումը: Հատկապես ընդգծվում էր ռազմաճակատում հակառակորդի ուժերի գերակշռության ժամանակավոր բնույթը, չափազանց կարճ ժամանակամիջոցում Սովետական Միության պոտենցիալ ուժերի ծավալման հնարավորությունը՝ այն հաշվով, որ ուժերի գերակշռություն ստեղծվի բոլոր տեսակետներից: Քաղաքական աշխատանքում առաջնահերթ նշանակություն էր տրվում յուրաքանչյուր զորամասի, ստորաբաժանման և ռազմիկի տոկոսնաթյանը: Խնդիր էր դրվում պաշտպանական մարտերում ջախջախել թշնամուն, կրժքով պաշտպանել սովետական հողի յուրաքանչյուր թիզը: Հենվելով գվարդիականների փորձի, դիվիզիայի հերոսական անձնակազմի սխրագործությունների վրա, քաղաշխատողները ձգտում էին ռազմիկների գիտակցությունը հասցնել այն ճշմարտությունը, որ մարտական բարձր հատկանիշները ոչ թե վերացական հասկացություններ են, այլ գործողության մեջ դրված բարոյական և ֆիզիկական հնարավորություններ, որ հերոսությունը, ոչ թե ինչ-որ գերմարդկային ճիզերի գործադրում է, այլ այն, ինչ գիտակցաբար կատարում է իր հայրենիքին անսահմանորեն նվիրված, նրա ճակատագրի համար մարտնչող յուրաքանչյուր սովետական մարդ: Սովետական ռազմիկներին այս ոգով դաստիարակելու համար քաղաքական ապարատը կիրառում էր քաղաքական-դաստիարակչական աշխատանքի բոլոր ձևերը: Խիզախության դաստիարակումը զորքերում տարվող քաղաշխատանքի ամենաբնորոշ գիծն էր: Պատահական չէ, որ զորքերի մեջ տարվող ամենօրյա աշխատանքում հաստատվում ու ընդգծվում էր այն միտքը, թե «Քաջությունը կարող է փոխարինել ամբողջի» կամ՝ «Վախկոտը ամենավատ թշնամին է մարտում» և այլն:

136-րդ դիվիզիան մեծագույն տոկոսնություն հանդես բերեց գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում: Հենց 136-րդ դիվիզիայի և 132-րդ տանկային բրիգադի օրինակով Հարավային ռազմաճակատի ռազմական խորհրդի հրամանում արտացոլվեց այն դրույթը, որ «Այնտեղ, որտեղ հակառակորդը, շնայած նրա գերակշռությանը, արժանի հակահարվածի է հանդիպում, նա շրջվում է ու դիմում փախուստի»: Դժվար է նույնիսկ այն մարտիկներին, հրամանատարներին ու քաղաշխատողներին թվարկել, որոնք նոյեմբերի 1-ից մինչև 8-ը Դյակովոյի մոտ և մյուս մար-

տերում ցուցաբերեցին իսկական հերոսություն: Քաղաքային ամենօրյա զեկուցագրերում կարճառոտ նկարագրվում էին առավել աչքի ընկած մարտիկների սխրագործությունները: Բայց կարող էր արդյոք քաղաքային հաշվի առնել բոլորին, երբ հերոսությունը մասսայական էր: Օրինակ, դիվիզիայի հետախույզներից մեկը նոյեմբերի 6-ի գիշերը մենակ հարձակվեց թշնամու տանկի վրա և այն հրկիզեց նռնակներով: Տանկից դուրս եկավ սպան, որը տեղնուտեղը տապալվեց հետախույզի ավտոմատի կրակահերթով: Սպառի պայուսակում հետախույզը գտավ մի շատ կարևոր քարտեզ, որը նա հասցրեց դիվիզիայի շտաբ: Սակայն շտաբում չհասցրին նույնիսկ իմանալ անվահեր հետախույզի անունը: Մեկ ուրիշ օրինակ. նոյեմբերի 8-ին Նագոլնայա գետի մոտ 733-րդ և 387-րդ հրաձգային գնդերի, 291-րդ հրետանային գնդի և 27-րդ առանձին ակնանետային դիվիզիոնի ստորաբաժանումները մարտերից մեկում կենտրոնացված կրակով ոչնչացրին ավելի քան 800 հիտլերական: Նման պարագայում դժվար է որոշել յուրաքանչյուրի աստիճանը:

Ռազմաճակատային մամուլում հաճախ կարելի էր հանդիպել այսպիսի արտահայտություն. «Արհամարհեք մահը»: 136-րդ դիվիզիայի և ոչ մի ստորաբաժանում, շնայած հակառակորդի բազմապատիկ թվական գերակշռությանը, չի լքել իր դիրքերը: Ընդհակառակն, նրանք հակառակորդին ստիպել են սարսափ ապրել և դիմել փախուստի: Ամեն մի գովեստ կիսամրեր նման իրականություն հանդեպ: Սա առավել նշանակալից է, եթե նկատի ունենանք, որ պատերազմի առաջին շրջանում «տանկավախությունը» բացասական գեր էր խաղում շատ ռազմիկների հոգեբանության վրա: Այն բանի գիտակցումը, որ թշնամին Մոսկվայի ու Լենինգրադի պատերի մոտ է, իսկ դիվիզիան մարտեր է մղում Դոնբասում, մարտիկներին, հրամանատարներին ու քաղաշխատողներին նոր փորձերի էր կոչում, նրանք ձգտում էին ետ շարտել թշնամուն, հաղթել նրան: Նրանք չէին մտածում մահվան մասին: Ճշմարտությունն այն է, որ մասնավորապես Ռազդորիում և Դյակովոյում 136-րդ դիվիզիայի անձնակազմը հիրավի մասսայական հերոսություն կատարեց: Մարդիկ դիմադրում էին մահվան զնով և կանգուն մնացին հանուն կյանքի:



136-րդ դիվիզիան համախմբվածութիւն հիանալի օրինակ էր, բազմազգ սովետական ժողովրդի զավակների անխախտ միասնութիւն օրինակ: Նրա կազմի մեջ բացի ռուսներից կային Սովետական Միութեան մյուս ժողովուրդների ներկայացուցիչներ՝ ուկրաինացիներ, բելոռուսներ, հայեր, վրացիներ, ղազախներ, բաշկիրներ, թաթարներ, ադրբեջանցիներ, օսեթներ, ադիգեցիներ և այլն:

Դեռ մինչև գործող բանակ մեկնելը դիվիզիայի բաղբաժինը մեծ աշխատանք ծավալեց դիվիզիայի մարտական փորձը մասսայականացնելու ուղղութիւնով: Կարելական պարանոցում ձեռք բերված այդ փորձի պրոպագանդան գորկեցիներին՝ ֆիննական կամպանիայի մասնակիցներին, հավասարվելու ձգտում առաջացրեց նորեկների մեջ: Գործնականում դա նշանակում էր հավասարվել ռուս մեծ ժողովրդի բաջարի զավակներին, որոնք մարմնավորում էին նրա մարտական ու հեղափոխական տրադիցիաները:

Մի քանի խոսք հայ ռազմիկների մասին: Գործող բանակ մտնելու պահին դիվիզիայի կարմիրբանակայինների ու սերժանտների մոտ կեսը հայեր էին: Թվում էր, թե դիվիզիայի բազմազգ կազմը, մասնավորապես մեծ թվով հայ ռազմիկների առկայութիւնը պետք է որոշակի առանձնահատկութիւն մտցնէր անձնակազմի հետ տարվող ռազմա-բաղաբական աշխատանքի մեջ: Կարմիր բանակի բազմաբնութիւնը հատուկ դիրեկտիվ տվեց ոչ-ռուս ազգութեան սպաների ու զինվորների հետ տարվող աշխատանքների մասին: Ոչ-ռուս ազգութեան պատկանող մարտիկների մեջ ծավալուն աշխատանք կատարվեց, սակայն այդ գործում առանձին դժվարութիւններ չծագեցին: Մեկ անգամ ևս դրսևորվեցին հիանալի արդյունքներն այն վիթխարի դաստիարակչական աշխատանքի, որ կուսակցութիւնը կատարել էր նախապատերազմյան տարիներին: Սովետական ժողովրդի բարոյա-բաղաբական անխախտ միասնութիւնը իր արտացոլումը գտավ կարմիր բանակի յուրաքանչյուր զորամիավորման մեջ: Նույնիսկ ռազմիկների որոշ մասի կողմից ռուսաց լեզվին բավականաչափ շտիրապետելը որևէ նշանակալից դեր չխաղաց: Մարդիկ հեշտութեամբ հաղթահարում էին դժվարութիւնները, համառորեն սովորում մեծ Հոկտեմբերի լեզուն: Այդ պատճառով էլ մենք որևէ հիմք չունենինք նրանց առանձ-

նացնելու մարտիկների ընդհանուր մասսայից: Ծանաշելով հիանալի բազմազգ Հուսեին Անդրուխանին, մեզնից ոչ ոք չէր հետաքրքրվել նրա անցյալով: Երբ նրան շնորհվեց Սովետական Միութեան հերոսի կոչում, կարմիրբանակային թերթերը նրան ներկայացրին որպես «բաշկիր ժողովրդի զավակ»: Հետագայում պարզվեց, որ Անդրուխանը ոչ թե բաշկիր է, այլ ադիգեցի:

Մարտական պատրաստութեան գործում և մարտում զինակից ընկերներին հավասարվելու ձգտումը բացառում էր ամեն մի «այլ ազգի» պատկանելու հասկացութիւնը, որովհետև յուրաքանչյուր «այլ ազգ» կազմում էր անբաժանելի միասնականի օրգանական մասը: Որքան բարդ ու վտանգավոր էր դառնում իրադրութիւնը, որքան մեծանում էր մեր հայրենիքի զլխին կախված վտանգը, այնքան խորն էին հասկանում մարդիկ իրենց պայքարի իմաստը, այնքան պարզ էր դառնում յուրաքանչյուր ազգի պատկանող մարդու դերը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխութեան նվաճումները պաշտպանելու գործում: Մարդիկ հոգեբանորեն, ֆիզիկապես և կազմակերպչորեն էլ ավելի սերտորեն էին ձուլվում միասնական ամբողջի մեջ: Սա նպաստում էր սովետական ռազմիկների պոտենցիալ ուժերի և հնարավորութիւնների բացահայտմանն ու շարժման մեջ զնելուն գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարում:

Կյումրեցի տղաները շատ էին սիրում կրկնել հնում ասված «արող գրվեք, որ պատվով մեռնենք» խոսքերը: Մեծ պոետ Ավետիք Իսահակյանը սիրում էր կրկնել. «Մենք գյումրեցիներս, սրտի մարտիկ ենք: Քաջութիւնը սյունեցիների բաժինն է»:

Նշմարտութեան մասնիկ կա՞ր արդո՞ք սրանում: Դժվար է ասել: Քնքա նշմարտութիւնն այն է, որ երբ գյումրեցին դարձավ սովետական մարդ, նրա մեջ ձևավորվեցին բոլոր սովետական մարդկանց հատկանիշները: 136-րդ դիվիզիայի «արողում», այսինքն՝ նրա թիկունքային ստորաբաժանումներում, շատ շիրակցիներ կային, իսկ որոշ տեղերում մեծ մասամբ շիրակցիներ էին: Նրանք բոլորը մասնագետներ էին՝ տնտեսական աշխատողներ, վարպետներ, մատակարարողներ, ավտոմեքենաների վարորդներ: Ռազմաձևատ էին մեկնել նաև Շիրակի դուստրերը: Նրանք բոլորն էլ պատվով, ջանասիրութեամբ աշխատում էին բուժասանգումարտա-

կում և գնդերի սանիտարական մասերում, գումակում, զինամթերք ու կենսամթերք հասցնում զորամասերին, առաջին օգնություն ցույց տալիս վիրավոր զինվորներին ու հրամանատարներին: Լենինական քաղաքը զիվիզիան ապահովել էր արհեստավոր վարպետներով, որը պատիվ էր բերում նրանց: Զորամասի հաջողության գրահականներից մեկն էլ ամուր ու կայուն թիկունքային ծառայությունն է: Թշնամին ամեն կերպ ձգտում էր հարվածել զորամասերի թիկունքին, խախտել, ձախողել զորամասերի մատակարարումը: Սակայն թիկունքային ծառայությունների սպաներն ու մարտիկները, արհամարհելով մահը, գնում էին առաջավոր գիծ, փոխադրում էին ճակատին անհրաժեշտ ամեն ինչ, կրակի գծից դուրս բերում վիրավորներին: Մի՞թե սա իսկական հերոսություն չէ: Շիրակցի գնդացրորդները, հրետանավորները, ականաձիգները, հետախույզները, սակրավորները, թիկունքային ծառայության մարտիկները ռուս մեծ ժողովրդի և սովետական երկրի մյուս ժողովուրդների զավակների հետ ձեռք ձեռքի տված խիզախորեն մարտնչում էին անարգ թշնամու դեմ և արժանավայել պաշտպանում մեր հայրենիքի պատիվը: Պատերազմը ցույց տվեց, որ շիրակցի զինվորի կրծքի տակ նաև առյուծի սիրտ է բարախում:

Լենինականի աշխատավորներն ուշադրությունամբ էին հետևում զիվիզիայի մարտական գործունեություններին, նամակագրական և կենդանի կապ պահպանում նրա հետ: Դիվիզիայում էր գտնվում Լենինական քաղաքի կարմիր դրոշը:

Ուզում եմ մի քանի տող նվիրել կուսակցության արժանավոր անդամ, Շիրակի զավակ Սամվել Հարությունյանին: Նա իր ծառայությունը 136-րդ զիվիզիայում սկսեց կապիտանի կոչումով: Նշանակվեց 541-րդ գնդի հրամանատարի հրետանու գծով տեղակալ: Նրա մարտական վյանքում մեծ դեր խաղացին գնդի հրամանատար Ալեքսանդր Նազարովը և կոմիսար Կոնստանտին Ստրախովը: Առաջին իսկ մարտերում Հարությունյանը իրեն դրուկորեց որպես ժամանակակից մարտի գիտակ, տոկուն և խիզախ սպա: Նա առանձնապես աչքի ընկավ Ռազդորի և Պիսկարևկայի մոտ մղված մարտերում: Երբ թշնամու տանկերն ու հետևակը սեպածե խրվեցին 541-րդ գնդի մարտակարգերի մեջ, սպառնալով ոչնչացնել հրաձգային գումարտակներից մեկը, Հարությունյանը

անկամբ ղեկավարեց հրետանու կրակը և օգնեց գումարտակին գահելու իր դիրքերը:

Գյակովոյի մոտ մղված մարտերից առաջ հարց դրվեց հրաձգային գնդերի ծանր ականանետների ստորաբաժանումները միավորել և ստեղծել առանձին ականանետային զիվիզիոն, որը պետք է հարվածային զորեղ ուժ դառնար գեներալ Կլեյստի խումբավորման մոտոհետևակի դեմ: Անհրաժեշտ էր զիվիզիոնի համար ընտրել փորձառու և տոկուն հրամանատար: Ընտրությունն ընկավ կապիտան Ս. Հարությունյանի վրա: Այսպես ձևավորվեց 27-րդ առանձին ականանետային զիվիզիոնը: Դիվիզիոնի մարտիկներն ու սերժանտներն ձնշող մեծամասնությունը կապիտանի հայրենակիցներն էին՝ շիրակցիներ: Առաջին իսկ մարտերում զիվիզիոնը պատվով կատարեց իր վրա դրված մարտական խնդիրները: Նա գարձավ հրաձգային զորամասերի հուսալի բարեկամը: Ռոստովի օպերացիայի օրերին այդ զիվիզիոնը կրակով աջակցում էր 733-րդ գնդի հարձակմանը և միաժամանակ պաշտպանում զիվիզիայի բաց մնացած աչ թևը: Գյակովոյի մոտ, Օրյոլ-Իվանովոյի ուղղությամբ, Գերալդեոյի մոտ և մյուս վայրերում մղված մարտերում 27-րդ զիվիզիոնը՝ կապիտան Հարությունյանի գլխավորությամբ անխնա ջախջախեց թշնամուն, իր արժանի ավանդը ներդնելով զվարդիականների հերոսական գործերում: Իմ աչքի առաջ Հարությունյանի զիվիզիոնը մարտի բռնվեց իտալական գնդի հետ, նրան ջախջախիչ հարված հասցրեց և ստիպեց զիմել փախուստի:

Խիզախ հրամանատարը աչքի էր ընկնում նաև որպես հմուտ կազմակերպիչ: Այնպես պատահեց, որ զիվիզիան ձմռան խիստ սառնամանիքի ժամանակ երկար երթ կատարեց ճանապարհազուրկ պայմաններում: Հատուկ կենտրոնացման վայրում Հարությունյանը զվարճաց, որ զիվիզիոնը լիովին պատրաստ է կատարելու մարտական առաջադրանքը: Պետք է խոստովանել, որ կապիտանի հավաստիացումը անհավանական թվաց, քանի որ մյուս զորամասերը գեռ չէին հասցրել ի մի հավաքել, ցեխից դուրս բերել տեխնիկան: Մեծ եղավ մեր զարմանքը, երբ ստուգումը հաստատեց Հարությունյանի ղեկույցի ճշտությունը:

Հետագայում նա նշանակվեց 89-րդ Թամանյան զիվիզիայի հրետանու հրամանատար: Շուտով դարձավ կորպուսի հրետանու հրամանատար Անդրկովկասյան զինվորական օկրուգում: Սամվել

Հարությունյանն իրեն փառքով պսակեց հատկապես Ստալինգրադի մոտ մղված ճակատամարտում: Այժմ նա թոշակառու է և բնակվում է Երևանում:



Քաղաքացիները հատուկ պատասխանատվություն են կրում գործերում տիրող վիճակի համար: Նրանց գործունեությունը պետք է իր արտացոլումը գտնի մարտադաշտում մարտիկների կատարած սխրանքներում, ուրույն տեղ գրավի մարտական գործողությունների հաշվեկշռում: Յուրաքանչյուր մարտից հետո քաղաք-ժինն ընդհանրացնում է նրա արդյունքները, տալիս դրականի ու բացասականի գնահատականը, նշում նոր միջոցառումներ, կազմակերպում դրանց կենսագործումը: Հաջողության ապահովումը միշտ գլխավորն է առաջիկա մարտերում:

Չոն Կլեյստի խմբավորման դեմ մղված մարտերը Հարավային ռազմաճակատի և 9-րդ բանակի ռազմական խորհուրդներին հիմք տվեցին դիվիզիան ներկայացնել զվարդիական կոչման: Այս ուրախալի փաստը քաղաքում ընդունվեց ոչ միայն որպես դիվիզիայի մարտական ծառայության ճանաչում, այլև պարտավորություն՝ ապագայի համար: Ամենօրյա քրտնաջան քաղաքական աշխատանքով պաշտպանել ու բարձրացնել մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների մարտական ոգին և այն ամրապնդել հետագա մարտերում, այս էր մեր առջև ծառայած խնդիրը:

Ես հաճելի պարտականություն եմ համարում համառոտակի պատմել դիվիզիայի քաղաշխատողների հիանալի կուրեկտիվի մասին, որն այնքան շատ ուժ ու եռանդ գործադրեց գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարում:

Դիվիզիայի քաղաքացիները պետ Վասիլի Տիմոֆեևը աչքի էր ընկնում սկզբունքայնությամբ, նպատակասլացությունամբ, գործիմացությամբ ու աշխատանքը կազմակերպելու հմտությամբ: Նա հանդես չէր գալիս դասախոսություններով ու մեծ զեկուցումներով: Մարտական պայմաններում դրանք համարյա բացառվում էին: Դրա փոխարեն նա կարողանում էր դառնալ յուրաքանչյուր մարտիկի մտերիմն ու բարեկամը: Որպես կանոն Տիմոֆեևը միշտ լինում էր

զորամասերում, անձամբ դիտում մարտերը, գիտեր մարտիկների կշանքն ու հոգսերը: Քաղաքացի խորհրդակցությունները նա անց էր կացնում գործիմացությամբ: Տիմոֆեևը կարողանում էր ընդհանրացնել կատարված քաղաքական աշխատանքը և մարտական փորձը, դրանցից առանձնացնել գլխավորը, որի վրա կառուցվում էր դիվիզիայի քաղապարտի հետագա պրակտիկ գործունեությունը: Չեմ կարող ասել, թե նա աչքի էր ընկնում լայն ու խոր գիտելիքներով, բայց օժտված էր կոմունիստին հատուկ հիանալի հատկություններով:

Քաղաքացի աշխատողները՝ կուսհանձնաժողովի քարտուղար Տարչինը, կազմակերպական աշխատանքի գծով ավագ հրահանգիչ Շամյակինը, պրոպագանդայի գծով ավագ հրահանգիչներ Լովցովը, Լիտվինովը և Միրոնովը, կոմերիտական աշխատանքի գծով քաղաքացի պետի օգնական Կարմանովը քաղաքացի այսպես կոչված «օպերատիվ խումբն էին»: Նրանցից յուրաքանչյուրի մասին կարելի է գովեստի շատ խոսքեր ասել, և նրանք արժանի են դրան: Լովցովը, Կարմանովը, Տարչինը, Շամյակինը և Միրոնովը դիվիզիայում ծառայում էին նրա կազմավորման օրվանից, մասնակցել էին Կարելական պարանոցում մղված մարտերին, բազմիցս աչքի ընկել խիզախությամբ ու քաջությամբ: Լիտվինովը դիվիզիա էր եկել Չեչենո-Ինգուշական ԱՍՍՀ-ի լուսավորության ժողովրդական կոմիսարի պոստից: Նա կրթված, բարձր կուլտուրայի տեր, համեստ մարդ էր, անվեհեր քաղաշխատող և շուտով դարձավ քաղաքացի կուրեկտիվի սիրելին: Նա ետ չէր մնում մարտական փորձունեցող իր ընկերներից: Հենց որ խոսք եղավ հարձակողական մարտերի մասին, Լիտվինովը շտապեց խնդրել իրեն ուղարկել 357-րդ գունդ:

— Այդում եմ Քաիրյանի մոտ գնալ, — ասաց նա, — նրա հետ կարելի է ավելի հաճելի է կովել թշնամու դեմ:

Քաղաքացի կուրեկտիվի ամբողջ աշխատանքը կենտրոնացված էր զորամասերում ու ստորաբաժանումներում, մարտերի ամենավտանգավոր տեղամասերում: Նրանք կուսակցության խոսքը հասցնում էին մարտիկներին, պարզաբանում հրամանատարության մարտական հրամանները, հրամանատարներին ու կոմիսարներին օգնում ճշտությամբ կատարելու բոլոր հրամանները, օգնում էին կոմունիստներին ու կոմերիտականներին, կուսակցա-

կան ու կոմերիտական կազմակերպություններին՝ հաջողութեամբ կատարելու իրենց առջև ծառայած խնդիրները: Երբ հրամանատարներն ու քաղաշխատողները դուրս էին գալիս շարքից, քաղբաժնի աշխատողները կա՛մ զնդերի ղեկավարությունն օգնում էին արագորեն գտնելու նրանց փոխարինողներ, կա՛մ իրենք էին, անհետաձգելի ղեկավարում, դրավում շարքից դուրս եկածների տեղը: Քաղբաժնի ապարատը, մասնավորապես ավագ հրահանգիչների կազմը, պատրաստի ռեզերվ էր փոխարինելու զորամասերի ավագ քաղաշխատողներին (շարքից դուրս գալու դեպքում), կուսակցական կազմակերպությունների ղեկավարությունն ամրապնդելու գործում:

Մի փոքր այլ էր կուսհաշվառման գծով հրահանգիչ Սեմյոն Մոխիսևի վիճակը: Նա չէր թաքցնում իր նախանձը ընկերների՝ քաղբաժնի աշխատողների նկատմամբ, գտնելով, որ «ապարատային» իր վիճակը անհանդուրժելի է ռազմի դաշտում, զենքը ձեռքին թշնամու դեմ մարտնչելու ձգտող կոմունիստի համար: Մի խոսքով՝ նա ուզում էր մյուսների նման կռվել վաշտում կամ գումարտակում, ինչպես կռվել էր «Մաններհայմի գիծը» ճեղքելիս: Մի անգամ նա եղավ դիվիզիայի հետախուզության պետ մայոր Բիստրովի մոտ, որն այդ ժամանակ հետախուզների խումբը պատրաստում էր թշնամու թիկունքում պատասխանատու առաջադրանքի ուղարկելու: Մոխիսևը խնդրեց իրեն նշանակել խմբի ղեկավար: Խիզախ քաղղեկին ճանաչելով դեռ Կարելյական պարանոցից, Բիստրովը ուրախացավ, բայց և ասաց.

— Պետերի համաձայնությունն է պետք, այլ կերպ չի լինի: Նա այդ համաձայնությունը չստացավ:

Բավականությամբ հիշում եմ դիվիզիայի վետերաններից կրտսեր քաղղեկ Կալինինի, մեքենավար ավագ սերժանտ Լիբերզոնի և կուսհանձնաժողովի տեխնիկական քարտուղար կարմիրբանակային Մանուզինի համերաշխ աշխատանքը: Այս երիտասարդներն արժանի են գովեստի: Միշտ Կալինինը աչքի էր ընկնում որպես չափազանց ճշտապահ ու ընդունակ քաղաշխատող: Դեռ ավելին, նա լավագույն կազմակերպիչ էր, նույնիսկ կարելի է ասել՝ տնտեսավար: Քաղբաժնի փաստաթղթերի և գույքի պահպանությունն ու փոխադրումների, աշխատողներին սննդով ու հանդերձանքով ապահովելու և նրանց զանազան հոգսերը հոգալու պա-

տասխանատվությունը դրաված էր Կալինինի վրա: Եվ նա այդ ամենը կատարում էր հաճույքով, անտրտունջ: Եվ ինչ գործի էլ որ ձեռք զարկեր Միշան, ինչ էլ որ նա նախաձեռներ, անպայման պետք է կատարեր ժամանակին, անթերի: Նա հասցնում էր անգամ կապ պահպանել՝ այն վետերանների հետ, որոնք տարբեր ժամանակներում և տարբեր պատճառներով հեռացել էին դիվիզիայից: Այդ կապը նա պահպանում է մինչև օրս:

Պատերազմից հետո նա մի քանի անգամ եղել է Երևանում ու լենինականում, հանդիպել մարտական ընկերների հետ: Այժմ նա աշխատում է Վորոնեժում:

Քաղբաժնի կռեկտիվը սերտորեն միաձուլվեց և գործունյա մի օրգանիզմ էր: Նա կուսակցության խոսքը հասցնում էր մարտիկներին, անձնական օրինակ ցույց տալիս մարտում, միշտ գտնվում այնտեղ, ուր անհամեմատ դժվար էր, վտանգավոր, և որտեղ ապաստում էին նրա բարեկամական խորհրդին, ջերմ խոսքին:

Հաճելի է անդրադառնալ զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարների, քաղաշխատողների և կոմունիստների հարաբերություններին: Դիվիզիայում հրամանատարը և քաղաշխատողը լրացնում էին մեկը մյուսին, դրսևորում ջերմ հոգատություն միմյանց նկատմամբ: Հայտնի չէ նրանց անմիաբան աշխատանքի որևէ փաստ: Հրամանատարները քաղաշխատողներին հետ էին պահում անտեղի վտանգավոր տեղեր խցկվելուց: Դրա փոխարեն կոմիսարները, քաղղեկները և կազմակերպությունների քարտուղարները հանդես էին բերում բավականաչափ հմտություն և վճռականություն հրամանատարներին հետ պահելու մարտի դրժվարին ու վտանգավոր տեղերում հայտնվելու անկեղծ, բայց երբեմն անհաշվենկատ ցանկությունից: Քաղաշխատողներն ու հրամանատարները բարձրացնում էին միմյանց հեղինակությունը: Կուսակցական կազմակերպությունների, ժողովների բանաձևերում ու օրոշումներում հաճախ էին հիշատակվում մարտերում առանձնապես աչքի ընկած հրամանատարների և քաղաշխատողների անունները: Սա բացատրվում է նրանով, որ իրենց պարտականությունների բերումով և կուսակցական պարտքի ազնիվ մղումով հրամանատարներն ու քաղաշխատողները կլանված էին վաշտերում ու մարտկոցներում կարմիրբանակայինների հետ տարվող

աշխատանքով և մարտի էին գնում նրանց հետ, ցույց տալիս խիզախութեան օրինակներ:

Ուրախանալու և տխրելու առիթներ լինում էին: Ուրախանում էինք մեծ թե փոքր հաջողության դեպքում: Ուրախանում էինք, օրինակի համար, տեսնելով, թե ինչ եռանդով է կարմիրբանակայինը փորում խրամատը, փութկոտությունը կարգի բերում այն: Անկեղծ հրճվանք էինք ապրում, երբ շահում էինք մարտը: Բայց և տխրությունը չէր լքում մեզ, երբ տեսնում էինք, թե ինչ գնով է ձեռք բերվում հաղթանակը:

Երբեմն կորուստների մասին թախծալի խոսակցությունից հետո, լուսնուն էր տիրում: Սովորաբար այն խախտում էր կուսհանձնաժողովի քարտուղար Դմիտրի Տարշինը... որևէ տխուր երգով: Տարշինի ամենասիրած երգը՝ «Ես ամբողջ տիեզերքն եմ անցել», ընկերների թախանձանքով հաճախ էր հնչում կարճատև դադարների ժամանակ, արժանանալով ջերմ ընդունելության: Հիրավի, նա լավ էր երգում, իր հաճելի տենորով գերում լսողներին: Զարմանալի էր, թե որքան բնթշույթուն կար կյանքի դաժան պայմաններում կոշտացած այդ փոքրամարմին մարդու մեջ:

Քաղբածնի պետ Վասիլի Տիմոֆեևը նույնպես երգի սիրահար էր: Նա սրտանց ու ջերմությամբ էր կատարում «Տարածվում է ծովը լայնարձակ» երգը: Երգում էր մեղմ, կոկորդային ձայնով:

Տիմոֆեևը չէր թաքցնում իր ապրումները: Ընթերցողը հիշում է, որ Ռազդորիեի մոտ զոհվեց քաղբածնի ավագ հրահանգիչ Պրենը, կենսախիղ, զգայուն, սրտացավ գնշու այդ երիտասարդը: Վիրավոր վիճակում Պրենը մի քանի անգամ գրոհի տարավ 387-րդ գնդի շրջապատման մեջ ընկած ստորաբաժանումները, սակայն անարգ թշնամու երկրորդ գնդակը կտրեց նրա կյանքի թելը: Պրենը հետմահու պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: Երբ Տիմոֆեևը խոսում էր Պրենի մասին, նրա ձայնը դողում էր:

Մի անգամ երգելիս Տիմոֆեևը տխուր ասաց.

— Դու չես կարող պատկերացնել, թե որքան ծանր է ինձ համար... Լավ տղաների կորցրինք: Ամեն անգամ, երբ մեր ընկերներին մարտի ենք ուղարկում, ուշքս ու միտքս նրանց հետ է լինում... Ուզում եմ լավատես լինել, որ նրանք բոլորն էլ ողջ առողջ կվերադառնան, կխնայեն իրենց: Իսկ սիրտս լալիս է...

Եվ նա իսկապես լալիս էր, լալիս՝ անարցունք, հոգու խորքում: Ես ուզեցի ցրել նրա մոռյլ մտքերը, մխիթարել... Դե ինչ արած, պատերազմը պատերազմ է, առանց զոհերի չի լինի... Տիմոֆեևն առաջին անգամ մեր համատեղ աշխատանքում չոր ընդհատեց:

— Դու էլ ոչինչ, բարեկամս, խցկվում ես ուր հարկավոր չէ...

— Ինձ համար մի անհանգստանա, ես երկարակյաց եմ,— կատակով ասացի ես:

— Մենք բոլորս էլ «երկարակյացներ» ենք, քանի դեռ ապրում ենք: Զէ, եղբայր, կատակել չի կարելի:

— Գիտես ինչ, ավելի լավ է քննք: Վանիթր այդ մոռյլ մրտքերը,— ասացի:

Պառկեցինք: Բայց քնել չկարողացանք: Նա շարունակում էր մտածել մարտերից չվերադարձած ընկերների մասին, իսկ ես՝ նրա: Ինքը՝ Տիմոֆեևն էլ քիչ չէր լինում ստորաբաժանումներում, մարտի ամենավտանգավոր տեղերում... Իսկ այժմ ամեն ինչ մոռացած, թախծում էր զոհվածների համար: Ռուսական մեծ հոգու տեր այդ խիզախ մարդու կրծքի տակ քնքուշ սիրտ էր բարխում:



Պոստովի օպերացիայի օրերին պահանջվեց մարտական ու քաղաքական բնութագիր կազմել ավագ հրամանատարների ու քաղաշխատողների համար: Պետք է խոստովանեմ, որ այնքան էլ մեծ բավականություն չես ստանում դրանից: Նրանց մասին հարկ էր հայտնել քաղբածնի կարծիքը: Ստիպված եղանք գիշերները աշխատել: Մենք չէինք կարող կուսել, որ առաջիկայում հրաժեշտ ենք տալու նրանցից շատերին, որոնց հմտությունն ու անձնական օրինակը վճռական դեր էին խաղում միավորման մարտիկների մասնաշաղկան հերոսությունն ապահովելու գործում: Առաջինը առաջնահատի հրամանատարի տրամադրություն տակ կանչվեցին 733-րդ գնդի հրամանատար Ալեքսանդր Տավանցևը և կոմիսար Իվան Ցակուշենկոն, իսկ նրանցից հետո՝ Վասիլի Տիմոֆեևը: Շուտով գիվիդիայից հեռանալու հերթը հասավ նաև մի քանի ուրիշ հրամանատարների: Նախկին հրամանատարներից, ովքեր գնդերը ղեկավարում էին մինչև դիվիզիայի մեկնելը գործող բանակ, մնա-

ցել էր միայն 291-րդ հրետանու հրամանատար Ա. Վ. Չոբանենկոն: Հաճելի են հիշողությունները նրանց մասին, ում հետ մարտի ենք գնացել պատերազմի ամենածանր օրերին: Ելիզավետովկա-Տրոխցկոե-Պիսարևկա (Ռազդորիեի մոտ) շրջանում և Դյակովոյի մոտ մղված մարտերը թերևս արտասովոր էին: Թշնամու տանկերի դեմ պայքարի հիմնական ծանրությունն ընկած էր հրետանու և հրետանավորների վրա: Դիվիզիայի հրետանու պետ Նիկոլայ Իվանովիչ Տելեգինը, բարձրահասակ, բարեկազմ, միշտ կոկիկ հագնված, հանդարտ, քշխոս այդ գնդապետը, թվում էր, թե երբեմն անտարբեր է շրջապատի նկատմամբ: Որպես զորապետ, նա դառնում էր առաջիկա մարտի զարկերակը, կանխագուշակում, թե որտեղ պետք է խցկվեն թշնամու տանկերը: Նա հրետանին ճշտորեն տեղաբաշխում էր այնպես, որ ներխուժած թշնամական չուրաքանչյուր տանկ ընկնում էր մեր հրանոթների ուղիղ նշանառության տակ: Ի դեմս գնդապետ Տելեգինի մեր դիվիզիան ուներ ոչ միայն հրետանու կոպիտ հրամանատար, այլև հրետանավորների խստապահանջ ուսուցիչ: Նա հրետանավորներին սովորեցնում էր տեխնիկա, հաշվարկ, դիրքի ընտրություն, ճշգրիտ կրակ, կարգապահություն և տրևոնություն, սերտ համագործակցություն հրաձգային զորամասերի հետ, հրամանատարության կարգադրությունների ու հրամանների անվերապահ կատարում, որի մեջ տեսնում էր զինվորականի բարձր կուլտուրա:

Տարիներ անց Նիկոլայ Իվանովիչը նշանակվեց Անդրկովկասյան զինվորական օկրուգի հրետանու հրամանատար: Մենք բազմիցս հանդիպեցինք օկրուգի ռազմական խորհրդի նիստերի ժամանակ և ուրիշ գործերով: Հիշողությանս մեջ անջնջելի է մնացել հետևյալ միջադեպը: 1957 թվականին Անդրկովկասյան զինվորական օկրուգը անց էր կացնում բոլոր զորատեսակների զորավար-ժուլուկները: Ներկա էր Սովետական Միության մարշալ Ա. Ա. Գրեչկոն, որն այն ժամանակ ցամաքային զորքերի հրամանատարն էր, ՍՍՀՄ պաշտպանության մինիստրի առաջին տեղակալը: Մուժ գիշերին մարշալ Գրեչկոյի և օկրուգի հրամանատար բանակի գեներալ Գալիցկու հետ գտնվում էինք հրամանատարական կետում: Զորավար-ժուլուկները ղեկավարում էր գեներալ Տելեգինը: Կենտրոնական թեման բոլոր զորատեսակների փոխգործողությունն էր «հարձակողական օպերացիայում»: Զորքերի ելման դիրքերը,

նրանց գործողությունը և նախապես որոշված բնագծերի նվաճման ժամանակը նշում էին հրթրոններով: Գեներալ Տելեգինը հեռախոսի ու հաղորդիչի մոտ նստած՝ տալիս էր անհրաժեշտ հրամաններ և ստանում հրամանատարների ղեկույցներ: Նա ծայր աստիճան լարված էր աշխատում: Ամեն ինչ ընթանում էր ժամացույցի մեխանիզմի ճշտությամբ: Ոչ մի շեղում զորքերի առջև դրված խրհդիրներին, ոչ մի վրիպում: Մարշալ Գրեչկոն ուշադիր հետևում էր զորավար-ժուլուկների ընթացքին: Վրա հասավ մի պահ, երբ օկրուգի հրամանատար գեներալ Գալիցկին սկսեց անհանգստության նշաններ ցույց տալ. «Ավիացիան ուշանում է», — ասաց նա: Մենք նայեցինք ժամացույցին՝ մնացել էր մեկ րոպե, հետո վայրկյաններ... Մենք ևս սկսեցինք անհանգիստ շարժումներ անել: Տելեգինը կարծես իր շուրջը ոչ ոքի և ոչինչ չէր նկատում: Նույն հանգիստ, «անտարբեր» հրամանատարն էր, ինչպես 1941-ին»: Ծիշտ ժամանակին ինքնաթիռները մեր գլխավերևում կախեցին հրթրակիր պարաշյուտները: Մարշալ Գրեչկոն գոհ մնաց:

291-րդ թեթև հրետանային գնդի հրամանատար մայոր Ա. Վ. Չոբանենկոն մարմնավորում էր անվեհեր ռազմիկի կերպարը: Հակառակորդի տանկային զրոհների ժամանակ նա իր համար դիտակետ էր ընտրում մարտկոցների կրակադիրքերի մոտակայքում, որտեղից լավ էին երևում մեր հրանոթներն ու թշնամու զրոհող տանկերը: Նա հրետանու կրակը ղեկավարում էր ոչ միայն հեռախոսով ու կապի սպանների միջոցով, այլև դժվար բոպաներին հրետանավորների մոտից ղեկավարում էր ուղիղ նշանառության կրակը: Մարտիկները մոտիկից տեսնում էին իրենց բարձրահասակ, ժայռի պես կանգուն հրամանատարին:

Հետագայում ինձ վիճակվել է աշխատել ու բարեկամանալ հրետանու ուրիշ հրամանատարների հետ, կիսել մեզ բաժին ընկած ուրախություններն ու դառնությունները: Բայց երբ մտովի վերադառնում էի թշնամու տանկերի դեմ մղված մարտերին, միշտ հայացքիս առաջ հառնում էին Տելեգինի, Չոբանենկայի, Շումեյկոյի, Սերգեյևիկի կերպարները...

Ուզում եմ մի քանի խոսք ասել 733-րդ գնդի հրամանատար գեղապետ Ալեքսանդր Տավանցևի մասին: Նրա օրինակով կարելի է դատել թե որքան մեծ, վճռական դեր է խաղում գնդի հրամանատարը զորամասի կյանքում:

Յիննական պատերազմի ժամանակ Կարելական պարանոցում մղված մարտերում ցուցաբերած խիզախության ու մարտական-քաղաքական պատրաստության համար 733-րդ գունդը պարգևատրվեց Լենինի շքանշանով և արժանացավ դիվիզիայի մարտական դրոշմ պահելու պատվին: Եղել են դեպքեր, երբ ոմանք գանգառվում էին Տավանցեից, ասում էին թե կոպիտ է, հոգատար չի ենթակաների նկատմամբ: Դիվիզիայի հրամանատար Անդրեևը և կոմիսար Աբաուլինը բազմիցս զրուցել են նրա հետ, նույնիսկ նախազուշարել: Բայց Տավանցեյը իրենն է պնդել. «Հարկավոր է մարդկանց ընտելացնել դժվարություններին, սովորեցնել այն, ինչ անխուսափելի է պատերազմում»: Ենթակաները պատերազմի ժամանակ նրան անվանում էին, «հայր»: Թե՛ մարտ է գնում, Տավանցեյը զինվորի գլխարկով, մարտիկների կողքին է, սողեսողանցում է նրանց հետ, հաճախակի կրկնելով. «Ավելի համարձակ, տղաներ, ավելի համարձակ»: Նա լավ գիտեր իր գործը, երբեք ձեռքից բաց չէր թողնում զնդի ղեկավարման լծակը: Նրա գունդը Դյակովոյի մոտ տոկունություն դիմացավ գեներալ Կլեյստի ուժերի ճնշմանը և նրանց մեծ կորուստներ պատճառեց:

Աչքերիս առջև կրկին հառնում են Յակուշենկոյի, Ստրախովի, Բադյանի՝ զնդերի զինվորների ու մարտական հրամանատարների հավատարիմ բարեկամների, պայծառ կերպարները:

Վաշտի քաղղեկ Իվան Յակովենկոն իր քաջությունը աչքի էր ընկել «Մանեներհայմի գիծը» ձեռքբերու համար մղված ծանր մարտերում: Նա ընդունել էր վաշտի հրամանատարությունը և գնդում առաջինը հաղթահարել թշնամու ամբողջությունները: Կուսակցությունն ու կառավարությունը բարձր են գնահատել արիասիրտ քաղղեկի մարտական սխրանքը՝ նրան շնորհելով Սովետական Միության հերոսի բարձր կոչում: Գնդի կոմիսարը բազում հոգսեր ունի, անհամար «մանրուքներ կան» նրա աշխատանքում: Այդ ամենն ընդգրկելու, դրանց մեջ թափանցելու համար հարկավոր են ոչ միայն հարուստ գիտելիքներ, այլև կուսակցական աշխատողի շուրք զգացողություն, տարբեր պարագաներում մարդկանց հանաչելու ընդունակություն: Մարդկանց մասին հոգալը քաղաշխատողի գործունեության անքակտելի մասն է: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր քաղաշխատող իր աշխատանքի ոճն ունի և, հանրահայտ սկզբունքներ կիրառելով հանդերձ, ուրույն մոտեցում է ցու-

ցաբերում: Իվան Յակուշենկոն ուղղիկների բարեկամն էր, նրանց դատարարս կը բառիս ամենախիսկական իմաստով:

541-րդ զնդի հրամանատար Նազարովի, իսկ այնուհետև նաև կապիտան Ուսիկովի հետ, զնդի կոմիսար Կոստանտին Ստրախովի կատարած աշխատանքում ինչ-որ առանձնահատուկ բան կար: Քիչ է ասել, թե նրանք լրացնում էին միմյանց. ավելի շուտ նրանք մի ամբողջություն էին կազմում. կոմիսարը քաջախոս էր, իսկ Նազարովն ու Ուսիկովը շատ ավելի մտերմական, անմիջական, և սրանում քիչ չէր Ստրախովի ծառայությունը: Նա լավ գիտեր հրամանատարի տեղն ու դերը, օգնում էր նրան ինչով կարող էր, իսկ երբ հարկ էր լինում, նաև հուշում ձիշտ որոշումներ: Նա մեծ հեղինակություն էր վայելում գնդում, նրան համարում էին հրամանատարների և քաղաշխատողների դատարար և խորհրդատու: Ստրախով: Տեսեք, թե ինչ ազգանուն է: Կարծես դիտմամբ է հորինված հենց նրա՝ վիթխարահասակ այդ մարդու համար: Թվում էր, թե պատահական զնդակը անպայման կգտնի նրան: Իսկ նա անվախ գրոհի էր գնում: Ու ինչ-որ աներևույթ մի ուժ պահում էր նրան, նա համարձակ նայում էր մահվան աչքերին, միշտ հաղթող դուրս գալիս: Նա խիզախություն ցուցաբերեց Դոնբասում և Ստալինգրադում մղված կատաղի մարտերում: Զարմանալի ինքնատիրապետումը, համեստությունը, հայրենական սերը ենթակաների նկատմամբ, որոնցով օժտված էր Ստրախովը, դարձանալիորեն ներդաշնակվում էին նրա խստապահանջության, տոկունության և անձնական քաջության հետ:

Մինչև պատերազմը կոմունիստ Գրիգոր Բադյանը տարբեր պաշտոններ էր վարել: Եղել էր ուսուցիչ, Լեոնային Ղարաբաղի մարդային ժողկրթբաժնի վարիչ և կուսակցության մարզկոմի հրահանգիչ: 1939 թվականին Բադյանը ծառայության կանչվեց կարմիր բանակ, նախ որպես Բաքվի ուսումնարանի կուրսանտ, իսկ 1941 թվականի մարտից՝ 136-րդ դիվիզիայի 387-րդ զնդի պրոպագանդայի հրահանգիչ: Այն մասին, թե նա ինչպես է սկսել կարմիր բանակի քաղաշխատողի գործունեությունը, վկայում է զնդի կոմիսար Բարուտկինի կարծիքը... «Իր աշխատանքի ընթացքում նա իրեն դրսևորեց որպես կարգապահ, ընդունակ և ակտիվ քաղաշխատող: Ծառայական պարտականություններին վերաբերվում է ազնվորեն ու բարեխղճությամբ: Լավ և հեղինակավոր պրոպագան-

դիստ է: Աշխատում է կուսակցական պատասխանատուության զգացումով»¹:

Բազյանը աչքի էր ընկնում նրբին խելքով, իրադրությունը խորապես հասկանալու ընդունակությամբ, բազմազգացողությամբ: Փոքր Բելոզերկայի համար մղված մարտերում նա բարդ պայմաններում համարձակ, ինքնուրույն որոշում կայացրեց: Հենց խորագիտակ պրուպագանդիստի և կազմակերպչի հատկությունները հնարավորություն տվեցին Բազյանին շուտով առաջ քաշելու որպես զնդի կոմիսար: Դյակովոյի մոտ գեներալ Կլեյստի խմբավորման ղեմ մղվող մահացու գոտեմարտերը, Ռոստովի և Դեբալցևոյի հարձակողական գործողությունները Բազյանին կոփեցին որպես ռազմիկ-կոմիսար, կարճ ժամանակում նա շահեց զնդի մարտիկների ստորաբաժանումների հրամանատարների և քաղաշխատողների սերն ու համակրանքը:

Բազյանի հետագա մարտական ուղին 15-րդ գվարդիական (նախկին 136-րդ) դիվիզիայում անցել է Ստալինգրադից մինչև Խարկով: Ստալինգրադի մոտ զնդի հրամանատարը զոհվեց: Բազյանը իր վրա վերցրեց հրամանատարությունը: Այդ նույն օրերը գերվեցին մի խումբ գերմանական սպաներ, որոնց մեջ էր հիտլերյան 44-րդ դիվիզիայի հրամանատարի համհարզը: Բազյանը դիմեց համարձակ քայլի: Համհարզին ուղարկեց իր հրամանատարի մոտ՝ ամբողջ դիվիզիան գերի հանձնելու առաջարկությամբ: Նշանակված ժամին կապիտանը չվերադարձավ: Անցավ ևս երկու ժամ: Բազյանը գերմանական գեներալ Դեբուայից ստացավ մի հաղորդում, որտեղ նա հայտնում էր, որ ինքը լիազորված չէ բանակցություններ վարելու սովետական հրամանատարության հետ: 1943 թվականի հունվարի 23-ին գվարդիականները անցան հարձակման: Բազյանի գունդը գերի վերցրեց ավելի քան 5000 գերմանական զինվոր ու սպա: Այս անգամ էլ հիտլերյան գեներալ-լեյտենանտ Դեբուային չվիճակվեց բանակցություններ վարել:

Իր ծառայությունը 15-րդ գվարդիական դիվիզիայում Բազյանն ավարտեց Խարկով քաղաքի ազատագրմամբ: Բազյանն ուղարկվեց «Վիստրել» դասընթացներում սովորելու: Դասընթացներն

ավարտելով, նա սկզբում նշանակվեց 30-րդ դիվիզիայի 71-րդ գրնդի հրամանատարի տեղակալ, իսկ հետո՝ հրամանատար: Այդ դիվիզիայում նա մարտերով անցավ Ուկրաինայով և պատերազմն ավարտեց Պրագայում: Գնդի հիանալի կոմիսարը նույնքան էլ տաղանդավոր հրամանատար էր: Մի շարք հարձակողական օպերացիաներ, այդ թվում և Դնեստրի գետանցումը, Բազյանը իրագործեց գիշեր ժամանակ: Ընկերները նրան կատակով «գիշերային գայլ» էին անվանում: Օլոմոկեց քաղաքի գրավման համար մղված մարտերում ցուցաբերած հերոսության համար Գրիգոր Բազյանը արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման:

1946 թվականի ամռանը Երևան—Մոսկվա գնացքում անսպասելի հանդիպեցի պատերազմական ժամանակի ընկերոջս՝ Գրիգոր Բազյանին: Դժվար է բացատրել մեր ուրախությունը: Ափսոսանքով իմացանք, որ Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրագայի ազատագրման օրերին շատ մոտ ենք եղել միմյանց, բայց չենք հանդիպել: Զինվորական ակադեմիայի ուսմանը իրը որոշել էր արձակուրդն անցկացնել Երևանում: Իմ խնդրանքով նա իջևանեց մեր տանը, և մենք երկար զրուցեցինք անցած-գնացած օրերի մասին, կրկին հիշեցինք պատերազմի դառնություններն ու ուրախությունները, զոհված և ողջ մնացած շատ մարտական ընկերների:

Ակադեմիայից հետո Բազյանը նշանակվեց 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատարի տեղակալ: Տաղանդավոր զինվորականը արագորեն բարձրացավ հրամանատարական աստիճաններով, նշանակվելով բանակի հրամանատարի տեղակալ: Բանակը ղեռ շատ սպասելիքներ ուներ տաղանդավոր գեներալից: Բայց նա հեռացավ կյանքից ուժերի ծաղկման շրջանում:

5. ԳԵՐԱԼՅԵՎՈՅԻ ՄՈՏ

Միուս գետի վրա իր դիրքերը հանձնելով ռազմաճակատի մյուս զորամասերին, 136-րդ, հետագայում 15-րդ գվարդիական դիվիզիան, սկզբում որպես ռազմաճակատի ղեկավար, կենտրոնացավ Դյակովոյի շրջանում, այնուհետև, ղեկավարների 15-ին, իր երթն սկսեց Վորոշիլովգրադի մարզի Ռովենկի և Իվանովկա քաղաքներով դեպի Կրուզլի և Վեսյոլի խուտորները, որտեղ նա ան-

¹ Գ. Բազյանի մասին այստեղ և այնուհետև տե՛ս ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի արխիվ, ֆ. 75, գ. 1, 2, 3, 4, 5:

ցավ 18-րդ բանակի օպերատիվ ենթակայության տակ: Դիվիզիան սամանամանիքային կեսգիշերին միայն կենտրոնացավ Կրուզի խուտորի շրջանում, այն էլ առանց հրետանու և թիկունքային ստորաբաժանումների: Հաջորդ օրը, դեկտեմբերի 25-ի գիշերը, փոխարինելով 96-րդ դիվիզիային, նա ելման դիրք գրավեց Վեսյոլի խուտորից հարավ: Դժվարություններ ի մի հավաքեց հրետանին: Այդ ժամանակ 541-րդ գնդի հրամանատար նշանակվեց մայոր Դորոժկինը: 733-րդ գունդը ժամանակավորապես ղեկավարում էր ավագ լեյտենանտ Բատյանովը, իսկ կոմիսարը քաղբաժնի ավագ հրահանգիչ Բորիս Շեմյակինն էր: Քաղբաժնի պետի պաշտոնում հաստատվեց 291-րդ հրետանու կոմիսար Լուկյանովը:

18-րդ բանակի հետախուզության տվյալներով, գերմանական հրամանատարությունն այդ շրջանում ունեցած իր երկու դիվիզիաները՝ հետևակային և տանկային, ետ էր քաշել Մենժեռե և Սերգիտոե բնակավայրերը, պաշտպանությունում թողնելով միայն իտալական կորպուսը: Ենթադրելով, որ գերմանացիները մտադիր են իրենց միավորումներն ազատել հյուսիս տեղափոխելու համար, 18-րդ բանակի հրամանատար գեներալ-մայոր Կամկովը որոշեց՝ ուժերը վերախմբավորելու հնարավորությունից թշնամուն զրկելու նպատակով, հակառակորդի պաշտպանությունը ճեղքել երեք՝ 96-րդ, 136-րդ և 348-րդ դիվիզիաների ուժերով: Հարձակումը նշանակվեց դեկտեմբերի 25-ի գիշերը:

Դիվիզիան հակառակորդի դիրքերը գրոհեց 541-րդ և 733-րդ գնդերի ուժերով: Ճեղքելով իտալական կորպուսի պաշտպանությունը, գնդերը հաջողությամբ առաջ շարժվեցին և դեկտեմբերի 25-ի երեկոյան գրավեցին Օւլովո--Իվանովկա և Պետրոպավլովսկ բնակավայրերը: Դեռ առջևում էին Նովոուլովսկան, Օլխովատկան և Միխայլովկան: 733-րդ գնդի հրաձգային վաշտերից մեկը, հարձակվելով Օւլովո-Իվանովկայի վրա, պետք է ներխուժեր գյուղի ծայրամասը, ամրանար մի քանի տներում, իր վրա գրավելով հակառակորդի ուշադրությունը՝ ապահովել գնդի մարտական առաջադրանքի կատարումը: Քաղբաժնի ավագ հրահանգիչ Միխայլ Լովցովը գնաց վաշտի հետ: Կողմնորոշվելով իրադրության մեջ, նա վաշտի հրամանատարին առաջարկեց ներխուժել հակառակորդի մարտակարգերը և խուճապ առաջացնել: Շրջանցելով գյուղը, վաշտը շրջվեց դեպի նրա կենտրոնը: Լովցովը, վաշտի հրամանա-

տարը և մի քանի մարտիկներ գնում էին առջևից: Բաժանվելով մի քանի խմբերի, վաշտը անկանոն կրակ բացեց: Խուճապի մատնված իտալացիները դիմեցին փախուստի, իրենց ունեցվածքը թողնելով գյուղում: Գնդի ստորաբաժանումները գյուղը վերցրին առանց կորուստների:

Շարունակելով հարձակումը, 733-րդ գունդը թևանցեց Օլխովատկան, իսկ այդ ժամանակ մարտի մեջ մտցված 387-րդ գունդը մի գումարտակով ներխուժեց գյուղ: Նույն ժամանակամիջոցում նույն գնդի երկու վաշտեր, որոնց հրամանատարներն էին Ակուլենկոն և Յոցովաշվիլին, գնդի կուսակցական բյուրոյի քարտուղար Թաիրյանի ընդհանուր ղեկավարությամբ կտրեցին իտալական «Չեկերս» թագավորական դիվիզիայի գնդի նահանջի ճանապարհը: Այդ գնդի գումարտակներից մեկը ջախջախվեց: Կենդանի մնացած զինվորներն ու սպաները գերի հանձնվեցին: Գնդի հետախույզների խումբը շրջապատեց այն տունը, որտեղ գտնվում էր իտալական գնեհրալը՝ դիվիզիայի հրամանատարը: Ոչնչացնելով հրամանատարի պահակախումբը, հետախույզներ Տրապեզնիկովը և Ոսկանյանը ներխուժեցին տունը և գերի վերցրին դիվիզիայի հրամանատարին: Այդ օպերացիայի համար Թաիրյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով:

Իվան (Վանյա) Թաիրյանին, ՀԿ(բ)Կ Կենտկոմի արխիվի համետ աշխատակցին, շատերը գիտեին: Թաիրյանը դիվիզիա եկավ այն պահին, երբ դիվիզիան մեկնում էր ռազմաճակատ: Ես նրան ճանաչում էի պատերազմից դեռ շատ առաջ, երբ նա Կենտկոմի ապերատի աշխատող էր, իսկ հետո շրջկոմներից մեկի երկրորդ քարտուղարը: Աշխատանքի անցնելով դիվիզիայի քաղբաժնում, Թաիրյանն ամբողջ ժամանակ լինում էր զորամասերում, մարտիկների հետ: Նա 387-րդ գնդի կոմիսար Բարուտկինի խնդրանքով առաջինն աշխատանքի անցավ գնդում որպես կուսակցական բյուրոյի քարտուղար: Այստեղ դրսևորվեցին նաև հմուտ կազմակերպիչ և անվեհեր ռազմիկի անգնահատելի հատկությունները, որոնցով օժտված էր Թաիրյանը: Գնդի կոմիսարն ու կուսբյուրոյի քարտուղարը հաջողությամբ լրացնում էին միմյանց:

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում Թաիրյանը քաջաբար կռվեց: Ուր պետք էր արագ կողմնորոշվել իրադրության մեջ և ինքնուրույն որոշում ընդունել, այնտեղ հայտնվում էր Թա-

իրյանը: Նա չէր սպասում, որ հրամայեն, այլ ինքն էր խնդրում իրեն ուղարկել մարտի՝ առաջին հայացքից անհուսալի թվացող և վտանգավոր տեղը, իսկ երբ նա գնում էր առաջադրանքի կատարման կարելի էր չկասկածել, որ այն հաջողութեամբ կստանալի: Ստորաբաժանումներում շատ ծանր դրություն ստեղծելու դեպքերում թախիբները դառնում էր գնդի հրամանատարի և կոմիսարի անփոխարինելի խորհրդատուն: Նա օժտված էր մարտի գաղտնիքների մեջ թափանցելու յուրահատուկ ընդունակությամբ և կարողանում էր առանց մեծ ջանքերի գտնել այն հուսալի թեյը, որից բռնելով կարելի էր դուրս գալ ստեղծված ծանր կացությունից: Բազմիցս թախիբներին տեսել էմ մարտի ամենադժվարին բոլորներին: Նա կտրականապես արգելում էր մյուսներին գնալ անխուսափելի մահվան ընդառաջ, սակայն ինքը գնում էր և անվնաս վերադառնում: Թախիբների մարմինը ծածկված էր մարտերում ստացած վերքերի սպիներով: Երբեմն մտածում էս, թե ինչպես կարող է տաքարյուն բնավորության տեր այս մարդն այնպես հանգիստ ու անվրդով նայել մահվան աչքերին: Թախիբները Սովետական Միության հերոսի կոչում չստացավ: Բայց նա հերոս էր բառի ամենալայն իմաստով:

Դիվիզիայից մեկնելու հերթը հասավ ինձ: Հրամայվեց ներկայանալ 18-րդ բանակի քաղբաժին: Սրտի կսկիծով հրաժեշտ տվեցի մարտական ընկերներին: 18-րդ բանակի քաղբաժնի պետ գնդային կոմիսար Կարելշտեյնի սեղանի վրա դրված էր իմ բնութագիրը, և ես մոտավորապես գլխի ընկա, թե ինչի մասին է խոսվելու: Կարելշտեյնը խոսեց այն մասին, որ բանակը կարիք ունի մարտական փորձ ունեցող ավագ քաղաշխատողների և առաջարկեց:

— Մեկնել Մոսկվա, սովորել դասընթացներում, մարտական փորձը հարստացնել ռազմական գիտելիքներով, որի պակասը դուք զգում եք, որից հետո ձեզնից դիվիզիայի կոմիսար կստացվի: Կոմիսարը պետք է զինվորական պատրաստություն ունենա:

— Ես խնդրում եմ ինձ թողնել ռազմաճակատում: Ես եկել եմ կովիլու և ոչ թե դասընթացներ գնալու: Կույն սովորել պատերազմում ավելի հեշտ է, քան դասընթացներում: Խնդրում եմ ինձ թողնել այն դիվիզիայում, որի հետ ռազմի դաշտ եմ եկել: Ինչ վերաբերում է եմ պատրաստությանը, որի մասին դուք ասացիք, ապա

ես հավատացած եմ, որ այն լիուլի բավականացնում է ֆաշիզմի դեմ կռվելու համար:

Բանակի քաղբաժնի պետը ինձ նայեց ոչ այն է զարմացած, ոչ այն է բարկացած, մի փոքր լռեց, հետո ասաց:

— Այդ դեպքում գնանք դիվիզիա: Միաժամանակ կծանոթանամ ձեր հրամանատարության հետ:

Ճանապարհին մեզ հայտնեցին, որ Նիկիշինո գյուղի մոտ, որով անցնելու էր մեր ճանապարհը, թշնամու տանկեր են հայտնվել: Բայց տեղեկությունները համոզիչ չէին: Նիկիշինոյում նույնպես լսել էին տանկերի մասին: Պատահամբ հանդիպեցինք մեր ավտոգումարտակի ընկերներից մեկին: Նա ասաց, որ դիվիզիայի հրամանատարական կետը տեղափոխվել է Վորոշիլովի անվան կոմունա: Նիկիշինոյից այն կողմ մենք նկատեցինք տանկեր, որոնք շարժվում էին հյուսիսային ուղղությամբ: Գրանցից երկուսը էտ դարձան և կրակ բացին մեր մեքենայի վրա: Արկերն ընկան մեզնից հեռու, մենք հասցրինք հեռանալ: Ծանոթանալով իրադրությանը և դիվիզիայի հրամանատարության հետ, 18-րդ բանակի քաղբաժնի պետ Կարելշտեյնը մեկնեց: Ես մնացի դիվիզիայում:

Դեկտեմբերի 26-ի առավոտից սկսած մեր զորքերի դրությունը կտրուկ փոխվեց: Դիվիզիայի հրամանատար Վասիլենկոն բանակի հրամանատարին զեկուցեց, բանակային հետախուզության տվյալները ստույգ չեն, քանի որ Օռլով-Իվանովկայի և Պետրոպոլովկայի շրջանում, իտալական կորպուսի դիվիզիաներից մեկի կողքին, մարտեր են մղում տանկերով ու թեղացված գերմանական 98-րդ հետևակային դիվիզիայի և պարաշյուտային գնդի զորամասերը: Դեկտեմբերի 26-ի առավոտից այդ զորամասերից մի քանիսը գրոհեցին 733-րդ գնդի վրա: Դեկտեմբերի 26-ի օրվա երկրորդ կեսին բանակի հրամանատարը դիվիզիայի աջ թևում մարտի նետեց 4-րդ հեծյալ կորպուսը, հրամայելով Մնեժնիում և Սերգիտիում ոչնչացնել գերմանացիների 98-րդ հետևակային դիվիզիան, թեպետ, ինչպես զեկուցում էր Վասիլենկոն, այդ դիվիզիան այլևս այնտեղ չէր: Հեծելազորը գնում էր բաց լայնարձակ դաշտերով: Խոր և սառցակալած ձյունը դժվարացնում էր ձիերի շարժումը: Հանկարծ նրա բաց աջ թևում հայտնվեց հակառակորդի մոտ 100 տանկ: Բանակի հետախուզությունը տանկերի մասին չգիտեր:

Տանկույին հարվածի պահին հեծելազորի վերևում հայտնվեցին թշնամու ինքնաթիռները: Նրանք ուժեղորոշեցին և գնդակոծեցին հեծելազորին, որն անզոր էր տանկերի և ավիացիայի դեմ: Կորսուած ցրվեց ընդարձակ դաշտով մեկ և մեծ կորուստներ կրեց: Հակառակորդի տանկերն անցան մեր գնդերի թիկունքը, շրջապատման վտանգ ստեղծելով նրանց համար: Աջ թևից հակառակորդն սպառնում էր Վորոշիլովի անվան կոմունային: Գիվիզիայի հրամանատարական կետը տեղափոխվեց Վեսյուլի խուտորը: Երկու օր շարունակ դիվիզիան անհավասար մարտեր մղեց չափազանց աննպաստ պայմաններում: Թշնամին անընդհատ հակազդում էր, մարտի նետելով ավելի քան 120 տանկ: Անտեղի կորուստներից խուսափելու համար բանակի ռազմական խորհուրդը հրամայեց գեկտեմբերի 28-ի գիշերը գնդերը դուրս բերել Վեսյուլի խուտորից դեպի Կուլինացկի կիսակայարանի շրջանը և անցնել պաշտպանություն:

Դեկտեմբերի 28-ի առավոտից նոր տհաճություններ սկսվեցին: Հակառակորդը գրավեց Վորոշիլովի անվան կոմունան: Գիվիզիայի և նրա ձախ թևի հարևանի կցվանքը բավական լայն էր և տեղ-տեղ հնարավոր չէր դիտարկել: Պաշտպանական դիրքերը Գրեկո-Տիմոֆեևկա-կիսակայարան—Կուլինացկի շրջանում հիմնականում անցնում էին երկաթգծով: Գնդերը դասավորված էին մի գծի վրա, նրանցում քիչ մարդ էր մնացել: Ռեզերվներ չկային:

Խմբերով Վեսյուլի խուտոր եկան 4-րդ հեծյալ կորպուսի այն կարմիրբանակայինները, որոնք զրկվել էին ձիերից: Մենք նրանց տեղավորեցինք խրճիթներում, զրուցեցինք նրանց հետ: Մտածվեց գնդերի ստորաբաժանումները համալրել հեծյալներով: Հենց նոր էին սկսել զրույցը խմբերից մեկի հետ, երբ եկավ գիվիզիական տրիբունալի նախագահ Պոպովը և հայտնեց, որ ինձ կանչում են գիվիզիայի հրամանատարն ու կոմիսարը: Պոպովը մնաց խրճիթում՝ հեծյալների հետ զրույցը շարունակելու: Ժամը 13-ն էր: Ընդառաջ եկավ Աբուալինը: Նա շտապում էր:

— Մեծ քանակությամբ տանկեր են շարժվում մեր դիրքերի ուղղությամբ, — ասաց նա: — Գնդերում մարդիկ քիչ են: Դու պետք

է լինես ձախ թևում: Կցվանքն այնտեղ լայն է: Բոլոր միջոցներին դիմիր, որպեսզի գունդը կանգուն մնա, թե չէ գործը կարող է վատ վերջանալ:

Իսկույն մեկնեցի 733-րդ գունդ: 20 բուպե էլ չէր անցել, երբ ես սրդեն գետի (Միուս գետի վերին հոսանքները) այն կողմում էի, դեպի Գրեկո-Տիմոֆեևկա տանող զառիթափում: Հայտնվեցին 12 վայրասլաց ինքնաթիռ: Ռումբերից մեկն ընկավ այն խրճիթի վրա, որտեղ գտնվում էին գիվիզիայի դատախազ Բելանովիչը և գիվիզիական տրիբունալի քարտուղարը: Երկուսն էլ զոհվեցին: Ռումբի ուղիղ հարվածից զոհվեցին գիվիզիական տրիբունալի նախագահ Պոպովը և հեծյալների այն խումբը, որի հետ նա զրուցում էր: Երկար ժամանակ իմ հիշողությունից չէր ջնջվում այս տխուր դեպքը, ինձ թվում էր, թե Պոպովը իմ փոխարեն զոհվեց:

Անհրաժեշտ կարգադրություններ անելով հրամանատարության անունից, երկաթգծի ուղղությամբ գնացի 733-րդ գնդի գումարտակներից մեկը: Տանկերը շարժվում էին երկու ուղղությամբ՝ դեպի Գրեկո-Տիմոֆեևկա և պաշտպանություն կենտրոն՝ Կուլինից-կի կիսակայարան: Գումարտակում արդեն հաշվել էին՝ հետևակի հետ գիվիզիայի վրա շարժվում էին հակառակորդի 96 տանկ:

Այդ օրերին ռազմաճակատի ռազմական խորհրդի առաջարկությամբ գիվիզիային գվարդիական կոչում շնորհելու առաջարկությունը քննարկվում էր նաև 18-րդ բանակի ռազմական խորհրդում: Առաջիկա մարտի անհաջողությունը կարող էր, թեև կուզե ժամանակավորապես, հետաձգել հարցի քննարկումը: Պետք էր պատրաստ լինել թշնամու տանկերի գրոհները ետ մղելու, մահվան գնով դիմադրել, — այս էր տվյալ պահի մարտական խնդիրը և քաղաքական աշխատանքի իմաստը: Առաջավոր գծում կանգնած գումարտակին աջակցելու համար մոտ քաշվեց երկրորդ էջելոնի գումարտակը: Գրեկո-Տիմոֆեևկայի մոտ 291-րդ հրետանու բրկու դիվիզիոններ պատրաստվում էին դիմավորելու թշնամու տանկերին: Մայրը Չորանենկոյի հետ եղա գնդի հրետանավորների դիրքերում:

— Մարտը ծանր է լինելու: Հույսը ձեր վրա է, հրետանավորներ, — դիմեցի ես նրանց, որոնց վճռականությունն ու հաստատականությունն վրա չէի կասկածում:

— Հայրենիքի համար մեռնելն ափսոս չէ, ընկեր կոմիսար, — ասաց դասակի հրամանատար Բաբկեն Մանուկյանը:

Մարտն սկսվեց: Թշնամու տանկերը, շրջադարձ կատարելով, երկու շարասյունով շարժվեցին դիվիզիայի վրա: Սկզբում կրակով նրանց դիմավորեց գնդային հրետանին: Չախ թևում տանկերը շանցան: Բայց դա չէր նշանակում, թե գրոհը ետ է մղված: Խանգարում էր երկաթուղու հողաթումբը: Նրանք շարժվեցին պաշտպանության կենտրոնի ուղղությամբ: Չորսենկոն գնաց իր հրամանատարական կետը, իսկ ես մնացի դիվիզիոններից մեկի կրակադիրքում: Նշանառուներն արդեն ճշգրտել էին նշանառությունը, իսկ դիվիզիոնի հրամանատարը, չգիտես ինչու, հրաման չէր տալիս: Իմ այն դիտողությունը, թե ժամանակն է կրակելու, ես անվրդով պատասխանեց.

— Կսպասենք, — և առաջարկեց հեռանալ կրակային դիրքերից:

Մարտը թեժ էր: Ես անհամբեր շարժումներ էի անում և երկրորդ անգամ առաջարկեցի կրակել: Դիվիզիոնի հրամանատարը այս անգամ պատրաստակամությամբ կրկնեց հրամանը:

— Կրակ, — բայց և հենց տեղնուտեղն էլ իշխող տոնով ավելացրեց. — Խնդրում եմ, հեռացեք այստեղից:

Սեղբս ինչ թաքցնեմ նրա այս հրամայական տոնը վերավորեց ինձ, և նա, զգալով այդ, մեղմացած պարզեց իր միտքը.

— Ինչպե՞ս չեք հասկանում, ընկեր կոմիսար, որ շատ զոհեր են լինելու: Մինչև չհեռանաք, չեմ կրակի: Գնացեք, խնդրում եմ:

Ես անհամար դրություն մեջ ընկա, միանգամից չհասկացա կապիտանին: Մի քանի օր անց, ի թիվս մյուս պարզեատրվածների, այդ կապիտանին ևս Կարմիր դրոշի շքանշան հանձնվեց: Ես սըրտանց շնորհավորեցի նրան: Շատ արտասուք եմ, որ մոռացել եմ դիվիզիոնի հրամանատարի ազգանունը:

Անհավասար մարտ էր մղվում երկաթգծի երկարությունը, իսկ կենտրոնում և աջ թևում այն ավելի կատաղի բնույթ էր կրում: Բոլոր նրանք, ովքեր գտնվում էին վեսյուլիում՝ կապավորները, սակավորները, պարետային դասակը և շտաբային սպաները, գնդերին աջակցելու համար դիրքեր զբաղեցրին գետի ձախափնյա լանջում, կազմելով երկրորդ գիծ: Մարտադաշտը լավ դիտվում էր գետի ձախափնյա բարձունքից և Գրեկո-Տիմոֆեևկայից, բայց այն ծածկված էր ծխով: Թե՛ գնդային և թե՛ դիվիզիոնային հրետանին դրված էին ուղիղ նշանառություն:

Գնդերն ու ստորաբաժանումները ուժեղ դիմադրում էին: Գիմահար խմբում էին հրաձիգները, հետևակայինները հակատանկային նոնակներ էին նետում տանկերի թրթուրների տակ: 7 տանկ խփված էր, բայց մյուսները գալիս էին... Օրվա երկրորդ կեսին, հաղթահարելով առաջավոր գծի կրակային դիմադրությունը, թըշնամու տանկերը խրվեցին մեր դասավորությունից մեջ: Մարտի ծանրությունը տեղափոխվեց դիվիզիայի մարտակարգերը: Հրաձիգ ստորաբաժանումներին հաջողվեց թշնամու հետևակը կտրել տանկերից, ոչնչացնել: Սակայն, տանկերը հանդգնորեն խցկվում էին կրակելով ընթացքից: Աջ թևում և պաշտպանության կենտրոնում հաղթահարելով մեր մի քանի ստորաբաժանումների դիմադրությունը, թշնամու գլխավոր տանկային ուժերը շրջվեցին դեպի Գրեկո-Տիմոֆեևկա: 733-րդ գնդի առաջավոր գծի սակավամարդ զուամարտակներին կործանում էր սպառնում թևերից ու թիկունքից: Գնդերի մի քանի ստորաբաժանումներ երերացին: Լարված վիճակ ստեղծվեց: Ինչ-որ մեկը հաղորդեց, որ հակառակորդի հետևակը ձախից շրջապատում է Գրեկո-Տիմոֆեևկան, անցնում է մեր թիկունքը: Թևերը պաշտպանելու համար ուժեր չկային: 733-րդ գնդի այն զումարտակը, որ գտնվում էր Գրեկո-Տիմոֆեևկայի մոտ, կարող էր օգտագործվել այդ նպատակի համար, բայց նա անհավասար մարտ էր մղում թշնամու տանկերի դեմ: Ես դիտարկեցի շրջակայքը. առջևում ծառեր էին, ձախ կողմում՝ խոր և բավական լայն հեղեղատ, իսկ թիկունքում՝ Միուս գետի վերին հոսանքների կիրճը: Գրեկո-Տիմոֆեևկան իշխող դիրք էր զբաղում գետի կիրճի և հեղեղատի անկյունում: Թևերից և թիկունքից գյուղը պաշտպանել այնքան էլ դժվար չէր, բայց վտանգն այն էր, որ թշնամու հետևակը կարող էր կտրել մեր թիկունքում, գետի երկարությունը ձգվող միայն ճանապարհը և առանց մարտի դուրս գալ վեսյուլի՝ դիվիզիայի հրամանատարական կետ: Գյուղում պատահաբար դեմ առա հրետանային գնդի զենիթային սարքերին, որոնք բողբոջված էին մի տան մոտ: Հեղեղատից այն կողմ հայտնվեցին մեկ վաշտի չափ գերմանական ավտոմատավորներ: Նրանք զնում էին դեպի գետը, ընթացքից անկանոն կերպով գնդակոծելով Գրեկո-Տիմոֆեևկան:

— Ի՞նչ եք կանգնել այստեղ, երբ թշնամու ավտոմատավորները շրջանցում են ձեզ, — ասացի սարքերի հրամանատար ավագ

սերժանտին:— Մեքենան կանգնեցրեք քարի պատնեշի մոտ և կրակ բացեք ավտոմատովորների վրա:

— Սա զենիթային սարք է, ընկեր կոմիսար: Նրանից ինքնաթիռների վրա են կրակում,— զարմացած պատասխանեց ավագ սերժանտը:

— Կատարե՛ք,— հրամայեցի ես, բայց ներքուստ մտածեցի... «Իսկ եթե դա հնարավոր չէ»:

Ինչ-որ անսպասելի բան կատարվեց ոչ միայն գերմանական ավտոմատավորների, այլև զենիթային սարքի անձնակազմի և, իհարկե, առաջին հերթին ինձ համար: Լսվեց շորսփողանի զենիթային գնդացրի անսպասելի ճարձատյունը... Ավտոմատավորներից քեզին հաջողվեց փրկվել: Այդ համազարկն այս դեպքում հետևակի դեմ ավելի արդյունավետ եղավ, քան ինքնաթիռների դեմ: Սևփական քաջագործությունից զարմացած, ավագ սերժանտն ասաց.

— Այ դա լավ էր:

Ճակատամարտը զնալով ավելի կատաղի դարձավ: Մի քանի ստորաբաժանումներ ետ քաշվեցին: Մայրը Չորանենկոյի հրետանավորները շարունակեցին համառորեն կռվել: Տանկերն արդեն շատ մոտ էին: Վառվեց մեկը, երկրորդը, երրորդը... Իսկ նրանք գալիս էին, հա գալիս: Ոչնչացվեցին թշնամու մի գումարտակի չափ հետեւակ և 31 տանկ: Սակայն, չնայած մեր մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների հսկայական ջանքերին ու անձնագոհությունը, չափազանց սակավաթիվ զնդերն անկարող եղան մինչև վերջ պաշտպանել իրենց դիրքերը: Մի շարք ստորաբաժանումներ, զգալի կորուստներ կրելով, ստիպված էին նահանջել: Դիվիզիայի հրամանատարը զնդերին հրաման տվեց ետ քաշվել գետի ձախ ափի լանջերը և ամրանալ այնտեղ:

Մարտով նահանջելով, շատերը չէին համարձակվում մտնել արագահոս, սառնորակ գետը և ետ էին քաշվում նրա երկարությամբ ձգվող ճանապարհով: Աջ թևում մնացին փոքրաթիվ ուժեր՝ մյուսների նահանջը պաշտպանելու համար: Նրանց աջակցում էին 27-րդ առանձին ականանետային դիվիզիոնը և 291-րդ հրետանային մարտկոցը: Վրա հասավ մի պահ, երբ Գրեկո-Տիմոֆեևկայի մոտ հրետանուր կարող էր մնալ առանց հետևակի: Նա չէր կարող թողնել դիրքերը, քանի որ ուղիղ նշանառության մարտ էր մղում

թշնամու տանկերի դեմ: Միանգամայն ժամանակին հայտնվեց քաղբաժնի ավագ հրահանգիչ Միրոնովը: Նրա հետ նետվեցինք կանգնեցնելու հրետանավորներին օգնող հրաձիգ ստորաբաժանումների նահանջը: Դժվարություններ հաջողվեց կանգնեցնել մի քանի ստորաբաժանումներ և տանել դեպի հրետանավորների դիրքերը: Զենիթային սարքի անձնակազմը այժմ արդեն կամովին մարտի մեջ մտավ թշնամու հետևակի դեմ: Գրեկո-Տիմոֆեևկան պաշտպանեցին մինչև մութն ընկնելը: Քարե պատնեշից այն կողմ հասակով մեկ կանգնած էր մայրը Չորանենկոն և կարգավորում էր հրետանու կրակը: Նա ընդմիշտ հիշողությունս մեջ մնաց որպես ջերմ հայրենասեր, կարմիր բանակի աներեր հրամանատար և պայծառ մարդ:

Արդեն մութն ընկել էր: Դիվիզիայի հրամանատար Վասիլենկոն հրամայեց թողնել Գրեկո-Տիմոֆեևկան, իսկ ինձ հրամայեց գնալ Ստրյուկովո գյուղը, ուր նահանջել էին 733-րդ գունդը և մյուս զնդերի մի շարք ստորաբաժանումներ, և կապ հաստատել ձախակողմյան հարևանի հետ: Այսպես մենք նահանջեցինք մոտ մեկ կիլոմետր: Հրամանատարական կետը մնաց իր տեղում՝ Վեսյուլի գյուղում: Պաշտպանական գիծն այժմ անցնում էր Միուս գետի վերին հոսանքներում ձախ ափով, ուղիղ Վեսյուլի և Ստրյուկովո գյուղերի դիմաց:

1947 թվականին մի առիթով եղա Լենինականում, որոշեցի գնալ Ղուկասյանի շրջանի Թորոս գյուղը, հանդիպել լեյտենանտ Բաբկեն Մանուկյանի հարազատներին: Երբ գյուղսովետի նախագահն այդ մասին հայտնեց Մանուկյանի մորը, նա ինքը եկավ գյուղսովետ: Ես դժվարությամբ սփոփանքի խոսքեր ընտրեցի արաբախտ մոր վիշտը թեթևացնելու համար և, ընդառաջելով նրա թախանձանքին, պատմեցի նրա քաջ զավակի մասին, ասացի, որ ոչ միայն մայրը, այլև համագյուղացիները կարող են հպարտանալ Բաբկեն Մանուկյանով: Ծեր մայրը ոչ մի խոսք չարտասանեց, ոչ մի կաթիլ արցունք չթափեց... Վիշտը քարացել էր մոր քրտում: Խորին ակնածանքով համբուրեցի վշտաբեկ մոր ձեռքը և հրաժեշտ տվեցի:

1941 թվականի ընթացքում առաջին անգամ դիվիզիան ստիպված եղավ մեկ կիլոմետր նահանջել առանց ուղղամահակատի ու բանակի հրամանի: Այդ մարտերում դիվիզիան այնքան ակտիվ

ավին ու տեխնիկա շուկաներ, որքան նրա մի գունդն ունեւր Գյակովոյի մոտ: Անցած մարտերում նա կորցրեց հիանալի շատ զինվորներ, հրամանատարներ և քաղաշխատողներ:

Գիվիզիայի հրամանատարութիւնը որոշեց վերականգնել գրութիւնը: Գեկտեմբերի 29-ի գիշերը 733-րդ գունդը հրետանու պաշտպանութիւնը անցավ հակահարձակման: Երբ գունդն ընդհուպ մոտեցավ Գրեկո-Տիմոֆեեկային, Վասիլենկոն 18-րդ բանակի հրամանատարին խնդրեց հարձակումը պաշտպանել ավիացիայով: Ավիացիան ուշացավ, նա հայտնվեց այն ժամանակ, երբ գունդը մարտ էր մղում գյուղի ծայրամասում: Ամպամած եղանակին ինքնաթիռները արդունամետ գործ չկատարեցին: Շուտով գրութիւնը վերականգնվեց: Գիվիզիան անցավ պաշտպանութիւն:

Նոր՝ 1942 թվականը գիվիզիան դիմավորեց բանակի ռեզերվում: Սկզբում նա տեղաբաշխված էր մի քանի բնակավայրերում՝ Գորոդիշչեում, Ֆաշեկա կայարանում և Ֆաշեկա գյուղում: Քաղբաժինն իր աշխատանքը կազմակերպել էր այնպես, որ աշխատողները մոտ լինեին մարտիկներին՝ խմբերով: Մեր խումբը, որի կազմում էին Լիտվինովը և Միրոնովը, գտնվում էր Ֆաշեկա գյուղում, սպասարկելով 541-րդ և 733-րդ գնդերին:

Նոր տարվա նախօրեին թիկունքից շատ ծանրոցներ ստացանք: Դրանցում կային տաք հագուստներ, անթև բամբակաբաձկոններ, բրդե գուլպաներ, տաք ձեռնոցներ, ինչպես նաև սրբիչներ, թաշկինակներ, սննդամթերք՝ ապխտած երշիկեղեն, խոզի ճարպ, յուղ, շոր մրգեր և այլն: Բոլոր ծանրոցներում կային կոլեկտիվ և անհատական նամակներ, որոնք լի էին ջերմ ու սրտաբուխ խոսքերով, քնքուշ զգացմունքներով, բոլորի ցանկութիւնը մեկ էր՝ շուտափույթ ջախջախել ատելի թշնամուն և հաղթանակով վերադառնալ:

Մեզ հրավիրեցին Ֆաշեկայի գյուղսովետ: Տեղի ունեցավ գյուղացիների հետ ջերմ հանդիպում, զրույցներ ռազմաճակատում տիրող գրութիւն մասին: Գյուղսովետի նախագահը վերջում հայտնեց, որ կոլտնտեսականները մեր մարտիկների, հրամանատարների և քաղաշխատողների համար պատրաստել են 3200 ծանրոց: Շուտով ծանրոցներն ստացվեցին ու բաժանվեցին մարտիկներին:

Մեկ շաբաթ հետո գիվիզիան դասավորվեց Իվանովկայում: Սկսվեցին ռեզերվային աշխատանքներ՝ փոքր համալրում, աշխա-

տանք նորեկներին հետ, հանդիպումներ բնակչութիւն հետ և զրույցներ մարտական գործողութիւնների մասին: Այս բոլորի նպատակը մեկ էր՝ նախապատրաստվել նոր մարտերի: Իվանովկայում 18-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ բրիգադային կոմիսար Կուզինը պարգևներ հանձնեց մի մեծ խումբ մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների:



Գիվիզիան դիշերային ծանր երթ կատարեց, դիրքեր գրավելով Վորոշիլովի անվան սովխոզի շրջանում, Գեբալցևոյի մոտ: Թե՛ մարտեր էին սպասվում: Բայց մինչև մարտերի ծավալվելը ձյուն տեղաց, սառնամանիքը մեղմացավ: Մեր խնդիրն էր՝ բարելավել դիրքերի դիրքերը այդ շրջանում, գրավել մի քանի բարձունքներ, մասնավորապես 311,7 բարձունքը: Հունվարի 29-ի գիշերը գումարտակային կոմիսար Մեդվեդևի հետ, որը մեզ մոտ ստաժավորում էր անցնում որպես քաղբաժնի պետի տեղակալ, գնացինք 541-րդ գունդը: Գնդի հրամանատար կապիտան Ի. Ա. Ուսիկովին, կոմիսար Ստրախովին և 27-րդ առանձին ականանետային դիվիզիոնի հրամանատար կապիտան Հարութիւնյանին հանդիպեցինք գնդի հրամանատարական կետում՝ անտառապահի տնակում: Գունդը 311,7 բարձունքը պետք է գրավեր մի գումարտակի ուժերով, փոխգործողութիւն մեջ մտնելով 387-րդ գնդի հետ: Այստեղ կենտրոնացած էր գնդային և օժանդակ հրետանին: 2-րդ և 3-րդ հրաձգային գումարտակները դիրքեր գրավեցին Վորոշիլովի անվան սովխոզի շրջանում:

Գումարտակներին աջակցում էր կապիտան Հարութիւնյանի առանձին ականանետային դիվիզիոնը:

Մեդվեդևին թողնելով գնդի հրամանատարական կետում, կրտսեր լեյտենանտ Սոլովյովի և կարմիրբանակային Մելնիկովի հետ մեկնեցինք Վորոշիլովի անվան սովխոզ: Հեռախոսալարը մեզ բերեց բանջարեղենի պահեստի մոտ: Ծանապարհին ոչ ոքի չհանդիպեցինք: Սովխոզ տանող բարձունքի վրա կանգնած էր փամփուռները արկղեր բարձած մի սայլակ:

— Կանգնիր: Ո՞վ է գալիս, — գոչեց ժամապահը:

Սուրբ Ստեփանոսը ասաց պարուրը, մենք իջանք նկուղ, կապավորին ուղարկելով ետ: Նկուղում բոլորը քնած էին, բացի ժամապահից և հենց նոր դիվիզիա եկած կրտսեր քաղղեկ Սապեգինից, որը դեռ չէր ընդունել վաշտը: Վաշտերը թողնելով ետևի ձորակում, գումարտակներին հրամանատարներն ու քաղաշխատողները և նրանք, ովքեր սովորաբար նրանց հետ էին լինում, ընդամենը 41 մարդ, իրենց համար տաք տեղ էին գտել նկուղում: Սապեգինը իմ հրամանով արթնացրեց քնածներին: Մեկ բուսի անց նկուղի մուտքի մոտ պայթեց նոնակը, և հրաձգություն սկսվեց: Ժամապահը սպանված տապավեց հատակին: Բեկորները թռան նկուղ, վիրավորելով երկուսին ևս: Ստեղծված դրություն պատճառները պարզելու ժամանակ չկար: Նախատիներն օդուտ չէր տա: «Անկախ նրանից, թե ով է մեղավոր, ավագը դու ես, դու էլ պատասխան տուր»:

— Հրամայեցի լուսություն պահպանել, թող կարծեն, թե նկուղում ոչ ոք չկա:

Գումարտակների հրամանատարների մեջ ավագը 3-րդ գումարտակի հրամանատար ավագ լեյտենանտ Տրոշինն էր: Նա ծանր ապրումների մեջ էր և, բնականաբար, հասկանում էր, որ հիմար գրություն մեջ էին ընկել անհոգության և մարտական պայմաններում զինվորական կարգապահությունը կոպիտ կերպով խախտելու հետևանքով:

Մենք նկուղում էինք, իսկ մեր շուրջը գերմանացիներ: Որքան էին նրանք՝ չէինք կարող իմանալ: Մեր վաշտերը գտնվում էին ձորակում, 2—3 կիլոմետր հեռավորության վրա, առանց հրամանատարների: Մենք ունեինք մեկ հաստոցավոր և երկու ձեռքի զենքային: Նկուղում գտնվողների մոտ կեսը զինված էր զլխավորապես գերմանական ավտոմատներով: Մյուսների զենքը հրացանն էր: Նոնակներ էլ կային: Պարզ էր, որ պետք է անցնեինք վճռական գործողությունների, անհրաժեշտ էր միայն ճիշտ կողմնորոշվել, խուսափել հասցեայ որոշումից: Նկուղ մտնելուց առաջ ես ուշադիր զննել էի շուրջս: Դա, իհարկե, արել էի ոչ թե պրոֆեսիոնալ զինվորականի բնազդով, այլ պարզապես իրադրության թելադրանքով, պատերազմում այլ կերպ չէր լինի: Նկուղից ոչ հեռու առանց տանիքի քանդված երեք շինություն կար, որոնցից մեկը զուգահեռ էր նկուղին և լայն գուռ ուներ, մյուս երկուսը 10—12 մետր

հեռավորության վրա էին: Հենց որ մուտքի մոտ դադարեցին նրանակների պայթյունները, ավտոմատավորներին հրամայեցի զուգահեռ սողալով հասնել մոտակա շինությունը, շրջանաձև պաշտպանություն գրավել, կրակով պաշտպանել մյուսների ելքը նկուղից: Նկուղից առաջինը դուրս եկածներից հինգը վիրավորվեցին, նորից գլխավեցին նկուղ: Մյուսները հասան քանդված մոտակա շենքին և սկսեցին պաշտպանել մեր ելքը: Հաջորդ զուգահեռը գրավեցին երկրորդ և երրորդ շենքերը: Գերմանացիները ըստ երևույթին, նշանակություն չէին տվել քանդված շենքերին, բայց երբ մեր ավտոմատավորները գրավեցին դրանք, արևելյան կողմից դրանցից գոնե մեկը ետ խլելու անհաջող փորձ կատարվեց: Մենք բոլորս դուրս եկանք նկուղից և շրջանաձև պաշտպանություն գրավեցինք:

Գնդի և վաշտերի կապը հենց սկզբից կտրվել էր: Գերմանացիները կապը կտրել էին առաջին իսկ բուսիներից: Գիշերվա թանձր մշուշի մեջ հազիվ էին նշմարվում գերմանացիների սպիտակ խալաթները: Կրակի խառնությունից երևում էր, որ թշնամու ուժերը մի քանի անգամ դերազանցում են մեզ: Մարտը շարունակվեց համարյա ամբողջ գիշեր: Մեր փամփուռները վերջանալու վրա էին: Ստիպված էինք խնայել դրանք, կրակել միմիայն նպատակակետին: Ստորաբաժանումներին օգնության կանչելու նպատակով որոշեցինք ուղարկել երկու խիզախների: Բայց ինչպե՞ս դուրս բերել նրանց օղակից: Օրհասական պահերին մարդու միտքն աշխատում է արագ, մարդիկ դառնում են ավելի հնարամիտ: Ռազմիկները սվիններով աղբակույտների միջից հանեցին մի քանի տախտակ, պատերի մի անկյունում պատրաստեցին հաստոցավոր գնդացրի հարթակ: Գնդացրի կրակի պաշտպանությամբ խիզախներն ուղղվեցին դեպի մեր թիկունքը, հաջողությամբ դուրս գալով հակառակորդի օղակից: Շուտով նրանք ազդանշան տվեցին: Պարզվեց, որ նրանք ձորակին չեն հասել: Հասնելով փամփուռների սայլակին, նրանք որոշել էին նախ մեզ համար փամփուռներ բերել, հետո նոր գնալ ձորակ՝ վաշտերի մոտ: Քիչ հետո նրանք հայտնվեցին, իրենց հետ քարշ տալով փամփուռների երեք արկղ: Մեր գործը բավական հեշտացավ: Կրտսեր լեյտենանտ Լոսը, ավագ սերժանտ գնդացրորդ Կոստենկոն, սերժանտ Գրիբենյուկը, գումարտակների հրամանատարներ Զադաուլինը և Տրոշինը, քաղղեկներ Սիրկինը և Սմոլենեցը, կրտսեր քաղղեկ Երեմենը անձնական

խիզախութեան օրինակ ցույց տվեցին, ամենավտանգավոր րուպեներին անգամ չկորցրին ինքնատիրապետումը: Ռազմիկներից 19 հոգի վիրավորվեցին, սակայն շեհուացան մարտադաշտից և շարունակեցին պայքարը նենգ թշնամու դեմ: Հերոսի մահով ընկան երկուսը՝ քաղղեկ Սմոլենեցն ու ժամապահը:

Լուսազեմին հակառակորդը դադարեցրեց կրակը: Օգտվելով կարճ դադարից, որոշեցինք հետախույզներ ուղարկել իրադրությունը պարզելու: Հետախույզները գեկուցեցին, որ հակառակորդը հեռացել է, մարտի դաշտում թողնելով սպանվածներին ու երկու ծանր վիրավոր: Հիտլերյան զերի մայորի և զինվորի ցուցմունքներից ու սպանվածների մոտ հայտնաբերված փաստաթղթերից պարզվեց, որ մեզ շրջապատել էր պարաշյուտիստների զեսանտային գումարտակը, որի կազմում կար մոտ 1000 զինվոր ու սպա: Գերմանական հրամանատարությունը որոշել էր գիշերային օպերացիա անցկացնելով ձախողել մեր հարձակումը: Այս տեղեկությունները հետագայում հաստատվեցին հետախույզության տվյալներով:

Նրբ ուզում էի վերադառնալ գնդի հրամանատարական կետ, մոտեցավ երկրորդ գումարտակի հրամանատար Զադաուլինը և սասաց.

— Ընկեր կոմիսար, — խնդրում եմ ընդունեք այս փոքրիկ հուշանվերը: Վորոշիլովի անվան սովխոզում տեղի ունեցած այդ գիշերային ծանր մարտը հիշելիս խնդրում եմ շնորհակալ, որ միշտ ձեր կողքին է եղել լեյտենանտ Զադաուլինը և ինձ մեկնեց իր փոքրիկ կողմնացույցը:

Գիվիզիան կատարեց իր խնդիրը, ետ գրավեց բաժունքները: Սակայն գերմանացիները բազմիցս փորձեցին նորից տիրել այդ

1 «Սովետական Հայաստան» թերթի 1944 թվականի հունիսի 3-ի համարում տպագրված հոդվածում Ա. Մալխասյանը այս գիշերային միջադեպը ընթերցողին է ներկայացրել միանգամայն այլ ձևով՝ գերմանական գումարտակը նա անվանել է զեսանտ, իսկ նրա թվաքանակը՝ 300 զինվոր ու սպա, հավանաբար կամեկտրով հեշտացնել նրա «շրջապատումը»: Իրականում շրջապատված էինք մենք, և ոչ թե գերմանացիները, իսկ թե ինչպիսի հանգամանքներում՝ ընթերցողն արդեն գիտի: Նույն հոդվածում ես ներկայացված եմ որպես գնդի «ժամանակավոր» հրամանատար, որը չի համապատասխանում իրականությանը:

բարձունքներին: Այս ու այնտեղ նրանք նորից անհաշող հակազոր հներ ձեռնարկեցին մեր զնդերի դիրքերի վրա:

Հունվարի 30-ի օրվա առաջին կեսին, օգտվելով մեր ստորաբաժանումների միջև եղած խզումից, որի մասին արդեն ասվեց, հարձակվեց իտալական գունդը, փորձելով մեր գումարտակներին կտրել, մեկուսացնել Վորոշիլովի անվան սովխոզում: Այդ ժամանակ լինելով 27-րդ առանձին ականանետային դիվիզիոնի կրակային դիրքերում, ես հնարավորություն ունեցա դիտել այդ գնդի հարձակումը, որ բավական սրընթաց էր:

Գիվիզիոնի հրամանատար կապիտան Հարությունյանը գտնվում էր իր դիտակետում: Նրբ իտալական գունդը հասավ 311,7 բարձունքի և Վորոշիլովի անվան սովխոզի միջև եղած բաց դաշտին, նա հրամայեց անընդմեջ կրակ բանալ: Գիվիզիոնի կրակը ղեկավարում էր նրա կոմիսար Գրիբովը: Ականաձիգները կրակում էին անվրեպ, դարմանալի ճշտությամբ խոցելով նպատակակետերը: Իտալական գնդի մարտակարգերը երերացին: Մեծ կորուստներ կրելով, գունդը սկսեց անկանոն նահանջել:

Փետրվարի 1-ից դիվիզիան անցավ ավելի լայն ճակատով պաշտպանության, ընդգրկելով Դեբալցևո—Իլյինկա—Վորոշիլովի անվան սովխոզ—Նիկիշինո—Վեսյուլի—Ստրյուկովո հատվածը:

ՍՍՀՄ պաշտպանության ժողովրդական կոմիսարի 1942 թվականի փետրվարի 16-ի № 3 հրամանով «Հանուն հայրենիքի գերմանացիների դեմ մղված մարտերում ցուցաբերած խիզախության, տոկունության, քաջության, կարգապահության, կազմակերպվածության, անձնակազմի հերոսության» 136-րդ հրաձգային գիվիզիան վերակազմվեց 15-րդ գվարդիական դիվիզիայի: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1942 թվականի մարտի 27-ի հրամանագրով 15-րդ գվարդիական դիվիզիան պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով:

Սակայն ինձ բախտ չվիճակվեց ընկերներիս հետ կիսել գվարդիականի կոշման և Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվելու ուրախությունը: Նույն օրը հեռագիր ստացվեց Ստրախովի հետ մեկնել Հարավային ռազմաճակատի քաղվարչության տրամադրություն տակ: Քաղվարչության պետ Մելնիկովի խոսակցությունը

ինձ հետ կարճ եղավ. հրամայված է մեկնել Մոսկվա: Ուրեմն պետք է մեկնել: Ստրախովը մնաց դիվիզիայում:

Ինձ համար դժվար էր բաժանվել իմ բարեկամ—գվարդիականներից, որոնց հետ ստացել էի մարտական մկրտություն: Ամբողջ կյանքումս երախտապարտ եմ այն մարտիկներին, որոնք այնքան սիրով ու նվիրվածությամբ պաշտպանում էին իրենց հրամանատարներին ու կոմիսարներին, վտանգի ենթարկելով իրենց կյանքը ծանր և անհուսալի պահերին, օգնության հասնում նրանց: Անկարելի է մոռանալ դիվիզիայի քաղաշխատողների հիանալի կոլեկտիվին, դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Եմելյան Վասիլենկոյին և բրիգադային կոմիսար Իվան Աբաուլինին: Նրանց գործունեությունը մարմնավորված է դիվիզիայի մարտական գործերում: Վասիլենկոն խստապահանջ էր, չէր սիրում սպասել, գործում էր «սահմանված է ժամկետ՝ զեկուցիր, չսպասես հիշեցման» սկզբունքով: Մարտիկների հետ նա զինվոր էր և վայելում էր նրանց սերն ու համակրանքը: Մարտերում Վասիլենկոն քուն ու դադար չուներ, ծանր պահերին իրադրությամբ թելադրված խելացի հրամաններով ու հանձնարարություններով վճռական բեկում էր մտցնում մարտի ընթացքի մեջ: Իր գործին նվիրված, անձնազոհ հրամանատար էր, տեսական պատրաստականության պակասը լրացնում էր անձնական քաջությամբ: Կոմիսար Աբաուլինը քշախոս, միշտ շրջահայաց, հարգարժան մարդ էր, կարողանում էր քաղաքական աշխատանքը զուգակցել դիվիզիայի առջև դրված մարտական խնդիրների հետ, շատ հաճախ տեղին միջամտություններով մի տեսակ լրացնում էր դիվիզիայի հրամանատարին: Յուրաքանչյուր միջոցառում, որ Աբաուլինը նպատակադրում էր իրականացնել, անցկացնում էր քաղբաժնի միջոցով, հենվում էր նրա վրա: Նա անձամբ ճանաչում էր բաժնի յուրաքանչյուր աշխատողի, գիտեր նրանց ընդունակությունները, հուշում էր, թե նրանցից ում և ինչ գործի ուղարկել, ինչ հանձնարարություններ տալ և չէր սխալվում: Աբաուլինին շվիճակվեց տեսնել ֆաշիստական Գերմանիայի դեմ մեր տարած հաղթանակը, նա ողբերգական մահով զոհվեց 37-րդ բանակի ռազմական խորհրդի անդամի պոստում: Խիզախ կոմիսարի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողներին սրտերում:

Հիշողությունիցս երբեք չի ջնջվի դիվիզիայի մարշ-հիմնը, որը ծնվեց Դոնբասում, Կլեյստի խմբավորման դեմ մղված անզիջում մարտերում: Նրա հատկապես վերջին քառյակը հնչում էր որպես դատավճիռ արյունարբու ֆաշիզմի նկատմամբ.

С новой волей, с новой силой,
Смело двинемся вперед,
И над Гитлера могилой
Мы закончим свой поход!

Մոսկվա: Կարմիր բանակի գլխավոր քաղվարչության ղեկավար: Հանդիպեցի մեր ղիվիզիայի 387-րդ զնդի նախկին կոմիսար Բարուտկինին, Սարգիս Հարությունյանին և Արտավազը Ղազարյանին: Ընկերները «ձանձրացել» էին ղեկավարից, ուզում էին մեկնել ռազմաճակատ: Օրինաչափ էր այդ զգացումը. հայրենասեր մարդու համար պատերազմի ժամանակ ղեկավարում մնալը ձանձրալի է, նա ձգտում է դեպի ռազմաճակատ:

— Եթե հանկարծ բախտը քեզ ժպտա, ինձ մի մոռանա, վերցրու հետդ,— ասաց Բարուտկինը:

Իսկ բախտն իրոք որ ժպտաց ինձ: Նույն օրը, 1942 թվականի փետրվարի 24-ին, հրամայվեց ներկայանալ ԲԳԿԲ-ի գլխավոր քաղվարչության պետի տեղակալ 2-րդ կարգի բանակային կոմիսար Կուզնեցովին: Գլխավոր վարչության շենքի մուտքի մոտ սպասում էր գնդային կոմիսար Բորիսովը: Մենք հանդիպեցինք ինչպես հին բարեկամներ: Մենք միմյանց ծանոթացել էինք 1941 թվականի սեպտեմբերին Ռոստովում, երբ Զորակայանի հանձնաժողովը ռազմաճակատ մեկնելու նախօրյակին ստուգում էր մեր 136-րդ ղիվիզիայի մարտունակությունը: Բորիսովն ինձ տարավ Կուզնեցովի ընդունարանը: Այստեղ հանդիպեցի ավագ քաղղեկ Սիմոն Սարգսյանին, որը նույնպես կանչված էր Կուզնեցովի մոտ: Սարգսյանը հոսպիտալում ապաքինվելուց հետո եկել էր ղեկավար:

2-րդ կարգի բանակային կոմիսար Կուզնեցովը մեզ հետ զրուցեց բարեկամարար, գործնական: Շուտով ներս մտավ Բորիսովը և մեզ մեկնեց զրավոր կարգադրությունները այս բովանդակությամբ. «Ձեզ առաջարկում եմ մեկնել 1-ին կարգի բանակային կոմիսար ընկ. Մեխլիսի տրամադրության տակ: Մեկնելու ժամկետը 1942 թվականի փետրվարի 25, ինքնաթիռով: Երթուղին՝ Մոսկվա—Կրասնոդար—Կերչ»: Կարգադրությունն ստորագրել էր կադրերի վարչության պետ բրիգադային կոմիսար Պուպիշևը:

Փետրվարի 25-ի առավոտյան ժամը 7-ից մենք վնուկովոյի օդանավակայանում սպասում էինք ինքնաթիռի: Նույնպիսի մի կարգադրությամբ մեզ միացավ գումարտակային կոմիսար Ռոման Գրոսմանը: Ինքնաթիռ չկար: Սպասեցինք փետրվարի 26-ին, մի քանի անգամ դիմեցինք գլխավոր քաղվարչության ընկերներին: Վերջապես, ժամը 16-ին կենինգրադից ժամանեց մի «Դուգլաս»: Սա բերեց քաղցից հյուծված ուղևորներ՝ ծերեր, կանայք ու երեխաներ, որից մենք շատ ծանր տպավորություն ստացանք:

Վերջապես հասավ թռիչքի ժամը: Արդեն գիշեր էր: Բարձրացանք ինքնաթիռ և իսկույն քնեցինք: Արթնացանք այն ժամանակ, երբ ինքնաթիռը վայրէջք էր կատարում... Կույրիշևում: «Քաղաքացիական ինքնաթիռներին չի թույլատրվում թռիչք կատարել ճակատամերձ գոտում»,— բացատրեց օդաչուն և մեզ առաջարկեց սպասել «մինչև վաղը»:

«Դուգլասը» վերադարձավ Մոսկվա: Տեղի զինվորական իշխանությունները մեզ ուղարկել չկարողացան, ինքնաթիռ չունեին: Կարվեցինք գլխավոր քաղվարչության և գլխավոր շտաբի հետ դարձյալ ապարդյուն: Երրորդ օրը հեռագրեցինք քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ ընկ. Մոլոկովին: Նա մեր տրամադրության տակ դրեց ապրանքատար մի «Դուգլաս», որը մեզ հասցրեց Ստալինգրադ: Հինգ օր մնացինք այստեղ, դիմեցինք Ստալինգրադի զինվորական օկրուգի ռազմական խորհրդի անդամին, շտաբի պետին և քաղվարչության պետին: Նրանք ուզում էին անպայման օգնել մեզ, բայց ոչինչ, անել չէին կարողանում. պատճառաբանում էին, թե «եղանակը թռիչքային չի», իսկ իրականում ինքնաթիռ չունեին: Դեպի Կրասնոդար գնացքներ էլ չէին գնում: Վեցերորդ օրը պետք է մեկնեք սանիտարական գնացքը Ստալինգրադ—Կրասնոդար—Նովոռոսիյսկ երթուղով: Բայց այդ գնացքն ընկնելը մեծ դժվարությունների հետ էր կապված: Չափազանց դժվարությամբ մեզ հաջողվեց այդ գնացքով մեկնել:

1. ԱՌԱՋԻՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նովոռոսիյսկից մինչև Կերչ նավերը գնում էին միայն գիշերը: Յրտաշունչ, մառախլապատ լուսաբացին մենք նավից իջանք Կամիշ-Բուրունում: Պատահական բեռնատար ավտոմեքենայով մեկ-

նեցինք Կերչ: Նախքան ռազմաճակատի քաղվարչություն ներկայա-
նալը մտանք մի տուն՝ մեզ կարգի բերելու և նախաճաշելու: Տան-
տիրուհին մեզ համար թեյ և նախաճաշ պատրաստեց մեր ունե-
ցած համեստ պաշարից:

Նախաճաշի ժամանակ տանտիրուհին մանրամասն մեզ պատ-
մեց Կերչում գերմանական ֆաշիստների կատարած մասսայական
գնդակահարությունների և այլ վայրագությունների մասին: Նույն
բանը մեզ պատմեցին քաղվարչությունում և ռազմաճակատային
թերթի խմբագրությունում:

Հայտնի է, որ 1941 թվականի դեկտեմբերի վերջին: 1942 թվա-
կանի սկզբներին կարմիր բանակի զորքերը հաջողությամբ իրա-
զործեցին «Կերչ—Քեոդոսիա դեսանտային օպերացիան»: Գեսան-
տային այդ օպերացիան Գերագույն զլխավոր հրամանատարու-
թյան Զորակայանի հրամանով իրականացրեց Անդրկովկասյան
ռազմաճակատը: Դեկտեմբերի 26-ի լուսաբացին 51-րդ բանակի,
Սևծովյան նավատորմի և Ազովի ռազմական նավատորմի կի-
սանտային զորամասերը միաժամանակ մի քանի տեղում ափ հան-
վեցին Կերչի նեղուցի և Ղրիմի թերակղզու հյուսիս-արևելյան ծո-
վափին: Դեկտեմբերի 29-ի գիշերը 51-րդ բանակը նոր դեսանտա-
յին զորամասեր ափ հանեց Կերչի շրջանում, իսկ 44-րդ բանակը,
հաջողությամբ ափ իջնելով Քեոդոսիայի շրջանում, դեկտեմբերի
30-ին լրիվ գրավեց քաղաքը: Կոտրելով հակառակորդի դիմադրու-
թյունը Կամիշ-Քուրունում, Կերչում և Կերչի թերակղզու հյուսիս-
արևելյան շրջաններում, 51-րդ բանակի զորամասերը ջախջախե-
ցին Մանշտեյնի 11-րդ բանակի 42-րդ կորպուսը: Թեժ մարտեր
ժավալվեցին Ղրիմի ազատագրության համար: Դեկտեմբերի վեր-
ջին հունվարի սկզբներին 51-րդ և 44-րդ բանակների զորամասերը
միացան: Իր մասշտաբներով Կերչ-Քեոդոսյան օպերացիան «Մեր
նավատորմի ամենախոշոր օպերացիան էր Հայրենական մեծ պա-
տերազմում, շնայած նրա նախապատրաստման ամենասեղմ ժամ-
կետներին»,— գրել է այն ժամանակ ռազմա-ծովային նավատոր-
մի ժողովում Ն. Գ. Կուզնեցովը¹:

Երբ ներկայացանք, ռազմաճակատի քաղվարչության պետի
տեղակալ գնդային կոմիսար Վորոնինը դժգոհեց.

— Ուշացել եք,— ասաց նա և առաջարկեց շտապ մեկնել
Լենինսկոե գյուղը՝ ռազմաճակատի հրամանատարական կետը:
Մինչև կպատրաստելին մեքենան, մենք այցելեցինք ռազմաճակա-
տային «Քոյուկ նատիակ» թերթի խմբագրություն, հանդիպում ու-
նեցանք Արամայիս Մնացականյանի և Ստեփան Կուրտիկյանի
հետ:

Երեք օր անցկացրինք ռազմաճակատի քաղվարչությունում՝
անկետաներ լրացնելու, բաժինների պետերի և քաղվարչության
պետ Ս. Ս. Եմելյանովի մոտ զրույցի գնալու, մարտի 1-ին ռազմա-
ճակատի ռազմական խորհրդի անդամ դիվիզիոնային կոմիսար
Ֆ. Ա. Շամյակինի, 1-ին կարգի բանակային կոմիսար Լ. Զ. Մեխ-
լիսի կողմից ընդունվելու համար: Ժամը 12-ն էր: Ներկայանալով
բրիգադային կոմիսարին՝ Մեխլիսի հանձնակատարին, խնդրեցի
զեկուցել մեր մասին: Նա ներս մտավ, բայց դուրս գալիս ոչինչ
չասաց: Այդպես մի քանի անգամ: Վերջապես ինձ կանչեցին: Թե-
թևակի սեղմելով ձեռքս, Մեխլիսը իսկույն մոտեցավ սեղանին,
ստորագրեց երկու թուղթ և, դրանք մեկնելով ինձ, ասաց.

— Այնտեղ հիմա արյուն են թափում... Այսօր ևեթ մեկնեցեք:

Ձեռքումս երկու հրաման կար. մեկը՝ 390-րդ դիվիզիայի
քաղբաժնի պետ նշանակվելու մասին, մյուսը՝ ՀամԿ(բ)Կ Կենտկո-
մի անունից կուսակցական փաստաթղթեր ստորագրելու թույլ-
տվություն: Շուտով ճանապարհ ընկա, ընկերներս մնացին Լե-
նինսկոե գյուղում:

Թեթև անձրև էր տեղում, բայց տեսանելիությունը վատ չէր:
Ճանապարհը շատ վատ էր: Նրա երկարությունը երկու կողմից,
բաց դաշտում իրար կողքի, գրեթե առանց քողարկման, դասավոր-
ված էին թիկունքային և տնտեսական ստորաբաժանումներն ու
ժառանգությունները: Սա ուղղակի անթույլատրելի էր: Սակայն ինչ
կարող էի անել:

390-րդ դիվիզիայի հրամանատարական կետը, ինչպես քաղ-
վարչությունում ասացին, պետք է որ Կիյատ գյուղում լիներ, ուր ես
հասա ժամը 23-ին: Յուրտ, մառախլապատ գիշեր էր: Պարեկներն
ինձ տարան 47-րդ բանակի քաղբաժնի տնակը, ուր ստիպված գի-
շերեցի: Այստեղ 390-րդ դիվիզիայի մասին չգիտեին: Առավոտյան
մեկնեցի Օրկուզ-տոբե գյուղը՝ 51-րդ բանակի հրամանատարական
կետը: 390-րդ հրաձգային դիվիզիան մտնում էր այդ բանակի կաղ-

¹ «Յկոտյարը» ամսագիր № 9, 1968, էջ 143—144:

մի մեջ: Այնտեղ ևս ուշացաւ: Միայն մարտի 13-ի ուշ երեկոյան կարմիր բանակայինի ուղեկցութեամբ ձիով մեկնեցի դիվիզիա, որի հրամանատարական կետը տեղափոխված էր, այսպէս կոչված, Սարայի շրջանում: Սակայն «Սարայ» անվանումը քարտեզի վրա էր, իսկ տեղանքում չկար: Հավանաբար այդ էր պատճառը, որ բանակի քաղբաժնի պետ բրիգադային կոմիսար Մասլյանովը նախազգուշացրեց.

— Նման մութ դիշերին կարող եք ընկնել գերմանացիներին ձեռքը: Զգուշ եղեք:

2. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԳԻՎԻԶԻԱՅԻ ՀԵՏ

— Կանգնի՛ր, ո՞վ է գալիս:

Ժամապահի կտրուկ ձայնը մեզ ազատեց զիշերային խավարում հետագա թափառումներից: Ուղեկցողն ինձ բերեց դիվիզիայի հրամանատարական կետի շրջանը: Հետո սկսեցինք անորոշ պտտվել խրամատների շուրջը: Ժամապահը ցույց տվեց քաղբաժնի գետնատնակը: Ինձ դիմավորեց գումարտակային կոմիսարը՝ բարձրահասակ, պնդակազմ, սև, թավ հոնքերով, մեծ ու խորաթափանց, խորն ընկած աչքերով մի տղամարդ: Նա ներկայացավ՝ քաղբաժնի պետի տեղակալ Առուստամ Պարսեղի Առուստամով: Այստեղ եղած մյուսներին գիտեի՝ կուսհանձնաժողովի քարտուղար Հայկ Պարոնյան, պրոպագանդիստներ Հրաչիկ Մակարյան և Գառնիկ Անտոնյան, ինֆորմացիայի հրահանգիչ Վլադիմիր Պապոյան:

390-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գնդապետ Սիմոն Գեորգիի Զաքյանին և դիվիզիայի կոմիսար ավագ գումարտակային կոմիսար Թորգոմ Լեոնի Շահինյանին ես առաջ չէի հանդիպել: Այնինչ նրանք ինձ ընդունեցին որպէս հին ծանոթի:

Գնդապետ Զաքյանը միջհասակ, զինվորականի լավ կեցվածքով, պարզ ու բարի աչքերով մի մարդ էր: Խիտ և ալիքավոր մազերը կարծես արտաքնապես երիտասարդացնում էին նրան, թեև նա արդեն 43 տարեկան էր: Իր գործունեությունն սկսելով Բաքվի կոմունայի պաշտպանությունից, պարտիզանական պայքարից, Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական իշխանության հաստատման համար մղված մարտերին մասնակ-

ցելուց, Զաքյանն անցել էր կոմունիստի և ռազմիկի հրաշալի մարտական դպրոց, դարձել պրոֆեսիոնալ զինվորական: Կարմիր բանակում նա քայլել է զինվորական սանդուղքի համարյա բոլոր աստիճաններով՝ սկսած կարմիրբանակայինից մինչև գնդապետ-դիվիզիայի հրամանատարը, գերազանց գնահատականով ավարտել է Ֆրունզեի անվան ակադեմիան: 1941 թվականի օգոստոսին նա մասնակցել էր Անդրկովկասի ռազմաճակատի զորքերի օպերացիային Իրանում: Այնուհետև Զաքյանը կանչվել էր Հայաստան, որտեղ նա կազմավորել էր 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան: Ղրիմի ռազմաճակատում 390-րդ դիվիզիայի կազմավորման կապակցութեամբ Զաքյանը գործուղվեց ռազմաճակատ որպէս այդ դիվիզիայի հրամանատար: Շուտով նա դարձավ դիվիզիայի անձնակազմի սիրելին:

Ավագ գումարտակային կոմիսար Շահինյանը միջհասակից բարձր, զինվորականի հրաշալի կեցվածքով տղամարդ էր, կարմիր բանակի զգայուն քաղաշխատող: Նա անցել էր կադրային քաղաշխատողի դպրոց, մասնակցել էր Կերչի գեսանտային օպերացիային որպէս 398-րդ դիվիզիայի գնդերից մեկի կոմիսար, աչքի ընկել իբրև հմուտ և խիզախ քաղաշխատող: 390-րդ դիվիզիայի կոմիսարի պաշտոնում աշխատելու առաջին իսկ օրերից Շահինյանը դարձել էր գնդապետ Զաքյանի մարտական ընկերը, նվաճել ընկերների սերնու հարգանքը:

Հրամանատարի գետնատնակում մենք նստած էինք ծղոտը ծածկող թիկնոցավրանի վրա: Լուսթյունը խախտեց Զաքյանը.

— Ձեր մասին կարող եք չպատմել, մենք ձեզ գիտենք: Դիվիզիայում շատ ծանոթներ կգտնեք, նույնիսկ ավելի շատ, քան կարելի է պատկերացնել: Նրանք գիտեն ձեր նշանակման մասին: Ավելի լավ է պատմեք Հարավային ռազմաճակատում հատկապես տանկերի մասնակցութեամբ մղված մարտերի մասին: Զմոռանաք, խնդրեմ, պատմել նաև Մոսկվայի մասին:

Համառոտակի նկարագրեցի 136-րդ դիվիզիայի մղած մի ճակատամարտի, մասնավորապես հիտլերյան գեներալ Կլեյստի խմբավորման դեմ մղված Դյակովոյի մարտի մասին: «Մոսկվայի մասին ի՞նչ պատմեմ,— ասացի,— լուսաբողարկում է, փողոցները մարդաշատ չեն, նախապատերազմյան Մոսկվայի հետ համեմատել չի կարելի, եղել էմ միայն գլխավոր քաղվարչությունում»:

— Դյակովոյի ճակատամարտի մասին պատմեք շտաբի և քաղաքային աշխատողներին, զորամասերի հրամանատարներին և կոմիսարներին, մարտիկներին,— եզրափակեց Զաքյանը:

Այնուհետև դիվիզիայի հրամանատարը հրավիրեց դիվիզիայի շտաբի պետ Վասիլի Իվանովիչ Շուբային և հրետանու պետ Քաղբատ Կոնոպիչ Դանիելյանին: Մենք ծանոթացանք: Մեզ նախաձաշ մատուցեցին:

— Օղի՞, թե կոնյակ,— հարցրեց դիվիզիայի հրամանատարը:

— Ճակատայինին հարյուր գրամ է հասնում, միևնույն է՝ կոնյակ, թե օղի:

— Տղամարդու համար հարյուր գրամն ի՞նչ է,— միջամտեց Շահինյանը:— Սկսիր «Արարատից», Սիմոն Գեորգիևիչ:

Կովկասյան «խնջույքի» նման մի բան ստացվեց, միայն թամաղա չընտրեցինք: Ասենք ընտրելու կարիք էլ չկար: Ռազմաճակատում թամաղան «հաստիքային» է՝ հրամանատարը:

Գետնատնակում եղած մարդկանց մարտական բարեկամությունը ծնվել էր տառացիորեն մի բանի օրում: Նրանց բոլորին, միասին վերցրած, սովորաբար անվանում են «հրամանատարություն»՝ թեև հրամայում է միայն մեկը: Ինձ համար շատ հաճելի էր, որ սպանների այդ փոքրիկ խումբը հարգում ու հավատում էր իր հրամանատարին: Ոչ մի ավելորդ, առավել ևս գովեստի, խոսք: Պատերազմ, դիվիզիա և նրա մարդիկ, մարտական առաջադրանքներ՝ ահա բոլորի գլխավոր հոգսը:

Կուզենայի ընթերցողին հանձնել այն մտքերը, որ դիվիզիայի հրամանատար գնդապետ Զաքյանը արտահայտեց այդ հիշարժան գիշերը: Այդ ուշագրավ մտքերը նա հայտնեց ոչ որպես ցուցում կամ հրաման, այլ կարծես հենց այնպես, խոսակցության ընթացքում:

Զաքյանի արտահայտած մտքերից երևում էր, թե նա որքան մեծ նշանակություն է տալիս զորքերի բոլոր տեսակների համագործակցությանը, ներդաշնակ կազմակերպվածությունները, համախմբվածությունը և կարգապահությունը: Պատերազմում կազմակերպվածությունը, կարգ ու կանոնը, համախմբվածությունը ամենակարևորն են, ասում էր նա: 390-րդ դիվիզիան հայկականի վերածելը կատարվել է շափազանց անբարենպաստ պայմաններում, ժամանակի անբավարարության պատճառով հնարավոր չի եղել

ստորաբաժանումները համախմբել իրենց հրամանատարների ու կոմիսարների շուրջը, դարձնել կուռ և ամբողջական մի օրգանիզմ. մարդիկ դեռ իրենց հրամանատարներին շտեպած, նետվում էին մարտի: Պարզապես չկար մարտիկներին սովորեցնելու և մարտական գործողություններին նախապատրաստելու ժամանակ: Դիվիզիան կոմպլեկտավորված է, ասում էր նա. մարդկանց մի մասը ռազմական պատրաստություն է անցել կա՛մ խաղաղ պայմաններում, կա՛մ պատերազմի առաջին ամիսներին, մարտիկների, հրամանատարների և քաղաշխատողների հիմնական մասը ունի որոշ մարտական փորձ, որը նա ձեռք է բերել Կերչի թերակղզում մղված կռիվներում: Բայց նրանց զգալի մասը չի անցել զինվորական ծառայություն և առայժմ դեռ չի կարողանում ինչպես հարկն է իրեն պահել մարտական իրադրության մեջ, Հայաստանում մոբիլիզացված քաղաշխատողների շոշափելի մասը ռազմաճակատ է եկել առանց որևէ նախնական պատրաստության: Ներկայումս նրանք եռանդուն աշխատում են ստորաբաժանումների անձնակազմի հետ ու իրենք էլ սովորում են զինվորական գործը, բայց ժամանակը սուղ է:

Զաքյանը նշանակություն էր տալիս նաև մի այսպիսի փաստի. մարդկանց մի մասը դիվիզիա է եկել տարբեր զորամասերից ու ստորաբաժանումներից, դեռ չի հասցրել ճանաչել, ընտելանալ իրենց հրամանատարներին, կոմիսարներին, ճանաչել մարտական ընկերներին, ուրեմն անհրաժեշտ էր պաշտպանության ժամանակը օգտագործել վերը նշված հարցերը արագորեն լուծելու, զինվորի և հրամանատարի միջև անկեղծ, ջերմ մարտական բարեկամություն ստեղծելու համար:

Գնդապետ Զաքյանը մի բանի անգամ ընդգծեց, որ դիվիզիայի անձնակազմը հիանալի է, մարդիկ պատրաստ են իրենց կյանքը զոհաբերելու ատելի թշնամու նկատմամբ հաղթանակն ապահովելու համար, որը մեր մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների բարոյական բարձր ոգու վկայությունն է: Սա, իհարկե, շատ կարևոր հանգամանք է հաղթանակն ապահովելու գործում: Սակայն միայն հայրենասիրությունն ու անձնական ավյունը բոլորը չեն պատերազմում: Հաճախ ես նկատում,— ասաց նա,— երբ անփորձ մարտիկը, նույնիսկ հրամանատարն ու քաղաշխատողը, գլուխը դուրս է ցցում, կա՛մ առանց անհրաժեշտությունից,

կամ հետաքրքրութիւնից դրոված դուրս է գալիս խրամատից: Սուրում է թշնամու գնդակը... և նա շկա: Պետք է մշտապես թըշնամուն պահել տեսադաշտում, դիտել անընդմեջ, բայց պետք է իմանալ ինչպե՞ս: Ուրեմն պետք է մարդկանց սովորեցնել-սովորեցնել մարտական գործը, սովորեցնել կովել, նրան ներարկել պահի լրջութիւնը գնահատելու կարողութիւն, տակտիկա, յուրաքանչյուր դասակ և վաշտ դարձնել մի զորեղ բոունքը, իսկ գնդերն ու գումարտակները՝ միաձուլլ օրգանիզմ: Ժողովուրդը և կուսակցութիւնը շեն ների մեր սխալները:

Այստեղից էլ հետևութիւն. այն ամենը, ինչ խաղաղ ժամանակ արվում է տարիների ու ամիսների ընթացքում, պատերազմի ժամանակ հարկավոր է անել տառացիորեն ժամերի ու օրերի ընթացքում: Իսկական հրամանատարն ու քաղաշխատողը նա է, ով ռազմաճակատային պայմաններում կարողանում է անփորձին դարձնել փորձառու, դանդաղկոտին՝ եռանդուն, անժանոթին՝ մտերիմ ու հավատարիմ բարեկամ:

Երբ Զաքյանը խոսում էր ուսման և մարտական պատրաստութիւն մասին, աննկատելի ընկնում էր ինքնամոռացութիւն մեջ: Ըստ երևույթին, դա գալիս էր նրանից, որ այդ կազրային հրամանատարը կարմիր բանակում իր ծառայութիւն մեծ մասը նվիրել էր կադրերի պատրաստմանը: Դեռ 1923 թվականին Զաքյանը նշանակվում է զինվորական ուսումնարանի գնդացրորդների պատրաստման պետ, այնուհետև Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի երկրորդ գնդի գնդացրային գործի տեսուչ: Երեսնական թվականներին, ավարտելով, Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, Զաքյանը նշանակվում է 7-րդ հրաձգային կորպուսի մարտական պատրաստութիւն տեսուչ:

Դիվիզիայի հրամանատարը իր կարծիքները ամրապնդում էր կոնկրետ օրինակներով, միաժամանակ բնութագրելով այս կամ այն հրամանատարին և կոմիսարին:

— Ապա մի նայեք գնդի երիտասարդ հրամանատար Ակոպովին. կրակ է, կրակ: Ամեն օր նա հերթականութեամբ խրամատներից հանում է մի քանի դասակ, տանում գնդի մերձակա թիկունք և այնտեղ պարապմունքներ անցկացնում ինչպես բազմահմուտ ու գիտակ ուսուցիչ: Դասակների և ջոկերի հրամանատարները գիտեն, թե ազդանշանի դեպքում ինչպես անհապաղ դրավեն իրենց դիր-

բերը: Վերջերս ես դնացի թիկունք՝ այդ պարապմունքները դիտելու: Տեսնեմ՝ կարմիրբանակայինը խրամատում զբաղված է գրնդացրով, իսկ կողքին դրված է հրացանը: «Հրացանից լավ ես կրակում, ապրես,— ասում է Ակոպովը կարմիրբանակայինին,— բայց ենթադրենք, թե կողքիդ գնդացիրը լուռ է, գնդացրորդը վիրավորվել է կամ սպանվել. ի՞նչ է, գնդացիրը այլևս չպիտի՞ գործի: Պետք է գործի: Իսկ ո՞վ է կրակելու նրանից: Դու, մյուսը՝ ով ավելի մոտ է: Հրացանը դիր կողքիդ և ֆաշիստին հնձիր գնդացրով: Ուրեմն սովորիր կրակել ընկերոջդ զենքից»: Տեսեք, թե ուսուցման ինչպիսի գործնական մեթոդ էր ընտրել Ակոպովը՝ յուրաքանչյուրին սովորեցնել այն, ինչ նա չգիտե, ինչի կարիքն զգում է տվյալ պահին և տվյալ հանգամանքներում: Ուշագրութեան արժանի մեթոդ է: Եղել եմ նաև մայրը Սեգնեկի մոտ: Հայերեն նա միայն երկու բառ գիտի՝ «ջան» և «առաջ»: Բայց նա ամեն մեկի հետ էլ լեզու է գտնում: Մի անգամ Սեգնեկը նկատում է, որ խրամատում դասակի հրամանատարը կարմիրբանակայինին սովորեցնում է զենքի նյութական մասը: «Ասացեք, լեյտենանտ, եթե հիմա ֆաշիստները հարձակվեն, ի՞նչ կարող է անել այս կարմիրբանակայինը,— հարցնում է նա ու շարունակում,— ասացեք նաև, թե այս կարմիրբանակայինը ինչո՞ւ է եկել ռազմաճակատ»: «Կովելու, ընկեր մայր»,— պատասխանում է լեյտենանտը: «Այդ դեպքում, նրան սովորեցրեք զենք գործածել, հասկանո՞ւմ եք, զենք գործածել: Երբ նա տուն վերադառնա, հավատացնում եմ ձեզ, ոչ ոք նրան չի հարցնի, թե արդյոք նա ռազմաճակատում քանդե՞լ է իր հրացանի փակադակը»:

— Մուշեղը,— փոքր-ինչ լռելուց հետո շարունակեց Զաքյանը,— նվիրված ու խիզախ հրամանատար է: Բայց ինչ անես, որ երեք բառից երկուսը հայհոյանք է... Վիրավորում է մարդկանց, շարացնում... Այ, եթե նրա կողքին էլ մի Սոխիկյան լիներ...

◆
Մուշեղ Մալխասյանը աչքի էր ընկել Կերչի թերակղզում մղված մարտերում, նրա մասին բանակային թերթերում գրում էին որպես քաջ հրամանատարի: Բայց նա շատ հոգս է պատճառում գնդի կոմիսարին՝ ոչ պակաս խիզախ Մուրատովին: Սա

բարձր էր գնահատում Մալխասյանի արժանիքները, աշխատում էր ամեն կերպ հաղթահարել նրա բնավորութայն կոպիտ գծերը և չէր ուզում ենթակաների ներկայութայնքը ընդհարվել հրամանատարի հետ, բայց Մալխասյանը չէր ուղղվում և անհարմար դրություն մեջ էր դնում իր կոմիսարին:

Մալխասյանի կոպտությունների լուրը հասնում է դիվիզիայի հրամանատարին ու կոմիսարին: Սրանք ևս զրուցում են Մալխասյանի հետ: Նա հասկանում էր իր թուլությունները, խոստանում ուղղել, վերանայել իր հարաբերությունները ենթակաների հետ: Բայց ամենաաննշան առիթով բորբոքվում էր: Շուտով Մալխասյանը գործուղվում է 51-րդ բանակի շտաբի տրամադրության տակ: Մեկ այլ զորամասում ծանր վիրավոր վիճակում ընկնում է գերի: Պատերազմից հետո մամուլում կարդում ենք. Մալխասյանը գեներալ-մայոր Ալավերդյանի հետ ֆաշիստական ճամբարում հայրենասիրական մեծ աշխատանք է տարել գերված զինվորների մեջ:

Գնդապետ Զաքյանը այնուհետև բնութագրեց մյուս հրամանատարներին ու կոմիսարներին: Գնդի կոմիսար Վահան Գրիգորյանին, նրա տեղակալ Հայկ Սոխիկյանին:

1920 թվականից կուսակցության անդամ Սոխիկյանը ռազմաճակատ էր եկել ՀԿ(բ)Կ Կենտկոմի մոբիլիզացիայով: Կարճ ժամանակում այդ համակրելի մարդը ճանաչվում է ողջ դիվիզիայում: Հետագայում Սոխիկյանը փոխադրվում է Հայրենական պատերազմի մյուս ռազմաճակատները և զոհվում որպես կուսակցության հավատարիմ զավակ:

— Մեր Բագրատի բախտը բերեց, — ասաց Զաքյանը, — «պատերազմի աստվածը» մնաց անփոփոխ, հրետանու շտաբն ու հրետանային գնդի անձնակազմը կազրային են և հիմնականում ռուս մեծ ժողովրդի զավակներ: Բուժսանգումարտակը ներկայացնում է եղբայրական Վրաստանին: Ինչ վերաբերում է դիվիզիայի շտաբին, ապա այնտեղ տիրապետում են եղբայր ուկրաինացիները՝ Շուբան, Շապկոն, օպերատիվ բաժանմունքի պետը՝ Մոկրին: Այսպես էլ ստորագրում են. «Դիվիզիայի հրամանատարը հրամայեց... Շուբա, Շապկո, Մոկրի»:

Այս զրույցի ժամանակ շոշափվեցին նաև Ղրիմի ռազմաճա-

կատում տիրող դրություն հարցերը: Զաքյանի կարծիքով, Կերշ-Թեոդոսյան դեսանտային հաջող օպերացիայից հետո մեր զորքերի կողմից Թեոդոսիան թողնելը ոչնչով արդարացված չէր: Փոխանակ ամրապնդելու նվաճված դիրքերը, ստեղծելու խոր էշելոնացված պաշտպանություն և կատարելագործելու այն, հրամանատարությունը, առանց պատշաճ նախապատրաստության ու հակառակորդի ուժերն հաշվի առնելու, անցավ հարձակման և կորցրեց քաղաքը: 1942 թվականի փետրվարի վերջին ռազմաճակատի ձեռնարկած հարձակումը ևս արդարացում չունեք: Դեռ փետրվարի 26-ին հայտնի էր, որ տանկերն ու հրետանին ետ են մնացել, չեն կարող հաղթահարել ցեխը: Զորքերը առանց տանկերի և հրետանու աջակցության շարունակում էին հարձակումը, ուստի հակառակորդը հնարավորություն ստացավ կենտրոնացնել կրակային բոլոր միջոցները և կանխել հարձակումը: Որևէ դիրք հակառակորդին հանձնելը, հատկապես ձմեռային հաջող հարձակումից հետո, բացասաբար է անդրադառնում զինվորների տրամադրության վրա: Հարկավոր է հարձակվել, եթե համոզված ես, որ հաջողությունը կապահովվի: Վերջում դիվիզիայի հրամանատարը խոսեց դիվիզիայի պաշտպանական դիրքերի կատարելագործման անհրաժեշտության, կրակային սիստեմի և դիտարկումների կազմակերպումը բարելավելու, նոր մարտերին զորամասերը նախապատրաստելու ուղղությամբ տարվելիք համառ աշխատանքի մասին:

Մի գիշերվա ընթացքում բազում հարցեր լուսաբանում ստացան: Ինձ համար շատ հաճելի էր, որ դիվիզիայի հմուտ հրամանատարը շեշտը դնում է մարդկանց հետ տարվող աշխատանքի վրա: Դա պատահական չէր: Ով սովորեցնում է մարդկանց, սովորում է նաև ինքը:

Հակառակորդի ճնշման տակ թողնելով Թեոդոսիան, 44-րդ բանակը ետ քաշվեց Կերշի թերակղզի: 51-րդ բանակի զորամասերը ամրացան Ակմանայի դիրքերում:

* * *

ՍՍՀՄ Գերագույն սովետի առաջին գումարման X սեսիայում միութենական հանրապետությունների զորամիավորումների կազմավորման վերաբերյալ օրենքին համապատասխան 1942 թվականի հունվարին Ղրիմի ռազմաճակատում կազմավորվեցին վրացա-

կան 224-րդ, հայկական 390-րդ և ազրբեջանական 396-րդ դիվիզիաները: Կերչի թերակղզում ազգային միավորումների ստեղծման համար կային մարտիկների, հրամանատարների, ու քաղաշխատողների բավարար կոնտինգենտ, որովհետև Կերչի թերակղզին գրավել էին Անդրկովկասյան ռազմաճակատի զորքերը, որոնք պատերազմի առաջին օրերին համալրվել էին անդրկովկասյան ազգութուններին պատկանող զինապարտներից:

390-րդ հրաձգային դիվիզիան գործում էր Կերչի թերակղզում, 51-րդ բանակի կազմում: Դիվիզիան հայկական վերանվանվելու օրերին գտնվում էր Սեմիսոտկա և Կիստ գյուղերի շրջանում, որը Ակ-Մանայի դիրքերի մի մասն էր կազմում: Այդ պայմաններում դիվիզիայի հրամանատար զնդապետ Վինոգրադովը և կոմիսար Սոտնիկովը ռազմաճակատի մյուս միավորումներից ընդունում էին հայ ռազմիկների, հրամանատարների ու քաղաշխատողների, բաժանում էին ըստ զորամասերի ու ստորաբաժանումների և միաժամանակ այլ միավորումներ էին ուղարկում մյուս ազգութուններին պատկանող կոնտինգենտը: 390-րդ դիվիզիան կազմավորվեց Վրաստանում 1941 թ. օգոստոսին: Դիվիզիայի հրաձգային գրնդերի անձնակազմի մեծ մասը կազմում էին հայերը: Հենց այդ էլ, երևի, հիմք ծառայեց 390-րդ դիվիզիան հայկական վերանվանելու համար: 1941-րդ գնդի կոմիսար Շավարշ Ազնավուրյանը վկայում է. «1942 թ. հունվարի 22-ին ինձ կանչեց Մելիսյան և հայտնեց, որ կազմավորվում է հայկական դիվիզիա և մտադիր է ինձ նշանակել այդ դիվիզիայի քաղբաժնի պետ»: 1942 թ. հունվարի 26-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն քննեց «Անդրկովկասյան ռազմաճակատի գործող բանակում կուսակցական քաղաքական աշխատանք կատարելու համար 50 կոմունիստների մոբիլիզացնելու մասին» հարցը (արձանագրություն № 193): Հայաստանից ռազմաճակատ մեկնեցին 58 քաղաշխատողներ, որոնց մեծ մասը փետրվարի առաջին օրերին նշանակվեց 390-րդ դիվիզիա: Մինչև փետրվարի վերջը շարունակվեց դիվիզիայի կազմավորման պրոցեսը: Փետրվարի 28-ին 138-րդ դիվիզիայից մի խումբ քաղաշխատողներ փոխադրվեցին 390-րդ դիվիզիա, որոնց մի մասը նշանակվեց աշխատանքի դիվիզիայի քաղբաժնում և թերթի խմբագրությունում: Այսպիսով, հիմնականում ավարտվեց 390-րդ հայկական դիվիզիայի կազմավորման պրոցեսը:

1942 թ. փետրվարի վերջին Ղրիմի ռազմաճակատը նոր հարձակում սկսեց: 390-րդ դիվիզիան գործում էր գլխավոր հարվածի ուղղությամբ և խնդիր ուներ գրավել Վլադիսլավովկա բնակավայրը: Դիվիզիայի քաղբաժինը հատուկ կոչով դիմեց հայ մարտիկներին՝ պահանջելով անխնա ջախջախել ֆաշիստական օկուպանտներին, պատվով կատարել հրամանատարություն մարտական հրամանը:

Հարձակումից առաջ եղանակը խիստ վատացավ: Տեղաց հորդառատ անձրև, խիստ դժվարացավ հրետանու և մարտական տեխնիկայի շարժումը: Այդ պայմաններում փետրվարի 27-ին, ժամը 8-ին, մեր բանակի հրետանին ուժեղ կրակ բացեց թշնամու դիրքերի վրա, որը տևեց երկու ժամ: Հակառակորդը նման եղանակին հարձակում չէր սպասում: Նա նույնիսկ շահացրեց պատասխան կրակ բացել: Գերմանացիների դիրքերը վերածվեցին քառսի: Թըշնամին նահանջեց: Առաջին էշելոնի զորքերի մարտակարգերում մարտի մեջ մտավ 390-րդ հրաձգային դիվիզիան և սկսեց հետապնդել հակառակորդին: Մինչև ծնկները ցեխի մեջ, մարդիկ ընկնում էին, բայց նորից ելնում ու շարունակում առաջ գնալ: Առջև վում Տուլումշակն էր: Դիվիզիան գրավեց այն: Դիվիզիայի մյուս զորամասերը դուրս եկան 28,2 բարձունքի շրջանը: Դիվիզիայի 954-րդ հրետգունդը, որի հրամանատարն էր մայոր Կորշունովը, իսկ կոմիսարը՝ գումարտակային կոմիսար Սուշկովը, գործում էր հստակ, ոչնչացնում հակառակորդի կրակային կետերը: Հետևակայինները գոհ էին իրենց հրետանավորներից: Սակայն շուտով պարզվեց, որ առաջ շարժվել այլևս հնարավոր չէ: Տանկերն ու հրետանին թաղվեցին ցեխի մեջ: Հարձակվող հետևակայինները կտրվեցին տանկերից ու հրետանուց: Սա նկատեց հակառակորդը: Մեր հետևակի դեմ գործադրեց կրակի բոլոր միջոցները: Մեծ կորուստներ եղան: Մարտերը շարունակվեցին նաև հաջորդ օրը: Դիվիզիայի զորամասերն առաջ շարժվեցին ընդամենը 10 կիլոմետր:

Նկատի ունենալով հետևակի կտրվածությունը տանկային զորամասերից ու հրետանուց, թշնամու սաստկացող ճնշումը, անտեղի կորուստներից խուսափելու համար բանակի հրամանատարությունը որոշեց հետևակը ետ քաշել: 390-րդ հրաձգային դիվիզիան իր առաջավոր զորամասերով ամրացավ 28,2 բարձունքի շրջանում և անցավ պաշտպանության:



1942 թվականի մարտի 3-ին 390-րդ հայկական դիվիզիայի հրամանատար նշանակվեց գնդապետ Ս. Գ. Զաքյանը, իսկ մարտի 5-ին դիվիզիայի կոմիսար նշանակվեց Թ. Ա. Շահինյանը: Դիվիզիայի շտաբը, հրետանու պետի շտաբը, հրետանային գունդը, հատուկ ստորաբաժանումները՝ կապի, սակրային, սանիտարական գումարտակները, ականանետային դիվիզիոնը և այլն, մնացին անփոփոխ: Բավական փոփոխություն տեղի ունեցավ հատուկ ստորաբաժանումների քաղաշխատողների կազմում՝ Հայաստանից և ռազմաճակատի մյուս զորամասերից եկած քաղաշխատողների հաշվին: Քաղբաժինը ժամանակավորապես զլխավորում էր պետի տեղակալ Ա. Պ. Առուստամովը: Մինչև պատերազմը վերջինս երկար տարիներ աշխատել էր Ադրբեջանում, եղել շրջկոմի քարտուղար և հանրապետության սննդի արդյունաբերության ժողկոմի տեղակալ: Նա ուներ աշխատանքի մեծ փորձ և հարգալից ու հոգատար վերաբերմունք՝ մարդկանց նկատմամբ: Քաղբաժնի կազմակերպական-կուսակցական աշխատանքի գծով ավագ հրահանգիչ էր աշխատում Բաքվի շրջկոմներից մեկի քարտուղար Միքայել Ավետիսովը: Փետրվարի վերջին մյուս զորամասերից դիվիզիա եկան մի խումբ նոր քաղաշխատողներ: Նրանց մի մասը նշանակվեց քաղբաժնում. կուս-հանձնաժողովի քարտուղար նշանակվեց «Սովետական Հայաստան» թերթի նախկին խմբագիր Հայկ Պարոնյանը, դիվիզիայի թերթի խմբագիր՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախկին բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Գուրգեն Հովնանը, պրոսպագանդայի գծով հրահանգիչներ՝ Հայաստանի նախկին պատասխանատու աշխատողներ Հրաչ Մարգարյանը, Գառնիկ Անտոնյանը, իսկ այնուհետև նաև Եղիշե Համբարձումյանը և Գերասիմ Վարդանյանը, թիկունքային աշխատանքի գծով հրահանգիչ՝ Վարդգատ Գավթյանը, ինֆորմացիայի գծով՝ Վլադիմիր Պապոյանը, հաշվառման գծով՝ Արամ Կասպարովը: Ակումբի պետ էր նշանակվել ավագ քաղղեկ Ադասի Զիլինգարյանը:

Ինձ անհրաժեշտ էր նաև լինել զորամասերում, հանդիպել, զրուցել հրամանատարների, քաղաշխատողների ու զինվորների հետ, դիտել դիվիզիայի պաշտպանական դիրքերը: Մարտի 14-ին Առուստամովի հետ գնացինք պաշտպանության առաջին գիծը:

Առաջինը երկրորդ էշելոնի դիրքերում հանդիպեցինք 789-րդ գնդի երեք մարտիկի, նրանցից երկուսը Իջևանի Սևբար գյուղից էին, իսկ երրորդը՝ Ստեփանավանից: Նրանք լավ դիտեին իրենց առաջադրանքը, հարևան զորամասերին ու նրանց հրամանատարներին: Մեր զրույցի ժամանակ մոտակայքում ականներ պայթեցին: Մարտիկները անգամ աչք չթարթեցին: Նրանք անկաշկանդ զրուցեցին մեզ հետ: Նրանց և նրանց ընկերների տրամադրությունը բարձր էր: 792-րդ գնդի հրամանատար Ակոպովի ու կոմիսար Գրիգորյանի հետ ծանոթացանք իրենց հրամանատարական կետում: Այն ժամանակ կապիտան Ակոպովը պատանու կազմվածքով, միջինից ցածր հասակով, 29 տարեկան մի երիտասարդ էր: Ոչ մի վերամբարձ խոսք, ոչ մի չափազանցում: Դժվար էր միանգամից նկատել՝ համեստությունից էր դա, թե ամաչկոտությունից: Շուտով համոզվեցինք, որ նա մարտական ու հրամանատարական հիանալի հատկություններ ունի: Կարծես բանակի համար էր ծնվել: Հրամանատարի կողքին գնդի կոմիսար ավագ քաղղեկ Վահան Գրիգորյանը հսկա էր երևում: Ժպիտը երբեք չէր լքում նրան, իսկ աչքերը մատնում էին նրա հոգու պարզությունը: Մարդկանց գնահատման և բնութագրման հարցում Ակոպովի գրսևորած զսպվածությունը, ինչպես նաև պաշտպանության հաջող կազմակերպումը վկայում էին, որ գնդի հրամանատարը հույս չի դնում հեշտ ու հանգիստ հաղթանակի վրա:

Գնդի հրամանատարական կետում հանդիպեցինք գնդի կոմիսարի տեղակալ ավագ քաղղեկ Հայկ Սոխիկյանին և գնդի պրոպագանդայի հրահանգիչ քաղղեկ Մարկ Նալբանդյանին: Սրանք ամենաճանաչված մարդիկ էին գնդում: Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոս Մարկ Նալբանդյանին առաջին անգամ էի տեսնում: Արտաքուստ նա ոչնչով չէր տարբերվում կարմիրբանակայինից՝ զինվորական շինել, կիրգայն սապոգ, ուսին ավտոմատ: Մեր հարցին՝ մի՞շտ է ավտոմատ կրում, Նալբանդյանը պատասխանեց.

— Երբ սա գործի եմ դնում, կրկնապատկվում է իմ խոսքի ուժը:

Հաջորդ երկու օրը նույնպես անցկացրինք գնդերում: Առուստամովը ամբողջ ժամանակ ինձ հետ էր:

— Հրաշալի մարդիկ ունենք,— ասաց 784-րդ գնդի հրամա-

նատար մայրը Սեզնեկը:— Նրանք բոլորն էլ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում դեպի ռազմական գործը: Մարդկանց սովորեցնում ենք ուղղակի խրամատներում՝ ցուցադրումով և կովում: Հրամանատարներն ու քաղաշխատողները բավականաչափ զրազետ են և զիտեն աշխատել մարդկանց հետ:

Գնդի հրամանատարին հարցրինք, արդյոք չի՞ խանգարում հայերեն շիմանալը, Սեզնեկը պատասխանեց.

— Ոչ այնքան: Հրամանատարներն ու քաղաշխատողները գրեթե ազատորեն տիրապետում են ռուսերենին, իսկ մարտիկներից ոմանք՝ լավ, ոմանք էլ՝ դժվարությամբ: Երբ նրանց հայերեն ասում ես «Առա՛ջ», հրճվում են, և ես զրանում տեսնում եմ նրանց հավատը իրենց հրամանատարի նկատմամբ:

Գնդի կոմիսար Շավարշ Ազնավուրյանը միանգամայն անսովոր դիմավորեց ինձ.

— Օ՛, Սուրեն դայի, բարով ես եկել, հազար բարի: Ո՞նց ես, ո՞նց չես այ պուճուր ախպեր: Ինչ լավ եղավ, միատին կկովեսք:

Ես, նրա անմիջականությանը կատակով պատասխանեցի.

— Պատկերացնում եմ, թե քաղբաժնի պետը ինչ ազդեցություն կարող է ունենալ գնդի կոմիսարի վրա, որը մի քանի վայրկյանում նրան դարձրեց և՛ դայի, և՛ պուճուր ախպեր:

Դիվիզիայում իմ ամենահին ծանոթը Ազնավուրյանն էր: 20-ական թվականներին, երբ նա աշխատում էր կոմերիտմիության Զանգեզուրի գավկոմի ագիտպրոպ բաժնի վարիչ, ես պիոներ էի: Այն ժամանակ մեր միջև եղած տարածությունը մեծ էր, իսկ նրա դիրքը՝ ինձ համար անհաս: Մի քանի տարի անց, 1930 թվականի սկզբներին, մենք միևնույն աշխատանքն էինք կատարում. նա՝ Ղափանում, ես՝ Սիսիանում: Բայց սովորույթի ուժը պահպանվում էր՝ Ազնավուրյանը ավագ էր: Հետո նա կադրային ծառայության անցավ կարմիր բանակում: 390-րդ դիվիզիան հայկականի վերածելու ժամանակ Ազնավուրյանը առաջինը իմացավ այդ մասին: Մեխլիսը նրան առաջարկել էր քաղբաժնի պետի պաշտոնը: Սակայն Ազնավուրյանը հրաժարվել էր: Մեխլիսը կտրուկ հրամայել էր. «Կգնաք գնդի կոմիսար»:

Դա 1942 թվականի հունվարի վերջերին էր: Գունդը պաշտպանություն էր գրավել Սեմիսոտկա գյուղի մոտակայքում: Ազնավուրյանը գնդի հրամանատար Սեզնեկի հետ ստուգում էր գու-

մարտակները: Գնդի հրամանատարական կետում կոմիսարը խիստ քննադատում է գնդի պաշտպանության կազմակերպումը: Սեզնեկը սկզբում «վիրավորվում է» կոմիսարի «հանդգնությունից», բայց քննադատությունը այնուամենայնիվ համարում է տեղին: Նա անձամբ վերակազմում է պաշտպանության սխեման և մի քանի օրում կարգի բերում պաշտպանության զիծը: Այդ ժամանակից ի վեր գնդի հրամանատարի ու կոմիսարի միջև հաստատվում է սերտ բարեկամություն: Երբ ես զրուցում էի Սեզնեկի հետ, նա հպարտությամբ էր արտահայտվում լավ կոմիսարի մասին, սակայն շթաքցրեց, որ ինքը դժկամությամբ է ընդունել նրան: Դիվիզիայում Ազնավուրյանը ամենապատրաստված քաղաշխատողներից մեկն էր, իսկ ռազմական գիտելիքների տեսակետից ետ չէր մնում նաև գնդի հրամանատարից:

Եղանք նաև 789-րդ հրաձգային, 954-րդ հրետանային գնդերում: Ի դեպ՝ գնդերի հրամանատարներից 789-րդ գնդի հրամանատար մայրը Մուշեղ Մալխասյանը միակն էր, որի հետ մինչև պատերազմը փոքր ինչ ծանոթ էի: Մեզ վրա հաճելի տպավորություն թողեցին 954-րդ հրետանային գնդի հրամանատար մայրը Կորշունովը, գնդի կոմիսար գումարտակային կոմիսար Սուշկովը, 789-րդ գնդի կոմիսար գումարտակային կոմիսար Մուրատովը:

Դիվիզիայի պաշտպանական դիրքերում ես հանդիպեցի շատ ծանոթներին: 789-րդ գնդի կուսբյուրոյի քարտուղար քաղղեկ Աշոտ Ասատրյանին՝ բանֆակի իմ մտերիմ ընկերներից մեկին, որը ռազմաճակատ էր եկել Երևանի պետհամալսարանից: 792-րդ գրնդի կուսբյուրոյի քարտուղար քաղղեկ Գևորգ Զուլհակյանին, որը կուսակցական աշխատանքի մեծ փորձ ուներ և այժմ այն հմտորեն կիրառում էր մարտական պայմաններում:

Մարտական բոլոր ընկերների մասին պատմել հնարավոր չէ: Բայց մի ընկերոջ մասին կուզենայի, այնուամենայնիվ, պատմել: Մարտի 15-ի առավոտյան, երբ արևելքում նշմարվեց արևածագը, «մեռյալ գոտում» մի մարդ երևաց:

— Վաղեք դեպի խրամատը, — բղավեց ժամապահը:

Երևացողը գումարտակային կոմիսար Երեմ Խաչատրյանն էր: Ռազմաճակատ մեկնելուց առաջ նա Երևանի քաղաքային սովետի գործկոմի նախագահի առաջին տեղակալն էր, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ: Ժամապահի հրամանով կատարած

վազբից նրա շնչառութիւնը արագացել էր: Աչքերը ժպտում էին, թեև նրանց խորքում թախիծ կար թաքնված:

— Ինչպե՞ս ես, Երեմ Արկադելիչ,— հարցրի նրան:

Նա մի հայացք գցեց իր բամբակե բաճկոնին և կիրզայն կոշիկներին, որոնց վրա շորացել էր ցեխը, մեղմ ժպտաց ու իրեն հատուկ ձևով ասաց.

— Տեսնում ես, հալս էս ա, էլի:

Անկեղծ ասած, ես խղճացի Երեմին: Թվում էր, թե նրա համար դժվար է հարմարվել ռազմաճակատային կյանքին: Ձէ՞ որ նա արդեն 42 տարեկան էր և ժամանակից շուտ գիրացած: Դիվիզիայում խաշատրյանն աշխատում էր որպես սակրային գումարտակի կոմիսարի տեղակալ: Ընկերներին խնդրեցի թեյ պատրաստել: Ուզում էի հյուրասիրել Երեմին: Բայց ասացին՝ ջուր չկա, տնտեսական մասը չի հասցրել:

Երեմն սկսեց անհանգստութեան նշաններ ցույց տալ, հասկացնելով, թե քաղբաժնում երկար մնալ չի կարող...

Մեկնելով իր գումարտակը, խաշատրյանը վերցնում է երկու սակրային զինվոր և ուղղվում դեպի մոտակա լճակը: Թեև լճակի ջուրը պիտանի էր խմելու, բայց կեղտոտ էր... նրանում կային սատկած ձիեր, անգամ հիտլերականների դիակներ: Խմել չէր կարելի: Սակրավորները խոր փոս են փորում լճակի ափին և պահակներ կարգում: Ջուրը քամվելով լցվում էր փոսը: Այդ օրվանից դիվիզիան ջրի պակաս չզգաց: Նույն օրվա երեկոյան, երբ մենք վերադառնում էինք հրամանատարական կետ, քաղբաժնի բլինդաժում խաշատրյանը ձուկ էր տապակում:

— Որտեղի՞ց,— հարցրինք նրան:

— Ինչպե՞ս թե որտեղից: Սակրավորների գումարտակը անձար մարդկանց տեղ չէ: Մարդիկ այնտեղ հնարամիտ են: Որսացել ենք լճակում:

Հաջորդ օրը, երեկոյան, Երեմը նորից եկավ մեզ մոտ: Նա գրպանից հանեց մի նամակ ու կարդաց վերջին տողերը. «Երեմ Արկադելիչ, իմ կողմից սպանիր 10 ֆաշիստի և անպայման ինձ հաղորդիր այդ մասին: Թե չէ չեմ կարող քնել»: Նա նորից իր տեղը դրեց նամակը:

— Ա՛խ, Սողոմոն, Սողոմոն... Սողոմոն ես, բայց իմաստուն չես: Կարծում ես ֆաշիստ սպանելը նույնքան հեշտ գործ է, ինչ-

քան լավաշով խաշ ուտելը և վրան էլ Իջևանի հոնի օղի խմելը: Ես դեռ իմ բաժինն էլ չեմ սպանել:— Ինքն իրեն մոմուաց Երեմը:

Նամակի հեղինակը Երևանի Ստալինյան շրջսովետի գործկոմի նախագահ Սողոմոն Մխիթարյանն էր՝ Երեմի մոտ ընկերը:

Երեմ Արկադելիչ, Սողոմոնին գրեք, որ պատերազմ է, թող խաշով շտարվի, իսկ հոնի օղին ուղարկի մեղ,— կատակեցին ընկերները:

— Մի տեսեք, Իջևանի հոնի օղին Սողոմոնին կբավարարի՞, որ դեռ մեզ էլ բաժին ուղարկի,— կատակին կատակով պատասխանեց Երեմը:

Ռազմաճակատում Ե. խաշատրյանն իրեն դրսևորեց որպես լավ կազմակերպիչ: Դիվիզիայի ամենից ավելի լուրջ ու դժվարին առաջադրանքները բաժին էին ընկնում սակրային գումարտակին՝ որտեղ ստեղծել ականադաշտ, որտեղ ականազերծել, իսկ խաշատրյանը միշտ առջևում էր, դրանք կատարում էր հստակ ու ժամանակին: Ես ուրախ էի, որ իմ առաջին տպավորությունը սխալ դուրս եկավ: Շուտով Երեմ խաշատրյանը նշանակվեց նույն գումարտակի կոմիսար:

3. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՕՐՅԱՆ

Դիվիզիան պաշտպանական դիրքեր էր զբաղել 28,2 բարձունքի շրջանում, Վլադիսլավովկայից մոտ 8 կիլոմետր հյուսիս-արևելք: Դիվիզիայի հրամանատարական կետը գտնվում էր առաջավոր գծից մոտ 500 մետր հեռու, հարթ տեղանքում: Այդ նույն շրջանում էին տեղավորված նաև շտաբային ստորաբաժանումները և հրետանու կրակադիրքերը: Տեղանքը մշտապես զնդակոծվում էր: Դիտակետի համար ամենահարմար տեղը 28,2 բարձունքն էր: Բայց զնդապետ Զաքյանը հրաժարվեց դիտակետն այնտեղ սարքավորելու մտքից. և ճիշտ վարվեց: Գերմանացիները գիշեր-ցերեկ հրետանային, ականանետային ու զնդացրային կրակի տակ էին պահում բարձունքը, ինչպես նաև բարձունքի շրջակայքը: Այդ շրջանին տրվեց «մեռյալ գոտի» անունը: Գնդերի հետ կապը պահպանվում էր բարձունքն ու «մեռյալ գոտին» շրջանցելով: Կարգ ու կանոնի ամեն մի խախտում հղի էր մարդիկ կորցնելու վտանգով:

Այդպես պատահեց, օրինակ, դիվիզիայի դատախազ Գրիգորյանի և գինվորական տրիբունալի նախագահ Գուլբանյանի հետ: Մարտի 15-ին նրանք ծանր վիրավորվեցին: Այդ պահին քաղաքածնի բլինդաժում գտնվող ակումբի պետ Աղասի Զիլինգարյանը նրանց առաջին օգնություն ցույց տվեց և ուղարկեց բուժասանդումարտակ: Նրանք այլևս ռազմաճակատ չվերադարձան:

Դիվիզիայում շարունակվում էին պաշտպանական եռուն աշխատանքները՝ փորում էին նոր խրամատներ, ստեղծում հաղորդակցության ուղիներ, սարքավորում կրակակետեր և դիտակետեր, բողարկում դրանք: Իրենց դիրքերն առանձնահատուկ խնամքով էին բողարկում հրետանավորները: Թշնամու հարձակումներից մարդկանց պաշտպանելու, թշնամու յուրաքանչյուր քայլին մշտապես հետևելու, հակառակորդի կրակակետերը շարքից հանելու ուղղությամբ հրանոթների անձնակազմերի հստակ աշխատանքը վկայում էին պաշտպանության ներդաշնակ կազմակերպման, կարգ ու կանոնի և կարգապահության մասին:

Քանի դեռ դիվիզիան պաշտպանական մարտեր էր վարում, նրա շտաբը, նրա պետ մայոր Շուբայի գլխավորությամբ, հիմնականում զբաղվում էր պաշտպանական բնագծի կատարելագործմամբ, հսկում էր զորամասերում ու ստորաբաժանումներում տարվող մարտական պատրաստության ծրագրի իրականացմանը: Մնացած հարցերը, ինչպիսիք են՝ անձնակազմի համախմբումը հրամանատարների, կոմիսարների և կուսակցական կազմակերպությունների շուրջը, հրամանատարների և քաղաշխատողների մտահոգությունը իրենց ենթակաների առօրյա հոգսերի նկատմամբ, զորամասերում ու ստորաբաժանումներում քաղինֆորմացիաների կանոնավոր անցկացումը, մարտում մարդկանց փոխադարձ օգնության անհրաժեշտության ոգով դաստիարակումը և այլն, իրագործում էր քաղբաժինը իր բոլոր օղակների՝ քաղաշխատողների, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների միջոցով: Ամբողջ աշխատանքը տարվում էր կուսակցության Կենտկոմի, Գերագույն գլխավոր հրամանատարության դիրեկտիվների, առանձնապես պաշտպանության ժողովրդական կոմիսարի 1942 թ. փետրվարի 23-ի № 55 հրամանում նշված խնդիրների կատարման ոգով:

Պատերազմում մարդիկ շատ շուտ են ճանաչում միմյանց /

մտերմանում: Հրամանատարների ու քաղաշխատողների խնդիրն էր բոլոր միջոցներով ու մեթոդներով աջակցել ու նպաստել դրան: Մարտիկների ու հրամանատարների հետ աշխատանք էր տարվում նրանց կրակային դիրքերում: Կուսակցական աշխատանքի կենտրոնում էր գտնվում կոմունիստների ազդեցությունն ու անձնական օրինակը: Քաղբաժինը բանակում օժտված է կուսակցական-քաղաքական օրդանի իրավունքներով, և նրա իրավասություն մեջ են մտնում զորքերի կյանքի ու զործունեության բոլոր հարցերը: Նա Կենտրոնական կոմիտեի գծի իրականացնողն է զորամասերում: Ամեն օր քաղբաժինը ստանում էր ամենատարբեր բովանդակությամբ ինֆորմացիաներ: Նա մշակում, վերլուծում, ընդհանրացնում էր դրանք և ըստ այնմ էլ հաշվի առնում ամենօրյա դաստիարակչական պրակտիկ աշխատանքում:

Ջորամասերի անձնակազմի քաղաքական ու ռազմական դաստիարակության սիստեմում մեծ տեղ էր տրվում լենինյան պլեադայի հերոսական օրինակին, ՍՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակին, կարմիր բանակի սխրանքներին՝ Նևայի տակ նրա նորակազմ ջոկատների հաղթանակին դերմանական օկուպանտների դեմ, քաղաքացիական կռիվների հերոսամարտերին, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմում մեր փառապանծ գվարդիականների օրինակին: Մեծ տեղ էր հատկացվում սովետական ժողովուրդների նախնիների փառապանծ սխրանքներին, հատկապես հայ և ռուս ժողովուրդների պատմական անցյալին:

Մեզ մոտ նախկինում երբեք այնպես ակտիվորեն ու լայնորեն չէր պրոպագանդվել Նապոլեոնի արշավանքի դեմ 1812 թվականի Հայրենական պատերազմի հերոսական, ինչպես Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի առաջին ամիսներին. Որքան մեծ էր հայրենիքի վրա կախված վտանգը, և որքան ուժեղ էր թըշնամին, այնքան ցայտուն և ուժգնորեն էր դրսևորվում ժողովրդի ձգտումը, կամքը՝ մոբիլիզացնել բոլոր ուժերը թշնամուն ջախջախելու համար: Մահացու վտանգի օրերին կոմունիստական կուսակցությունը կոշ արեց կովել ռուս քաջ նախնիների՝ Ալեքսանդր Նևսկու, Դիմիտրի Դոնսկոյի, Կուզմա Միխինի, Դիմիտրի Պոժարսկու, Ալեքսանդր Սուվորովի, Միխայիլ Կուտուզովի, ինչպես նաև սովետական մյուս ժողովուրդների քաջ որդիների օրինակով և հաղթել թշնամուն: Սովետական մարտիկների մեջ դաստիարակել

հայրենասիրական նոր խիզախումների ու հաղթանակների կամք: Պատահական չէ, որ մեր երկրի վրա հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ հարձակման ժամանակ սովետահայ կուլտուրայի բազմաթիվ գործիչներ մեր քաջարի նախնիների սխրանքները դարձրին գրականության թեմա: Դերենիկ Դեմիրճյանը գրեց «Վարդանանք», Ստեփան Զորյանը՝ «Պապ թագավոր» վեպերը, Նաիրի Զարյանը՝ «Արա Գեղեցիկ» դյուցազներգությունը: Կինոստուդիան նկարահանեց «Դավիթ Բեկ» ֆիլմը, իսկ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը պատանու կրքոտությամբ գրեց իր «Ռազմակոչը»՝ «Դավաճան երկրից մեր նենգ թշնամին», «Շղթա է բերում, լուծ ու կապանքներ՝ ընկճելու ազատ մեր եղբայրներին: Եվ անարգելու հայրենիքը մեր»: «Դեպի ռազմի դաշտ, դեպ հերոսացում, դեպի բարձունքը մեծ Հաղթանակի», — կոչ էր անում բանաստեղծը: Նա միաժամանակ դիմում էր Դավիթ Բեկի երգմանն ու հայրենանվեր ոգուն:

Անցնելով խրամատներով, երբեմն լսում էինք մարտիկներից «Ես Մամիկոնյանների ցեղից եմ», «Ես Դավիթ Բեկի հետնորդն եմ», «Գևորգ Մարզպետունու թոռները չեն վերադառնա հայրենի հարկի տակ, բանի դեռ մեր սովետական հողի վրա քայլում է թեկուզ մեկ ֆաշիստ» արտահայտությունները:

«Պատմության մեջ քիչ չեն եղել դեպքեր, երբ այս կամ այն լուրջ պահին ժողովուրդները դիմել են իրենց «անցյալի ոգիներին», նրանց մարտական լոզունգներին»¹:

Բնականաբար, անցյալի հայրենանվեր տրագիցիաների ամեն մի վերհիշում, այդ թվում և նախնիների կերպարներին դիմելը, տեղի են ունենում նոր հարաբերությունների որոշակի պայմաններում ու նոր խնդիրներին համապատասխան:

Ռազմիկների հայրենասիրական դաստիարակության գործում կարևոր տեղ ունի տպագիր պրոպագանդան: Դիվիզիայի «Հանուն արդար գործի» թերթը լույս տեսավ մինչև 1942 թվականի մարտի 10-ը: Մարտի 13-ին լույս տեսավ դիվիզիայի «Հայկական սնայպեր» թերթի առաջին համարը, որի խմբագիրն էր Գուրգեն Հովնանը: Թերթի այդ համարի առաջին էջում խմբագրությունը հրապարակել էր զինվորական երգումը, մարտիկներին, հրամանա-

տարներին ու քաղաշխատողներին կոչ էր անում. «Ոչնչացրեք ֆաշիստական մարդակերներին, մի թողեք նրանց շունչ քաշել: Խփեք նրանց անխնա ու անվրեպ, խփեք ամենուր, որտեղ նրանք կհայտնվեն: Մեր գործն արդար է, թշնամին կջախջախվի, հաղթանակը մերը կլինի»: Նույն համարում զետեղված էր Սովինֆորմբյուրոյի հաղորդագրությունը ռազմաճակատներում տիրող դրության մասին: Թերթի մի էջը հատկացված էր սովետական հողի վրա գերմանական զավթիչների կատարած դաշնակցություններին վերաբերող նյութերին՝ կախաղաններ ու սպանություններ, խոշտանգված ու ալյանդակված դիակներ, բռնություններ, ավերածություններ, հրկիզումներ... «Արյան դիմաց՝ արյուն», «Մահվան դիմաց՝ մահ», «Վրեժ, վրեժ մարդակերներից», — կոչ էր անում թերթը: Միաժամանակ թերթը քաղվածքներ էր բերում սովետական թիկունքից ստացված նամակներից, որոնք ռազմիկներին կոչ էին անում. «Ոչնչացրե՛ք նենգ ոճրագործներին, արնախում ֆաշիստներին: Միայն հաղթանակ: Տուն դարձեք հաղթանակով»:

«Հայկական սնայպերը» մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների մարտական ուղեկիցն էր, խորհրդատուն ու բարեկամը: Այժմ թերթերով այդ թերթի էջերը, կարելի է առանց չափազանցության ասել, որ նա մեծ ավանդ է մուծել դիվիզիայի անձնակազմի դաստիարակության և մարտական խնդիրների կատարման գործում:

Ակտիվ պաշտպանությունը առաջ քաշեց սնայպերական շարժում ծավալելու խնդիրը: Քաղբաժինը սնայպերական շարժումը դիտում էր որպես պաշտպանությունում տարվող քաղաշխատանքի ամենակարևոր խնդիրներից մեկը: Այդ շարժումը մեծ հետաքրքրություն առաջացրեց հրաձգային ստորաբաժանումներում: Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր ավելի շատ անվրեպ կրակողներ ունենալ: Սնայպերների առջև խնդիր էր դրվում ոչնչացնել հակառակորդի սպաներին, կրտսեր հրամանատարներին, դիտորդներին, զնդացրորդներին, սնայպերներին, կապավորներին և այլն:

Մարտի 17-ի առավոտյան քաղբաժին այցելեցին վրացական 224-րդ դիվիզիայի ներկայացուցիչները: Նրանք իրենց հետ բերել էին սոցիալիստական մրցության պայմանագրի նախագիծը: Տեղի ունեցավ շտաբի և քաղբաժնի համատեղ խորհրդակցություն, որին մասնակցում էին նաև դիվիզիայի հրամանատարն ու կոմիսարը:

¹ Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 8, стр. 119.

Պայմանագրի նախագիծն ընդունվեց միաձայն: Խորհրդակցությունը պայմանագրի նախագիծին ավելացրեց միայն մի կետ. «Սույն պայմանագրի կատարման շափանիշ կժառայեն մարտական գործողությունների արդյունքները»: Քաղաքաժնի և շտաբի աշխատողներն իսկույն մեկնեցին գնդերը, գումարտակներն ու դիվիզիոնները՝ այնտեղ սոցմրցման պայմանագրի նախագիծը քննարկելու: Ամենուրեք պայմանագրի նախագիծը արժանապաստանաբար ամենազերմ հավանության:— Պայմանագրում իհայտ եկավ մի կետ ևս. «Մեր լողունգն է՝ պայքարել դիվիզիան գվարդիական դարձնելու համար»:

Կրակային մենամարտը պաշտպանական գծում շարունակվեց 18 օր: Ո՛չ գերմանացիները, ո՛չ էլ մերոնք այդ օրերին հարձակողական գործողություններ չձեռնարկեցին: Կատարվում էր հակառակորդի փոխադարձ հետախուզություն: Հաճախ մարտով, ակտիվորեն գործում էին սնայպերները: Չէր դադարում հրետանային ու ականանետային կրակը: Առանձին ակտիվություն էին ցուցաբերում թշնամու ականաձիգները: Հարկ էր լինում հաճախակի տեղափոխել հրետանու, ականանետների և գնդացիների կրակակետերը, ինչպես նաև դիտակետերը: Թշնամու ավիացիան համարյա ամեն օր ուժբակոծում էր դիվիզիայի հրամանատարական կետի շրջանը:

Մարտի 16-ին, օդային մարտի ժամանակ, հիտլերականները խփեցին մեր ինքնաթիռներից մեկը, որն ընկավ «չեզոք» գոտում՝ հիտլերականների դիրքերին ավելի մոտ: Խփված ինքնաթիռը մխրճվել էր գետնի մեջ: Կասկած չկար, որ օդաչուն զոհվել է: Ֆաշիստները փորձեցին մոտենալ ինքնաթիռին: Մեր մարտիկները կրակեցին նրանց վրա, թույլ շտալով մոտենալ մեր ինքնաթիռին: Հենց որ մթնեց, վաշտի հրամանատարը խնդիր տվեց կարմիրբանակայիններ ն. Եղիկյանին, Գրիգոր Ղազարյանին և Իվան Լիժնիկին՝ անպայման բերել օդաչուի դիակը: Կարմիրբանակայինները գործի անցան: Նրանք ընկան հակառակորդի կրակի տակ, բայց չնահանջեցին: Սողեսող հասան ինքնաթիռին: Հանեցին օդաչուի դիակը, վերցրին փաստաթղթերը և Եղիկյանի ուսերով բերեցին: Գերմանացիները փոթորկալի կրակ տեղացին մեր մարտիկների վրա, բայց ապարդյուն, հերոս օդաչուի դիակը փրկվեց անարգանքից և թաղվեց պատվով:

Մարտի 18-ին, օդային մարտերի ժամանակ, դիվիզիայի մար-

տակարգերի վրա մեր օդաչուները խփեցին մի «մեսսերշմիտ», որը նույնպես ընկավ «չեզոք» գոտում, բայց գերմանացիների առաջավոր գծին ավելի մոտ: Սերժանտ Խանկելը դիտարկումներով պարզեց, որ «մեսսերշմիտը» պաշտպանվում է գերմանացիներից կողմից: Նա եկավ այն համոզման, որ գերմանացիները մտադիր են դիշերով քարշ տալ-տանել ինքնաթիռը: Այդ մասին ղեկուցելով հրամանատարին, Խանկելը ռազմիկների մի փոքր խմբով դիշերը հասավ ինքնաթիռին: Պահակները նկատեցին մեր ռազմիկներին ու կրակեցին նրանց վրա: Խանկելը որոշեց գրոհել պահակախմբի վրա: Կարմիրբանակայինները ոչնչացրին գերմանական պահակախումբը, պայթեցրին ինքնաթիռը և հաջողությամբ վերադարձան իրենց դիրքերը¹:

4. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ 22-ՐԴ ՏԱՆԿԱՅԻՆ ԳԻՎԻԶԻԱՅԻ ԶԱԽՉԱԽՈՒՄԸ

Ձորերի կյանքում լինում են պահեր, երբ ավելի լիակատար են դրսևորվում նրանց մարտական ու բարոյական հատկությունները: Մարտի 18-ին 390-րդ դիվիզիան ստացավ հարձակման մասին 51-րդ բանակի հրամանատարի հրամանը: Ժամը 10-ին դիվիզիայի հրամանատարը քաղաքաժնի բլինդաժում գնդերի ու առանձին գումարտակների հրամանատարներին ու կոմիսարներին կանչեց խորհրդակցության: Նա համառոտակի շարադրեց դիվիզիայի ու գնդերի խնդիրները՝ յուրաքանչյուրին առանձին-առանձին, հրամաններ տվեց շտաբին, հրետանու, կապի, սակրային, հետախուզական և մյուս ստորաբաժանումների հրամանատարներին: Դիվիզիայի կոմիսարը, քաղաշխատողները, ինչպես նաև մի քանի շտաբային սպաներ մեկնեցին ստորաբաժանումները՝ պարզաբանելու մարտական առաջադրանքը: 792-րդ գնդի հրամանատար կապիտան Ա. Կոպովը մարտական խնդիրը շարադրելուց հետո հետևակային գումարտակների հրամանատարներին հրամայեց՝ դասակներին քաղղեկների առջև խնդիր դնել ապահովելու ռազմամթերքի և պարենի անխափան տեղափոխումը առաջավոր դիժ: Այնուհետև

¹ «Հայկական սնայպեր», № 7, 24 մարտի 1942:

գնդի պրոպագանդայի հրահանգիչ Նալբանդյանին հրամայեց՝ «Մարկ, կլինես ինձ հետ հրամանատարական կետում, միայն հիշիր, իմ ետևից չվազես: Իսկ դու, կոմսոմոլ, կլինես ականանետային զուամարտակի հրամանատարական կետում»: Այդ «կոմսոմոլը» գնդի ԼԿԵՄ բյուրոյի քարտուղար Սարգսյանն էր, որը երեք տարով մեծ էր գնդի հրամանատարից:

Հարձակման հրամանն ստանալուց առաջ Հայաստանից ստացված ծանրոցները մարտիկներին բաժանելիս 789-րդ գնդի վաշտի քաղղեկ Արամայիս Խանզադյանը ծանրոցներից մեկում հայտնաբերեց Ալավերդու պղնձի կոմբինատի բանվորների ու ծառայողների նամակը՝ ուղղված 390-րդ դիվիզիայի ռազմիկներին: Խանզադյանը կոմբինատական և կուսակցական աշխատանքի մեծ փորձ ուներ, դիտեր աշխատել մարդկանց հետ: Նա ռազմաճակատ էր եկել Ղուկասյանի շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնից, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ էր: Ալավերդու բանվորների նամակը նա կարգաց մարտիկների մոտ, պատմեց Ալավերդու պղնձագործների աշխատանքային հաջողութունների մասին, ինչպես նաև այն մասին, թե ինչով է Ալավերդու կոմբինատը օգնում ռազմաճակատին: Ռազմիկները ալավերդցիների նամակն ընդունեցին որպես պատվիրան: Նրանք գրեցին պատասխան նամակ, որը վերջանում էր այսպես. Մեր խնդիրն է «Սովետական Միության, մյուս ազգութունների մարտիկների հետ միասին մաքրել Ղրիմը գերմանական և ռումինական բանդաներից: Մեր պարտքը կկատարենք պատվով: Հիտլերի կեղտոտ գազանային թաթը չի հասնի ծաղկող Հայաստանին»¹:

Գիշերը կատարվեց ուժերի վերախմբավորում: Հրաձգային գնդերը ելման դիրքեր գրավեցին Կարպեչ գյուղի շրջանում: Սակրավորները ճեղքման հատվածում ականազերծեցին ականապատված դաշտերը: Մի գիշերվա ընթացքում հանվեց շուրջ 1200 ական: Այդ գործում աչքի ընկավ լեյտենանտ Եղիազարյանի սակրային դասակը:

Մարտի 19-ին, ժամը 5-ին, սկսվեց հրետանային պատրաստութունը: Առաջին էշելոնի գնդերը գրոհեցին գերմանական պաշտպանութան առաջավոր գծի վրա: Հարվածն ուղղված էր դե-



Սիմոն Զաքյան, դիվիզիայի հրամանատար



Թորգոմ Շահինյան, դիվիզիայի կոմիսար



Բագրատ Գանիկյան, հրետանու հրամանատար

¹ «Հայկական սնայթեր» № 4, 19 մարտի 1942:



Մարտական դրոշի հանձնումը զնդին



Հայ զրոյները 390-րդ դիվիզիայում

պի հարավ-արևմուտք: Գիվիզիայի խնդիրն էր՝ ձեռք բերել հակառակորդի պաշտպանութունը, հետապնդելով հակառակորդին՝ գրավել Նովո-Միխայլովկայի մատուցներում ընկած երեք բլուրները, իսկ հարձակման երկրորդ փուլում գրավել Նովո-Միխայլովկա բնակավայրը: Մեր աջ թևում հարձակվում էր 398-րդ դիվիզիան:

Հակառակորդի կրակի ներքո հրաձգային ստորաբաժանումներն ընդհուպ մոտեցան թշնամու դիրքերին: Գերմանացիները համառ դիմադրութուն էին ցույց տալիս: Սկսվեց թեժ մարտը, որը տևեց մի քանի ժամ: Օրվա կեսին 784-րդ և 792-րդ զնդերի ստորաբաժանումները գրոհով ներխուժեցին գերմանացիների խրամատների առաջին գիծը: Հակառակորդի մարտակարգերի մեջ առաջինը մխրճվեց կոմունիստ խաչատուր Սարկիսովը, իր ետևից տանելով ընկերներին: Նա ոչնչացրեց 10 ֆաշիստի: Մարտի մի այլ տեղամասում կարմիրբանակայիններ Ոսկանյանը և Մարգիանին կարճ վազքով մոտեցան և համարձակորեն ներխուժեցին թշնամու խրամատները, ոչնչացրին 8 հիտլերականի: Մարգիանին վիրավորվեց, բայց շարունակեց մարտը¹:

Կատաղի մարտեր բորբոքվեցին հակառակորդի մարտակարգերում, տեղ-տեղ ուղղվելով դիմեցին ձեռնամարտի, նետեցին նոնակներ: Խրամատներում թողնելով սպանվածներին, գերմանացիները նահանջեցին: Գիվիզիայի հրամանատար զնդապետ Զաբյանը մարտի մեջ մացրեց մայր Մալխասյանի 789-րդ ռեզերվային գունդը: Գնդերն սկսեցին հետապնդել մարտով նահանջող հակառակորդին, մեծ կորուստներ պատճառելով նրան: Առաջավոր զուամրտակները երեկոյան հասան բլուրների շրջանը, բայց դրանք գրավել չկարողացան: Նրանք դեմ առան հակառակորդի ուժեղ ամրացված դիրքերին: Գնդապետ Զաբյանը հրամայեց ամրանալ ձեռք բերած բնագծում՝ բլուրների առջև, և մինչև առավոտ զուամրտակները կարգի բերել հետագա առաջադրանքները կատարելու համար:

Երեկոյան դիվիզիայի շտաբը և քաղաքայինը ամփոփեցին հարձակման առաջին օրվա արդյունքները: Ձեռք բերված հակառակորդի պաշտպանութունը և մեծ զոհեր պատճառելով նրան, դիվիզիան օրվա ընթացքում առաջ շարժվեց մոտավորապես 5 կիլոմետր:

¹ Տե՛ս «Հայկական սնայվեր», № 4, 19 մարտի 1942:

Առանձնապես ուրախալի էր, որ այդ օրը դիվիզիայի կորուստները բիշ էին:

51-րդ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Լվովը և նրա տեղակալ գեներալ-մայոր Բորոնովը զանգահարեցին զնդապետ Զաքյանին, իրենց բավականութունն արտահայտեցին դիվիզիայի հաջողութունների առթիվ և շնորհավորեցին նրա անձնակազմին: Ինչպես հետո հաղորդեց Զաքյանը, գեներալ-լեյտենանտ Լվովն ասել էր, որ ռազմաճակատի և բանակի հրամանատարութունը «հիացած են դիվիզիայի գործողութուններով ու նրանց մարդկանց խիզախությամբ»: Քաղբաժինն իսկույն օգտագործեց այդ հեռախոսային խոսակցութունը: Գնդերն ու ստորաբաժանումները մի քանի րոպեից հետո իմացան բանակի հրամանատարի խոսքերը: Դիվիզիայի հրամանատար Զաքյանը իր մոտ կանչեց ինձ և ասաց. «Զանգահարեց Մեխլիսը, խնդրեց մարտիկներին, հրամանատարներին և քաղաշխատողներին հաղորդել իր շնորհավորանքները՝ դիվիզիայի հաջող գործողութունների առթիվ»: Հրամանատարության շնորհավորանքները քաջալերեցին դիվիզիայի անձնակազմին և ընդունվեցին մեծ գոհունակությամբ:

Հաջորդ օրվա լուսաբացին դիվիզիայի հրամանատարը հրամայեց վերսկսել գրոհը: Սակայն այդ օրը, մարտի 20-ին, իրադրությունը դիվիզիայի համար բարդացավ: Դիվիզիայի թևերը բաց էին: Վերլուծելով իրադրությունը, Զաքյանը 784 և 792-րդ գնդերի հրամանատարներին կարգադրեց ուժեղացնել թևերը: Բլուրների մոտ հանդիպելով թշնամու համառ դիմադրությանը, երկու գնդերը որոշեցին դրանք շրջանցել թևերից: Նրանք գրավեցին թշնամու մի քանի խրամատներ, բայց բլուրները գրավել չկարողացան: Նրանց հրամայվեց դիրքավորվել այդ բնագծում: Հարձակվող 390-րդ և 398-րդ դիվիզիաների հարձակման ճակատը նեղ էր, իսկ տեղանքը հարթ: Մեր դիվիզիայի ձախ թևում, հարձակման գոտուց արևելք՝ Կոյ-Ասանում և հարձակման գոտուն ու երկաթգծին գուգահեռ բարձունքներին գերմանացիներն էին: Աջ թևում տեղանքը մի փոքր բարձրադիր էր և սահմանափակում էր դիտարկումները: Հենց այս թևում, Նովո-Միխայլովկայից հյուսիս-արևմուտք, մարտի 20-ի առավոտյան անսպասելի հայտնվեցին հակառակորդի տանկերը: Հարձակվում էր Ֆրանսիայից հենց նոր բերված գերմանական 22-րդ տանկային դիվիզիան: Դիվիզիայի կազմում կար

ավելի քան 100 տանկ, որոնցից յուրաքանչյուրի վրա նստած էին ավտոմատավորներ, իսկ մի մասն էլ գալիս էր նրանց հետևից: 22-րդ տանկային դիվիզիան հարվածեց 390-րդ և 398-րդ դիվիզիաների կցվանքին: Մեր հրետանին արգելափակիչ կրակ տեղաց հակառակորդի զրահամեքենաների վրա, հետևակը ջանաց թշնամու հետևակը անջատել տանկերից և ոչնչացնել: Սկսվեց ծանր ու ահեղ մի գոտեմարտ, որի ելքից էր կախված մեր պաշտպանվող դիվիզիաների գոյութունը: Օրվա կեսին հակառակորդի տանկերը աչից ներխուժեցին մեր մարտակարգերը: Բաց դաշտում հետևակը գոտեմարտի բռնվեց թշնամու պողպատյա հրեշների դեմ: Բլուրների շրջանում գտնվող մեր ստորաբաժանումները փաստորեն կտրվեցին դիվիզիայի հիմնական ուժերից և մարտը շարունակեցին ինքնուրույն: Հակառակորդը ձգտում էր պողպատյա հրեշների թրթուրներով տրորել, հողին հավասարեցնել մեր մարդկանց:

Սակայն հակառակորդին դիմակայեց սովետական մարդու կամքը: Ամբողջ դիվիզիան, բանակային հրետանու աջակցությամբ, մահու և կենաց կռիվ սկսեց թշնամու դեմ: Օրվա ընթացքում մի քանի անգամ կրկնվեցին հակառակորդի գրոհները: Նրա 35-րդ տանկային գնդի մի քանի տանկ թափանցեցին դիվիզիայի հրամանատարական կետի շրջանը, իսկ առանձին տանկեր նույնիսկ անցան նրա թիկունքը: Այս պայմաններում դիվիզիային օգնության եկան Միխայլովսկու, Զայցևի, Տիխոնովի և հարևան 138-րդ դիվիզիայի հրետանավորները, Կալինինի և Մինենկոյի տանկիստները: Հրետանավորները, ականաձիգները, նոնակաձիգները, զնդացրորդները, բոլորը՝ զինվորից սկսած մինչև հրամանատարը, ով ինչով կարող էր, մարտի ելան տանկերի դեմ: Մարտադաշտը կրակի ու բոցերի մեջ էր: Ծանր, հեղձուցիչ ծուխը պատել էր ամբողջ դաշտը: Այս ու այնտեղ այրվում էին թշնամու տանկերը, բայց արյունահեղ կռիվը շարունակվում էր: Երկու օր շարունակվեց կատաղի մարտը: Դիվիզիան, հարևան զորամասերի հրետանավորների աջակցությամբ, գլխովին ջախջախեց գերմանական 22-րդ տանկային դիվիզիան: Հակառակորդը մարտի դաշտում թողեց 47 խփված տանկ: Տանկերի վրա նստած ավտոմատավորներից ոչ մեկին համարյա չհաջողվեց խուսափել մահից: Երկու օրվա մարտերի ընթացքում հակառակորդի 170 ու 18-րդ հետևակային և 22-րդ տանկային դիվիզիաները կորցրին 6000 մարդ: Հակառակոր-

դի 22-րդ դիվիզիայի ջախջախման գործում հայ մարտիկները ցուցաբերեցին անօրինակ հերոսություն:

Գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի ջախջախումը մեկ անգամ ևս ցույց տվեց 390-րդ դիվիզիայի ու նրա մարտիկներին բարոյական ոգու կայունությունը: Այդ մարտը պատվավոր տեղ գրավեց նրա մարտական տարեգրության մեջ: Մարտի 21-ի առավոտյան գնդապետ Ջաքյանը հաղորդեց 51-րդ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Լվովի հետ ունեցած զրույցի մասին: Լվովը շնորհավորել էր դիվիզիայի անձնակազմին՝ թշնամու տանկերի դեմ մղված պայքարում ունեցած հաջողության առթիվ և ավելացրել. «Եվս մի այդպիսի հաջողություն, և մենք դիվիզիան կներկայացնենք զվարդիականի կոչման»:

Կարմիր բանակի Գերագույն զլխավոր հրամանատարության Չորակայանի ներկայացուցիչ Լ. Մեխլիսը 1942 թ. ապրիլի 3-ին 24(բ) կ Կենտկոմին հեռագրեց. «Ջաքյանի ղեկավարությամբ հայկական զորամասերը տոկունությամբ են կռվում գերմանական զավթիչների դեմ, մարտի 20-ին հետ մղեցին գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի տանկային գրոհը, որի ժամանակ հակառակորդը հսկայական կորուստներ կրեց: Բանակի մյուս զորամասերի հետ միասին հայ մարտիկները այնպես ջախջախեցին հակառակորդին, որ նա կռվի դաշտում թողեց 47 տանկ»¹:

Այդ հիշարժան օրերից անցել է 33 տարի: Կցանկանայի արժանին հատուցել նրանց, ովքեր զոհվեցին հանուն մեր սոցիալիստական հայրենիքի, և նրանց, ովքեր իրենց անձնական օրինակով և խոսքով սխրանքների ոգեշնչեցին մարտիկներին: 1942 թվականի մարտի 20-ին և 21-ին 390-րդ դիվիզիան մեծ կորուստներ կրեց: Բլուրների շրջանում եղած ստորաբաժանումները կռվեցին զլխավոր ուժերից կտրված և ցուցաբերեցին անօրինակ հերոսություն: 789-րդ գնդի վաշտերից մեկում հրամկազմից մնացել էին միայն վիրավոր քաղղեկ Պապիկ Ավալյանը և դասակի հրամանատար լեյտենանտ Օռլովը: Վաշտի հրամանատարությունն իր վրա վերցրեց քաղղեկ Պ. Ավալյանը և ծանր մարտերով այն դուրս բերեց շրջապատումից:

Գրոհներից մեկի ժամանակ ծանր վիրավորվեց քաղղեկ Արա-

մայիս Խանզադյանը: Մարտիկները նրան դուրս բերին մարտադաշտից: Բուժսանգումարտակից հետո Խանզադյանը էվակուացվեց Կերչի հոսպիտալներից մեկը, բայց նրա հետագա ճակատագիրը պարզել հնարավոր չեղավ:

Թշնամու տանկերի դեմ մղված պայքարում քաջի մահով զոհվեցին հրաշալի շատ մարդիկ: Այդ թվում Գրիգոր Մալենցյանը, Մարկ Նալբանդյանը և շատ ուրիշներ: Այդ մարտում կտրվեց շատ խիզախ հայրենասերների կյանքի թելը:

Հարձակումն սկսվելուց առաջ շատերը դիմեցին կուսակցական կազմակերպություններին, խնդրելով իրենց ընդունել կուսակցության շարքերը: «Ցանկանում եմ մարտի գնալ որպես կոմունիստ: Խնդրում եմ ինձ ընդունեք կուսակցության շարքերը... Ես անխնա կլինեմ անիծյալ թշնամու նկատմամբ և իմ հրանդթով կոչնչացնեմ նրան», — գրում էր հրետանավոր կարմիրբանակային Ավրամկինը: Նա մարտի 20-ին պատվով կատարեց իր խոստումը:

Գնդացրորդներ Հակոբյանն ու Դավթյանը իրենց «մաքսիմ» գնդացրով ոչնչացրին տասնյակ հիտլերականների, իսկ ավտոմատավոր Հայրապետյանի անձնական հաշվում մարտերի երկու օրվա ընթացքում արդեն կային շատ սպանված ֆաշիստներ: Հայրապետյանը վիրավորվել էր, բայց շարունակում էր մարտնչել: Լավ էին աշխատում կապավորները: Սերժանտ Քոչարյանը օրվա ընթացքում թշնամու կրակի տակ մի քանի անգամ վերականգնեց հեռախոսային կապը, այդ թվում՝ նաև վիրավորվելուց հետո: Վաշտի հրամանատարը հրամայեց նրան գնալ բուժսանգումարտակ, իսկ Քոչարյանը պատասխանեց.

— Հետո ինչ, որ վիրավորվել եմ, հո սիրտս աշխատում է:

Կապի վաշտի քաղղեկ Իշխան Պատվականյանը կապավորների հետ վերականգնում էր կապը մարտի ամենավտանգավոր տեղամասերում: Գերազանց էին գործում սակրավորները՝ կարմիրբանակայիններ Չեքարևը, Ֆաշենկոն և լեյտենանտ Եղիազարյանը: Բուժսանգումարտակի երկու աղջիկներ՝ Վարդուշ Հալիվորյանը և Գրիգորյանը այդ երկու օրվա ընթացքում մարտադաշտից դուրս բերեցին 100-ից ավելի վիրավոր:

Գնդերի կուսբյուրոների քարտուղարները հարձակման ժամանակ գտնվում էին վաշտերում: 792-րդ գնդի կուսբյուրոյի քարտուղար Գեորգ Զուլհակյանը վիրավոր վիճակում չթողեց մարտա-

¹ Տե՛ս «Հայկական սնայպեր» 22 ապրիլի 1942:

դաշտը: Քարտուղարի անձնական օրինակը վստահություն ներշնչեց մարտիկներին, բարձրացրեց նրանց ոգին:

Մարտական բարձր հատկություններ դրսևորեցին գնդերի հրամանատարներ ու կոմիսարներ՝ մայրոնեք Սեգնեկը, Մալխասյանը և կապիտան Ակոպովը, գումարտակային կոմիսարներ Ազնավուրյանը, Մուրատովը և ավագ քաղղեկ Գրիգորյանը: 954-րդ հրետգնդի հրամանատար մայրո կորշունովը և կոմիսար Սուչկովը մարտի 20-ին ամբողջ օրը գտնվում էին մարտկոցների կրակակետերում և անձամբ ղեկավարեցին նրանց նշանառու կրակը թըշնամու տանկերի դեմ: 792-րդ գնդի հրամանատար կապիտան Ակոպովը բացառիկ քաջություն ու խիզախություն դրսևորեց բարդ և դժվարին պայմաններում: Երբ թշնամու տանկերը ներխուժեցին գնդի մարտակարգերը, Ակոպովը, հստակ հրամաններ տալով, նետվեց դեպի գնդային հրանոթները և կանգնեց հրետանավորների կողքին, նրանք սկսեցին դիմահար խոցել թշնամու մեքենաները: Տեսնելով հրամանատարին բաց մարտադաշտում, ուղմիկները սկսեցին ավելի համարձակորեն գործել: Առանձին ականանետային դիվիզիոնի հրամանատար կապիտան Ռուբեն Ավանեսովը մարտում ցուցաբերեց հրամանատարական բարձր կազմակերպվածություն և սառնասրտություն, հստակորեն վարեց դիվիզիոնի կրակը: Գիվիզիայի հրետանու պետ փոխգնդապետ Բագրատ Դանիելյանը հմտորեն էր ղեկավարում հրետանային զորամասերի և ստորաբաժանումների գործողությունները: Գիվիզիայի հրամանատար գնդապետ Զաքյանը և կոմիսար Շահինյանը անընդհատ հետևում էին մարտադաշտում կատարվող իրադարձություններին, ժամանակին անհրաժեշտ օգնություն հասցնում գնդերին ու ստորաբաժանումներին: Գնդապետ Զաքյանը հստակ հրամաններ էր տալիս գնդերի հրամանատարներին և հրետանու պետին՝ թշնամու տանկերի դեմ պայքարելը արդյունավետ դարձնելու համար, միաժամանակ ապահովելով հարևան դիվիզիաների հրետանու փոխգործողությունը հակառակորդի տանկային զորամասերի դեմ մղվող մարտերում: Մարտի 20-ի ծանր մարտի բարդ պայմաններում նա ոչ մի վայրկյան ձեռքից բաց չթողեց գնդերի ղեկավարումը:

Երեկոյան, երբ մարտը հանդարտվեց, «Հայկական սնայպեր» թերթի խմբագիր Գուրգեն Հովնանի հետ գնացինք բուժսանգումար-

տակ՝ վիրավորների հետ տեսակցելու: Վիրավորները շատ էին, բժիշկներն աշխատում էին խիստ լարված: Բայց լուսավորություն բացակայության հետևանքով նրանք չէին կարող գիշերն աշխատել: Վիրավորները մինչև հաջորդ առավոտ մնում էին առանց որևէ բուժօգնության: Մենք դիմեցինք կտրուկ միջոցների: Ելքը գտնվեց: Ակումբի պետ ավագ քաղղեկ Աղասի Զիլինգարյանի միջոցով մեխանիկը կազմակերպեց վիրահատարանի լուսավորությունը, ապահովելով նրա գիշերային աշխատանքը:

5. ԿՈՅ - ԱՍԱՆԻ ՄԱՐՏԵՐԸ

Մարտի 23-ի ցերեկը բանակի հրամանատարը դիվիզիայի առաջ խնդիր դրեց՝ հարձակվել դեպի հարավ-արևելք, վլադիսլավկա քաղաքից մոտ 8 կիլոմետր հյուսիս-արևելք ընկած շրջանում գրավել երկաթգիծը և նրան հարող Կոյ-Ասանը:

Հարձակման նոր տեղամասը որքան անձեռնտու էր մեզ, նույնքան ձեռնտու էր հակառակորդի համար: Երկաթգծի երկարությունը մեզ լանջերով բարձունքների վրա գերմանացիների պաշտպանության գիծն էր: Մանևրելու և հակառակորդին թևանցելու ամեն մի հնարավորություն բացառված էր: Գնդերը ելման դրություն գրավեցին ձորալանջի կողմից, հիտլերականների քթի տակ: Ռեզերվները մոտակա թիկունքում քողարկելու ոչ մի հնարավորություն չկար: Ներքևից վերև հակառակորդի վրա գրոհելը կասկած էր մեծ դժվարությունների ու կորուստների հետ: Հարձակման տեղամասը խելամիտ շէր ընտրվել: Գիվիզիան դեռ լրիվ համալրված չէր:

Հարձակումը նշանակված էր մարտի 26-ի առավոտյան: Հեռախոսային կապ անցկացվեց գնդերի և դիվիզիայի հրամանատարի դիտակետի ու հրամանատարական կետի միջև: Գիվիզիայի կոմիսար Շահինյանը և շտաբի պետ Շուբան մնացին հրամանատարական կետում, իսկ մենք հրետանու պետ Դանիելյանի ու Զաքյանի հետ գնացինք դիտակետ:

Առավոտյան հրետանին սկսեց ճնշել հակառակորդի կրակակետերը: Հրաձգային գնդերը հրետանու կրակի ուղեկցությամբ

ելան գրոհի: Մինչև ժամը 12-ը մեր անընդհատ կրկնվող գրոհները արդյունք չտվեցին: Հակառակորդը ամեն անգամ փոթորկալի կրակով մեր ստորաբաժանումներին ստիպում էր պառկել:

Գնդերի հրամանատարները զեկուցեցին, որ մեծ կորուստներ են կրում: 784-րդ գնդի հրամանատար մայոր Սեգնեեր և 798-րդ գնդի կոմիսար Մուրատովը զոհվեցին: Հաշվի շաննելով կորուստները, բանակի հրամանատարությունը պահանջում էր շրագարեցնել հարձակումը: Դիվիզիայի հրամանատարն ընկավ ծանր ապրումների մեջ: Նա գիտե՞ր գնահատել ամեն մեկի արժանիքը և հոգատար հոր նման խնայում էր մարդկանց կյանքը, նա շկարողացավ հաշտվել շարդարացված կորուստների հետ: Ի՞նչ անել. կա՞մ հարկավոր էր հաշվի շաննել կորուստները և գնդերը միաժամանակ ոտքի հանել գրոհի, կա՞մ դադարեցնել հարձակումը և ստորաբաժանումներին հրամայել խրամատավորվել: «Ի՞նչ անել», — անվերջ կրկնում էր Զաքյանը, նա, անկախ իր կամքից, ինձ թույլ տվեց հեռանալ դիտակետից: Ես նետվեցի դեպի ձորը և հայտնվեցի ականանետների կրակակետի մոտ: Ականածիղները երեք հոգի էին: Անտեսելով վերահաս վտանգը, նրանք անկանոն կրակ էին վարում թշնամու վրա: Իմանալով, որ նրանք առավոտից շեն փոխել իրենց դիրքը, հրամայեցի անհապաղ փոխել այն և այդ մասին զեկուցել դիվիզիոնի հրամանատարին: Չէ որ ձեր կրակակետը թշնամին նշմարել է վաղուց: Ասացի ու շարունակեցի քայլերս: Ընդամենը մի քայլ էի հեռացել, երբ հակառակորդի ականը պայթեց կրակակետի մոտ: Մեր զինվորները երեքն էլ զոհվեցին:

Շուտով կողքիս հայտնվեց դիվիզիայի հետախուզության պետ կապիտան Նաչատուրովը, որին ուղարկել էր Զաքյանը: Մենք լանջն ի վեր սողացինք մեկ մարտիկից մյուսը, մի հրամանատարից մյուսը, պարզաբանելով դրուժյան ծանրությունը: Նման թերություն պայմաններում դժվար էր ցատկ կատարել, եթե նույնիսկ հաջողվեր միանգամից ոտքի հանել բոլոր ստորաբաժանումները: Ստիպված եղանք զեկուցել դիվիզիայի հրամանատարին և ստորաբաժանումներին հրամայել խրամատավորվել:

Հաջորդ օրերին դրուժյունը շփոթվեց, գրոհները կրկնվեցին, կորուստներն ավելացան, բայց բարձունքներն ու երկաթուղագիծը գրավել չհաջողվեց:

Դեռ հարձակման առաջին օրը՝ մարտի 26-ին, 798-րդ գնդի

վաշտերից մեկը, ընթերցողին արդեն ծանոթ Պապիկ Ավալյանի հրամանատարությունամբ, օգտվելով մշուշից, դիվիզիայի աջ թևում մի փոքր առաջ շարժվեց: Ավալյանն իր ետևից քարշ տալով տարավ հեռախոսագիծը, կապ պահպանելով գնդի հրամանատար մայոր Մալխասյանի հետ: Մարտի 20-ին մարտերից հետո, Ավալյանի վաշտում մնացել էր ընդամենը 25 մարդ: Դիվիզիայի հրամանատարը արգելափակիչ գումարտակից մի վաշտ տվեց 789-րդ գրնդին՝ աջ թևը փակելու համար: Այդ վաշտը ևս մի փոքր առաջ շարժվեց: Գնդի հրամանատարը տեսանելի կապ չունե՞ր Ավալյանի վաշտի հետ: Շուտով կտրվեց նաև հեռախոսային կապը: Մալխասյանը նյարդայնանում է, բղավում. «Որտե՞ղ է վաշտը, ի՞նչ է կատարվում այնտեղ»: Սակայն ինչ օգուտ: Կապ չկա ու չկա: Գնդի հրամանատարի անհանգստությունը սաստկանում է: Հարևան 400-րդ դիվիզիայի հրետանին կրակում է այն ուղղությամբ, որտեղ Մալխասյանի ենթադրությամբ պետք է գտնվեր Ավալյանի վաշտը: Նա խնդրում է դիվիզիայի կոմիսար Շահինյանին՝ միջոցներ ձեռնարկել դադարեցնելու կրակը: Շահինյանն անմիջապես միջամտում է և կրակը դադարեցվում է: Այդ նույն ժամանակ 51-րդ բանակի շտաբից հայտնում են դիվիզիայի հրամանատար Ս. Գ. Զաքյանին, թե դիվիզիայից 25 հոգի գերեզմանատան ուղղությամբ գնում է դեպի հակառակորդը:

Ասում են՝ «Քանի ճշմարտությունը քնած է, սուտը սլանում է աշխարհով մեկ»: Մենք հասկանում ենք, որ խոսքը Ավալյանի մարդկանց մասին է: Մինչև մենք կպարզեինք այն, սկսեցին նոր լուրեր պատվել: Իբր վաշտից 12 հոգի «անցել են» թշնամու կողմը, իսկ մյուսները «ոչնչացվել են» հրետանային կրակով և այլն, և այլն: Մեզ մոտ ներվային վիճակ է ստեղծվում:

Դիվիզիայի կոմիսարի հետ փորձում ենք պարզել՝ ինչումն է բանը: Մենք համոզված էինք, որ Ավալյանի վաշտը գերի չի հանձնրվի: Բայց տարակույսները շէին լքում մեզ, գուցե հակառակորդը նկատել է վաշտի առաջընթացը և չի խոչընդոտել, որպեսզի շրջապատի և ոչնչացնի կամ գերի վերցնի: Իսկ եթե, իրոք, շրջապատել է, այդ դեպքում դժվար է ասել, թե ինչ կարող էր պատահել: Մեր ստուգումները ոչինչ չպարզեցին: Մարտի 27-ին Շահինյանը հրամայում է քաղբաժնի պետի տեղակալ Առուստամովին մեկնել գնդերից մեկը և պարզել վիճակը: Այդ օրերին Առուստա-

մովը կատարում էր նաև շտաբի կոմիսարի պարտականությունը: Նա գրպանից հանում է շտաբի կլոր կնիքը, տալիս Շահինյանին՝, ասելով. ո՞վ գիտե... Առուստամովը որոշված ժամին չի վերադառնում հրամանատարական կետը: Շահինյանը զանգահարում է գնդի հրամանատարին: «Առուստամովը գնդում չի եղել», — պատասխանում են: Ամբողջ օրը քաղբաժնի աշխատողները փնտրում են նրան և չեն գտնում: Միայն պարզում են, որ Առուստամովը մեկնել է կապի գումարտակի վաշտերից մեկի քաղղեկի հետ: Քաղղեկը նույնպես չի վերադարձել: Ավելացավ մի դժբախտություն ևս: Գիշերը, անսպասելի, Առուստամովին և քաղղեկին բերում են հրամանատարական կետ: Նրանց ականջներից արյուն էր հոսում, խլացել էին, համրացել: Բերողները կապավորներ էին: Նրանք լսել են տնքոցներ, սկսել են փնտրել: Պարզվեց միայն, որ դեռ գունդ չհասած ուժակոծության ժամանակ Առուստամովն ու քաղղեկը պատսպարվել են մի խոր խրամատում: Ռումբը պայթել է շատ մոտիկ և ծածկել նրանց հողի հաստ շերտով: Նրանց շտապ ուղարկեցին հոսպիտալ:

Քաղբաժինը պետք է զեկուցեր Ավալյանի վաշտի մասին: Բայց ի՞նչ գրեր, երբ ոչինչ պարզ չէր: Եվ այսպես անցավ երկու օր:

Մարտի 28-ի կեսօրին էր: Հանկարծ զնգաց հեռախոսը:

— Սիմոն Գեորգևիչ, հեռախոսի մոտ Պապիկ Ավալյանն է, նա ուզում է խոսել ձեզ հետ, — հայտնում են 789-րդ գնդից:

Դժվար չէ պատկերացնել, թե ինչ տեղի ունեցավ դիվիզիայի դիտակետում:

Պապիկ Ավալյանը զեկուցում է Ջաբլանին. «Գտնվում եմ գերեզմանատան մոտ երկաթգծի կամուրջից ոչ հեռու, կովում ենք շրջապատման մեջ, 12 հոգով: 5 հոգի հասել են կամուրջին, որոնցից 3-ը զոհվել է, երկուսը կովում են: Մյուսները շարքից դուրս են եկել, նրանց մասին ոչինչ չգիտենք, վիրավորները հասել են թիկունքը»: Ջաբլանը հրամայեց Ավալյանին գիշերով դուրս գալ շրջապատումից: Այստեղ կապը կտրվեց:

Ամեն ինչ պարզվեց: Քաղղեկ Ավալյանի փոքրիկ խումբը ավելի քան երկու օր կովում էր շրջապատման մեջ և թշնամուօղակից դուրս եկավ միայն դիվիզիայի հրամանատարի հրամանից հետո: Վիրավորներին հրամայելով սողալ դեպի թիկունք,

Ավալյանը նրանց հանձնարարել էր փնտրել հեռախոսալարը և միացնել: Եվ իրավ կապը վերականգնվեց: Բայց ո՞վ միացրեց այն՝ այդպես էլ անհայտ մնաց:

Մարտի 28-ի երեկոյան Ջաբլանը խնդրեց Շահինյանին և ինձ՝ լինել գնդերում, հանդիպել զինվորների հետ, քաջալերել նրանց: Նա գտնում էր, որ շգրավելով բարձունքները և կորուստներ կրելով, ոմանք կարող են հոգեպես ընկճվել: Մենք մեկնեցինք: Մարտի 29-ի իրիկնադեմին վերադարձանք հրամանատարական կետ: Հընչեց հեռախոսի զանգը: Վերցնելով լսափողը, Շահինյանը տեղնուտեղը այն վայր դրեց:

— Ջաբլանը վիրավորված է: Վազեցինք դիտակետ: Ջաբլանը վիրավորվել էր բեկորով, որովայնից: Մենք նրան ուղեկցեցինք մինչև մեքենան:

Մարտի 30-ի առավոտյան այցելեցինք դիվիզիայի հրամանատարին: Նա քնած էր: Բժիշկներն ասացին, որ վիրահատությունն հաջող է անցել, բայց սիրտը շատ թույլ է, մի կերպ պահում ենք... Ջաբլանը հասկանում էր իր վիճակը: Երբ արթնացավ, ասաց.

— Յավերն ուժեղ են: Բայց ես գիտեմ, վերքը վտանգավոր չէ: Բժիշկները լավն են, նրանք ամեն ինչ արեցին: Սիրտս բանի պետք չէ, եթե բան պատահի, ապա միայն սրտիցս կպատահի: Սիրտ չէ, այլ փալաս...

Մարտի 26-ից մինչև 31-ը դիվիզիան շատ ծանր մարտեր մղեց Կոյ-Ասանի ուղղությամբ: Չնայած գնդերի և ստորաբաժանումների ջանքերին ու համառ գրոհներին, մարտական խնդիրը չկատարվեց: Շարքից դուրս եկան դիվիզիայի հրամանատար Ջաբլանը, քաղբաժնի պետի տեղակալ Առուստամովը, գնդի հրամանատար Սեդեեկը, գնդի կոմիսար Մուրատովը, ստորաբաժանումների հրամանատարներ ու քաղաշխատողներ:

6. ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ

Ապրիլի 1-ի գիշերը 390-րդ դիվիզիան իր դիրքերը հանձնեց 12-րդ հրաձգային բրիգադին և անցավ ռազմաճակատի ռեզերվը:

Ապրիլի 2-ին Կիյաթ ժամանեց դիվիզիայի նոր հրամանատար գնդապետ Իվան Իլյիչ Լյուզնիկովը: Բարձրահասակ, բարեկազմ,

թխահեր մի զինվորական, սև բեղիկներով, թավ հոնքերով, խորունկ և բարի աչքերով, սև յափունջիով և շերքեղական դլխարկով՝ իսկական կովկասցի: Թվում էր թե մեզ մոտ է եկել քաղաքացիական պատերազմի հրամանատարներից մեկը և դա հարգանք էր ներշնչում նոր հրամանատարի նկատմամբ: Երեկոյան Իվան Իլյիչը անցկացրեց հրամանատարների խորհրդակցություն: Նա ծավալուն կերպով, բայց առանց ավելորդ խոսքերի, շարադրեց դիվիզիայի խնդիրը վերակազմավորման շրջանում:

Խորհրդակցությունը վերջանալու վրա էր, երբ անսպասելի դիվիզիա ժամանեցին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Մացակ Պապյանը, գրողներ Նաիրի Զարյանը, Սարմենը և Դևորգ Աբովը: Պապյանին ուղեկցում էին՝ Երեվանից ՆԳԺԿ-ի աշխատակից Աշոտ Գևորգյանը և ռազմաճակատի քաղվարչությունից ավագ գումարտակային կոմիսար Սիմոն Սարգսյանը: Արդեն մութ էր: Գնդապետ Լյուդնիկովը հյուրերին հրավիրեց տնակ: Պապյանը եկել էր ռազմաճակատ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության անունից դիվիզիային և նրա գնդերին մարտական դրոշներ հանձնելու: Մ. Պապյանը համառոտակի պատմեց Սովետական Հայաստանի գործերի, ռազմաճակատին հայ ժողովրդի ցույց տված օգնության մասին, հետաքրքրվեց գնդապետ Զաքյանի առողջական վիճակով:

Պապյանը դիշերեց հրամանատարի ու կոմիսարի մոտ, մյուսները քաղբաժնի տնակում: Միայն լուսաբացից առաջ պակեցինք քնելու: Հազիվ էր աչքս կայել, երբ մեկը ցնցեց ուսս և կամացուկ շշնջաց. «Զանգահարեցին բուժսանդոմարտակից. Զաքյանը մահացել է»:

Սրաի խոր կսկիծով շտապեցի դիվիզիայի հրամանատարի ու կոմիսարի մոտ՝ հայտնելու դժբախտ լուրը: Արթնացրինք նաև Մ. Պապյանին: Որոշվեց Զաքյանին թաղել Երևանում: Հարկավոր էր ստանալ ռազմաճակատի հրամանատարության համաձայնությունը և ինքնաթիռ խնդրել:

Ապրիլի 3-ի առավոտյան Կիյաթի մոտ, դաշտում շարվեցին գնդերը: Նրանց հանձնվում էին մարտական դրոշները: Մարտիկներըն արդեն գիտեին դիվիզիայի հրամանատարի զոհվելու մասին,

դրին նրանք հարգում էին ու սիրում: Հանդիսավորությունը միախառնվեց սգո հետ: Օրն ամպամած էր, մշուշը պարուրել էր շարասյունները: Գնդերը խտացան: Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Մացակ Պապյանը համառոտ ճառ արտասանեց և դիվիզիային ու նրա գնդերին հանձնեց մարտական դրոշները: Հրամանատարներն ու կոմիսարները, ընդունելով դրոշները, ծնկի եկան և անձնակազմի անունից երգվեցին զերմանական զավթիչների դեմ մղվող մարտերում փառքով պսակել մարտական դրոշները: Պատասխան խոսք ասաց դիվիզիայի հրամանատար գնդապետ Ի. Ի. Լյուդնիկովը:

Այդ օրերին դիվիզիայում էին գտնվում կինոաշխատողներ Վ. Հայկազյանը, Գ. Սանամյանը, Ի. Գիլդարյանը և Գ. Եղիազարյանը: Նրանք նկարահանեցին դիվիզիային և նրա գնդերին մարտական դրոշներ հանձնելու արարողությունը:

Դրոշներ հանձնելուց հետո Մացակ Պապյանը Սիմոն Սարգսյանի և Աշոտ Գևորգյանի ուղեկցությամբ մեկնեց Լենինսկոե դուղը՝ ռազմաճակատի հրամանատարական կետ:



Հաջորդ օրը ապրիլի 4-ին, դիվիզիան նորից շարք կանգնեց բաց դաշտում: Մշուշը ցրվել էր: Գարնանային ցուրտ եղանակ էր: Թշնամու ավիացիայի հանկարծակի հարձակումից խուսափելու համար շարասյունները կանգնած էին մեկը մյուսից հետո: Նրանք սպասում էին դիվիզիայի զոհված հրամանատարի դին զուրս բերելուն: Երևաց թշնամու ինքնաթիռների մի խումբ: Այնուհետև երևացին նոր խմբեր: Մի քանի անգամ կրկնվեց «ցրվե՛լ», «պակե՛լ» հրամանը: Վերջապես ինքնաթիռները հեռացան, և շարասյունները խմբվեցին գնդապետ Զաքյանի դագաղի շուրջը: Սգո միտինգը բացեց տողերիս հեղինակը: Ելույթներ ունեցան դիվիզիայի հրամանատար Լյուդնիկովը, կոմիսար Շահինյանը, զորամասերի ներկայացուցիչները՝ զինվորներ, հրամանատարներ, քաղաշխատողներ: Գնդերը երգվեցին անխնա ոչնչացնել անիծյալ թշնամուն, վրեժխնդիր լինել սիրելի հրամանատարի համար, սովետական հողը ազատագրել ֆաշիստական բարբարոսներից:

Դիվիզիայի հրամանատարությունը առանձնացրեց մի խումբ՝

գնդապետ Զաքյանի դիակը մինչև Երևան ուղեկցելու համար, որի կազմի մեջ մտան փոխգնդապետ Բագրատ Գանիելյանը, գումարտակային կոմիսար, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Երեմ Խաչատրյանը և ավագ քաղղեկ Հայկ Սոխիկյանը: Շարասյունները շարվեցին: Մարդկանց հայացքները գամված էին իրենց հրամանատարի դագաղին, մինչև որ մեքենան ծածկվեց հորիզոնի ետևում:

Զաքյանը կյանքից հեռացավ ուժերի ծաղկման շրջանում, թողնելով իր դիվիզիան, որի մարտիկներին սիրում էր ու գուրգուրում ինչպես իր հարազատներին: Երկար շկովեց Զաքյանը Հայրենական պատերազմում: Սակայն զորավարական այն տաղանդը, որ նա դրսևորեց կարճ ժամանակամիջոցում, նրան ընդմիշտ կպահի Հայրենական պատերազմի փառապանծ զորավարների շարքում: Գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի ջախջախումը նրա զորավարական տաղանդի հաստատումը եղավ: Հրամանատարությունը ըստ արժանվույն գնահատեց Զաքյանի ծառայությունը և նրա ղեկավարած դիվիզիայի տոկունությունն ու խիզախությունը: Գերագույն գլխավոր հրամանատարության Զորակայանի ներկայացուցիչ Լ. Մելիքիսը հետևյալ հեռագիրն ուղարկեց ԶԿ(բ) Կենտկոմ:

«Երևան, ԶԿ(բ) Կենտկոմ, ընկեր Հարությունյանին: Հայ ժողովրդի և Սովետական Միության բոլոր ժողովուրդների թշնամիների դեմ մղվող մարտում քաջի մահով ընկավ գնդապետ Սիմոն Գեորգիի Զաքյանը:

Զաքյանի ղեկավարությամբ հայկական զորամասերը տոկունությամբ կռվում էին գերմանական զավթիչների դեմ, մարտի 20-ին ետ մղելով գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի տանկային գրոհը, որի ժամանակ հակառակորդը հակայական կորուստներ կրեց:

Բանակի մյուս զորամասերի հետ միասին հայ մարտիկներն այնպես ջախջախեցին հակառակորդին, որ նա կռվի դաշտում թողեց 47 տանկ:

«Ցավակցություն եմ հայտնում հայ ժողովրդին կարմիր բանակի ականավոր հրամանատար Սիմոն Գեորգիի Զաքյանի մահվան առթիվ: Հավատացած եմ, որ հայ ժողովրդի հավատարիմ զավակ Զաքյանին փոխարինելու համար ոտքի կելնի խիզախների մի ամ-

բողջ բանակ և վրեժ կլուծի թշնամուց: Հայ ժողովուրդն իր դարավոր պատմության ընթացքում իր ճակատագիրը հարազատորեն կապել է ռուս ժողովրդի հետ, հանդիսանալով նրա սիրելի կրտսեր եղբայրը:

Մենք կրկնապատիկ ու եռապատիկ եռանդով պայքար կմղենք գերմանական զավթիչների դեմ և մեր սրբազան հողը կմաքենք գորշ աղտեղությունից:

Մահ գերմանական օկուպանտներին:

Լ. Մելիքիս

Պաշտպանության ժողովրդական կոմիսարի տեղակալ, բանակի առաջին կարգի կոմիսար

3 ապրիլի 1942 թ.»¹:

Ցավակցության հեռագիր է ուղարկել նուև Ղրիմի ռազմաճակատի ռազմական խորհուրդը:

Հրամանատարությունը որոշեց կոմունիստական կուսակցության քաջարի զավակին թաղել Երևանում, իսկ հայրենիքը, ի հավերժացումն նրա հիշատակի, գրանիտե պատվանդանի վրա հուշարձան կանգնեցրեց Երևանի կենտրոնում: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը հետմահու Զաքյանին պարգևատրեց Լենինի շքանշանով:

Հեռանալով կյանքից Զաքյանը իր ռազմիկներին թողեց սրբազան մի կոշ. «Հանուն հայրենիքի, առաջ»: Եվ հայրենիքը իր մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի շուրթերով ասաց նրան իր սիրած խոսքը.

Քո ճակատը՝ հաղթանակով պսակված.
Մեր պատմության մեջ քայլում ես դու փառքով.
...
Նոր հերոսներ կկայծակեն քո հետքով,
Հայաստանը կբողբոջի նորից նոր,
Կղարգարն քո շիրիմը վարդերով:



Նույն օրը դիվիզիան տեղափոխվեց Ագիբեյ, Կարաշ, Կոշայ, Միներալնի, Շուբան և Արմա-էլի գյուղերի շրջանը: Գիվիզիայի շտաբը մշակեց պլաններ և իրագործեց միջոցներ գործերը կարգի

¹ Տե՛ս «Հայկական սնայտեր», № 20, 22 ապրիլի 1942.

բերելու և մարտական պատրաստութեան կազմակերպման ուղղութեամբ, կազմեց հայտադրեր՝ անձնակազմի, սպառազինութեան, համազգեստի, պարենամթերքի համար: Գնդերն ու մյուս ստորաբաժանումներն սկսեցին մարտական և քաղաքական պատրաստութեան սփռապնակները: Քաղաքաժինն զբաղվեց անցած մարտերի արդյունքների ամփոփմամբ, քաղաշխատողների կազմերի կոմպլեկտավորմամբ, զորամասերում քաղաքական աշխատանքի կազմակերպմամբ:

Քաղաքաժին խնդրանքով Նաիրի Զարյանը, Սարմենը և Գևորգ Աբովը գրեցին դիվիզիայի քայլերգը «Զեյթունցիներ» երգի մոտիվներով: Այդ երգի տեքստը, նրա յուրաքանչյուր բառակերպը քննարկվեցին քաղաքաժնում: Ընդհանուր նպատակը առավելագույնս մարտաշունչ բնույթի քայլերգի ստեղծումն էր:

Կոշայ գյուղում քաղաքաժինը հրավիրեց դիվիզիայի կուսակցական ակտիվի ժողով: Անհրաժեշտ էր ընդհանրացնել անցած մարտերի արդյունքները, տալ քաղաքական ապարատի և կուսակցական-կոմերիտական կազմակերպությունների՝ մարտերում ծավալած գործունեության գնահատականը, որոշել կուսակցական-քաղաքական աշխատանքի հետագա խնդիրները: Սա 390-րդ դիվիզիայի կուսակցական ակտիվի առաջին և միակ նիստն էր Ղրիմում: Պատրաստվում էր նաև Հայաստանի աշխատավորներին ուղղված դիմումի տեքստը, որը կազմելու գործում ակտիվ մասնակցություն ունեցան նաև «Հայկական սնայպեր» թերթի խմբագիր Գուրգեն Հովնանը և դիվիզիայի հյուրեր Նաիրի Զարյանը, Գևորգ Աբովը, Սարմենը:

Ժողովը գումարվեց ապրիլի 11-ին մի քանդված տան փլատակներում, որի պատերը մնացել էին կանգուն և հարմար էին թշնամու ինքնաթիռներից քողարկվելու համար: Ակտիվի ժողովին մասնակցում էր 153 կոմունիստ: Մարտական գործողությունների արդյունքների և կուսակցական-քաղաքական աշխատանքի խրնդիրների մասին զեկուցեց դիվիզիայի կոմիսար Թորգոմ Շահինյանը: Մտքերի փոխանակությանը մասնակցեցին 8 ընկեր: Ուրախալի էր լսել շտաբի պետ մայոր Ի. Վ. Շուբայի և դիվիզիայի հրամանատար գնդապետ Ի. Ի. Կուզնիկովի ելույթները: Նրանք նշեցին, որ դիվիզիայի մարտիկները մարտերում իրենց դրսևորել են

որպես սովետական մեծ ժողովրդի մարտական ու հեղափոխական տրադիցիաների արժանի կրողներ:

Կուսակցական ակտիվի ժողովն անցավ գործարար մթնոլորտում և մեծ վերելքով: Ակտիվի ընդունած որոշումներում ընդգրծվում էր նոր մարտերին դիվիզիայի նախապատրաստման համար բոլոր հնարավորությունների և աշխատանքի մեթոդների առավել լիովին օգտագործման անհրաժեշտությունը: Իր աշխատանքի վերջում ակտիվի ժողովն ընդունեց Հայաստանի աշխատավորներին ուղղված դիմում: Նրանում համառոտակի պատմվում էր դիվիզիայի վարած մարտերի և նրա մարտիկների հերոսիկայի մասին, նշվում էր, որ թիկունքի հերոսական աշխատանքը սովետական մարտիկներին ռազմական սիրագործությունների է ոգեշնչում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղվող պայքարում:



Պրոֆեսոր Գևորգ Աբովը, բանաստեղծներ Նաիրի Զարյանը և Սարմենը 24 օր մնացին դիվիզիայում: Անձրևոտ օրեր էին, երբեմն սառը քամիներ էին փչում: Կյանքի պայմանների մասին խոսելու հարկ չկա՝ այն ռազմադաշտային էր: Հյուրերը համակերպվեցին այդ կյանքին: Տարբերությունը միայն հագուստի մեջ էր, իսկ Սարմենը նույնիսկ կրկնակոշիկներ էր հագնում, որոնք հաճախ մնում էին ցեխի մեջ: Չնայած անբարենպաստ եղանակին, գրողները գրեթե ամբողջ օրն անց էին կացնում մարտիկների հետ, նրանց հետ գնում էին երթի, հանդես գալիս զեկուցումներով, պատմում հանրապետության գործերի, կուլտուրայի, գրականության մասին, կարդում բանաստեղծություններ, նյութեր հավատորեն համագործակցում էին դիվիզիայի «Հայկական սնայպեր» թերթի խմբագրության հետ: Խմբի ավագ Գևորգ Աբովը նրանց հանգիստ չէր տալիս, պատերազմ է և անձրևը հաշվի մեջ չի մտնում:

Հյուրերը գիշերում էին քաղաքում: Հեշտ էր ասել «քաղաքում», երբ զլխավերևում տանիք չկար, իսկ Կոշայում նոր էինք սկսել բլինդաժներ փորել: Մի քանդված տան մեջ գտանք կիսավեր միջանցք-խոհանոց՝ հազիվ 6 քառակուսի մետր տարածու-

թյամբ: Մաքրեցինք, կարգի բերեցինք և դարձրինք քաղբաժնի «նստավայր»: Վատ եղանակներին դա ավելի հարմար էր, եթե հաշվի չառնենք ուժակոծությունները: Այդ «նստավայրում» հաճախ գիշերում էին նաև Հայկ Պարոնյանը, Գուրգեն Հովնանը, Միխայիլ Ավետիսովը և Հրաչիկ Մակարյանը:

Շատ տարիներ են անցել այդ հիշարժան օրերից, բայց տպավորություններս չեն խամրել: Գեորգ Աբովի հետ մենք հաճախ ենք հանդիպել, այդ թվում նաև գործով: Նաիրի Զարյանի հետ «պարզապես ծանոթներ» էինք, իսկ Սարմենին գիտեի միայն որպես բանաստեղծ, առանց հետը ծանոթ լինելու: Կարելի է պատկերացնել մի կացութուն, երբ սովորական մահկանացուն գրականության կամ արվեստի ներկայացուցչի հետ կիսում է երշիկն ու հացը խրամատում, ուժբափոսում կամ բաց դաշտում, նրա հետ միասին մի կում օղի է խմում տափաշշից՝ ոչ թե կենացի, այլ տաքանալու համար:

Երբ ապրիլի 3-ի լուսաբացին քնած ընկերներին շարթնացնելու համար կամացուկ դուրս եկա տնակից, հետևից լսեցի անհանգիստ ձայներ. «Ինչո՞ւ, ո՞ւր գնաց կոմիսարը», «Զարյանի հետ հոբան շի՞ պատահել»: Գրողներն արթնացան և իրենց անհանգստությունները արթնացրին մյուսներին: Նրանք, ինչպես իմացա այնուհետև, արդեն չէին կասկածում, որ գնդապետ Զարյանն այլևս կենդանի չէ: «Մի՞թե բանաստեղծների միտքը արթուն է մնում նույնիսկ այն ժամանակ, երբ քնած են: Գուցե դա հոգեկան նրբազգացություն կամ դյուրընկալություն է: Ո՞վ գիտե»:

Ինչպես նշվեց վերևում, ապրիլի 4-ին թշնամու ավիացիան մի քանի անգամ մեր ստորաբաժանումներին հարկադրեց ցրվել և պատսպարվել զանազան ուժբափոսերում ու գետնափոր ուղիներում: Հյուրերը նույնպես հարկադրված էին «ապաստան» գտնել ուժբափոսերում, երբեմն պարզապես ցեխի մեջ: Երբ տազնապն անցավ, հյուրերը երևացին... ցեխի մեջ շաղախված շորերով: Սարմենի տեսքը «ամենաողբալին» էր, քանի որ նա կրում էր լայն երկար շալվար, երկարափեշ վերարկու և սովորական կոշիկներ՝ կրկնակոշիկներով: Մի քանի մարտիկներ, ներողամիտ ժպիտը դեմքներին, մոտ վազեցին հյուրերին և սկսեցին հոգատարություններ մաքրել նրանց հագուստները՝ որը դանակով, որը խոզանակով, որն էլ իր սրբիշով: Հավանաբար, Սարմենը այդպիսի վերաբեր-

մունք չէր սպասում զինվորի շինել կրող մարդկանցից: Նրա դեմքն ընդունեց մի այնպիսի արտահայտություն, որը սովորաբար լինում է այն բուսկներին, երբ հուզմունքը սեղմում է մարդու կոկորդը, կծկվում, իսկ աչքերը շորանում են, մարդուն գրկելով ուրախության արցունքներով սիրտը թեթևացնելու հնարավորությունից:

Մեր խոհանոց-նստավայրը Կոշայում գիշերները վեր էր ածվում յուրօրինակ ակումբի. վիճում էինք գրականության և արվեստի հարցերի շուրջ, վերհիշում հին, թվում է թե վաղուց մոռացված երգերը, կատակում էինք, սրամտում: Եվ այսպես՝ գրեթե մինչև լուսաբաց: Հանդիսականի դերում միայն Սարմենն էր: Նա գերազասում էր լռել: Առանձնապես եռանդալից էր վիճում Նաիրի Զարյանը: Բացի այդ, նա ուներ ձայնային լավ տվյալներ և երգում էր մեզ համար: Զգիտես ինչու, Նաիրին չգիտեի Ալիշանի «Վարդանանց երգը» կամ նրա եղանակը, որովհետև, երբ երգում էինք այդ երգը, նա մի քանի անգամ խնդրեց կրկնել, մինչև որ ինքն էլ սկսեց երգել այն: Ենթադրում եմ, որ «Սովետական Հայաստան» քաղվերգի ստեղծման գաղափարը նրա մեջ ծնվեց հենց Կոշայում: Զարյանին հետաքրքրում էր ամեն ինչ: Կսելով անծանոթ որևէ ասացվածք կամ թեմալոր խոսք, նա իսկույն մի կողմ էր քաշվում ու գրի առնում իր ծոցատետրում: Մի անգամ նա պատմեց, թե ինչպես երեկոները Ավետիք Իսահակյանի հետ հին աշուղների նման մրցում էին ժողովրդական իմաստությունների, ասույթների շուրջ: Նաիրին խոստովանեց, որ միշտ հաղթող էր դուրս գալիս Իսահակյանը: Մենք այնքան ենք պատմել ու վիճաբանել, որ ես այժմ այնքան գիտեմ, ինչքան Իսահակյանը, ասաց նա: Հետո զրույանից հանեց ծոցատետրը, թափահարեց օդում և հանդիսավոր կերպով հայտարարեց.

— Ահա իմ նոր գեները: Սրանով ես կհաղթեմ Վարպետին:

Պայմանները Գեորգ Աբովին վերադարձրին դեպի պոեզիան: Նա գրեց մի քանի բանաստեղծություն: Այդ օրերին մենք անց էինք կացնում պետական ուղղման փոխառություն կամպանիա: Աբովը մարտիկներին դիմեց մի բանաստեղծությամբ, որի ամեն մի բառի մեջ «Ռ» տառը կար՝ «Ռազմիկ, ուրբիդ դառնում է ումբ»... Գրվելով փոխառություն, շատ կարմիրբանակայիններ գրամբ հանում էին գրպանից, արտասանելով՝ «Առ ուրբին, ումբ է»:

Գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի դեմ մղված մարտերի մանրամասնությունների մասին մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների պատմածներից Գևորգ Աբովը, զինվորական շինելով հանդերձ, որսում էր առանձին բնորոշ մանրամասնություններ, որոնք նրան հանդեցնում էին լուրջ մտորումների՝ մարտ վարելու տակտիկայի վերաբերյալ: Հետագայում, Կերչի թերակղզին թողնելուց հետո, Աբովը այցելեց ինձ, որպեսզի մտքեր փոխանակի այդ հարցի շուրջ: Ակնհայտ էր, որ նա կռահել էր մեր անհաջողության պատճառը:

Ապրիլի 12-ի գիշերը հորդառատ անձրև տեղաց: Առավոտյան Աբովը, սովորականի նման, շտապեցրեց Ջարյանին ու Սարմենին. նրանք պետք է շորս կիլոմետր ճանապարհ գնային: «Այս ցեխին դու ինչպե՞ս կգնաս քո փիլոնով, վարժապետի շալվարով ու կրկնակոշիկներով», — կես-կատակ, կես-լուրջ ասացի Սարմենին: Բայց նա էլ մյուսների նման չսեց: Գնացին, կես ժամ հետո Սարմենը վերադարձավ՝ մինչև ծնկները ցեխոտված, կրկնակոշիկները ձեռքին: Հանցանքի մեջ բռնված մանկան պես նա շնայեց ինձ և ոչ մի խոսք չասաց:

— Ինչո՞ւ մյուսները չվերադարձան, — ծիծաղս հազիվ զսպելով հարցրի Սարմենին:

Սարմենը դրան էլ չպատասխանեց: Երկուսով մի կերպ նրա հագուստը մաքրեցինք, կախեցինք վառարանի մոտ՝ շորանալու: Իսկ Սարմենը հագավ իմ պահեստային հագուստը: Նա շարունակեց լուռ նստել:

— Ինչ է, եղբայրս, հիվանդացե՞լ ես:

— Ո-ո-չ, ոչինչ... չգիտեմ..., — վերջապես լսվեց նրա ձայնը:

— Տաքացիր ու պառկիր: Այդպես ավելի լավ կլինի:

Միառժամանակ հետո Սարմենը մեղավորի տոնով կամացուկ ասաց.

— Ուղում եմ մի բան գրել... բայց չգիտեմ...

— Հիանալի է: Պոետը պետք է ամեն օր գրի: Իսկ ի՞նչ է նշանակում «չգիտեմ»: Գրիր: Չեմ խանդարի: Տեսնում ես, ես էլ աշխատանք ունեմ:

Սարմենն ինձնից խնդրեց ծոցատետրս: Չհասկացա նպատակը, բայց տվեցի. ժամանակն անցավ աննկատ, նա վերադարձրեց ծոցատետրս, ասելով.

— Թող հիշատակ մնա ինձանից:

Նրանում ես գտա տասը քառյակ՝ գրված սարմենյան ջերմությամբ, սրտաբուխ: Խոստովանում եմ, չգիտեի ինչ ասել: Կարգացի քառյակներից մեկը.

Երևանի սառնարակ ջուր,

Արտաշատի կարմիր գինին,

Ջանգեղուրի արեք հուր,

Ինձնից թող քեզ նվեր լինի:

Շնորհակալության փոխարեն կատակեցի.

— Այս բոլորը ոչինչ: Կարևորը «Արտաշատի կարմիր գինին է», որը, ավա՛ղ, չկա:

Սարմենը վիրավորվեց... գլուխը կախեց... նորից լուռ նստեց:

Երեսուն տարի անց Սարմենը ինձ բերեց այդ բանաստեղծության ձեռագիր տեքստը. «Թող մնա որպես Կոշայի անմոռանալի օրերի վկայություն»:

Նաիրի Ջարյանը հայտնի էր դյուրընկալությամբ, դյուրազոացությամբ և անմիջականությամբ: Նա երբեմն բռնկվում էր և այդ պատճառով էլ զուրկ չէր ծայրահեղություններից ու շափաղանցություններից: Ոմանք այդ դրսևորումները դիտում էին որպես կոպտություն:

Ինձ թվում էր անարդարացի է նաիրու բնավորության մեջ կոպտություն տեսնելը: Կոշայում անցկացրած գիշերները, մեր զրույցները ցույց էին տալիս, թե ինչպես նա կրքոտությամբ աշխատում էր «առաջ ընկնել», — առաջինը պատմել, առաջինը ասել իր կարծիքը... Նա անհամբեր էր:

Մի անգամ, երբ ես հոսպիտալից հետո եկա Երևան, Նաիրի Ջարյանն այցելեց ինձ: Մայրս անհանգիստ էր. մեկ դուրս էր գնում սենյակից, ուր մենք զրուցում էինք, մեկ ներս մտնում: Նաիրին «գլխի ընկավ»:

— Մայրիկ մի անհանգստանա, ես հասկանում եմ՝ հյուրին ոչնչով չես կարող հյուրասիրել: — Եվ իսկույն դարձավ իմ կողմը. — Գիտես ինչ, ես քեզ հետ մի գավաթ օղի կխմեի, ինչպես այնտեղ՝ Ղրիմում:

Մորս հոնքերը բացվեցին: Սեղանի վրա դրվեց մի շիշ օղի: Խմեցինք թթի օղին, հետո ճաշակեցինք թթու դրած կաղամբը... առանց հացի: Խոսելու հերթն ինձ չէր հասնում:

Նաիրին պետք է մեկներ ուղարկեմ, 89-րդ հայկական դի-
վիզիա:

Պաշտակալը քարշ տալ մինչև ուղարկեմ, շրջել դրանով...
ծանր է և գործնական չէ, իսկ գրպանումս գրառումներս չեն տեղա-
վորվում... — ասես ի միջի այլոց խոսեց ինքն իր հետ:

Ես տեղիցս վեր կացա ու նրան տվեցի իմ պլանշետը: Ջարյա-
նը ուրախությունից վեր թռավ տեղից ինչպես խաղալիք-հրացան
նվեր ստացած պատանի:

— Դու ինձ փրկեցիր, սա հենց այն է, ինչի մասին երազել եմ:
Երիտասարդ տարիներին հիմնականում նովելիստ, իսկ հետո
իրեն գիտությանը նվիրած Գուրգեն Հովնանին (Հովհաննիսյան) ես
ծանոթ էի պատերազմից առաջ: Բնավորությամբ խաղաղ այդ մար-
դը արյուն տեսնելիս գլուխը շրջում էր: Եթե գիտեիր, որ տանը
հավ են մորթելու, դուրս էր գնում: Ռազմաճակատում Հովնանին
ինքն էլ շնկատեց, թե ինչպես է փոխվել: Նա մենակ էր գնում
ստորաբաժանումները, նյութեր հավաքում իր խմբագրած «Հայկա-
կան սնայակեր» թերթի համար: Վերավորի հանդիպելիս նա տնհա-
պաղ օգնություն էր ցույց տալիս, վիրակապում, երբեմն նույնիսկ
ներկա էր լինում վիրահատություններին: Արյունից այլևս չէր վա-
խենում:

Հովնանը սիրում էր անշտապ պատմել իր տպավորություննե-
րը, խոսել կուլտուրայի, գրականության, արվեստի ու դրանց նշա-
նավոր գործիչների մասին: «Գիրքն է մնայուն, ահա գլխավորը:
Մնացյալը անցավոր է» — հաճախ կրկնում էր նա: Երբեմն հիշեց-
նում էինք, որ գրքերից դատ կա նաև արտադրություն և նման
առաջնահերթ այլ բաներ: Բայց ամենից կարևորն այն էր, որ Հով-
նանին սովորեցրինք խոսելու ուղարկեմ ինչպես ինքն ուզում կարճ:

Առաջին գործնական գրույցը Գուրգեն Հովնանի հետ՝ ուղարկե-
մ, նվիրված էր թերթի աշխատանքին: Իր սովորության
համաձայն, ծավալուն շարագրում էր իր դատողություններն ու
պլանները, իսկ վերջում խնդրում ցուցում տալ, թե ինչի մասին
գրել թերթում:

— «Կյանքը փակ նամակներ»-ից¹ դուրս բերել բաց մարտա-
դաշտ, ահա լրագրական ամբողջ իմաստությունը ուղարկեմ ինչ-
տոմ:

¹ «Կյանքը փակ նամակներում» — Հովնանի գրքերից մեկի անունն է:

Մարտի 19-ին նա խնդրեց իրեն ուղարկել հարձակվող զըն-
դերից մեկը և սկսեց բացատրել, թե դա ինչու է անհրաժեշտ:

— Իսկ ո՞վ է լույս ընծայելու թերթը, — հանդիմանեցի ես:

Հովնանը գլուխը կախեց ու հեռացավ նեղացած երեխայի պես:

Պատերազմում Հովնանի մեջ վերածնվեց գրողը: Նա սկսեց
հաճախ խոսել այդ մասին: Դժբախտաբար, նա միայն մի քանի
նովել գրեց:

1941 թվականին Հարավային ուղարկեմ կարմիրբա-
նակայինները խնամքով պահում էին Բորիս Գորբատովի «Հայրե-
նիք» փոքրիկ գրքույկը, իսկ վաշտերի ագիտատորները, դիմելով
մարտիկներին, համարյա բառացի կրկնում էին գրքույկի տողերը:
Դու հիշում ես, մարտիկ, այն ծառը, որի տակ առաջին անգամ
համբուրում էիր սիրածդ աղջկան: Այդ ծառը քեզ համար սրբու-
թյուն է, նա քո հայրենիքն է: Գերմանացին ուզում է խլել այն քե-
զանից, պղծել այն, ինչ նվիրական է քեզ համար: Գրողը դիմել է
մարտիկներին հենց պատանեկան զգացմունքներին, և նրա խոսքը
դարձել է մարտիկի սեփական սրտի խոսքը, որ նա երբևէ արտա-
սանել է շշուկով կամ առանց խոսքերի: Եթե նկատի ունենանք,
որ գրողի խոսքը հոգեկան խառնվածքի, նրա էության ձայնն է,
ապա չի կարելի շքնդունել, որ նա իր մեջ պահպանել է այն պա-
տանեկանը, որ նվիրական է նրա համար:

Նաիրի Ջարյանն ու Սարմենը Ղրիմում հիանալի բանաստեղ-
ծություններ գրեցին: Նրանք գրում էին քարի վրա կամ խրամա-
տում նստած, հաճախ անձրևի տակ, երբ օդում ոռնում էին թշնա-
մու ինքնաթիռները: Չխոսելով գրողի պարտքի մասին, միակ բա-
նը, որով նրանք ապահովված էին, դա զինվորի հոգատարությունն
էր՝ սև հաց և պահածո, իսկ գլխավորը՝ համակրանք: Այս պայ-
մաններում նրանք ավելի շատ էին գրում: Նրանք ատելություն էին
վառում թշնամու հանդեպ, մարտիկներին կոչ էին անում անխնա
ոչնչացնել ֆաշիստներին: Դա հումանիզմի ամենավեճ դրսևո-
րումն էր այդ օրերին:



Ապրիլի 14-ին դիվիզիայի վարչությունը փոխադրվեց Ագիբել
գյուղը: Միայն այստեղ աստիճանաբար եկան համալրման երթա-
յին վաշտեր, ստորաբաժանումների հրամանատարներ ու քաղաշ-

խատողներ: Նրանց պատրաստության համար քիչ ժամանակ էր մնում:

Ռազմաճակատի ռեզերվում գտնվելու ժամանակաշրջանում, դիվիզիայի հրամանատարական-քաղաքական կազմում տեղի ունեցան մեծ փոփոխություններ: Գնդերի նախկին հրամանատարներին դիվիզիայում մնացել էր միայն 792-րդ գնդի հրամանատար մայոր Ակոպովը: Բանակի տրամադրության տակ կանչված 954-րդ հրետանային գնդի հրամանատար մայոր Կորշունովին փոխարինեց մայոր Արտավազ Բոյաջյանը, իսկ 789-րդ գնդի հրամանատար մայոր Մալխասյանին՝ մայոր Մինասովը: Ապրիլի սկզբներին 784-րդ գունդն ընդունեց մայոր Մկրտիչ Ներսիսյանը: Արգելափակիչ գումարտակի անձնակազմը տրվեց մյուս ստորաբաժանումներին, իսկ նրա կոմիսար Ռուբեն Սարգսյանը նշանակվեց 789-րդ գնդի կոմիսարի տեղակալ: Ապրիլի երկրորդ կեսին 789-րդ գնդի կոմիսար նշանակվեց ավագ գումարտակային կոմիսար Սիմոն Սարգսյանը, դիվիզիայի քաղբաժնի պետի տեղակալ՝ գումարտակային կոմիսար Լիպարիտ Վարդանյանը, դիվիզիայի շտաբի կոմիսար՝ Առուստամ Առուստամովը: Լիպարիտ Վարդանյանը փոխադրվեց ռազմաճակատի 138-րդ դիվիզիայից՝ նույն պաշտոնից:

Դիվիզիայի շտաբը և քաղբաժինը աշխատում էին լարված՝ ստորաբաժանումները կոմպլեկտավորում էին համալրման հաշվին, նախապատրաստում նոր մարտերի: Գնդապետ Լյուդնիկովը աշխատում էր հրամանատարների ու շտաբների հետ, ներկա էր լինում պարապմունքներին, հաճախ անձամբ պարապմունքներ էր անցկացնում ցուցադրումով: Քաղբաժնի աշխատողները նման «խաղաղ» պայմաններում աշխատելու փորձ չունեին: Բայց դիվիզիայի հրամանատարի աշխատանքի ոճը կոնկրետ էր, և դա դյուրացնում էր նրանց խնդիրը: Նշենք միայն մի նորություն՝ թե ինչպես էր քաղաքական աշխատանքը զուգակցվում մարտիկների ու ստորաբաժանումների մարտական և տակտիկական պարապմունքների հետ: Ամենուրեք, որտեղ պարապմունքներ էին տարվում մարտիկների հետ՝ ճանապարհների վրա և հարթավայրում, բլուրների և բարձունքների լանջերին, շարվում էին քարերից կազմված և կրաքարի լուծույթով ներկված լողուններ, որոնք երևում էին հեռվից, գրավելով մարտիկների ուշադրությունը. «Ճանաչիր քո հրամանատարին և քաղղեկին», «Ճանաչիր ընկերոջդ, դասակը, վաշտը, գու-

մարտակը, գունդը, դիվիզիան», «Հանգիստ չկա, դու պատերազմի մեջ ես», «Սիրիր ընկերոջդ, օգնիր նրան մարտում, և նա քեզ կօգնի», «Թշնամին քո հողի վրա է: Ոչնչացրու»: «Թշնամին բարձունքի վրա է, գրոհիր»: «Աջից (կամ ձախից) թշնամու գնդացիներ է, նոնակ նետիր» և այլն: Նոր մարտիկներին առջև հանդես էին գալիս հրամանատարները, քաղաշխատողները, մարտիկները, որոնք պատմում էին իրենց գնդի, գումարտակի, վաշտի, մարտական փորձի մասին:

Ապրիլի 30-ին դիվիզիա ժամանեց Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի պատվիրակությունը՝ Կենտկոմի երկրորդ քարտուղար Աղասի Սարգսյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմի մեջ մտնում էին հանրապետության սննդի արդյունաբերության ժողկոմ Գուրգեն Արզումանյանը և կուսակցության Երևանի քաղկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Զավեն Գրիգորյանը: Նրանք ծանոթացան դիվիզիայի հետ, ելույթներ ունեցան մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների առջև, պատմեցին հանրապետության գործերի մասին: Մեկնելուց առաջ (պատվիրակությունը մեկնեց մայիսի 3-ին) Զ. Գրիգորյանը ուսահայկական հարաբերությունները թեմայի շուրջ լավ դասախոսություն կարդաց հրամանատարա-քաղաքական կազմի համար: Գասախոսության ժամանակ մեր «լսարանի» գլխավերևում երկու անգամ հայտնվեցին թշնամու ինքնաթիռները, իսկ վերջում նաև օդային մարտ սկսվեց:

Հենց նոր էին մեկնել գրողները, երբ դիվիզիա ժամանեց հայկական ջազի կոլեկտիվը՝ Զավեն Թարումովի ղեկավարությամբ: Զազը 20-ից ավելի ելույթներ ունեցավ ստորաբաժանումներում: Մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները սիրալիր ընդունեցին հանրահայտ երգիչ Ռաշիդ Բեյբութովի, պարող եղբայրներ Օրդոյանների և մյուսների ելույթները: Մենք ստիպված ընդհատեցինք ջազի կոլեկտիվի հետագա համերգները. ռազմաճակատում իրադրությունը խիստ փոխվեց: Մայիսի 8-ի երեկոյան ջազի կոլեկտիվը մեկնեց Կերչ, իսկ նրան ուղեկցող տեխնիկ-լեյտենանտ Մ. Թումասովին հրամայվեց նույն գիշերը արտիստներին անցկացնել Կերչի նեղուցով:

Միանգամայն անսպասելի, գնդապետ Լյուդնիկովը կանչվեց

նազմաճակատի շտաբի տրամադրություն տակ: Դիվիզիայում նրա մեկնելու լուրը ափսոսանքով ընդունվեց:

390-րդ դիվիզիայի հրամանատար նշանակվեց փոխգնդապետ Հմայակ Բաբայանը, որին մի քանի օր հետո շնորհվեց գրնդապետի կոչում:

7. ՏԱԳՆԱՊԱԼԻՑ ՕՐԵՐ

1941—1942 թթ. ձմեռային կամպանիայում ծանր պարտություն կրելուց հետո, գերմանա-ֆաշիստական հրամանատարությունը չհրաժարվեց իր խելացնոր պլաններից: Նա ջանում էր վերականգնել նախկին դրությունը, ռազմաճակատներում ստեղծել ուժերի գերակշռություն և անցնել հարձակման: Հիտլերյան հրամանատարության պլաններում կարևոր տեղ էր գրավում Արիմը:

Նրանք ամեն միջոց գործ էին դնում գարնան սկզբին լրիվ գրավելու Արիմը, Մանշտեյնի բանակը և ռումինական կորպուսը ազատել՝ ռազմաճակատի այլ տեղամասերում օգտագործելու համար: 1942 թ. գարնանը հիտլերյան հրամանատարությունը պլանավորել էր գրավել Լենինգրադը, ցամաքային կապ հաստատել Ֆիննական ճակատի հետ, իսկ հարավում՝ ճեղքել սովետական բանակի ռազմաճակատը, գավթել Կովկասը, «Վերջնականապես ջախջախել սովետների տրամադրության տակ մնացած ուժերը և զրկել նրանց ռազմա-տնտեսական կարևորագույն կենտրոններից»¹:

Հիտլերը հրամայեց սկսել Արիմից. «Օպերացիան ծավալել ուժերը կենտրոնացնելուց հետո: Հարվածի գլխավոր ուժը դարձնել ռազմա-օդային ուժերը և տանկային զորքերը: Կերչում մասսայաբար օգտագործել ավիացիան: Սևաստոպոլը գրավել տեխնիկայով... հետևակը պահպանել»²:

Այդ հրամանի համաձայն, հիտլերյան հրամանատարությունը մայիսի առաջին օրերին Արիմում կենտրոնացրեց ռազմա-օդային ու տանկային մեծ ուժեր:

Մայիսի 5—7-ը դիվիզիայի գնդերում ու ստորաբաժանումներ-

¹ Совершенно секретно. Только для командования». Изд. «Наука», М., 1967 г., стр. 380.

² Նույն տեղը, էջ 379:

րում երկու անգամ անցկացվեց մարտական ստուգատես: 51-րդ բանակի հրամանատարի ցուցումով դիվիզիայի հրամանատարը գնդերի հրամանատարների ու շտաբների պետերի հետ միասին անցկացրեց տեղազննում դիվիզիայի շարժման երեք ուղղություններում՝ Ագիրել—Սեմիստոկա—Տուլոմշակ, Ագիրել—Կիյման լեռ—Սուլուկ—Օբա, Ագիրել—Կոշայ—56,6 բարձունք: Շարժման հավանականությունը համարվեց առաջինը, քանի որ հրամանատարությունը թշնամու ակտիվ գործողություններն սպասում էր 47-րդ բանակի հատվածում:

Մայիսի 8-ի առավոտյան հակառակորդը օդային ուժեղ հարվածներ հասցրեց 44-րդ բանակի դիրքերին և անցավ հարձակման: Հակառակորդի ավիացիան միաժամանակ կենտրոնացված օդային հարվածի տակ պահեց ռազմաճակատի մյուս հատվածները, ուժեղ հարված հասցրեց ռազմաճակատի և բանակների շտաբներին: Հակառակորդին հաջողվեց ճեղքել 44-րդ բանակի պաշտպանությունը, գններալ Մանշտեյնի տանկերն ու հետևակը Սև ծովի ափով շարժվեցին դեպի ռազմաճակատի թիկունքը, չհանդիպելով լուրջ դիմադրության: 44-րդ բանակի զորքերը նահանջեցին: Արիմի ռազմաճակատում ստեղծվեց ծանր իրադրություն:

Մայիսի 8-ի երեկոյան 390-րդ դիվիզիան անցավ 44-րդ բանակի օպերատիվ ենթակայության տակ: Դիվիզիայի հրամանատարն ու կոմիսարը մեկնեցին բանակի հրամանատարի մոտ, իսկ դիվիզիան ոտքի հանվեց տազնապով, սպասելով հրամանի: Երբ գնդապետ Բաբայանն ու կոմիսար Շահինյանը վերադարձան, արդեն ժամը 23-ն էր: Դիվիզիան շարժվեց:

44-րդ բանակի հրամանատարի հրամանի համաձայն, 390-րդ դիվիզիան պետք է դիրքեր գրավեր 56,6 բարձունքի շրջանում՝ Արմա—էլի գյուղից հարավ-արևմուտք, խնդիր ունենալով դուրս գալ Սև ծովի ափը, փակել ճեղքվածքը և թույլ չտալ հակառակորդի զորքերին օգնության հասնելու մեր դիրքերը ներխուժած խմբավորմանը: Բանակի նույն հրամանով դիվիզիային տրվեց 55-րդ տանկային բրիգադը, 239-րդ առանձին տանկային դումարտակը և դվարդիական ականանետների («կատյուշաներ») 18-րդ գունդը: Բանակի մյուս միավորումներին հրամայվեց ոչնչացնել մեր դիրքերը ներխուժած գերմանական խմբավորումը: Ի դեպ, Բաբայանն ու Շահինյանը, հենվելով 44-րդ բանակի հրամանատար Չերնյակի

վրա, հաղորդեցին, որ Մեխլիսը բոլոր միջոցները ձեռնարկել է գերմանական խմբավորումը ջախջախվելու է շրջապատման մեջ ամենակարճ ժամկետում:

Գիվիզիան լրիվ կոմպլեկտավորված չէր, թույլ էր գինված, նախորդ մարտերում կորցրած զենքի փոխարեն նորը չէր ստացել: Տրանսպորտ նույնպես քիչ կար: 784-րդ զնդի հրամանատար Ներսիսյանի (այժմ պաշտոնաթող) վկայությամբ, զնդի գումակը շատ թույլ էր: Մոտավորապես վիճակը նույնն էր հրաձգային մյուս զնդերում: Զգացվում է զինամթերքի սուր պակաս. 954-րդ հրետգունդն, օրինակ, ուներ զինամթերքի մարտական լրակազմի մոտ 50 տոկոսը: Այդ պատճառով զնդի մեկ գիվիզիոնը թողնվեց Ազիբելում:



Մայիսի 9-ի լուսաբացին զնդերը ելման դիրքեր գրավեցին: 784-րդ և 792-րդ զնդերը դասավորվեցին առաջին գծում, իսկ 729-րդ գունդը աջից 792-րդ զնդի ետևից՝ երկրորդ էշելոնում: 954-րդ հրետանային զնդի երկու գիվիզիոնները և ականանետային գիվիզիոնը տրվեցին առաջին գծի հրաձգային զնդերին:

Գնդերը դեռ չէին հասցրել խրամատավորվել, երբ գերմանական ավիացիան մեծ խմբերով սկսեց ուժեղացնել գիվիզիայի մարտակարգերը: Գիվիզիան զենիթային պաշտպանություն միջոցներ չունեց: Մեր ավիացիան չէր երևում: Հակառակորդը հարվածում էր անընդմեջ, բոլոր կողմերից, ավիացիայի մի խումբը փոխարինում էր մյուսին:

Դժվար է նկարագրել մարտակարգերում ստեղծված վիճակը: Գտնվելով 784-րդ զնդում, չէի կարող տեսնել անգամ այդ զնդի մարտակարգերը. ծովն ու փոշին պատել էին երկինքը: Ստորաբաժանումների հեռախոսային կապը կտրվեց: Ռմբակոծմանը զուգընթաց հակառակորդը հրետանային ու ականանետային կրակի տակ վերցրեց ամբողջ գիվիզիան: Այրվում էր Ղրիմի հողը: Փրնդերը մեծ կորուստներ կրեցին: Թշնամու հետևանք ու տանկերը ընդհուպ մոտեցան մեր զնդերի դիրքերին: Սկսվեց ծանր, ահեղ մի մարտ: Քիչ է ասել, թե մարտն անհավասար էր: Բացի ավիացիայից, կրակային միջոցների գնդակոծությունից, հակառակորդը ու-

ժեղացրեց տանկային ձնշումը, ավիացիան իր հարվածներն ուղղեց խորքը: Գիվիզիան ծանր կորուստների գնով էր պահում իր դիրքերը:

44-րդ բանակի հրամանատարության հրամանով գիվիզիային տրված տանկային բրիգադը, առանձին տանկային գումարտակը և զվարդիական ականանետների գունդը չեկան նշանակված վայրը: Գիվիզիան դիմադրեց առանց աջակցության: Հաջորդ օրը մեզ հայտնի դարձավ, որ մեզ «տրված» այդ տանկային բրիգադը մայիսի 9-ին Կերչի նեղուցով անցկացվել էր Կուբան: Մայիսի 10-ի երկրորդ կեսին մեզ հայտնի դարձավ զվարդիական ականանետների զնդի դասավորությունը: Ես շտապեցի Ազիբելից հյուսիս, հանդիպեցի զնդի հրամանատարի հետ. նա հայտարարեց, որ գունդը 390-րդ գիվիզիայի ենթակայությանը հանձնելու մասին ոչ մի հրաման չի ստացել: Գունդը կապ չունի բանակի հրամանատարության հետ: «Նստել եմ առանց ռազմամթերքի և շգիտեմ ինչ անել», — եզրափակեց նա:

44-րդ բանակի շտաբը գիվիզիայի հետ հեռախոսային կամ որևէ այլ կապ չունեց: Այն բանից հետո, երբ մայիսի 8-ի երեկոյան գիվիզիայի հրամանատարն ու կոմիսարը վերադարձան բանակի շտաբից, բանակի շտաբը մեզ հետ այլևս ոչ մի կապ չպաշտպանեց: Նշենք, որ ավելի ուշ, Կիյման լեռան դիրքերում, պատահաբար հայտնի դարձավ, որ 390-րդ գիվիզիան մայիսի 9-ից նորից անցել էր 51-րդ բանակի ենթակայության տակ: 44-րդ և 51-րդ բանակների շտաբները հարկ չհամարեցին այդ մասին տեղյակ պահել գիվիզիայի հրամանատարությանը: Այսպիսով, իրադրությունն այնպիսին էր, որ այն ամենը, ինչ որոշված էր 44-րդ բանակի հրամանով 390-րդ գիվիզիայի վերաբերյալ, գործնականում ի չիք էր դարձել, իսկ մենք անտեղյակ էինք:

Ըստ պայմանավորվածություն՝ ես պետք է ժամը 10-ին ներկայանայի գիվիզիայի դիտակետ: Սակայն չկարողացա 784-րդ զնդից վերադառնալ գիվիզիայի դիտակետ: Անսպասելի, բաց դաշտում հանդիպեցի շտաբի և քաղբաժնի աշխատողներին: Նրանք 7 հոգով, բեռնատար ավտոմեքենայով, եկել էին Ազիբելից և փնտրում էին գիվիզիայի դիտակետը: Գաշտում եղած վիրավորներին զրինք ավտոմեքենա և մեքենան ուղարկեցինք թիկունք: Մենք ուղղվեցինք դեպի դիտակետ: Հայտնվեց թշնամու ինք-

նաթիռների մի մեծ խումբ: Նրանք սովորաբար բարձրից էին թռչում հեռավոր նպատակակետերը ուժեղացնելու համար: Անսպասելի, ուժեղացնող իրենց բեռը թափեցին մեզ վրա: Մենք նետվեցինք մոտակա խրամատները: Ռումբերը պայթեցին շատ մոտ, մեզ ծածկեցին փոշու և ծխի թանձր ամպով: Հետո ինքնաթիռները խումբ առ խումբ, առանց ընդմիջման, եկան ու եկան, ամեն մի խումբը նետեց մոտ 100 ումբ: Մանր հարվածներից ականջիցս արյուն հոսեց, իսկ ձեռքիս վրա թեթև քերծվածքներ առաջացան: Չեմ կարող ասել, թե մյուսների վիճակն ավելի տանելի էր: «Մի՞թե գերմանացիները որոշել են այսքան ումբ թափել մարդկանց մի փոքր խմբի վրա», — մի փոքր ուշքի գալով հարցրինք միմյանց: Հետո պարզվեց, որ մենք գտնվում ենք հրետանային կեղծ դիրքերում, իսկ նրանք ուժեղացնում էին այդ դիրքերը:

Դիվիզիայի դիտակետում ոչ ոքի չգտանք: Միանգամից դժվար էր հասկանալ, թե ինչ կարող էր պատահած լինել: Դիտակետից ոչ հեռու մի կապավոր հեռախոսալարն էր հավաքում: Կապավորը մոտեցավ մեզ:

— Դուք ինչո՞ւ եք այստեղ, ընկեր կոմիսար: Հրամայված է կապը հանել:

— Ինչպե՞ս թե հանել, ինչո՞ւ: Որտե՞ղ են հրամանատարը, կոմիսարը: Անմիջապես վերականգնեք գնդերի կապը, — հրամայեցի ես:

Իրադարձությունները կանխեցին ինձ, և խախտված ղեկավարումը կարգավորելու բոլոր փորձերը զուր անցան: Վիրավորները խմբերով շարժվում էին դեպի թիկունք, իսկ նրանց ետևից սկսվեց նահանջը: Ուժասպառ և արնաբամ եղած ստորաբաժանումներն այլևս չդիմացան հակառակորդի տանկերի ու հետևակի ճնշմանը: Հակառակորդը զենքի բոլոր տեսակներից կրակ տեղաց մեր նահանջող զորամասերի վրա, «մեսսերձիտները» թռչում էին ցածրից, կրակում էին գնդացիներից և ականներ նետում մարդկանց վրա: Սկզբում փորձեցինք կանգնեցնել նահանջողներին: Սակայն, հաշվի առնելով տեղանքի անբարենպաստ պայմանները, հրաժարվեցինք այդ մտքից: Շտաբի և քաղաքաժնի սպաների խմբին, շտաբի կոմիսար Առուստամովին և օպերատիվ բաժանմունքի պետ Մոկրիին հրամայվեց շարժվել նահանջող ստորաբաժանումների հետ, հասնելով Կիյման լեռանը՝ կանգնել, պաշտպանություն

գրավել այնտեղ: Նույնպիսի հրամաններ տրվեցին նաև զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարներին և քաղաշխատողներին: Լիպարիտ Վարդանյանի և Հայկ Պարոնյանի հետ միասին մնացինք դիտակետի շրջանում, որպեսզի մյուս հրամանատարներին ու քաղաշխատողներին հրաման տանք կանգ առնել Կիյման լեռան շրջանում և պաշտպանություն գրավել, իսկ հետո նահանջել: Նահանջի ժամանակ ուժեղացնողներից զոհվեց դիվիզիայի կոմիսար ավագ գումարտակային կոմիսար Թորգոմ Շահինյանը, արիասիրտ կոմիսարն ու ռազմիկը: Ինձ հետ տարօրինակ, անհասկանալի բան էր կատարվում. հենց որ պառկում էինք զրնդակներին կամ բեկորներից պաշտպանվելու, իսկույն քնում էի, չլսելով ո՛չ սրայթյուն, ո՛չ էլ կրակոցներ: Ինձ մեծ դժվարություններ էին արթնացնում: Ուժեղացնողներից ինչ-որ բան խախտվել էր ինձ մոտ: Բարեբախտաբար այդ երևույթը շուտով վերացավ: Սկսեցի լսել ձախ ականջով:



Դիվիզիան նահանջեց և ամրացավ ավելի հարմար դիրքերում: Գերմանական հետևակը չէր փորձում կիս մոտենալ մեր նոր դիրքերին, խուսափում էր բաց տեղանքում գնդակոծվելուց: Այդ դիրքերում ես ակտիվ գործում էր հիմնականում հակառակորդի ավիացիան:

Հնարավորություն ստեղծվեց կազմակերպել զորամասերում մնացած վիրավորների էվակուացիան, ճշտել կորուստները: Միայն քաղաքաժնի աշխատողներից շարքից դուրս էին եկել երեք հոգի: Քաջի մահով զոհվեց ավագ հրահանգիչ Հրաչ Մակարյանը: Նրան մարտադաշտից դուրս էր բերում 789-րդ գնդի կոմիսար Սիմոն Սարգսյանը, Մակարյանը հավերժ հանգավ նրա թևերի վրա: Մահից առաջ Մակարյանը բացեց աչքերը և ժպտալով ասաց Սարգսյանին. «Շարունակեք առանց ինձ»: Ժպիտը սառեց նրա դեմքին: Մինչև օրս էլ, երբ Սարգսյանը հիշում է այդ վայրկյանները, հուզվում է:

Մայիսի 10-ի գիշերը դիվիզիան կատարելագործեց իր դիրքերը, սարքավորեց կրակակետերը: Գերմանացիները նույնպես քնած

չէին, նրանք դեպի Կիլիման լեռն էին առաջ բերում իրենց հետևակը, հրետանին ու տանկերը, մի քանի անգամ փորձելով ներխուժել մեր մարտակարգերը:

Կիլիման լեռան վրա հայտնի դարձավ, որ դեռ մայիսի 9-ի առավոտյան գերմանական ավիացիան ուժեղ հարվածներ է հասցրել ռազմաճակատի և բանակների հրամանատարական կետերին: Զոհվել էր 51-րդ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Լվովը: Խախտվել էր զորքերի կառավարումը: Բանակի շտաբի հետ կապ ստեղծելու մեր բոլոր փորձերը ապարդյուն անցան: Միայն այստեղ մեզ հայտնի դարձավ, որ շտաբը նահանջել է Կերչի ուղղությամբ: Զախից 44-րդ բանակի զորքերը նահանջել էին: Հակառակորդը խորացել էր մեր թիկունքը:

Կիլիման լեռան դիրքերում 390-րդ դիվիզիան ուներ հարևաններ: նրա ձախ թևում, ճակատով դեպի հարավ, պաշտպանություն էր գրավել 12-րդ հրաձգային բրիգադը, որը շատ սակավամարդ էր: Նա պաշտպանում էր Ագիրել տանող ճանապարհը: Այդ բրիգադի ձախ թևը բաց էր: Աջից, Սյուրուկ—Օբա բլուրների շրջանում պաշտպանվում էր ծովային հետևակի 83-րդ բրիգադը:

Վաղ առավոտից գերմանական ավիացիան մի քանի հարձակում գործեց դիվիզիայի մարտակարգերի վրա: Վայրասլաց թռիչքի ժամանակ մեր մարտիկները համազարկերով խփեցին «Հելյնկել—111» մի ինքնաթիռ, իսկ օդաչուին գերեցին: Նրան տարան Ագիրել: Բայց ճանապարհին 12-րդ բրիգադի շտաբի սպաները նրան վերցրին մարտիկներից: Օդաչուի ցուցմունքներից հայտնի դարձավ, որ բոլորովին վերջերս ֆաշիստական հրամանատարությունը Գերմանիայից Ղրիմ էր տեղափոխել ավելի քան 500 ումբակոծիչ: Ավիացիայի առաջ խնդիր էր դրվել՝ կաղմալուծել Ղրիմում սովետական զորքերի թիկունքն ու կառավարման կենտրոնները, ոչնչացնել տեխնիկան ու բարոյալքել զորքերը:

Հակառակորդի տանկերն ու հետևակը բազմիցս գրոհեցին մեզ վրա: Այդպես շարունակվեց ավելի քան երկու օր:

Այդ օրերին մեզ ամենից շատ անհանգստություն պատճառեց ռազմամթերքի պակասը: Հրետանային գնդի համարյա բոլոր արկերը ծախսվել էին, սկաններ ու փամփուշտներ քիչ կային: Հրետանային մատակարարման պետ կապիտան Սերգեյ Վազիլևիչ Մորովը, ինչպես նաև դիվիզիայի և գնդերի մատակարարող կազմը

ՀԱՅՎԱԿԱՆ ՍՍՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄՄՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ

ՍՐԱՅՐԻՄ

СОВЕТ НАРОДНЫХ КОМИССАРОВ АРМЯНСКОЙ ССР

ПОСТАНОВЛЕНИЕ № 215а

Прот. № _____ 5 _____ 1942

Об увековечении памяти подполковника Закида С.Г.

Совет Народных Комиссаров Армянской ССР п о с т а н о в - л я е т:

Воздвигнуть памятник героически погибшему в боях в последние захватчики ослепшему оному армянского народа командиру дивизии подполковнику ЗАКИДУ Сомону Георгиевичу.

Председатель Совета Народных Комиссаров Армянской ССР *А. ПИРУЗЯН* (А. ПИРУЗЯН)

Управляющий делами Совета Народных Комиссаров Армянской ССР *В. КОММУНАРОВ* (В. КОММУНАРОВ)

Иванов
Петров
Сидоров

Զարյանի հիշատակին



Զարյանի կիսանդրին Երևանում

մայիսի 10-ի առավոտվանից փնտրում էին բանակի մատակարարման գծով աշխատողներին, բայց ոչ մի տեղ նրանց չգտան: Բանակի մատակարարման պետերը, նահանջելիս, հրամայել էին պայթեցնել ռազմամթերքի ու պարենի պահեստները: Դիվիզիայի մատակարարման գծով աշխատողները պատահականորեն դաշտում գտան որոշ քանակությամբ ռազմամթերք, որը և օգտագործվեց մարտում:

Մայիսի 10-ի առավոտյան գերմանացիները հարավից մտան Կարաչ գյուղը, գրավեցին դիվիզիայի պարենամթերքի աննշան պաշարները: Եթե չլինեք Կարաչի և Ագիբեի միջև ընկած փոքրիկ լիճը, գերմանացիները հեշտությամբ կարող էին գրավել Ագիբելը, ուր գտնվում էին թիկունքային հիմնարկները: Հրետանային գնդի դիվիզիոնի ներկայությունը Ագիբելում իդուր շանցավ. փոխգրնդապետ Դանիելյանը, որը հիվանդության պատճառով մնացել էր Ագիբելում, դիվիզիոնի հրամանատարին հրամայեց այրել պահեստները: Գույքը շրնկավ թշնամու ձեռքը: Բայց մենք էլ զրկվեցինք պարենից:

Մայիսի 10-ին, օրվա երկրորդ կեսին, գնդապետ Բաբայանը, մայոր Շուբան և փոխգնդապետ Դանիելյանը եկան դիվիզիայի հրամանատարական կետ: Ագիբել գյուղում գտնվում էին շտաբի և քաղբաժնի փաստաթղթերը, ինչպես նաև շտաբային ու թիկունքային որոշ հիմնարկներ: Անհրաժեշտ էր դրանք դուրս բերել գյուղից: Մենք ընկերների մի խմբի հետ ուղղվեցինք դեպի Ագիբել: Թշնամու ավիացիան ուժեղացրեց իր գյուղը: Կային սպանվածներ ու վիրավորներ: Բեկորը կտրել էր գինվորական տրիբունալի անդամ, իմ ռազմաճակատային ընկեր Սարգիս Մարտիրոսյանի աջ ոտքի կրունկը: Մենք նրան ցույց տվինք առաջին օգնություն և մյուսների հետ ուղարկեցինք թիկունք: Մարտիրոսյանի հետագա ճակատագիրը անհայտ մնաց մեզ: Դիվիզիայի շտաբի աշխատողները, որոնք քաղբաժնի հրահանգիչ Արամ Կասպարովի և թերթի խմբագիր Գ. Հովնանի հետ մնացել էին Ագիբելում, այնտեղից մեկնել էին, իրենց հետ տանելով փաստաթղթերն ու գույքը: Ճանապարհին նրանց հետապնդել էին թշնամու ինքնաթիռները: Ռումբի հարվածով ջարդել էին խմբագրության մեքենան: Դիվիզիան զրկվեց թերթ տպագրելու հնարավորությունից:

Մայիսի 11-ին 51-րդ բանակի քաղբաժնի տեսուչ գումարտա-

կային կոմիսար Ֆիլատովի (մեզ մոտ եկավ պատահաբար) հետ բանակի քաղաքաժին ուղարկեցինք մի կարճ զեկույց, որտեղ մատնանշեցինք, որ շնայած հսկայական դժվարություններին, դիվիզիան պաշտպանում է իր գրաված բնագիծը Կիյման լեռան շրջանում, ետ մղելով հակառակորդի բազմաթիվ գրոհները: Խնդրեցինք միջոցներ ձեռք առնել բանակի շտաբի հետ կապը վերականգնելու համար: Զեկույցի մեջ առանձին սրուձյամբ գրեցինք ռազմամթերք մատակարարելու հարցը, ուղղակի ասացինք, որ հակառակորդի նոր գրոհի դեպքում ռազմամթերքը կարող է բավականացնել ամենաշատը 30—40 րոպե: Պահանջեցինք հույժ շտապ օգնել արկերով, ականներով և փամփուշտներով, սակայն ոչ մի արձագանք չեղավ:

Մինչև ամսի 11-ի մթնշաղը 390-րդ դիվիզիան և նրա հարեվանները մեծ ջանքերի գնով համառորեն պաշտպանեցին իրենց դիրքերը: Արժանին պետք է հատուցել առաջին գծի վրա գտնվող 792-րդ գնդի հրամանատար մայոր Ակոպովին և կոմիսար Գրիգորյանին, 789-րդ գնդի կոմիսար ավագ գումարտակային կոմիսար Սարգսյանին և շտաբի պետ կապիտան Պարսեղովին, այդ գնդերի մարտիկներին, հրամանատարներին ու քաղաշխատողներին, որոնք ամենադժվարին պայմաններում քաջաբար դիմացան հակառակորդի գերակշռող ուժերի ճնշմանը: Այդ մարտերում շարքից դուրս եկավ 789-րդ գնդի հրամանատար մայոր Մինասովը: Գնդի հրամանատարությունն ստանձնեց շտաբի պետ Պարսեղովը:

Գնդերի հրամանատարները համառորեն ռազմամթերք էին պահանջում: Բայց որտեղի՞ց: Բանն այնտեղ հասավ, որ հրամայվեց մարդիկ առանձնացնել դաշտում պատահականորեն թողնված փամփուշտներ, ականներ ու արկեր հավաքելու, իսկ տեղ-տեղ գործադրել հակառակորդի զենքը: Հրամայվեց խնայել փամփուշտները, կրակել միայն նպատակակետերին՝ նշանառությամբ: Մայիսի 11-ի ժամը 13-ին 789-րդ գնդի կոմիսար Սարգսյանը զեկույցեց, որ 12-րդ հրաձգային բրիգադը նահանջում է Ագիբելի հյուսիսային ուղղությամբ, գնդի ձախ թևը բացվում է: Դիվիզիայի գրուձյունն էլ ավելի բարդացավ: 784-րդ գնդի հրամանատար մայոր Ներսիսյանը հրաման ստացավ ուժեղացնել հսկողությունը ձախ թևի վրա և պատրաստ լինել օգնության հասնելու 789-րդ գնդին, եթե հակառակորդը շրջանցի նրան:

Գերմանացիների համար դժվար չէր որոշել, որ մեր դիվիզիայի կրակի խտությունը շատ է պակասել: Եթե հակառակորդը չէր կարողանում ճեղքել մեր մարտակարգերը, ապա առաջին հերթին այն պատճառով, որ նա կենդանի ուժի տեսակետից գերազանցություն չուներ: Եվ օրվա երկրորդ կեսին նա տանկերի օգնությամբ ուժեղացրեց ճնշումը դիվիզիայի վրա: Այս ու այնտեղ թշնամու հետևակը փորձեց սեպվել դիվիզիայի պաշտպանության մեջ, մասնատել նրա մարտակարգերը:

Ժամը 14-ին հակառակորդի տանկերը փորձեցին ձախից թեվանցել 789-րդ գունդը: Այդ ժամանակ ընդհատվել էր գնդի կապը: Լիպարիտ Վարդանյանը մեկնեց գունդ՝ Սարգսյանի ու Պարսեղովի մոտ՝ պահանջելով ուժեղացնել իրենց ձախ թևը: Գունդը շտապ միջոցներ ձեռնարկեց: Հրետանային գնդի վերջին արկերը օգտագործվեցին թշնամու տանկերի գրոհները ետ մղելու համար: Այնուհետև, փոխգնդապետ Դանիելյանի խնդրանքով, ստիպված եղանք թույլ տալ, որ հրետանային գունդը նահանջի դեպի Սեմիկոլոդեզի:

Ժամը 16-ին 792-րդ գնդի և ծովային հետևակի 83-րդ բրիգադի կցվանքում (որն ղգալիորեն լայն էր, բաց) գերմանացիներին հաջողվեց սեպածն խրվել դիվիզիայի աջ թևի խորքը: Այլևս չունենալով փամփուշտներ ու նռնակներ, աջ թևի մարտիկները թողեցին իրենց խրամատներն ու սեղմվեցին հարևան ստորաբաժանումներին: Մայոր Ակոպովը մի խումբ մարտիկների հետ նետվեց գնդի աջ թևը: Բանը հասավ ձեռնամարտի: Դրությունը աջ թևում վերականգնվեց:

Ժամը 17-ին թշնամու հետևակի մի գումարտակ առաջին էջելոնի երկու գնդերի կցվանքում ներխուժեց դիվիզիայի մարտակարգերը: Գնդերի հրամանատարները շտապ օգնություն խնդրեցին: Թշնամին նետվում էր դեպի դիվիզիայի հրամանատարական կետը: Զանգահարեցի 784-րդ գնդի հրամանատար Ներսիսյանին:

— Ձեր աջթևյան գումարտակը անհապաղ տեղափոխեք 789-րդ և 792-րդ գնդերի կցվանքը, ետ մղեք հակառակորդի գրոհը և փակեք ճեղքը:

Առաջադրանքի կատարումը հանձնարարվեց կոմիսար Ազնավուրյանին: Գումարտակը շրջվեց հենց ընթացքից: Առջևից գնում էր գնդի կոմիսար Ծավարը Ազնավուրյանը:

Գումարտակը հաջողութեամբ կատարեց մարտական խնդիրը: Ազնավորյանը վերադարձավ: Նա վիրավորվել էր թևից և ոտքից: Նրան ուղարկեցինք թիկունք: Կոմիսարի պարտականութունը դրվեց գնդի պրոպագանդիստ Երեմ Եղիազարյանի վրա:

Արկեբր ալլևա շկային, ականները շատ քիչ էին, մարտիկներից ոմանք ունեին ընդամենը 5—10-ական փամփուշտ, իսկ շատերը ոչ մի հատ: Որոշվեց մուժն ընկնելուն պես գնդերը հանել դիրքերից, նահանջել, նպատակ ունենալով կտրվել հակառակորդից: Բայց հակառակորդը խափանեց մեր մտահղացումը. նա կանխեց մեզ: Իրիկնադեմին անցավ գրոհի: Վերջացան մեր պաշտպանվելու միջոցները: Թշնամին ճեղքեց մեր պաշտպանութունը:

Մարդկային մեծ ղանգվածը շարժվեց դեպի հրամանատարական դիրտակետը, մենք նետվեցինք կանգնեցնելու նրանց, սակայն պարզվեց, որ դրանք գերմանացիներ են: Մթության մեջ չէինք կարողացել զանազանել նրանց:

Այդ պահին ետևից լսեցի «ընկե՛ր կոմիսար», բացականչութունը: Հենց այդ պահին ավտոմատային կրակ բացեցին: Սողեսող հասա մոտակա ուժրափոսներից մեկը: Նորից շատ մոտիկից լսեցի՝ «ընկեր կոմիսար»: Զարմանք կտրեցի: Գուցե գերմանացի է: Սպառնացի թե՛ «նո՞նակ կնետեմ, ո՞վ ես, ձայն տուր», իսկ ես նո՞նակ շունեի:

Պարզվեց, որ կոմիսար կանչողը դիվիզիայի հատուկ բաժնի պետի տեղակալն էր, որի ազգանունը, դժբախտաբար մոռացել եմ: Նա գիտեր, որ իմ առջևում գերմանացիներ են, շտապում էր նախազգուշացնել ինձ: Երկուսով մերթ սողեսող, մերթ վազքով նահանջեցինք: Մեզ համար պարզ դարձավ, որ 789-րդ գունդը կտրվել է դիվիզիայից: Քաղբաժնի հրահանգիչներ Գերասիմ Վարդանյանը և Եղիշե Համբարձումյանը ևս եկել էին իմ ետևից:

Գերմանացիները գալիս էին հրամանատարական կետի վրա: Տարածութունը արագորեն կրճատվում էր: Ես այստեղ հանդիպեցի սակրային գումարտակի կոմիսար Երեմ Խաչատրյանին: «Ապահովիր հրամանատարական կետի նահանջը և մարտով նահանջիր մեր ետևից»: Մի քանի տասնյակ սակրավորներ և հետախույզներ Երեմ Խաչատրյանի հրամանատարութեամբ ապահովեցին հրամանատարական կետի նահանջը և իրենք էլ նահանջեցին առանց կորստի: Կային թեթև վիրավորներ: Վիրավորվել էի նաև ես:

Գնդակը դիպել էր կրունկիս: Դժվար էր քայլել, բայց վերքը կայելու ժամանակ շկար:

Մթնշաղը գնալով թանձրանում էր: Սկսեց անձրև մաղել: Հասնելով դիվիզիայի հրամանատարին և մյուսներին, որոշեցինք ետ քաշվել դեպի երկաթգիծը, որ ձգվում էր Կիյաթ գյուղի հակառակ կողմով: Դիվիզիայի վարչութունը կտրվեց գնդերից և ետ մնաց:



Մութ գիշերին կանգ առանք երկաթգծի մոտ գտնվող երեք բլուրների շրջանում, Կիյաթ գյուղից մոտավորապես երկու կիլոմետր դեպի հյուսիս: Դիվիզիայի հրամանատար Բաբայանը գրնդերի հետ կապ հաստատելու համար ուղարկեց կապավորներ, հրահանգելով, որ նրանք կենտրոնանան Սեմի-Կոլոդեզիում: Կապավորները պետք է վերադառնային ամենաուշը առավոտյան կողմ: Դատելով պաշտպանութունը ճեղքելու ուղղութիւններից և հակառակորդից մեր գնդերի կտրվելու հնարավորութիւնից, ենթադրում էինք, որ 784-րդ և 792-րդ գնդերը նահանջել են դեպի Սեմի-Կոլոդեզի, իսկ 789-րդ գունդը՝ թաթարական Քաջալար: Դրանում մենք չսխալվեցինք: Բայց կապավորներին շահողվեց գիշերով նրանց գտնել: Կապավորներից վերադարձավ միայն մեկը: Նա զեկուցեց, որ 784-րդ գնդի գումարտակներից մեկը՝ կապիտան Թորոսյանի հրամանատարութեամբ, գտնվում է Սեմի-Կոլոդեզիից մոտավորապես 2,5 կիլոմետր հարավ-արևմուտք: Կապիտան Թորոսյանը նույնպես փնտրում է իր գունդը: Ինչպես հետո պարզվեց, գունդը եղել էր գումարտակից ոչ հեռու, փոքր ինչ արևելք և կապ էր հաստատել 12-րդ հրաձգային բրիգադի հետ:

Որոշվեց նաև թողնել բլուրների շրջանը և մայիսի 12-ի վաղ առավոտյան շարժվել դեպի Սեմի-Կոլոդեզի:

Սակայն հրամանատարը հապաղեց, ենթադրելով, որ մյուս կապավորները պետք է վերադառնան բլուրների շրջանը: Արդեն լույսը բացվել էր: Դիվիզիայի հրամանատարը, խնդրելով մեզ վերահսկել քողարկումը, ինքը գնաց մեզանից դեպի հյուսիս գտնվող զորամասերն ստուգելու, խոստանալով վերադառնալ 10—15 րոպեից: Սակայն նա չվերադարձավ: Մինչ մենք փնտրում էինք նրան,

մեզանից ոչ հեռու հայտնվեց գերմանացիների շարասյունը: Ժամը 8-ից հարավ-արևելքից սկսեցին մեզ վրա շարժվել նախ՝ հետևակի մոտ մի գումարտակ, հետո՝ մանր ստորաբաժանումներ, 18 տանկ և հեծելազորային մի էսկադրոն: Մենք պաշտպանություն գրավեցինք երկաթուղազծի հողաթմբի երկարությունը, բողբոջակները և հետևեցինք հակառակորդի շարժմանը: Բայց հակառակորդը մտավ գյուղ և մնաց այնտեղ:

Մենք որոշեցինք շարժվել դեպի Սեմի-Կոլոդեզի: Մեր տրամադրությունն տակ կար ընդամենը 153 մարդ, որոնք հիմնականում զինված էին հրացաններով, շահաված ձեռքի մեկ գնդացիրը, մեկ հակատանկային հրացանը, որն ուներ ընդամենը երկու փամփուշտ, և մի քանի նռնակ: Երկաթգծի հողաթմբը մեր շարժումը ծածկում էր հարավ-արևելքից: Արդեն օրվա երկրորդ կեսն էր: Մեզնից աջ, գրեթե զուգահեռ, շարժվում էր գերմանացիների մոտ մի վաշտ: Մենք անընդհատ հետևում էինք նրանց, շղաղարեցնելով մեր շարժումը: Գերմանացիները Սեմի-Կոլոդեզից երեք կիլոմետր հարավ-արևմուտք մտան Կարակույ գյուղը:

Սեմի-Կոլոդեզիում մեզ էին սպասում կապիտան Քորոսյանի գումարտակը և 792-րդ գնդի մի խումբ մարտիկներ՝ լեյտենանտի ղեկավարությամբ: Մայր Ակոպովը այդ խմբին թողել էր ռազմամթերքի մնացորդները պահպանելու: Լեյտենանտը հավաստեց, որ 792-րդ գունդը իր հետ ռազմամթերքի որոշ պաշար է վերցրել: Ռմբակոծությունից խուսափելու համար մայր Ակոպովը գունդը տարել էր դեպի արևելք, Ռուսկի Չուկալ գյուղի շրջանը: Ռազմամթերքի մնացորդները իրենց հետ վերցրին կապիտան Քորոսյանի գումարտակը, սակրավորները, կապավորները և հետախույզները: Ինչ-որ տեղ ռազմիկները գտան նաև պարենամթերքի մի պահեստ: Գտնված պարենը կրավականացներ 2—3 օր:

Մինչ մեր մարդիկ զբաղված էին պարենամթերքների պահեստում, Սեմի-Կոլոդեզիի հարավային ծայրամասում հայտնվեց գերմանական վաշտը: Սակրավորներն ու կապավորները ետ շարժվեցին նրան: Կրելով մարդկային կորուստներ, գերմանացիները նահանջեցին: Մենք որոշեցինք պաշտպանության նոր բնագիծ գրավել Սեմի-Կոլոդեզիի և 47,1 բարձունքի շրջանում, մտածելով հսկողության տակ առնել երկաթգիծը: Փոխգնդապետ Բագրատ Դանիելյանը գնաց հրամանը գնդերին հաղորդելու, սակայն շուտով

վերադարձավ և զեկուցեց, որ հանդիպել է 51-րդ բանակի շտաբի կապի սպային, որը բանակի շտաբի անունից հրամայել է կենտրոնանալ բանակի երկրորդ էշելոնում: Դանիելյանը հայտնեց նաև, որ 47-րդ բանակի զորքերը դիրքեր են գրավում «Թուրքական պատենեշ» մոտ: Գնդերն արդեն շարժվում էին այդ երթուղով: Այստեղ հայտնվեց նաև գնդապետ Բաբայանը:

789-րդ գնդի մասին դեռ տեղեկություն չունեինք: Բայց երթի ժամանակ, գիշերով, հասանք այդ գնդի շարասյան պոչին: Կիյ-ման լեռան վրա մեր դիրքերի ձեղքումից հետո 789-րդ գունդը նահանջել էր դեպի հյուսիս-արևելք, իրեն կարգի բերելու համար որոշ ժամանակ մնացել էր Ադիբեկից հյուսիս անցնող ճանապարհի մոտ, իսկ այնուհետև շարժվել էր Լենինսկոե գյուղի ուղղությամբ: Բայց համոզվելով, որ գերմանացիները գրավել են Լենինսկոեն, փոխել էր երթի ուղղությունը դեպի հյուսիս-արևելք:

«Թուրքական պատենեշը» ոչ ոք չէր պաշտպանում: Հետևաբար, երկրորդ էշելոնում պաշտպանության բնագիծ բռնող դիվիզիաները, նրանց թվում նաև 390-րդ, մեխանիկորեն գտնվեցին առաջին էշելոնում: Գնդերը արագորեն խրամատավորվեցին բարձունքների վրա՝ Միխայլովկայից արևմուտք: Չախից և աջից պաշտպանվում էին հարևան զորամասերը: Լավ եմ հիշում 157-րդ դիվիզիան, որի հրամանատարն էր գնդապետ Կուրոպատենկոն:

Մայիսի 13-ին, ժամը 10-ին, ռմբակոծիչներն ու խոյրնթացներն սկսեցին խմբերով ռմբակոծել զորամասերի դիրքերը: Գլխավոր հարվածն ուղղված էր 390-րդ դիվիզիայի դեմ, որովհետև նա պաշտպանում էր միակ խճուղային ճանապարհը:

Ռմբակոծությունները շարունակվեցին ամբողջ օրը, ստեղծվեց սպառնալից դրություն: Մենք առաջին գիծ նետեցինք ինչ-որ կար շտաբի տրամադրության տակ, ներառյալ պարետային դասակը: Միխայլովկայում մնացին միայն շտաբի պետ մայոր Վ. Ի. Շուբան և շտաբի ու քաղբաժնի մի քանի աշխատողներ: Գնդապետ Բաբայանի և փոխգնդապետ Դանիելյանի հետ պայմանավորվեցինք ժամը 15-ին լինել Միխայլովկայում: Օրվա երկրորդ կեսին հակառակորդը տանկային զորհ սկսեց: Գնդերից զեկուցեցին հարևան զորամասերի նահանջի մասին: Նրանց ետևից սկսեցին նահանջել նաև մեր գնդերը: Դիվիզիայի հրամանատարը չկար: Մայր Ակոպովը զեկուցեց, որ դիվիզիայի հրամանատարը չի հասել իր գունդը:

Գնդերը նահանջում էին, իսկ մենք փնտրում էինք դիվիզիայի հրամանատարին¹: Շտաբի ու քաղբաժնի փաստաթղթերը բարձելով միակ բեռնատար ավտոմեքենային, մի խումբ ընկերների հետ ուղարկեցինք թիկունք: Հենց որ մեքենան շարժվեց դեպի կիրճը, գերմանացիները ականանետներից կրակ բացեցին նրա վրա: Բարերախտաբար ընկերներն անկորուստ անցան կիրճով:

Մեզնից անկախ պատճառներով Շուբայի ու Դանիելյանի հետ ուշացանք Միխայլովկայում, իսկ երբ դուրս եկանք գյուղից, գերմանացիները կրակով փակեցին մեր ճանապարհը: Մենք գնացինք դեպի մացառուտները: Ինչ-որ տեղ ճահճուտում Բագրատ Դանիելյանը սայթաքեց և կորցրեց «մաուզերը»: Նա մնաց անզեն: Դա գնդապետ Զաբյանի «մաուզերն» էր, մեր մարտական հրամանատարից մնացած միակը հիշատակը: Մենք մեծ ցավով հեռացանք այդ վայրից, հնարավորություն չունենալով որոնել և գտնել մաուզերը: Մայր Շուբան Դանիելյանին հանձնեց «ՏՏ» ատրճանակը, իրեն թողնելով «պարաբելումը»: Դուրս գալով ճահճուտից, կանգ առանք գետակի մոտ, որպեսզի որոշենք մեր հետագա անելիքը: Շրջակա բոլոր լեռները զրավված էին գերմանացիների կողմից, բացի արևելյան կողմում ցցված կոնաձև բարձունքից: Կիրճով ձգվող միակ ճանապարհը գնդակոծվում էր, գերմանացիները մոտենում էին նրան:

— Գնանք դեպի այդ բարձունքը, — ասացի, ցույց տալով այն:

Ընկերներս դժկամությամբ համաձայնեցին, պատճառաբանելով, թե գերմանացիները մոտ են, լեռնալանջը լավ դիտվում է նրանց կողմից: Սակարկելու ժամանակ չկար: Մենք շարժվեցինք բաց լանջով:

Գերմանացիները մեզ նկատեցին, երբ արդեն ժայռերը մեզ պաշտպանում էին գնդակների տարափից: Խիստ հոգնել էինք, բայց կանգնել հնարավոր չէր: Բարձունքի հակառակ կողմում մեզ հանդիպեց կապիտան Թորոսյանը՝ վաշտի հետ: Լիպարիտ Վարդանյանը և Առուստամ Առուստամովը նրան հրամայել էին օգնության գալ մեզ:

Երեկոյան դիվիզիայի պաշտպանությունը գրավեց 157-րդ դիվիզիայի հարևանությամբ, որն արդեն հասցրել էր խրամատավոր-

¹ Հետո իմացանք, որ նա գունդ մեկնելու ժամանակ վիրավորվել և անցել է նեղուցը:

վել նոր վայրում: Պայմանավորվեցինք համագործակցել: Ընտրեցինք միացյալ հրամանատարական կետը: Գնդապետ Կուրպատենկոն մեզ հյուրասիրեց ընթրիքով: Գիշերը հանգստացանք հերթով: Արթնանալով, ես տեղում չգտա շտաբի կոմիսար Առուստամովին և քաղբաժնի պետ Վարդանյանին: Նրանք գիշերով գնացել էին պաշտպանության գիծն ստուգելու: Սակայն, ինչպես հետո պարզվեց, հետագարձ ճանապարհը շփոթելով, ընկել էին հարևան զորամասերից մեկը և նրա հետ նահանջել դեպի Կերչ:

Մայիսի 14-ին գնդապետ Կուրպատենկոն առաջարկեց օգտվել առավոտյան մառախուղից, զորքերը ետ քաշել ռուսական և թաթարական Չուրբաշ գյուղերի հարմար բնագիծը:

390-րդ դիվիզիայի պաշտպանության հատվածն ընդգրկում էր լճակի և թաթարական Չուրբաշի միջև ընկած խճուղային ճանապարհի շրջանը: Հենց որ մառախուղը ցրվեց, սկսվեց գերմանացիների տանկային գրոհը: Մեծ դժվարությամբ դիմադրեցինք: Բոլոր հրամանատարներն ու քաղաշխատողները գտնվում էին առաջին գծի վրա: Անհրաժեշտ էր, որ մարտիկներն իրենց կողքին տեսնեին ավագ հրամանատարներին:

Օրվա երկրորդ կեսին հակառակորդը դիմեց նոր գրոհի:

Սկսվեց զորքերի նահանջը դեպի Կերչ:

Անցնելով մեր մարտակարգերի միջով, մարդկային հոսանքը իր ընթացքի մեջ առավ նաև մեր ստորաբաժանումները: Միախառնըվեցին տարբեր զորամասեր... Նետվեցինք այս ու այն կողմ, փորձելով կանգնեցնել նահանջողներին: Բայց ապարդյուն: Շուբայի և Դանիելյանի, շտաբի և քաղբաժնի աշխատողների հետ փորձեցինք նահանջի որոշ կարգ ստեղծել: Ինձ հետ էին կուսահանձնաժողովի քարտուղար Հայկ Պարոնյանն ու քաղբաժնի ավագ հրահանգիչ Եղիշե Համբարձումյանը: Շուտով մենք իրար կորցրինք իրարանցման մեջ: Այդ պահին մոտիկից սուլելով ականջիս մոտով անցավ գնդակը: Նայեցի շուրջս: Բոլորը մերոնք էին: Մի կրտսեր լեյտենանտ գնդակահարեց կարմիրբանակայինի շինելով ինչ-որ մեկին և մոռեցավ ինձ «Սա էր ձեզ վրա կրակողը, ընկեր կոմիսար: Կարմիրբանակայինի համազգեստովը գերմանացի էր: Թույլ տվեք լինել ձեզ հետ»: Կրտսեր լեյտենանտը մեր դիվիզիայից չէր: Նա ինձ հետ եկավ մինչև Կերչ, բավական օգնեց զանազան գործերում, հետո գնաց իր զորամասը որոնելու:

Ջորջերը նահանջում էին անկազմակերպ և խռնված, իսկ ֆաշիստները ուժեղացան և զինված էին, զնդակոծում: Հրամանատարների ու քաղաշխատողների օգնությունը Կերչի արևմտյան կողմում կարողացանք կանգնեցնել բավական մեծ թվով նահանջողների: Գրավեցինք բարձունքի վրա եղած խրամատները: Սկսեցինք ուշադիր զննել շուրջը: Նահանջողների մի մասը շարժվում էր Կամիշ-Բուրունի ուղղությամբ, շիմանալով, որ այն գրավված է թշնամու կողմից, մյուս մասը՝ Կերչ, իսկ ոմանք էլ՝ Մաջակ: Մեզնից հարավ մի խումբ էր շարժվում՝ մի գումարտակի շափ: Վազելով փորձեցի կանգնեցնել: Բայց նրանց ուղեկցող մի փոխգնդապետ շեթարկվեց: Ինձ մոտեցավ մի լեյտենանտ, ասաց ազգանունը՝ Գևորգյան: Հիշում եմ՝ դափանցի երիտասարդ էր: Նա ինձ խնդրեց թողնել խրամատը, խոստանալով դիրքերը պահել մինչև երեկո: Լեյտենանտին առաջարկեցի որոնել մեր հրամանատարական կետը Կերչի արևելյան ծայրամասում, իսկ ես մի փոքրիկ խմբի հետ հեռացա:

Կերչի հարավ-արևմտյան ծայրամասի աչքիներից «կատյուշաները» կրակում էին մեր գլխավերևով: Այստեղ, բոլորովին անսպասելի, հանդիպեցի զեներալ-մայոր Կնիզային՝ փառաբանված կոմբրիգ-բուդյոննովականին, որի հետ ծանոթ էի Հայաստանից: Միասին մենք գնացել էինք ՀամԿ(բ)Կ XVIII համագումար, զրուցել, կատակել... Գնե՞րալը վիրավոր էր: Այրված դեմքը համարյա ամբողջովին վիրակապված էր, բուդյոննովյան բեղերն անգամ չէին երևում: Տանջվում էր ցավից, դժվարությամբ էր խոսում: Նա հրամայեց ոտքի հանել հեծյալներին, դիվիզիան ալլևս գոյություն չունենա:

Մենք նույնպես շարժվեցինք: Մեզ ընդառաջ եկավ 27 մարդուց բաղկացած մի խումբ՝ բոլորն էլ 792-րդ գնդից: Նրանք փնտրում էին իրենց գունդը, նրանց հրամայեցի հետևել մեզ:

8. ԿԵՐՉՈՒՄ

Կերչի արևելյան ծայրամասում, Վոլկովի անվան գործարանից ոչ հեռու, հանդիպեցինք մի խումբ ընկերների, որոնց մեջ էին դիվիզիայի շտաբի օպերատիվ բաժանմունքի պետ մայոր Մոկրին,

հրետանու շտաբի պետ մայոր Սլյուսարևը, քաղբաժնի պետ Վարդանյանը, շտաբի կոմիսար Առուստամովը, հատուկ բաժնի պետ Խուցիշվիլին, 792-րդ գնդի հրամանատար Ակոպովը, կոմիսար Գրիգորյանը, 954-րդ հրետանային գնդի հրամանատար մայոր Բոյաջյանը և ուրիշներ: Մայոր Մոկրին զեկուցեց.

— Վոլկովի անվան գործարանի շրջանում և Ենիկալեից հյուսիս կանգնած են 784-րդ գունդը առանց մի գումարտակի, 792-րդ գունդը, 954-րդ հրետունդը և 789-րդ գնդի մի քանի ստորաբաժանումներ, ինչպես նաև շտաբի ու թիկունքի աշխատողների մի մասը: Բուժսանգումարտակը, թիկունքը և շտաբի աշխատողների մի մասը նահանջել են դեպի Ժուկովկա, նրանց հետ է քաղբաժնի հրահանգիչ Կասպարովը՝ քաղբաժնի փաստաթղթերով: 789-րդ գնդի հիմնական մասը, ըստ երևույթին, նահանջել էր դեպի Կամիշ-Բուրուն: Հնարավոր է, որ հենց այնտեղ էր գտնվում նաև 784-րդ գնդի գումարտակը: Առայժմ հայտնի չէր, թե որտեղ են գտնվում շտաբի պետ մայոր Շուբան, հրետանու պետ փոխգնդապետ Գանիելյանը և շատ ուրիշներ: Դիվիզիային հրամայված էր պաշտպանություն գրավել քարհանքերի շրջանում:

Լսելով մայոր Մոկրուն, կարելի էր ենթադրել, որ դիվիզիայի հիմնական ուժերը, բացի մի գնդից, հիմնականում ի մի են հավաքվել: Բայց իրականում անձնակազմի մի մասը խառնվել էր ռազմաճակատի մյուս զորամասերի հետ: Ոմանք փնտրում էին իրենց գնդերը, իսկ ոմանք էլ աշխատում էին անցնել նեղուցը: Նույնիսկ դժվար էր գտնել շտաբի և քաղբաժնի որոշ աշխատողներին, թեև նրանք էլ էին յուրաքանչեքին որոնում:

Ստիպված եղա մայոր Մոկրուն նշանակել դիվիզիայի շտաբի պետ, իսկ մայոր Սլյուսարևին՝ հրետանու պետ: Եղած ուժերով շարժվեցինք դեպի քարհանքերը: Մայոր Սլյուսարևը առաջադրանք ստացավ հրետանային գնդում եղած արկերը կենտրոնացնել մի դիվիզիոնում և այն տեղափոխել քարհանքերի դիրքերը: Հրետանու պետին հրամայվեց զինամթերք հայթայթել դիվիզիայի համար: 789-րդ գունդը, նահանջելով Կամիշ-Բուրունի կողմը, կանգ էր առել Կարանտին կայարանի մոտ: Ինչպես հետո զեկուցեց գնդի

1 Պարզվեց, որ մայոր Շուբան, փոխգնդապետ Գանիելյանը և մի քանի ընկերներ նույն օրը անցել են նեղուցը:

կոմիսար Սարգսյանը, այդ գնդին էր միացել նաև 784-րդ գնդի գումարտակը, նրա հրամանատար կապիտան Թորոսյանը նշանակվել էր գնդի հրամանատարի տեղակալ: Գնդի հրամանատարությունը ի մի էր հավաքել ուրիշ զորամասերի անկազմակերպ նահանջող ռազմիկներին ևս: Ընդհանուր առմամբ գնդում հավաքվել էր շուրջ երկու հազար մարդ: Մայիսի 14-ի երեկոյան գունդը հակառակորդից ետ խլեց Կարանտին գյուղը, գրավեց երկու հաստոցավոր և ութ ձեռքի գնդացիք: Հակառակորդը հասել էր Կերշ և մայիսի 15-ին գրավեց: Մեր զորքերը ռազմաճակատի նոր հրամանատարություն հրամանով կազմակերպեցին հակազոր՝ և ետ գրավեցին Կերշ քաղաքը: Այդ ժամանակ 789-րդ գունդը անցավ քաղաքի միջով ու դուրս եկավ Վոյկովի անվան գործարանի շրջանը և հաջորդ օրը քարհանքերի դիրքերում կապ հաստատեց մեզ հետ:

Քարհանքերում՝ գնդերի դիրքերում շատ քիչ մարդիկ կային, իսկ ռազմամթերքի պաշար համարյա չկար: Հրետանային դիվիզիոնում մնացել էր ընդամենը 18 արկ: Հրամայվեց կրակել ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ միայն տանկերի վրա, ուղիղ նշանառությամբ:

Բարձունքները ծածկված էին մշուշով, տեսանելիությունը խիստ թույլ էր: Որոշ միջոցներ ձեռնարկեցինք դիտարկումներն ու ժեղացնելու ուղղությամբ: Դիտորդները զեկուցեցին ձախից ինչոր զորասյան շարժման մասին: Ստուգեցինք: Զորասյան առջևից քայլում էր սև յափուռնիքով և կուբանկայով մի հաղթանդամ մարդ: Դա գնդապետ Իվան Իլլիչ Լյուդնիկովն էր: Վազեցինք ընդառաջ: Գրկախառնվեցինք: Իվան Իլլիչը մարդկանց հրամայեց դադար առնել, իսկ ինքը մեզ հետ նստեց զարնանային թաց խոտի վրա:

— Մի քանի օր գտնվում էի ռեզերվում, — ասաց Լյուդնիկովը, — հետո հրամայեցին փնտրել 63-րդ դիվիզիան և ստանձնել նրա հրամանատարությունը: Գտա 62 մարդ, ես 63-երորդն եմ, ճիշտ այնքան, որքան դիվիզիայի համարն է:

Դա այն դիվիզիան էր, որի մարտակարգերը մայիսի 8-ին ճեղքել էին գերմանացիները:

— Եկեք միանանք, Իվան Իլլիչ: Դուք կլինեք հրամանատարը, իսկ ես՝ կոմիսարը, — առաջարկեցի:

— Ոչ, տղաներ: Կհանձնեմ մարդկանց ու կխնդրեմ որևէ գործ տալ ինձ:

Ո՞ւմ էր հանձնելու մարդկանց, ինքն էլ չգիտեր:

Մեր գլխավոր հոգսը ռազմամթերք ձեռք բերելն էր: Մենք չգիտեինք ո՛չ բանակի շտաբի և ո՛չ էլ զինամթերքի պահեստների վայրը: Մայրը Սլյուսարևը կաշվից դուրս եկավ, բայց ոչ մի արդյունքի չհասավ: Նա իր բոլոր հրետանավորներին ու ականաձիգներին դուրս բերեց բաց դաշտ՝ փամփուշտներ, ականներ, արկեր փնտրելու: Կարմիրբանակայինները նույնպես փամփուշտ էին փնտրում:

Մայիսի 15-ի և 16-ի ընթացքում հանդիպեցի 51-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ Կորոզևի ու շտաբի պետի, ռազմաճակատի ներկայացուցիչ զենեքալ-մայոր Վորոբյովի և ռազմական խորհրդի անդամ Շամանինի հետ: Սրանք ոչ մի ցուցում չտվին, ոչնչով չօգնեցին: Կարծես նրանք կորցրել էին հավատը իրենց նկատմամբ: Մայիսի 16-ի ուշ երեկոյան հաղորդեցին, որ Մեխլիսը գտնվում է Ենիկալեում: Մայրը Ակոպովին թողեցի իմ փոխարեն, իսկ մայրը Մոկրուն հրամայեցի մեկնել ժուկովկա և շտաբի ու քաղաքաժնի փաստաթղթերը փոխադրել Կուբան, իսկ ես Ա. Ա. Ռուստամովի, Լ. Վարդանյանի և երկու ավտոմատավորի հետ գնացի դեպի Ենիկալե:

Մեխլիսը տեղում չէր: Ռազմաճակատի քաղվարչության պետ բրիգադային կոմիսար Ա. Ս. Եմելյանովը, շսպասելով զեկուցի, ասաց.

— Կավ է, որ եկաք, ձեզ հետ մարդիկ վերցրեք և ստուգեք Վոյկովի գործարանի շրջանի պաշտպանությունը: Տեղեկություններ կան, որ գերմանացիները Ենիկալեի ուղղությամբ ճեղքել են մեր սրաշտպանությունը: Եթե այդ բանը տեղի ունենա, մեծ անախորժություններ կլինեն:

Հինգ մարդուց բաղկացած մեր խումբը մուտք գիշերով ուղևորվեց հրամանը կատարելու: Դիրքերում բավականաչափ մարդիկ կային: Հակառակորդը ակտիվության ոչ մի նշան ցույց չէր տալիս: Գործելով ռազմաճակատի հրամանատարության անունից, մենք պահանջեցինք տեղամասերի հրամանատարներից՝ ուժեղացնել պաշտպանությունը և, վերադառնալով, զեկուցեցինք Եմելյանովին:

Նա լսեց ռազմամթերքով ապահովելու մասին մեր խնդրանքը, սակայն պատասխանի փոխարեն հրամայեց. Նոր և կարևոր սարքավորումներ ենք ստացել: Չի կարելի թույլ տալ, որ դրանք ընկ-

նեն հակառակորդի ձեռքը: Ձեզ հետ վերցրեք 25—30 հոգի հրամ-
կազմից ու քաղաշխատողներից, որոնց դուք լավ եք ճանաչում և
կազմակերպեք սարքավորումների առաքման գործը: Դրանց տեղը
ձեզ ցույց կտան: Շուտով մոտորանավը կմոտենա ամիս:

Մենք մարդիկ չունեինք:

Եմելյանովը ստիպված եղավ իր մարդկանցից 22 հոգի տրա-
մադրել մեզ: Առուստամովին և ավտոմատավորներին թողնելով
Ենիկալեում, մենք մեկնեցինք սարքավորումները փոխադրելու:
Ինչ սարքավորումներ էին՝ շիմացանք: Միայն գիտեինք, որ
«գաղտնի» են: Միակ ճանապարհը լեցուն էր հրանոթներով,
բեռնատար ավտոմեքենաներով, տրակտորներով, լաֆետներով,
սալլերով՝ մեծ մասամբ ջարդված կամ այրված, անկանոն շարժ-
վող մարդկանցով: Անցնելն անհնարին էր: Ստիպված եղանք մեր
ուսերով փոխադրել սարքերը: Հակառակորդը անընդհատ գնդակո-
ծում էր ճանապարհը: Մեծ դժվարությամբ այդ սարքերը հասցրինք
ծովափ և հանձնեցինք մոտոնավակին: Ծանապարհին և Վարդան-
յանը կոնտուզիա ստացավ: Նրան և Առուստամովին հրամայեցինք
փոխադրվել Կուբանի ամր:

Առավոտյան վերադարձա: Գիվիդիայում հատուկնետ ավագ
հրամանատարներ ու քաղաշխատողներ էին մնացել՝ գնդերի հրա-
մանատարներ Ակոպովն ու Ներսիսյանը, կոմիսարներ Սարգսյանն
ու Գրիգորյանը, հրետանու շտաբի պետ Սլյուսարևը, վարժական
գումարտակի կոմիսար Միրզոյանը: Կերչի մոտ զոհվեց 789-րդ
գնդի հրամանատարի պաշտոնակատար կապիտան Պարսեղովը:
Շարքից դուրս եկավ 954-րդ հրետանու հրամանատար մայոր Բո-
յաջյանը: Ծանր վիրավորվեցին 784-րդ գնդի կոմիսարի պաշտո-
նակատար պրոպագանդայի հրահանգիչ Երեմ Եղիազարյանը, քաղ-
բաժնի ավագ հրահանգիչներ Միխայիլ Ավետիսովը և Եղիշե Համ-
բարձումյանը: Վերջինս մահացավ հոսպիտալում:

Կավ հիշում եմ, ականանետային վաշտը ականներ շուներ:
Իսկ ականանետն առանց ականի միայն բեռ է, ուրիշ ոչինչ: Վաշ-
տը հրամանատար շուներ, հրամանատարի պարտականություննե-
րը կատարում էր վաշտի քաղղեկ, 1920 թ. կուսակցության անդամ
Պատվական Հարությունյանը: Շուտով Հարությունյանը նույնպես
վիրավորվեց: Վիրավոր վիճակում Հարությունյանը մտածում էր
ականանետների մասին, ինչպես անի, որ դրանք նետի ծովը, բայց

ամբողջ ժամանակ մտածում էր՝ հանկարծ իրեն չպատժեն Կու-
համար: Նա այդ մասին զեկուցեց: Հրամայեցինք նրան՝ սուղել
ականանետները և անհապաղ էվակուացվել:

Սկսվեց մեր զորքերի տեղափոխումը Կուբան:

Փոխադրական միջոցները չէին բավականացնում: Ոմանք նե-
ղուցն անցնում էին լաստերի վրա, ավտոդողերով, ով ինչպես
կարող էր: Ահա մի օրինակ: «Հայկական սնայպեր» թերթի խմբա-
գիր Հովնանը չկարողացավ փոխադրվել մոտորանավով, բայց ծո-
վըն անցավ...

Ախտանիզովկայում (Կուբան) Հովնանը պատմեց.

— Նստեցի մի տախտակի վրա, որպեսզի անցնեմ ծովը: Հո-
սանքը ինձ տարավ Կամիշ-Բուրունի կողմը: Ես արդեն գիտեի, որ
այնտեղ գերմանացիներ են: Ամեն ինչ կորած էի համարում. «Ավե-
լի լավ է խեղդվեմ, քան գերի մնամ», մտածում էի: Հանկարծ
տախտակս դեմ առավ ինչ-որ բանի: Ձկնորսական ցանց էր: Ամուր
կառչեցի նրանից: Մթնեց: Վրա հասավ դիշերը: Ես սկսեցի բղա-
վել՝ «Օգնեցե՛ք»: Կուսացավ, դարձյալ ոչ ոք չկար: Գերմանացիները
անընդհատ ոմբակոծում էին նեղուցը: Մոտավորապես ժամը տասն
էր... Աչքերիս չհավատացի... Ինձնից ոչ այնքան հեռու մի մոտո-
րանավ երևաց: «Ուրեմն փրկության հույս կա», — արագ առկա-
ծեց գլխումս: Սկսեցի բղավել: Երբ մեր մոտորանավը մոտեցավ,
ուրախությունից քիչ էր մնում նետվելի ծովը:

Այսպես, Հովնանը փրկեց գիվիդիայի թերթի համարները:
Լուր ստացանք, որ մայոր Մոկրին չի կարողացել փոխադրել դի-
վիզիայի փաստաթղթերը: Նա չվերադարձավ: Մեր տրամադրու-
թյան տակ շատ քիչ մարդ էր մնում: Բանն այն էր, որ համարյա
բոլոր նրանք, ովքեր ուղեկցում էին վիրավորներին, այլևս չէին
վերադառնում իրենց ստորաբաժանումները, մեկնում էին վիրա-
վորների հետ: Ստիպված եղա 28 մարդուց բաղկացած մի խմբով,
մեծ մասամբ հրետանավորներ, գնալ ժուկովկա, մյուսներին թող-
նելով մայոր Ակոպովի տրամադրության տակ: Ավագ սպաներից
խմբի մեջ էին մայոր Սլյուսարևը և գումարտակային կոմիսար
Միրզոյանը: Բարեբախտաբար, մինչ մենք կմոտենայինք ծովա-
փին, մյուս զորամասերը ետ մղեցին տանկային զորհրդ:

Ժուկովկայում դրությունը ծանր էր: Գերմանացիները գրավել
էին գյուղից հյուսիս ընկած բարձունքները, իսկ գյուղում գլխավոր-

րապես թիկունքային ստորաբաժանումների մնացորդներն էին մնացել, նրանց թվում կանայք՝ բժշկուհիներ ու բուժքույրեր: Նեղուցի ափին մենք ստիպված եղանք բոլորին ոտքի հանել գյուղի պաշտպանութունը ուժեղացնելու համար: Հաջողվեց հարևան զորամասերի հետ գյուղից դուրս շարժել գերմանացիներին և ամրանալ նրանից հյուսիս գտնվող բարձունքին: Այստեղ պարզվեց, որ մայր Մոկրին, այնուամենայնիվ, այդ նույն օրը փոխադրել էր շտաբի ու քաղբաժնի փաստաթղթերը և ինքն էլ անցել նեղուցը: Մենք ստիպված եղանք կազմակերպել մարդկանց, առաջին հերթին կանանց էվակուացիան:

Թիկունքային զորամասերի մնացորդները էվակուացնելուց հետո, մթության քողի տակ մի փոքրիկ խմբով ծովափ եկա նաև ես: Ծովափին նկատեցինք մի մոտորանավ: Այդ նավակով էլ անցանք Կերչի նեղուցը:

Այստեղ շեմ կարող մի քանի խոսք շասել մեր հիանալի մարտիկներից մեկի մասին: 954-րդ հրետանու կարմիրբանակային կոմերիտական Իվանովը, բոլորովին պատանի, բացառիկ փութկոտությամբ ու ճշգրիտ կատարում էր բոլոր հրամանները: Ժուկովկայում գերմանացիների գրոհի ժամանակ զնդակահարեց հարձակվող ֆաշիստներին և նետվեց ումբափոսը: Մայակից քիչ հեռու հակառակորդը ականանետային ուժգին ու անընդմեջ կրակ բացեց մեզ վրա: Թվում էր, թե մեզանից ոչ ոք կենդանի չի մնա: Իվանովը պառկած էր կողքիս: Նա ձեռքը երկարեց և ափով «ծածկեց» գլուխս: Երբ զնդակոծութունը դադարեց, մենք բարձրացանք: Բայց Իվանովը մնաց պառկած: Թշնամու ականի փոքրիկ բեկորը կտրեց մեր հիանալի մարտիկի կյանքի թելը: Մենք նրան թաղեցինք:

Քաջության օրինակ ցույց տվին վարժական դումարտակի կոմիսար Արտաշես Միրզոյանը և մայր Սլյուսարևը:

Խոսելով Ղրիմի ռազմաճակատի և բանակի հրամանատարության սխալների մասին, մենք ամենևին նպատակ չունենք կոծկելու դիվիզիայի հրամանատարության թույլ տված սխալները: Չանդ-

րադառնալով մայիսի 9-ի անցքերին, պետք է ասել, որ դիվիզիայի հրամանատարութունը զերծ չմնաց սխալներից:

Արդեն ասվել է, որ սկսած մայիսի 9-ի երկրորդ կեսից 390-րդ դիվիզիան գործում էր 12-րդ և 83-րդ բրիգադների հարևանությամբ և կրակային կապ ուներ նրանց հետ: Տվյալ կոնկրետ իրադրության մեջ ավագ հրամանատարը պարտավոր էր նախաձեռնութուն հանդես բերել և իրեն ենթարկել հարևան զորամասերը ու միացյալ ուժերով հա մղել թշնամու գրոհները: Եվ, շնայած նման միտք թելադրվեց հրամանատարությանը, սակայն անհրաժեշտ արդյունք չեղավ:

Մայիսի 11-ին, օրվա երկրորդ կեսին, երբ գնդերում ռազմամթերքը վերջանալու վրա էր, որոշվեց մութն ընկնելուն պես թողնել պաշտպանական դիրքերը, նահանջել և կտրվել հակառակորդից: Սակայն դա համարվեց վաղաժամ: Իսկ երբ հակառակորդը ճեղքեց մեր պաշտպանութունը, այլևս հնարավոր չեղավ զնդերին հաղորդել մեր որոշումը:

Սխալ էր նաև այն, որ դիվիզիայի հրամանատարութունը մնաց Կիյառ գյուղից հյուսիս գտնվող բլուրների մոտ:

Ստեղծված բարդ իրադրության մեջ դիվիզիան վերադաս հրամանատարութունից ոչ մի հրաման չստացավ, կտրվեց ամեն տեսակ կապը: Դիվիզիան գործեց միայնակ, առանց անհրաժեշտ քանակի զինամթերքի և աջակցության:

Կերչը թողնելուց հետո 390-րդ դիվիզիան կենտրոնացավ Կուբանի Ախտանիզովկա ստանիցայում: Ղրիմի ռազմաճակատի զորամասերը, ինչպես նաև 390-րդ դիվիզիան, անցան Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի տրամադրության տակ, որի հրամանատարն էր Սովետական Միության մարշալ Ս. Մ. Բուդյոնին: Դիվիզիայի կազմում մնացել էր շուրջ 3500 մարդ: Մայիսի 21-ի հրամանով փոխզնդապետ Բ. Լ. Դանիելյանը նշանակվեց դիվիզիայի հրամանատար: Նա համառորեն հրաժարվում էր, բայց

մենք պնդեցինք, և նա տեղի տվեց: Շուտով դիվիզիան փոխադրվեց Նովո-Տիտոբովկա ստանցիան:

Բազմաճակատի շտաբը ձեռնարկեց վերակազմավորել Ղրիմի ռազմաճակատի զորամասերը: Մի քանի դիվիզիաներ համալրվեցին մյուսների անձնակազմի հաշվին: Մի քանի դիվիզիաներ լուծարքի ենթարկվեցին, սրանց ղեկավար կազմը փոխադրվեց ռեզերվ: Վերջիններիս թվում էր նաև 390-րդ դիվիզիան: Մենք առարկեցինք, պատճառաբանելով, որ դիվիզիան ստեղծվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով և, բացի դրանից, անհրաժեշտ է ստանալ Հայկական ՍՍՀ կառավարության համաձայնությունը: Գրեցինք ՀԿ(Բ)Կ Կենտկոմ, խնդրելով ցուցում տալ, սակայն պատասխան չստացանք: Հարցը լուծվեց այսպես. դիվիզիայի ոչ-հայ ազգություն կարմիրբանակայինները, հրամանատարները և քաղաշխատողները ռազմաճակատի շտաբի ցուցումով տրվեցին մյուս զորամասերին: Դիվիզիայից գնացին գրեթե բոլոր հրետանավորները, սակրավորները, կապավորները, հետախույզները, բուժսանաշխատողների գերակշռող մասը՝ շուրջ 1500 մարդ: Մյուս մասն ուղարկվեց Անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատարության տրամադրության տակ: Հունիսի 19-ին Թբիլիսիում, ռազմաճակատի շտաբի ցուցումով, դիվիզիայի անձնակազմն անցավ ռազմաճակատի ռեզերվը՝ հայկական մյուս զորամասերը համալրելու նպատակով: 390-րդ դիվիզիան դադարեց գոյություն ունենալուց:

9. ԱՆՑԱԾ ՕՐԵՐԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կերչի թերակղզին Ղրիմի ռազմաճակատի կողմից թողնելու գնահատականը տրված է Գերագույն գլխավոր հրամանատարության Զորակայանի 1942 թ. մայիսի «Ղրիմի ռազմաճակատի մասին» դիրեկտիվում¹: Այդ դիրեկտիվը մանրամասն մեկնաբանել է Սովետական Միության մարշալ Ա. Մ. Վասիլևսկին իր «Հայրենական մեծ պատերազմում զինված պայքարի ղեկավարման հարցի շուրջը» հոդվածում²: Այդ հարցին անդրադարձել են նաև Սովետա-

կան Միության մարշալներ Գ. Կ. ժուկովը և Ա. Ա. Գրեչկոն, բանակի գեներալ Ս. Մ. Շտեմենկոն, ադմիրալ Ն. Գ. Կուզնեցովը և այլ զինվորական գործիչներ: Ստորև մենք համառոտակի շարադրում ենք մի քանի տպավորություններ, որոնք ստացել ենք 1942 թ. մայիսյան օրերին:

1941—1942 թթ. ձմռանը լուրջ պարտություններ կրելուց հետո հիտլերյան հրամանատարությունը նոր ուժեր փոխադրեց գերմանա-սովետական ռազմաճակատ, վերակազմավորեց ձմեռային կամպանիայում ջախջախված զորքերի մնացորդները, հիմնական ուժերը կենտրոնացրեց հարավային ճակատում, ջանալով ունակ վերցնել այստեղ: Ղրիմը կարևոր տեղ ուներ այդ պլաններում. առաջին հարվածը պատրաստվում էր Կերչի թերակղզում:

Ղրիմի ռազմաճակատի հրամանատարությունը, ինչպես նաև Զորակայանի ներկայացուցիչը, թերագնահատեցին հակառակորդի ուժերը, որն իր արտահայտությունը գտավ նրանում, որ զորամասերը չպատրաստվեցին լուրջ պաշտպանության և հիմնական ուշադրությունը նվիրեցին հապճեպ, հանպատրաստից հարձակումներին: Դիվիզիաների ու բրիգադների առաջ միշտ դրվում էր միևնույն խնդիրը՝ ելման դիրքեր գրավել և պատրաստվել հարձակման: Խոր էշելոնացված ամուր պաշտպանություն ստեղծելու մասին խոսք չէր լինում: Նման դիրքորոշումը իրականում շեղում էր զորամասերի հրամանատարների ուշադրությունը ամուր պաշտպանություն ստեղծելու խնդրից: Բարձրաստիճան զորապետների այն դիտողությունը, թե «Ռազմաճակատի օպերատիվ կառուցվածքը չէր համապատասխանում պաշտպանության խնդիրներին», կամ՝ «Զորքերի խմբավորումը մնում էր հարձակողական» և այլն, իրականում ոչ այլ ինչ էր, եթե ոչ ռազմաճակատի բոլոր երեք բանակների զորամասերի կուտակում մեկ գծի վրա՝ նեղ շերտում: Այդ ամբողջ շերտը բզկտված էր թշնամու ումբերի, արկերի ու ականների պայթյուններից: Սա նշանակում էր, որ առանց հարձակվելու մեր զորքերն ամեն օր շոշափելի և շարդարացված կորուստներ էին կրում:

Հարձակողական գործողությունները խնամքով չէին նախապատրաստվում: Դրանք հաճախ կրկնվում էին, բայց առանց դրական արդյունքի: Այսպես կոչված «ճեղքերի» մեջ էին մտցվում զո-

¹ Տե՛ս «История Великой отечественной войны», т. 2, стр. 405—406.

² Տե՛ս «9 мая 1945 года», Сборник, Москва, 1970 г.

րամասեր, որոնք մշտապես գտնվում էին առաջին գծում՝ հակա-
ռակորդի կրակի տակ: Հետևանքը լինում էր այն, որ որոշ առաջ-
խաղացումից հետո այդ զորամասերը կա՛մ ետ էին շարվում,
կամ էլ հետագա լուրջ կորուստներից խուսափելու համար հրամա-
նով ետ էին քաշվում:

Գերագույն գլխավոր հրամանատարութեան Ձորակայանի դի-
րեկտիվում նշվում է, որ «հակառակորդի հարձակումից առաջ
Ղրիմի ռազմաճակատի հրամանատարութունը ցուցում էր ստացել
անցնել ամուր պաշտպանութեան»: Այս նշանակում է, որ զորամա-
սերի խմբավորումը պետք է վերակառուցվեր: Սակայն ռազմաճա-
կատի հրամանատարութունը չկատարեց Ձորակայանի ցուցումը:

Որոշակի թերահավատութուն կար նաև հետախուզական տրվ-
յալների նկատմամբ: Ձորակայան հետախուզութեան տվյալներով,
հակառակորդը պատրաստվում էր հարձակվել մեր ձախ թևի ուղ-
ղութեամբ՝ 44-րդ բանակի վրա: Սակայն, չգիտես ինչու, ռազմա-
ճակատի հրամանատարութունը և Ձորակայանի ներկայացուցիչը
համոզված էին, որ թշնամին հարձակվելու է մեր աջ թևի՝ 47-րդ
բանակի վրա, և հստակ պատկերացում չկար հակառակորդի մա-
սին, իսկ մեր զորամասերը ապակողմնորոշվում էին:

Հակառակորդը հարձակման անցավ մայիսի 8-ի լուսաբացին:
Չնայած կատաղի մասսայական ուժերով Ձորակայանը և տանկային
ուժեղ զորաներին, միայն օրվա վերջին հակառակորդին հաջողվեց
ճեղքել 44-րդ բանակի պաշտպանութունը, այն էլ ընդամենը 5
կիլոմետր լայնութեամբ և 8 կիլոմետր խորութեամբ:

Ռազմաճակատը և 44-րդ բանակի հրամանատարութունը մի-
ջոցներ չձեռնարկեցին կասեցնելու հակառակորդի առաջխաղացու-
մը: Հակառակորդը ժամանակ շահեց: Նրա զորամասերն սկսեցին
արագ և անարգել Սև ծովի ափով շարժվել դեպի Կերչ քաղաքը,
խորանալ մնացած բանակների թիկունքը:

Այդ պայմաններում 390-րդ դիվիզիան 44-րդ բանակի տրա-
մադրութեան տակ դնելը, ինչպես նաև նրա վրա դրված խնդիրը
տակտիկական կոպիտ սխալ էին: Շուտով մենք համոզվեցինք
զրանում: Ստեղծված իրադրություն մեջ դիվիզիան չէր կարող կա-
տարել 44-րդ բանակի հրամանատարութեան հրամանը, նույնիսկ
եթե ժամանակին տեղ հասնեին նրան տրված տանկային բրիգա-

դը, տանկային գումարտակը և գվարդիական ականանետների
գունդը, որովհետև հակառակորդն արդեն շրջանցել էր մեզ:

Հաշվի առնելով Կերչի թերակղզում ստեղծված ծանր դրու-
թյունը, Ձորակայանը մայիսի 10-ի առավոտյան Ղրիմի ռազմաճա-
կատին հրամայել էր «ետ քաշել զորամասերը և պաշտպանութեան
նոր բնագիծ գրավել «Թուրքական պատնեշի» հսկում»: Սակայն,
չգիտես ինչու, այդ բանը չարվեց:

Ձորակայանի դիրեկտիվում ասված էր, որ «հակառակորդն
ուղղակի շահագրգռված է, որ մեր զորքերը աջ թևում մնան իրենց
դիչքերում՝ անգործութեան մատնված, և հույս ունեն հարվածներ
հասցնել նրան իր հարվածային խմբավորումը մեր զորքերի թի-
կունքը դուրս բերելուց հետո»: Ձորակայանի այս եզրակացությու-
նը հաստատում է նաև հիտլերյան բանակի գեներալ Կուրտ ֆոն
Տիպելսկիրխը: Նա գրում է, որ «Մանշտեյնի բանակը ձգտում էր
դեպի արևելք այն բանի համար, որպեսզի սովետական զորքերին
հնարավորություն չտար կազմակերպելու նոր պաշտպանութուն»¹:

Ձորամանալին այն է, որ ռազմաճակատի հրամանատարությու-
նը գործնական ոչ մի քայլ չարեց կատարելու Ձորակայանի այս
հրամանը ևս: Հետագայում հայտնի դարձավ, որ 51-րդ բանակը
հրամանը ևս: Հետագայում հայտնի դարձավ, որ 51-րդ բանակը
պետք է պաշտպաներ մյուս զորամասերի նահանջը, իսկ 47-րդ
բանակը, նահանջելով, դիրքեր գրավեր «Թուրքական պատնեշի»
ետևում: Սակայն 51-րդ բանակը այդպիսի հրաման չստացավ,
իսկ 47-րդ բանակը ետ չքաշվեց դեպի «Թուրքական պատնեշը»:

Մի բանի զորամասեր, այդ թվում 390-րդ դիվիզիան, որոնք
մարտեր էին մղում իրենց դիրքերում, անտեղյակ էին, ոչ ոքի
կողմից չէին ղեկավարվում, ոչ ոքից ոչ մի հրաման չէին ստանում:
Մենք միայն գիտեինք, որ 44-րդ բանակը նահանջում է, իսկ հա-
կառակորդը, առաջ շարժվելով, սպառնում է մեր թիկունքին: Ու-
կառակորդը, առաջ շարժվելով, սպառնում է մեր թիկունքին: Նահանջի ժամանակ
հետախուզութուն կատարելով, չէինք կարողանում հասկանալ հա-
կառակորդի մտադրությունը: Մայիսի 9-ին պարզ դարձավ, որ նա
չի ցանկանում հարվածել մեր թիկունքին, միայն ձգտում է շուտով
գրավել Կերչը:

Ինչպես նշվում է Ձորակայանի դիրեկտիվում, Ղրիմի ռազ-
մաճակատի անհաջողութեան գլխավոր պատճառն այն էր, որ ռազ-

¹ К. Типельскирх, История второй мировой войны, стр. 230.

մաճակատի հրամանատարութիւնը հակառակորդի առաջին իսկ հարվածի ժամանակ «ձեռքից բաց թողեց զորքերի կառավարումը», իսկ հետո ջանքեր չգործադրեց այն վերականգնելու: «Ռազմաճակատի հրամանատարութիւնը, Զորակայանի ներկայացուցիչը և, հատկապես, 44-րդ և 47-րդ բանակների հրամանատարները դրսև-վորեցին ժամանակակից պատերազմի բնույթի լիակատար անբարենորոգութիւն»:

Լենինյան գաղափարներով դաստիարակված սովետական զինվորին խորթ է երկշտութիւնը: Մահացու վտանգի ժամին կարմիրբանակայինները, հրամանատարներն ու քաղաշխատողները հրացանը ձեռքներին անվախ գնում էին թշնամուն ընդառաջ: Անբերք պաշտպանում էին հողի յուրաքանչյուր թիզը: Կերչի շրջանում մենք տեսանք, թե ինչպես տարբեր զորամասերից ի մի հավաքված մարտիկներ «Ինտերնացիոնալի» հնչյունների տակ նետվում էին թշնամու տանկերի դեմ, և թշնամու գրահապատ հրեջր երբում էր նրանց հրացանների հարվածներից: Դա հուսահատական ջղաձգում չէր, այլ պարտքի բարձր գիտակցութիւն՝ մեռնել հանուն մեծ նպատակի, փառք ու պատիվ բերել սովետական զինվորին: Ժուկովկայում մի աղջիկ ատրճանակը ձեռքին ոտքի հանեց մարտիկների մի մեծ խումբ և համարձակորեն գրոհի տարավ նրանց հարձակվող հակառակորդի դեմ: Մարդիկ իրենց պարտված չէին համարում, թեև ստեղծված իրադրութիւնը ոմանց անհուսալի էր թվում: Մարտիկները ապրում և կովում էին թշնամու նկատմամբ վերջնական հաղթանակի հաստատ վճռականութեամբ ու հավատով: Նրանց կողմն էր արդար գործը և բարոյական գերազանցութիւնը:

Մենք խորապես համոզված ենք, որ Կերչի թերակղզին կարելի էր ամուր պաշտպանել և հակառակորդին ետ շարտել ելման դիրքերը, եթե իրենց բարձրութեան վրա լինեին ինչպես ռազմաճակատի և բանակների հրամանատարները, այնպես էլ Զորակայանի ներկայացուցիչը:

1942 թ. մայիսի 29-ի երեկոյան, Կրասնոդարում, մեզ՝ 224, 390 և 396-րդ դիվիզիաների ղեկավարներին իր մոտ հրավիրեց Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի հրամանատար Սովետական Միութեան մարշալ Ս. Ս. Բուդյոնին: Ներկա էին նաև ծովակալ Իսակովը և Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Թոփուրիձեն:

Զրույցը տևեց երկուեկես ժամ: Սկզբում լսեցին իմ ղեկուցումը 390-րդ դիվիզիայի մարտական գործերի և վիճակի մասին: Այնուհետև, պատասխանելով մարշալ Բուդյոննու հարցին, ես իմ կարծիքը հայտնեցի Ղրիմի ռազմաճակատի անհաջողութիւնների պատճառների մասին: 224-րդ դիվիզիայի կոմիսար Մայսուրաձեն, ձայն խնդրելով, պատմեց այն մասին, թե ինչպես առանձին բարձրաստիճան հրամանատարներ փորձում են իրենց սեփական մեղքը բարդել այս կամ այն զորամասի վրա:

Մարշալ Բուդյոննու խոսքը հիմնականում հանգում էր հետևյալին. Ղրիմում մենք զգալիորեն ավելի շատ ուժեր՝ հետևակ, հրետանի և հակատանկային միջոցներ ունեինք, քան գերմանացիները, և այդ ուժերը բավարար էին հակառակորդի ցամաքային ուժերը ջլատելու համար. շնայած հրամանին, 47-րդ բանակը դիրքեր չզբաղեց «Թուրքական պատնեշի» շրջանում. ռազմաճակատի անհաջողութեան համար պատասխանատու էր Կոզլովը և այլքը:— Հրամանատարութեան շիտթվածութիւնը հանդեցրեց ամբողջ ռազմաճակատի կազմալուծմանը, «խուճապն իր գործը տեսավ». «Մեղավորները կպատժվեն»:



Կուզենայինք նկատել, որ Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում, մինչ ստալինգրադյան հարձակումը, Հայաստանում գովեստի խոսքեր են ասվել 390-րդ դիվիզիայի ու նրա անձնակազմի քաջագործութիւնների մասին, դուցե ավելի շատ, քան հայկական մյուս դիվիզիաների մասին: Իհարկե, դա բնական է, քանի որ հայկական դիվիզիաներից առաջինը այս դիվիզիան է մարտի բռնվել հակառակորդի հետ: Այդ գովեստները հիմքից զուրկ չէին: Դիվիզիայի հրամանատարութիւնը և անձնակազմը պատվով կատարեցին իրենց հայրենասիրական պարտքը կուսակցութեան, ժողովրդի ու սովետական հայրենիքի հանդեպ: Ինչպես արդեն ասել ենք, զորամասերի կյանքում լինում են դեպքեր, որոնք անմոռաց են մնում: Գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի շախշախումբը առհավետ կմնա հայրենանվեր սխրանքների մեծ գրքում: Հայրենական մեծ պատերազմում զոհված զորավարներից 390-րդ դիվիզիայի հրամանատար գնդապետ Սիմոն Զաք-

յանը միակն է, որի հիշատակը հավերժացնող հուշարձան կանգնեցվեց Երևանում: Դա սովետական Հայաստանի աշխատավորության հարգանքի հատուցումն է տաղանդավոր հրամանատարին և բոլոր նրանց, ովքեր Զաքյանի հետ միասին իրենց կյանքը տվին սովետական հայրենիքի պատվի և ազատության համար մղվող պայքարին: Դա միաժամանակ Զաքյանի դիվիզիայի հայրենանվեր գործերի գնահատականն է: Պոետները ժողովրդի սրտից անմահության ներբողներ բերին զորավարի հիշատակին.

Նրա խոհերն ու խոսքն իրեն վերջին
Թռան ինչպես վերջին արկի շոռաչ.
— Ինձ միացրեք հրետանու պետին...
Կրակ... հանուն հայրենիքի... առաջ...

Ն. Զառյան

Լուսինը դու ես, զորապետ մի մեծ,
Քո գունդը՝ հսկա համաստեղություն...

Ա. Գրաշի

Քո բազկում ուժը մեր վսեմ Գավթի,
Գու մեր կուսակցության փառապանծ զավակ...

Գ. Բորյան

Քո ճակատը՝ հաղթանակով պսակված,
Մեր պատմության մեջ քայլում ես դու փառքով...

Ավ. Իսահակյան

Ղրիմի ռազմաճակատի անհաջողությունից հետո Հայաստանում ոմանք անհիմն լուրեր տարածեցին 390-րդ դիվիզիայի կորուստների մասին: Վատը միշտ էլ վարակիչ է, շուտ է տարածվում: Հասկանալի բան է, երբ ռազմաճակատը ձախողվում կամ անհաջողության է մատնվում, կորուստներն անհամեմատ ավելի շատ են լինում: Այդպես է եղել նաև Արևմտյան ճակատում՝ պատերազմի առաջին օրերին, 1942 թ. մեր Հարավային ռազմաճակատը խարկովի տակ ճեղքելու ժամանակ: Սակայն այդ չի վերաբերում միայն ռազմաճակատի այս կամ այն դիվիզիային: 390-րդ դիվիզիայի կորուստները ոչնչով չէին գերազանցում ռազմաճակատի մյուս դիվիզիաների կորուստները:

Բանն այն է, որ նկատվում է որոշ տենդենց՝ մոռացության

տալ 390-րդ դիվիզիայի մարտական գործերը: Պատերազմից հետո հայ մարտիկների և զորամասերի սխրագործությունների մասին քիչ չի գրվել. հրապարակ են եկել ծավալուն գրքեր, հոդվածներ և այլն: 390-րդ դիվիզիայի մասին գրվել են միայն հատուկենտ հոդվածներ, որոնք շատ դեպքերում աղավաղում են իրականությունը: Նման օրինակ տալիս է «Գրական թերթ»-ը իր 1965 թ. մայիսի 21-ի «Դիվիզիայի կոմիսարը» վերնագրով հոդվածով, որը լի է անճշտություններով ու անհեթեթություններով: Մենք այդ հոդվածը կարդացինք Թորգոմ Շահինյանի անձնական գործում՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Հայրենական մեծ պատերազմի պատմության կարփնետում»: Հոդվածում, օրինակ, գրված է. «Թշնամին մեր դիրքերից 20—30 մետրի վրա էր գտնվում, երբ նա ձի նստելով գոչեց. «Ու սիրում է իր հայրենիքը, թող գա իմ ետևից»: Խրամատներից դուրս վազեցին մարտիկները, հրամանատարները և, ինչպես հեղեղ, հարձակվեցին թշնամու վրա: Թշնամին նահանջեց, բայց հենց այդ օրը հերոսի մահով ընկավ մեր սիրելի կոմիսար Թորգոմ Շահինյանը»:

Դիվիզիայի 784-րդ գնդի նախկին կոմիսար Շավարշ Ազնավուրյանը իր ժամանակին բողոքել է այդ անհեթեթության դեմ: Սակայն խմբագրությունը ուշադրության չի առել այն: Ահա Ազնավուրյանի փաստարկները.

«Թորգոմ Շահինյանը, — գրում է Ազնավուրյանը, — բանիմաց, խոհուն, ռազմական ու տակտիկական տեսակետից գրագետ մարդ էր և իսկական կոմիսար», իսկ «հոդվածում հանդես եկող Շահինյանը ամեն ինչ է, բացի դիվիզիայի մարտական կոմիսար լինելուց»: «Թորգոմ Շահինյանին անձամբ լավ ճանաչելով երկար տարիներ, թե համատեղ կոմերիտական և թե ռազմական աշխատանքից, չեմ կարող չբողոքել... երբ հայրենիքի ազատության համար մարտի դաշտում զոհված քաջարի կոմիսարը դուրս է բերված մի ինչ-որ խելացնոր քյալագչոգ, որը ձին հեծած 20 քայլի վրա արշավում է թշնամու տանկերի վրա»:

Ավելացնենք, որ հոդվածում նշված օրը 390-րդ դիվիզիայի ոչ մի ստորաբաժանում գրոհի դիմելու ոչ մի փորձ անել չէր կարող: Մի՞թե հարգելի լրագրողները կարծում են, թե կարմիր բանակում եղել են կոմիսարներ, որոնք գրոհի տանկու պահին «ջուրկել են, թե ո՞վ է սիրում հայրենիքը և ո՞վ չի սիրում»:

Քերենք մի օրինակ ևս: «Հայրենիքի ձայն» թերթի 1967 թ. ապրիլի 9-ի № 15-ում «Տպագիրը», հողվածի հեղինակը պատմում է, թե ինչպես Ղրիմի ռազմաճակատում ապրիլյան... «ամսամած օր էր, գուցե ամսամած չէր», բայց «հաստատ էր՝ արև չկար»: Արտավազը նավասարդյանը իր ստորաբաժանման հետ «նահանջել» է և «Կերչի մերձակա թունելների մեջ պատսպարվել... և այսպես մի քանի շաբաթ, մինչև մայիս ամսի կեսերը», երբ նրան գերի են վերցրել: Հեղինակը ուսադիրներ է հագցնում նավասարդյանին, որոնք «այնպես ծանր էին թվում»: Ֆաշիստները, գերի վերցնելով նավասարդյանին ու նրա ընկերներին, «գեն նետեցին նրանց սաղավարտները և պոկեցին «տանջված ուսադիրները»»:

Մի կողմ թողնենք անհեթեթությունները: Մի՞թե հեղինակը և խմբագրությունը պարտավոր չէին իմանալ, որ եթե մարդը մինչև 1942 թ. մայիսի կեսերը — «երեք շաբաթ» — թաքնվել է Կերչի մերձակա թունելներում, ուրեմն ստում է: Մի՞թե նրանք պարտավոր չէին իմանալ, որ 1942 թվականին կարմիր բանակում ուսադիրներ չէին կրում: Մի՞թե նրանք չգիտեին, որ այդ նույն թունելներում մնացած մարդիկ հերոսաբար կռվեցին մինչև Կերչի ազատագրումը:

Սկսած Կերչ—Թեոդոսյան դեպանտային օպերացիայից, Ղրիմի ռազմաճակատի զորքերը հինգ ամիս շարունակ Կերչի թերակղզում և Սևաստոպոլում գամեցին հակառակորդի տասնյակ դիվիզիաներ, ձախողեցին Ղրիմից Կովկաս ներխուժելու հիտլերյան պլանները: Այդ գործում իր մեծ բաժինն ունի նաև 390-րդ դիվիզիան: Մի՞թե դժվար է պատկերացնել, թե ինչ կլինեի, եթե ֆաշիստական զորքերը ներխուժեին Կովկաս կես տարի առաջ:

Հայրենիքի պաշտպանության համար մղված մարտերում քաջի մահով ընկան 390-րդ դիվիզիայի հրամանատարն ու կոմիսարը, հարյուրավոր մարտիկներ, հրամանատարներ ու քաղաշխատողներ: Միայն գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի դեմ և Կոչ-Ասանի տակ մղված մարտերում զոհվեցին 179 և վիրավորվեցին 255 կոմունիստներ: Նրանց կատարած սխրագործությունները արժանի են լայն լուսարանման:

Սովետական բանակի անցած հաղթական ուղին Ստալինգրադից, Կովկասի նախալեռներից մինչև Բեռլին և Պրագա օրինական հպարտություններ է լցնում սովետական մարդկանց սրտերը, նրանց ոգեշնչում է հանուն լենինյան կոմունիստական կուսակցության և սովետական սոցիալիստական հայրենիքի մղվող հետագա պայքարում: Այդ ուղին միանգամից շսկսվեց: Դրա համար պահանջվեցին կուսակցություն, պետություն, ժողովրդի ու բանակի վիթխարի շանքերը:

Օգտվելով Եվրոպայի արևմուտքում երկրորդ ճակատի բացակայությունից, հիտլերյան Գերմանիան 1942 թվականի գարնանը և ամռան սկզբներին զորքերի ու ռազմական տեխնիկայի նոր խոշոր ուժեր կենտրոնացրեց ռազմաճակատի հարավային ուղղությամբ և ստեղծեց ուժերի մեծ գերակշռություն, անցավ նոր հարձակման: Թշնամին ձեզքեց մեր զորքերի Հարավային ռազմաճակատը և մեկը մյուսի հետևից գրավեց Վորոշիլովգրադ, Ստարոբելսկ, Ռոսսոշ, Կուպրյանսկ, Վալուկի, Նովոչերկասկ, Դոնի-Ռոստով քաղաքներն ու Վորոնեժի մի մասը: Նա անցավ Դոնը և արշավանք սկսեց դեպի Հյուսիսային Կովկաս ու Կուբան: Հիտլերյան հրամանատարությունը հույս ուներ սովետական զորքերին ոչրնչացնել ռազմաճակատի հարավային հատվածում: Կովկասի, ամենից առաջ Բաքվի և Բաթումի գրավումը դիտվում էր որպես գերմանական բանակի առաջնահերթ խնդիրը¹:

Ռազմաճակատի հարավային հատվածում ստեղծված իրադրության կապակցությամբ պաշտպանության ժողովրդական կոմիսար Ի. Ստալինի՝ 1942 թվականի հուլիսի 28-ի № 227 հրամանում դատապարտվում էին այն «որոշ անխոհեմները», որոնք լուրեր էին տարածում, թե իբր սովետական զորքերը կարող են առաջիկայում էլ նահանջել դեպի արևելք: Ժամանակավորապես կորց-

¹ Տե՛ս «Совершенно секретно. Только для командования». М., 1967, стр. 326—329, 379, 388.

նելով Ուկրաինան, Բելոռուսիան, Մերձբալթիկան, Գոնբասը և մի շարք այլ մարզեր, ասված էր հրամանում, մեր տերիտորիան զգալիորեն կրճատվեց, հետևապես և կրճատվեց նաև մարզկանց թիվը, կրճատվեցին հացը, մետաղը, գործարաններն ու ֆաբրիկաները: Մենք արդեն գերմանացիների համեմատությամբ գերակշռությունը չունենք ո՛չ մարզկային ռեզերվների, ոչ էլ հացի ռեսուրսների տեսակետից: Դարձյալ նահանջել՝ նշանակում է կործանվել և դրա հետ միասին կործանել մեր հայրենիքը:

Մեր երկրի թիկունքում գործարաններն ու ֆաբրիկաները հիանալի են աշխատում: Ռազմաճակատը ավելի ու ավելի շատ ինքնաթիռներ, տանկեր, հրանոթներ, ականանետներ է ստանում: Պակասում են միայն կարգ ու կանոնն ու կարգապահությունը: Ժողովումը հրամայեց. «Ոչ մի քայլ ետ: Այսօր դա պետք է լինի մեր գլխավոր կոչը»: Մի քանի ամիս դիմանալ թշնամու հարվածներին՝ նշանակում է ապահովել մեր հաղթանակը:

Այդ հրամանը օբյեկտիվ վկայությունն է մեր կուսակցության այն մեծ ընդունակության, որ նա դրսևորեց երկիրը անհուսալի թվացող վիճակից դուրս բերելու, ֆաշիստական Գերմանիայի վերջնական ջախջախման՝ սկիզբը դնելու գործում, որն սկսվեց Ստալինգրադում և Կովկասում:

1. 61-ՐԴ ՀՐԱՁԳԱՅԻՆԸ

Առաջին տեղեկությունները 61-րդ հրաձգային դիվիզիայի մասին, որպես նրա կոմիսար, ստացա Անդրկովկասյան ռազմաճակատի քաղվարչության պետ զնդային կոմիսար Խրոմովից, 45-րդ բանակի հրամանատար զեներալ-լեյտենանտ Ռեմեզովից և ռազմական խորհրդի անդամ բրիգադային կոմիսար Միխայլովից: Նրանք գլխավորապես կանգ առան դիվիզիայի թերությունների և այնտեղ տեղի ունեցող արտակարգ դեպքերի վրա, որի հետևանքով տուժել էր նրա կոմիսար Գասիևը: Հետագայում ես առիթ եմ ունեցել ռազմաճակատում հանդիպել Գասիևին, և նա ինձ վրա լավ տպավորություն է թողել:

61-րդ դիվիզիան կազմավորվել է 1941 թվականի վերջերին Երևանում, առանձին ստորաբաժանումների բազայի վրա, իսկ

այնուհետև համալրվել է մորիլիզացված տեղաբնակ զինապարտների և հոսպիտալներից դուրս գրված մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների հաշվին: Դիվիզիայի հրամանատար էր նշանակվել զնդապետ Կուզնեցովը, կոմիսար՝ ավագ դումարտակային կոմիսար Գասիևը, շտաբի պետ՝ փոխզնդապետ Գրիգորևսկին, քաղբաժնի պետ՝ գումարտակային կոմիսար Կոսովիչը: ՍՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1941 թվականի դեկտեմբերի 15-ի հրամանով 61-րդ դիվիզիայի կազմի մեջ մտան 66-րդ, 221-րդ, 307-րդ հրաձգային ու 55-րդ հրետանային զնդերը և սակրային, կապի, զնդացրային ու բուժսանիտարական առանձին դումարտակները, զենիթային և քիմիական պաշտպանության ու հետախուզական վաշտերը: Դիվիզիայի շտաբին կից բացվեց կրտսեր հրամանատարների պատրաստման դպրոց:

Դիվիզիայի կազմավորմանը և մարտական ու քաղաքական պատրաստության գործում մեծ օգնություն ցույց տվեցին Հայաստանի կուսակցական և սովետական կազմակերպությունները: Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմը դիվիզիա ուղարկեց 500-ից ավելի կոմունիստների ու կոմերիտականների: Հանրապետության կառավարությունը տրամադրեց տրանսպորտային միջոցներ, ապահովեց հանդերձանքով ու պարենամթերքով: Դիվիզիայի անձնակազմը շրջապատված էր հանրապետության աշխատավորների ուշադրությամբ և հոգատարությամբ:

1942 թվականի հունիսի 11-ին Հայկական հանրապետության Գերագույն սովետի նախագահության նախագահ Մ. Պապյանը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության անունից մարտական դրոշներ հանձնեց դիվիզիային ու նրա զնդերին: Այդ արարողությանը ներկա էր դրոշները պատրաստող Մոսկվայի ջուհիների պատվիրակությունը:

Ժամանակը պահանջում էր հատուկ լարվածությամբ աշխատել՝ առաջիկա մարտերին նախապատրաստվելու համար: Օգոստոսի սկզբներին դիվիզիա այցելեցին 45-րդ բանակի հրամանատար զեներալ-լեյտենանտ Ֆ. Ռեմեզովը և ռազմական խորհրդի անդամ Միխայլովը: Գեներալը հանգեց այն եզրակացության, որ դիվիզիան պատրաստ է մարտեր վարելու:

Մենք համոզված էինք, որ մինչև դիվիզիան ռազմաճակատ ուղարկելը հաշված օրեր են մնացել: Սակայն դիվիզիան չունե

պահանջվող քանակութեամբ սալեր, առանց որոնց հնարավոր չէր բարձրացնել դիվիզիայի տնտեսութիւնը: Տեղի փայտամշակման ֆաբրիկան դիվիզիայի պատվերով պատրաստեց անհրաժեշտ քանակութեամբ սալեր, սակայն ֆինանսական միջոցների բացակայութեան պատճառով դիվիզիան հնարավորութիւն չունեւր վճարել պատվերի դիմաց: Հարցը քննութեան առնվեց և լուծվեց հօգուտ դիվիզիայի: Նույն օրն իսկ դիվիզիան անվճար ստացավ ամբողջ պատվերը:

Ստացվեց Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդի հրամանը: Դիվիզիան պետք է էշելոններով մեկներ թրքիսի—Բաքու—Մախաչկալա—Գրոզնի երթուղով և մտնել 9-րդ բանակի կազմի մեջ: Ռազմական խորհրդի հրամանով մեր հանրապետութիւնում պետք է մնային անդրկովկասյան ազգութիւններին պատկանող բոլոր մարտիկներն ու սերժանտները՝ ազգային կազմավորումները համալրելու համար, իսկ դրա փոխարեն դիվիզիան համալրեցին հոսպիտալների երթային վաշտերը: Շարքային և սերժանտական կազմի կեսից ավելին, որոնց ճնշող մեծամասնութիւնը ավտոմատավորներ և ականաձիգներ էին, հանձնվեցին 45-րդ բանակի մյուս զորամասերին: Խիստ կրճատվեց կրտսեր հրամանատարների ու կոմունիստների թիվը: 1500-ից ավելի կուսանդամներ ու անդամութեան թեկնածուներ հանձնվեցին այլ զորամասերի: Երթային վաշտերը գալիս էին կայարան և համալրում մեկնելու պատրաստ ստորաբաժանումները: Հրամանատարներն ու քաղաշխատողները հասկանալի պատճառով զրեթե չէին ճանաչում իրենց նոր ենթականերին: Մատների վրա կարելի էր հաշվել կոմունիստներին, խիստ անբավարար էր գնդացրորդների, ավտոմատավորների և ականաձիգների թիվը: Անհրաժեշտ էր քաղդաստիարակչական և կազմակերպական վիթխարի աշխատանք կատարել, իսկ ժամանակը չէր ներում: Թերեւս մեր միակ միլիթարութիւնն այն էր, որ դիվիզիան համալրված էր մարտական փորձ ունեցող մարտիկներով ու սերժանտներով:

Ամբողջ շարքային և սերժանտական կազմից դիվիզիայում մնացին միայն երկու հայ՝ գնդացրորդ Արամ Հարութիւնյանը և քաղբաժնի լուսանկարիչ Սուրեն Խոսրոբը: Արամ Հարութիւնյանը

դիվիզիայի ամենալավագուն գնդացրորդն էր: Նա դիվիզիայի հետ անցավ պատերազմի բոցերի միջով, Կովկասից հասնելով մինչև Բեռլին, Պրագա: Արամը թշնամու դեմ մղված մարտերում ցույց տվեց արիութեան և ռազմական սխրագործութեան հիանալի օրինակներ, բազմիցս արժանանալով մարտական բարձր պարգևների: Նա վիրավորվեց տասնմեկ անգամ, բայց դիվիզիայից չհեռացավ: Կարմիրբանակայինից նա աճեց դարձավ ավագ լեյտենանտ, գրնդացրորդից՝ ղենիթային վաշտի հրամանատար:

Առաջնակարգ լուսանկարչի ընդունակութիւններ, բարձր կուլտուրա ունեւր հմայիչ պատանի Սուրեն Խոսրոբը: Քաղբաժնում իր աշխատելու առաջին իսկ օրվանից նա դարձավ կոլեկտիվի ու դիվիզիայի սիրելին: Նա մարդկանց լուսանկարում էր կուսակցական փաստաթղթերի ձևակերպման համար, հակառակորդի կրակի տակ կատարում էր այլ պատասխանատու հանձնարարութիւններ, մոռանալով իր անձին սպառնացող վտանգի մասին: Վիրավոր Խոսրոբին շատ անգամ են հրամայել պառկել բուժասանձումարտակում, բուժվել, բայց նա միշտ հրաժարվել է և երբեք չի կտրվել աշխատանքից:

Ճանապարհին հրամանը փոխվեց՝ Թրքիսիից էշելոններն ուղղվեցին դեպի Սև ծովի ափերը: Օգոստոսի 25-ին դիվիզիան լրիվ կազմով կենտրոնացավ Սուխումի շրջանում: Նա անցավ 46-րդ բանակի կազմի մեջ, որի հրամանատարն էր գեներալ-մայոր Վ. Ֆ. Սերգեյկովը:

2. ԼԵՌՆԱՆՅՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ստորև կբերեմ մեզ հայտնի մի քանի փաստեր՝ պաշտպանութեան կազմակերպման մասին և կներկայացնեմ իրերի իսկական վիճակը Սանչարոի ուղղութեամբ՝ 61-րդ դիվիզիայի և նրա հարեվանների գործողութիւնների շրջանակներում:

1942 թվականի օգոստոսի 26-ին գնդապետ Կուզնեցովի հետ գնացինք Սուխումի, որպեսզի 46-րդ բանակի հրամանատարին զեկուցենք նրա տրամադրութեան տակ ժամանելու մասին: Ժամը

10-ին մտանք բանակի շտաբի երկհարկանի շենքի ընդարձակ սենյակներին մեկը: Ամեն ինչից դատելով, սենյակը զբաղեցնում էր շտաբի օպերատիվ բաժինը: Սենյակում մարդ չկար: Զայրացած դուրս եկանք սենյակից ու բարձրացանք երկրորդ հարկ: Բանակի հրամանատար գեներալ-մայոր Վ. Սերգեյևիչը մեզ ընդունեց սիրալիք, թեև նկատելի էր, որ նա ինչ-որ բանից ընկճված է: Լսելով դիվիզիայի հրամանատար գեներալ Ս. Կուզնեցովի զեկույցը, բանակի հրամանատարը ընդհանուր գծերով և որոշ վերապահումներով շարադրեց դիվիզիայի խնդիրը՝ պաշտպանել Սև ծովի ափերը Պիցունդա-Ադլեր բնագծում: Դիվիզիայի հրամանատարական կետը գտնվելու էր Հին Գագրայում: Ոչ մի խոսք չեղավ Գլխավոր կովկասյան լեռնաշղթայի լեռնանցքներում տիրող վիճակի մասին:

Բանակի հրամանատար Սերգեյևիչը մեզ վրա հաճելի տպավորություն թողեց: Դուրս գալուց առաջ գեներալ Ս. Կուզնեցովը թույլտվություն խնդրեց ու ասաց.

— Ընկեր հրամանատար, ես ու դիվիզիայի կոմիսարը մեր պարտքն ենք համարում զեկույցել ձեզ, որ մենք ակամայից ծանոթացանք բանակի շտաբի օպերատիվ քարտեզներին: Դրանք բաց վիճակում փոխած էին օպերատիվ բաժնի սեղանին, իսկ սենյակում, ոչ ոք չկար: Շտաբի շենքը մտնելիս մեզ ոչ ոք չկանգնացրեց: Շտաբը չի պաշտպանվում: Զենք թաքցնում, դա մեզ տարօրինակ է թվում:

Գեներալ Սերգեյևիչը թեև թաքցրեց

— Ուղարկեք, խնդրեմ, մի դասակ՝ շտաբը պաշտպանելու համար:

Ինձ ու Կուզնեցովին մնում էր տարակուսած նայել միմյանց և, հրաժեշտ տալով բանակի հրամանատարին, դուրս գալ սենյակից:

Սուխումիից մենք մեկնեցինք Ադլեր՝ նախնական տեղադնություն, իսկ Երեկոյան կանգ առանք Հին Գագրայում: Մեզ համար անսպասելի էին Պիլինկովից մինչև Ադլեր՝ Պսոու և Մուշխտա գետերի միջև ճանապարհի երկարությունը շարված հակատանկային քարե պատնեղները: Հակատանկային դաշտը կազմում էր «Պիլինկովյան դիրքերի» մի մասը: Մենք հիվանդագին վերաբերվեցինք դրան. մի թե հրամանատարությունը, ժողկոմի № 227 հրամանից

հետո, թույլ կտա, որ Պիլինկով-Ադլերի շրջանում հայտնվեն թշնամու տանկերը:

Օգոստոսի 27-ի ուշ երեկոյան կարգադրություն ստացվեց ներկայանալ Անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատար բանակի գեներալ Ի. Վ. Տյուլենևին: Գագրայից մենք մեկնեցինք Սուխումի: Հանդիպումը տեղի ունեցավ քաղաքի արևելյան կողմում գտնվող առանձնատանը:

61-րդ դիվիզիայի խնդիրն էր՝ պաշտպանություն գրավել Սև ծովի ափերով Ռյասչ (Պիցունդա հրվանդանից 5 կիլոմետր հյուսիս-արևելք) — Ադլեր հատվածում, թույլ շտաբով որ հակառակորդը ծովային դեսանտներ ափ հանի: Որոշված էին նաև խորհի պաշտպանության սահմանները. արևելքում՝ Ռյասչ — Օտկարա — 2156 բարձունք) Գուդաուտայից 28 կիլոմետր հյուսիս), իսկ արևմուտքում՝ Ադլեր — Երմոլովկա — Այբգա — Փսեաշխա լեռնանցք: Դարձյալ ոչ մի խոսք Գլխավոր կովկասյան լեռնաշղթայի լեռնանցքների մասին:

Օգոստոսի 29-ի առավոտյան ռազմաճակատի կասլի սպան ինձ բերեց մի ծրար: Ծրարում գտա Գերագույն գլխավոր հրամանատարության Զորակայանի ներկայացուցչի և ռազմաճակատի հրամանատարի ստորագրությամբ հրամանը՝ պաշտպանություն կազմակերպելու մասին: Հրամանի կետերից մեկը ինձ համար անսպասելի նորություն էր: Գեներալ-մայոր Սերգեյևիչը հանվում էր 46-րդ բանակի հրամանատարի պաշտոնից, նրա փոխարեն նոր հրամանատար էր նշանակվում գեներալ-մայոր Կ. Լեսելիձեն: Հրամանում դարձյալ ոչինչ չէր ասվում Գլխավոր կովկասյան լեռնաշղթայի լեռնանցքներում տիրող վիճակի մասին:

Երթի դուրս գալու հրաման տալով 307-րդ վերջափակ գնդին, շտապ մեկնեցի Գագրա: Դիվիզիայի շտաբը այդ ժամանակամիջոցում հասցրել էր մշակել պաշտպանության շրջանում գնդերի դիրքերի ու մյուս ստորաբաժանումների տեղաբաշխման պլանը, հիմք ընդունելով ռազմաճակատի և բանակի հրամանը: Զորքերն իսկույնևեթ ձեռնամուխ եղան իրենց բնագծերի սարքավորմանը: Հաջորդ օրը դիվիզիան ստիպված եղավ զգալիորեն ընդլայնել իր պաշտպանության ոլորտը և ձեռնամուխ լինել նոր խնդրի կատարմանը: 221-րդ գնդի 3-րդ գումարտակը և 55-րդ հրետանու մարտկոցներից մեկը հանվեցին «Պիլինկովյան դիրքերից» և տեղափոխ-

վեցին 20-րդ լեռնա-հրաձգային դիվիզիայի աջ թևը՝ Կրասնայա Պոլյանայի շրջանում (Ադլերից 40 կիլոմետր հյուսիս-արևելք)։

Օգոստոսի 29-ի երեկոյան հայտնի դարձավ, որ բանակի հրամանատար Լեսելիձեի հրամանով 307-րդ գունդը դադարեցրել է երթը և կենտրոնանում է Գուդաուտայից արևելք, սպասելով նոր հրամանի։ Գնդապետ Կուզնեցովի հետ շտապ մեկնեցինք Գուդաուտա։ Այստեղ մենք հանդիպեցինք 46-րդ բանակի շտաբի նոր պետ գնդապետ Մ. Միքելաձեին։ Եկել էին նաև քաղաքի ղեկավարները՝ քաղկոմի քարտուղարը, գործկոմի նախագահը և ՆԳՎ-ի բաժանմունքի պետը։ Գնդապետ Միքելաձեն հաղորդեց հետևյալը. գերմանացիները ճեղքել-անցել են Գլխավոր կովկասյան լեռնաշղթայի Սանչարո լեռնանցքը և, շարժվելով դեպի հարավ, գրավել են Դոու, Աչավչար (Սուխումիից 36 կիլոմետր հեռու) և Գուդաուտա քաղաքից 28 կիլոմետր հեռու ընկած լեռնանցքները։ Բանակի հրամանատար գեներալ Լեսելիձեն հրամայել է 307-րդ գունդը շրջել դեպի լեռները, նրա առաջ խնդիր դնելով հակառակորդից ետ խլել Գուդաուտայի լեռնանցքը և, հետապնդելով նրան, գրավել նաև Սանչարո լեռնանցքը։ Դոու լեռնանցքի ուղղությամբ գործում են Սուխումիից եկած այլ ստորաբաժանումներ։ Միքելաձեն ավելին չգիտեր։ Այսպիսով, դիվիզիան իր մյուս ստորաբաժանումների ուժերով պետք է ապահովեր ծովափի պաշտպանությունը Պիցունդայի շրջանում։

Սանչարո լեռնանցքը և Գլխավոր կովկասյան լեռնաշղթայի նրան հարող մյուս լեռնանցքները գերմանացիները գրավել էին դեռ օգոստոսի 25-ին։ Կասկած չկար, որ բանակի ու ռազմաճակատի հրամանատարությունները, ինչպես նաև Զորակայանի ներկայացուցիչը այդ մասին իմացել են միայն օգոստոսի 29-ի օրվա վերջին։ Նրանք կապ չունեին լեռնանցքների հետ։ Հակառակ դեպքում՝ գոնե օգոստոսի 29-ի հրամանում գործերի առաջ համապատասխան խնդիրներ կգրվեին։ Հենց միայն այս փաստը վկայում էր Գլխավոր կովկասյան լեռնաշղթայի պաշտպանության բացակայության մասին։

Ինչպես հակառակորդի հետ առաջին իսկ ընդհարումից պարզվեց, Սանչարո լեռնանցքը գրավել էր գերմանական 101-րդ թեթև-հետևակային դիվիզիան։ Գերի ընկած գերմանական զինվորներն իրենց դիվիզիան անվանում էին «ալպինիստական»։ Նա երկու

տարվա ընթացքում մարտական գործողությունների էր պատրաստվել Կարպատյան լեռներում և հյուսիսային Իտալիայում։ Դիվիզիան հիմնականում կոմպլեկտավորված էր ալպինիստ երիտասարդ հիտլերականներով, որոնք զինված էին ավտոմատներով, ավտոմատ հրացաններով, զնդացիրներով, ականանետներով։ Զինվորներն ու սպաները կրում էին թեթև ու տաք ալպինիստական համազգեստ։ 101-րդ դիվիզիան հատկապես պատրաստված էր լեռնային պայմանների մարտական գործողությունների համար։ 1942 թվականի ամռանը 101-րդ թեթև-հետևակային դիվիզիան փոխադրվեց Հյուսիսային Կովկաս։ Նա գործում էր Մեծ Լաբա գետի ավազանի ուղղությամբ, խնդիր ուներ գրավել Սանչարոն ու նրան հարող Գլխավոր կովկասյան լեռնաշղթայի լեռնանցքները և Սուխումի-Գուդաուտա շրջանում դուրս գալ Սև ծովի ափերը։ Շարժվելով դեպի լեռնանցքները, գերմանական զորքերը մատակարարման բազաներ ստեղծեցին Լաբա գետի ավազանում, բնակիչներին և բեռնակիր տրանսպորտը բռնի քշեցին՝ իրենց հարձակվող ստորաբաժանումներին ռազմամթերք և պարենամթերք փոխադրելու։ Ինքնաթիռների փոքր խմբերը օդից պաշտպանում էին գերմանական դիվիզիայի ստորաբաժանումների մարտական գործողությունները լեռներում։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և սովետական կառավարությունը հատուկ նշանակություն էին տալիս Կովկասի պաշտպանության կազմակերպմանը։ Դեռ 1942 թվականի ամռան սկզբներին Գերագույն գլխավոր հրամանատարությունը Զորակայանը միջոցներ ձեռնարկեց Անդրկովկասյան ռազմաճակատի ուժեղացման համար։ Մշակվեցին պաշտպանական աշխատանքների պլաններ, կազմավորվեցին նոր զորամիավորումներ։ Անդրկովկասյան ռազմաճակատը 1942 թվականի օգոստոսին զգալիորեն ուժեղացվեց Հարավային և Հյուսիս-Կովկասյան ռազմաճակատների նահանջող զորքերի հաշվին։ Նրանց բազայի վրա ստեղծվեցին Սևծովյան և Հյուսիս-Կովկասյան զորախմբերը։

Գերագույն գլխավոր հրամանատարության Զորակայանի՝ Կովկասի պաշտպանությունը կազմակերպելու մասին դիրեկտիվներում կարևոր տեղ էր հատկացվում Գլխավոր կովկասյան լեռնաշղթայի լեռնանցքների պաշտպանությանը։ Մասնավորաբար, 1942 թվականի օգոստոսի 20-ին Զորակայանը հատկապես նշում էր, որ

«թշնամին, ունենալով հատուկ լեռնային զորամասեր, Անդրկովկաս ներթափանցելու համար կօգտագործի Կովկասյան լեռնաշղթայով անցնող յուրաքանչյուր կաժան ու արահետ»։ Նա պահանջում էր «գրավել ու ամուր պաշտպանել» Սանչարո, Ադգապշ, Չմախարա, Անշխա, Ախուն-Գարա և գլխավոր կովկասյան լեռնաշղթայի մյուս լեռնանցքները հյուսիսից, նշանակել ճանապարհների (ուղղությունների) պարետներ, նրանց հետ հաստատել ռադիոկապ, լեռնանցքներում գտնվող զորքերն ապահովել 3—4 ամսվա սննդամթերքի պաշարով և ռազմամթերքի 2—3 լրակազմով։ Զորակայանը Անդրկովկասյան ռազմաճակատին պարտավորեցնում էր նաև լեռնանցքներում գտնվող զորքերի մատակարարումն ապահովելու համար կազմակերպել լեռնաբեռնատար տրանսպորտային վաշտեր, բնակիչներից ստեղծել պարտիզանական մարտական ջոկատներ, զորքերն ապահովել տեղաբնակ ուղեկցորդներով¹։

Չնայած Գերագույն գլխավոր հրամանատարութայան Զորակայանի ցուցումներին, Սանչարո լեռնանցքների խմբի պաշտպանությունը փաստորեն կազմակերպված չէր։ Ակնհայտ էր, որ ռազմաճակատի և բանակի հրամանատարութայունները անտեսում էին լեռնային արահետներով հակառակորդի զորքերի ներթափանցման հնարավորությունը։ Թշնամուն սպասում էին ծովից։ Դրա մասին էին վկայում զորքերի տեղաբաշխումը ծովափնյա շրջաններում և այն, որ հրամանատարությունը հոգ չէր տանում մի քանի լեռնանցքներում գտնվող ստորաբաժանումների հետ կապ պահպանելու մասին։

Զորակայանը պահանջում էր լեռնանցքները պաշտպանել հյուսիսից։ Դրանից ավելի լավ որոշում չէր էլ կարելի մտածել լեռնանցքների սանչարոյան խմբի պաշտպանութայան համար։ Բավական էր զբաղեցնել Ումպիրի լեռնանցքը և Լաբա, Զելենչուկ, Մարոսխա, Յաքսաուր ու Կուբան գետերի վերին հոսանքները, որպեսզի պաշտպանվեին դեպի Ախուն-Գարա, Անշխա, Չմախարա, Աձապշ, Սանչարո, Ալաշտրախու, Չամսխա, Յեգերկար, Մարոսխասուի և Կլուխոր լեռնանցքները տանող բոլոր սահմաններն ու մատուցները։ Դրա համար կպահանջվեր երկու, ամենաշատը երեք հրաձգային գունդ, Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի վերը հի-

շատակված լեռնանցքների մեծ մասը զբաղեցված չէր մեր զորքերի կողմից։ Մյուս լեռնանցքները պաշտպանում էին սակավաթիվ ստորաբաժանումներ։ Սանչարո լեռնանցքը պաշտպանում էր 3-րդ հրաձգային կորպուսի 394-րդ դիվիզիայի միայն մի վաշտը, իսկ ՆԳԺԿ-ի համահավաք ջոկատը, հյուսիսից նահանջելով դեպի Սանչարո, մնացել էր առանց ռազմամթերքի։ Լեռնանցքներում պաշտպանական աշխատանքներ ամենեին չէին տարվել։ Օրինակ, Սանչարո լեռնանցքի պաշտպանութայունը չէր համապատասխանում որևէ պահանջի, քանի որ նրանից դեպի արևելք (Ալաշտրախու, Չամսխա) և արևմուտք (Ախուն-Գարա, Անշխա, Աձապշ) լեռնանցքները չէին պաշտպանվում։ Հակառակորդը, չհանդիպելով դիմադրութայան կարող էր այդ լեռնանցքներով անցնել Սանչարոյի թիկունքը, գրավել Պսխուն և նույնիսկ դուրս գալ Ռիցա լիճը։ Այս դեպքում Սանչարոյի պաշտպանութայունը կկորցներ իր նշանակությունը։

Գրավելով Կլուխորի, Մարոսխի, և Սանչարոյի լեռնանցքները, թշնամին մեծ առավելութուն ձեռք բերեց։ Բավական է նշել, որ նշված շրջաններում Կովկասյան լեռների հյուսիսային լանջերի թեքությունը, հարավային լանջերի թեքության համեմատութայամբ, երկու անգամ քիչ է, իսկ գետերի ավազանները շատ ավելի հարմար մատուցներ են դեպի լեռնանցքները։

Մենք չենք կարող պնդել, թե սանչարոյան լեռնանցքների խմբի գրավումը խելացի էր կազմակերպված հակառակորդի կողմից։ Հենց միայն այն, որ նա չգրավեց ոչ ոքի կողմից չպաշտպանված Ախուն-Գարա, Անշխա և Չմախարա լեռնանցքները, որոնց վրայով նա կարող էր առանց դիմադրութայան դուրս գալ Պսխու, և Ռիցա, վկայում է հակառակը։ Ամբողջ բանը մեր զորքերի կողմից պաշտպանութայան կազմակերպման բացակայությունն էր։ Նույնիսկ այն բանից հետո, երբ օգոստոսի 17-ին հրամանատարությունն իմացավ հակառակորդի կողմից օգոստոսի 15-ին Կլուխոր լեռնանցքը գրավվելու մասին, նա այդ լեռնանցքների պաշտպանութայան ուղղութայամբ միջոցներ չձեռնարկեց։ Անթուլլատրելի էր լեռնանցքների հետ հրամանատարութայան կապի բացակայությունը։ Ավագ հրամանատարներից ոչ ոք անձամբ չէր եղել լեռնանցքներում։ Գրավելով Սանչարոյի լեռնանցքը, մենք այնտեղ

¹ Ա. Ա. Կրեչկո, Ճակատամարտը Կովկասի համար, Մ., 1967, էջ 94—145։

չհայտնաբերեցինք մեր զորքերի պաշտպանական դիրքերի որևէ հետք:

Մեր ստորաբաժանումները առաջին օրերին սննդամթերքի մատակարարման դժվարություններ կրեցին: Միայն օգոստոսի 30-ին բանակի շտաբը ձեռնամուխ եղավ լեռնաբեռնատար տրանսպորտի վաշտի կազմակերպմանը, իսկ ուղեկցող գուղառուտցիները ժամանեցին 307-րդ գնդի մեկնելուց շորս օր հետո:

3. ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ՀՈԳՍԵՐ

Մեր ստորաբաժանումները պետք է հաղթահարեին ուժեղ, չավ զինված և հանդերձավորված, լեռնային պայմաններում մարտական գործողություններին նախապատրաստված և փորձառու հակառակորդին: Բայց այստեղ մենք չենք պատմելու մարտերի մանրամասնությունները, քանի որ մենք այդ թեմայի շուրջ իր ժամանակին հրապարակել ենք մեր հիշողությունները¹: Բավարարվենք միայն մարտերի նկարագրության մի քանի լրացուցիչ փաստերով, որոնք որոշ չափով լրացնում են Գլխավոր կովկասյան լեռնաշղթայի սանշարյան ուղղությունամբ տարվող մարտական գործողությունների բնութագիրը: Եթե այստեղ ինչ-որ բան կրկնվի, ապա դա կարվի ընդհանուր կապի և մարտերի պատկերը շխախտելու նպատակով:

Հաշվի առնելով ստեղծված իրադրությունը և այն, որ դիվիզիան պետք է առաջին անգամ մարտի մեջ մտնել, զնդապետ Կուզնեցովի հետ որոշեցինք զնալ 307-րդ գնդի հետ, մեր փոխարեն թողնելով փոխգնդապետ Գրիգորևսկուն և գումարտակային կամիսար Կոսովիչին: Պաշտպանական աշխատանքների պատասխանատվությունը դրինք հրետանու պետի՝ գնդապետ Իգնատևի վրա: Մեզ հետ վերցրինք շտաբի ու քաղբաժնի մի խումբ աշխատողների և դիվիզիայի հետախույզների վաշտը: Ամբողջ հետախույզական աշխատանքը, ընդհուպ մինչև Պսխու գյուղի ազատագրումը, գրվաճավորում էր դիվիզիայի հետախույզության պետ ավագ լեյտենանտ

¹ Տե՛ս Ս Խովմասյան, էջեր Կովկասի հերոսական պաշտպանությունից, ՀՍՍՀ գիտ. ակադ. հրատ., Ե., 1950:

Սերգեյ Բեսսոնովը, իսկ շտաբի օպերատիվ բաժանմունքի պետի օգնական լեյտենանտ Չիկոզիձեն փաստորեն միաժամանակ կատարում էր գնդի շտաբի պետի պարտականությունները: Քաղբաժնի աշխատողների խումբը, որի մեջ էին Վարդանովը (խմբի ավագ), Միխայլովը և Ջանիբեկովը, խնդիր ուներ օգնել գնդի կուսակցական-քաղաքական աշխատանքների կազմակերպմանը: Հետագայում այդ խմբի մեջ մտավ նաև քաղբաժնի հրահանգիչ Դիկին:

Գնդում կոմունիստներ քիչ կային: Ուստի անհրաժեշտ էր կազմակերպել կուսակցություն նոր անդամների և թեկնածուների ընդունելության գործը: 307-րդ գնդում ստեղծվեց դիվիզիայի կուսհանձնաժողովի ժամանակավոր խումբ՝ քաղբաժնի ավագ հրահանգիչ, կուսհանձնաժողովի անդամ Միխայլովի գլխավորությամբ, որի մեջ մտան կուսհանձնաժողովի անդամ, գնդի կուսբյուրոյի քարտուղար Բորովիկը, գումարտակների կոմիսարներ Վալենտինը և Գանիելյանը: Խումբը կուսհանձնաժողովի իրավունքներով քրննարկում էր կուսակցական կազմակերպությունների որոշումները, կուսակցության մեջ ընդունելության հարցերը:

Բանակի ցուցումին համապատասխան, 307-րդ գնդի հրետանին և ականանետների մի մասը թողնվեց առափնյա պաշտպանության բնագծում: Մարտիկներն ստացան երկու օրվա անհրաժեշտ ռազմամթերք ու սննդամթերք: Հրամանատարներն ու քաղաշխատողները մանրազին ստուգեցին մարտիկների երթի պատրաստությունը: Ամեն ինչ արվեց նրանց ավելորդ բեռից ազատելու համար:

Վաշտերում անցկացվեցին կարմիրբանակային կարճատև ժողովներ, ուր քննարկեցին առաջին մարտի խնդիրները: Ստորաբաժանումների հրամանատարները, քաղաշխատողները, բոլոր կոմունիստներն ու կոմբեիտականներն ստացան առաջադրանքներ: Գնդացիները և ականանետները տեղափոխող տրանսպորտն ուղեկցելու համար ստեղծվեցին մարտիկների խմբեր՝ կրտսեր հրամանատարների գլխավորությամբ:

Ռազմերթի ժամանակ տարվող ամբողջ մարտական ու քաղաքական աշխատանքն ուղղված էր պաշտպանության ժողովրդական կոմիսարի № 227 հրամանի անվերապահ կատարմանը: Գերմանական օկուպանտներին վռնդել Կովկասյան լեռներից՝ այս էր առա-

չին մարտական խնդիրը: Որոշվեց մոռանալ նահանջել բառը: «Մեր գործը հարձակվելն ու հայրենիքի գոհարը՝ Կովկասն ազատելն է»:

Մցարա գյուղում տեղի բուժկետի բժշկի հետ պայմանավորվեցինք այնտեղ փոխադրել բուժասանդումարտակից մի խումբ՝ վիրավորներին սպասարկելու համար: Որոշեցինք նաև Մցարայում ստեղծել մատակարարման բազա, համապատասխան կարգադրություն ուղարկելով փոխգնդապետ Գրիգորեակուն:

Մցարայի բնակչությունն արդեն գիտեր թշնամու կողմից Գուդաուտայի լեռնանցքի զրավման մասին: Կուրտնտեսականները հայտնեցին, որ գերմանացիները զավթել են կուրտնտեսություն անասունների մի մասը և գերել չորս հովիվների: Նրանք պատմեցին լեռների պայմանների և լեռնային արահետների ու անցատեղերի մասին: Ռազմերթի դժվարությունների մասին մեր պատկերացումները նսեմանում էին այդ հաղորդումների հանդեպ: Նախքան հակառակորդի հետ ընդհարվելը գունդը կորցրեց երկու մարտիկ ու մի քանի ձի: Նրանք անդունդ զրորվեցին ականանետի ու ծանր գնդացրի հետ: Երկու օրում, վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, գունդը հաղթահարեց ընդամենը 21 կիլոմետր ճանապարհ:

Մարտական գործողությունների դժվարությունները Կովկասյան լեռներում չէին սահմանափակվում միայն լեռնային պայմաններով, վատ եղանակով, կապի ու մատակարարման խախտումներով, ինչպես նաև հակառակորդի համառ դիմադրությամբ: Դիվիզիայում մենք չգտանք թեկուզ մեկին, որը նախկինում եղած լիներ այս լեռներում և որևէ շափով գիտենար լեռնային կաժանները, թեև ստորաբաժանումների հրամանատարներից ու քաղաշխատողներից շատերը կովկասցիներ՝ վրացիներ ու հայեր էին: Զարմանալի էր, որ մենք այդքան վատ գիտեինք մեր երկրամասը: Շատերին տարօրինակ էր թվում, որ գիշերները անտառի տապալված ծառի փտած բները լույս էին արձակում: Մենք ինքներս էինք մեզ նախատում այդպիսի «մանրուքները» աչքաթող անելու համար: Դժբախտաբար, այժմ էլ կարելի է հանդիպել ոչ քիչ թվով մարդկանց, որոնք հրապուրվելով արտասահմանյան ուղևորություններով, մոռանում են հայրենի երկրի բնությունը լավ ճանաչելու անհրաժեշտությունը: Սկզբում մեր միակ ուղեկցորդը Բակլանովկա գյուղից Հակոբ անունով մի կուրտնտեսական էր: Նա մեզ ուղեկցեց մինչև Գուդաուտայի լեռնանցքը, մինչև որ ներկայացան

մեր հիմնական ուղեկցորդները: Ի պատիվ Հակոբի պետք է ասել, որ նա լավ գիտեր մեր երթուղին:

Լեռներում մղվող մարտերը ցույց տվեցին, որ գնդի ու ստորաբաժանումների որոշ հրամանատարներ վատ են կողմնորոշվում լեռնային տեղանքում: Սա չէր կարող շանդրադառնալ մարտական գործողությունների ընթացքի վրա: Երբեմն այդ թերությունները հանգեցնում էին սխալ տեղեկությունների: Գնդի հրամանատար մայոր Յակովենկոն իր շտաբի պետին թողել էր Գուդաուտայում: Կուզնեցովը խիստ զայրացավ:

Նա ստիպված փաստորեն ինքը ղեկավարեց գունդը:

4. 50 ՕՐ ԼԵՌՆԵՐՈՒՄ

61-րդ դիվիզիան իր 307-րդ գնդով, իսկ հետո նաև մի քանի ուրիշ ստորաբաժանումներով, 50 օր շարունակ հարձակողական մարտեր մղեց աննկարագրելի ծանր պայմաններում: Հակառակորդի դիրքերի վրա մեր գրոհները տեղի էին ունենում մեզ համար շարժանց աննպաստ և հակառակորդի համար խիստ նպաստավոր հանգամանքներում: Մեր մարդիկ թշնամու վրա գրոհում էին լեռների լանջերն ի վեր: Հակառակորդը զբաղեցրել էր տիրապետող բարձունքներն ու անցուղիները և կարող էր սակավաթիվ ուժերով խափանել մեր հարձակումը: Կովկասյան լեռներում, մեր ուղղություն վրա, բացառված էր անգամ հրաձգային վաշտի բացազատման ամեն մի հնարավորություն: Յուրաքանչյուր առանձին դեպքում հարկ էր լինում խիստ դժվարանցանելի կաժաններով դուրս գալ հակառակորդի թևերը կամ թիկունքը: Դրա համար կազմակերպվել էին կտրիճ-մարտիկների փոքրիկ խմբեր:

Հարձակումը իրագործվում էր մի քանի փուլով: Հարձակվող ստորաբաժանումները փոխգործողության մեջ էին մտնում տեղանքի առանձնահատկությունները, նույնիսկ իրար հետ կապ չունեցող կաժանների ու անցուղիների առանձնահատկությունները հաշվի առնելով: Նահանջելով, հակառակորդը ձգտում էր առաջին հերթին հարվածի տակից դուրս բերել կենդանի ուժը: Նա երկար չէր մնում միջանկյալ բնագծերում:

Օգոստոսի 31-ի երեկոյան լեռնային կաժանը նորից մեզ տա-

բավ Բակլանովկայի գետափը՝ Գունուարխի մոտ: Հորդառատ անձրև տեղաց, գետի ջուրը բարձրացավ: Հետախույզները գեկուցեցին, որ Գուդաուտայի լեռնանցքի 1722 բարձունքի ստորոտում դիրքեր են գրավում 51-րդ բրիգադի 4-րդ գումարտակը և 155-րդ բրիգադի ականանետային մարտկոցը: Նրանք փակել էին գերմանացիների ճանապարհը դեպի հարավ: Մենք հասցրինք Բակլանովկա գետի աջ ափն անցկացնել միայն 8-րդ հրաձգային վաշտը: Լեռնային հոսանքը քանդեց կամուրջը: Դղրդյունով, ափերը քանդելով, Բակլանովկան իր հետ վիթխարի քարեր ու ծառեր էր բերում: Մարդկանց գետի այն կողմ անցկացնելու կամ նոր կամուրջ կառուցելու բոլոր փորձերը ոչնչի չհասցրին նաև հաջորդ երկու օրը: Գիշերը գետը ավելի բարձրացավ և ողողեց այն վայրը, որտեղ գտնվում էր գունդը: Գծվարությամբ հաջողվեց փրկել մարդկանց ու սպառազինությունը: Մենք ստիպված էինք մնալ գետի ձախ ափին:

Մեզ ենթարկելով 51-րդ և 155-րդ բրիգադների նշված ստորաբաժանումները, սեպտեմբերի 2-ին նրանց հանձնարարեցինք մեր 8-րդ վաշտի հետ հարձակվել լեռնանցքի վրա և գրավել այն: Այսպես սկսվեց հարձակողական մարտերի առաջին փուլը Սանչարո լեռնանցքի ուղղությամբ: Երկու օր շարունակ համառ մարտեր մղվեցին: Հակառակորդը ետ մղեց մեր ստորաբաժանումների բոլոր գրոհները:

Մնդի երկօրյա պաշարն սպառվեց դեռ օգոստոսի 31-ին: Մարդիկ ոտքից գլուխ թրջված էին: Սկսեց ցրտել: Ստիպված էինք խարույկներ վառել: Օրվա մեջ մարտիկները մի քանի անգամ թեյ էին խմում տաքանալու համար: Թանձր մառախուղը ծածկում էր խարույկները: Օրվա երկրորդ կեսին եկավ բեռնակիր ավանակների քարավանը: Բերել էին հաց, մսացու անասուններ, գարի՝ ձիերի համար: Հացը հորդ անձրևի տակ ճանապարհին թրջվել էր: Մարտիկները փորձում էին այն չորացնել խարույկների վրա, բայց ոչինչ էր ստացվում, խմորը մնում էր խմոր:

Վերջապես անձրևը դադարեց: Սեպտեմբերի 3-ի գիշերը գետի ջուրն զգալիորեն պակասեց: Զինվորները կտրեցին մի քանի հսկայական ծառեր, որոնք լեռնալանջից ընկնում էին Բակլանովկայի վրա: Բայց նա քշում-տանում էր ծառերը: Միայն երկու ծառ ընկան գետի լայնությամբ: Մարտիկները դրանք իսկույն հարմա-

րեցրին գետանցման համար: Երեկոյան գունդն արդեն լեռանցքի ստորոտում էր:

Լեռնանցքի գրոհը նշանակվեց սեպտեմբերի 4-ի առավոտյան: Երեք ականանետից բաղկացած մարտկոցը մարտիկները գաղտնի բարձրացրին 1722 բարձունքի հակադիր լանջը՝ արևելյան կողմից, առաջադրանք ունենալով ականանետային կրակի տակ սլահեյ հակառակորդի լեռնանցքի պաշտպանությունը: 8-րդ վաշտը պետք է մինչև լուսաբաց ընդհուպ մոտենար հակառակորդի դիրքերին և հնարավորին շափ բացազատվեր կածանի երկու կողմերում, խընդիր ունենալով ականանետային կրակից անմիջապես հետո անցնել գրոհի: Հրաձգային դասակներից մեկը՝ լեյտենանտ Մալիշևի գլխավորությամբ, առաջադրանք ստացավ գիշերվա ընթացքում արևմտյան կողմից շրջանցել լեռնանցքը և դուրս գալ Ռեշաբա գետի մոտ, որպեսզի կտրի թշնամու նահանջի շավիղը լեռնանցքի հյուսիսային կողմից և հարվածի նրա թիկունքին: Մեր տրամադրության տակ եկած Գուդաուտայի կործանիչների գումարտակի ուղեկիցները՝ միլիցիայի կրտսեր լեյտենանտ Կուբազի և կոմիսար Սաբաշվիլու հրամանատարությամբ, անհնարին էին համարում լեռնանցքի շրջանցումը Ախիբոխ լեռան կողմից: Սակայն դասակի հրամանատար Մալիշևը հավատացած էր, որ այն կհաղթահարի: Գուդաուտայից երկուսը համաձայնվեցին ուղեկցել դասակին:

Մարտն սկսվեց առավոտյան: Կուզնեցովը 3-րդ գումարտակի հրամանատար Պանցևիչին հրամայեց շարժվել շավիղով, աջակցել 8-րդ վաշտին և զարգացնել նրա հաջողությունը: Գծվար է ասել, թե ինչ արդյունք կունենար այդ օրվա մարտը, եթե ականներից մեկը ուղղակի շղիպչեր գերմանական գումարտակի հրամանատարական կետին: Ականի պայթյունից սպանվեցին մի քանի հոգի, այդ թվում գումարտակի հրամանատարը: 8-րդ վաշտը օգտվեց դրանից և գրոհեց լեռնանցքը: Հենց այդ ժամանակ Մալիշևի դասակը գնդակոծության տակ առավ շավիղը գերմանացիների թիկունքում, բայց չկարողացավ գրավել այն: Սա թողեց շրջապատման տպավորություն, որին գերմանացիները չէին սպասում:

Գերմանացիները հապճեպ նահանջեցին: Հիտլերականների մի խումբ հյուսիս էր քշում մի քանի տասնյակ գլուխ խոշոր եղջերավոր անասուն և հարյուրի շափ այծ: Մալիշևի դասակը նրանցից խլեց անասունները: Գերմանացիները ցրվեցին: Շավիղի եր-

կայնքով ընկած էին սպանված ձիեր: Գերմանացիներն էին գրնդակահարել:

Չորս օրում մարդիկ միայն մեկ անգամ էին կանոնավոր սընվել: Սեպտեմբերի 4-ին «Ու—2» ինքնաթիռը ցած նետեց մի քանի պարկ հաց, որոնցից գտնվեց միայն մեկը: Մալիշևի խլած անասուններից մի քանիսը մորթեցին:

Դեպի լեռնանցք կատարած վերելքը մեր մարտիկներից շատ ջանք ու եռանդ խլեց: Միայն սեպտեմբերի 5-ի երկրորդ կեսին մենք դուրս եկանք Բզիբ գետի մոտ Գոմբելի բնավայրը: Այդ վայրը դուրս եկան նաև Դոու լեռնանցքի ուղղությամբ հարձակվող ստորաբաժանումները՝ 46-րդ բանակի հրամանատարի տեղակալ Ի. Ի. Պիլաշևի հրամանատարությամբ: Մենք նրան հանդիպեցինք Աբխազիայի մարզկոմի երկրորդ քարտուղար Ալեքսանդր Միրցխուլավայի հետ: Բնութագրելով իրադրությունը սանչարյան խմբի լեռնանցքներում և գերմանացիների պաշտպանությունը Պսխուի շրջանում, Պիլաշևը մեր ենթակայության տակ թողեց 51-րդ բրիգադի 4-րդ գումարտակը, մի հրաձգային գումարտակ և ականանետային մեկ մարտկոց: Այնուհետև մեր առջև նա խնդիր դրեց՝ մի հրաձգային գումարտակով փակել Պսխու տանող շավիղները Սանչարոյի ուղղության ձախ թևում և Պսխուն գրավելուց հետո հարձակվել Չմախարա լեռանցքի վրա. մեկ ուրիշ հրաձգային գումարտակով անցնել Բզիբը և, հետևում թողնելով 1472 բարձունքը արևելքից, դուրս գալ Պսխուի մոտ, գյուղից հարավ շրջապատել ու ոչնչացնել հակառակորդի ջոկատը. այնուհետև հարձակվել Սանչարո լեռնանցքի վրա, ձախ թևից պաշտպանել Բզիբի մատույցը, վաշտերից մեկը դուրս բերել Բզիբի աջ ափը, նրան առաջադրանք տալով ամրանալ Պսխուի հարավ-արևելյան մատույցներում՝ Բավյոս գետի ակունքի շրջանում. գրավել Սանչարո լեռնանցքը և գրանով իսկ լեռնանցքների վրա մեզանից աջ ու ձախ հարձակվող մեր մյուս զորամասերին հնարավորություն տալ հաջողությամբ կատարելու իրենց խնդիրը:

Պիլաշևը մեզ վրա դրեց նաև իր շտաբի պաշտպանությունը, հրամայելով այդ նպատակի համար առանձնացնել 307-րդ գնդի գումարտակներից մեկը:

Այսպես սկսվեց հարձակողական մարտերի երկրորդ փուլը:

Հակառակորդի գրաված սանչարյան խմբի բոլոր լեռնանցք-

ների ելքերը՝ հյուսիսից հարավ դեպի Բզիբ գետը և Պսխու բնակավայրի թիկունքը, պաշտպանում էինք տեղ-տեղ վաշտերով, իսկ տեղ-տեղ էլ դասակներով: Հարձակման գլխավոր՝ Սանչարոյի ուղղությամբ փաստորեն մնացին 307-րդ գնդի 3-րդ գումարտակը և մեզ տրված ականանետային մարտկոցը: Նկատի ունենալով այս, մենք կարգադրություն ուղարկեցինք փոխգնդապետ Գրիգորևսկուն՝ շտապ կարգով 66-րդ գնդի գումարտակներից մեկը փոխադրել Ռիցա լճի մոտ, այնտեղ ստեղծել մատակարարման բազա, կազմակերպել Ախուն-Դարա (Սուխումի) և Անչխա լեռնանցքների պաշտպանությունը, Լաշիպս և Մզիմնա գետերի ջրբաժնի շրջանում ունենալ ռեզերվային մեկ վաշտ: Այս դեպքում Պսխուն գրավելուց հետո Բզիբի շրջանից ազատել մոտ մեկ գումարտակ: Բացի դրանից, Ռիցա լճի մոտ բազա ստեղծելուց հետո դյուրանում էր շտաբի կապը և 307-րդ գնդի մատակարարման ուղին: Հետագայում 66-րդ գնդի գումարտակը կարևոր դեր խաղաց Սանչարո լեռանցքի գրավման գործում:

Պսխուի շրջանը գերմանացիները վեր էին ածել մատակարարման բազայի և դիմադրության հանգույցի: Պաշտպանությունն անցնում էր ժայռերի գագաթներով և Բզիբով՝ Պսխուից հարավ-արևմուտք ու հարավ և հարավ-արևելյան բարձունքներով: Պաշտպանության խորքում հակառակորդը զբաղեցնում էր օդանավակայանը: Նրանք Պսխուի հեռավոր մատույցները հսկողության տակ էին պահում հյուսիս-արևելքից և հյուսիս-արևմուտքից:

Սեպտեմբերի 8-ի գիշերը 307-րդ գնդի 3-րդ գումարտակը՝ ավագ լեյտենանտ Պանցևիչի հրամանատարությամբ, շրջանցեց 1472-րդ բարձունքը արևելյան կողմից և առավոտյան մոտեցավ Պսխուի օդանավակայանին: Գումարտակի երկու վաշտերը հանկարծակի հարձակվեցին տներում գտնվող հիտլերականների վրա, իսկ մյուսը՝ 9-րդ վաշտը, հարավ-արևելքից գրոհեց Պսխու գյուղի վրա: Գումարտակի գրոհը համընկավ Պսխուի վրա մեր 7 ուժեղ ծիչների հարվածին: Գյուղում խուճապ առաջացավ: Այդ ժամանակ կրակային մարտ սկսվեց Բզիբի ուղղությամբ՝ Պսխուից հարավ: Առաջին գումարտակը, որի հրամանատարն էր լեյտենանտ Բրաժնիկը, իսկ կոմիսարը՝ ավագ քաղղեկ Դանիելյանը, անակընկալ գնդացրային կրակ բացեցին գերմանական վաշտի վրա, որը հսկում էր գետանցի մոտ գտնվող 70 գերի կարմիրբանակայիննե-

րին: Վաշտի մի մասը ջախջախվեց: Գերի կարմիրբանակայինները փախան, անցան մեր կողմը: Կրակային մարտ վարեց նաև ՆԳԺԿ-ի՝ հարևան համահավաք գունդը: Պանցևիչի գումարտակի հաջողությունն ապահովեց առաջին գումարտակի արագ առաջխաղացումը հարավից: Ժամը 13-ին 307-րդ գունդը գրավեց Պսխուն և օդանավակայանը: Չսպասելով Պիլաշևի ժամանելուն, գնդապետ Կուզնեցովը գումարտակի հրամանատար Պանցևիչին՝ հրամայեց թշնամուն հետապնդել Սանչարոյի ուղղությամբ, իսկ համահավաք գնդի գումարտակի հրամանատարին՝ շարժվել դեպի Ալաշտրախու—Չամաշխա լեռնանցքները:

Պսխուի ազատագրումը կարևոր նշանակություն ուներ: Սանչարյան լեռնանցքներով դեպի հարավ ձգվող բոլոր կաժանները մեր հսկողության տակ էին: Արագորեն վերականգնվեց օդանավակայանը: Սա հնարավորություն տվեց մշտական կապ ստեղծել բանակի ու ռազմաճակատի հրամանատարության հետ, զորքերին ռազմամթերք ու պարենամթերք հասցնել ինքնաթիռներով, ծանր վիրավորներին շուտափույթ փոխադրել հոսպիտալ և այլն: Զորքերի մատակարարումը կանոնավորվեց: Պսխու բնակավայրի մոտ կազմակերպվեց սանիտարական մաս:

Սկսվեց հարձակման երրորդ փուլը: Ավագ լեյտենանտ Պանցևիչի 3-րդ գումարտակը, հետապնդելով հակառակորդին, ուժեղ դիմադրության հանդիպեց 2146 բարձունքի հարավ-արևելյան լանջերի վրա՝ անտառում:

Գնդապետ Կուզնեցովը մնաց Պսխու գյուղում որպես Պիլաշևի օգնական: Մեր տրամադրության տակ դրված գումարտակը նորից մտավ համահավաք գնդի մեջ և հարձակվեց Չամաշխա լեռնանցքի ուղղությամբ: Այդ օրերին Թբիլիսիի հետևակային ուսումնարանը փոխադրվեց Պելի հովիտը՝ Ադգապշ լեռնանցքի վրա հարձակվելու առաջադրանքով: Մեր 66-րդ գնդի 1-ին գումարտակի ստորաբաժանումները մոտեցան Ախուն-Գարա և Անշխա լեռնանցքներին: Այս կապակցությամբ վերացավ 307-րդ գնդի ստորաբաժանումները Բզիբի շրջանում թողնելու անհրաժեշտությունը: Նրանք հանվեցին դիրքերից, եկան մեզ մոտ: Մեր տրամադրության տակ դրվեց նաև երկու լեռնային թնդանոթ: Դրանք, ինչպես նաև 155-րդ բրիգադի լեյտենանտ Կուզնեցովի ականանետային մարտկոցը տեղակայեցինք Ախեյ գետի ավազանում: Մարտկոցը աջակցեց 307-րդ

գնդի հարձակմանը 2146 բարձունքի վրա, իսկ թնդանոթները կրակեցին Սանչարո լեռնանցքի ուղղությամբ:

Առաջին օրերը մարտերը տեղի էին ունենում անտառում, միայն 3-րդ գումարտակի ուժերով: Երեք օրվա ընթացքում նա անտառը մաքրեց հիտլերականներից և դուրս եկավ անտառի եզրը:

Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի հարավային կողմից Սանչարո լեռնանցքը միայն մի մատույց ունի:

Հետախուզելով տեղանքը և հակառակորդին, մենք մի քանի անգամ փորձեցինք շրջանցել Սանչարոյի պաշտպանությունը հարավ-արևմուտքից, նրա աջ թևից: Բայց բոլոր փորձերն ապարդյուն անցան: Սնայպերի գնդակից զոհվեց 3-րդ գումարտակի հրամանատար Պանցևիչը, իսկ գումարտակի կոմիսար Վալենտինը ծանր վիրավորվեց երկու ոտքից: Շարքից դուրս եկան 3-րդ վաշտի հրամանատար Ստրոգովը և քաղզեկ Սարգիսովը: Զոհվեց հիանալի սնայպեր Կոստյուկովը, որը մինչ այդ արդեն ոչնչացրել էր 41 հիտլերականի:

Սեպտեմբերի 13-ին 1-ին գումարտակի 30 հոգուց բաղկացած կտրիճների խումբը խիզախորեն գրոհեց հակառակորդի աջ թևի վրա և լեռնալանջով մի փոքր առաջ շարժվեց հյուսիս-արևմտյան ուղղությամբ: Շուտով նա ծանր դրության մեջ ընկավ և դժվարություններ ապրեց շրջապատումից: Չսպասելով խմբի գործողությունների արդյունքներին և շատուգելով, գնդի հրամանատար մայոր Յակովենկոն գնդապետ Պիլաշևին ղեկուցել էր այն մասին, թե իբր բաժանվելը գրավված է, իսկ հակառակորդը նահանջում է: Նա նույնիսկ խոստացել էր հաջորդ օրը գրավել Սանչարո լեռնանցքը: Բնականաբար, նա ուրախացրել էր Պիլաշևին: Բայց գնդապետ Կուզնեցովը կասկածել էր և խնդրել հեռախոսի մոտ կանչել ինձ, իսկ ես այդ ժամանակ հրամանատարական կետում չէի:

Կովկասյան լեռների պայմաններում հեշտ շէր անմիջապես պարզել իրերի իսկական վիճակը: Սակայն կասկածից վեր էր, որ գնդի հրամանատարը ճիշտ չէր ղեկուցել: Նա ակնհայտորեն հույս ուներ, թե մինչև ճշմարտությունը պարզվի, բարձունքը կգրավվի: Գնացինք ստուգելու, Գումարտակի հրամանատար լեյտենանտ Բրաժնիկը հաստատեց մայոր Յակովենկոյի ղեկույցը, իսկ այդ ժամանակ թշնամին ավտոմատներով գնդակոծում էր նրա հրամանատարական կետը: Ըստ նրա ղեկույցի՝ մեր կտրիճների խում-

բը գործում էր բարձունքից այն կողմ: Ստուգելու համար մարդիկ ուղարկեցինք: Կտրիճների խմբին շգտան, իսկ իրադրությունը ոչինչով չէր փոխվել: Ստիպված անձամբ ստուգեցի: Հրամանատարների ու մարտիկների մի փոքրիկ խմբով անցանք հակառակորդի աջ թևը, փորձելով դիտարկումների միջոցով պարզել իրավիճակը: Կասկած չմնաց: Հակառակորդը առաջվա նման պաշտպանում էր բարձունքը: Վերադարձին ստուգեցինք ձախ թևում գտնվող 7-րդ վաշտի դիրքերը: Այստեղ էլ պարզվեց, որ կտրիճների խումբը, նահանջելով, սկզբում մտել է անտառի խորքը՝ մեր դիրքերից հարավ, և հենց նոր միացել է այդ վաշտին:

Բարձունքը գրավելու մի քանի փորձեր նույնպես հաջողություն չունեցան: Փորձեցինք կապվել Թբիլիսիի հետևակային ուսումնարանի հետ: Սեպտեմբերի 16-ին լեյտենանտ Կալինինը վաշտին առաջադրանք տվեց պարզելու Բեշտա գետի վերին հոսանքների ավազանը թափանցելու հնարավորությունը. ոչինչ չստացվեց:

Սեպտեմբերի 18-ին ստեղծվեց գրոհային մի փոքրիկ խումբ՝ գումարտակի ավագ համհարզ լեյտենանտ Վլադիմիր Յվետկովի ղեկավարությամբ: Լեյտենանտ Ասատուզկը խնդրեց իրեն նշանակել Յվետկովի տեղակալ: Այդ խմբին միացավ նաև գումարտակի կոմիսար ավագ քաղղեկ Ալեքսանդր Դանիելյանը: Մի քանի ժամ շարունակ Յվետկովը, Դանիելյանը, քաղրածնի ավագ հրահանգիչ Միխայլովը և դիվիզիայի թերթի քարտուղաք Վաչնաձեն խումբ էին պատրաստում. մարտիկներին բացատրում էին մարտական առաջադրանքը և նրանց գործողությունների մեթոդները, ստուգում կոշիկներն ու համազգեստը, շինելները փոխարինում էին թեթև ու տաք բաճկոններով, բաժանում մեկական տուփ պահածո, մի քիչ պաքսիմատ և մեկական տափաշիչ ջուր, զինում էին ավտոմատներով, նոնականերով ու դանակներով: Հետո հրամայվեց ռազմիկներին քնել:

Գրոհային խումբը պետք է բարձունքի հարավ-արևելյան կողմի անդունդի եզրով մագլցելով, անաղմուկ մոտենար բարձունքի գագաթին և հանկարծակի հարձակվեր հակառակորդի վրա: Զուգահեռաբար պատրաստվում էր մեկ դասակ, որին առաջադրանք տրվեց սողեսող մոտենալ հակառակորդի դիրքերին և գրոհել այն ժամանակ, երբ գրոհային խումբը մոտենա գագաթին: Զախ թևում

մի վաշտ պետք է ստեղծեր գիշերային հարձակման տպավորություն՝ թշնամու ուշադրությունը իր վրա հրավիրելու համար: Բարձունքի գրավման պլանը ներկայացվեց զնդապետ Պիլաշևին: Շուտով մեզ մոտ եկավ դիվիզիայի հրամանատար Կուզնեցովը: Նա հրամայեց գրոհային խմբի հետևից հեռախոսագիծ տանել:

Նշանակված ժամին ձախ թևում վաշտը կեղծ հարձակում ցուցադրեց: Շուտով փոխհրահանգություն սկսվեց: Յվետկովի խումբը մոտենում էր նպատակակետին: Հակառակորդը նկատեց դասակի շարժումը և բարձունքի գագաթից ուժգին կրակի տակ առավ նրան: Յվետկովն ու Դանիելյանը օգտվեցին դրանից: Խումբը համարձակ գրոհեց թշնամու վրա: Պայթեցին նոնակաները, լսվեց «ուռան»:

Մարտը երկար տևեց: Անհամբեր սպասում էինք հեռախոսի զանգին: Գրոհի անհաջողության դեպքում Յվետկովի խմբին միայն կործանում էր սպասում: Վերջապես հնչեց զանգը. «Բարձունքը մերն է...» և լռեց: Հեռախոսավարը վիրավորվեց: Հեռախոսափողը վերցրեց մյուս կապավորը և զեկուցեց գրոհային խմբի կողմից բարձունքը գրավվելու մասին: Դա սեպտեմբերի 19-ի ժամը 5-ին էր:

Բարձունքի վրա փուլած էին գերմանացիների դիակները: Խումբը գրավել էր 20 ավտոմատ և մոտ 10.000 փամփուշտ: Խիզախի մահով զոհվեց սերժանտ կոմունիստ Մակար Կարպովիչ Սերեդան: Մի քանի ռազմիկներ վիրավորվեցին: Յվետկովի խումբը գերազանց կատարեց դժվարին առաջադրանքը: «Գերոյ ռոդինի» ամենօրյա կարմիրբանակային թերթը 1942 թվականի հոկտեմբերի 2-ին մի էջ նվիրեց հերոսներին՝ «Անանուն բարձունքի գրոհը» վերնագրով: Սեպտեմբերի 19-ի ցերեկը զնդի կուսբյուրոն 14 դիմում ստացավ կուսակցության մեջ ընդունվելու մասին: Դրանց մեջ էր Վլադիմիր Յվետկովի դիմումը:

Վրա հասավ Սանչարոյի գրավման վերջին՝ շորթորդ փուլը: 2146 բարձունքի գագաթից դիտարկելով տեղանքը, կասկած չմնաց, որ ամենադժվարին խնդիրը Սանչարոյի գրավումն է: Ինչպե՞ս մոտեցնել ստորաբաժանումները լեռնանցքին,— ահա խնդիրը: Օգտվելով միակ կածանից, նշանակում էր ստորաբաժանումները առանց մարտի դատապարտել կործանման: Սեպտեմբերի 20-ին մենք Պիլաշևին զեկուցեցինք հրամանատարական հետախուզություն արդյունքների մասին: Ներկա էին ռազմաճակատի ներկա-

յացուցիչ գեներալ-մայոր Պետրովը և Վրաստանի ժողովածուների նախագահ, 36-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ Բաբրա-
ձեն: Վերջինս լսելով, որ մեր որոշ ստորաբաժանումներ մոտ 400
մետր անցել են 2146 բարձունքից դեպի Սանչարոյի կողմը, բա-
ցականչեց:

— Ասում եք 400 մետր: Նման տեղանքում դա հրաշք է:

Ոչ մի որոշում չընդունվեց: Գեներալ Պետրովը որոշեց ան-
ձամբ դիտարկել տեղանքը: Մեր խնդրանքով գնդապետ Կուզնեցո-
վին թույլատրվեց Պսխուից մեկնել Գագրա՝ դիվիզիայի գործերով
զբաղվելու:

Գեներալ Պետրովը ուշադիր զննեց նոր ավարտված մարտերի
տեղանքը, 2146 բարձունքից դիտեց Սանչարո և Աձապշ լեռնանցք-
ների մատույցները և հարակից կետերը, հիացավ լանդշաֆտի վե-
հույթյամբ, իսկ երբ հարցը հասավ Սանչարոյի վրա հարձակման
որոշում ընդունելուն, տարուբերեց գլուխը:

— Այնուամենայնիվ, մեր մարդիկ հերոսներ են, — ջերմու-
թյամբ արտասանեց գեներալը:

Ի՞նչ էր որոշել նա:

Ամենից առաջ մենք ամբացանք 2146 բարձունքի շրջանում:
Սա անհրաժեշտ էր Սանչարո և Աձապշ լեռնանցքների աղատա-
գրումից առաջ: Սանչարոյի հարձակումը հրամայաբար պահան-
ջում էր մեզ ապահովել թիկունքից՝ Աձապշ լեռնանցքից, և թևից՝
գլխավոր լեռնաշղթայի կողմից: Մեր տրամադրության տակ եղած
ստորաբաժանումները նույնիսկ այդ խնդրի կատարման համար
բավական չէին: Ուստի 66-րդ գնդի 1-ին գումարտակը Ռիցայի
շրջանից և Ախուն-Գարա ու Անչխա լեռնանցքներից փոխադրեցինք
Սանչարոյի ուղղութիւնը, իսկ գնդապետ Պիյաշևից խնդրեցինք
մեր տրամադրության տակ ուղարկել 307-րդ գնդի 2-րդ գումար-
տակը, որ մինչ այդ պաշտպանում էր բանակի շտաբը:

Սանչարոյի գերմանական պաշտպանությունն անցնում էր
լեռնանցքի Լրկու կողմերի բարձունքներով և ժայռերի երկարու-
թյամբ՝ հյուսիսային կողմից: Հարկավոր էր ելք գտնել դեպի թըշ-
նամու թիկունքը: Սեպտեմբերի 19-ից մինչև 23-ը, գիշերով, որոշ
ստորաբաժանումներ մանր խմբերով շավիղի հարավային կողմից
առաջ շարժվեցին անդունդի ժայռեղեն եզրերով: Նրանք պետք է
իրենց վրա հրավիրեին հակառակորդի ուշադրությունը: Ժայռերի

մեջ խրամատավորվելու մասին խոսք լինել չէր կարող: Մարտիկ-
ները դիրքեր գրավեցին ժայռերի ու քարերի հետևում: Նրանք կա-
մաց-կամաց արևելյան ուղղութիւնով տարածվեցին դեպի լեռնանց-
քը: Մեծ դժվարութիւնների հետ էր կապված նրանց մատակա-
րարումը՝ ջրով ու սննդամթերքով:

Հետազոտութիւններով որոշվեց ժայռերի մի-
ջով հակառակորդի թիկունքը դուրս գալու հնարավորութիւնը:
Նրկու անգամ, սեպտեմբերի 23-ին և 26-ին, կտրիճների խմբերը
փորձ կատարեցին դուրս գալ հակառակորդի թիկունքը: Առաջին
խումբը հայտնաբերվեց հակառակորդի կողմից: Ընկնելով ուժգին
կրակի տակ, նա ետ վերադարձավ: Մյուս խումբը՝ լեյտենանտ
ժուկովի հրամանատարութիւնով, մեկուկես օր մարտեր մղեց հա-
կառակորդի թիկունքում, բայց ստիպված եղավ գիշերը վերադառ-
նալ: Լեյտենանտ Մալիշևի ղեկավարութիւնով գործող հաջորդ խում-
բը խորացավ հակառակորդի թիկունքը, բայց ամեն կողմից են-
թարկվեց զրոհի: Անհավասար մարտ մղելով, խումբը սեղմվեց
հավերժական սառցադաշտերին: Նրանք բոլորը զոհվեցին, կրակե-
լով մինչև վերջին հնարավորութիւնը:

Ուրիշ ելք չկար, Սանչարոն կարելի էր գրավել միայն նրա
պաշտպանության թիկունքից՝ հյուսիս-արևմուտքից:

Սեպտեմբերի 30-ին հետախուզութիւնը հաստատեց մեր տե-
ղեկութիւնները թշնամու ուժերի վերախմբավորման մասին: Նա
ուժեղացնում էր Աձապշ լեռնանցքի խմբավորումը: Կարելի էր են-
թադրել, որ հակառակորդը մտադիր է հարվածել մեր թիկունքին և
ետ գրավել 2146 բարձունքը: Գնդապետ Պիյաշևը հրամայեց դա-
դարեցնել գործողութիւնները Սանչարոյի ուղղութիւնով, անցնել
պաշտպանության, իսկ հիմնական ուժերով հարձակվել Աձապշի
վրա: Սա շատ դժվարին խնդիր էր: Աձապշ տանող միակ շավիղն
անցնում էր տեղ-տեղ մինչև 75—80 աստիճան թեքութիւն ունե-
ցող քարքարոտ լանջով:

Հոկտեմբերի 1-ի երեկոյան կրտսեր լեյտենանտ Սակովսկու
դասակը դժվարանցանքի ժայռախորշով առաջ շարժվեց Աձապշի
արևելյան կողմից, առաջադրանք ունենալով դուրս գալ լեռնաշղ-
թայի կատարը՝ լեռնանցքից հյուսիս, ամրանալ այնտեղ, հակա-
ռակորդի ուշադրութիւնը գրավել իր վրա: Նրկու վաշտ, դասակ առ
դասակ, գիշերով սկսեցին շարժվել շավիղով: Նրանք կարող էին

գործել միայն մանր խմբերով: Հոկտեմբերի 2-ի առավոտյան Սակովսկու դասակի հետ հեռախոսային կապը խախտվեց և այլևս չհաջողվեց վերականգնել: Երկու օր դասակը լեռնակատարին դիմադրեց թշնամուն: Այնուհետև նահանջեց: Բայց ո՞ւր: Այդպես էլ մեղ չհաջողվեց որոշել նրա տեղը:

Հարձակվող վաշտերի որոշ խմբեր, ընկնելով ուժեղ կրակի տակ, դուրս եկան շավիղից, կորցրին կապը իրենց վաշտերի հետ: Գումարտակի կոմիսար քաղղեկ Կվիշիան մեծ ջանք գործադրեց որոնելով Սակովսկու դասակը և իրենց վաշտերից կտրված մարտիկների խմբերը: Հոկտեմբերի 3-ին նա ուղարկեց մի համառոտ զեկույց. «...Սակովսկու դասակը և մարտիկների խմբերը չեմ գտել: Ենթադրում եմ, որ նրանք շատ մոտ են թշնամու կրակակետերին և չեն կարող գլուխ բարձրացնել... երեք կապավոր հենց նոր հայտնեցին, որ հակառակորդը առաջ շարժվելու հնարավորություն չի տալիս...»: 5-րդ վաշտի հրամանատարի հետ կապը նույնպես խանգարվեց: Այնտեղ ուղարկվեց կոմերիտական աշխատանքի գծով քաղբաժնի պետի օգնական քաղղեկ Գոգադինը: Հոկտեմբերի 4-ին նա զեկույցեց, որ որոշ խմբեր առաջ են շարժվում դեպի լեռնանցքը, մինչև նպատակակետը քիչ է մնացել: 5-րդ վաշտի տեղը հայտնի չէ, ուղարկված կապավորները չեն վերադարձել: Երկու ժամ հետո Գոգադինը զեկույցեց, որ 5-րդ վաշտը նահանջել է հարավ, այնտեղ է գտնվում նաև գումարտակի հրամանատարը:

Աձապշի հարձակումը ոչինչ չուվեց: Թբիլիսիի ուսումնարանը նույնպես գամվեց լեռնաշղթայի հարավային լանջերին: Վաշտերն ու Սակովսկու դասակը ետ քաշվեցին դեպի Բեշտա դետի ավազանը և անցան պաշտպանություն:



Սանչարոյի հատվածում ինքնաբերաբար ծնունդ առավ սնայպերական շարժումը: Նրա նախաձեռնողը 3-րդ գումարտակի կոմիսար քաղղեկ Սոկոլն էր: Գրա առիթը տվեցին գերմանացիները՝ նրանք ժայռերի կատարներից ականներ էին նետում ձեռքով: Սոկոլը անցնում էր մի հրաձգից մյուսը, հրամայում հետևել ու ոչընչացնել հիտլերականներին: Մեկ օրում նա հրացանով վերացրեց 12 ֆաշիստի, այդ թվում մի սպայի: Հավասարվել կոմիսարին, կոչ արեցին ռազմիկները: Մարտիկ Սապեգինը իր «որսն» սկսեց ֆա-

շիստական սնայպերի ոչնչացումով, իսկ Ֆեոդորովն ու Յիշչենկոն շուտով հավասարվեցին կոմիսարին:

Սանչարոյի ուղղությամբ մարտական գործողությունների ընթացքում կուսակցության մեջ ընդունվեց 191 մարդ, նրանցից 113-ը՝ 307-րդ գնդում, ՀամԿԿՄ շարքերը՝ 469 մարդ: Ոմանք դիմեցին կուսակցական կազմակերպություններին, խնդրելով իրենց կուսակցության մեջ ընդունել մարտից առաջ, մյուսներն ուզում էին ապացուցել, որ իրենք արժանի են լինել կուսակցության շարքերում և դիմումներ ներկայացրին մարտերից հետո: Այդպես վարվեցին, օրինակ, լեյտենանտ Յվետկովը և 2146 բարձունքի գրոհին մասնակցած մյուս անկուսակցականները: Սերժանտ Դոնցովը գրում էր. «Խնդրում եմ ինձ ՀամԿ(բ)Կ շարքերն ընդունել որպես անդամության թեկնածու Հայրենական մեծ պատերազմի օրերին: Ուզում եմ պատվով կրել կուսակցության անդամության թեկնածուի անունը...»: Սերժանտ Սերմուսը գրում էր. «Ուզում եմ մարտի գնալ որպես կոմունիստ, իսկ եթե սպանվեմ, ապա ինձ համարեք կոմունիստ»: Սեպտեմբերի 23-ին ինձ դիմեց գրեթե պատանի Վասիլի Ուլյանովը: Նա կրտսեր լեյտենանտ էր, վախենում էր, թե իրեն կասեն՝ «Դեռ վաղ է»: Այդ պատճառով էլ սկսել էր կոմիսարից: Ահա նրա դիմումը.

«61-րդ հրաձգային դիվիզիայի 66-րդ հրաձգային գնդի սկզբնական կուսակազմակերպությանը
Վասիլի Իոսիֆովիչ Ուլյանովից

ԳԻՄՈՒՄ

Այն պահին, երբ մեր սովետական երկրի վրա լուրջ վտանգ է կախված, երբ թշնամին ձգտում է թափանցել սովետական Կովկաս և զավթել մեր աշխատանքով ստացվող նավթը, 66-րդ հրաձգային գնդի սկզբնական կուսակազմակերպությանը խնդրում եմ ինձ ընդունել ՀամԿ(բ)Կ շարքերը որպես անդամության թեկնածու: Ես զենքը ձեռքիս և կուսակցական փաստաթղթով կջարդեմ ֆաշիստական զավթիչներին այնպես, ինչպես նրանց ջարդում ու ոչընչացնում են մեր փառապանժ գվարդիականները:

23.9.42 թ.

(ստորագրություն) (Ուլյանով)»:

Կարդալով դիմումը, ասացին Ուլյանովին.

— Այս պահից, բնկեր Ուլյանով, ձեզ համարեք կոմունիստ և կովեք ինչպես բոլշևիկ:

— Կա կովել ինչպես բոլշևիկ, — հստակ արտասանեց Վասիլին:

Կրտսեր լեյտենանտ Ուլյանովը իր դիմումը կարդաց ռազմիկների մոտ և ասաց.

— Միայն առաջ եմ գնալու: Պետք լինի, կյանքս կտամ որպես կոմունիստ, և դա կլինի իմ հպարտութունը:

Սանչարո լեռնանցքում Ուլյանովը ձեռքի գնդացրով ոչնչացրեց 50 հիտլերականի:

Քաղաքաժնի հրահանգիչ Լեոնչուկը և լուսանկարիչ Խոսրոնը, երկու անգամ հաղթահարելով Ռիցա լճից դեպի Սանչարոյի շրջան տանող լեռնային կաժանները, լուսանկարում և ձևակերպում էին նրանց կուսակցական փաստաթղթերը:

Մարտական գործողությունների պայմանները պահանջում էին կուսակցական աշխատանքի ծանրություն կենտրոնը տեղափոխել վաշտերը, դասակներն ու կորիճների խմբերը: Գիվիզիայում մարտական և քաղաքական աշխատանքի գլխավոր իմաստը պայքարի այս փուլում կուսակցության և Գերագույն գլխավոր հրամանատարության պահանջի կատարումն էր՝ ջախջախել գերմանական զավթիչներին ու նրանց դուրս շարտել Կովկասի սահմաններից, պատրաստվել թշնամու դեմ մղվելիք վճռական մարտերին: Քաղաքական աշխատանքի տիրապետող գաղափարները պետք է միաձուլվեին զորամասերի ու յուրաքանչյուր մարտիկի կոնկրետ գործերի, օրինակելի կարգ ու կանոնի և կարգապահության, թշնամու նկատմամբ հաղթանակի վստահության և օկուպանտների դեմ մարտերում մեր զենքի հզորություն ավելի լիակատար օգտագործման հետ:

Սանչարոյի գրոհի նախօրեին քաղաքաժնի մի խումբ աշխատողներ՝ Վարդանովը, Միխայլովը, Դոգադինը, Զանիբեկովը ստորաբաժանումների հրամանատարներն ու քաղաշխատողները յուրաքանչյուր վաշտի և յուրաքանչյուր դասակի պատրաստում էին վճռական գործողությունների, առանձին աշխատանք էին տանում ամեն մի մարտիկի հետ: Վարդանովը, օրինակ, հրամանատարի ու կոմիսարի հետ նախապատրաստել էր 66-րդ գնդի 1-ին գումարտակը և նրա հետ էլ մասնակցել Սանչարոյի գրոհին: Գրն-

դի շտաբի պետ կապիտան Կուզնեցովը խելամտորեն պլանավորելու անձամբ նախապատրաստել էր 307-րդ գնդի 1-ին գումարտակի գրոհը:

Կովկասյան լեռներում ձմեռը վաղ է սկսվում: Հարկավոր էր շտապել:

Հոկտեմբերի 12-ի երեկոյան, հենց որ մթնեց, 307-րդ և 66-րդ գնդերի 1-ին գումարտակները ելման դիրքեր գրավեցին ժայռերի մոտ, Սանչարո լեռնանցքից երեք—չորս կիլոմետր արևմուտք: Հաստոցավոր գնդացիները և վաշտային ականանետները իրենց սպասարկող կազմով մնացին նախկին դիրքերում: 3-րդ գումարտակը լեռնանցքի վրա ճակատից գրոհելու նպատակով նույնպես մնաց տեղում: 2-րդ գումարտակը նրանց թիկունքը պաշտպանում էր Աձապշ լեռնանցքի կողմից:

Սկզբում վեր մազլցեցին 1-ին գումարտակների կորիճներից քաղկացած խմբերը: Մինչև վաշտերը կհաղթահարեին ժայռերի մատուցները և կթափանցեին կատարից մի փոքր հյուսիս, կորիճների խմբերը դիրքեր գրավեցին: Արդեն գիշերվա ժամը 3-ն էր: «Ժամանակն է», — ասաց Վարդանովը 66-րդ գնդի 1-ին գումարտակի հրամանատար ավագ լեյտենանտ կոմերիտական Եգորովին և կոմիսար Սիմոնյանին: Նրանք ընդհուպ մոտեցան դասակի կրակակետերին: Ժամը 3.30-ին գրոհեցին աջ թևի կրակակետերի վրա: Դեռևս գրոհի շանցած երկու գումարտակների վաշտերը նույնպես «ուռա» բղավեցին: Թշնամու առաջին կրակակետերը ոչնչացվեցին: Մարտերը շարունակվեցին հաջորդ երկու օրը: Հոկտեմբերի 14-ի օրվա առաջին կեսին գումարտակները գրավեցին լեռնաշղթան և շարունակեցին հարձակվել լեռնանցքի վրա: Ամենակատաղի մարտերը ծավալվեցին լեռնանցքի մոտ, բարձունքում թշնամին անցավ հակահարձակման: Տեղ-տեղ ռազմիկները ձեռնամարտի բռնվեցին հիտլերականների հետ, իսկ դասակի հրամանատար կրտսեր լեյտենանտ Չեռնոբրովկան իր մարտիկներին տարավ սվինամարտի: Վերջին գոտեմարտը տեղի ունեցավ լեռնանցքի մոտ տիրապետող դիրք ունեցող 2726 բարձունքի լանջերին, որտեղ իրար միացան բոլոր երեք գումարտակները՝ 3-րդ գումարտակը՝ Խոխլովի հրամանատարությունում, 1-ինը՝ կոմիսար Գանիելյանի ղեկավարությամբ և 66-րդ գնդի 1-ին գումարտակը, որի հրամանատարն էր կոմերիտական Եգորովը: Հրամա-

նատարներն ու քաղաշխատողները, այդ թվում և քաղբաժնի աշխատողները, գնում էին մարտիկների հետ, իրենց անձնական օրինակով ոգևորելով նրանց: Այս ու այնտեղ լսվում էին գոչուները՝ «Հանուն հայրենիքի», «Հանուն ազատ հողի», «Հանուն Կովկասի, առա՛ջ»: Ժամը 15-ին լեռնանցքի երկու բարձունքների վրա փողփողացին կարմիր դրոշակները, դրանք բարձրացրին վաշտի հրամանատար Զուբոսինը և դասակի հրամանատար Չեռնոբրովկան՝ իրենց մարտիկների հետ: Սանչարոն գրավեց: Հիտլերականները և ու շարտվեցին լեռնաշղթայի հյուսիսային լանջերը:

Կարմիրբանակայիններ Յակուշինի, Սակվարելիձեի, Ստրաժնիկի, սերժանտ Դոնցովի և Սերմուսի, գումարտակների, վաշտերի ու դասակների հրամանատարներ Եգորովի, Խոխլովի, Զուբոսինի, Նիկողոսյանի, Ուլյանովի, Չեռնոբրովկայի և Գրիբովսկու, քաղաշխատողներ Դանիելյանի, Սոկոլի, Յուդինի, Երեմյանի, Կրասնովի — Սանչարոն գրոհող շատ ու շատ ուրիշ անվահներ մարտիկների անունները մտան 61-րդ դիվիզիայի պատմության մեջ: Նրանք տվեցին զինվորական պարտքի կատարման հիանալի օրինակներ: Նրանցից շատերը ոչնչացրին 10—12-ական ֆաշիստ: Միայն 66-րդ գնդի 1-ին գումարտակը ջարդեց 300-ից ավելի հիտլերական, իսկ նրա հրամանատար կոմերիտական Եգորովը՝ 13 զինվոր ու սպա: Այդ ժամանակամիջոցում կրտսեր լեյտենանտ Չեռնոբրովկան իր մարտիկների հետ ոչնչացրեց 45, կրտսեր լեյտենանտ Ուլյանովը՝ 50, կրտսեր քաղղեկ Յուդինը՝ 60 հիտլերական: Դիվիզիայի 88 ռազմիկներ պարզևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով:

Այդ օրերին ծնունդ առավ դիվիզիայի քայլերգը, որի հեղինակն է Կ. Վաշնաձեն: Ահա մի քառյակ.

Средь имен родных и близких,
Тех, кто сердцу дорого
Есть одно средь гор гранитных
Слава Штурма Санчаро.

Կովկասի պաշտպանությունում 61-րդ դիվիզիան վարեց միայն հարձակողական մարտեր: Լեռներում մղվող մարտական գործողությունների դժվարությունները դպրոց հանդիսացան: Սանչա-

րոյի գրավումը կարևոր նշանակություն ուներ Գլխավոր կովկասյան լեռնաշղթայի լեռնանցքները հիտլերականներից մաքրելու գործում: Դրան անմիջապես հաջորդեց զնդապետ Պիյաշևի զորքերի հարձակումը Սանչարոյի խմբի մյուս լեռնանցքներում: Մինչև հոկտեմբերի 20-ը այդ լեռնանցքները ևս ազատագրվեցին:

Սանչարոյի գրավումից երկու օր անց, հոկտեմբերի 16-ին, Կովկասյան լեռնաշղթայի գագաթները ծածկվեցին ձյան հաստ շերտով: Սկսվեց բուքը: Հրաման ստացվեց Սև ծովի ափերին վերատեղաբաշխվելու մասին: Գուդաուտան անհամբեր սպասում էր Սանչարոյի հերոսներին: Հոկտեմբերի 30-ին Մցարիի, Բակլանովկայի և Գուդաուտայի բնակիչները փողոց դուրս եկան կարմիր դրոշակներով ու ծաղիկներով: Ժողովուրդը ցնծության մեջ էր:

1. ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Ստալինգրադի հերոսական էպոպեան ազդարարեց հիտլերյան Գերմանիայի մայրամուտի սկիզբը: Հայրենական պատերազմում բեկում սկսվեց, զորքերի հարձակման տեմպերը համապատասխանում էին այդ մեծ բեկմանը:

Անդրկովկասյան ռազմաճակատի շտաբում, ուր ներկայացա հոսպիտալից հետո, իմացա 46-րդ բանակի 61-րդ դիվիզիայի հարձակման ուղղության մասին: Տուապսեից այն կողմ ճանապարհները քարուքանդ էին արված, անձրևներով ողողված, կամուրջները պայթեցված էին, ամենուրեք ավերածություն էր, ջրիկ ցեխ... Հակառակորդը մի քանի ամսում ամայացրել էր քաղաքներն ու գյուղերը: Բնակչությունը սովահար էր, խլել էին վերջին ունեցվածքը, բշեւ-տարել էին անասունները: Գերմանացիները յուրաքանչյուր ստանիցայում ստեղծել էին պատժիչ երեք օրգան՝ պարետատուն, որը բնակիչներին բռնում էր հարկադրական աշխատանքների, յուրաքանչյուրին 25 մտրակ պատիժ սահմանելով աշխատանքից խուսափելու դեպքում, ոստիկանատուն՝ մեծ մասամբ դավաճաններից, որը գեստապոյի համար կազմում էր ակտիվիստների, կոմունիստների և կարմիր բանակի հրամանատարների ընտանիքների ցուցակները, գտնում էր նրանց, կանչում հարցաքննությունների, գեստապոյին մատակարարում զանազան տեղեկություններ և այլն. գեստապոյի բաժանմունքն ընկնողն այլևս տուն չէր վերադառնում: Ոստիկանատան օգնությունը գեստապոն ըստ բնակավայրերի կազմում էր երեք ցուցակ: Առաջին ցուցակի մեջ մտնում էին «նվիրվածները», երկրորդում՝ Գերմանիա ստրկական աշխատանքի բռնողները, իսկ երրորդում՝ գնդակահարություն ենթակաները:

46-րդ բանակը նոր էր մտել Կրասնոդար: Պարզվեց, որ 61-րդ

դիվիզիան հանձնվել է Սևծովյան զորախմբի ենթակայություն: Իմ խնդրանքով բանակի շտաբի և քաղաքային աշխատողները եռանդուն կերպով գործի անցան պարզելու նրա տեղը: Մինչ նրանք կպարզեին դիվիզիայի որտեղ լինելը, ես օկուպացիայի ծանր հետևանքներին ծանոթանալու նպատակով շրջագայեցի քաղաքում: Շատ բնակիչներ, առանց հարցուփորձ անելու, իրենք էին պատմում, թե ինչպես են ապրել «գերմանացիների օրոք»: Կրասնայա փողոցում ինձ մոտեցավ մի կին՝ Մարիա Պոլոտնյաչիչենկո անունով, և սկսեց պատմել:

— Օկուպացիայի առաջին օրերին գնդակահարություններ չեղան: Հինգերորդ օրը մեր փողոցում գերմանացիները կախեցին մի քանի մարդու՝ որին «ագիտացիայի համար», որին էլ որպես «պարտիզան» կամ «լրտես»: Հետո հաշվելն անգամ անհնար դարձավ՝ սկսեցին անխտիր գնդակահարել ու կախել: Սկսվեց մի աներևակայելի կողոպուտ: Ահա, տեսնո՞ւմ եք այն տունը, — նա մատնացույց արեց № 18 տունը, — գերմանացիները տարան բոլորը՝ կահույքից մինչև վերջին լաթը: Նույն բախտին արժանացավ նաև մեր շենքը:

Փողոցում ինձ կանգնեցրին մի խումբ կանայք և տառացիորեն քարշ տվեցին մոտակա տունը: Իրար ընդհատելով, նրանք պատմեցին գերմանական օկուպացիայի մռայլ շրջանում իրենց կրած ծանր տանջանքների մասին: Նահանջելով, մեր զորքերը չհասցրին էվակուացնել Կրասնոդարի հոսպիտալների վիրավորներին: Շատ վիրավորներ իրենք հեռացան, մնացին միայն ծանր վիրավորները: Գերմանացիները քաղաքացիներին խստիվ արգելեցին այցելել հիվանդներին: Նրանք, ովքեր կարողանում էին շարժվել, դուրս էին գալիս փողոց մի պատառ հաց խնդրում անցորդներից: Գերմանական զինվորները գազանաբար ծեծում էին նրանց: Կրասնոդարցի կանայք գաղտագողի օգնում էին գերիներին ինչով կարող էին: Ոմանք փոխում էին վիրակապերը, մյուսները ուղղակի գողանում էին վիրավորներին ու պահում իրենց մոտ մինչև կարմիր բանակի գալը: Մի անգամ Կրասնայա փողոցում տարեց կանայք մտնում են ռազմագերիների շարասյունը, որպեսզի նրանց մի պատառ հաց, յաշած կարտոֆիլ կամ արևածաղկի սերմ տան: Զինվորները հրացանների խզակներով ծեծում են կանանց, բայց նրանք չեն հեռանում:

Գերմանացիները սուտ լուր են տարածում, թե իբր «հատուկ վերաբերմունք» ունեն կազակ բնակչության նկատմամբ: Այդ «հատուկի» մասին կանանցից մեկն ասաց.

— Երբ գերմանացիները մտան Կրասնոարմեյսկ շրջկենտրոնը, մի քանի վախեցած աղջիկներ թաքնվեցին եղեգնուտում: Ֆաշիստները գտան նրանց, քարշ տվեցին հրապարակ, ծաղրուծանակի ենթարկեցին, խայտառակեցին ժողովրդի աչքի առաջ: Ահա գերմանացիների «հատուկ վերաբերմունքը» կազակների նկատմամբ:

Կրասնոդարի օկուպացման հետ դադարեցվեց բնակչության մատակարարումը: Ծայր առավ քաղաքացիների հոսքը դեպի ստանիցաները: Ամեն մեկն աշխատում էր որևէ բան փոխանակել հացով, կարտոֆիլով կամ խոզի ճարպով: Բայց ստանիցաները նույնպես կողոպտված էին: Այն, ինչ ստանիցաների բնակիչները կարողացել էին թաքցնել, վախենում էին վաճառքի հանել, ալլապես կընկներ գերմանացիների ձեռքը: Մարդիկ ոտքով հարյուրավոր կիլոմետր ճանապարհ էին անցնում, գնալով մեկ ստանիցայից մյուսը: Ցրտաշունչ գիշերներն անցկացնում էին ճանապարհներին: Իմ տանտիրուհու (ես գիշերում էի Գոգոլի փողոցի № 127 տանը, մի պառավ կնոջ բնակարանում) սնունդը միայն ճակնդեղն էր, որից նա ամեն օր անյուղ բորշ էր եփում: Միայն ճակնդեղ ու աղ: Հաց գոյություն չունեք: Ես նրան տվեցի իմ աղքատիկ բաժինը, իսկ ինքս ճաշեցի 46-րդ բանակի քաղբածնի պետ գնդապետ Մարկովի մոտ:

Կրասնայա փողոցով անցնելիս հիշեցի իմ ծանոթ ժամագործ Կոլյա Դանիելյանին: Արհեստանոցը դատարկ էր, բայց ներսում ինչ-որ մեկը մաքրում էր: Դժվարությամբ ճանաչեցի խիստ հյուծված Կոլյային: Օկուպացիայից հետո նա առաջին անգամ էր մտել արհեստանոց: Նրա հորը գերմանացիներն սպանել էին, իսկ տունը այրել: Ողջ մնացածները ապաստանել էին բարեկամի մոտ:

Ահա մեկ ուրիշ փաստ: Ինձ մոտ եկավ մի ծերունի ու ներկայացավ՝ Գարեգին Հովիվյան: Նա ապրում էր Գոգոլի փողոցի № 23 տանը: Ծերունին խնդրեց գտնել աղջկան՝ Թամարա (Յուդաբեր) Հովիվյանին: Նրա պատմելով, 22 տարեկան աղջիկը ավարտել էր Կրասնոդարի մանկավարժական ինստիտուտը, բայց աշխատանքի չէր անցել, քաղաքն օկուպացվել էր գերմանացիների կողմից: Օկուպացիայի օրերին հաճախակի հանդեպել էր Միշա անունով մի

մարդու հետ: Նրա աղգանունն ու ապրելու վայրը ոչ ոք չգիտեր: Միայն խոսակցություն էր լսել, որ նա կարմիր բանակի հրամանատար է և չի կարողացել դուրս պրծնել շրջապատումից: Ծերունին անհանգստանում էր աղջկա համար, կարմիր բանակի հրամանատարի հետ նրա ունեցած կապը դիտում է որպես կապ պարտիզանների հետ, այդ մասին զգուշացնում աղջկան: Թամարը ջանում է փարատել հոր կասկածները, ասելով, որ ինքը փոքր չէ և կարող է հանդիպել «ծանոթ մարդու հետ»: Շուտով Միշան դադարում է այցելել: Բայց Թամարը չի անհանգստանում: Շուտով նրա մոտ է գալիս Գուրգեն անունով մի երիտասարդ: Նրանք հեռանում են միասին, և ծերունին այլևս ոչինչ չի իմանում նրանց մասին: Գիշերը գեստապոն Թամարին ձերբակալում է: Դստեր հետագա ճակատագրի մասին հայրը գիտեր միայն, որ մինչև 1943 թվականի փետրվարի 4-ը գտնվել է գեստապոյի բանտում: Այդ ժամանակ տանտիրուհու թոռը՝ Զինան, ճշտեց մի քանի մանրամասներ: Նա պատմեց, որ Թամարա Հովիվյանին մի քանի անգամ բռնել են փողոցում, և ամեն անգամ նա ստիպված էր եղել ապացուցել, որ ինքը հրեա չէ: Բայց նա չէր հասկանում, որ գտնվում է գեստապոյի տեսադաշտում: Թամարայի մոտ է եկել ոչ թե Գուրգենը, որը գործում էր Միշայի անունից, այլ մեկ ուրիշ մարդ՝ Գուրգենի կողմից: Թամարան խուսափում էր Գուրգենից, կասկածելով, որ նա կապ ունի գեստապոյի հետ, և այդ մասին հայտնում է Միշային: Զինան համոզված էր, որ Թամարին մատնել է պրովակատոր Գուրգենը, որը հետո անհայտացավ Կրասնոդարից:

Քաղաքի մեր պարետատունը նոր էր ստեղծվել, և պարետը շատ բան իմանալ չէր կարող: Նրա խոսքերով, քաղաքի ազատագրումից մեկ շաբաթ առաջ բանտից դուրս է բերվել կանանց մի մեծ խումբ, որոնց ճակատագիրը դեռ հայտնի չէ: Մեկ օր հետո Գուրգենի տեղանքում հայտնաբերվեց մի փոս, որը լի էր կանանց դիակներով: Բոլոր դիակները այլանդակված էին: Թամարա Հովիվյանի տարաբախտ հայրը ճանաչեց նրա հազուստից:

Ստալինգրադի ճակատամարտից հետո, ասում էին կրասնոդարցիները, գերմանական որոշ զինվորներ սկսել էին զրուցասեր դառնալ, նույնիսկ «սիրալիր», դադարել էին ցուցադրել իրենց «գերազանցությունը»: Նրանցից ոմանք աշխատում էին սովետական մարդկանց հետ զրուցել անվնաս թեմաների շուրջ, գանգատ-

«լում էին, որ հոգնել են պատերազմից, ձանձրացել: Ահա գերմանական զինվորների տրամադրությունների մի հետաքրքիր դրսևորում ևս, որի մասին պատմեցին տանտիրուհիս և թոռնիկը: Նրանց բակում գերմանացիները կանգնեցնում են մի քանի մեքենա՝ հավանաբար ջախջախված մոտոմեքենայացված որևէ զորամասի մնացորդներից: Զինվորները հաճախ մտնում են պառավի տունը տաքանալու, երբեմն նստում են ժամերով: Երթնահարմոնով նրանք տարբեր երգեր էին կատարում, իսկ ավելի հաճախ «Կատյուշան», «Սուլիկոն» և նույնիսկ «Ստենկա Ռազինը»: Մի անգամ տնեցիները զարմանքից քար են կտրում, երբ գերմանացի զինվորը, մենակ մնալով, ասում է. «Զգվելի է... շատ զգվելի... Զինվորը կոպում է, զոհվում է, իսկ ֆաշիստները հարստանում են...»: Եվ նա մեղմ երգում է «Ինտերնացիոնալը»: Զինան զարմացած նայում է զինվորին և ինքն էլ է սկսում բարձրաձայն երգել: Զինվորը վեր է թռչում տեղից, փակում նրա բերանը և շարացած դուրս ելնում սենյակից: «Կորանք»,— ծնկներին խփում է տատը: Բայց ամեն ինչ բարեհաջող է անցնում:

Զինան 8-րդ դասարանի աշակերտ էր և հենց նոր էր ընդունվել ՀամԿԵՄ շարքերը, երբ գերմանացիները օկուպացրին Կրասնոդարը: Նա չի հասցնում ստանալ կոմերիտական տոմսը: Զինայի հայրը՝ Սեմյոնը, կոմունիստ էր, երկաթուղային, հեռացել էր վերջին էջելոնի հետ: Աղջիկն ապրում էր առանց մոր, տատի հետ: Զինան հեղահամբույր էր, սակավախոս, ամեն ինչի վրա նայում էր «մի տեսակ»՝ ոչ այն է կողքանց, ոչ այն է անտարբեր: Բայց այս ամենը՝ միայն արտաքուստ: Տատը գանգատվում էր նրա հանդընություն, «խելահեղություն» համար: Հիտլերականներ կազմակերպում են գերմաններեն լեզվի դասընթացներ և հայտարարում, թե ովքեր մասնակցեն այդ դասընթացներին, կազատվեն զանազան աշխատանքների կատարելուց: Զինան ցուցակագրվում է: Տատը չի ուզում, վախենում է, արգելում: Բայց Զինան պնդում է իրենը: «Նրանց համար աշխատելու չեմ գնա,— ասում է նա,— իսկ լեզուն սովորել պետք է»: Շուտով նա կարողանում է գերմաններեն առանձին ֆրազներ փոխանակել: Երբ գերմանացիները գալիս են իրենց տուն, նա չի խառնվում նրանց խոսակցությանը: Հետո սկսում է խայթել: Տատը նախազգուշացնում է՝ վատ կվերջանա: Բայց նա չի էլ ուզում լսել:

Նրան այցելող զինվորների մեջ եղել էր մեկը, որին ժորժ էին անվանել: Ի տարբերություն մյուսների, սա ամեն անգամ մտնելիս ընդգծված գոչել է. «Հայլ Հիտլեր»: Խոսակցության ժամանակ զուսպ է եղել: Մի անգամ նա եկել է մենակ և ըստ իր սովորության արտասանել սերտած զգվելի բառերը: Զինան անսպասելի ի պատասխան արտասանել է. «Հայլ Ստալին»: Զինվորը շշմել է, տատը քիչ է մնացել ուշազնաց լինի: Նրանց հետ ապրող Գորա անունով կինը գրկել է իր երեխային և սարսափահար կուշ եկել սենյակի անկյունում, իսկ Զինան նստել է տեղում, արտաքուստ հանգիստ: «Պարտիզան ես»,— հարցնում է ժորժը: «Եվ կոմունիստ»,— հանգիստ պատասխանում է Զինան: Ժորժը գազազած դուրս է թռչում սենյակից: Ենչահեղձ պառավը ապսպրում է թոռանը իսկույն թաքնվել: Նա գնում է: Տանը տագնապահար սպասում են գեստապոյականներին...

Անցնում են օրեր: Զինվորները գալիս են սովորականի պես, իսկ գեստապոյից՝ ոչ ոք: Ժորժը նույնպես չի գալիս: Միայն մեկ անգամ է նա հայտնվում, երբ Զինան արդեն տանն է: «Գեստապոն էվակուացվում է: Հիմա դու կարող ես դուրս գալ, արա ինչ կամենաս»,— ասելով, ժորժը պատվի է առնում, շրջվում է ու հեռանում:

Գնալով ավելի ակնհայտ ու ցցուն էր դառնում այն ճեղքվածքը, որ գոյացել էր մի՝ կողմից ռումինացիների ու սլովակների, և մյուս կողմից՝ գերմանացիների փոխհարաբերություններում: Գերմանացիները հայհոյում էին ռումինացիներին, նրանց վրա բարդելով Ստալինգրադի տակ իրենց կրած պարտության մեղքը: Ռումինացիներն էլ իրենց հերթին սեփական դժբախտությունների պատճառը տեսնում էին գերմանացիների մեջ: Շատ սլովակ զինվորներ չէին թաքցնում իրենց կարեկցանքը սովետական քաղաքացիների նկատմամբ: Պատմում էին, թե ինչպես մի սլովակ, իմանալով, թե ոստիկաններից ով է գեստապոյի ձեռքը հանձնում ակտիվիստներին, հարմար պահ է գտնում, բռնում է այդ ոստիկանին մի խուլ անկյունում և ծեծելով հասցնում մահամերձ վիճակի որպես «ծախու մարդու»: Նա ոստիկանին զգուշացնում է՝ եթե համարձակվի պատահածի մասին հայտնել գեստապոյին, ապա իր ընկերները կոչնչացնեն և՛ ոստիկանին, և՛ նրա ընտանիքի անդամներին:

Բերված օրինակներն ամենևին էլ չեն խոսում հիտլերյան բանակի քայքայման մասին, դրանք միայն ցույց են տալիս, որ փոփոխություններ են կատարվել զինվորների մի մասի տրամադրությունների մեջ: Այդ շրջանում դեռևս հնարավոր չէր գերմանացի զինվորին բուժել նացիոնալիզմի թույնից: Գերմանական ռասայի «գերազանցություն» պատրանքը և Հիտլերի նկատմամբ հավատը ամուր բույն էին դրել գերմանական սպաների ու զինվորների ուղեղում: Նրանք անընդունակ էին ըմբռնելու, որ Ստալինգրադով դըրվեց հիտլերյան Գերմանիայի կործանման սկիզբը: Նահանջելիս, նրանք նույնչափ շարագործություններ էին կատարում, որչափ հարձակման ժամանակ:

2. ԱՌԱՋԻՆ ՄԱՐՏԵՐԸ

1943 թվականի հունվար ամսին, Ստալինգրադի մոտ և Կուլկասում սովետական զորքերի գլխավոր հարձակման օրերին, 61-րդ դիվիզիան մտցվեց Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան զորախմբի 56-րդ բանակի կազմի մեջ: Նա կազարևակայացից Տուապսեի, Զուրգայի, Ստորոժկայայի, Շաբանովի լեռանցքներով երթ կատարեց դեպի Ստավրոպոլսկայա ստանիցան, առաջադրանք ունենալով գրավել Կրասնոդարից 15 կիլոմետր հարավ գտնվող Նովո-Գիտրիևսկայա ստանիցան:

Հեշտ չէր հաղթահարել Շաբանովի լեռանցքը: Դիվիզիան կանգնած էր հրետանին, ծանր ականանետները, թիկունքային ստորաբաժանումներն ու տրանսպորտը լեռների հարավային լանջերի վրա թողնելու փաստի առջև: Չէր բավականացնում բեռնակիր տրանսպորտը՝ ձիեր չկային: Հետևակայինները շարժվում էին ջրիկ ցեխի միջով, ծանր բեռը ուներին: Միևնույն ժամանակ Սևծովյան զորախմբի հրամանատար ղեներալ-լեյտենանտ Ի. Ե. Պետրովը հրամայեց Սևծովյան զորախմբի համար երթով ճանապարհ հարթել լեռանցքի միջով: Գործիքները չէին բավականացնում: Մարտիկները կառուցում էին, իսկ հորդառատ անձրևներն ու լեռնային հեղեղները ողողում, շարքից հանում էին ճանապարհը: Այնուամենայնիվ, սահմանված ժամկետին, հունվա-

րի 20-ին, հրաձգային զնդերը առանց հրետանու կենտրոնացան Նովո-Գիտրիևսկայա ստանիցայի մատույցներում:

Գերմանացիները մեծ նշանակություն էին տալիս այդ ստանիցայի պաշտպանությանը: Այն հարավից պաշտպանում էր Կրասնոդարի, ալտեղից դեպի Նովոռուսիյսկ և Թաման տանող երկաթուղային ու խճուղային ճանապարհների մատույցները: Ստանիցան պաշտպանում էին գերմանական 116-րդ առանձին բավարական գրենադերական գունդը, 97-րդ լեռնահրաձգային դիվիզիայի զորամասերը, 6-րդ ռումինական հեծյալ դիվիզիայի էսկադրոնը, որոնք ուժեղացված էին հրետանիով, ականանետներով ու տանկերով: Պաշտպանության սխտեմը աչքի էր բնկնում համարաթիվներով և խրամատներով և խրամուղիներով: Քարե և աղյուսե տները վերածել էին հենակետերի:

Այն ժամանակ, երբ 61-րդ դիվիզիան կենտրոնանում էր Նովո-Գիտրիևսկայա ստանիցայի շրջանում, 56-րդ բանակի միավորումները ծանր մարտեր էին մղում: Բանակի հրամանատար ղեներալ-լեյտենանտ Ա. Գրեչկոն որոշեց սկսել կենտրոնում հարվածային խումբն ուժեղացնելու և նրա ձախ թևն ապահովելու համար մարտի մեջ մտցնել 61-րդ հրաձգային դիվիզիան Նովո-Գիտրիևսկայայի շրջանում¹:

Ստանիցայի գրեճը դիվիզիան սկսեց միաժամանակ երեք գրեճերի ուժերով (առանց 221-րդ զնդի մի գումարտակի: Այդ գումարտակը գրավված էր ճանապարհաշինություններով): Բոլոր զնդերն էլ սկզբում որոշ հաջողություն ունեցան՝ ստանիցայից հյուսիս ամրացան ճանապարհի երկու կողմում, ստանիցայի արևելյան և հարավային ծայրամասերում գրավեցին մի քանի տուն և խրամատ:

Սակայն հակառակորդը մեր զնդերին թույլ չտվեց ամրանալ գրաված բնազդներում: Նա անընդհատ հակազորում էր, իսկ հրետանին զնդակոծում էր դիվիզիայի դիրքերը: Մեր զնդերն ստիպված եղան էտ քաշվել ելման դիրքերը: Արդեն հաջորդ օրվա կեսին ստորաբաժանումները ռազմամթերքի սուր կարիք զգացին: Դիվիզիայի հետախուզական վաշտի մի դասակ հանդուգն ցատկով գրավեց ստանիցայից հյուսիս անցնող ճանապարհների խաչմերուկի

¹ А. А. Гречко. Битва за Кавказ, М., 1967, стр. 259.

կամուրջը: Հակառակորդը մի քանի անգամ գրոհեց, հրետանին անընդմեջ դնդակոծեց: Դասակը մեծ կորուստ ունեցավ: Մնաց 9 ռազմիկ, բրոնք ավագ սերժանտ Իզոտովի գլխավորությամբ պաշտպանեցին կամուրջը:

Հունվարի 23-ին դիվիզիան վերսկսեց հարձակումը, մարտի նետելով 221-րդ գնդի հենց նոր եկած 1-ին գումարտակը և առանձին վարժական գումարտակը: Դիվիզիան մեծ կորուստներ կրեց: Օրվա վերջին բանակի հրամանատարը հրամայեց անցնել պաշտպանություն: Կրասնոդարի մատուցներում գործող մյուս միավորումները նույնպես շկարողացան առաջ գնալ:

Այդ ժամանակ աստիճանաբար մոտեցվեցին գնդային հրետանին, ականանետները: Ստացվեց ռազմամթերք ու պարեն: Փետրվարի 8-ին ժամանեց 55-րդ հրետանային գունդը: Սկսվեց նոր հարձակումը: Հրետանային կրակի պաշտպանության ներքո դիվիզիան նորից գրավեց ճանապարհների խաչմերուկը: Սակայն հակառակորդը պատասխան կրակ բացեց և տանկերի օգնությամբ անցավ հակահարձակման: Փոփոխակի հաջողությամբ շարունակվեցին մարտերը:

Մանր մարտեր էին մղվում նաև Կրասնոդարի շրջանում: Մեր զորքերը ուժեղ ճնշում էին հակառակորդին: Թշնամու զորքերի կատաղի դիմադրությունը Նովո-Դմիտրիևսկայա ստանիցայում բացատրվում էր Կրասնոդարի շրջանից բոլոր ուժերի էվակուացիան ապահովելու մտահոգությամբ:

Փետրվարի 12-ին դիվիզիայի հրամանատար գնդապետ Ս. Ն. Կուզնեցովը հրաժարվեց ճակատային գրոհով Նովո-Դմիտրիևսկայա ստանիցան գրավելու մտքից և կատարեց ուժերի վերախմբավորում: Փոքր առաջակալ թողնելով ստանիցայի մոտ, նա Նովո-Դմիտրիևսկայայի հյուսիս-արևելյան մասին հարվածելու համար դիվիզիայի հիմնական ուժերը կենտրոնացրեց աջ թևում:

Փետրվարի 13-ի առավոտյան առաջին էշելոնի գնդերը ներխուժեցին հակառակորդի դիրքերը և մարտ սկսվեց ստանիցայում: Դիվիզիայի հրամանատարը մարտի մեջ մտցրեց 307-րդ ռեզերվային գունդը: Փետրվարի 14-ին, ժամը 2-ին, Նովո-Դմիտրիևսկայա ստանիցան մաքրված էր հակառակորդից:

Չնայած անբարենպաստ պայմաններին, դժվարություններին ու զրկանքներին, դիվիզիայի անձնակազմը, զորամասերի ու ստո-

բաբաժանումների հրամանատարներն ու քաղաշխատողները Նովո-Դմիտրիևսկայա ստանիցայի մոտ ցուցաբերեցին իսկական մարտական ու հայրենասիրական խիզախություն: Նրանք ցուցադրեցին իրենց անձնուրաց նվիրվածությունը կուսակցությանն ու հայրենիքին, անվախ գնացին թշնամու վրա, քայլ առ քայլ ապահովելով հաջողությունը: Վիրավորներից շատերը չլքեցին մարտադաշտը, շարունակեցին գրոհել հակառակորդի ամրությունները: Գերմանական 994-րդ առանձին գումարտակի գերի ընկած զինվորներից մեկը ցուցմունքի ժամանակ ասաց. «Սարսափը համակեց մեզ, երբ ռուսները գրոհեցին: Գնդացրային կրակից նրանք չվախեցան: Մենք համոզվեցինք, որ ո՛չ գնդացիներով, ո՛չ փշալարերով ռուսներին կանգնեցնել հնարավոր չէ»:

Նովո-Դմիտրիևսկայա ստանիցա ժամանեց Սևծովյան ղորախմբի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ի. Ե. Պետրովը: Դիվիզիայի հրամանատար Կուզնեցովը պատմեց, որ ռազմիկները շինելներն էին զցում փշալարերի վրա, որպեսզի անցնեն, բայց քշերին հաջողվեց անցնել. շատերը մնացին փշալարերի վրա: Դիտելով այդ տեսարանը, Իվան Եֆիմովիչը ծանրություն զգաց սրտում, սկսեց անհասկանալի շարժումներ անել, ջղաձգվել: Նա երեսը շուռ տվեց ու մեղմաձայն ասաց. «Հիանալի մարդիկ են և հրաշալի դաստիարակված: Այդպիսի կարմիրբանակայիններին պետք է պահպանել»: Մարտից հետո գնդապետ Կուզնեցովի անունով ստացված հեռագրում ասվում էր. «Անցած մեկուկես ամսվա ընթացքում մղված մարտերում Ձեր ղեկավարած դիվիզիան ցույց տվեց մարտական բարձր հատկություններ: Ձեր ղեկավարությամբ դիվիզիան իրեն գրսևորեց որպես հասուն մարտական օրգանիզմ՝ ընդունակ լուծելու ամեն մի մարտական առաջադրանք:

Չորախմբի և բանակի ռազմական խորհուրդները նշում են Ձեր անձնական ծառայությունները դիվիզիայի անձնակազմի մարտական հատկությունների դաստիարակման գործում և ձեր հմուտ ղեկավարությունը, ծառայության անունից Ձեզ, ինչպես նաև դիվիզիայի ամբողջ անձնակազմին հայտարարում են շնորհակալություն և հավատացած են, որ հետագայում ևս Ձեր դիվիզիան ավելի մեծ համառությամբ ու հաստատակամությամբ կջախջախի ու կոչնչացնի ատելի թշնամուն՝ գերմանական ֆաշիստներին:

Ողջուն մարտիկներին ու հրամանատարներին:

Զորախմբի և բանակի ռազմական խորհուրդ
1943 թվականի փետրվարի 24»:

Նահանջելով դեպի Քամանյան թերակղզի, գերմանական զորքերը համառոտ են դիմադրում էին միջանկյալ պաշտպանական բնագծերում, որոնք ուժեղացնում էին ի հաշիվ իրենց մյուս զորամասերի: Առանձնապես կատաղի մարտեր մղվեցին Սևերսկայա և Իլսկայա ստանիցաների համար: Մեր դիվիզիան Սևերսկայան գրավեց երկարօրյա մարտերից հետո: Իլսկայա ստանիցայում գերմանացիները պայթեցրին կամուրջն ու անցան ստանիցայի կենտրոնով հոսող գետի մյուս կողմը: Օրվա ընթացքում նրանք երեք անգամ հակազդեցին 221-րդ և 307-րդ գնդերի վրա: Կատաղի մարտերից հետո գրավելով Իլսկայան, դիվիզիան սկսեց հետապնդել նահանջող հակառակորդին և երեք օրում առաջ շարժվեց 60 կիլոմետր: Հրետանին ձգվեց, կտրվեց հրաձգային զորամասերից, հրանոթները թաղվեցին ցեխի մեջ: Տրանսպորտը շախատեց, մատակարարումը խախտվեց, հոգնած ձիերն ընկան:

Փետրվարի 22-ին հակառակորդը, օգտվելով մշուշից, շրջանցեց Բուզունդի-Ախտիրսկի խուտորը և հանկարծակի գրոհեց 66-րդ և 221-րդ գնդերի վրա այն ժամանակ, երբ մարտիկները հագուստներն էին շորացնում: 66-րդ գնդի հրամանատարական կետը կտրվեց իր ստորաբաժանումներից: Գնդի հրամանատար Գավրիլինը ստիպված իր շտաբի հետ նահանջեց գետափով: Հետևանքը կարող էր աղետալի լինել, եթե 221-րդ գնդի հրամանատար Ակոպովը, 66-րդ գնդի հրամանատարի քաղտեղակալ Վարդանովը և գումարտակի հրամանատար Կուզմենկոն չդիմեին համարձակ գործողություններին: Գտնվելով միմյանցից բավական մեծ հեռավորության վրա, այս սպաներն արագ ոտքի հանեցին մոտակայքում գտնվող ստորաբաժանումները, գրավեցին շրջանաձև պաշտպանություն, այնուհետև միանալու նպատակով անցան հարձակման: Թվում էր, թե հաջողության ոչ մի հույս չկա: Սակայն վճռական գործողություններով նրանք նախաձեռնությունը վերցրին իրենց ձեռքը: Հակառակորդը նահանջեց, մարտադաշտում թողնելով մի քանի տասնյակ սպանված, 6 հաստոցավոր գնդացի, ռադիո-ընդունիչ-հաղորդիչ և տասնյակ ավտոմատներ: Գրանից անմիջապես հետո դիվիզիայի հրամանատար Կուզնեցովը

հրամայեց անցնել հարձակման: Այդ օրը դիվիզիան ազատագրեց Կրասնի-Օկտյաբր, Նովո-Պետրովսկի, Նովինկի, Խաբլ, Սվոբոդնի, Գոլուբովսկի և Նովո-Շկոլնի բնակավայրերը:



Հիտլերյան հրամանատարությունը խիստ մեծ կարևորություն էր տալիս Քամանի և Ղրիմի պլացդարմներին: Նա այստեղ հույս ուներ գամել զգալի քանակությամբ սովետական զորքեր, ապահովել Ռումինիայի Պլոեշտիի նավթահանքերի անխափան աշխատանքը, ինչպես նաև ամրապնդել իր դաշնակից Թուրքիայի դիրքերը: Հիտլերի № 5 օպերատիվ հրամանում «Ա» բանակախմբի հրամանատարությունը պարտավորեցնում էր «ամեն գնով» պահել Կուբանի պլացդարմը և Ղրիմը, մատնանշվում էր «բոլոր միջոցներով պաշտպանական դիրքերի կատարելագործման անհրաժեշտությունը»¹: Ինչպես նշում է Սովետական Միության մարշալ Ա. Ա. Գրեչկոն, գերմանական հրամանատարությունը դեռ 1943 թվականի հունվարից ձեռնամուխ էր եղել բնագծերի կառուցմանը Կուբան գետի ստորին հոսանքներում²:

Գերմանական զորքերի համար դժվար չէր պահել Քամանյան թերակղզու դիրքերը: Օրինակ, Աբինսկի շրջանում, որտեղ գործում էին 61-րդ դիվիզիան և 56-րդ բանակի ուրիշ միավորումներ, Կուբան գետի գարնանային վարարումներն անանցանելի դարձրին Կուբանի ճահճուտները: Գերմանացիների պաշտպանական դիմնանցնում էր Նովո-Մարշանսկայա ստանիցայով՝ վարարումներից այն կողմ, և խոշոր բնակավայր Աբինսկայայով՝ բարձունքի վրա:

56-րդ բանակի զորքերը գեներալ-լեյտենանտ Ա. Ա. Գրեչկոյի հրամանատարությամբ պատրաստվում էին հարձակման: Մարտի 10-ին, ժամը 9-ին, սկսվեց հրետանային պատրաստությունը: Գլխավոր հարվածն ուղղված էր Աբինսկայային: 61-րդ և 339-րդ դիվիզիաները հարձակվում էին երկաթգծի երկարությամբ: Գլխավոր հարձակման ուղղության վրա դիվիզիաներ շատ կային, բայց

¹ Տե՛ս «Совершенно секретно командования», М., 1967, стр. 500.

² Տե՛ս А. А. Гречко. Битва за Кавказ, М., 1967, стр. 354.

նրանց ուժերը միանգամայն անբավարար էին՝ ծրագրված օպերացիան իրագործելու համար:

Մեր գրոհները հաջողություն չունեցան: Հակառակորդի համար դժվար չէր ետ մղել մեր զորամասերի փոքրաքանակ ստորաբաժանումների գրոհները: Միայն Սովետական Միության հերոս գեներալ-մայոր Կ. Ի. Պրովալովի 383-րդ դիվիզիային հաջողվեց սեպածե խրվել հակառակորդի պաշտպանության մեջ և դուրս գալ ստանիցիայի հարավ-արևելյան ծայրամաս, սակայն առաջ շարժվել չկարողացավ: Բայց այն, ինչ արեց այդ դիվիզիան, կարևոր նշանակություն ուներ: Գերմանացիներն ստիպված եղան թողնել Աբինսկայան: Հեռացան գիշերով, անձայն: Գերեզմանական խաչերից դատելով, հիտլերականները Աբինսկայա ստանիցայում թաղել էին մեծ թվով զինվորներ ու սպաններ:

Աբինսկայա ստանիցայի մոտ մղած մարտերից հետո 61-րդ դիվիզիան անցավ բանակի ռեզերվ՝ համալրվելու և հանդստանալու:

3. ՄԱՐՏԵՐԸ ՂՐԻՄՍՍՍՍՍՍՍՅՈՒՄՈՍ

Կուրանում մղված առաջին մարտերը մեր զորքերին հասցրին գերմանացիների պաշտպանության «երկնագույն գծին»: 56-րդ բանակի հրամանատարի հրամանով մարտի 29-ին գնդերի հրամանատարների հետ մեկնեցինք տեղազննության: Դիվիզիան պետք է թաքուն, գիշերով շարժվեր դեպի Վերխնե-Ստավրոպոլսկի շրջանը, ապրիլի 3-ին ելման դիրքերը գրավեր Վտորայա գետի մոտ, Շեպտալսկի և Կոտլյարսկի խուտորների շրջանում: Հարձակումը նշանակվեց ապրիլի 3-ին: Հրամանատարական տեղազննության խնդիրն էր՝ որոշել զորքերի ցերեկային քողարկման վայրը, հետախուզել դիվիզիայի հարձակման տեղամասը: Դիվիզիայի հրամանատարը որոշեց Վերխնե-Ստավրոպոլսկի ստանիցայի մյուս կողմում դիվիզիայի հարձակման տեղամասի մատուցները, այսինքն՝ անտառապատ լանջերի արահետները հետախուզել լեռների կողմից: Հետախուզությունը պարզեց, որ այդ արահետները ականապատված են: Մեր սակրավորներն ստիպված եղան բրտնաջան աշխատանք կատարել ականազերծելու տեղանքը:

Նշանակը խիստ վատացավ: Տեղացին հոդառատ անձրևներ,

զորքերի շարժումը դադարեց, որոշ ստորաբաժանումներ շկարողացան գրավել ելման դիրքեր: Ստիպված եղանք մինչև հաջորդ գիշեր նրանց պահել անտառում: Հարձակման ժամկետը տեղափոխվեց ապրիլի 4-ին:

66-րդ գնդի դիմաց հակառակորդի պաշտպանության առաջավոր գիծը դիտելու ցանկություն մարտի 3-ի լուսաբացին դժվարությամբ հասա Վտորայա գետի մոտ գտնվող կիսաբանդ տան կանգուն մնացած պատին: Սկսեցի շրջակայքը դիտել քանդված պատուհանից: Թանձր մշուշը ծածկում էր հակադիր ափը: Ոչինչ չէր երևում: Ժամը 9-ին տեսանելիությունը մի փոքր լավացավ: Տեղ-տեղ երևացին հակառակորդի խրամատները: Անսպասելի կողքիս հայտնվեց իմ հանձնակատար Գրիգորի Տանիշը: Նա նախաճաշ էր բերել: Ես կշտամբեցի նրան անհարկի ուշադրության համար և հրամայեցի հեռանալ, նա շեռացավ, ուզում էր, որ անպայման նախաճաշեմ:

Այդ պահին անակնկալ ուժգին հարվածից գետին տապալվեցի, ու լավեց զնդակի սուլոցը: Գնդակը ծակեց Տանիշի բլուզը, ձախ գրպանից վեր բերձեց նրա մաշկը: Պատանին կռահել էր, որ թըշնամու սնայպերը պատրաստվում է կրակել ինձ վրա, և ինձ տապալեց:

Տեղից բարձրանալով հարցրի՝ տեսե՞լ էիր սնայպերին: Նա ասաց.

— Ոչ, շտեսա, այլ կռահեցի:

Ավարտելով դիտարկումը, մենք վերադարձանք:

Հարձակումից առաջ անհրաժեշտ էր կարգի բերել մարդկանց, չորացնել անձրևից թրջված համազգեստը: Այդ գործով զբաղվում էին բոլոր հրամանատարներն ու քաղաշխատողները: Չնայած արգելքին, տեղ-տեղ նույնիսկ խարույկներ երևացին: Տարօրինակն այն էր, որ գերմանացիները ուշադրություն չդարձրին դրա վրա՝ կամ մշուշի միջից չէին նկատում, կամ էլ դրանք ընդունում էին որպես մեր ավիացիայի գիշերային ուժերի կողմից սահմանագծի նշան և սովորականի պես թաքնվել էին ապաստարաններում:

Գերմանացիների պաշտպանության հանգուցը Ղրիմսկայայի մոտ «երկնագույն գծի» առաջիկա մոտ բնագծերից մեկն էր: Ահա թե ինչպես է բնութագրում այն բանակի գեներալ Շտեմենկոն. «Դա իսկապես մի հանգուց էր, որը այնքան էլ հեշտ չէր քանդել: Բացի

խրամատներին, խրամուղիներին և ավելի թեթև ապաստանների խիտ ցանցից, այստեղ բոլոր քարե շենքերի նկուղները նովոռոսիյսկի ցեմենտի օգտագործմամբ վեր էին ածվել ԴՕՏ-երի: Բացի դրանից, ստանիցայի մատույցները պաշտպանում էին հողի մեջ կիսաթաղված տանկերը»¹:

Ղրիմսկայայից դեպի արևելք և հարավ ընկած է խիտ կըտրատված լեռնային տեղանքը՝ իշխող բարձունքներով: Այդ բարձունքների արևելյան լանջերով անցնում էր գերմանացիների պաշտպանության առաջին գիծը՝ խրամատների երկու շարքով՝ իրար և թիկունքի հետ կապող խրամուղիներով, ԴՁՕՏ-երով, ԴՕՏ-երով, հրետանային կրակից և ռաբակոծությունից պաշտպանվելու թաքստոցներով, բազմաթիվ գնդացրային կետերով: Գերմանացիները պաշտպանության խորքում 204,3 բարձունքը վերածել էին հենակետի: Այստեղ կենտրոնացված էին հրետանու հիմնական ուժերը և հետևակի ու տանկերի ռեզերվային զորամասերը: Այդ հենակետից թշնամու հրետանին զնդակոծում էր 56-րդ բանակի գլխավոր ուժերի հարձակման ամբողջ շերտը՝ ծխախոտադաշտերը և Շեպտալսկի ու Կոտլյարևսկի խուտորները: Թե գերմանական հրամանատարությունը ինչ նշանակություն էր տալիս Ղրիմսկայայի բնագծին, կարելի է դատել պաշտպանությունում եղած զորքերի հաղեցվածությունից: Բնագիծը պաշտպանում էին գերմանական 97-րդ լեռնահրաձգային և 13-րդ տանկային դիվիզիաները, ուսմինական 19-րդ հրաձգային դիվիզիան և հետևակի ու տանկերի ռեզերվային զորամասերը:

Ինչպես հետո հայտնի դարձավ գերիների ցուցմունքներից, հրետանային հարձակումների ժամանակ գերմանացիները պաշտպանության առաջին գծի թաքստոցներում թողնում էին իրենց զորքերի միայն մի մասը, իսկ մյուս մասը տանում էին երկրորդ գծի թաքստոցները: Հրետանային կրակը դադարելուց կամ այն խորքը տեղափոխելուց հետո այդ ստորաբաժանումները արագ վերադառնում էին իրենց դիրքերը:

Ապրիլի 4-ին 56-րդ բանակը հարձակվեց Ղրիմսկայայի վրա: Հարվածի գլխավոր ուղղությունը վրա 61-րդ դիվիզիան փոխգործողության մեջ էր 383-րդ դիվիզիայի հետ, որի հրամանատարն էր

գեներալ-մայոր Պրովալովը: Հարձակման առաջին շրջանում 61-րդ դիվիզիան պետք է ճեղքեր հակառակորդի պաշտպանությունը, գրավեր Ալվերա բնակավայրը և ներխուժեր Ղրիմսկայայի հարավային ծայրամասը: Հարձակվում էին դիվիզիայի 66-րդ և 307-րդ գնդերը, ռեզերվում ունենալով 221-րդ գունդը: Դիվիզիայի հատվածում գլխավոր հարվածը հասցնում էր ձախ թևում գործող 66-րդ գունդը:

Ժամը 9-ին սկսվեց հրետանային պատրաստությունը: Ամբողջ հակառակորդի երկարություն մեկ կիլոմետրի վրա 120 հրանոթ կար: Պատերազմի ամբողջ անցած ժամանակահատվածում մենք կրակի այդպիսի խտություն չէինք տեսել: Հակառակորդի պաշտպանության առաջին գիծը ծածկված էր ծխով: Թվում էր, թե այնտեղ կենդանի ոչինչ չի մնացել: Բայց ավա՜ղ: Հենց որ հրետանին կրակը տեղափոխեց խորքը, իսկ գնդերը բարձրացան գրոհի, հակառակորդը նրանց դիմավորեց գնդացրային, ականանետային և հրետանային տեղատարափ կրակով: Մեր գրոհները կրկնվեցին մի քանի անգամ, բայց անհաջող: Գրությունը նույնն էր նաև հարևանների մոտ:

Սերգեյ Նիկոլաևիչը տանջվում էր, շարանում այն բանից, որ ոչ մի կերպ չէր հաջողվում ճեղքել, իսկ օրն անցնում էր: Նա մերթնայում էր դիտափողով, մերթնայում զանգահարում գնդերի հրամանատարներին, հայհոյում, շարանում:

— Հարկավոր չի նյարդայնանալ, — ասում էի ես, — դա չի օգնի:

— Իսկ ի՞նչ անենք, կոմիսար, ասա, ի՞նչ կարելի է անել: Տեսնո՞ւմ ես, ոչինչ դուրս չի գալիս: Մի՞թե այդպես են կռվում... Սատանան գիտի, թե ինչ է կատարվում..., — ուղղակի գոչում էր նա:

— Գուցե 221-րդ գոնդն էլ առաջ բերենք, նրա հրամանատարն ավելի փորձված է, — խորհուրդ տվեցի ես:

Կուզենցովը ոչինչ չպատասխանեց. մոտեցավ հեռախոսին և կապվելով Ակոպովի հետ՝ հրամայեց գունդը տանել մյուս երկու գնդերի կցվանքը, ճեղքել հակառակորդի պաշտպանությունը: Սկզբում Ակոպովը փորձում էր, ինչպես հետո պատմեց Կուզենցովը, դիվիզիայի հրամանատարին համոզել, որ ստեղծված իրադրությունը պայմաններում գունդը բաց դաշտ դուրս բերել չի կարելի,

¹ С. М. Штеменко. Генеральный штаб в годы войны, М., 1968, стр. 89.

կկործանենք այն, բայց երբ Կուզնեցովը խիստ «հրամայում է» նա անտեղի ասում է. «Ո՞վ պատասխան կտա»¹:

Կուզնեցովը կատաղած նետեց հեռախոսափողը և ասաց.

— Ես այսպես ղեկավարել չեմ կարող:

Ակոպովին զանգահարեցի ինքս.

— Դուք ի՞նչ եք անում այդտեղ:

— Ուզում եք ասել, որ ես խախտել եմ հրամանը, — պատասխանեց Ակոպովը հանգիստ տոնով:

— Եթե գնդի հրամանատարը այդպես է գնահատում իր վարքագիծը, ապա ինձ մնում է միայն շառարկել: Իսկ հրամանը մնում է հրաման, այն տրվում է միայն կատարելու համար:

— Մարդիկ ափսոս են: Ախր դուք տեսնում եք տեղանքն ինչպիսին է: Մինչև գետափ դուրս գալը բոլորը կկոտորվեն:

— Հրամանատարը նրա համար է, որ ելք գտնի: Մտածեցեք, ինչպես կարելի է ապահով դուրս գալ ելման բնագիծ, և ղեկուցեք:

— Էլ ի՞նչ ղեկուցեմ, ինքներդ կտեսնեք:

— Ձեզ արգելում եմ անցնել գետակը:

— Ուրեմն ոչինչ չի ստացվի:

— Թույլ մի տվեք, որ Ձեզ վրա բղավեն, — ավարտեցի ես և լսափողը դրեցի:

Ժամը 16-ն էր: Գերմանացիների պաշտպանության առաջին գիծը մերթ ծածկվում էր մշուշով, մերթ տեղ-տեղ բացվում: Թեթեվակի անձրև էր տեղում: Այն պահին, երբ ոչինչ չէր երևում, հանկարծ հրամանատարական կետ հասան «ուռա» բացականչությունները: Ոչինչ չէր երևում: 221-րդ գնդի շտաբից պատասխանեցին, որ Ակոպովը գետափին է, իսկ հեռախոսակապ չեն հասցրել անցկացնել: Մեր աջ թևի դիմաց մարտիկները ընթացքից կրակելով սրընթաց 68,8 բարձունքի լանջերով անցան հյուսիսից հարավ: Այդ նույն բարձունքի ստորոտի հարավային կողմից, մշուշի միջից դուրս եկավ մարդկանց մի խումբ, որը գնաց դեպի գետակը: Մենք հասկացանք, որ գերիներ են:

Ակոպովը չգնաց մյուս գնդերի կցվանքը: Նա գունդը տարավ անտառով, սկզբում դեպի հյուսիս, հետո թեքվեց արևմուտք և դուրս եկավ դիվիզիայի աջ թևը: Օգտվելով մշուշից, նա գումարտակներից երկուսը արագորեն անցկացրեց գետակով, որոնք արևմելքից ու հյուսիսից ընթացքից գրոհեցին 68,8 բարձունքը: Մարտիկները ներխուժեցին հակառակորդի խրամատները և դրանց երկարությամբ թեքվեցին հարավ: Այդ գումարտակների հաջողութունը ոգևորեց 307-րդ գնդի ստորաբաժանումներին: Կուզնեցովը մոռացավ իր բարկությունը:

Հնչեց հեռախոսային զանգը: Ինձ շտապ կանչեցին ռազմական խորհուրդ:

Ես անհանգստացա:

Մեքենաները չեն երթևեկում, ձիեր չկան, ինչո՞վ էի գնալու: «Այ թե ժամանակ գտան կանչելու», — մտածեցի ես: Մտա գետնատուն թիկնոցը վերցնելու և հանկարծակիի եկա: Այնտեղ նստած էին ռազմական խորհրդի անդամներ Ե. Մալցևը և Յա. Գուլշտեյնը: Ողջունելու ժամանակ չտվին:

— Ո՞վ ճեղքեց գերմանացիների պաշտպանությունը, — հարցրին միասին:

— Մեր 221-րդ գունդը:

— Ինչպես է գնդի հրամանատարի ազգանունը:

— Փոխգնդապետ Ակոպով:

— Ասացեք նրան, որ նա պարգևատրված է Կարմիր դրոշի շքանշանով:

— Ձեմ կարող, ընկեր ռազմական խորհրդի անդամներ:

— Ինչո՞ւ:

— Որովհետև մեկ անգամ արդեն ասել եմ, իսկ նա չի ստացել:

— Անհապաղ հայտնեցեք: Հրամանը կստանաք մեկ ժամ հետո, հենց որ մենք հրամանատարական կետ հասնենք:

— Կա հայտնել:

Դժվար չէր հասկանալ նրանց՝ ամբողջ բանակը հարձակվում էր, իսկ ճեղքել չէր հաջողվում: Վերադառնալով հրամանատարական կետ, ես Կուզնեցովին պատմեցի ռազմական խորհրդի անդամների այցելության մասին, զանգեցի Ակոպովին և շնորհավո-

¹ Նովո-Գմիտրիևսկայա ստանիցայի համար մղված մարտերում 221-րդ գնդի գումարտակներից մեկը, որ եկել էր լեռնանցքում ճանապարհաշինական աշխատանքներն ավարտելուց հետո, Կուզնեցովն ընթացքից նետեց մարտի հակառակ գնդի հրամանատարի կամքի: Գումարտակը կորցրեց իր կազմի կեսից ավելին, որի համար քիչ էր մնում Ակոպովին դատի տալին:

րեցի: Մեկ ժամ հետո ստացվեց հրամանը Ակոսյովին Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին:

Ղրիմսկայայի համար մղված մարտերը բացառիկ կատաղի բնույթ կրեցին, բարձունքները տասնյակ անգամ անցան ձեռքից-ձեռք: Այդպես շարունակվեց համարյա մեկ ամիս: Չի կարելի չնշել մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների հայրենասիրական բուռն ոգևորությունը: Երբեք չի խամրի 221-րդ զնդի փառքը, նրա սխրագործությունը ընդմիջտ կմնա դիվիզիայի հերոսական տարեգրության մեջ: Ուզում եմ հատկապես նշել Սանչարո լեռնանցքի մոտ 1006 բարձունքի գրոհի հերոս, 307-րդ զնդի 1-ին գումարտակի հրամանատար ավագ լեյտենանտ Յվետկովի քաջագործությունը: Ապրիլի 4-ին Յվետկովի գումարտակը, օգտըվելով 221-րդ զնդի հաջողությունից, ներխուժեց հակառակորդի խրամատը և գրավեց: Չնայած հակառակորդի գերազանցող ուժերի հակազդանքին, մարտիկները Յվետկովի հրամանատարությամբ ոչ մի քայլ չնահանջեցին: Մասն վերջից արյունաքամ լինելով, Յվետկովը շարունակեց ղեկավարել մարտը: Հենց այդ մարտում էլ նա հերոսաբար զոհվեց:

Ապրիլի 5-ի գիշերը հիտլերյան հրամանատարությունը շտապ դիրքերից հանեց ռումինական 19-րդ դիվիզիայի զորամասերը որպես «անհուսալիների»: Դրանց փոխարինեցին գերմանական զորամասերը: Գերմանական 13-րդ տանկային դիվիզիայից գերված զինվորները ցուցմունք տվեցին, որ դիվիզիայում մնացել էր ընդամենը 8 տանկ: Բոլոր տանկիստներն այժմ գործում են որպես հետևակայիներ: Ամեն օր մեծ թվով զինվորներ են շարքից դուրս գալիս: Զինվորների տրամադրությունը խիստ ընկած է: Բոլորն ուզում են որքան կարելի է շուտ դադարեցնել անհույս պայքարը Ղրիմսկայայի համար և Կերչի վրայով գնալ Ղրիմ: 19-րդ ռումինական դիվիզիայի 95-րդ հետևակային զնդի էֆրեյտոր Գեորգիու Տ. Նիկոլային պատմում էր, որ սովետական հետևակի՝ ապրիլի 4-ի գրոհը խուճապ առաջացրեց ռումինական զորքերի մեջ, նրանք փախան, բայց հանդիպեցին գերմանացիների արգելափակիչ ջոկատին: Նա և իր 8 ընկերները որոշում են գերի հանձնվել: Գեորգիուն պատմեց նաև ռումինացի զինվորների տրամադրությունների մասին: Պատերազմից դժգոհությունը աճում էր, զինվորներն ուզում են տուն վերադառնալ: Շատերն ատում են գերմանացիներին, նրանց համարում իրենց թշնամի: Նրանց շրջանում բավական լայն տարածում է գտել այն լուրը, թե իբր Անտոնեսկուն նույնպես դժգոհ է Հիտլերից, նույնիսկ ասում են, որ նա գերմանացիներից ծածուկ գնացել է Մոսկվա՝ սովետական կառավարության հետ բանակցություններ վարելու:

Այն հարցին, թե ինչու՞ ռումինական զինվորները, որոնք դժգոհ են պատերազմից և ատում են գերմանացիներին, գերի չեն հանձնվում սովետական զորքերին, Գեորգիու Տ. Նիկոլային պատասխանեց, թե վախենում են «սովետական կոմիսարներից»: Մեզ ասել են, շարունակեց Գեորգիուն, որ կոմիսարները նույնիսկ չեն էլ հարցաքննում գերիներին, բոլորին անխտիր գնդակահարում են: Նա իրեն հարցաքննողների մեջ չէր տեսել կոմիսարի և զարմացած հարցրեց.

— Դուք այլևս կոմիսարներ չունե՞ք:

Այստեղ միջամտեց գեներալ Կուզնեցովը.

— Ինչպե՞ս թե չկան, կան: Ձեզ հետ խոսում է մեր կոմիսարը, — մատնացույց անելով ինձ:

Գերի եֆրեյտորը կուշ եկավ, գունատվեց... Սարսափը համակեց նրան: Մենք ծիծաղեցինք:

Եֆրեյտորի հետ զրուցեցին նաև քաղբաժնում, կերակրեցին: Քաղբաժնի պետ Կոսովիչը կատակեց, ուզեց նրան «վախեցնել» կոմիսարով: Բայց եֆրեյտորը չվախեցավ:

Գերմանական հրամանատարությունը խիստ անհանգստացած էր Ղրիմսկայայի շրջանի իր պաշտպանություն համար: Նա այդ շրջան տեղափոխեց նոր ուժեր: Հետախուզության տվյալներով և շրջանից գերիների ցուցմունքներով, Նովոռոսիյսկի շրջանից և այլ տեղերից Ղրիմսկայայի պաշտպանության հանգույց տեղափոխվեցին 125-րդ Ղրիմսկայայի պաշտպանության հանգույց տեղափոխվեցին 125-րդ Ապրիլի կեսերին Ղրիմսկայայի շրջանում գործում էր 44-րդ բանակային կորպուսը, որի կազմի մեջ էին գերմանական 97-րդ ու 101-րդ և ռումինական 19-րդ հետևակային դիվիզիաները, 13-րդ տանկային դիվիզիան, 45-րդ զնդի 1-ին գումարտակը և 737-րդ հրետանային դիվիզիոնը:

Ապրիլի 9-ից հակառակորդը հարաճուն ուժային հարվածներ հասցրեց զորքերի մարտակարգերին ու թիկունքային զորամասերին: Նա հույս ուներ բարոյալքել, խուճապի մատնել մեր մարտիկ-

ներին: Հակառակորդը ուժային հարվածներ հասցրեց ուժակոծիչ-ներին մեծ խմբերով՝ յուրաքանչյուրում 25-ից մինչև 60 ինքնաթիռ: Օրական ինքնաթիռաթռիչքների թիվը հասնում էր մինչև 1560-ի: Սևերսկայա ստանիցայի հոսպիտալում, ուր ես բուժվում էի վիրավորվելուց հետո, օրըստօրե ափելանում էր ուժակոծությունների հետևանքով վերավորվածների թիվը: Մի վիրավոր փոխգնդապետ, պատմելով ուժակոծությունների մասին, հանկարծ ընդհատեց խոսքը, ձեռքը թափ տվեց ու ասաց. «Ինչ պատմեմ, միևնույն է, չեք հասկանա: Կհասկանա նա, ով 1942 թվականի մայիսին եղել է Ղրիմում»:

Շուտով վերադարձա դիվիզիա:

Ղրիմսկայայի համար մղվող մարտերը զնալով կատաղի բնույթ ընդունեցին: Հակառակորդը սխալվեց իր հաշիվների մեջ, բարոյալքման փոխարեն նա ստացավ 56-րդ բանակի նորանոր հզոր հարվածները: Ապրիլի 14-ին բանակը վերսկսեց հարձակումը: Այս մարտերի մասին մարշալ Գրեչկոն գրում է. «Հակառակորդը դաժան դիմադրություն էր ցույց տալիս, անդադար անցնելով հակահարձակումների: Առանձնապես ուժեղ մարտեր բորբոքվեցին Ղրիմսկայայից դեպի հարավ, որտեղ հարձակվում էին 383-րդ դիվիզիան և գեներալ-մայոր Ս. Ն. Կուզնեցովի 61-րդ դիվիզիան: Ապրիլի 14-ի օրվա երկրորդ կեսին թշնամին «Պյատիլետկա» սովխոզից մարտի նետեց երկու զնդից ավելի հետևակ և 60 տանկ: Երկարատև և շափաղանց լարված մարտից հետո նրան հաջողվեց նեղել մեր զորամասերին, սակայն չկարողացավ լրիվ վերականգնել իր պաշտպանության դրությունը»¹: Գրավելով Ղրիմսկայայից հարավ և հարավ-արևելք գտնվող մի քանի բարձունքներ, 61-րդ դիվիզիան ամրացավ այնտեղ: Ներկայումս Ղրիմսկայա քաղաքի բնակիչ, այն ժամանակ 221-րդ զնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ Տրոշենկոն պատմում է. «Մեր զնդի առջև դրված խնդիրներից մեկը ծխախոտի սովխոզից մինչև Ղրիմսկայա գնացող ճանապարհի ոլորանների մոտ գտնվող բանձունքի զրավումն էր: Չնայած գերմանացիները այդ բարձունքը լավ ամրացրել էին, մեր ստորաբաժանումները կատարեցին իրենց առաջադրանքը: Գրավելով բարձունքը, մենք հնարավորություն ստացանք վե-

րահսկել նրա շրջակայքը... Այդ բարձունքը զրավելու և ամուր պահելու համար 56-րդ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Գրեչկոն ինձ և Ակոպովին հանձնեց Կարմիր դրոշի շքանշան: Պարզենի ստացան նաև մեր շատ հրամանատարներ ու զինվորներ»: Այդ մարտերում առանձնապես աչքի ընկավ 66-րդ գունդը: Այդ ժամանակ գունդը ղեկավարում էր հրամանատարի քաղաքապետ Կարգանովը, քանի որ մինչ այդ նրա հրամանատար Գավրիլինը շարքից դուրս էր եկել: Ուղղակի քաղաքացիական այդ քաղաշխատողը Ղրիմսկայայի համար մղված մարտերում և հետագայում դրսևորեց հրամանատարի բարձր հատկություններ:

Կուսակցությունն ու կառավարությունը բարձր գնահատեցին 61-րդ դիվիզիայի մարտական ծառայությունները Կուբանի համար մղված մարտերում: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թվականի ապրիլի 23-ի հրամանագրով դիվիզիան պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: Դա բացառիկ մեծ կարևորություն ունեցող իրադարձություն էր: Դիվիզիայի անձնակազմը պարգևատրումն ընդունեց մեծ ոգևորությամբ ու հպարտությամբ: Շատ մարտիկներ, հրամանատարներ ու քաղաշխատողներ ևս պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով:

4. «ՄՍՀՎԱՆ ԲԱՅԱՏԸ»

Ապրիլի վերջին, երբ 56-րդ բանակի զորքերն ընդհուպ մոտեցան Ղրիմսկայային, 61-րդ դիվիզիան փոխադրվեց բանակի ձախթևր: Հակառակորդի պաշտպանական բնագիծն ընդգրկում էր Բականկա և Նեբերջանկա գետերի ջրբաժնի մատուցները, որոնք ծածկված էին թավ անտառներով, 147,1 և 151,6 բարձունքները, Նեբերջանկայա ստանիցան: Այդ մատուցներում ամրացել էին հակառակորդի 9-րդ հետևակային և 4-րդ լեռնահրաձգային դիվիզիաները, դաշտային ժանդարմերիայի 36-րդ և մի քանի այլ ստորաբաժանումներ: Պետք է ասել, որ նահանջելով Հյուսիսային Կովկասից և Գլխավոր կովկասյան լեռնաշղթայից, գերմանական զորքերը կենտրոնացել էին համեմատաբար ոչ մեծ պլացդարմում՝ Թամանյան թերակղզում: Սա գերմանական հրամանատարությանը հնարավորություն տվեց ամբողջ «երկնագույն գծով» մեկ ստեղծել Ղրիմադրության խոր էջելոնացված հանգույցներ: Ռեկիեֆին համե-

¹ А. А. Гречко. Битва за Кавказ, М., стр. 323.

մատ նա գրավեց ավելի շահավետ պաշտպանական դիրքեր: Պաշտպանությունն այդ հանդույցներից յուրաքանչյուրում կային հետևակի ու տանկերի ռեզերվներ:

Նյման դիրքեր գրավելու համար դիվիզիան հարկադրված էր անանցանելի լեռներով ու թավ անտառներով հաղթահարել ճամփափափանքն ու հեղեղատները: Զինվորները հրանոթները տանում էին ձեռքով: Մայիսի 7-ին հրետանային պատրաստությունից հետո դիվիզիան գրոհեց հակառակորդի վրա և ընթացքից գրավեց 147,1 և 151,6 բարձունքները, մինչև 3 կիլոմետր սեպաձև խրվեց հակառակորդի պաշտպանության խորքն ու կենտրոնը: Դիվիզիայի առաջավոր զորամասերը հասան Կլուբոկի-Յար կիրճին:

Որոշելով հրամանատարական կետը դասավորել 151,6 բարձունքի մոտ, մենք դիվիզիայի հրամանատար Կուզնեցովի և նրա համհարզ Իգնատովի հետ գնացինք հարմար դիտակետ որոնելու: Նախ եղանք 151,6 բարձունքից արևմուտք ընկած անտառներում, գտնվող կետում: Այստեղից լեռնալանջով տարածվում էր ընդարձակ բացատը, հասնելով մինչև Ներերջակա դետր:

Թավ ու ջահել անտառը անանցանելի էր: Վիթխարի, հաստաբուն մի ծառ առանձնանում էր անտառերի ծառերի մեջ: Գնդի հրամանատարը դա էլ հենց ընտրել էր որպես դիտակետ:

Կուզնեցովը մնաց զնդում: Նա ու Իգնատովը, մեզ հետ վերցնելով երկու սակրավոր ու երկու կապավոր, գնացինք դիվիզիայի դիտակետ որոնելու: Հարմար տեղ ընտրեցինք, սակրավորներն սկսեցին սարքավորել դիտակետը, կապավորները հեռախոսագիծ անցկացրին, Իգնատովը գնաց դիվիզիայի հրամանատարի հետևից:

Ժամը 16-ն էր: Մեզ մոտ եկան քաղբաժնի պետի օգնականը և հանձնակատարը: Նրանք երկուսն էլ ուժեղ կոնտուզիա էին ստացել, նրանց դեմքերին արյուն կար: Կոմերիտական աշխատանքի գծով քաղբաժնի պետի օգնական կապիտան Գոգադինը կցկառուր զեկուցեց... Արևը դիպավ հողաթմբին, 221-րդ գնդի հրամանատար Ակոպովը, որ հարցաքննում էր 4 գերիների, մահացու վիրավորվեց, կապիտան-թարգմանը, գերիներին պահպանող 4 ավտոմատավորները զոհվեցին, շտաբի մյուս սպաները և հենց նոր՝ գնդի հրամանատարական կետ եկած քաղբաժնի պետ փոխ-գնդապետ Խաղանովը մահացու վիրավորված է, ծանր վիրավորված է նաև գնդի հրամանատարի քաղտեղակալ Տրոշենկոն... Գնդի ղեկավա-

րությունից անվնաս է մնացել միայն շտաբի պետ Զաբոլոտսկին, որն այդ ժամանակ գտնվում էր զումարտակներից մեկում:

Դիվիզիայի հրամանատար Կուզնեցովը ցնցվեց ծանր պատահարից:

Դիվիզիայի ռեզերվում միայն մայոր Տամարովն էր: Կուզնեցովը նրան հրամայեց ընդունել 221-րդ գնդի հրամանատարությունը:

Այդ օրը զոհվեց 55-րդ գնդի հրամանատար, հիանալի սպա Բույնևիչը: Դիվիզիայի կազմավորման օրվանից մայոր Բույնևիչը գտնվում էր նրա շարքերում և մեծ ծառայություն է մատուցել:

Հարձակման առաջին իսկ օրը նոր հատվածում դիվիզիան կորցրեց քաղբաժնի պետին, գնդերի երկու հրամանատարների, 221-րդ գնդի համարյա ամբողջ շտաբը: Փոխգնդապետ Խաղանովը Կոսովիչին փոխարինել էր մայիսի 1-ին, ընդամենը մեկ շաբաթ աշխատեց դիվիզիայում: Բարձր կուլտուրայի տեր այդ քաղաշխատողը համեստ ու սրտակից ընկեր էր և արագորեն նվաճեց իր ծառայակիցների հարգանքը: 61-րդ դիվիզիայի մարտական շատ գործեր կապված են փոխգնդապետ Ակոպովի անվան հետ: Նրա ղեկավարած գունդը դարձել էր դիվիզիայի առաջավոր զորամասը, ինչպես անվանում էին «ճեղքման գունդը»: Գնդի հրամանատարի քաղտեղակալ փոխգնդապետ Տրոշենկոն պատմում էր, որ «Ակոպովը միշտ փնտրում էր մարտի ամենավտանգավոր տեղը և անձամբ լինում զինվորների մոտ, որոնք տեսնելով նրան՝ ուրախասում էին. Փոխգնդապետն այստեղ է, ուրեմն ամեն ինչ կարգին կլինի»: Ղեկավարելով գունդը, Ակոպովը ամենից շատ մտածում էր մարդկային ուժը պահպանելու մասին: Մարտիկները սիրում էին իրենց հրամանատարին... Հիշում եմ, ինչպես մի անգամ գրոհից հետո լսելով զեկուցյցը կորուստների մասին, Լեոն Գեմսովիչի դեմքը փոխվեց, և նա դառնություն մտաբանեց. «Ափսոս տղաները, նրանք դեռ շատ պետք է ապրեին: Սարսափելի հրեշ է այս ֆաշիզմը, բայց միևնույն է՝ կշախջախենք նրան»:

Ամբողջ դիվիզիան ծանր ապրեց Խաղանովի, Ակոպովի և Բույնևիչի կորուստը:

Հաջորդ օրը դիվիզիայի զորամասերը մեկ կիլոմետր ևս առաջ շարժվեցին: Նրա թևերն ընկան հարվածի տակ: Գնդերի հետ կապը

կտրվեց, իսկ վերականգնումը կապված էր անխուսափելի զոհերի հետ: Հակառակորդը անընդհատ հակազորհում էր ճակատից ու թևից, սպառնում էր շրջապատել: Մարտակարգերը և թիկունքային ստորաբաժանումները անդադար ուժեղացրան: Կինոն էին օրեր, երբ դիվիզիայի հատվածում հակառակորդը մի քանի հարյուր ինքնաթիռաթռիչք էր կատարում: Դիվիզիայի հրամանատարական կետի բարձունքը գերմանացիները ուժեղացրան էին օրական 15 անգամ՝ ըստ չվացուցակի և առանց որևէ շեղման: Թավ, անանցանելի անտառի միջով ձգվող նեղ արահետը, որ միացնում էր դիվիզիայի հրամանատարական կետն ու դիտակետը, գիշեր-ցերեկ անընդհատ զնդակոծվում և ուժեղացնում էին: Հրետանու խիզախ հրամանատար Իգնատևը գրեթե 20 օր դիտակետից դուրս չեկավ: Դիվիզիայի հրամանատարի նյարդերը շղիմացան. այդ անվախ զինվորականը գամվեց անկողնին: Կուզնեցովը շահուցանեց դիվիզիայից, գիտենալով, որ եթե հոսպիտալ ընկնի, ապա այլևս դիվիզիա չի վերադառնա: Նա պառկեց բուժասանդումարտակում: Այդ ժամանակամիջոցում նա սրահանջեց, որ իրեն փոխարինեմ ես, սակայն ես նպատակահարմար համարեցի դիվիզիայի հրամանատարությունը ժամանակավորապես զնել շտաբի պետի վրա: Դրա համար ծանրակշիռ պատճառներ կային. նախ՝ ես զինվորական մասնագետ չէի, հետո՝ դեռևս վերջս լրիվ չէր բուժվել: Շտաբի պետ զնդապետ Մետրոպոլսկին զինվորական լավ մասնագետ էր, Կուբանում մղված մարտերում իրեն դրսևորեց որպես հմուտ, խստապահանջ շտաբային սպա: Սակայն զնդապետ Մետրոպոլսկին, վախենալով պատասխանատվությունից խուսափեց: Ժամանակավոր ինձ վրա մնաց դիվիզիայի հրամանատարի անսովոր, ծանր բեռը:

Նշված հարցը դեռ լրիվ լուծում չէր ստացել, երբ հաղորդեցին, որ 66-րդ գնդի գումարտակներից մեկը Նեբերջակայից այն կողմ գտնվող անտառում ընկել էր շրջապատման մեջ: Այդ ժամանակ գումարտակում էր գտնվում գնդի հրամանատարի պաշտոնակատար մայոր Վարդանովը: Գումարտակի հետ կապը կտրված էր: Գումարտակի հարևան ստորաբաժանումների հրամանատարներին հրամայվեց օգնություն ցույց տալ շրջապատման մեջ ընկածներին: Հրետանին իր կրակը կենտրոնացրեց հակառակորդի հատվածի դիրքերի վրա: Սակայն մեր օգնությունն ուղացավ: Գումարտակը

կտրվեց շրջապատման մեջ: Նրա անձնակազմի մի մասը՝ 45 մարդ, ճեղքեց պաշտպանությունը, միացավ մեզ, մյուս մասը զոհվեց, մի մասն էլ գերի ընկավ: Գերվածներից երեքը գիշերով փախան գերմանացիների մոտից և պատմեցին կատարվածի մասին:

Մայոր Վարդանովը գումարտակից մեկնել էր նախքան նրա շրջապատումը և գնդի հրամանատարական կետ գնացել «մահվան բացատը» շրջանցելով: Գումարտակի շրջապատման մասին նա իմացավ գնդի հրամանատարական կետում: Երեկոյանում էր: Վարդանովը եկավ դիվիզիայի հրամանատարական կետ՝ զեկուցելու: Մեծ ընդունակությունների տեր, կոմունիստին հատուկ բարձր պատասխանատվությամբ օժտված այդ տոկուն մարդը խիստ վճատված էր: Նա ուզեց զեկուցել, բայց նրան ընդհատեցին՝ ամեն ինչ պարզ էր: Ուզում էր վերադառնալ գունդ՝ շնույլատրեցինք:

— Ես պետք է գունդ գնամ, — ասաց նա:

— Գունդ գնալ հարկավոր չէ, — եղավ պատասխանը:

Դյուրահավատ Վարդանովը կարծում էր, թե իրեն ազատում ենք գնդի հրամանատարի պաշտոնակատարի պարտականություններից: Բայց ոչինչ չասաց: Քիչ հետո կրկին հեռանալու թույլտվություն խնդրեց, բայց դարձյալ մերժում ստացավ:

Լուսաբացին մենք նախաճաշեցինք, և Վարդանովը վերադարձավ գունդ:

— Առանց իմ թույլտվության ոչ մի քայլ չհեռանաք գնդի դիտակետից:

Առաջ անցնելով ասեմ, որ պատահաբար նամակագրական կապ հաստատեցի Վարդանովի քրոջ՝ Սուսանի հետ, որն ապրում էր Բաքվում: Իր նամակներում նա շնորհակալություն էր հայտնում մոր և իր կողմից, բայց ես չէի հասկանում ինչումն է բանը: Վարդանովի քույրն ու մայրը նույնպես շնորհակալություն ստացան մեզնից՝ հիանալի որդի դաստիարակելու համար: Միայն պատերազմից հետո Գրոդնո քաղաքում, մի առիթով հիշելով Նեբերջակայի օրերը, Վարդանովը խոստովանեց, որ այն օրը նա որոշել էր գնալ մահվան, իսկ ես, գիտակցաբար թե անդիտակցաբար, խանգարել էի նրան իրազործելու մտադրությունը:

Չնայած բոլոր դժվարություններին, դիվիզիան ամուր պահեց գրաված դիրքերը, ետ մղելով հակառակորդի ձեռնարկած բոլոր

հակազրոհները: Սակայն ներքառական գրավելու ընդհանուր խնդիրը չկատարվեց, թեև հարձակման առաջին օրը 221-րդ գնդի ստորաբաժանումները դուրս եկան նրա ծայրամասը: Դրուժյունը բարդացավ նաև այն բանով, որ դիվիզիան, ինչպես ասում են, «ընկավ պարկի մեջ», ուժերի անբավարարության պատճառով հարևան զորամասերը չկարողացան դուրս գալ իրենց դիրքերից:

Մայիսի 12-ին դիվիզիան անցավ գեներալ-մայոր Ա. Լուչինսկու հրամանատարությանը գործող 3-րդ լեռնահրաձգային կորպուսի ենթակայությանը, իսկ մայիսի 13-ին, բանակի հրամանով, իր դիրքերը հանձնեց 9-րդ լեռնահրաձգային դիվիզիային և մայիսի 14-ի գիշերը դուրս եկավ երկրորդ էջելոն: Սակայն պատահեց անսպասելին. ղեռնա առաջավոր գծից կես կիլոմետր չհեռացած, դիվիզիայի զորամասերը իրենց թիկունքում հանդիպեցին հակառակորդին... Օգտվելով տեղափոխության առիթից և հարևանների անհոգությունից, գերմանացիները թևերից թափանցել էին մեր գնդերի թիկունքը: 307-րդ գունդը մարտերով հաջողությամբ քաշվեց դեպի ներքառական արևմտյան գետափը, իսկ 221-րդ գունդն ընկավ շրջապատման մեջ: Մայոր Տամարովի հրամանատարությանը գունդը երկօրյա ծանր մարտերից հետո ճեղքեց հակառակորդի օղակը և միացավ 307-րդ գնդին: Դիվիզիան չկարողացավ դուրս գալ երկրորդ էջելոն: 9-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հետ նա մարտեր մղեց կորցրած դիրքերը վերականգնելու համար: Մինչև մայիսի 20-ը դիվիզիան ներքառական արևմտյան ափին գրավեց մի քանի բարձունքներ, իսկ այնուհետև պաշտպանական մարտերով բարելավեց իր դիրքերը:

Բուժսանգումարտակի բժիշկների ջանքերով դիվիզիայի հրամանատար Ս. Կուլչնեցովը շրկու շաքաթում ոտքի կանգնեց:

5. 114, 1 ԲԱՐՁՈՒՆՔԸ

Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը միջոցառումներ էր ձեռնարկում մեր զորքերի դիրքերը ամրապնդելու ուղղությամբ: 61-րդ դիվիզիան դուրս բերեց ռազմաճակատի ռեզերվ: Ամբողջ հունիս ամսին դիվիզիան զբաղվեց 56-րդ բանակի առաջին էջելոնի թիկունքում պաշտպանական աշխատանքներով,

ստացավ համալրում և պատրաստվեց նոր մարտերի: Ռազմաճակատի և բանակի հրամանատարությունները կարևոր նշանակություն էին տալիս պաշտպանական աշխատանքներին: Գեներալ-գնդապետ Ի. Պետրովը երկու անգամ այցելեց դիվիզիա, ստուգեց պաշտպանական աշխատանքների ընթացքը, իսկ 56-րդ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ա. Գրեչկոն անձամբ մասնակցեց դիվիզիայի տակտիկական պարապմունքներին:

Այդ օրերին 221-րդ գնդի հրամանատար նշանակվեց փոխգնդապետ Սևկոն, 55-րդ հրետանային գնդին՝ մայոր Սմիռնովը, 66-րդ գունդը ժամանակավորապես ղեկավարեց մայոր Տամարովը: Շարքից դուրս եկած մայոր Ա. Կիմովի փոխարեն 55-րդ հրետգնդի հրամանատարի քաղտեղակալ նշանակվեց մայոր Գրիգորյանը:

Հուլիսի 2-ին դիվիզիան մտավ գեներալ-մայոր Ի. Ռուբանյուկի 10-րդ գվարդիական կորպուսի կազմի մեջ, իսկ հուլիսի 4-ի գիշերը, փոխարինելով 6-րդ և 9-րդ հրաձգային բրիգադներին, պաշտպանություն գրավեց 114,1 բարձունքի մոտ, Մոլդավանսկուց երկու կիլոմետր դեպի արևելք:

114,1 բարձունքը տիրապետող դիրք ուներ շրջապատի վրա և հարմարեցված էր դաժան պաշտպանության: Այդ բարձունքից հակառակորդը դիտում էր Մոլդավանսկու ուղղությամբ սովետական զորքերի գործողությունների ամբողջ գոտին: Բարձունքը ամբողջովին պատած էր բազմաթիվ կրակակետերով, իսկ նրա մատույցները պաշտպանում էին ականապատված դաշտերն ու փշալարերը: Թիկունքի կողմից բարձունք տանող ուղին շափազանց հարմար էր ռեզերվային ստորաբաժանումները թաքուն տեղափոխելու համար: Բարձունքը պաշտպանում էին գերմանական 97-րդ լեռնահրաձգային դիվիզիայի 204-րդ գունդը և երկու պատժիչ գումարտակներ:

Միանգամայն այլ պատկեր ուներ մեր զորամասերի գործողությունների գոտին: Այն 15 կիլոմետր խորությամբ ու լայնությամբ լավ էր երևում, իսկ գնդերի դիրքերը երկու կողմից գտնվում էին թևային գնդակոծության տակ: Ցերեկ ժամանակ ամեն մի շարժում առաջավոր գծից մինչև Ղրիմսկայա-Սլավյանսկ երկաթգծի հողաթումբը վտանգավոր էր:

Հուլիսի 16-ին դիվիզիան սկսեց գրոհել 114,1 բարձունքը: Գլխավոր հարվածը հասցնում էր 221-րդ գունդը: Մյուս գնդերը

իրենց ակտիվ գործողություններով նրան աջակցում էին աջից՝ Առաջին գրոհը հաջողություն չունեցավ: Երեկոյան գրոհը կրկնվեց: Հարվածը հասցվեց բարձունքի հյուսիս-արևելյան կողմից, Մակարտուկ ձորակի ուղղությամբ 221-րդ գնդի 1-ին գումարտակը, ավագ լեյտենանտ Լեկարևի հրամանատարությամբ դժվարությամբ մոտենալով հակառակորդի պաշտպանության առաջին գծին, թեթև ցատկով ներխուժեց հակառակորդի խրամատների երկու շարքը և գրավեց դրանք: Այդ գրոհի մասին գումարտակի հրամանատարի քաղտեղակալ, այժմ պահեստի գվարդիայի մայոր Ի. Սինանովը պատմում է. «...Որոտացին մեր «կատյուշաները»: Դա մի ցնցող տեսարան էր: Մեր գլխավերևով թռչում էին շիկացած տերմիտային արկերը: 30 րոպե շարունակվեց հիտլերյան դիրքերի գնդակոծությունը: Մենք տեսնում էինք դեպի հակառակորդի առաջավոր դիժ թռչող բոցեղեն մրրկասյունները, երկինք էին թռչում հրանոթների, ականանետների բեկորները: Թվում էր, թե այնտեղ հողն այրվում է... Երկինք խոյացավ կարմիր հրթիռը, ազդարարելով գրոհի սկիզբը: Մեր գումարտակը ընթացքից գրավեց գերմանական պաշտպանության գծի երկու խրամատ... Բայց նրանք օգնական ուժ ստացան և մի քանի տանկերով փորձեցին վերականգնել իրենց դիրքերը: Գործի դրվեցին մեր հակատանկային զենքերը, թռան նռնակներն ու հրկիզվող շները: Մենք խփեցինք շորս գրահամբե-նա և ոչնչացրինք շուրջ հարյուր ֆաշիստի: Գերմանացիների հակազրոհը ետ մղվեց»:

Հուլիսի 17-ի լուսաբացին 221-րդ գնդի դիրքերի վրա հակառակորդը հրետանու և ականանետների կատաղի կրակ տեղաց: Դիվիզիայի հրամանատարը հրամայեց ավագ լեյտենանտ Լեկարևին՝ վերսկսել բարձունքի գրոհը: Աջ թևի վաշտը իր հետևից տարավ գումարտակի կուսկազմակերպիչ Ի. Սավելևը: Բոլոր հրամանատարներն ու քաղաշխատողները գտնվում էին գրոհների առաջին շարքերում, ոգևորում էին գրոհող մարտիկներին: Այդ մարտերում գումարտակը մեծ կորուստներ կրեց: Քաջի մահով ընկավ գումարտակի կուսկազմակերպիչ Ի. Սավելևը: Հրամանատարի քաղտեղակալ Սինանովը ծանր վիրավորվեց: Նրան մարտադաշտից դուրս բերեց կարմիրքանակային Աթամուրայը: Գնդի հրամանատար փոխգնդապետ Սեկոն մարտի մեջ մտցրեց ռեզերվային գումարտակը: Գունդը պահեց իր գրաված դիրքերը:

114,1 բարձունքի գրոհի ժամանակ դիվիզիայի զորամասերն ու ստորաբաժանումները, մասնավորապես 221-րդ գունդը և նրա 1-ին գումարտակը, վճռական գրոհի ենթարկեցին թշնամու պաշտպանության հենարանը, ցույց տալով տոկունության ու համառության օրինակներ: Այդ գրոհի ժամանակ քաջաբար կռվեցին մարտիկներ Վիկտոր Ստեպանովը, Միխայիլ Իգնատևը, Աթամուրայը. սերժանտներ Վլադիմիր Սլինկոն, Նայդենովը, Կոլցովը, Դավիդովը, Գորբունովսկին և Կոնովալենկոն, նշանառու Սեմյոն Սոլոդկովը, հրամանատարներ և քաղաշխատողներ Շերբինյան, Պետրիշևը, Սինանովը, Բաշուրինը, Լեկարևը, Միքայելյանը, Սավելևը և շատ ուրիշներ:

Դիվիզիան լրիվ չգրավեց բարձունքը: Բանակի մյուս զորամասերը ևս մի քանի անգամ գրոհեցին բարձունքը: Միայն 221-րդ գնդին հաջողվեց գրավել բարձունքի լանջերը: Գունդը ամրացավ այդ դիրքերում:

Բանակի ռազմական խորհուրդը դիվիզիայի հրամանատար Կուզնեցովին հեռագրեց.

«Ձեզ և այն զորամասի անձնակազմին, որը մասնակցեց 1943 թ. հուլիսի 16-ին մղված մարտին, շնորհակալություն եմ հայտնում 114,1 բարձունքի գրավման օպերացիան գերազանց անցկացնելու համար: Վստահությունս եմ հայտնում այն առթիվ, որ առաջիկա մարտերում Դուք և Ձեր զորքերը ավելի մեծ քաջություն, խիզախություն ու կազմակերպվածություն կդրսևորեք հակառակորդի ոչնչացման ուղղությամբ:

Հրամայում եմ.

1943 թ. հուլիսի 18-ին պարզեատրել շքանշաններով ու մեդալներով բոլոր այն հրամանատարներին և ռազմիկներին, որոնք աչքի ընկան հուլիսի 16-ի մարտում:

Բանակի ռազմական խորհուրդ»:

Բանակի մյուս զորամասերի հետ 114,1 բարձունքի շրջանում շարունակելով ակտիվ գործողությունները, դիվիզիան 66-րդ և 307-րդ գնդերի ուժերով հուլիսի 22—23-ը հակառակորդին հարվածեց իր աջ թևում և, ճեղքելով նրա պաշտպանությունը, առաջ շարժվեց 1,5 կիլոմետր: Հաջորդ օրերին նա ակտիվ պաշտպանա-

կան մարտեր մղեց: Այդ մարտերում դիվիզիան հիանալի շատ մարդիկ կորցրեց: Զոհվեց շտաբի պետ գնդապետ Մետրոպոլսկին: Նրան փոխարինեց գնդապետ Գոլովյովը:



Ստացվեց Գերագույն զլխավոր հրամանատարի հրամանը 61-րդ դիվիզիան սովետա-գերմանական ռազմաճակատի մի այլ հատված տեղափոխելու մասին: Այս կապակցությամբ օգոստոսի 14-ին դիվիզիան իր դիրքերը հանձնեց բանակի մյուս զորամասերին:

Օգոստոսի 23-ին Սովետական Միության հերոս գեներալ-մայոր Կ. Ի. Պրովալովը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության անունից դիվիզիային հանձնեց Կարմիր դրոշի շքանշան: Դիվիզիայի ռազմիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները կուսակցությանն ու կառավարությանը հավաստիացրին, որ կբազմապատկեն դիվիզիայի փառքը, նրա մարտական դրոշը կտանեն թշնամու՝ գերմանական ֆաշիզմի դեմ ձեռք բերած նոր հաղթանակների միջով: Նույն օրն էլ դիվիզիան ժամանեց Կրասնոարմեյսկայա կայարան՝ ռազմաճակատի նոր հատված մեկնելու:

Շատ դժվարություններ ու անհաջողություններ եղան Կուրանի համար մղված մարտերում: Սակայն ամենապահանջատեղին այն է, որ Կուրանի համար մղված մարտերում 61-րդ դիվիզիայի ռազմիկները տվեցին խիզախության և ոգու ամրության քննություն: Մեկ անգամ ևս զրսևորվեց մեր մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների ջերմ հայրենասիրությունը, նրանց անսասան կամքը իր ճանապարհից սրբել-ջնջել այն ամենը, ինչ սպառնում է սովետական ժողովրդի արյունով ու աշխատանքով ձեռք բերված ազատությանը:

Թողնելով Հյուսիս-կովկասյան ռազմաճակատը, մենք մեզ հետ հաճելի հիշողություններ տարանք բոլոր նրանց մասին, ովքեր շասանվեցին ու շնորհակցին դժվարությունների հանդեպ: Մեր բոլորի հիշողության մեջ անջնջելի կմնա Հյուսիս-Կովկասյան ռազմաճակատի հրամանատար գեներալ-գնդապետ Իվան Եֆիմովիչ Պետրովի կերպարը: Ի դեմս նրա մենք տեսնում էինք մեծ հոգու

տեր իսկական կոմունիստի ու զորավարի: Իմ վերջին հանդիպումը իվան Եֆիմովիչի հետ կարելի է պատահական համարել: Կուրանից դիվիզիայի մեկնելու օրը՝ 1943 թվականի օգոստոսի 23-ին, ես գնացի ռազմաճակատի քաղվարչություն՝ կուսփաստաթղթերի հարցով: Ճանապարհին Պետրովի ավտոմեքենան սլացավ մեր կողքով: Քիչ անց ետևից մեքենայի ազդանշանի ձայն լսելով, մենք կանգնեցինք: Պետրովի մեքենան ետ էր դարձել ու մոտենում էր մեզ: Մեքենան կանգնեց: Պետրովն սկսեց հետաքրքրվել ամեն ինչով և, իհարկե, առաջին հերթին մարդկանցով:

— Գեներալ Կուզնեցովին և բոլոր ընկերներին հայտնեք, որ ռազմական խորհուրդը գոհ էր ձեր դիվիզիայից և նրա մարտական գործողություններից: Հիանալի մարդիկ ունեք դուք: Մենք արևմտասանքով ենք բաժանվում ձեր դիվիզիայից, բայց ինչ կարող ենք անել: Հրամանը հրաման է: Ցանկանում եմ ձեզ նորանոր մարտական հաջողություններ և ամենայն բարիք:— Նա ձեռքը մեկնեց հրաժեշտ տալու, բայց խսկույն ետ քաշեց.— Ներիր ծերուկիս, քիչ էր մնում մոռանայի: Ինչպե՞ս է կուսակցական փարտաթղթերի գործը, հաշիվները մաքրե՞լ եք: Եմեկյանովի մոտ եղե՞լ եք:

Ես ղեկուցեցի, որ այդ գործով եմ գնում: Մենք հրաժեշտ տվեցինք միմյանց:

Եթե ճիշտ է, որ մարդիկ բնածին զինվորական են լինում, ապա դրանցից մեկը մարշալ Ա. Ա. Գրեչկոն է: Անդրեյ Անտոնովիչին ես առաջին անգամ տեսել եմ Արևմտակայա ստանիցայի մոտ մղված մարտերում: Պատկառազու հասակով այդ զինվորականն այն ժամանակ գեներալ-լեյտենանտ էր, բանակի հրամանատար: Առաջին անգամ, թերևս Գրեչկոն ինձ վրա ուժեղ տպավորություն թողեց քախսություններով: Նա շատ բան շարացրեց, այլ կշռադատեց մարտական խնդիրը, համարյա ոչինչ մանրամասնությամբ չբացատրեց, այլ մատնանշեց միայն զլխավորը: Մնացածը պետք է կռահեր հրամանատար-կատարողը: Մարտն ինքն է խնդիրներ ծնում և որոշում պահանջում: Ոչ մի հրամանատար չի տա այդ խնդրի լուծումը, մինչև որ դրանք չծաղեն: Պատերազմից հետո ինձ մի քանի անգամ վիճակվել է հանդիպել Անդրեյ Անտոնովիչի հետ: Կինելով սակավախոս պատերազմում ու ծառայության մեջ, նա ակտիվ ու սրտակից զրուցակից է ծառայությունից դուրս:

1950 թվականին ծառայության բերումով ինձ կրկին բախտ

վիճակվեց հանդիպել 56-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Եվդոկիմ Եֆիմովիչ Մալցևի հետ: Մենք միասին մասնակցեցինք Անդրկովկասյան ռազմական խորհրդի աշխատանքին և 7-րդ գվարդիական բանակի գծով անցկացված միջոցառումներին, միասին ընտրվեցինք հանրապետության կուսակցական օրգաններում և միասին աշխատեցինք դրանում: Ե. Մալցևը ակտիվ մասնակցություն ցուցաբերեց Հայաստանի կուսակցական կազմակերպության գործունեությանը: Լինելով խելամիտ ու սկզբունքային կոմունիստ, հմայիչ ընկեր, Եվդոկիմ Եֆիմովիչը վայելում էր հանրապետության կոմունիստների, բոլոր աշխատավորների հարգանքն ու սերը: Ե. Մալցևի հետ համատեղ աշխատանքային տարիներն ընդմիջտ կմնան հիշողությանս մեջ:

IV. ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

Հայրենական մեծ պատերազմի բեկման տարում՝ 1943 թվականին, սովետական զորքերը գերմանական օկուպանտներին ետ շարտեցին Վոլգայից մինչև Գնեսլ: Պատերազմների պատմության մեջ երկու մեծագույն ճակատամարտերը Ստալինգրադի մոտ և Կուրսկի աղեղում՝ նշանավորեցին մեծ բեկման գլխավոր ուղենիշները: Հօդս ցնդեցին հիտլերյան բանակի «անպարտելիության» առասպելը և «գեներալ-ձմռան լեգենդը»: 1943 թվականն ուրվագծվեց գերմանական ֆաշիզմի մայրամուտը: Է՛լ ավելի աճեց սովետական պետության միջազգային հեղինակությունը: Սովետական բանակի խոշոր հաղթանակները կազմալուծեցին թշնամու լազերը: Գրվեց հիտլերյան կոալիցիայի քայքայման սկիզբը:

Պատմական նշանավոր իրադարձությունների ժամանակաշրջանում 61-րդ դիվիզիային բախտ վիճակվեց մասնակցելու Ոսկրաինայի ազատագրման գոտեմարտերին: Ոտք դնելով ուկրաինական հողի վրա, դիվիզիան անծայրածիր տափաստաններով կտրեց անցավ մոտ 400 կիլոմետր ճանապարհ և անցավ բանակի գեներալ Տոլբուխինի հրամանատարությամբ գործող Հարավային ռազմաճակատի 44-րդ բանակի 63-րդ հրաձգային կորպուսի օպերատիվ ենթակայությանը:

1. ԳԵՐՄԱՆԱՅԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԵՂՔՈՒՄԸ ՄՈՒՈՉՆԱՅՍ ԳԵՏԻ ՄՈՏ: ԿԱՆՈՎԿԱՅԻ ԱԶՍԱԳՐՈՒՄԸ

Երբ հետագայում դիտեցինք գերմանական զորքերի պաշտպանության սիստեմը Մոլոչնայա գետի մոտ, զարմացանք:

Հակառակորդի պաշտպանությունը կազմում էր այսպես կոչ-

ված «Արևելյան պատենեշի»¹ մի մասը: Վորոշիլովկա խոշոր բնակավայրի շրջանում գերմանացիները խիստ բարենպաստ բնական բնագիծ էին պատրաստել պաշտպանության համար: Գետի արևմտյան ափն այնտեղ բարձր է, իշխող դիրք ունի արևելյան ափի և ամբողջ մերձակա տեղանքի նկատմամբ: Կարծես բնությունը հատկապես այն ստեղծել էր պաշտպանության համար: Գետի ամբողջ երկարությամբ փորված էր հակատանկային խոր փոս, իսկ նրանից այն կողմ, տժղ-տեղ, որտեղ գերմանացիները հնարավոր էին համարել տանկերի անցումը, փորել էին լրացուցիչ փոսեր: Գետափի բարձունքների լանջերին փորել էին խոր խրամատներ՝ յուրաքանչյուր դասակի համար առանձին խրամախորշով: Դրանք միմյանց հետ կապված էին խրամուղիներով: Յուրաքանչյուր խրամախորշ ուներ իր գետնատնակը, որում միաժամանակ կարող էր հանգստանալ 20 մարդ: Գետնատնակը կարող էր դիմանալ կեստոննանոց ավիառումքի հարվածի: Ամբողջ բարձունքի վրա սարքավորված էին բազմաթիվ կրակակետեր և ԴՁՏ-ներ: Առաջավոր գծի մատուցները տեղ-տեղ ակնապատված էին և պատված փշալարերով: Բնակավայրերը վերածվել էին հենակետերի, որպես պաշտպանության սիստեմի բազկացուցիչ մաս:

Մոլոչնայա գետի վրա գերմանացիների պաշտպանությունը կառուցված էր 25 կիլոմետր խորությամբ, երեք գոտիներից: Առաջին գոտու խորությունը կազմում էր ավելի քան 7 կիլոմետր: Վորոշիլովկայի մոտ պաշտպանվում էին 17-րդ հետևակային դիվիզիայի զորամասերը և 5-րդ ավիագունդը, ռեզերվում ունենալով մեկ արդեն հայտնի 13-րդ տանկային դիվիզիայի հրետանին ու տանկերը:

Պաշտպանության այդ հատվածը բազմիցս գրոհի ենթարկվեց մեր 10-րդ հրաձգային կորպուսի դիվիզիաների կողմից, բայց անհաջող: Կորուստներ կրելով, այդ դիվիզիաները դադարեցրին գրոհները: Հավանաբար, երբ 61-րդ դիվիզիան մոտեցավ Վորոշիլովկային, գերմանացիները չէին կարծում, թե մեր զորքերը նոր հարձակում կսկսեն:

Երբ երթի ժամանակ հրաման ստացվեց Մոլոչնայա գետի մոտ

¹ См. А. М. Василевский, Дело всей жизни, М., стр. 344—348, 349, 352—356.

գերմանացիների պաշտպանությունը ճեղքելու մասին, դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Կուզնեցովը տեղանքի զննությունից հետո որոշեց գնդերը բացազատել նախքան Վորոշիլովկայի մատուցներին հասնելը և հակառակորդի վրա գրոհել առանց հրետանային պատրաստության: Նա 307-րդ գունդը թողեց ռեզերվում: Դիվիզիայի քաղապարատը մարտիկներին և ստորաբաժանումների հրամանատարներին պարզաբանեց, որ գերմանացիների պաշտպանությունը Մոլոչնայա գետի մոտ փակում է մեր զորքերի ճանապարհը դեպի Մելիտոպոլ և Ղրիմ, իսկ նրա ճեղքումը նշանակում է ձախսական Ուկրաինայի շոտափուլի ազատագրում: Առաջադրվեցին լողունները՝ «Ֆաշիստներին վերջ կտանք Ղրիմում», «Կարմրադրոշ դիվիզիայի մարտական դրոշները պատվով կտանենք Մոլոչնայա գետի մոտ թշնամու ամրությունների վրայով» և այլն:

66-րդ գնդի բացազատված գումարտակները՝ փոխգնդապետ Ն. Ա. Վեչտոմովի հրամանատարությամբ, և 221-րդ գնդինը՝ փոխգնդապետ Սեկոյի հրամանատարությամբ, սեպտեմբերի 27-ին, ժամը 17-ին, թշնամու համար անսպասելի հայտնվեցին Վորոշիլովկայի դիմաց: Ռազմիկները գրոհեցին հասակով մեկ, սրբնթաց, ընթացքից կրակելով: Թնդաց «ուռա»-ն: 221-րդ գնդի ստորաբաժանումները վայրկենապես ներխուժեցին Վորոշիլովկա, 66-րդ գունդը այն շրջանցեց հյուսիսից և առաջ սլացավ դեպի առափնյա բարձունքները:

Թշնամին խուճապի մատնվեց: Առանց լուրջ դիմադրություն ցույց տալու դիմեց փախուստի: Համառ դիմադրություն ցույց տվին միայն հատուկենտ կրակակետեր և ԴՁՏ-ներ: Սակայն դրանք ևս ոչնչացվեցին: 221-րդ գունդը ֆաշիստներին հետապնդեց կրակակոխ, մի վաշտ թողնելով Վորոշիլովկան հիտլերականներից մաքրելու համար: Հիտլերականները դործի դրին բարձունքների, խրամատների մյուս կողմի կրակակետերը: Խրամատների երկայնքով նրանց վրա գնաց 66-րդ գունդը: Շարժումն այնքան սրբնթաց էր, որ առանձին ԴՁՏ-ներ և այլ կրակակետեր մնացին գրեթե թիկունքում:

Դիվիզիայի ձախ թևում թշնամին հակադրոհի անցավ 221-րդ գնդի դեմ: Բայց գունդը հենց ընթացքից ճզմեց թշնամուն, հրկիզեց երկու տանկ և սլացավ դեպի նպատակակետը:

Գերմանացիները մարտի մեջ նետեցին 17-րդ հետևակային դիվիզիայի և 5-րդ ավիագնդի ստորաբաժանումներն այն ժամանակ, երբ մեր ստորաբաժանումները հասել էին բարձունքների կատարին: Թե՛ մարտ սկսվեց: Գնդերն ամրացան բարձունքների կատարին:

Սեպտեմբերի 28-ի լուսաբացին դիվիզիան վերսկսեց հարձակումը: Կոտրելով հակառակորդի դիմադրությունը, 66-րդ գունդը գրոհով գրավեց Պոկազնոյե և Վիշնևսկ բնակավայրերը, իսկ 221-րդ գունդը, ետ մղելով երեք հակազրոհ, գրավեց Նեյդորֆը: Գերմանացիների պաշտպանության առաջին գոտին ծայրեծայր ձեղքվեց: Մարտական առաջադրանքը հաջողությամբ կատարվեց:

Նկատի ունենալով բաց թևերը, դիվիզիայի հետագա շարժումը դադարեցվեց: Այդ հարևանը աննշան շափով առաջ անցավ, իսկ ձախը մնաց տեղում: Բայց սեպտեմբերի 28-ի ցերեկը դրուժյունը մարտադաշտում բարդացավ: Հակառակորդը կենտրոնացրեց հետևակի և տանկերի խոշոր ուժեր և անցավ հակազրոհի: Նրան հաջողվեց 66-րդ գնդին դուրս մղել Վիշնևսկից դեպի Պոկազնոյե ստանիցայի արևմտյան ծայրամասը: 44-րդ բանակի հրամանատարը 221-րդ գնդի մարտակարգերի միջով մարտի նետեց 302-րդ դիվիզիան: Դժբախտաբար, նա չգիմացավ թշնամու հակազրոհին, նահանջեց՝ իր ետևից տանելով 221-րդ գնդի գումարտակներից մեկին: Գնդի դրուժյունը վատացավ: Սկզբում նա իր դիրքերը պաշտպանեց մնացած ուժերով, հետո հակառակորդի ճնշման տակ ստիպված թողեց Նեյդորֆը և ամրացավ Նեյդորֆից 300 մետր արևելք: Գնդի 45 միլիմետրանոց թնդանոթներն անուժ գտնվեցին գերմանական ծանր տանկերի դեմ: Այդ դիրքերում ամրանալու նպատակով դիվիզիայի հրամանատարը մարտի մեջ մտցրեց 307-րդ գունդը, իսկ 221-րդը դուրս բերեց երկրորդ էշելոն:

Սեպտեմբերի 29-ին հակառակորդը երեք անգամ հակազրոհ ձեռնարկեց 66-րդ և 307-րդ գնդերի դեմ: Դիվիզիայի վարչությունը և թիկունքը ենթարկվեցին ուժգին ուժեղացման և հրետանային գնդակոծության: Սակայն դա չկասեցրեց դիվիզիայի հարձակումը: Գնեբրալ-մայոր Կուզնեցովը որոշեց գրոհով գրավել Վիշնևսկի բնակավայրը և ձեղքել, դուրս գալ Չիրվոննի ու Կոխանոյե բնակավայրերը: Թշնամին կռահեց և հակազրոհ ձեռնարկեց 66-րդ գնդի դեմ: Կատաղի մարտ բռնկվեց: Օգտվելով այն բանից,

որ հակառակորդը մարտի է բռնվել 66-րդ գնդի հատվածում, 307-րդ գնդի հրամանատար մայոր Վասիլի Վալկովը 7-րդ մոտոհրաձգային բրիգադի և գնդի ձախ թևում գործող տանկերի փոխգործողության մեջ ներխուժեց Վիշնևսկի, գրավեց այն ու առաջ շարժվեց 2,5 կիլոմետր: Երկու գունդն էլ ամրացան Չերվոննի և Կոխանոյե բնակավայրերից արևելք գտնվող բնագծում:

Հոկտեմբերի 3-ին բանակի հրամանատարը, նոր հարձակում նախապատրաստելու նպատակով, 61-րդ դիվիզիան դուրս բերեց երկրորդ էշելոն: Շուտով դիվիզիան բերվեց առաջ: Հոկտեմբերի 11-ից մինչև 23-ը նա համառ մարտեր մղեց Օկտոբերֆելդի ամրությունների շրջանում: Այդ ամրությունների առանձնահատկությունն այն էր, որ խրամատներն իրար կապող հաղորդակցման ուղիներն անցնում էին շենքերի և մյուս շինությունների տակով, իսկ շենքերը վերածվել էին գնդացրային բների ու կրակակետերի: Պաշտպանության ամբողջ սիստեմը հենվում էր Օկտոբերֆելդի հարավային ծայրամասի աղյուսի գործարանի, կենտրոնում գտնվող դպրոցի և հյուսիսային մասում ընկած քաղաքային այգու ամրությունների վրա, ամրացված շրջանը պաշտպանում էր 13-րդ տանկային դիվիզիայի մեծ քանակությամբ լրացուցիչ հրետանիով և տանկերով ուժեղացված մոտոհետևակը: Տասներկուօրյա համառ մարտերից հետո Օկտոբերֆելդը գրավվեց դիշերային գրոհով:

Հետապնդելով թշնամուն, դիվիզիան ազատագրեց մի շարք բնակավայրեր: Հրամանատարությունը գիտեր, որ Տիմոշևկայում հակառակորդի խոշոր ուժեր են կենտրոնացված, այդ թվում նաև տանկային: Օկտոբերֆելդի դեպքերը չկրկնելու համար նա դիմեց հանդուգն մանևրի: 66-րդ գնդի հրաձգային գումարտակներից մեկի անձնակազմը՝ կապիտան Բելոկլիցկու հրամանատարությամբ, նստեց ավտոմեքենաները: Գումարտակն ուժեղացվեց ախանանետներով, 76 մմ հրանոթներով և սակրավորներով: Դա կոչվեց «Հետապնդողների ջոկատ»: Հոկտեմբերի 27-ի գիշերը, հաղթահարելով 40 կիլոմետր ճանապարհը, «ջոկատը» անսպասելի հարձակվեց Տիմոշևկայի վրա: Հակառակորդը խուճապահար փախուստի դիմեց, Տիմոշևկայում թողնելով 27 սարքին տանկ, ուղեւորական մեքենաներով և պարենամթերքով լեցուն պահեստներ, երկաթուղային 47 բարձած վագոն և շատ այլ գույք:

Հոկտեմբերի 31-ին Վերխնիե-Սերեզոզի բնակավայրում գումարվեց դիվիզիայի կուսակցական ակտիվի ժողով՝ նվիրված Ուկրաինայում մղված առաջին մարտերի արդյունքներին: Պատրաստվելով ժողովի, մենք հանդիպեցինք մի այսպիսի հետաքրքիր փաստի, ո՛չ քաղաքաժնում, ո՛չ դիվիզիայի շտաբում, ոչ էլ զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարների ու քաղաշխատողների մոտ նշում չկար այն մասին, թե ովքեր էին աչքի ընկել Մոլոչնայա գետի շրջանում թշնամու պաշտպանությունը ճեղքելու վճռական օրվա՝ սեպտեմբերի 27-ի մարտում: Սա այն դեպքն էր, երբ հաջողությամբ կատարելով մարտական խնդիրը, հրամանատարներն ու քաղաքական ղեկավարները «ոչինչ» չունեին զեկուցելու մարդկանց սխրագործության մասին: Այդ «ոչինչ» գաղտնիքը նրանումն էր, որ բոլորը՝ մարտիկից սկսած մինչև զորամասի հրամանատարը՝ զնացել էին սրբնթաց զրոհի թշնամու դեմ և ոչ ոք ետ չէր մնացել: Իսկ երբ բոլորն են աչքի ընկնում, ապա դրեթե անհնարին է դառնում նրանց առանձնացնել:

Մարտը վարելու արվեստը ստանդարտ չի բնորոշում: Կուրանում մղված մարտերի փորձը ցույց տվեց, որ հրետանային պատրաստության ժամանակ հակառակորդը շատ հաճախ հիմնական ուժերը առաջավոր գծից տանում է թաքստոցներ և այդ ձևով պահպանում կենդանի ուժը, իսկ այնուհետև, կրակը պաշտպանության խորքը տեղափոխելուց հետո, այն նետում մեր հետևակի հարձակումը ետ մղելու: Նրբեմն հրետանային կրակը ազդանշան էր ծառայում մեր հետևակի գրոհը դիմավորելու համար: Մոլոչնայա գետի մոտ հակառակորդի պաշտպանության գրոհումը մեզ համար ձեռնտու եղավ, իսկ ինչ վերաբերում է հաջողության գաղտնիքին, ապա նրանում, անշուշտ, թաքնված էր զրոհի հանկարծակիությունը, որի իմաստը հարձակման սովորական մեթոդից՝ հրետանային պատրաստությունից «շեղվելն» էր:

221-րդ գնդի վաշտը, որ սեպտեմբերի 27-ին թողնվել էր Վորոշիլովկայում եղած կրակակետերը լիկվիդացնելու համար, հանդիպեց համառ դիմադրության: Սերժանտ Վասենկոյի խումբը, որի մեջ էին մարտիկներ Տարասովը, Պերվակովը, Շաբալսկին և Տրոֆիմովը, գրավեցին երեք ԴՁՕՏ: Փամփուշտները վերջացան: Հիտլերականներն սկսեցին նեղել նրանց: Սերժանտ Վասենկոն դիմեց հանդուգն քայլի՝ նրանց վրա հարձակվեց վերջին նոնակներով:

Խումբը դժվարությամբ մոտեցավ այն տանը, որտեղ պատասխարվել էին հիտլերականները, նոնակները նետեց և անմիջապես ներխուժեց տուն: Մարտիկները հիտլերականներից խլեցին ավտոմատները և շարունակեցին մաքրել բնակավայրը:

Դիվիզիան բազմապատկեց կարմիրգորոշ զորամիավորման փառքը: Մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները Մոլոչնայա գետի մոտ մղված մարտերում ցուցաբերեցին հերավի մասսայական հերոսություն: Տոկունություն և անսասան կամք ցուցաբերեցին Նեյդորֆի և Վիշնևսկի շրջանում, երբ հակառակորդը նրանց վրա հարձակվեց բազմապատիկ գերակշիռ ուժերով: Ետ քաշվելով Նեյդորֆից, 221-րդ գնդի գնդացրորդ Ստեպանենկոն ընթացքից տեղադրեց գնդացիրն ու մի կրակահերթով ոչնչացրեց 20 հիտլերականի, իսկ սերժանտ Զերիկովը մի խուրձ նոնակներով շարքից հանեց թշնամու մի տանկ, որը բաց դաշտում դիմավորում էր մեր մարտիկներին: Կարմիրբանակային Կապացենան ջրիկ ցեխի միջով սողեսող մոտեցավ թշնամու ականանետին և նոնակ նետեց հիտլերականների վրա: Ոչնչացնելով երեք ֆաշիստի, նա ականանետը քարշ տվեց իր վաշտը և ընկերների հետ կրակեց թշնամու վրա: Վաշտի հրամանատար Կրասնոշչեկովը ահեղ պահին փոխարինեց շարքից զուրս եկած գնդացրային անձնակազմին և մենակ ետ մղեց թշնամու գրոհը: Զոհվելիս Կրասնոշչեկովը ձեռքով ամուր սեղմել էր գնդացրի բռնակը: Կարմիրբանակային-գրնդացրորդ Ավետիսյանը վիրավորվեց և կորցրեց գիտակցությունը: Միաժամանակ հետո ուշքի գալով, նորից մոտեցավ գնդացրին: Նա երկրորդ անգամ վիրավորվեց: Ընկերներն ուզեցին նրան դուրս բերել մարտադաշտից, բայց նա հրաժարվեց, ասելով. «Քանի աչքերս տեսնում են, պետք է խփեմ թշնամուն»: Կարմիրբանակային Կոշելյովը հակատանկային հրացանով խփեց վաշտի վրա եկող թշնամական մեկ տանկ և օգնական ուժեր բերող մեկ ավտոմեքենա:

Կուզենայի համառոտակի նկարագրել երեք աղջիկների սխրագործությունը: 66-րդ գնդի բուժբույր Անգելինա Տուտուշան եռանդուն կերպով վիրավորներին դուրս էր բերում մարտադաշտից: Վիշնևսկում գերմանացիների հակազրոհի ժամանակ, երբ նա վիրակապում էր վիրավոր զինվորին, կողքին հայտնվեց 7 գերմանա-

ցի: Խիզախ աղջիկը վիրավորներից վերցրեց նոնակներն ու մեկը մյուսի հետևից շարտեց գերմանացիների վրա: Հետո վերցրեց ավտոմատն ու սկսեց կրակել: Թշնամու գնդակը խոցեց նրան: Վրա հասնող զինվորները փրկեցին վիրավորներին: 221-րդ գնդի սանհրահանգիչ Մարիա Ֆիլիպենկոն Նեյդորֆից գումարտակի նահանջի ժամանակ հակառակորդի կրակի տակ դուրս բերեց մի քանի վիրավորների, այդ թվում վիրավոր լեյտենանտին՝ ուսերին դրած: Երթի ժամանակ գումարտակի կոմերիտական կազմակերպչի պաշտոնով դիվիզիա եկավ Վերա Սիդորենկոն: Քաղբածնում Սիդորենկոյին փորձեցին համոզել, որ նա աշխատի ուրիշ ստորաբաժանումում: Բայց նա իրենը պնդեց. «Միայն շարային գումարտակ»: Գրոհների ժամանակ Վերան գնում էր շղթայի առաջին շարքում: Նեյդորֆում մի խումբ մարտիկների հետ նա պաշտպանեց գումարտակի նահանջը: Երկու ոտքից վիրավորվեց: Մյուս վիրավորներին Վերան հրամայեց նահանջել, իսկ ինքը շարունակեց կռվել այնքան ժամանակ, մինչև որ կողքին պայթած թշնամու արկը կտրեց նրա կյանքի թելը:

Ինչպես միշտ, կոմունիստները գտնվում էին մարտիկների առաջին շարքերում: Կարմիրբանակային-կոմունիստից մինչև քաղբածնի աշխատողը՝ բոլորը ձեռք-ձեռքի տված, մարտիկների ու հրամանատարների հետ արիաբար գրոհում էին թշնամու դեմ: Ֆաշիստներին ջախջախելու կուսակցության պահանջը նրանց շուրթերին հնչում էր որպես մարտակոչ, իր մարմնավորումը գտնում նրանց սխրանքների մեջ:

Վիշնևսկում հակագրոհներից մեկի ժամանակ վաշտի մարտիկները լսեցին կարմիրբանակային-կոմունիստ Պոլուեկտովի հաստատուն ձայնը. «Արժիվներ, առաջ թշնամու դեմ. առաջ դեպի արևմուտք»: Վաշտը խիզախ գրոհով ներխուժեց Վիշնևսկ: 307-րդ գնդի 9-րդ հրաձգային վաշտի կուսակազմակերպիչ կարմիրբանակային Պրոտոկովիլովը մի մարտում ոչնչացրեց 15 ֆաշիստի, իսկ նույն գնդի առաջին գումարտակի կուսակազմակերպիչ Տրավյանկոն ծանր բուսիս շարքից դուրս եկած հրամանատարի փոխարեն իր վրա վերցրեց վաշտի հրամանատարությունը և հաջողությամբ կատարեց մարտական խնդիրը:

Նրանց և շատ ուրիշների մասին կուսակցական ակտիվում խոսեցին օրինական հպարտությամբ: Մեկ ամիս հինգ օրում դիվի-

զիան Մոլոչնայա գետի շրջանում ճեղքեց «Արևելյան պատվարի» երեք շերտ և մարտերով անցավ ավելի քան 200 կիլոմետր ճանապարհ, զգալի վնաս պատճառեց հակառակորդին և զբավեց մեծ քանակությամբ ռազմաավար:

Հայտնի է, որ պատերազմի առաջին ամիսներին, ժամանակավոր հաջողություններից հարբած և կույր հավատ ընծայելով «անպարտելիության» առասպելին, գերմանական զինվորները հավատում էին հիտլերյան Գերմանիայի հաղթանակին: Մոսկվայի մոտ գերմանացիների ջախջախումով հօդս ցնդեց կայծակնային պատերազմի առասպելը: Ստալինգրադից հետո հօդս ցնդեց գերմանական բանակի անպարտելիության առասպելը ևս, գերի զինվորները իրենց ցուցմունքներում, վկայակոչելով իրենց սպաններին, խոսում էին Հիտլերի կողմից պատրաստվող «նոր հարձակումների» մասին:

1943 թվականի ամռանը Ուկրաինայում գերի ընկած հիտլերականներն այլևս չէին խոսում «նոր հարձակման», Հիտլերի հրամանների մասին, նրանք նույնիսկ ջանում էին ցույց տալ, թե իբր դժգոհ են Հիտլերից, խոսք էին բացում պատերազմի անհեռանկարայնության, գերմանական թիկունքի զժվարությունների մասին: Նացիզմով արբեցած զինվորը դարձել էր Հիտլերի հու գործիքը: Նա ընդունակ չէր մտածելու Գերմանիայի փրկության մասին և դենքն ուղղելու գերմանական ժողովրդի իսկական թշնամու՝ Հիտլերի և նրա իշխանության դեմ:

Կուսակցական ակտիվի ժողովը դիվիզիայի կուսակցական կազմակերպությունների առաջնահերթ և անհետաձգելի խնդիրը համարեց՝ արագորեն ազատագրել Կախովկան և թշնամուն շարտեղ Դնեպրից այն կողմ:

Հաղթահարելով թշնամու դիմադրությունը Վերին և Ներքին Սերոգոզի գյուղերից այն կողմ, դիվիզիան քայլ առ քայլ հետապնդեց թշնամուն: Նոյեմբերի 2-ին նա ազատագրեց Կախովկան, Նոր Կախովկան և Բրիտանին: Թշնամին շարտվեց Դնեպրից այն կողմ: Դիվիզիան խոշոր ռազմաավար վերցրեց:

Թշնամին չհասցրեց պայթեցնել Կախովկայի և Բրիտանիի գործարաններն ու պահեստները: Մենք դրանք պահպանեցինք ռազմականություններից:

2. ԿԱՐՄՐԱԳՐՈՇ-ՆԻԿՈՊՈԼՅԱՆԸ

Հարավային ռազմաճակատի հրամանատարի հրամանով 1943 թվականի նոյեմբերի 5-ին 61-րդ դիվիզիան դուրս եկավ 44-րդ բանակի կազմից և, Կախովկա-Բրիտանիից երթ կատարելով մինչև Մեծ Լեպետիխայի հյուսիս-արևելյան շրջանը, մտավ 28-րդ բանակի կազմի մեջ: Սկսվեց Ուկրաինայի ազատագրության համար 61-րդ դիվիզիայի մարտերի նոր փուլը: Գիվիզիայի առջև մարտական խնդիր դրվեց մյուս զորամասերի հետ լիվիզիացնել գերմանացիների «Նիկոպոլյան» պլացդարմը:

Նոյեմբերի 18-ին Բուլշայա-Լեպետիխա քաղաքից հարավ-արևելք գտնվող «Նիկոպոլյան պլացդարմի» դիմաց 61-րդ դիվիզիան փոխարինեց 77-րդ և 320-րդ դիվիզիաներին:

«Նիկոպոլյան պլացդարմը» մեր հատվածում ուներ 25 կիլոմետր խորություն: Գերմանական հրամանատարությունը պլաններ էր հղանում այդ պլացդարմը օգտագործել Պերեկոպի վրա հարձակվող 4-րդ Ուկրաինական ռազմաճակատի թիկունքին ու կոմունիկացիաներին հարվածելու համար¹:

Բացի դրանից, պլացդարմը պաշտպանում էր Նիկոպոլի և Նիկոլակի արդյունաբերական շրջանները, որոնց արտադրանքը գերմանացիներն օգտագործում էին իրենց բանակի կարիքների համար: 61-րդ դիվիզիայի դիմաց հակառակորդի պլացդարմը պաշտպանվում էր 97-րդ լեռնահրաձգային և 9-րդ Ֆետևակային դիվիզիաների ու 560-րդ տանկային գումարտակի ուժերով: Նրանք ունեին տասնյակ «Տիգր» տանկեր, «Ֆերդինանդ» ինքնագնաց հրանոթներ և ռեզերվներ՝ պաշտպանության խորքում:

Նոյեմբերի 20-ին 61-րդ դիվիզիան հրետանու աջակցությամբ հարձակում սկսեց 66-րդ և 307-րդ զնդերի ուժերով: Նա պետք է ճեղքեր խրամատների երեք գիծ, գրավեր մի քանի ամրացված բարձունքներ ու ԳՁՏ-ներ: Աջթևյան 307-րդ գունդը, 19-րդ տանկային կորպուսի 40-րդ գվարդիական տանկային զնդի փոխգործողությամբ շարքից հանեց հակառակորդի առաջապահը, ընդհուպ մոտեցավ խրամատների առաջին գծին և հարվածն ուղղեց 0,7 բլուրին: Առաջ շարժվեց նաև 66-րդ գունդը, գլխավոր հարվածն ուղղեց 80,9 բար-

ձունքին (ուրիշ քարտեզներում այդ բարձունքն ունի 1,4 նշագիծ): Գերմանացիները իրար ետևից մարտի էին նետում նորանոր ստորաբաժանումներ: Հաջորդ օրը դիվիզիայի հրամանատարը ձախ թևում մարտի մեջ մտցրեց 221-րդ գունդը: Հարձակվում էին բոլոր երեք զնդերը: 307-րդ գունդը և 66-րդ զնդի աջթևյան ստորաբաժանումները ներխուժեցին գերմանացիների խրամատների առաջին գիծը, այդ նույն ժամանակ ձախ թևում 221-րդ զնդի ստորաբաժանումները նոնակներ նետեցին խրամատները: Գնդերը լցվեցին խրամատները, անխնա ոչնացրին թշնամուն: Կատաղի մարտերը շարունակվեցին մինչև նոյեմբերի 23-ը: Գերմանացիները, «Տիգր» տանկերի աջակցությամբ, օրվա ընթացքում մի քանի անգամ անցան հակագրոհի, բայց արդյունքի չհասան: Մեր զնդերն ամրացան գրաված դիրքերում: Նոյեմբերի 24-ի և 25-ի ընթացքում, համաձայն հրամանի, զնդերը կարգի բերեցին իրենց և նոյեմբերի 26-ին 19-րդ տանկային կորպուսի աջակցությամբ վերսկսեցին հարձակումը:

Մեծ դժվարությամբ և զգալի զոհերի գնով դիվիզիան գրավեց թշնամու խրամատների երկրորդ գիծը և առաջ շարժվեց մինչև 2,5 կիլոմետր: Հարձակումը շարունակելու համար ուժերն անբավարար էին: 307-րդ գունդը միայն օրվա երկրորդ կեսին ետ մղեց հակառակորդի շորս հակագրոհ: Այդպես շարունակվեց նաև հաջորդ երկու օրը: Սակայն կողմերի դրությունն մեջ էական փոփոխություններ տեղի չունեցան: Գնդերն ամրացան թշնամու խրամատներում:

Հարձակման առաջին օրը մի խումբ սպաների ուղեկցությամբ դիվիզիայի դիտակետ ժամանեցին 28-րդ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Գերասիմենկոն և ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Մելնիկովը: Մարտադաշտը ծածկված էր ծխով: Մարտիկները թշնամու փոթորկալի կրակի տակ սողեսող առաջ էին շարժվում:

Թե թշնամուն ինչպիսի հարվածներ էին հասցնում 61-րդ դիվիզիայի ռազմիկները, այդ մասին վկայում են գերմանական գերի գինվորները. «Միայն նոյեմբերի 20-ի մարտում, — իր ցուցմունքներում ասաց 9-րդ հետևակային դիվիզիայի 36-րդ զնդի 5-րդ վաշտի գինվոր էսնստ Շմիդտը, — մեր վաշտը կորցրեց իր կազմի կեսը»: 97-րդ լեռնահրաձգային դիվիզիայի 207-րդ զնդի 1-ին

¹ Տե՛ս А. М. Василевский, Дело всей жизни, стр. 357—358, 365—368.

վաշտի եֆրեյտոր Պատու Օստերմայերը ասաց. «Նոյեմբերի 20-ի ձեր հարձակման ժամանակ մեր վաշտը համարյա լրիվ ջախջախվեց, 80 մարդուց կենդանի մնաց 10 հոգի: Վաշտի հրամանատար օբեր-լեյտենանտ Նոյշտիֆտերը սպանվեց»: Նոյեմբերի 20-ի մարտերը շատ ահեղ բնույթ էին կրում, գերմանական հրամանատարությունը մեծ զոհերի գնով էր պահում «Նիկոպոլյան պլացդարմը»: Պաշտպանությունը անընդհատ համալրում էր թարմ ուժերով:

Նոյեմբերի 26-ի հարձակողական մարտերում դիվիզիան գրավեց 6,0, 2,0, 1,5, 1,4 (80,9) նշագիծ ունեցող բլուրները: 1,4 նշագիծով բլուրի վրա հարձակվեց 66-րդ գնդի այն վաշտը, որի հրամանատարն էր ավագ լեյտենանտ Բրիժակինը: Վաշտի գրոհին աջակցում էր գնդացրորդների խումբը՝ գնդացրային վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Ադամյանի գլխավորությամբ: Թշնամին համառորեն պաշտպանում էր ամրացված բլուրը: Վրճուական պահին ավագ լեյտենանտ Ադամյանը իր հետևից գրոհի տարավ հրաձիգներին ու գնդացրորդներին: Ադամյանի գլխավորած խումբն արդեն բարձունքի վրա էր, երբ թշնամու գնդացրի կրակահերթը կտրեց անվեհեր հրամանատարի թևը: Ծանր վիրավոր Ադամյանը գրպանից հանեց թաշկինակը, թաթախեց սեփական արյան մեջ, ամրացրեց սվինի ծայրին և գոչեց. «Առաջ»: Ռազմիկները ոչնչացրին հիտլերականներին: Ադամյանը կրկին վիրավորվեց և ընկավ հերոսի մահով: Այդ օրվանից Բրիժակինի հրաձգային վաշտի և Ադամյանի գնդացրային վաշտի ռազմիկները բարձունքը կոչեցին «Ադամյանի» անվամբ: Դիվիզիայի քաղբաժինը հեռախոսագիր ուղարկեց վաշտի հրամանատար Բրիժակինին: Ահա այն. «Մարտում Դուք անձամբ, ռազմիկներ Սամսոնովը, Ֆյոդորովը, Իվանովը, Պարչինը, Կնյաժևիչը և մյուսները հերոսական սխրագործություն կատարեցիք, գրավելով բլուրը: Հայրենասիրական պոռթկումով Դուք ետ խլված մեր հողակտորի վրա բարձրացրիք Ձեր վիրավոր ընկերոջ՝ Ադամյանի արյամբ ներկված դրոշը: Ձեր գործողությունները և Ադամյանի փառահեղ սխրագործությունը օրինակ կձառայեն բոլորի համար: Թող ուրեմն «Ադամյանի» բարձունքի վրա ծածանվող դրոշը մեզ բոլորիս համար լինի ֆաշիստական զավթիչների դեմ հաղթանակի խորհրդանիշ»: Հեռագիրը կայծակի արագությամբ հաղորդվեց բոլոր ստորաբաժանումներին:

Ադամյանի սխրագործության մասին համարյա մեկ ամիս շարունակ գրում էին կարմիրբանակային թերթերը¹:

61-րդ դիվիզիայի 66-րդ գնդի 3-րդ գնդացրային վաշտի հրամանատար Հակոբ Դանիելի Ադամյանի պարգևատրման թերթիկում կարդում ենք.

«3-րդ գնդացրային վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Հ. Դ. Ադամյանը հայրենական պատերազմի սկզբից մասնակցում է մարտերին և բազմիցս աչքի է ընկել գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված պայքարում... Երեք անգամ վիրավորվել է մարտերում և ոչ մի անգամ չի թողել մարտադաշտը...»

1943 թվականի նոյեմբերի 26-ին 1,4 բարձունքի վրա գտնվող հակառակորդի խիստ ամրացված դիրքերից տեղացող փոթորկալի կրակի տակ, որի հետևանքով մի քանի անգամ ընդհատվեց 3-րդ հրաձգային գումարտակի գրոհը..., ավագ լեյտենանտ Ադամյանը խիզախների փոքրիկ խմբի հետ, անձամբ հաստոցավոր գնդացրից կրակ վարելով, արհամարհելով մահը, հասավ թշնամու մարտակարգերին և արիարար ջարդեց գերմանական օկուպանտներին, թիկունքից սպառնալով նրանց: Թշնամին փոթորկալի կրակով Ադամյանի խմբին ստիպեց սեղմվել գետին: Ադամյանը ծանր վիրավորվեց, հակառակորդի գնդացրային կրակահերթը պոկեց նրա թևը, իսկ խմբին կործանում էր սպառնում: Տեսնելով ծանր դրությունը, ավագ լեյտենանտ Հ. Դ. Ադամյանը գրպանից հանեց թաշկինակը, ներկեց իր արյունով և մի ձեռքով հրամարեցրեց սվինի ծայրին, բարձրացրեց որպես կարմիր դրոշակ, գրոհի տարավ մարդկանց: Մահվան վտանգը շկանգնեցրեց խիզախներին: Ադամյանը երկրորդ անգամ վիրավորվեց գլխից, բայց ինչպես իսկական հայրենասեր՝ առաջինը բարձրացավ բլրի վրա և ծանր վիճակում ծածանեց արյունով ներկված դրոշակը:

Ավագ լեյտենանտ Հ. Դ. Ադամյանը ցուցաբերեց անձնական հերոսություն և խիզախություն, իրեն պսակեց հայրենիքի համար մարտնչող հերոս-ռազմիկի անթառամ փառքով: Իսկ նրա ռազմիկները բարձունքը կոչեցին Ադամյանի անունով:

Հ. Դ. Ադամյանին բարձունքի վրայից վերցրին այն ժամանակ, երբ նա գիտակցությունը կորցրել էր:

¹ Տե՛ս «Знамя победы», № 149, 29 ноября.

Ավագ լեյտենանտ Հ. Գ. Աղամյանը լիովին արժանի է Սուվե-տական Միության հերոսի կոչման հետմահու¹:

Նոյեմբերի 29-ին 61-րդ դիվիզիան անցավ պաշտպանության, որը ակտիվ էր ու ծանր, քանի որ հակառակորդը, բոլոր միջոցները գործադրելով, ճգնում էր վերականգնել կորցրած դիրքերը: Առան-ձին հատվածներում գերմանացիներին երբեմն հաջողվում էր նեղել մեր ստորաբաժանումներին, նրանցից ետ խլել այս կամ այն բլրակը կամ խրամատը: Բայց ամեն անգամ դրությունը վերա-կանգնվում էր: Այդպես շարունակվեց մինչև դեկտեմբերի 19-ը:

Դեկտեմբերի 20-ին դիվիզիան հարձակողական նոր գործողու-թյուններ ձեռնարկեց: Այն ուժեղացված էր հրետանային երկու գնդով, ծանր ականանետների դիվիզիոնով և «ԿՎ» 8 տանկերով: Ուժերի հիմնական միջոցները կենտրոնացված էին մարտական գործողությունների կենտրոնում՝ 307-րդ գնդի հարձակման հատ-վածում: Հրետանին երեք գնդի ուժերով ինչպես հարկն է գնդակո-ծեց հակառակորդի դիրքերը: Դա «Նիկոպոլյան պլացդարմում» մղված մարտական գործողությունների ամբողջ ժամանակաըն-թացքի ամենածանր մարտերից մեկն էր: Այն կարելի է անվանել յիբրային մարտ, որն երկու օր շարունակ վերածվում էր ձեռնա-մարտի: Առանձնապես հաջող էր գործում աջթևյան 66-րդ գունդը փոխգնդապետ Ն. Վեշտոմովի գլխավորությամբ: Հակառակորդը շտապ մարտի մեջ մտցրեց ռեզերվային ուժեր, կրկնեց հակազոհ-

¹ 1972 թ. դարձանք ես նամակ ստացա Ուկրաինայի կոմկուսի՝ Խերսոնի մարզկոմի քարտուղար ընկ. Կասյանենկոյից, որով նա խնդրում էր կուսակցու-թյան մարզկոմին հայտնել սովետական բանակի այն զորամասերի, ստորաբա-ժանումների ու ռազմիկների մասին, որոնք սխրագործություն են կատարել Խեր-սոնի մարզի ազատագրման ժամանակ: Ինչպես նաև ուղարկել այն փաստաթղթե-րը, որոնք մնացել են ինձ մոտ: Ես իսկույն պատասխանեցի: Հետո մարզկոմի օրգան «Նադ զնիպրոդսկայա պրավդա» թերթը 1972 թ., հուլիսի 23-ին հրատարա-կեց Ցու. Գուրորոդկոյի և Ս. Մայորովի մեծ հոդվածը «Աղամյանի բարձունքը» վերնադրով: «Աղամյանի բարձունքը» դարձել է Ուկրաինայի սրբազան հուշար-ձաններից մեկը:

Խերսոնի մարզի Վելիկոլեպետիխի շրջանի Գրիգորեսկայա ավանի պիոնե-րական դրուժինան կազմակերպել է «Աղամյանի թանգարան» և խնդրել դրուժի-նային շնորհել Աղամյանի անունը:

ները, բայց ապարդյուն: Մեր վաշտերը ամրապնդվեցին նվաճված բնագծերում:

«Նիկոպոլյան պլացդարմում» մղված դեկտեմբերյան մարտե-րը կրկին ցուցադրեցին դիվիզիայի ամբողջ անձնակազմի բարո-յական բարձր ոգին, մարտական կոփվածությունն ու հաղթելու վճռականությունը: 10-րդ գվարդիական կորպուսի քաղբաժնի պետ գնդապետ Բուզրովը, որ հարևան դիվիզիայի հրամանատա-րական կետից դիտում էր ձախթևյան 221-րդ գնդի գործողություն-ները, մեր մարտիկների խիզախության առթիվ իր հիացմունքն արտահայտելու համար զանգահարեց ինձ: Բայց կապն ընդհատ-վեց: Չսպասելով, որ կապը վերականգնվի, նա եկավ մեր դիտա-կետը, սկսեց ոգևորությամբ պատմել իր սպավորություններն ու գոչեց. «Այս ռազմիկների գործողությունները վեր են ամեն սպա-սելիքներից և նույնիսկ երևակայությունից»: Դեկտեմբերի 21-ի երեկոյան դիվիզիայի քաղբաժնում զրուցում էինք 221-րդ գնդի պրոպագանդիստ Նեսվետի հետ, որը երկու օր մասնակցել էր յիբ-բային մարտին: Քաղբաժնի ինֆորմացիայի հրահանգիչ Զինչեն-կոն ուզում էր նրանից իմանալ մարտերում աչքի ընկածների ազ-գանուններն ու կոնկրետ փաստեր: Կապիտան Նեսվետը պատմեց գումարտակի ծավալած մարտական գործողությունների մասին, շհիշատակելով և ոչ մի անուն: Իսկ Զինչենկոն համառորեն կոնկ-րետ անուններ էր պահանջում:

— Ես ո՞ր մեկի անունը տամ,— ասաց Նեսվետը,— մեկը մյու-սից լավ էր գործում, և ղժվար էր որոշել, թե ով էր աչքի ընկնում: Նրանք բոլորն էլ գրոհում էին համերաշխ, ոչ ոք ետ չէր մնում, իսկ կռվում էին ինչպես առյուծներ:

Սերժանտ գնդացրորդ Իվան Լանեցը միայնակ ետ մղեց գեր-մանական վաշտի հակազոհը, քանի որ նրա ջոկի հրաձիգները շարքից դուրս էին եկել: Միայն այդ մարտում Լանեցը շարքից հա-նեց 70 հիտլերականի: Այն դասակը, որի հրամանատարն էր կուս-կազմակերպիչ Սոբոլևը, ձեռնամարտի բռնվեց խրամատ ներխու-ժած հիտլերականների հետ:

Բլրի վրա գտնվող հենակետից հիտլերականները մեր հրա-ձիգներին շէին թողնում գլուխ բարձրացնել: Ավագ լեյտենանտ Ստեպանովը անձնակազմի հետ հրանոթը դրեց ուղիղ նշանառու-թյան և ոչնչացրեց բլրի վրա եղած բոլոր հիտլերականներին: Լեյ-

տենանտ Պլատոնովը ուղիղ նշանառությամբ հրկիզեց երկու թշնամական տանկ: Իր դիտակետից այս տեսարանին հետևող դիվիզիայի հրամանատար Կուզնեցովը շնորհակալություն հայտնեց Պլատոնովին:

Գերմանացիները չէին ուզում հաշտվել իրենց դիրքերի կորստյան հետ: Նրանք իրենց պաշտպանության բոլոր կրակակետերից հրետանային ու ականանետային հուժկու կրակ տեղացին մեր դիրքերի վրա: 55-րդ հրետանային հրետանավորների այն խումբը, որի մեջ էին 6-րդ մարտկոցի հրամանատար ավագ լեյտենանտ Կուչերենկոն, դասակի հրամանատար Մյախկին, ավագ սերժանտ Մարտինովը, եֆրեյտոր Լովակինը և կարմիրբանակայիններ Բոնգարչուկը, Կորշունովը և Կալաշնիկովը, շարժվեցին դեպի «Վիսոկայա դերեզմանոցը»՝ 6,0 բլուրը և խրամատավորվեցին առաջավոր գծի երկարությամբ, որպեսզի հայտնաբերեն հակառակորդի հրետանու և ականանետների կրակակետերը: Այդ պահին գերմանացիները, օգտվելով մշուշից և փոթորկալից կրակից, ընդհուպ մոտեցել էին մեր առաջավոր գծին, որպեսզի ներխուժեն մեր դիրքերը: Հրետանավորները ռադիոյի միջոցով կրակն ուղղեցին հակադրոհի պատրաստվող թշնամու դեմ: Ավագ լեյտենանտ Կուչերենկոյի և կարմիրբանակային Բոնգարչուկի համար գերի ընկնելու ռեալ վտանգ ստեղծվեց: Կուչերենկոն ռադիոյով հաղորդեց. «Մեր վրա նոնակներ են նետում: Սողունների վրա կրակ: Ինձ վրա կըր...»: Վ. Կուչերենկոն շկարողացավ ավարտել իր խոսքը: Նա զոհվեց: Կարմիրբանակային Ի. Բոնգարչուկը շարունակեց կրակն իր վրա պահել: Մանր վիրավորվելով որովայնից, նա հավաքեց վերջին ուժերը և պահանջեց, որ շարունակեն կրակը:



Գեկտեմբերն ավարտվեց, նրա հետ ավարտվեց նաև 1943 թվականը: Անհրաժեշտ էր ամփոփել տարվա արդյունքները: Այդ ժամանակաշրջանում 61-րդ դիվիզիան ոչնչացրել էր թշնամու 8.454 զինվոր ու սպա, 51 տանկ, 33 թնդանոթ և ինքնագնաց հրանոթ, 37 զրահամեքենա, 9 ավտոմեքենա, 136 գնդացի, 36 սայլ, ռազմամթերքի 9 պահեստ: Այդ թվերից «Նիկոպոլյան պլացդարմի» գեկտեմբերյան մարտերին բաժին էր ընկնում 29 տանկ, 19 դաշ-

տային և ինքնագնաց հրանոթ, լիովին ջախջախվեցին 97-րդ լեռնահրաձգային դիվիզիայի գնդերից մեկը և 560-րդ առանձին տուգանային գումարտակը: Միայն գեկտեմբերի 20-ի և 21-ի մարտերի ընթացքում ոչնչացվեց 1600 զինվոր ու սպա, 4 տանկ, մեկ ինքնագնաց հրանոթ, 33 հաստոցավոր գնդացի և այլն: Գերվեցին շատ հիտլերականներ, գրավվեց մեծ քանակությամբ ռազմաավար:

1943 թվականի դեկտեմբերի 31-ին ժամանեց 416-րդ դիվիզիան՝ լրիվ սպառազինված ու հանդերձավորված. սա պետք է փոխարիներ մեր 61-րդ դիվիզիային:

Դիվիզիայի հրամանատարը որոշեց նոր տարին անցկացնել զորամասերի հրամանատարա-քաղաքական կազմի հետ, հունվարի 1-ի ցեղեկը: Դժբախտաբար, 416-րդ դիվիզիան շհասցրեց դիշերը փոխարինել մեր դիվիզիայի բոլոր ստորաբաժանումներին: Այն շարունակվեց մինչև հունվարի 1-ի կեսօրը: Երբ, վերջապես, ամեն ինչ ավարտվեց, և մեր վերջին ստորաբաժանումները առաջավոր գծից ետ քաշվեցին, մենք մտանք մի հսկայական վրան, որտեղ նոր տարվա սեղան էր բացված:

Հենց այդ պահին հակառակորդը գրոհեց 416-րդ դիվիզիայի դիրքերը: Դիվիզիան չդիմացավ և թողեց իր դիրքերը: Մեզ հրամայվեց վերականգնել դրությունը: Մենք շտապեցինք մեր գնդերն ետ դարձնելու: Մեր բախտը բերեց՝ հրետանին հարձակվող թշնամուն դիմավորեց բաց դաշտում, իսկ հրաձգային զորամասերը առաջ նետվեցին նախքան թշնամու կողմից մեր խրամատների գրավվելը: Մեր մարտիկները գրավեցին 416-րդ դիվիզիայի թողած դիրքը և կանխեցին հիտլերականներին:

416-րդ դիվիզիան քննություն չբռնեց և հեռացավ: 61-րդ դիվիզիան դաժան մարտեր մղեց իր դիրքերի լավացման համար: Հենց այդ ժամանակ 66-րդ գնդի դասակի հրամանատար կրտսեր լեյտենանտ Ստեպան Կուչենովը կրկնեց Ալեքսանդր Մատրոսովի սխրագործությունը:

Հունվարի 15-ի գրոհներից մեկի ժամանակ կրտսեր լեյտենանտ Ս. Կուչենովի գլխավորած մարտիկների խումբը փորձում էր սողալով շրջանցել գնդացրային խիտ կրակը և դուրս գալ թշնամու թիկունքը: Գերմանացիները փոթորկալից կրակ բացեցին խմբի վրա: Կրակի գոտին շրջանցել շհաջողվեց, խմբին կործանում էր

զատագրման համար, ի պատիվ որի 61-րդ դիվիզիային շնորհվեց Նիկոպոլյան անունը: Դիվիզիան դարձավ Կարմրադրոշ-Նիկոպոլյան:

3. ԴՆԵՊՐԻ ԳԵՏԱՆՅՈՒՄԸ

Այն հատվածում, որտեղ 61-րդ դիվիզիան դուրս եկավ Դնեպրի ափը, գետանցումը ճանապարհ կբացեր աջափնյա Ուկրաինայի հարավային շրջանների լրիվ ազատագրման համար: Իսկ դա նշանակում էր, որ գերմանացիները ցույց կտան համառ դիմադրություն: Ուստի մենք պարզորոշ հասկանում էինք դա և պատրաստվում կոտրնլ թշնամու դիմադրությունը:

Դնեպրի գետանցման հսկայական դժվարություններն ամենից առաջ կապված էին տեղանքի ռելիեֆի հետ: Դնեպրի լայնությունը հասնում էր 500 մետրի, արևմտյան ափը գահավեժ էր ու բարձր: Գետափին գտնվող Միխայլովկա, Անաստասիևկա և Բաժանովկա բնակավայրերը վերածված էին հենակետերի: Արևմտյան ափի բարձունքներից լավ երևում էր արևելյան ափը և հարմար էր գրնդակոծման համար: Այստեղ վաղորոք ստեղծել էին ամուր պաշտպանություն:

Դնեպրի ձախ ափը՝ մինչև Շևչենկո գյուղը հինգ կիլոմետր լայնություն ունեցող ընդարձակ այդ տարածությունը, ծածկված էր ճահճուտներով ու լճերով, ափը ցածրադիր էր:

Կային տեխնիկական կարգի դժվարություններ ևս: Բոլորովին չունեինք գետանցման միջոցներ: Գերմանացիները նախօրոք բնակիչների նավակները խլել, քշել էին աջ ափը: Մեզ մնում էր գտնել այդ նավակները հակառակորդից խլելու եղանակը:

Մենք չէինք կարող մեր հույսը դնել ուժի վրա, որովհետև երկար, այն էլ ծանր մարտերից հետո դիվիզիայում քիչ մարդ էր մնացել: Լավագույնը, ինչից մենք կարող էինք օգտվել, դա մեր մարդկանց ջերմ հայրենասիրությունն էր ու փոքրաթիվ ուժերով թշնամուն հաղթելու նրանց պատրաստակամությունն ու հմտությունը: Քաղաքստիս ստույգ որոշեց յուրաքանչյուր կոմունիստի տեղը նախապատրաստվող օպերացիայում: Որոշվեց, որ առաջինը Դնեպրի աջ ափ անցնելու են կոմունիստները, կոմերիտականները և խիզախ կամավորները: Նրանց խնդիրն էր՝ հակառակորդից խլել

նավակներն ու դրանք բերել ձախ ափը. ստեղծել պլացդարմ և այն պահել մինչև օգնական ստորաբաժանումների մոտենալը. գործել ինքնուրույն, իրադրությունը համապատասխան: Նման օպերացիան կարելի էր իրագործել միայն զիշերով:

Հակառակորդի տեղանքի և կրակակետերի հետախուզումից հետո որոշվեցին գետանցման տեղերն ու գրոհի օբյեկտները: Փետրվարի 9-ի գիշերվա ժամը 1-ին սկսվեց Դնեպրի գետանցումը: Այդ ժամանակից շատ տարիներ են անցել: Այնուամենայնիվ, դժվար է հարմար բառեր գտնել արտահայտելու հայրենասիրական այն բուռն ոգին, որով համակված էին մեր մարդիկ Դնեպրը գետանցելիս: Այս կապակցությամբ կուզենայի համառոտակի պատմել 221-րդ գնդի նոր հրամանատար՝ Միխայլ Գրիգորևիչ Զորոլոտսկու մասին: Նախօրոք պետք է ասեմ, որ նրան չի կարելի առանձնացնել գնդից ու նրա մարդկանցից:

Շիշում եմ, դիվիզիայի հրամանատարը և շտաբի պետը գոհ չէին օպերատիվ բաժանմունքի պետ Զաբոլոտսկուց: «Տանել չեմ կարող, խմում է», — մի անգամ ասաց Կուզնեցովը: Դրանից հետո, որպես կոմիսար, հաճախ լրջորեն զրուցեցի Զաբոլոտսկու հետ, որոշակի պատկերացում կազմեցի նրա մասին: Բայց եզրակացությունս մեջ չշտապեցի: Երիտասարդ, գրագետ ու խոհական սպայի հանդգնությունը վկայում էր, որ նա ինչ-որ բանից կաշկանդված է: Մի անգամ Կուրանում, Զաբոլոտսկու հետ զրույցի ժամանակ, գետնատնակ մտավ փոխգնդապետ Ակոպովն ու առաջարկեց Զաբոլոտսկուն նշանակել իր գնդի շտաբի պետ:

«Զաբոլոտսկին ընդունակ սպա է ու լավ ընկեր: Նրան տվեք ինձ և չեք սխալվի», — ասաց Ակոպովը: Նա Զաբոլոտսկու մեջ իրեն էր տեսնում: Կուզնեցովը մեծ դժվարությամբ համաձայնեց: Որոշ ժամանակ անց Ակոպովին առաջարկեցին դիվիզիայի հրամանատարի շարային գծով տեղակալի պաշտոնը: Նրա պատասխանն էր. «Ծս գնդից կգնամ, եթե նրա հրամանատար նշանակվի Զաբոլոտսկին: Բայց սպասենք մեկուկես-երկու ամիս: Այդ ժամանակ ես հանգիստ կհեռանամ գնդից»: Բայց, ավա՜ղ, Ակոպովը զոհվեց, իսկ Զաբոլոտսկին գնդի հրամանատարությունն ընդունեց 10 ամիս անց, Նիկոպոլյան պլացդարմում, փոխարինելով վիրավոր փոխգնդապետ Սևկոյին:

Շևչենկո գյուղում Զաբոլոտսկին 78-ամյա Տրոֆիմ Օլեյնիկին

խնդրեց ցույց տալ Դնեպրի հիմնական հունի թաքուն մատուցը: Օլենյիկը ավագ լեյտենանտ Պալկովի 1-ին գումարտակը տարավ ճահճուտներով: Գետափին գումարտակն ընդհարվեց հակառակորդի պահակախմբի հետ, ընթացքից հարվածեց նրա թևին: Կորուստներ կրելով, գերմանական պահակախումբը նետվեց դեպի մոտորանավակներն ու անցավ գետի աջ ափը: Ռազմաավար մնաց միայն ռեաինե փշովի նավակը, որով կարող էին գետն անցնել միայն 8 մարդ: Զարդոտակին փնտրեց ու գտավ 4 մարդ վերցնող երեք ձկնորսանավակ: Այսպիսով, գունդը կարող էր միանգամից գետն անցկացնել 20 մարդ:

Առաջին խմբի հրամանատար նշանակվեց 3-րդ գումարտակի կուսկազմակերպիչ Գրոզդովը: Խմբի մեջ մտան գլխավորապես կոմունիստներ, գումարտակի կոմերիտական կազմակերպիչ Տարասովը և մի քանի հետախույզներ՝ Սմետանինի գլխավորով: Խմբում ստեղծվեց 3 ենթախումբ՝ նրանցից մեկին առաջադրանք տրվեց գետի ձախ ափը տեղափոխել գետանցման միջոցները, երկրորդին՝ պահել զրաված պլացդարմը, երրորդին՝ մանևրել: Զարդոտակին խումբը ղինեց ատոմատներով, նռնակներով ու հաստոցավոր զնդացրով, հանձնեց ռադիոկայան և հրամայեց գետի վրայով հեռախոսագիծ գցել: Փետրվարի 3-ի գիշերվա ժամը 1-ին խումբն անցավ Դնեպր: Գնդային հրետանին և ականանետները դրվեցին ուղիղ նշանառության և շարվեցին գետափին: Գումարտակները բաժանվեցին խմբերի, որոնցից յոթը քանչյուրը գիտեր գետանցման իր հերթը և գրոհի օբյեկտը աջ ափին:

221-րդ զնդին ղուգահեռ, ձախից, գետն անցավ փոխզնդապետ Վեշտոմովի 66-րդ գունդը: Կազմակերպչական տեսակետից այստեղ ամեն ինչ նույնն էր, ինչ որ 221-րդ զնդում: Բայց Վեշտոմովն ընդամենը ուներ մեկ նավակ, որով կարող էր գետն անցնել միայն 4 մարդ: Գունդն իր ուժերով փետրվարի 8-ի ընթացքում լաստեր պատրաստեց գետանցման համար: Նրանցով գետն անցավ առաջին խումբը, որին գլխավորում էր կոմունիստ Սամբեկովը:

Գրոզդովի խումբը գետի մեջտեղում ընկավ հակառակորդի ուժգին կրակի տակ: Փշովի նավակը ծակծկվեց զնդակներից և ջրասույզ եղավ աջ ափի մոտ: Խումբը կորցրեց 5 մարդ: Այի դուրս գալով Բաժանովկայի մոտ, խումբը գրավեց մոտորանավակը,

փշովի ու փայտե նավակներ և դրանք անմիջապես տեղափոխեց ձախ ափ: Գրոզդովը հարձակվեց Բաժանովկայի ծայրամասում գտնվող տան վրա և գրավեց: Սմետանինի խումբը ափ իջավ Բաժանովկայի մոտ և արագ բարձրացավ նրա թիկունքում գտնվող բլրալանջերի վրա: Գերմանացիները նետվեցին դեպի Գրոզդովի խումբը: Բանը հասավ ձեռնամարտի, խմբի դրուժունը դարձավ օրհասական: Այդ ժամանակ գերմանացիների թիկունքից հարձակվեց Սմետանինի հետախույզների խումբը: Գրավելով 3 տուն և գիշերային ծանր մարտ մղելով, Գրոզդովի խումբը ամրացավ Բաժանովկայի ծայրամասում:

Գետանցման միջոցներ ստանալուն պես մայրը Զարդոտակին արագորեն աջ ափ տեղափոխեց նորանոր խմբեր, իսկ նրանցից հետո զնդի շտաբի հետ գետանցավ նաև ինքը: Ժամը 3-ին նա արդեն աջ ափին էր: Գնդի հրամանատարը իսկույն կազմակերպեց Բաժանովկայից դեպի արևմուտք ընկած բարձունքների գրավումը և ամրացավ այնտեղ: Օգտվելով 221-րդ զնդի խլած գետանցման միջոցներից, 307-րդ զնդի հրամանատար Վալկովը արագորեն աջ ափ փոխադրեց մի սակավամարդ գումարտակ՝ այն ամրացնելով Բաժանովկայի հյուսիսային ծայրամասում:

Այդ նույն ժամանակ Սամբեկովի խումբը, առանց հապաղելու գետի ձախ ափ տեղափոխելով գետանցման միջոցները, կատարեց համարձակ մանևր. նա Միխայլովկայի վրա գրոհեց թիկունքից: Խումբն առաջին հերթին հարձակվեց այն տան վրա, որտեղ գտնվում էին թշնամու գումարտակի և վաշտերի հրամանատարները: Դատելով սեղանից, գերմանական սպաներն ընթրում էին ու կոնծում: Սամբեկովը, հետախույզներ Մորոզովը, Զագուլյան և մյուսները տան պատուհաններից նռնակներ նետեցին ներս այն պահին, երբ սպաները նստած էին սեղանի շուրջը: Նրանք բոլորն էլ սպանվեցին: Միխայլովկայում խուճապ սկսվեց:

Այդ ժամանակ Վեշտոմովը կարողացավ գետն անցկացնել կտրիճների երկրորդ խումբը: Նա Միխայլովկայի վրա արշավեց ուղղակի ափից: Գերմանացիները դեռ Միխայլովկայում էին, երբ այնտեղ եկավ զնդի հրամանատարը իր շտաբի հետ: Գունդը սաստկացրեց ճնշումը և առավոտյան կողմ Միխայլովկան մաքրեց հիտլերականներից:

Փետրվարի 9-ի լուսաբացին բոլոր երեք հրաձգային զնդերն էլ

Դնեպրի աջ ափին էին: Կարելի էր միայն զարմանալ գետանցման հաջողությունից: Մարտեր ծավալվեցին Բաժանովկա, Միխայլովկա և Անաստասևկա գյուղերի շրջանում: Հրետանին ձախ ափից պաշտպանեց հրաձիգներին: Դնեպրն անցած յուրաքանչյուր գումարտակում կար 50—60 ակտիվ սվին. այն ժամանակ դա միանգամայն բավարար էր համարվում: Դրանք կրակների և արհավիրքների միջով անցած մարդիկ էին: Այդ պատճառով էլ, երբ խոսում էին մեկի քաջություն մասին, դա դեռ չէր նշանակում, թե մյուսները ետ են մնում նրանից: Մարտական կոփվածքը մարդկանց մղում էր անսասանության և կոլեկտիվ հերոսության: Հենց այստեղ էլ նշենք, որ դիվիզիայի հրամանատարությունը հակառակորդին բարձունքների մոտ կանգնեցնելու և նրան հետապնդելու համար կրկնակի կրճատեց թիկունքային ստորաբաժանումների թիվը: 61-րդ դիվիզիայի անձնակազմի սխրանքն այն էր, որ Դնեպրի գետանցումը կատարվեց նվազագույն կորուստներով. չնայած շափազանց աննպաստ դիրքերին, մեր զորքերը գրավեցին պլացդարմներ ու ամուր պահեցին իրենց ձեռքում, համեմատաբար փոքրաթիվ ուժերով ետ մղեցին հակառակորդի բոլոր հակազորակները:

Գրաված պլացդարմում շատ անգամ էր ստեղծվում բարդ, անելանելի դրություն: Մի քանի օր շարունակ հաճախակի կրկնվող հակազորակները երբեմն ստեղծում էին այնպիսի իրավիճակ, երբ ոչնչացումը անխուսափելի էր թվում: Փետրվարի 9-ի ցերեկը գերմանացիները հակազորակի նետեցին ռեզերվային ուժերը և գրավեցին Բաժանովկան: 221-րդ զնդի շտաբը կտրվեց իր գումարտակներից: Շտաբի աշխատողները շրջանաձև պաշտպանություն գրավեցին տներում: Այդ ժամանակ թշնամին բարձունքների վրա հակազորակի անցավ գումարտակի դեմ: Այդ իրադրության մեջ զնդի հրամանատար Զաբոլոտսկին Կուզմենսկու գումարտակը բարձունքից շրջեց դեպի Բաժանովկա: Գումարտակն արագորեն գրավեց Բաժանովկան և նորից գնաց դեպի արևմուտք, դեպի բարձունքները:

Փետրվարի 10-ի առավոտյան թշնամին տանկերի աջակցությամբ հակազորակի նետեց հետևակային մի գունդ, Միխայլովկայի մոտ ոչնչացման սպառնալիք ստեղծելով 66-րդ զնդի համար: Թշնամին նեղեց մեր ստորաբաժանումներին, ստիպեց ետ քաշվել

300—400 մետր, գրավեց Միխայլովկայի մի մասը, 66-րդ գունդը դիմացավ ինչպես այս, այնպես էլ հաջորդ հակազորակներին:

221-րդ զնդի հատվածներից մեկում հակառակորդը դիրքից ետ շարտեց մի փոքրաթիվ խմբի, սպառնալով դուրս գալ գետափ: Մեր աչքերի առաջ զնդի հրամանատար Զաբոլոտսկին հակառակորդին ընդառաջ տարավ ինը շտաբային աշխատողների ու ավտոմատավորների: Թշնամին շղիմացավ սովետական ռազմիկների փոքրիկ խմբի ձեռնարկած հանդուգն գրոհին և նահանջեց:

Դիվիզիայի հրամանատարությունը զնդերի հետ գտնվում էր Դնեպրի աջ ափին, իսկ փետրվարի 10-ի առավոտյան գետն անցավ նաև դիվիզիայի շտաբի օպերատիվ խումբը:

Այդ օրերին ավագ հրամանատարներն էլ էին թշնամու դեմ կռվում ինչպես զինվորներ: Փետրվարի 10-ի օրվա վերջին դիվիզիան գրավեց 3 կիլոմետր լայնությամբ և միջին հաշվով կես կիլոմետր խորությամբ մի պլացդարմ: Տեղ-տեղ պլացդարմի խորությունը հասնում էր մինչև մեկ կիլոմետրի: Առափնյա իշխող բարձունքները հիմնականում գտնվում էին թշնամու ձեռքին: Աջ թևում դրանք մերթընդմերթ ձեռքից-ձեռք էին անցնում: Ենթադրյալ համառոտեմարտերը էական փոփոխություն չմտցրին պլացդարմում: Կա՛մ դիվիզիան պետք է գրավեր առափնյա բարձունքներն ու իր ձեռքում պահեր գրաված պլացդարմը, կա՛մ նետվեր գետը:

Կտրիճների այն խմբերը, որոնք առաջինն անցան գետը, զավթեցին 17 փոքր մոտորանավակներ: Դիվիզիան հնարավորություն ստացավ ոչ միայն մարդկանց արագորեն անցկացնել գետի աջ ափը, այլև այնտեղ տեղափոխել ականանետներ, ռազմամթերք ու սննդամթերք:

Փետրվարի 12-ի առավոտյան 307-րդ և 221-րդ զնդերը միաժամանակ գրոհեցին այդ շրջանի ամենաբարձր՝ 97,6 բարձունքը: 307-րդ գունդը բարձունքին հասավ հյուսիսից և ամրացավ կատարին, իսկ 221-րդ գունդը ամրացավ հարավ-արևելյան լանջերին:

Գնալով գետանցումը բարդանում էր, Դնեպրը ծավալվում էր, ջրի տակ առնում ճահճուտները, ծածկվում էր սառցակտորներով: Ռազմամթերքի փոխադրումը, առհասարակ թիկունքի կապը ընդհատվում էր: Վիթխարի ջանքեր էին պահանջվում ղինամթերք ու պարեն փոխադրելու համար: Դիվիզիայի և զնդերի թիկունքային ստորաբաժանումներն զբաղված էին միայն դրանով:

Հակառակորդը, բնականաբար, ձգտում էր օգտվել մեր դրժվարութիւններէ: Նա հակագրոհի էր նետում նոր ուժեր: Դիվիզիան տոկուն կերպով դիմացավ այդ բազում գրոհներին, աստիճանաբար բարելավեց իր դիրքերը, հաստատուն կերպով ամրացավ մերձդնեպրյան բարձունքների վրա:

Դնեպրի աջ ափին մղվող մարտերի օրերին, պլացդարմում դիվիզիայի 112-րդ սակրային գումարտակը կարգի բերեց դեպի Դնեպր տանող ճանապարհը, Դնեպրի վրա կամուրջ կառուցեց այն սնամեջ գլաններով, որ հակառակորդից խլել էին կտրիճների խրմբերը: Հենց որ սառույցն անցավ, այդ կամրջի վրայով տեղափոխվեց հրետանին: Պլացդարմում դրութիւնը արմատապես բարելավվեց: Դրանից անմիջապես հետո անցան նաև 5-րդ հարվածային բանակի զորքերը:

Պլացդարմում կարևոր դեր խաղացին սանիտարական ստորաբաժանումները, մասնավորապես զինվորական բժիշկները: Կուսկազմակերպիչ Դրոզդովի խմբից անմիջապես հետո, ավագ լեյտենանտ Պայկովի գումարտակի հետ գետն անցան գնդի բժիշկ բժըշկական ծառայութեան կապիտան Մահմեդ Քաթարովը և կրտսեր բուժաշխատողների խումբը: 66-րդ գնդի բժիշկ բժշկական ծառայութեան կապիտան Քամարա Կուզնեցովան գետանցման գիշերը իր անձնակազմի հետ անցավ Դնեպրի աջ ափը և Միխայլովկայում աշխատանքն սկսեց այն ժամանակ, երբ գերմանացիները դեռ գտնվում էին գլուղում: Օգոստոսի 10-ի առավոտյան 97,1 բարձունքի ստորոտում խփվեց բուժսանգումարտակի վիրաբուժական վրանը: Բարձունքի վրա հիտլերականներն էին: Վրանների վերևում սուլում էին գնդակները, շորս կողմը պայթում էին թշնամու ականներն ու արկերը: Բուժսանգումարտակի վիրաբույժներ Պիմեն Զուբինիձեն և Աշխեն Իգիթխանյանը, վիրաբուժական դանակներն ու պինցետները ձեռքներին, վրանի տակ վստահորեն կատարում էին իրենց գործը: Կարծես նրանց շէր էլ հասնում ահավոր պայթիւնների ձայնը:

4. ՆԻԿՈՒԱԵՎԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Դնեպրի գետանցումով և պլացդարմի գրավումով ավարտվեց Ուկրաինայի ազատագրման համար 61-րդ դիվիզիայի մղած պայ-

քարի երրորդ փուլը: Սկսվեց պայքարի շորրորդ փուլը, որը և դարձավ վերջինը: Դիվիզիայից գնաց Կուզնեցովը, նա ընդունեց 96-րդ գվարդիական դիվիզիան: Մեր դիվիզիայի հրամանատարութիւնը ժամանակավորապես ընդունեց շտաբի պետ գնդապետ Գուլովը:

Փետրվարի 26-ի լուսաբացին Դնեպրի աջ ափին հարձակում սկսեց 5-րդ հարվածային բանակը: 61-րդ դիվիզիան բլուրի վրա հարձակվեց Բաժանովկայից 3 կիլոմետր արևմուտք: Ճեղքելով հակառակորդի պաշտպանութեան առաջին գիծը, դիվիզիան մարտի մեջ մտավ երկրորդ գծի համար: Փետրվարի 27-ի առավոտյան նա հասավ Բլագովեշենկայի մատույցներին: Մարտի այս հատվածում վճռական դեր խաղաց դիվիզիային հանձնված հակատանկային գունդը: Նա առաջ անցավ հրաձգային ստորաբաժանումների մարտակարգերից և 40 հրանոթներից կենտրոնացված ավտոմատ կրակ բացեց հակառակորդի վրա: Սա դիվիզիային հնարավորութիւն տվեց արագ գրավել Բլագովեշենկան: Հակառակորդը ուժեղ դիմադրութիւն ցույց տվեց Բլագովեշենկայից այն կողմ: Երկու օր շարունակ դիվիզիան գրոհեց հակառակորդի դիրքերը, փետրվարի 29-ի գիշերը գրավեց դրանք և սկսեց թշնամուն հետապնդել, որպեսզի հակառակորդին հնարավորութիւն չտար ամրանալու հաջորդ բնագծերում: Հիտլերականները նահանջեցին Ինգուլեց գետի վրա նախապես պատրաստված բնագիծը:

Հաղթահարելով թշնամու դիմադրութիւնը Բլագովեշենկայի, Նովոկամենկայի, Պյատիխատկայի, Ֆեդերովկայի, Կոստրոմկա-Հոֆենտալի, Կալինինգորֆի և Ինգուլեց գետի շրջանում, դիվիզիան մարտերով անցավ ավելի քան 160 կիլոմետր: Հակառակորդին հետապնդելու ամբողջ ճանապարհին դաշտերում կարելի էր հանդիպել հրապուրիչ առարկաների, օրինակ՝ սափրիչ սարքերի, վառիչների, գրչահատների: Մարտիկները գիտեին, թե ինչ է թաքնված այդ առարկաների տակ՝ ական: Նենգ թշնամին ամեն միջոցի դիմում էր մեր զորքերի հաղթական առաջխաղացումը կասեցնելու համար:

Ազատագրված բնակավայրերի բնակիչները պատմում էին հիտլերականների անասելի շարագործութիւնների մասին: Բավական է բերել միայն մի օրինակ: Բնակիչներին ունկնդրելու համար դիվիզիայի քաղբաժինը Կալինինգորֆում թողեց մի խումբ ընկերների՝ ավագ հրահանգիչ մայոր Անտոն Պիլիպենկոյի զլխավորու-

թյամբ: Քնակիչները ցույց տվեցին այն վայրը, որտեղ հիտլերականները դադանաբար սպանել էին սովետական մարդկանց: Խրմբի կազմած ակտում գրանցված էր. Կալինինոգորֆի 800 բնակիչներ՝ ծերեր, կանայք, երեխաներ, սպանված էին խոր հանքահորի մոտ, իսկ դիակները նետվել հանքահորը:

Նիկոլաև քաղաքից արևելք գերմանական պաշտպանությունը կազմված էր 12 կիլոմետր ընդհանուր խորություն ունեցող լավ սարքավորված շորս բնագծերից, որոնցից վերջինն անցնում էր քաղաքի ծայրամասով:

Երկօրյա գրոհներից հետո, մարտի 22-ի առավոտյան դիվիզիան վիթխարի ջանքերի գնով հաղթահարեց առաջին բնագիծը և դուրս եկավ երկաթուղագծի մոտ: Երկրորդ բնագծի գրավումը դիվիզիայից խլեց անընդհատ մարտերի 6 օր:

Ընթերցողը հավանաբար նկատել է, որ խոսելով ստորաբաժանումների մարտական գործողությունների մասին, չենք հիշատակում ո՛չ վաշտերի, ո՛չ էլ դասակների անուններ: Գումարտականերում այնքան քիչ մարդ էր մնացել, որ վաշտերի ու դասակների փոխարեն գումարտակաները գործում էին գրոհային խմբերով: Այս խմբերը սողեսող մոտենում էին հակառակորդի խրամատներին, նետում էին նռնակները և ներխուժում այնտեղ: Նրանցից հետո խրամատներ էին ներխուժում և ուրիշները, խրամատային մարտ պարտադրելով հակառակորդին: Ահա թե ինչ էր պատմում կապիտան Ենիներ մի այդպիսի խմբի գործողությունների մասին. «Մեր կուսակցական կազմակերպությունը ստիպված էր այդ օրերին հատկապես շատ աշխատել: Մենք մարտական լավ ակտիվ էինք ստեղծել: Նրա մեջ էին մտնում Շեյխետը, Դանիլևսկին, Կունբերգենովը, կոմերիտականներ Տիմչենկոն, Սիվենկոն, Մարգարյանը, Ֆրոտիցկին, Լապչենովը և ուրիշ ռազմիկներ: Երկաթուղագծի ամրացված շրջանը գրոհելուց առաջ ես հավաքեցի ակտիվիստներին և նրանց առջև խնդիր դրեցի խիզախ գրոհի օրինակ ցույց տալ: Մարտում ոչ ոք գլուխ չպահեց: Երբ գրոհում էինք խրամատի վրա, առաջինը ելան Շեյխետը, Կունբերգենովը, Տիմչենկոն և Լապչենովը: «Առաջ, մեր առջևում Նիկոլաևն է», — գոչեցին նրանք և ներխուժեցին թշնամու խրամատը: Նրանց հետևից գնաց ամբողջ խումբը:

Մարտի 27-ին ճեղքելով հակառակորդի պաշտպանության երկրորդ բնագիծը, դիվիզիան սկսեց կրնկակոխ հետապնդել նրան, որպեսզի թույլ շտար գրավել հաջորդ բնագծերը: Սակայն, եթե այդ բանը հաջողվեց անել երրորդ բնագծի վերաբերյալ, ապա Նիկոլաևի դիմաց գտնվող չորրորդ՝ վերջին բնագիծը արդեն նախապես գրավված էր թշնամի զորքերի կողմից: Դիվիզիան մտավ Վոդոպայ արվարձանային գյուղը: Ըստ էության դա հարձակման համար ամենից անհարմար բնագիծն էր Գնեպրից հետո: Թշնամին Նիկոլաևի ծայրամասում զբաղեցնում էր իշխող բարձունքները՝ քաղաքային տների հետ միասին, իսկ մենք գտնվում էինք ավելի ներքև, ստորոտում: Միակ պաշտպանությունն էին ծառայում գյուղական խրճիթները: «Գերմանացիները ջրնլատեղում մեզ լավ ջրեցին», — ասում էին ռազմիկները և շէին կատակում: Միայն մարտի 29-ի գիշերը հաջողվեց ներխուժել քաղաք: Դիվիզիան, ինչպես և 5-րդ հարվածային բանակի մյուս միավորումները Նիկոլաևը հաջողությամբ մաքրեցին հիտլերականներից: Նիկոլաևի արագ ազատագրմանը նպաստեց 3-րդ Ուկրաինական ռազմաճակատի հաջող հարձակումը Նիկոլաևի հյուսիսից և 4-րդ Ուկրաինական ռազմաճակատի սրընթաց հարձակումը հարավ-արևելքից:

Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Ստալինը, ի թիվս ուրիշ զորքերի, շնորհակալություն հայտնեց նաև 61-րդ դիվիզիայի անձնակազմին:

Մարտի 29-ի առավոտյան հրաման ստացվեց 61-րդ դիվիզիայի շարժումը դադարեցնելու մասին: Մենք դիվիզիան շրջեցինք դեպի քաղաքի արևելյան մասը և զորամասերին հրամայեցինք կարգի բերել իրենց, հանգիստ տալ մարտիկներին: Դիվիզիան դարձավ Գերագույն գլխավոր հրամանատարության Զորակայանի ռեզերվը: Մենք հասկացանք, որ շուտով ռազմերթ ենք կատարելու:

Կարճատև դադարի օրերին, ինչպես խաղաղ ժամանակ, մենք օգտվում էինք նրա շնորհած «արտոնություններից»՝ հանգստանում էինք, լողանում, կարգի բերում մեզ ու նախապատրաստվում գալիք մարտերին: Գոլովլյովն ու ես դեռ նոր էինք նստել նախաճաշի, երբ ներս մտավ մի գնդապետ: Նա ներկայացրավ.

— Շացկով Անդրեյ Գեորգևիչ: Ձեզ մոտ նշանակված եմ դիվիզիայի հրամանատար:

Մենք նույնպես ներկայացանք:
Շուտով մեր դիվիզիան թողեց Նիկոլաևը:

V. ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՎԱԾԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

1. ԶՈՐԱԿԱՅԱՆԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ

Զորակայանի ռեզերվում եղած ժամանակ դիվիզիան կրկին անցավ 28-րդ բանակի կազմի մեջ: Բանակի նոր հրամանատարն էր գեներալ-լեյտենանտ Ա. Ա.

Լուչինսկին: Դժվար շէր կռահել, թե առաջիկայում ինչ իրադարձություններ են լինելու: Լինել Գերագույն գլխավոր հրամանատարությունից Զորակայանի ռեզերվում, այն էլ ամբողջ բանակի կազմով, կնշանակեր պատրաստվել մեծ մասշտաբի գործողության:

Դիվիզիան մի քանի օր անցկացրեց Նիկոլաևի մոտ: Զորքերը կարգի բերեցին իրենց, ամփոփեցին վերջին մարտերի արդյունքները. ստացվեց նոր համալրում, և մենք սկսեցինք նրա ուսուցումը: Ամեն ինչ պատրաստվում էր առաջիկա մեծ ռազմերթի համար:

Բեռնաթափվելով Նովոդեբովկայում, դիվիզիան կենտրոնացավ անտառում, Մանյուկի, Բելի Կոլոդեզ, Պիսարկա և Կրուրեն-րեժկա գյուղերի շրջանում, Գոմելից մոտավորապես 75 կիլոմետր դեպի արևելք: Այստեղ նա անցավ գեներալ-մայոր Պ. Բատիցկու 128-րդ հրաձգային կորպուսի օպերատիվ ենթակայությունը:

Այստեղ ևս ստացվեց նոր համալրում՝ մի մասը հոսպիտալներից, ազատագրված շրջաններից և աշխատանքային ճամբարներից, մի մասն էլ նորակոչիկներ: Համալրման 30 տոկոսից ավելին զինվորական գործին բոլորովին անտեղյակ մարդիկ էին: Մեր առջև խնդիր էր դրված յուրաքանչյուր դասակում պահպանել մարտերի մեծ դպրոց անցած փորձառու մարտիկների թեկուզ և փոքրիկ հենարան և հավասարաչափ նրանց միջև բաշխել ինչպես հոսպիտալներից եկած մարտական փորձ ունեցող մարտիկներին ու հրամանատարներին, այնպես էլ ռազմական ուսուցում չունեցած-

ներին: Անհրաժեշտ էր անհատական զրույց ունենալ համալրման յուրաքանչյուր մարտիկի ու հրամանատարի հետ, կազմակերպել նրանց ուսուցումը, հնարավորին չափ նպատակահարմար ու անսխալ կատարել բաշխումը. մի խոսքով՝ աշխատանք ինչքան ուզեք:

Զորքերի պատրաստման կենտրոնում էր դրված Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Ստալինի 1944 թվականի փետրվարի 23-ի № 16 հրամանը, որը զորքերի բոլոր տեսակների զինվորներից ու սերժանտներից պահանջում էր անդադար կատարելագործել մարտական վարպետությունը, լիովին օգտագործել մեր հիանալի մարտական տեխնիկան, իսկ սպաներից ու գեներալներին՝ «կատարելագործել զորքերի ղեկավարման արվեստը, մաների տակտիկան, զորքերի բոլոր տեսակների փոխգործողությունը մարտի ընթացքում, մարտական պրակտիկայի մեջ ավելի լայնորեն ու համարձակորեն ներդնել առաջավոր գվարդիական զորամասերի ու միավորումների փորձը, բարձր հիմքերի վրա դնել շտաբների ու թիկունքային զորքերի աշխատանքի կոլեկտիվներին, ամեն կերպ բարելավել ու զարգացնել մեր հետախուզությունը»: Հրամանը բովանդակում էր նաև հետևյալ կարևոր պահանջը. «Կրակի ու մանևրի հմուտ զուգորդմամբ թշնամու պաշտպանությունը ճեղքել ամբողջ խորությունը, շունչ քաշելու հնարավորություն չտալ թշնամուն, ժամանակին լիկվիդացնել մեր հարձակումը հակազորհենրով կասեցնելու թշնամական փորձերը...»: Գերագույն գլխավոր հրամանատարությունը հսկայական նշանակություն էր տալիս զորքերի կազմակերպվածությունը, կարգապահության և կարգ ու կանոնի ամրապնդմանը:

Պարապմունքները գնում էին օրական 12 ժամ: Բոլոր օդակների հրամանատարներն ու շտաբները աշխատում էին առանց ջանք ու եռանդ խնայելու: Զորքերի պատրաստման գործում կարեվոր տեղ էր զբաղում դիվիզիայի՝ հատկապես Դնեպրի մարտերում կուտակած մտապահական փորձի պրոպագանդան:

Կասկածից վեր էր, որ դիվիզիան առաջիկայում մարտեր է մղելու անտառապատ ու ճահճոտ տեղանքում, որը պահանջում է լայնորեն կիրառել ոչ մեծ ստորաբաժանումներն ու զրոհային խմբերը՝ հակառակորդի հենակետերը ոչնչացնելու համար: Համալրող զինվորների ու հրամանատարների առջև հանդես էին գալիս զրոհային խմբերի հրամանատարներն ու քաղաշխատողները,

որոնք պատմում էին թշնամու ամբուլթյունների ճեղքման գործում իրենց ձեռք բերած փորձի մասին:

Հրամանատարական-քաղաքական կազմը, կուսակցական կազմակերպությունները հիրավի մեծ աշխատանք ծավալեցին համալրումը դաստիարակելու ուղղությամբ: Նորեկների գալուց հետո դիվիզիայում եղան զինվորական կարգապահության խախտումներ:

Այդ կապակցությամբ պահանջվեց առավելագույնս ջանքեր թափել կարգապահությունը բարձրացնելու ուղղությամբ: Լայնորեն կիրառվեց անհատական և կոլեկտիվ զրույցների պրակտիկան: Զրույցների թեմաներն էին. «Կուսակցությունը սովետական ժողովրդի հաղթանակի կազմակերպիչն ու ոգեշնչողն է», «Կարմիր բանակի մեծ հաղթանակները Հայրենական պատերազմի ռազմաճակատներում», «Սովետական թիկունքի հերոսական աշխատանքը» և այլն: Գերագույն գլխավոր հրամանատարի 1944 թվականի փետրվարի 23-ի № 16 և մայիսի 1-ի № 70 հրամանները ընթերցվեցին բոլոր ստորաբաժանումներում: Դիվիզիայի նոր համալրումը աստիճանաբար մտավ հունի մեջ, սովորեց կազմակերպվածություն, կարգապահություն, տոգորվեց զինվորական պարտքի ու հրամանների անվերապահ կատարման գիտակցությամբ:

Ընթերցողն արդեն հնարավորություն ունեցավ ծանոթանալու կոնկրետ փաստերի հետ, որոնք վկայում են, թե որքան մեծ ու վճռական դեր էին խաղում կոմունիստները գերմանական զավթիչների դեմ մղված մարտերում: Նրանք հանդես էին գալիս ոչ միայն որպես զինվորական մասսաների քաղաքական ղեկավարներ ու կազմակերպիչներ, այլև, շխնայելով իրենց կյանքը, առաջինն էին նետվում մարտի ամենավտանգավոր տեղերը, իրենց ետևից տանելով մյուսներին: Պատերազմը խլեց կուսակցության հրաշալի զավակներից շատ շատերի կյանքը: Նրանց փոխարինում էին սովետական ուրիշ հրամանատարներ ու մարտիկներ: Կուսակցության շարքերը մշտապես համալրվում էին: Լենինի կուսակցության նոր անդամները այրվում էին առաջինը մարտի գնալու ցանկությամբ: Բավական է նշել, որ միայն 1943 թվականին 61-րդ դիվիզիայի կուսակցական կազմակերպությունների շարքերն ընդունվել են 1437 մարդ: Մարտական պայմաններում կուսակցության մեջ ընդունելության դժվարություններ կան: Դիվիզիայի կուսակցական հանձնաժողովի նիստերը առավելապես անց էին կացվում առա-

ջավոր գծի խրամատներում: Կուսհանձնաժողովի քարտուղար Լեվոն Մելքոնյանը գեներալ-մայոր Իգնատևի, մայոր Վերշագինի, կապիտաններ Վարդումյանի, Վահրամովի, Մանիայի և կուսհանձնաժողովի մյուս անդամների հետ լինում էին խրամատներում, քննարկում կուսակցական կազմակերպությունների որոշումները կուսակցության մեջ մարդկանց ընդունելու մասին: Խրամատներում, հակառակորդի կրակի տակ կուսակցության մեջ ընդունելու ակտն իսկ մեծ նշանակություն ուներ մարդու կյանքում: Դեպքեր էին լինում, երբ ոմանք դեռ կուսակցության տոմսը չառացած՝ զոհվում էին կամ վիրավորվում, բայց նրանք իրենց արդեն կոմունիստ էին համարում:

Քաղբաժինը հսկայական նշանակություն էր տալիս կուսակցական փաստաթղթերի շուտափույթ ձևակերպմանն ու հանձնմանը: Որպես կանոն, քաղբաժնի լուսնկարիչ Սուրեն Խոսրոնը կուսհանձնաժողովի հետ լինում էր այնտեղ, ուր կատարվում էր ընդունելությունը: Նա հենց այնտեղ էլ լուսանկարում էր ընդունվողներին: Քաղբաժնի հրահանգիչ Լիոնշուկը արագ ու կանոնավոր ձևակերպում էր կուսփաստաթղթերը, իսկ ընդունելության երկրորդ օրը քաղբաժնի պետը կամ նրա տեղակալը խրամատներում հանձնում էին դրանք:

Արագ աճում էին կոմերիտիության շարքերը: 1943 թվականին ՀամԿԿՄ շարքերն ընդունվեց 1554 մարդ, որոնցից նույն տարում 438-ը պարզևատրվեցին շքանշաններով ու մեդալներով: Եռանդուն աշխատանք էին կատարում կոմերիտիության գծով քաղբաժնի պետի օգնական Դոգադինը և ավագ լեյտենանտ Գուսևը:

Սակայն, Ուկրաինայում մղված մարտերից հետո դիվիզիայի հրաձգային ստորաբաժանումներում շատ քիչ կոմունիստներ ու կոմերիտականներ մնացին: Վաշտերում չկային կուսակցական և կոմերիտական կազմակերպություններ: Հարկավոր էր վերականգնել դրանք: Դա առաջիկա ճակատամարտերում վաշտերի քաղաքական ու կազմակերպական հաջողությունների ապահովման ամենակարևոր խնդիրն էր: Միայն 1944 թվականի մայիս ամսին կուսակցության մեջ ընդունվեցին 81 մարդ: Համալրման հետ դիվիզիա եկան կուսակցության 200 անդամ և անդամության թեկնածու: Ռազմերթի նախօրեին կուսակցական խավը դիվիզիայում

կազմում էր 10,2 տոկոս, իսկ կոմերիտականը՝ 10 տոկոս: Վաշտա-
յին կուսակցական կազմակերպությունները վերականգնվեցին և
ամրապնդվեցին:

2. ԾԵՂՔՄԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Մայիսի 31-ին դիվիզիան դուրս եկավ Նովոդիբովկայից,
գնաց արևմտյան ուղղությամբ և մտավ 1-ին Բելոռուսական ռազ-
մաճակատի կազմի մեջ, որի հրամանատարն էր բանակի գեներալ
Կ. Կ. Ռոկոսովսկին:

Դատելով երթի ուղղությունից (դեպի Կալինկովիչի), մենք
կարծում էինք, թե ստիպված ենք լինելու հարձակվել Պինսկի ճա-
հիճներով: Ուստի երթից առաջ հրամանատարներն ու քաղաշխա-
տողները առաջադրանք ստացան ուսումնասիրել այդ շրջանում
մարտական գործողություններ վարելու պայմանները և համապա-
տասխան աշխատանք տանել զորքերի մեջ, հանգամանորեն ու-
սումնասիրել հակառակորդի հենակետերը՝ բնակավայրերը, ճա-
նապարհները, անտառապատ և ճահճուտ տեղանքը, գրոհի պլանը,
այդ նպատակի համար օգտագործելով դադարները: Շտաբի և
քաղբաժնի աշխատողները շարժվում էին գնդերի հետ, խնդիր ու-
նենալով օգնել զորամասերի ու ստորաբաժանումների հրամանա-
տարներին: Դիվիզիայի հրամանատարությունը ուսումնասիրում
էր Պրիպյատ և Պրեշ գետերի մոտ պաշտպանվող գերմանական
2-րդ բանակի ուժերը:

Հունիսի 11-ին, մեծ դադարի ժամանակ, քաղբաժինն անցկաց-
րեց հրամանատարների քաղտեղակալների և քաղբաժնի աշխա-
տողների խորհրդակցություն, որտեղ քննարկվեց ճահճային պայ-
մաններում զորամասերի անձնակազմերը մարտական գործողու-
թյունների նախապատրաստելու աշխատանքի ընթացքը: Հաշվի
առնելով այն, որ դիվիզիան պետք է հաղթահարեր բազմաթիվ
ջրային արգելքներ, ճահճներ և հակառակորդի հենակետեր, իսկ
տեղանքի պայմանները խիստ սահմանափակում են մանևրի և
հրետանու ու մյուս տեխնիկայի լիարժեք օգտագործման հնարա-
վորությունները, հրամանատարներին ու քաղաշխատողներին
խորհուրդ տրվեց լայնորեն կիրառել փոքր ստորաբաժանումների

ու գրոհային խմբերի համարձակ գործողություններ ծավալելու
փորձված պրակտիկան:

Ելնելով լեհ, չեխոսլովակյան և գերմանական ֆաշիզմի կող-
մից ստրկացված մյուս եվրոպական ժողովուրդների ազատագր-
ման վերաբերյալ կարմիր բանակի ազատագրական միսիայի մա-
սին մեր կուսակցության Կենտրոնական կոմիտեի որոշումից և
նկատի ունենալով, որ մոտենում են եղբայրական Լեհաստանի
տերիտորիան սովետական զորքերի մուտք գործելու օրերը, քաղ-
աշխատողների և կուսկազմակերպությունների առջև դրվեցին հետև-
յալ խնդիրները. դիվիզիայի անձնակազմին պարզաբանել Լեհաս-
տանի քաղաքական ու տնտեսական դրությունը. իրենց երկիրը
ֆաշիստական գերությունից ազատագրելու գործում լեհ ժողովրդի
առաջադիմական ուժերի պայքարի կարևորությունը. պարզաբանել
կարմիր բանակի՝ լեհ ժողովրդին ֆաշիստական ստրկությունից
ազատագրողի՝ նպատակն ու խնդիրները:

Տասնհինգօրյա ռազմերթ կատարելով Բելոռուսական ՍՍՀ Գո-
մելի և Պոլեսիեի մարզերում, դիվիզիան հունիսի 14-ին դուրս եկավ
Գարբովիչի բնակավայրի շրջանը և դեռևս Պտիշ գետին չհասած
կանգ առավ: Պտիշի մոտ նա հակառակորդի հետ կովի շրոնվեց, այլ
հրամանատարությունը հրամանով շրջվեց դեպի հյուսիս-արև-
մուտք՝ ուղղություն վերցնելով դեպի Սլուցկ: Հունիսի 19-ին բանա-
կի հրամանատարը իր մոտ հրավիրեց կորպուսների ու դիվիզիա-
ների հրամանատարներին ու քաղբաժինների պետերին: Նա պար-
զաբանեց դժվարանցանելի անտառների ու ճահճների պայման-
ներում մարտեր մղելու առանձնահատկությունները, ընդգծեց
անընդհատ հետախուզություն կատարելու կարևորությունը: Լու-
չինակին խորհուրդ տվեց վճռական ուղղություններում ստեղծել
գրոհային զուսարտակներ: Առանձնապես ընդգծեց հաջորդ բնա-
գծերում թշնամուն ամրանալ թույլ չտալու նպատակով գործողու-
թյունների արագություն կարևորությունը:

Սկսվեց Բելոռուսական մեծ էպոպեան: Միաժամանակ հար-
ձակվեցին մի քանի ռազմաճակատներ՝ 1-ին Մերձբալթյանը, 2-րդ
և 3-րդ Բելոռուսականները, իսկ հաջորդ օրը՝ հունիսի 24-ին, 1-ին
Բելոռուսականը: Հաջողությունը ցնցող էր: Գերմանացիների
«Կենտրոն» բանակախմբի պաշտպանությունը մեր ռազմաճակատ-
ների կողմից ճեղքվեց ամբողջ խորությամբ: 1-ին Մերձբալթյան և

3-րդ Բելոռուսական ռազմաճակատների զորքերը թշնամու խմբավորումը շրջապատեցին Վիտեբսկում, իսկ 1-ին Բելոռուսականի զորքերը՝ Բորբույսկում: Հարձակման 9-րդ օրը 1-ին և 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների զորքերը միացան Մինսկից այն կողմ, շրջապատելով նաև հակառակորդի Մինսկի խմբավորման զորքերին: Դա սովետական բանակի ամենափայլուն հաղթանակներից մեկն էր հիտլերյան Գերմանիայի բանակի նկատմամբ:

28-րդ բանակը՝ գեներալ Լուչինսկու ղեկավարությամբ, հարձակվում էր 1-ին Բելոռուսական ռազմաճակատի գլխավոր հարվածի ուղղությամբ: Գերմանացիների պաշտպանությունը ճեղքելով Օզերիչի շրջանում, Լուչինսկու բանակը հյուսիս-արևմտյան ուղղությամբ հարված հասցրեց Սլուցկին, ռազմաճակատի հեծյալմեքենայացված միավորմանը հնարավորություն տալով հյուսիս-արևմուտքից շրջանցել Բորբույսկի գերմանական զորքերի խմբավորումը: Բանակի հարձակման շերտը անհամեմատ ավելի ճահճուտ էր: Բայց, շնայած դրան, նա հաջողությամբ առաջ շարժվեց դեպի նպատակը: Սլուցկում նա շրջվեց դեպի արևմուտք՝ դեպի Բարանովիչի:

Բանակի հրամանատարը 61-րդ դիվիզիան պահում էր երկրորդ էշելոնում: Նա կրնկակոխ հետևում էր առաջին էշելոնի զորքերին, և նրա առանձին ստորաբաժանումները միայն Սլուցկի շրջանում ընդհարվեցին հակառակորդի զորքերի փոքր խմբերի հետ, որոնք, ըստ կրկույթի, նահանջել չէին հասցրել: Այդ խմբերը ոչնչացվեցին հենց ընթացքից: Դիվիզիայի 55-րդ հրետանային գունդը Բելոռուսական ճեղքման առաջին օրվանից հարձակվում էր 128-րդ կորպուսի մյուս միավորումների հետ: Այս գունդը մարտերում պահպանել էր հրամանատարական-քաղաքական և շարային կազմի հիմնական մասը, օժտված էր բոլոր մարտական հատկություններով: Գունդը աչքի ընկավ Բելոռուսական ճեղքման ժամանակ: Բավական է նշել, որ Բելոռուսական ճեղքման ժամանակ զնդի 115 ռազմիկներ և հրամանատարներ արժանացան կառավարական բարձր պարգևների, որոնցից տասնմեկին կորպուսի հրամանատար գեներալ Բատիցկին անձամբ պարգևատրեց կրակային դիրքերում:

Հունիսի 27-ին տեղի ունեցավ ռազմաճակատային խորհրդակցություն, որին մասնակցում էին ռազմաճակատի, բանակների,

կորպուսների, դիվիզիաների ու բրիգադների ռազմական խորհուրդների անդամները և քաղօրգանների պետերը: Խորհրդակցությունում լավեց 28-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Ա. Ն. Մենիկովի ղեկուցումը բանակի զորքերի ռազմաքաղաքական վիճակի և 1-ին Բելոռուսական ռազմաճակատի հարձակման առաջին օրերին քաղօրգանների ծավալած գործունեության մասին: Ամփոփելով խորհրդակցության արդյունքները, ռազմաճակատի քաղվարչության պետ գեներալ-լեյտենանտ Գալաշևը հաղորդեց ռազմաճակատի հրամանատարի, ռազմական խորհրդի և քաղվարչության պահանջը՝ Բելոռուսական հարձակման շրջանում ամբողջ ջանքերը կենտրոնացնել մարտական ու քաղաքական խնդիրները հաջող կատարելու համար:



Շատ է գրվել ու խոսվել ժամանակավորապես օկուպացված տերիտորիաներում հիտլերականների կատարած շարագործությունների մասին: Բայց այն, ինչ մեր ռազմիկները սեփական աչքերով տեսան Բելոռուսիայում, անհնար է նկարագրել: Քաղաքների փոխարեն մենք տեսանք ավերակներ, լավագույն դեպքում շենքերի այրված կմախքներ, իսկ գյուղերի փոխարեն՝ մոխիր: Միայն կարելի էր ենթադրել, թե ինչ-որ ժամանակ այս տեղերում բնակավայրեր են եղել: Նույնիսկ անտառներն այլանդակված էին: Ոչ մի գազան ընդունակ չէ այն ամենին, ինչին ընդունակ է ֆաշիզմը: Ամենասոսկալի մղձավանջն անգամ կխամբեր հիտլերյան դաժան իրականության առջև: Փաշխտները տները հրկիզում էին ոչ թե հենց այնպես, այլ երբեմն կենդանի մարդկանցով կամ էլ իրենց իսկ գնդակահարած անմեղ մարդկանց դիակներով:

Քաղաքաժնի և դիվիզիայի թերթի աշխատողները հունիսի 27-ին և 28-ին կազմեցին ակտ Պոլեսիեի մարզի Հոկտեմբերյան շրջանի Կուրին և Լոմովիչի գյուղերում հիտլերականների կատարած գազանությունների մասին: Անտառներում ու ճահճներում այս ու այնտեղ ընկած էին անմեղ մարդկանց այրված դիակներ: Բնակիչները հավաքում էին դրանց մնացորդներն ու թաղում: Ոչ ոք չգիտեր, թե ում է թաղում: Հիտլերականները երեխաներին անգամ

սպանում էին վասն «զվարճության»: Սպանված երեխաների, կանանց ու ծերերի դիակների հետ լուսանկարվելը հիտլերականները «հերոսութուն» էին համարում: Ֆաշիստները գլխովին ոչնչացրել կամ գերության էին բռնել Բելոռուսիայի ամբողջ շրջանների մնացած բնակչությանը, իսկ բնակավայրերը հրկիզել: Կուրին ղյուղի բնակիչ Մատրյոնա Գրիգոկովիչը պատմում էր.

«Ապրում էինք անտառներում, թաքնվելով գերմանացիներից: Ուտելու ոչինչ չկար: Ձմռան մի գիշեր, քաղցած ու բոկոտն, մենք կարտոֆիլ ձեռք բերելու համար եկանք գյուղ: Գերմանացիները մեզ բռնեցին ու նույն օրն էլ բոլոր բնակիչներին հրամայեցին հավաքվել ժողովի: Մեզ լցրին մի մեծ տնակում: Այնքան մարդ էին հավաքել, որ հազիվ էինք կանգնելու տեղ ճարում, Մենք հասկացանք, որ սարսափելի բան է կատարվելու: Կես ժամ շանցած, մի սոսկալի ճիչ լսվեց: Պատուհանի մոտ կանգնած կանացից մեկը բղավեց. «Մեզ այրում են»: Նա առաջինը տեսավ կրակը: Տնակում մարդիկ իրար անցան: Կանայք փետեցին իրենց մազերը, երեխաները սարսափահար բղավեցին... Լսվեց այրվող ու փլվող պատերի ճարճատյունը: Բռնկեց, տնակը լցվեց խեղդող ծխով: Շնչելը դարձավ անհնարին: Ես մի ճեղք նկատեցի պատուհանի վրա: Փլվող ու այրվող գերանների կրակը լիզում էր մեզ, բայց ես ու մի ուրիշ կին գերմարդկային ճիգով մի կերպ դուրս նետվեցինք պատուհանից և թաքնվեցինք մարազի ետևում: Բոկոտն, կիսամերկ, ցրտից դողահար այստեղ նստեցինք մինչև երեկո: Տնակը մարդկանց հետ այրվեց մինչև վերջ, ամեն ինչ լոնց: Երբ մթնեց, գերմանացիները մարազի մոտ բերեցին շորս տղամարդու և մի երեխայի: Նրանց մերկացրին ու գնդակահարեցին: Իսկ մենք արդեն ապրելու մասին չէինք էլ մտածում: Ինքներս էլ չգիտեինք, թե որտեղից ուժ հավաքեցինք և մի կերպ հասանք անտառ: Գերմանացիները այդ օրը այրեցին հորս ու բոլոր բարեկամներին»:

Նույն գյուղի բնակիչ Անտոն Ժինկոն պատմում էր. «Ես ունեի կին ու երեք երեխա: Գերմանացիներն իրենց վիրավորների համար արյուն վերցնելու նպատակով սկսեցին հավաքել երեխաներին: «Չեմ տա», — բղավել էր կինս: Գերմանացիները գնդակահարել էին նրան էլ, երեխաներին էլ, իսկ տնակը՝ այրել: Ես այն ժամանակ նրանց հետ չէի, երբ եկա, միայն նրանց այրված դիակները տեսա: Խոսքերով չեմ կարող արտահայտել վիշտս: Միայն



Ա. Ա. Լուչինսկի, 28-րդ բանակի հրամանատար, այժմ բանակի գեներալ



Ա. Ն. Կուլգնեյով, 61-րդ դիվիզիայի նախկին հրամանատար



Պ. Յ. Բատիցկի, 38-րդ կորպուսի հրամանատար, այժմ Սովետական Միության մարշալ



Ա. Գ. Շացկով, 61-րդ
գիվիզիայի հրամանատար, որը
գիվիզիան տարավ մինչև Բեռլին



Գեներալ Շացկովը ստորագրում է Բեռլինի Անգալտի
բանցքը բռնացնելու հրամանը

մի բան եմ ցանկանում՝ վրեժ լուծել երեխաներիս, կնոջս համար, սեփական կյանքիս համար, հայրենիքիս համար»:

Այդ օրերին գիվիզիայի «Ձնամյա պոբեդի» թեթր գրում էր.

«Ռազմիկ: Գու շատ ես քայլել պատերազմի ճամփաներով, շատ բան ես տեսել, շատ բան լսել գերմանա-ֆաշիստական մարդակերների գազանոթյունների մասին: Իմացիր նաև Կուրին գյուղի ողբերգության մասին»:

Իմացիր, ռազմիկ, և հիշիր. գերմանացիները ողջ-ողջ այրել են 95-ամյա Ավդոտյա Իվանովնա Մացիգային, 85-ամյա Գրիգորի Գրիգորևիչ Մացիգուտին, 70-ամյա Վառվառա Գրիգորևնա Մելնիկին, 60-ամյա Մարիա Միխենևա Գրինկևիչին, 65-ամյա Պելագեյա Վարիվոնովնա Մարլուտին, մի տարեկան նիլա Մելնիկին, 9-ամյա Կոլյո Մացիգուտին, 16-ամյա Ելենա Սանովսկայային: Այս վշտալի ցուցակը կարելի է շարունակել: Միայն Կուրինում գերմանացիներն այրել են 300 մարդու և գյուղն իսպառ հրկիզել: Վրեժ լուծենք այս անմեղ մարդկանց համար»:

Ուրիշ ոչ մի կոչ այնքան ատելություն չէր բորբոքի թշնամու նկատմամբ, ինչպես այն իրականությունը, որ տեսանք մենք: Մենք գնացինք դեպի արևմուտք ֆաշիստական ճիվաղներից շուտափույթ վրեժ լուծելու և հարազատ եղբայրներին ու քույրերին հիտլերյան մղձավանջից շուտափույթ ազատելու բուռն ձգտումով:

Յ. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՎԱԾԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

28-րդ բանակը բավական լայն ճակատով հարձակվում էր Մոսկվա-Վարշավա խճուղու երկարությունը: Թշնամու ավիացիան իր գործողություններն ակտիվացնում էր մեր զորքերի գլխավոր հարվածի հատվածներում, ուժեղացնում էր ճանապարհները, իսկ հետախույզ-ինքնաթիռները՝ փորձում էին երևան բերել ռազմաճակատի ռեզերվների շարժումը:

Գեոևս Ալուցկի շրջանում գիվիզիայի հրամանատար գվարդիայի գնդապետ Շացկովը որոշեց գիվիզիան շարժել անտառային օժանդակ ճանապարհներով, խուսափել թշնամու ավիացիայի հարձակումներից: Գիվիզիան ամենավտանգավոր հատվածներն անցնում էր գիշերով: Տեղ-տեղ թշնամին համատարած գնդակոծում

էր անտառներն ու ճահիճները, սրբնթաց զնում էր դեպի Բարանո-
վիշի: Ընդհանրապես մեզ հաջողվեց խուսափել թշնամու ավիացիա-
յի հարվածներից: Հուլիսի 9-ի ցերեկը գերմանական ավիացիան ակ-
տիվացրեց իր հարձակումները: Կամենալով ստուգել գնդերի վի-
ճակը, կուսհանձնաժողովի քարտուղար փոխգնդապետ Լեոն Մել-
քոնյանի հետ արագ անցանք խճուղին, դուրս եկանք Կամիննո
գյուղից հարավ: Շուտով հայտնվեցինք զինամթերք տեղափոխող
մեծ ավտոշարասյան հետնամասում: Մեքենաները զնում էին եր-
կու շարքով: Շարասյունը շրջանցել անհնարին էր: Բարձր անտառը
փակում էր օդային դիտարկումը: Մեկը մյուսի ետևից անսպասելի
հայտնվեցին թշնամու ինքնաթիռները: Նրանք ցածրից թռան ան-
տառի վրայով և շրջվեցին դեպի շարասյան վերջնամասը: Գուրս
թռչելով մեքենայից, Լեոն Մելքոնյանը և վարորդը վազեցին ձախ,
ես ու ավտոմատավորը պառկեցինք ճանապարհի աջ կողմում:
Խումբ առ խումբ գալիս էին «Ֆոկեվուպներն» ու «հեյնկելները»,
որոնք նետելով ռումբերը՝ շրջադարձ էին կատարում և գնդակո-
ծում խոշոր տրամաշափի գնդացիներից: Առաջին խմբի ինքնա-
թիռների նետած ռումբերը դիպան արկերով բարձրած մեքենանե-
րին: Իրար ետևից պայթեցին արկերը: Գերմանացիներն օդից, իսկ
արկերի պայթյունները 30—40 մետր հեռավորությունից մեզ ստի-
պեցին սեղմվել գետնին: Մեծ դժվարությամբ մի կերպ հաջողվեց
հեռանալ ոմբակոծման գոտուց և զնալ դեպի ճահիճները: Վարորդ
Իվան Տոպոլը խիստ կոնտուզիա ստացավ, ականջներից արյուն
հոսեց, նա ո՛չ լսում, ո՛չ խոսում էր: Բայց նա հրաժարվեց զնալ
սանմաս և անմիջապես նստեց մեքենայի դեկի մոտ:

Գրիվդա գետի մոտ, Իվանցովիշի դիմաց, 61-րդ դիվիզիան
ելման դիրքեր գրավեց՝ հակառակորդի պաշտպանությունը ճեղքե-
լու համար: Գերմանացիները Գրիվդայի բնագիծը նախապատրաս-
տել էին վաղօրոք և դբաղեցրել ուղեբերվի զորքերով: Այն ուժեղաց-
վել էր ի հաշիվ նահանջող զորամասերի:

Հարձակման առաջին օրը՝ հուլիսի 11-ին, 307-րդ դուևդը,
հրետանային կրակի պաշտպանությամբ հաղթահարելով գետն ու
ճահիճը, ամրացավ Գրիվդայի հարավ-արևմտյան ափին: 221-րդ
գունդը գետն անցավ հաջորդ օրը: Երեք ժամ տեած կրակային
մարտից հետո գնդերը սրբնթաց գրոհեցին հակառակորդի վրա:
Նրանք հյուսիսից շրջանցեցին Իվանցովիշի հենակետը, նրանից

հյուսիս-արևմուտք գրավեցին մի քանի բնակավայրեր և ներխու-
ժեցին նրա հյուսիսային ծայրամասը: Դիվիզիայի ստորաբաժա-
նումները գործեցին բացառիկ համարձակություններ: Թշնամին երեք
անգամ հակադրոհեց, մարտի մեջ մտցնելով թարմ ուժեր: Բայց
նրա բոլոր հակադրոհները ետ մղվեցին: Հետևեց Իվանցովիշի գրո-
հը: Մեր ստորաբաժանումները ներխուժեցին քաղաք: Գերմանա-
ցիներն սկսեցին նահանջել, փորձելով պոկվել մեր հետապնդող
զորամասերից: Սակայն մեր զորամասերը հակառակորդին թույլ
չտվեցին օդտագործել միջանկյալ բնագիծը: Մեկ օրում դիվիզիան
անցավ 32 կիլոմետր և հուլիսի 13-ին դուրս եկավ Յասելդա գետի
մոտ:

61-րդ դիվիզիայի հարձակման գոտում թշնամին ուներ մի
քանի միջանկյալ բնագծեր, Գրիվդա, Վենեց, Գրադովկա ու Լես-
նայա գետերի մոտ և Բրեստի մատույցներում: Դիմադրության
միջանկյալ բնագծերը դիվիզիան ոչնչացնում էր երթից, իսկ
պաշտպանության հիմնական բնագծերում երբեմն հարկ էր լինում
հաղթահարել շատ դժվարություններ:

Յասելդա գետի պաշտպանական բնագիծը ամրացված էր հիմ-
նավորապես: Բնական պատվարը՝ ավելի քան մեկ կիլոմետր լայ-
նությամբ ճահճուտ ափերով գետը, նրա արևմտյան ափի ճահիճ-
ների երկարությամբ բարձունքների շարքերը, բազմաթիվ բնակա-
վայրերը հնարավորություն էին տվել ստեղծել խորքում հենակե-
տեր ունեցող մինչև 15 կիլոմետր ճակատային պաշտպանական
կառույցների սիստեմ: Գետի մոտ գտնվող Սելեց, Լեոշկի, Սամոյ-
լովիշև և Բերեզա բնակավայրերը վերածվել էին դիմադրության
ուժեղ հանգույցների և հարմարեցված էին շրջանաձև պաշտպա-
նության: Այս բնագիծը տիրապետող դիրք ուներ:

Գետի արևելյան ափը ցածր էր, հեշտ էր դիտվում և գնդա-
կոծվում արևմտյան ափից: Դեպի գետ տանող ուղին նեղ էր, միայն
վարչավայր խճուղին և երկաթգիծն են, որոնց երկու կողմերով և
գետի ափի երկարությամբ տարածվում են մանրի հնարավորու-
թյունները բացառող դժվարանցանելի ճահիճներ: Հարձակվել ճա-
նապարհների նեղ միջանցքով՝ հակառակորդի կենտրոնացած
կրակի տակ, կնշանակեր մեծ կորուստներ կրել և զրկվել մարտա-
կան խնդիրը կատարելու հնարավորությունից: Կավ բան չէր խոս-
տանում նաև գետի լողանցումը:

Յասելգայի գետափին դասավորված գերմանական զորքերը հրաման ունեին ինչ գնով լինի սովետական զորքերին թույլ չտալ մոտենալու Բրեստին: Բնագիծը պաշտպանում էր Պինսկ քաղաքի շրջանից տեղափոխված գերմանական 292-րդ դիվիզիան: Նա բաղկացած էր երեք հետևակային և մեկ հրետանային գնդից, առանձին հակատանկային դիվիզիոնից և երեք առանձին գումարտակներից: Պաշտպանությունն ուժեղացված էր դիվիզիային հանձնված 10 տանկով, չորս ինքնագնաց հրանոթով, չորս հրետանային ու երկու ականանետային դիվիզիոններով և զրահագնացքով:

61-րդ դիվիզիային վիճակված էր ճեղքել այսպիսի հզոր պաշտպանությունը: Մարտի վայր ժամանեց գեներալ Բատիցկին: Նա զննեց տեղանքը և հրամայեց Յասելգան գետանցել Սելեց-Սամոյլովիչի հատվածում, ճեղքել հակառակորդի պաշտպանությունը, գրավել Պլյախովչիգնի—Բլուդեն բնագիծը և հաջողությունը դարձրեց հարձակումը հարավ-արևմտյան ուղղությամբ:

Գնդերը պատրաստվեցին գետանցման:

Անհրաժեշտ էր հմտորեն կազմակերպել բոլոր ստորաբաժանումները և զենքերի բոլոր տեսակների փոխգործողությունը ամբողջ մարտի ընթացքում: Այս ուղղությամբ մեծ աշխատանք կատարեցին դիվիզիայի շտաբի և հրետանու հրամանատարի շտաբի սպաները: Կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները, հրամանատարներն ու քաղաշխատողները մարտի էին պատրաստում յուրաքանչյուր զինվորի, յուրաքանչյուր զնդացրի և հրանոթի անձնակազմի: Կրակային դիրքեր բերվեց անհրաժեշտ քանակությամբ ռազմամթերք: Մարտագաղտից վիրավորներին դուրս բերելու և նրանց անհասպաղ օգնություն ցույց տալու համար մորիլիզացվեցին առկա բոլոր ուժերը: Գնդերում գործում էին քաղբաժնի աշխատողների խմբեր:

Հակառակորդի կենտրոնացված և նշանառու կրակից խուսափելու համար որոշվեց գետն անցնել գիշերով: Հուլիսի 14-ի գիշերը 221-րդ և 307-րդ գնդերը մեկական գումարտակի ուժերով կատարեցին մարտով հետախուզություն: Այդ գումարտակները ոչ մեծ պլացդարմներ գրավեցին գետի արևմտյան ափին: Նրանք առավոտյան, հրետանու աջակցությամբ, անցան հարձակման: Աջ թևում 221-րդ գնդի գումարտակը՝ կապիտան Բուդանովի հրամա-

նատարությունը, համարձակ գրոհով հիտլերականներին դուրս բռնեց Լեոշկի ու Կուրովչիգնա-երկրորդ փոքր բնակավայրերից և գրավեց գրանը: Բայց պլացդարմն ընդլայնելու համար գումարտակին չհաջողվեց առաջ շարժվել: Հակառակորդը 168,3 տիրապետող բարձունքից կաշկանդեց նրանց, 307-րդ գնդի պլացդարմում փոփոխություններ տեղի չունեցան: Հուլիսի 15-ի գիշերը վերոհիշյալ գնդերի գլխավոր ուժերը հակատանկային հրետանու հետ անցան գրավված պլացդարմները:

Գիվիզիան բոլոր ուժերով հուլիսի 15-ի առավոտյան անցավ հարձակման: Փոխգնդապետ Վալկովի հրամանատարությամբ 307-րդ գունդը իր պլացդարմից ցատկ կատարեց և գրավեց 168,3 բարձունքը և Խոմիչե փոքր բնակավայրը: Հետո նա իր ուժերի մի մասը շրջեց դեպի հյուսիս-արևելք և գրոհով գրավեց ուժեղ ամրացված Սամոյլովիչե հենակետը: Փոխգնդապետ Զաբոլոտսկու 221-րդ գունդը հարձակման աջ թևում գրավեց Սելեց խոշոր բնակավայրի արևելյան մասը: Այսպիսով, դիվիզիան իր հիմնական ուժերով խրվեց թշնամու պաշտպանության կենտրոնը և գրանով իսկ լրջորեն դժվարացրեց հակառակորդի դիմադրության հանգույցների կապն ու փոխգործողությունը: Կատաղի բնույթ ստացան թևային մարտերը: Հակառակորդը տանկերի ու ինքնագնաց հրանոթների օգնությամբ ձեռնարկեց մի շարք հակագրոհներ: Միայն 307-րդ գունդը օրվա ընթացքում ետ մղեց 5 հակագրոհ: Շատ ավելի վտանգավոր կացություն ստեղծվեց դիվիզիայի աջ թևում: 221-րդ գնդի այն գումարտակը, որ գրավել էր Սելեց բնակավայրի մի մասը, հակագրոհի ենթարկվեց թշնամու հետևակի երկու գումարտակների և տանկերի կողմից: Ծանր մարտերում նա մասնատվեց: Հակառակորդը քրեցանի մեջ առավ գումարտակի երկու վաշտերը: Սրանք գրավեցին շրջանաձև պաշտպանություն և շարունակեցին կռվել: Ծանր էր նրանց դրությունը: Հակառակորդն ուզում էր ոչնչացնել նրանց, իսկ մյուս ստորաբաժանումները ետ շարտել գետի արևելյան ափը:

Գիվիզիայի հրամանատարը պլացդարմում ավելացրեց ուժերը: Սկզբում գետանցավ 66-րդ գնդի հրետանին: Հետո նա գնդի հրամանատար փոխգնդապետ Վեչտոմովին հրամայեց գնդի առաջին գումարտակն անցկացնել գետը և ընթացքից մտցնել մարտի մեջ: Շացկովը անձամբ առաջադրանք տվեց գումարտակի

հրամանատար կապիտան Ավդեենկոյին՝ հարձակվել 307-րդ և 221-րդ գնդերի կցվանքում Օսովցեի ուղղութեամբ. խափանել Սելեցի ու գերմանական պաշտպանութեան մյուս հենակետերի կապը. կտրել Սելեց—Բլուդենիի և Սելեց—Պրուժանիի միջև եղած ճանապարհը՝ խնդիր ունենալով 221-րդ գնդի փոխգործողութեամբ շրջապատել Սելեցը:

Կապիտան Ավդեենկոյի գումարտակն արագ ու անկորուստ անցավ գետը: Հակառակորդի ամբողջ կրակն այդ ժամանակ կենտրոնացել էր թևերում: Սելեցի թիկունքում ճանապարհը կտրելու գնացած գումարտակի վաշտի դեմ հակառակորդը նետեց մի վաշտ: Կապիտան Ավդեենկոն երթից շրջեց գումարտակը և մինչև թշնամու վաշտը կհասցնեի շուռ գալ, հարձակվեց նրա վրա: Ավդեենկոյի գումարտակի վաշտը կտրեց ճանապարհները և թիկունքից հարձակվեց Սելեցի վրա: Այդ ժամանակ կապիտան Ավդեենկոն ստեղծված իրադրությունից ելնելով գումարտակը տարավ Օսովցե: Նա գնաց-միացավ 307-րդ գնդի աջ թևին, գրավեց Սելեցը և այդ գնդի ստորաբաժանումների հետ գումարտակը շրջեց դեպի հարավ, սպառնալով կտրել գերմանական զորքերի՝ Բերեզայից նահանջելու ուղիները: Մեր ստորաբաժանումների կողմից Սելեցը գրավվեց երկու ժամ հետո, հուլիսի 15-ի ժամը 20-ին:

Դիվիզիան սրբնթաց հետապնդեց նահանջող հակառակորդին, նրան հնարավորություն չտալով ամրանալ Վեկեց գետի բնագծում: Նա հակառակորդին ջախջախեց Ստասյուկի բնակավայրի (Պրուժանիից 12 կիլոմետր արևելք) մոտ մղված մարտերում և նրան հետապնդեց հարավ-արևմտյան ուղղութեամբ: Գերմանացիների հետագա դիմադրությունը Կոզիցեի, Կամենկայի, Օրոպիցեի և Ստեպանկիի բնագծերում չկասեցրեց դիվիզիայի առաջխաղացումը: Ամրանալով ընդարձակ ու թավ անտառում, հակառակորդին հաջողվեց հատվածներից մեկում միայն մեկ օր կասեցնել դիվիզիայի շարժումը: Նրան անտառից դուրս քաշելու բոլոր փորձերն անհաջող անցան: Ժամանակն անցնում էր, երեկոյանում էր: Դիվիզիայի հրամանատար Շացկովը լրջորեն անհանգստանում էր:

— Ի՞նչ կարելի է ձեռնարկել, — ինքն իրեն ասում էր նա:

— Եկեք առաջ բերենք զենիթային վաշտը, փորձենք անտառը սանրել համալարելերով, պայթուցիկ գնդակներով, — ասացի ես:

Շացկովը կտրուկ ետ շարժվեց, զայրացած հայացքը սևեռեց դեմքիս, ձգվեց և գոչեց.

— Մյ դա միտք է: — Եվ հրամայեց մոտեցնել զենիթային վաշտը:

Զենիթային վաշտը ավագ լեյտենանտ Արամ Հարությունյանի հրամանատարութեամբ սանրեց անտառը: Դիվիզիան շարժվեց:

Ջախջախելով թշնամու պաշտպանական բնագծերը և հակառակորդին հետապնդելով, 61-րդ դիվիզիան հուլիսի 11-ից մինչև 22-ը Բելոռուսիայի անտառներով ու ճահիճներով անցավ մոտ 150 կիլոմետր և դուրս եկավ Բրեստի մոտակա մատույցները և սկսեց պատրաստվել քաղաքի գրոհին:

4. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՇՐՋԱՊԱՏՈՒՄԸ ԲՐԵՍՏՈՒՄ

Սակայն դիվիզիային չվիճակվեց գրոհել Բրեստի վրա: Հրամանատարությունը փոխեց քաղաքը գրավելու պլանը: 61-րդ դիվիզիան հուլիսի 23-ին ստացավ նոր առաջադրանք՝ քաղաքի հյուսիսում կտրել Բրեստից հակառակորդի նահանջի ճանապարհները և դուրս գալ Արևմտյան Բուգ: Նույն օրը երեկոյան դիվիզիան Բրեստից 13 կիլոմետր հյուսիս, Օմելինկա—Լեսովիչե շրջանում գրավեց նոր բնագիծ: Այս հատվածում, Գրադովկա և Լեսնա գետերի երկայնքով, դիվիզիայի առջևում ձգվում էին հակառակորդի պաշտպանության երկու գծերը: Հարկավոր էր հաղթահարել դրանք և դուրս գալ Արևմտյան Բուգ, որով կավարտվեի գերմանացիների շրջափակումը Բրեստում:

Անցնելով հարձակման, դիվիզիան հաջողութեամբ անցավ Գրադովկա գետը և հուլիսի 24-ի գիշերը գրավեց Բլյունկիչև և Չեռնովիչե բնակավայրերը, այնուհետև դուրս եկավ Լեսնա գետը:

Լեսնա գետի արևմտյան երկարութեամբ ձգվող բլուրների վրայով անցնում էին գերմանացիների պաշտպանության սիստեմի մեջ մտնող խրամատների զույգ գծերը և մի շարք կրակակետեր, իսկ պաշտպանության խորքում իշխող դիրք ուներ 185 բարձունքը: Գերմանացիները իրենց պաշտպանության թևերում դիմադրության հանգույցների էին վերածել Սուխարևիչե բնակավայրը՝ հյուսիսում և Կոզլովիչեն՝ հարավում, որոնք հարմարեցված էին շրջանաձև

պաշտպանութեան: Այդ բնագիծը պաշտպանում էին 102-րդ հետեւականային դիվիզիայի 84-րդ գունդը, 252-րդ պահակային գումարտակը, 5 տանկ և 10 ինքնագնաց հրանոթ, ինչպես նաև տրված երեք հրետանային դիվիզիոն և շորս ականանետային մարտկոց:

Դիվիզիայի հրամանատարը որոշեց աջթևյան 221-րդ գնդի ուժերով զխաւոր հարվածը հասցնել Սուխարևիչին և 185 բարձունքին:

Լեւնայի գետանցման հատվածը լավ դիտարկվում ու զնդակոծվում էր հակառակորդի կողմից: Այդ պատճառով էլ գնդի հրամանատար Զարուտսկին որոշեց նախ անցկացնել երկու վաշտ՝ գնդին տրված 232-րդ առանձին հրաձգային և գնդի 2-րդ հրաձգային վաշտերը: Իրենց հերթին 2-րդ վաշտի հրամանատար լեյտենանտ Մինասյանը և վաշտի քաղղեկ Եմելկինը որոշեցին կիրառել Դենկարի գետանցման փորձը՝ ստեղծեցին կոմունիստներից և կտրիճներից բաղկացած երեք հարվածային խումբ, նրանց հրամայեցին պլացդարմ գրավել և իրենց վրա վերցնել հակառակորդի կրակը, որպեսզի վաշտը հնարավորութուն ունենա արագ գետանցել: Այդպիսի խմբերից մեկը ղեկավարեց կոմունիստ կարմիրբանակային Դոմինը:

Հուլիսի 24-ի ցերեկը հրետանին կրակ տեղաց հակառակորդի պաշտպանութեան առաջավոր գծի երկարութեամբ: Կրակի պաշտպանութեան ներքո երկու վաշտերն էլ հաջողութեամբ անցան գետը և առանց դադար առնելու գրոհեցին հակառակորդի վրա, դուրս շարժվելով նրան Սուխարևիչի-Վելկի բնակավայրից: Այդ ժամանակ Վեշտոմովի 66-րդ գունդը գետի մյուս կողմում Կոզլովիչի գյուղի մոտ գրավեց ոչ այնքան մեծ պլացդարմ և նոր ուժեր անցկացրեց այնտեղ: 221-րդ գունդը, շնայած թշնամու ձեռնարկած հակազրոհներին, գրավեց գերմանացիների խրամատների առաջին գիծը: Օրվա ընթացքում Զարուտսկու ամբողջ գունդը և 66-րդ գումարտակներից մեկը անցան գետը: Այդ նույն օրը գունդը կատարի մարտերով հասավ 185 բարձունքի լանջերին և գրոհեց այն: Բայց թշնամին հակազրոհի նետեց իր տանկերը: Չունենալով հակատանկային միջոցներ, 221-րդ գունդը դադարեցրեց բարձունքի գրոհը և ամրացավ նրա լանջերին:

Հուլիսի 25-ի գիշերը 66-րդ գունդը լրիվ կազմով անցավ գետը: Դետանցել էին նաև հրետանին և հակատանկային դիվիզիոնը: Ժա-

մը 6-ին դիվիզիան գրոհեց 185 բարձունքը: Մարտերն ավելի կատարի բնույթ ստացան: 221-րդ գունդը ելավ բարձունքի կատարը: Այդ ժամանակ թշնամին հակազրոհեց դրա վրա գիշերը Բրեստից բերված հետակային գնդի ուժերով, 18 տանկով և մի քանի ինքնագնաց հրանոթով: Գունդը ստիպված եղավ թողնել բարձունքը: Այդ նույն ժամանակ թե՛ մարտեր էին գնում Կոզլովիչում: Օգտագործելով 66-րդ գնդի հաջողութունը, դիվիզիայի հրամանատարը մարտի մեջ մտցրեց 307-րդ գունդը: Հուլիսի 26-ի առավոտից 66-րդ և 221-րդ գնդերը հակառակորդին պարտադրեցին ուժեղ մարտեր մղել: Խնդիր էր տրված կաշկանդել հակառակորդի ուժերը: Հենց այդ ժամանակ 307-րդ գունդը, որ ուժեղացված էր 6 ծանր տանկով և 4 ինքնագնաց հրանոթով, հարվածեց հակառակորդի աջ թևին և գրավեց Զբորոմերովի բնակավայրը: Այդ հաջողութեամբ վճռվեց նաև 185 բարձունքի գրավման խնդիրը: Հակառակորդը դուրս բշվեց բարձունքից և սկսեց նահանջել:

Հուլիսի 27-ի առավոտյան դիվիզիան դուրս եկավ Արևմտյան Բուգի մոտ, ՍՍՀՄ պետական սահմանը, Բրեստից դեպի հյուսիսարևմուտք կտրեց հակառակորդի զորքերի նահանջի ճանապարհները: Բրեստից նահանջող գերմանական երեք դիվիզիաներն ընկան շրջապատման մեջ: Հերթի գրվեց եղբայրական Լեհաստանի ազատագրումը: Հուլիսի 28-ին 1-ին Բելոռուսական ռազմաճակատի ուրիշ միավորումների թվում 61-րդ դիվիզիան արժանացավ Գերազույն զխաւոր հրամանատարի շնորհակալութեանը: Դիվիզիան ներկայացվեց Սուվորովի շքանշանով պարգևատրման:



Այն դիվիզիոնների փորձը, որոնց անձնակազմի հետ ինձ վիճակվել է ճաշակել նահանջի դառնութունները և ապրել մեր հայրենիքի ազատագրման հրձվանքը, ակնառու կերպով ցույց տվեց, թե Հայրենական մեծ պատերազմի տարիներին Սովետական Միության կոմունիստական կուսակցության, սովետական կառավարության վիթխարի աշխատանքը ինչպես էր անմիջականորեն ազդում ջուրաքանչյուր մարտիկի ու հրամանատարի, յուրաքանչյուր զորամասի ու ամբողջ բանակի բարոյական ոգու և մարտու-

նակութեան, գերմանական ֆաշիզմի դեմ ռազմի դաշտերում մղու-
վող մարտերի ընթացքի վրա: Ու թեև փաստերը և կուտակված
փորձը, որոնց վրա ես հենվում եմ, հիմնականում սահմանափակ-
վում են երեք դիվիզիաների շրջանակներում, փոփոխութուններն
արմատական էին, մեծ մասշտաբների հասնող:

Պատերազմը շատ բան բացահայտեց: Ինչպես հայելու մեջ
ցույց տվեց մեր թերութիւններն ու բացերը: Գաղտնիք չէ, որ Հայ-
րենական պատերազմի առաջին շրջանում զորապետներից շատե-
րի մոտ պակասում էր ժամանակակից պատերազմ վարելու փորձը
և զորքերի կառավարման անհրաժեշտ վարպետութիւնը: Չէին
բավականացնում զենքի ժամանակակից տեսակները: Այս և մյուս
թերութիւնները, որոնք պատերազմի առաջին շրջանում նկատվե-
ցին մի շարք զորամասերում ու միավորումներում կարմիր բանա-
կի բնույթին անհարիր էին և թանկ նստեցին երկրին: Այլապես
ֆաշիստական զորքերը, չնայած ուժերի գերակշռութեանը, չէին
կարողանա հասնել մինչև Ստալինգրադ և Կովկասյան լեռները:

Սովետական Միութեան կոմունիստական կուսակցության և
սովետական կառավարութեան համար հեշտ չէր փոխել պատերազ-
մի ընթացքը: Դրա համար պահանջվեցին վիթխարի ջանքեր: Կու-
սակցության «Մեր գործն արդար է: Թշնամին կշախշախվի: Հաղ-
թանակը մերը կլինի» լուրուզը, «Ոչ մի քայլ հետ», «Մահու և կե-
նաց պայքար» անողոք կոչը ոչ միայն արտացոլում էին պատե-
րազմի արգարացի բնույթն ու պատերազմական դաժան ժամա-
նակների դժվարութիւնները, այլև հանդիսացան նրա շրջադարձի
ներքին ազդակը: Իսկ այդ շրջադարձը վրա հասավ, և նրանում
դրսևորվեցին Սովետական Միութեան կոմունիստական կուսակ-
ցության իմաստութիւնն ու հանճարը:

Ակամա հիշում եմ 1941—1942 թվականներին մղված մար-
տերը: Մեր ստորաբաժանումներում քիչ կային ավտոմատներ, զրն-
դացիներ, երբեմն չէին բավականացնում նույնիսկ հրացանները:
Սակայն մարդիկ կռվում էին, կռվում հերոսաբար: Շուտով փոխ-
վեցին ժամանակները, փոխվեց նաև սպառազինութեան պատկերը:
Օրինակ, 1944 թ. հուլիսին Յասելդա գետի մոտ մղված մարտերում
մարտական միավորների՝ գնդերի, գումարտակների ու դիվիզիոն-
ների, ներառյալ և նրանց հանձնված ստորաբաժանումների ուժե-
րի գերակշռութիւնը թշնամու կողմն էր: Մեր 61-րդ դիվիզիայի

դեմ պաշտպանվող 292-րդ գերմանական դիվիզիայի կազմում
ավելի կային՝ 2 առանձին գումարտակ, 6 հրետանային և ակա-
նանետային դիվիզիոն, 14 տանկ և ինքնագնաց հրանոթ: Նրանց
աջակցում էր նաև մի զրահագնացք: Սակայն իրականում կրակի
հզորութեան գերակշռութիւնը մեր՝ 61-րդ դիվիզիայի կողմն էր:
292-րդ գերմանական դիվիզիայի համեմատութեամբ մենք ունե-
ինք 3,85 անգամ ավելի շատ ավտոմատ, 1,5 անգամ ավելի շատ
հաստոցավոր գնդացի, 1,2 անգամ ավելի շատ բոլոր տրամա-
շափերի հրանոթ ու ականանետ: Բացի դրանից, այդ մարտից
առաջ մենք կորուստները լրացնելու համար գնդերում ունեինք
զենքի լրացուցիչ պաշարներ՝ ավելի քան 17000 ավտոմատ ու
հրացան, 60-ից ավելի հաստոցավոր, ձեռքի և զենիթային գնդա-
ցի: Ինչ վերաբերվում է ռազմամթերքին, ապա պետք է ասել, որ
մեր մարտիկներն ու հրամանատարները վաղուց մոռացել էին
«փամփուշտներ խնայել» բառերը:

Հարգելի ընթերցող, թերթեցեք սովետական բանակի հարձակ-
ման շրջանի օպերատիվ ամփոփագրերը և բանակային մամուլի
էջերը, և դուք դրանում շեք գտնի «տանկավախութիւն» և առհա-
ւելքով «վախ» արտահայտութիւնները, շեք գտնի մի այնպիսի
բան, որը հիշեցնէր թշնամու ավտոմատավորներին ու մոտոցիկ-
լիստներին, որոնց մասին խոսում էին պատերազմի առաջին շր-
ջանում: Կարծես դրանք բոլորովին էլ չէին եղել: Բելոռուսական
հարձակման ժամանակ, օրինակ, հաղթահարելով ջրային արգելք-
ները, շատ հաճախ 61-րդ դիվիզիայի հրաձգային ստորաբաժա-
նումները կարճ ժամանակով մնում էին առանց հրետանու և տան-
կերի: Թշնամին հակադրու էր անցնում նրա դեմ, մարտի մեջ
մտցնելով տանկեր: Սակայն դա չէր փոխում դրութիւնը: Վատա-
մտցնելով տանկեր: Սակայն դա չէր փոխում դրութիւնը: Վատա-
մտցնելով կանգնեցնում էին հարձակումը և ամրանում գրաված
բնազօծերում: «Տանկավախութիւնը» փոխադրվել էր հիտլերյան
բանակը:

Երբ խոսք է լինում դիվիզիաների և գնդերի մասին, առանձին
հեղինակներ ու թղթակիցներ անտեսում են նրանց կառուցվածքը:
Պատերազմի ընթացքում այդ կառուցվածքը ենթարկվեց էական
փոփոխութիւնների: Օրինակ, դիվիզիաների թվակազմը ըստ հաս-
տիքային ցուցակի, նախապատերազմյանի համեմատութեամբ բա-

վականին կրճատվեց: Դրա փոխարեն շեշտակիորեն ուժեղացավ զորամասերի ու միավորումների կրակային հզորությունը: Զինվորները մասսայաբար զինվեցին ավտոմատ զենքով, շեշտակիորեն ավելացավ զնդացիրների, ծանր ականանետների ու հրետանու նոր տեսակների քանակը: Մարդիկ մոռացել էին հրկիզող շշերի մասին և հազվադեպ հարկ էր լինում տանկերի դեմ նռնակների խրճեր գործադրել: Դրանց փոխարինելու էին եկել հակատանկային հզոր միջոցները, ինքնազնաց հրանոթներն ու մեքենայական քարշունեցող թնդանոթները: 45 մմ թնդանոթների կորուստները չէին վերականգնվում, դրանց փոխարեն գնդերն ստանում էին նոր տեսակի 76 մմ թնդանոթներ: Իր նշանակությունը կորցրեց նաև հակատանկային հրացանը: Սկզբում այն վերացվեց հակազնդացրային միջոցի, իսկ հետո գրեթե անհայտացավ: Ինքնազնաց հակատանկային հրանոթները շատ կարևոր դեր էին խաղում նաև հակառակորդին հետապնդելու ժամանակ:

Այս միջոցառումները փոփոխություններ մտցրին ինչպես մարտական ու թիկունքային ստորաբաժանումների, այնպես էլ սպառազինությունների թեթև ու ծանր տեսակներով զինված ստորաբաժանումների միջև եղած նախկին հարաբերակցություններում: Բանակը զինվեց նոր տեխնիկայով, զենքի շատ տեսակներ կատարելագործվեցին: Զորքերը կուտակեցին վիթխարի մարտական փորձ, շեշտակիորեն բարձրացավ մեր մարտիկների, ստորաբաժանումների, զորամասերի ու միավորումների վարպետությունն ու մարտունակությունը, կատարելագործվեց ռազմական արվեստը: Այս էր սովետական զորքերի մարտունակության բարձրացման ուղղությամբ կուտակցության ձեռնարկած կարևորագույն միջոցառումների էությունը: Ուժեղ թշնամուն հաղթելու հմտությունը դարձավ սովետական ռազմիկների՝ զորապետից մինչև զինվորը, բնորոշ գիծը:

Սովետական հասարակարգի կենսական մեծ ուժը արմատապես փոխեց ուժերի հարաբերակցությունը Հայրենական պատերազմի ռազմաճակատներում: Կարմիր բանակը վերազինվեց մարտական ինքնաթիռների, տանկերի, հրետանու, նավերի ու հրաձգային զենքի նոր տեսակներով: Նա առնականացավ, կոփվեց գոտեմարտերում, ձեռք բերեց ժամանակակից պատերազմ վարելու հսկայական փորձ: Սովետական Միության բարոյա-բա-

ղաքական գերազանցությունը հիտլերյան Գերմանիայի դեմ մղվող պատերազմում դարձավ երկրորդ համաշխարհային պատերազմի վախճանի վճռական գործոնը:

Հայրենական մեծ պատերազմում սովետական ռազմական արվեստի ամենափայլուն դրսևորումներից մեկը հանդիսացավ նաև Բելոռուսական օպերացիան: Մեկ ամսվա ընթացքում սովետական զորքերը մի քանի ուղղություններում ծայրեծայր ճեղքեցին հակառակորդի խոր էջելոնացված պաշտպանությունը ավելի քան 500 կիլոմետր խորությամբ, շրջապատեցին, ոչնչացրին ու գերի վերցրին հակառակորդի զորքերի խոշոր խմբավորումները: Կարմիր բանակի զորավարները չգերազանցված ռազմական արվեստ ցուցադրեցին: Այս ամենի մեջ ամենից առաջ դրսևորվեց լենինիզմի գաղափարների ու Սովետական Միության կոմունիստական կուտակցության ղեկավար մեծ ուժը:

Սեփական փորձով համոզվեցի, որ մեծ ու վճռական է հրամանատարի դերը մարտում, հատկապես գնդային օղակում: Մարտական գործողությունների ֆոնի վրա առավել ակնառու ընդգրծվում է գնդի հրամանատարի դերը: Գնդում ավելի պարզ է նկատվում, թե մարդիկ ինչպես են ձգտում հետևել իրենց հրամանատարի օրինակին: Ինչպիսին գնդի հրամանատարն է, այնպիսին էլ գունդն է: Ուկրաինայի ազատագրման համար մղված մարտերում մենք արդեն կարող էին հպարտանալ մեր բոլոր գնդերի հրամանատարներով: 66-րդ գնդի հրամանատար փոխգնդապետ Վեշտոմոլը, որ նախկինում դիվիզիայի քաղբաժնի պետն էր, առանձնապես աչքի էր ընկնում բարձր կազմակերպվածությամբ, լավ էր ճանաչում ենթականերին ու հոգատար էր նրանց նկատմամբ: Նա գումարտակների, վաշտերի, դասակների հրամանատարներին, սերժանտներին ու զինվորներին դաստիարակում էր խիզախ նախաձեռնություն ոգով, գիտեք նրանց առանձնահատկությունները: Սա օգնում էր նրան ճիշտ օգտագործելու ստորաբաժանումները մարտի ընթացքում: 221-րդ գնդի հրամանատար փոխգնդապետ Զաբոլոտսկին իր նախորդի՝ Ակոպովի օրինակով, որին գնդում «Չապաև» էին անվանում, իր մեջ լավ էր ներդաշնակում շտաբային աշխատողի փորձը, ամենից առաջ փոխգործողությունների կազմակերպումը, դրսևորում էր անձնական խիզախություն: Պատահական չէ, որ համազնդեցիները Զաբոլոտսկու մեջ տեսան

Ակոպովին: 307-րդ գնդի հրամանատար փոխգնդապետ Վալկովը ամենաերիտասարդն էր ու, հավանաբար, ամենաշրջահայացք մարտում: Նպատակին հասնելու վճռականությունն ու համառու-
թյունը, ցուցամուկության իսպառ բացակայությունը Վալկով հրա-
մանատարի բնորոշ գծերն էին: Գնդերի հրամանատարներից յու-
րաբանչյուրն ուներ իր առանձնահատուկ, ուժեղ կողմերը, որոնք
վերջին հաշվով անդրադառնում էին նրանց գնդերի մարտական
գործողությունների ընթացքի վրա: Այդ առանձնահատուկություննե-
րը դիվիզիայի հրամանատարը գնդերի մարտական խնդիրները
որոշելիս ահպայմանորեն հաշվի էր առնում: Բերենք մի այսպիսի
օրինակ, Նարեի մոտ գերմանացիների պաշտպանության հաղթա-
հարումը մեր սակավամարդ դիվիզիայի ուժերից վեր էր: Հարկա-
վոր էր դիմել ոխակի: Նման դեպքերում դիվիզիայի հրամանատարը
առաջին հերթին հույսը դնում էր 221-րդ գնդի վրա: Բայց Զարո-
լոտսկին չկար, նա ծանր վիրավոր էր: Գնդի նոր հրամանատար
մայոր Բոգդանովը Զարոլոտսկու արժանիքները չուներ: Շացկովը,
որ վճիռ կայացնելիս, միշտ չէ, որ հարցնում էր ուրիշների կար-
ծիքը, բազմիցս դիմում էր շտաբի պետ Իվչենկոյին և մյուս ընկեր-
ներին: Ընկերներն այն կարծիքը հայտնեցին, որ Բոգդանովի ան-
բավարար վճռականությունը կարող է բացասաբար անդրադառ-
նալ գնդի ստորաբաժանումների գործողությունների վրա: Նարեի
գետանցման ժամանակ և, բացի դրանից, ազդել մարտիկների
տրամադրության վրա ու վտանգի տակ դնել հետագա մարտերի
հաջողությունը: Շացկովը երկար ժամանակ որոշում չկայացրեց:
Վերջապես որոշեց 221-րդ գունդը թողնել իր սեղանի վրա:

Մարտերում վճռական դերը պատկանում է սպայական կազ-
մին: Հենց նրանք՝ սպաներն են զինվորների մասսային առաջնոր-
դում մարտի և թշնամու հետ բռնված գոտեմարտում իրականաց-
նում զորավարների մտահղացումներն ու շտաբների պլանները:
Կորպուսի հրամանատար գեներալ Բատիցկին, գիտենալով Յասել-
դայի մոտ հակառակորդի պաշտպանության բնույթը, հարձակման
որոշում չկայացրեց, մինչև որ անձամբ չստուգեց տեղանքը, չզրու-
ցեց գնդերի հրամանատարների հետ:

Կատարելով կորպուսի հրամանատարի հրամանը, դիվիզիայի
հրամանատար Շացկովն ընտրեց հակառակորդի պաշտպանության
զլխավոր հանգույց Բերյոզան և Սելեցը մասնատելու, այդ պաշտ-

պանությունը հարվածով երկու կես անելու, նրա փոխգործողության
սխտեմը քայքայելու տարբերակը՝ այն հաշվով, որ ստիպի նրան
թողնել իր ամրությունները: Մարտում հասուն նախաձեռնություն
դրսևորելու փայլուն օրինակ ցույց տվեց կապիտան Ավդեենկոն:
Հրաման ունենալով հակառակորդի պաշտպանության խորքում
գրավել Օսովիցե բնակավայրը, Ավդեենկոն, կշռադատելով իրա-
դրությունը, Սելեցում հակառակորդին շրջապատելու իր վաշտի
խնդրի կատարումը հեշտացնելու համար որոշեց գումարտակը
սկզբում տանել հյուսիս-արևմուտք, իսկ հետո՝ հարավ, դուրս դալ
հակառակորդի դիմադրության խոշոր հանգույցի՝ Բերյոզայի, թի-
կունքը: Կապիտան Ավդեենկոյի այս նախաձեռնության մեջ դրսե-
վորվում էր նրա կողմից ամբողջ պլանդարմի ուրիշի զգացողու-
թյունը:

Կատաղի մարտերում 61-րդ դիվիզիան մեծ հոգատարություն
էր ցուցաբերում սպաների, սերժանտների ու մարտիկների հիմնա-
կան կորիզի նկատմամբ: Դրա շնորհիվ էր, որ նա կարճ ժամկե-
տում ի վիճակի եղավ իր մարտական փորձը դարձնել նոր համա-
լրումների սևիականությունը և նրանց պատրաստել վճռական
մարտերի Բելոռուսիայում:

Մարտերում անզնահատելի դեր խաղացին կուսակազմակերպու-
թյունները: Մարտերի ընթացքում հատկապես մեծ կորուստներ էին
կրում կուսակցական կազմակերպությունները: Մի շարք հրաձգա-
յին վաշտերում կուսակցական կազմակերպությունները վերա-
կանգնվում էին մի քանի անգամ: Կոմունիստները զինվորների լա-
վազույն խորհրդատուն ու առաջամարտիկներն էին: Բելոռուսիայի
ազատագրման համար մղված մարտերում ավելի քան 500 զին-
վորներ, հրամանատարներ ու քաղաշխատողներ պարգևատրվեցին
շքանշաններով ու մեդալներով: Պարգևները հանձնվում էին մար-
տադաշտում: Միայն կորպուսի հրամանատար գեներալ Բատիցկին
անձամբ հանձնեց 78 շքանշան ու մեդալ:

Դեռ լրիվ չավարտված թշնամու կողմից օկուպացված սովետական հողի ազատագրումը, վրա հասավ պատերազմը ՍՍՀՄ սահմաններից դուրս տեղափոխելու ժամանակը: Սովետական բանակը ծավալեց՝ ֆաշիստական բռնությունից նվրուպայի ժողովուրդներին ազատագրելու պայքարը:

Բելոռուսիայի ազատագրության համար մղված մարտերի ընթացքում դիվիզիայի քաղբաժինը լայն աշխատանք ծավալեց անձնակազմը Լեհաստանի ազատագրման արշավին նախապատրաստելու ուղղությամբ: Իրա համար գործի անցան կուսակցական ակտիվիստները, հրամանատարները, քաղաշխատողները, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները: Նրանց համար դիվիզիայի մասշտաբով և զորամասերում անցկացվեցին սեմինար-խոսքեր և կոնսուլտացիաներ: Կարգացվեցին ղեկուցումներ կարմիր բանակի ազատագրական միսիայի, Լեհաստանի տնտեսական ու քաղաքական դրության, սովետա-լեհական հարաբերությունների, Լեհաստանի քաղաքական կուսակցությունների, կոնդոնում Լեհական էմիգրանտական կառավարության գործունեության, ազգային ազատագրության Լեհական կոմիտեի նպատակների ու խնդիրների մասին: Գումարտակներում, դիվիզիոններում, վաշտերում, ու մարտկոցներում անցկացվեցին զրույցներ, որոնց ընթացքում մերկացվում էր գերմանական ֆաշիստների պրովոկացիոն գործունեությունը Լեհաստանում: Այդ ամբողջ աշխատանքն ուղղված էր այն բանին, որ զինվորները Լեհաստանում հանդես գան որպես ազատարարներ, պահպանեն օրինակելի կարգ ու կանոն: Իրենց խիզախությամբ, օրինակելի վարքագծով և ճշմարտացի խոսքով նվաճեն Լեհ բնակչության հարգանքը, սովետական ռազմիկների մեջ Լեհերը տեսնեն իրենց ազատարարներին՝ կարմիր բանակի ու

սովետական պետության ազատագրական մեծ միսիայի կրողներին ու կատարողներին. Լեհ բնակչությանը պարզաբանեն, որ Լեհաստանը ազատագրելով ֆաշիստական բարբարոսներից, Սովետական Միությունն ուղում է, որ Լեհերը առանց օտարերկրյա միջամտության վերականգնեն իրենց իսկական ազգային պետությունն ու իրենց սովերենությունը: ՍՍՀՄ ժողովուրդներն ի դեմս Լեհաստանի ցանկանում են ունենալ ուժեղ հարևան երկիր:

Ինձ վիճակվել է հաճախ ելույթ ունենալ դիվիզիայի զորամասերում, լսել զինվորներին, հրամանատարների ու քաղաշխատողներին կարծիքները, պատասխանել նրանց հարցերին: Նրանք ուղում էին շատ բան իմանալ, մասնավորապես Լեհաստանում կոմունիստական շարժման՝ ՊՊՌ-ի գործունեության, Լեհաստանի ազգային ազատագրության կոմիտեի գործունեության և հետպատերազմյան սովետա-լեհական հարաբերությունների մասին. հիտլերյան Գերմանիայի դեմ մղվող պայքարին Լեհ ժողովրդի մասնակցության մասին. Լեհական ազգային ազատագրության կոմիտեի նկատմամբ հակահիտլերյան կռալիցիայի երկրների վերաբերմունքի մասին: Այս հարցերը վկայում էին Լեհաստանի հետպատերազմյան ճակատագրի նկատմամբ սովետական ռազմիկների ցուցաբերած մեծ հետաքրքրության մասին: Նրանք առիթ էին տալիս, որպեսզի դիվիզիայի քաղբաժինը ավելի լայն աշխատանք ծավալի զորքերի մեջ: Դիվիզիայում հաշվառման էին վերցված Լեհերեն իմացող տասներկու ընկերներ: Քաղբաժինը նրանց հատկապես պատրաստեց Լեհ բնակչության շրջանում աշխատանք տանելու:

1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲՈՒԳԻՑ ՄԻՆՉԵՎ
ՎԱՐՇԱՎՅԱՆ ՊՐԱԳՍ

Հուլիսի 28-ի երեկոյան 66-րդ և 307-րդ զնդերը Բրեստից 30 կիլոմետր հյուսիս-արևմուտքում փորձեցին անցնել Արևմտյան Բուրը: Գետի մյուս ափին պաշտպանվում էին գերմանական ջախջախված զորամասերի մնացորդները, որոնք բազմիցս իրենց վրա կրել էին սովետական զորքերի հարվածների ուժը: Գեռես ցերեկը դիտարկումների միջոցով պարզվել էր, որ հակառակորդի պաշտպանությունն անցնում է գետամերձ անտառով ու թփուտներով, պաշտպանության գծի առջև քաշված է փշալար, ահանապատված

են ճանապարհները: Գետը լավ էր դիտարկվում հակառակորդի կրակադիրքերից: Դիվիզիայի ուժերը մեծ չէին: Հրետանին չէր հասցրել կենտրոնանալ: Բայց մենք հույս ունեինք հաջողութեան հասնել, համոզված էինք, որ հակառակորդը Բելոռուսիայի մարտերից հետո դեռ ուշքի չի եկել:

Գերմանացիները նկատեցին Բուզն անցնող երկու վաշտին: Ափի երկարութեամբ ուժեղ կրակ տեղացին: Հրկիզող արկերից մեծ հրդեհներ բռնկվեցին Վելիչկովիչի, Կոստորի և Օուլա բնակավայրերում, լուսավորելով գետափն ու գետը: 307-րդ գնդի վաշտն ընկավ հակառակորդի ուժեղ կրակի տակ: Կորուստներ կրելով, նա ստիպված ետ դարձավ: Միայն 66-րդ գնդի ավագ լեյտենանտ Բրիժակինի 8-րդ վաշտը հասավ ձախ ափի մոտի կղզին և խրամատավորվեց: Հակառակորդն սկսեց զենքի բոլոր տեսակներից կրակել նրա վրա, բայց վաշտը աներեր մնաց: Իսկն ասած, հենց նա էլ դրեց հաջող գետանցման սկիզբը:

Կենտրոնացնելով հրետանին և գետանցման բոլոր միջոցները, Հուլիսի 30-ի գիշերը դիվիզիան վերսկսեց գետանցումը: Ձեռքի տակ եղած միջոցներով դեպի Բրիժակինի վաշտի գրաված կղզին լողաց 66-րդ գնդի կապիտան Ավդեենկոյի գումարտակը: Լուսադեմին Ավդեենկոյի գումարտակը և Բրիժակինի վաշտը հաջողությամբ իջան գետի ձախ ափը: Այդ նույն գիշերը գետն անցավ 307-րդ գնդի վաշտերից մեկը ևս: Նրանք գետափի երկարութեամբ նեղ շերտով պլացդարմ գրավեցին: Թշնամին անհաջող հակադրոհ ձեռնարկեց և մեր ստորաբաժանումներին թույլ չտվեց ընդարձակել իրենց պլացդարմը: Հուլիսի 30-ին, ժամը 14-ին, մեր հրետանին այնքան ուժեղ գնդակոծեց թշնամու դիրքերը, որ 66-րդ և 307-րդ գնդերի բոլոր ստորաբաժանումներն անկորուստ անցան գետը: Իսկույն ճակատամարտ սկսվեց պլացդարմն ընդլայնելու համար: Իրիկնադեմին դիվիզիան ուներ 1200 մետր ճակատով, 300—400 մետր խորությամբ պլացդարմ: Բայց հակառակորդը մեր ստորաբաժանումներին զամեց գետնին, շթողնելով բարձրանալ գրոհի:

Երեկոյան օպերատիվ իրադրությունն այդ հատվածում փոխվեց: Բանակի աջթևյան զորքերը, որոնք հարձակվում էին մեր դիվիզիայից ձախ՝ Բուզի ձախ ափի երկարութեամբ, սպառնացին հարավ-արևելքից շրջանցել Յանով Պողլյասկան՝ հակառակորդի գլխավոր հենակետը: Մեր դիվիզիան օգտվեց դրանից: Հուլիսի

31-ի ժամը 3-ին ամբողջ դիվիզիան գետի ձախ ափին բոլոր ուժերով անցավ հարձակման, երեք կողմից գրոհեց Վիզոդա ամրոցի վրա: Հակառակորդը դիմեց փախուստի: Հետապնդելով նրան, ժամը 6-ին դիվիզիան գրավեց Յանով Պողլյասկան:

Հիտլերյան ջախջախված զորքերը նահանջեցին արևմուտք: Լուչինսկու բանակը հետապնդեց նրանց: Այդ օրը 61-րդ դիվիզիան լեհական հողում առաջ շարժվեց 25 կիլոմետր: Ամենուրեք լավում էին լեհերի՝ իրենց ազատարարներին ուղղված ողջույնի բացահանություններ:

Նահանջելով, նենդ թշնամին իր ետև թողնում էր համատարած ականադաշտեր: Դիվիզիայի սակրավորները, ինչպես ասում են, շունչ քաշելու ժամանակ շունեին: Առանձին բնագծերում հիտլերականները Գերմանիայից նոր բերված հետևակի ու տանկերի ուժերով դիմադրում էին սրբնթաց առաջ սլացող մեր զորքերին: Սակայն հետևակի մարտակարգերում գտնվող հրետանին և մյուս հակատանկային միջոցները ճգնում, ոչնչացնում էին դիմադրող հակառակորդին: Անտառային հատվածները գնդակոծում ու սանրում էր զենիթային վաշտը: Գերմանացիներն ուժեղ դիմադրություն ցույց տվեցին Լոսիցե ավանի մատույցներում: Ամրանալով 188 բարձունքի և Լոսիցեից արևելք ընկած բլուրների վրա, նրանք փակել էին Սեդլեց քաղաքի մատույցները: Օգոստոսի 2-ին 307-րդ գունդը երթից մտավ մարտի մեջ, բայց հակառակորդին բարձունքից թշել չկարողացավ: 221-րդ գնդի կապիտան Բուդանովի գումարտակը նստեց դիվիզիային հանձնված տանկերի վրա: Տանկերը ճեղքեցին գերմանական 211-րդ հետևակային դիվիզիայի 306-րդ գնդի պաշտպանությունը նրա աջ թևում և հարվածեցին նրա թիկունքին: Հիտլերականները փախուստի դիմեցին, ընկնելով Բուդանովի գումարտակի ոչնչացնող կրակի տակ: Հակառակորդի 306-րդ գունդը ջախջախվեց: Տանկային խումբը ներխուժեց ու գրավեց Լոսիցեն:

Սեդլեց քաղաքը գրավվեց երթից: Այնուհետև դիվիզիան շարունակեց հարձակվել դեպի հյուսիս-արևմուտք, իր ճանապարհին ազատագրելով բազմաթիվ բնակավայրեր: Մենք հաղթահարեցինք բազում անտառային զանգվածներ, ճահիճներ և ջրային արգելքներ:

Լեհաստանում մղված առաջին մարտերի առանձնահատկու-

թյունն այն էր, որ 28-րդ բանակի հարձակվող դիվիզիաները շէին հանդիպում հակառակորդի պաշտպանության համատարած գծերի: Դրանք խախտված էին մեր զորքերի սրբնթաց հարձակման հետևանքով: Նահանջելով, գերմանացիները գլխավորապես դիմադրություն էին ցույց տալիս միջանկյալ բնական գծերում: Իսկ մենք հակառակորդին շրջանցում էինք թևերից և մատնում փախուստի: Օգտվելով փոքր դադարից, օգոստոսի 7-ին անտառում, Օսինի Դալնե (Սեդլեց քաղաքից 15 կիլոմետր հյուսիս-արևմուտք և Մոկոբոտի ավանից 6 կիլոմետր հյուսիս-արևելք) գյուղի մոտ անցկացրինք դիվիզիայի կուսակցական ակտիվի ժողով, որտեղ դիվիզիայի հրամանատար գվարդիայի զնդապետ Ա. Գ. Շացկովը զեկուցեց լեհաստանում մղված առաջին մարտերի արդյունքների մասին, իսկ ես՝ լեհաստանի քաղաքական գրություն և այդ կապակցությամբ կուսակցական կազմակերպությունների խնդիրների մասին:



Դատելով այն բանից, թե ինչպես էր ընտրվել ու սարքավորվել վարչավյան պաշտպանական գոտու ձախ թևի բնագիծը, կարելի է պնդել, որ գերմանական հրամանատարությունը արել էր առավելագույնը, որպեսզի անառիկ դարձնի այն: Մարտերով առաջ շարժվելով դեպի հյուսիս-արևմուտք, 128-րդ կորպուսի 130-րդ և 152-րդ դիվիզիաները, ցավոք, շէին կարող իմանալ, թե ինչ է իրենից ներկայացնում հակառակորդի պաշտպանության այդ սիտեմը: Բանակի, կորպուսի, դիվիզիաների հետախուզությունները համարյա ավելաներ շունեին հակառակորդի պաշտպանության բնույթի և ուժերի դասավորության մասին, իսկ թավ անտառների զանգվածները խիստ սահմանափակում էին դիտարկումները: 61-րդ դիվիզիան շարժվում էր կորպուսի երկրորդ էջելոնում: Օգոստոսի 12-ի երեկոյան համարյա հանապարհապատից այն մարտի նետվեց աջ թևում:

Վույտի-Ջավիշին բնակավայրերի գծի վրա հակառակորդի պաշտպանության հատվածը կիվեց գետի մոտ կազմում էր Սակլակ-Միշալդա պաշտպանական բնագծի մի մասը: Կիվեց գետի և նրա վտակ Օսովիցի միջև տարածված Ջավիշինը գերմանացիների այդ հատվածի պաշտպանության գլխավոր հենակետն էր: Ծակա-

տից այն պաշտպանում էին կիվեցի խիստ ճահճուտ ափերը, բազմաթիվ ջրամբարներն ու ճանապարհազրկությունը, ձախ թևից՝ գետահատվածքները, իսկ աջից և արևմուտքից՝ անտառային զանգվածը, որը հարմար էր ռեզերվները քողարկելու, մաների և ռազմամթերք տեղափոխելու համար: Պաշտպանության մատուցները ականապատված էին, ամրացված էին ինժեներական կառույցներով: Վույտի-Ջավիշին բնագիծը պաշտպանում էր գերմանական 5-րդ թևի և հետևակային ոստիկանական դիվիզիան, որն ուժեղացված էր շորս հրետանային դիվիզիոններով, երեք ծանր ականանետային մարտկոցներով, վեց փոզանի ականանետների մեկ մարտկոցով, հինգ ինքնագնաց հրանոթով:

Մեր դիվիզիայի հրաձգային ստորաբաժանումները շատ փոքրաթիվ էին, իսկ 55-րդ հրետանային գունդը կորպուսի հրամանատարի հրամանով աջակցում էր 152-րդ դիվիզիային: Գնդերն ունեին իրենց հրետանին և ականանետները, բայց շէր բավականացնում ռազմամթերքը: Զորքերն արագ շարժվում էին դեպի արևմուտք, իսկ մատակարարման բազաները մնացել էին ետևում, շխոսելով արդեն այն մասին, որ ճանապարհազրկությունն ու ճահիճները դժվարացնում էին ռազմամթերքի և կենսամթերքի փոխադրումը:

Օգոստոսի 13-ի առավոտյան փոխզնդապետ Վալկովի 307-րդ գունդը գրոհեց թշնամու վրա և առանց լուրջ ջանքերի նրան դուրս բերեց Սեկլակ գյուղից և Ստարովոլիեից արևելք գտնվող անտառից, այնուհետև գրավեց Ռուդե բնակավայրը: Բայց դրանով շարքից հանվել էր միայն հակառակորդի մարտական առաջապահը: Գնդի հրամանատարը հրամայեց Ռուդեն գրաված գումարտակին՝ շարունակել հարձակվել Ստարովոլիեի վրա, իսկ ինքը՝ մյուս գումարտակի գլուխն անցած շրջանցելով դետը, հանկարծակի ներխուժեց Ստարովոլիեի հյուսիս-արևմտյան ծայրամասը, համարյա առանց կորուստի գրավեց Ստարովոլիեն և դուրս եկավ Ջավիշինի մոտ: Այստեղ գունդը ընկավ ծանր դրություն մեջ: Ծակատից թշնամին գերակշռող ուժերով անցավ հակազորոհի, իսկ աջ թևից զնդակոծեց նրա հրետանին, իսկ զնդի աջ հարևանը հինգ կիլոմետր ետ էր մնացել:

Առավոտյան 307-րդ գունդը 66-րդ զնդի գումարտակի հետ գրոհեց Ջավիշինի վրա: Նրանց հաջողվեց կառչել մի քանի ծայ-

րամասային տներին: Բայց հակառակորդը ամբողջ թափով նետվեց այդ տների վրա: Գնդապետ Շացկովը մարտի մեջ նետեց ամբողջ 66-րդ գունդը: Գերմանացիներն օգնական ուժեր բերեցին, անցան հակազոր՝ իսկ պաշտպանության խորքից գնդակոծեց նրա հրետանին: Սակայն մեր գնդերը շերերացին: Օգոստոսի 15-ի մարտերը պարզեցին հակառակորդի պաշտպանության բնույթը:

Օգոստոսի 14-ին դիվիզիա վերադարձավ հրետգունդը, գնդերը որոշ համալրում ստացան: Օգոստոսի 16-ին ստացվեց դիվիզիան Սովորովի 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրելու լուրը, որը տարածվեց «Կարգա և հանձնիր ընկերոջը» թուղթիկ թերթիկների միջոցով: Դասակի հրամանատար կրտսեր լեյտենանտ Ֆեդոտովը գրում էր. «Ատելի թշնամու դեմ մղվող պայքարում մենք շատ ենք ցուցադրել կովելու մեր կարողությունը: Այս մարտում էլ, ընկերներ, ապացուցենք, որ արժանի ենք պարգևի»: Դիվիզիայում առաջին անգամ հաջողությամբ անցկացվեց հակառակորդի խորքային հետախուզություն: Ավագ սերժանտ Բոգդանովը, ռադիստ նիկոլաենկոն և կարմիրբանակայիններ Շեբերդինն ու Խալտուրինը գաղտագողի թափանցեցին հակառակորդի թիկունքը, հետախուզեցին նրան ու ռադիոկայանի միջոցով կարևոր տեղեկություններ հաղորդեցին հակառակորդի կրակադիրքերի, զորքերի կուտակումների ու շարժման մասին, արդյունավետ կերպով կարգավորեցին մեր հրետանու կրակը:

Օգոստոսի 18-ին, ժամը 10-ին, մեր հրետանին ուժեղ գնդակոծեց հակառակորդի առաջավոր դիժը, իսկ հրաձգային երեք գրնդերը միահամուռ գրոհեցին Զավիշինի վրա: Պայմանավորվեցինք, որ ձախ հարևանը թշնամուն գրոհելու է մեզ հետ միաժամանակ: Մարտը ծայրահեղ լարված էր: Հակառակորդը բոլոր միջոցներով դիմադրում էր, բայց չդիմացավ մեր ստորաբաժանումների ճնշմանը: Ըստ օպերացիայի պլանի, գնդերը միաժամանակ հասան մարտի առաջին փուլում իրենց առջև դրած նպատակին: Զավիշինը գրավվեց: Բայց դա չթուլացրեց մարտի լարվածությունը: Հետապնդելով հակառակորդին, 221-րդ գունդը Զավիշինից արևմուտք դուրս եկավ անտառ: Նա գրոհվեց հակառակորդի գերակշիռ ուժերի կողմից և սեղմվեց Զավիշինի արևմտյան ծայրամասին: Դա ստիպեց, որ երեքս նաև 66-րդ գնդի աջ թևի ստորաբաժանումը: Հենց այդ բույներն մարտիկների շղթայում հայտնվեց փոխգնդա-

պետ Զաբոլոտսկին: Կարծես հրամանով, շորս կողմից զոչեցին. «Գնդի հրամանատարը մեզ հետ է, գերմանացիները չեն անցնի»: Գնդի հրամանատարի ներկայությամբ ոգևորված մարտիկները ետ շարտեցին հակազոր՝ անցած թշնամուն: Հատուկ խիզախությամբ կովեցին ավագ լեյտենանտներ Դուբովի և Դրոզդովի վաշտերը: Օրվա ընթացքում գերմանացիները վեց անգամ անցան հակազոր՝ Սակայն Զավիշինը տոկուն կերպով պաշտպանվեց մեր ստորաբաժանումների կողմից: Կովում էին անխտիր բոլորը՝ և հանձնակատարները, և ձիավորները, և տնտեսական դասակները, և շտաբային ու թիկունքային սպաները: Ամբողջ գնդային հրետանին բերված էր ուղիղ նշանառությամբ: Հակազոր՝ ելած գերմանացիները գնդակահարվում էին դիմահար կրակով: Մարտը հանդարտվեց միայն մութն ընկնելուց հետո:

Օգոստոսի 19-ի ժամը 4-ին հայտնի դարձավ, որ հակառակորդը նահանջում է: 66-րդ և 221-րդ գնդերը մեկական գումարտակ առանձնացրին թշնամուն հետապնդելու համար: Նրանց ետևվից շարժվեցին գնդերը: Մեր գումարտակները հիտլերականների ուսերի վրայով ներխուժեցին ու գրավեցին Բոժոմի բնակավայրը: Լուսադեմին հակառակորդը գերակշռող ուժերով հակազորահեց և ստիպեց մեր գնդերին նահանջել անտառ՝ Բոժոմից արևելք: Անտառում մարտ բռնկեց: Փոխգնդապետ Զաբոլոտսկին այդ ծանր բույներին մարտիկների հետ էր և նրանց կողքին կովում էր ինչպես զինվոր: Նա ծանր վիրավորվեց: Սիրելի հրամանատարի համար վրեժխնդրությամբ լցված մեր մարտիկներն անցան գրոհի: Արևաքամ հակառակորդը նահանջեց և օգոստոսի 20-ի գիշերը Բուզի վրայով անցավ Կամենոչիկ: Վերջին փոքր մարտը դիվիզիան վարեց Իլի-Կուկավիկի բնագծում՝ Արևմտյան Բուզից հարավ: Հակառակորդը շարժվեց Բուզից այն կողմ, և վարշավյան պաշտպանական գոտու նախամատույցը լիկվիդացվեց ձախ թևում:

Ծանր էր հաշտվել այն մտքի հետ, որ շարքից դուրս էր եկել գնդի անվեհեր հրամանատար փոխգնդապետ Զաբոլոտսկին՝ ամբողջ դիվիզիայի անձնակազմի սերն ու համակրանքը նվաճած այդ տաղանդավոր սպան: Մենք ամբողջ ժամանակ հետևում էինք նրա բուժման ընթացքին տարբեր հոսպիտալներում: Հետքերը մեզ հասցրին Բաբու և հանկարծ ընդհատվեցին: Կարճ ժամանակ հետո հայտնի դարձավ, որ նա շարունակում է բուժումը, բայց, ցավոք, այլևս շարք չվերադարձավ:

2. ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ԼԵՀԵՐԸ

Ֆաշիստական գերության ավելի քան հինգ տարիները թանկ նստեցին լեհ ժողովրդին: Նրա ավելի քան վեց միլիոն զավակներ զոհվեցին կամ ոչնչացվեցին համակենտրոնացման ճամբարներում: Միայն Սուխոթեբրի գյուղի մոտ գտնվող ճամբարում հիտլերականները գնդակահարել էին 30.000 լեհ ուսանողներին: Հազարավոր լեհեր զազանաբար սպանվել էին Ստարոպոլիե գյուղում: Այս փաստերը մենք արձանագրեցինք և ուղարկեցինք բանակի քաղաքաժին: Լեհաստանը կողոպտված էր, կործանված ու ամայացած: Ֆաշիստները ավերել էին արդյունաբերական ու առևտրական ձեռնարկությունները, տրանսպորտը, ուսումնական և գիտական հիմնարկների շենքերը, բնակելի տները: Լեհաստանի մայրաքաղաք Վարշավան հիմնովին ավերված էր: Քայքայվել էր գյուղատնտեսությունը:

Հասկանալի է, լեհերը տարբեր ըմբռնումներ ունեին Սովետական Միության և նրա բանակի նկատմամբ: Չէր կարելի հաշվի չառնել տասնամյակներ շարունակ ՍՍՀՄ-ի դեմ Լեհաստանի ռեակցիոն կառավարողների վարած թշնամական քաղաքականության ու պրոպագանդայի ազդեցությունը: Նրկրում շարունակում էին գործել լոնդոնյան վտարանդիական կառավարության գործակալները: Սակայն լեհ ժողովրդի մեծ մասը, բազմիցս խաբվելով Լեհաստանի արևմտյան «բարեկամների» կողմից, հասկանում էր, որ աշխարհում միայն մի ուժ կա, որը կարող է Լեհաստանն ու նրա ժողովրդին ազատել ֆաշիստական ստրկությունից, և այդ ուժը Սովետական Միությունն է:

Հենց որ սովետական զորքերը մտան Լեհաստանի տերիտորիա, շնայած կատաղի մարտերին, շատ լեհեր դուրս եկան թաքստոցներից, որպեսզի գիմավորեն կարմիր բանակայիններին՝ իրենց ազատարարներին: Նրանք սիրալիր, ժպտադեմ ողջունում էին՝ «Բզեն դորրի»: Առաջին տպավորությունը միշտ անջնջելի հետք է թողնում մարդու հիշողության մեջ: Լեհերը չէին թաքցնում, որ նրանք զարմացած, նույնիսկ ապշած են կարմիր բանակի սպանների ու զինվորների միջև հաստատված հարաբերություններից, նրանց փոխադարձ բարեկամական վերաբերմունքից: Գրանում լեհն առաջին հերթին տեսնում էր սովետական մարդու կերպարը:

Հինգ տարվա ընթացքում նա առաջին անգամ շունչ քաշեց, հավատաց ու հասկացավ, որ սա իր փայփայած երազանքի՝ հայրենի Լեհաստանը անկախ ու ազատ տեսնելու երազանքի, իրագործման սկիզբն է միայն: Քաղաքներում ու գյուղերում, ուր մեր ուսանողներն ստիպված էին լինում մնալ մի քանի ժամ կամ մի քանի օր, տեղի էին ունենում շերմ հանդիպումներ բնակչության հետ: Լեհ մասսաները առաջին անգամ կարմիր բանակայիններից էին իմանում Լեհական ազգային ազատագրության կոմիտեի՝ 1944 թվականի հուլիսի 22-ի մանիֆեստի մասին և այն կարդում էին մայրենի լեզվով: Լեհերի անկաշկանդ զրույցները կարմիր բանակայինների հետ, նրանց խնդրանքը՝ պատմել Սովետական Միության մասին, սովետների երկրի նկատմամբ նրանց ցուցաբերած մեծ հետաքրքրության վկայությունն էին:

Գիվիզիայի քաղաքաժինը մեծ նշանակություն էր տալիս Լեհաստանի նկատմամբ սովետական պետության քաղաքականության պարզաբանմանը: Աշխատանքի մեթոդները ծնունդ էին առնում ինքնաբերաբար. բավական էր, որ ստորաբաժանումը կամ թիկունքային ծառայությունը կանգնեք մի բնակավայրում կամ նրա կողքի անտառում, իսկույն հավաքվում էին բնակիչները՝ սովետական ուսանողներին ողջունելու կամ նրանց տեսնելու: Սկսվում էր ծանոթությունը, ծայր էր առնում անկաշկանդ զրույցը, տեղում էին բազում հարցեր: Ռազմիկները նրանց էին հանձնում Լեհական ազգային ազատագրության կոմիտեի մանիֆեստը, պատասխանում լեհերի հարցերին: Նրանք, ովքեր տիրապետում էին լեհերենին, պարզաբանում էին Սովետական Միության քաղաքականությունը Լեհաստանի նկատմամբ: Նրանք ընդգծում էին կարմիր բանակի ազատագրական միտքն, Սովետական Միության՝ Լեհաստանն անկախ, առանց օտարերկրյա միջամտության, մեր երկրի հետ իրավահավասարության հիման վրա բարեկամություն հաստատած պետություն տեսնելու ցանկությունը: Այդ հանդիպումները սովորաբար ավարտվում էին սովետական կինոֆիլմերի ցուցադրումով կամ զվարճությամբ՝ երաժշտությամբ, պարերով, փոքր համերգներով: Լեհ բնակչության հետ տարվող զրույցների զլխավոր թեմաներն էին՝ Լեհաստանում կարմիր բանակի նպատակները, Լեհական ազգային ազատագրության կոմիտեն և նրա համաձայնագրերը ՍՍՀՄ կառավարության հետ, ՍՍՀՄ-ի քաղաքականությունը

Լեհաստանի նկատմամբ, ռազմաճակատների դրուժյունը, Սովին-
ֆորմբյուրոյի հաղորդագրութիւնները: Չնայած բազմաթիւ խրմ-
բային ու անհատական դրույցներին, քաղբաժինը բնակչության
հետ քաղաքական աշխատանք էր տանում և ֆիլմեր ցուցադրում
դիվիզիայի հարձակման գոտու մեջ ընկած ավելի քան 40 բնակա-
վայրերում:

Շատ հանդիպումների ընթացքում լեհ բնակչության ներկա-
յացուցիչներն իրենց շնորհակալութիւնն էին հայտնում կարմիր
բանակին՝ Լեհաստանն ազատագրելու համար: Օգոստոսի 8-ին
Դալնե գյուղի բոլոր բնակիչները շրջապատեցին դիվիզիայի ակում-
բը, հենց որ այն հայտնվեց գյուղում: Հանդիպումն սկսվեց ան-
կաշկանդ գրույցից և ավարտվեց բարեկամութեամբ: Պատասխա-
նելով տրված հարցին, մեր ընկերներից մեկը հայտնեց, որ Սովե-
տական Միութիւնում կազմավորվել են լեհական զորամասեր, և
այժմ նրանք կարմիր բանակի հետ միասին ազատագրում են Լե-
հաստանը, լեհական բանակը զինված է սովետական զենքով, այդ
թվում և տանկերով... Կարմիրբանակային Բոգդանեցը լեհերեն
արտասանեց. «Կեցցեն կարմիր բանակն ու լեհական բանակը»: Սա
ընդունվեց ծափահարութիւններով ու երիցս «ուռայով»: Նվա-
զեց փողային նվազախումբը: Հետո սկսվեցին լեհական ու ռուսա-
կան պարերը: Ակումբը ցուցադրեց «Միաժան» ֆիլմը: Բնակիչները
երկար ժամանակ չէին ցրվում: Օգոստոսի 9-ին Սուխոժարբի գյու-
ղում կինոֆիլմի ցուցադրումից հետո բնակիչները չէին հեռանում:
Նրանք ուզում էին երաժշտութիւն լսել: Երբ նվազեցին «Ռոտան»,
շատերի աչքերում արցունքներ երևացին, իսկ գյուղացիներից մեկը
երաժշտության տակտով արտասանեց «Ռոտայի» բառերը: Հետո
նա ասաց. «Եթե մենք այս երգը համարձակվեինք երգել գերմա-
նացիների օրոք, ստիպված կլինեինք մահակի տասնյակ հարված-
ներ ստանալ մեր թիկունքին»: Ելույթ ունեցավ գյուղի կսյոնձը.
«Մենք, սլավոններս, պետք է համերաշխ ապրենք, ասել եմ ես իմ
հավատացյալներին: Ես լավ գիտեմ ռուս ժողովրդին: Նա ամենա-
արդար ժողովուրդն է: Լեհ ժողովուրդը իր հայրենիքը կազատագրի
կարմիր բանակի հետ միասին»:

«Օսինի-Գուրնե և Օսինի-Դալնե գյուղերում 221-րդ գնդի պրո-
պագանդիստ կապիտան Նեպիերտը և 3-րդ գումարտակի կուսակազ-
մակերպիչ լեյտենանտ Տերլեցկին շրջապատվել էին բնակիչների

կողմից: Վերջիններս ողջունում էին մեր ընկերներին և հարցեր
տալիս, խնդրելով պարզաբանել՝ ո՞ր ռազմաճակատներում է կրո-
վել լեհական բանակը: Ի՞նչ իշխանութիւն կլինի Լեհաստանում
պատերազմից հետո: Լեհական բանակի մորթիլիզացիա կլինի՞, թե
ոչ: Լեյտենանտ Տերլեցկին բոլոր հարցերին պատասխանում էր
լեհերեն:

Լեհերը հիանում էին սովետական զորքերի բարոյական բարձր
հատկութիւններով. «Ինձ ապշեցնում է ձեր զինվորների գիտակ-
ցութիւնն ու կարգապահութիւնը, — մի անգամ ասաց Ֆլյատիչեն՝
Ֆոլվերկի կառավարիչը: — Իմ տնտեսութիւնը մեծ է ու ցրված
այս ու այն կողմ, բայց ամեն ինչ իր տեղումն է: Ես տեսնում եմ,
որ իրավացի էի, երբ ամենեւին չէի հավատում գերմանական պրո-
պագանդային»:

Լեհաստանի բնակչութիւնը մեր զորքերին օգնում էր ինչով
կարողանում էր: Ճանապարհազրկության ու ճահիճների պայման-
ներում հաճախ էր ձգձգվում ռազմամթերքի ստացումը, մեքենա-
ները թաղվում էին ցեխի մեջ: Բնակիչները օգնութիւն էին հաս-
նում իրենց կենդանաբարձ տրանսպորտով: Գետանցումների տեղե-
րում հայտնվում էին մարդիկ, իրենց ծառայութիւնն առաջարկելով
մեր զորքերին: «Պան սպա, թույլ տվեք օգնել ձեզ, — ասում էին
նրանք: — Ձեզ պետք է արագանցնել: Մենք բոլորս կօգնենք ձեզ»:

Իհարկե, լինում էին նաև այլ կարգի բաներ: Որոշ բնակավայ-
րերում պատերից պոկվում էին ԼԱԱԿ-ի դիմումներն ու կոչերը:
Բալյե գյուղում քիչ էր մնում բանը հասներ կալի ԼԱԱԿ-ի կողմ-
նակիցների ու հակառակորդների միջև:

Յազով ավանում երեք անձնավորութիւն տարբեր հարցերով
դիմեցին դիվիզիայի «Զնամյա պրեզդի» թերթի խմբագիր մայոր
Յա. Կրոնրոդին: Նրանցից մեկը կսյոնձ էր, մյուսը իրավաբան,
երրորդը՝ ուսուցչուհի: Երբ Կրոնրոդը պատմեց լեհական ազգային
ազատագրութիւն կոմիտեի մասին, նրանք սկզբում լռեցին, իսկ
հետո, այնուամենայնիվ, սկսեցին խոսել՝ «Ամեն ինչ կախված
կլինի նրանից, թե իրեն ինչպես կզրսևորի կոմիտեն հետագայում»:
Նրանք հակված էին դեպի Լոնդոնի վտարանդիական կառավարու-
թիւնը, որը, նրանց կարծիքով, պետք է ստեղծեր ուժեղ և անկախ
Լեհաստան: Այս ամենին անտարբերութեամբ մասնակցող մի երի-
տասարդ խառնվեց խոսակցութիւնը և կտրուկ ասաց. «Եթե մեզ

մոտ պատերազմից հետո սովետական իշխանութիւն շինի, եւ կփախչեմ Ռուսաստան, այլեւ չեմ աշխատի պաների համար»:

Լեհական ռեակցիայի մերկապարանոց հակասովետական քաղաքականութիւնը, որ աջակցութիւն էր ստանում արեւմուտքի կողմից, շանցավ եւ չէր կարող անցնել առանց հետեանքի: Կարեւորն այն էր, որ այդ քաղաքականութեան հետեանքը՝ հիտլերյան օկուպացիան, լեհ ժողովրդի ճնշող մեծամասնութեանը հարկադրեց ուշքի գալ: Լեհերը՝ ոմանք հիասթափված ռեակցիոն կառավարողների քաղաքականութեանից ու արեւմտյան «բարեկամների» խաբեութիւնից, ոմանք գիտակցելով Ռուսաստանի եւ մյուս սլավոնական ժողովուրդների հետ համերաշխ ապրելու անհրաժեշտութիւնը, իսկ ոմանք էլ, իսկ սա զխավորն է, դասակարգային տեսակետից եւ իրենց ազատագրութեան համար ռուս ու լեհ պրոլետարիատի համատեղ պայքարի տրադիցիայից, հասկացան, որ Լեհաստանը չի կարող ազատութիւն եւ իրավական անկախութիւն ունենալ առանց Սովետական Միութեան հետ եղբայրական բարեկամութեան:

Յ. ՆԱՐԵՎԻ ԳԵՏԱՆՅՈՒՄԸ

Օգոստոսի 23-ին կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Պ. Բատիցկին դիվիզիայում անցկացրեց ավագ սպայական կազմի հավաք, որ վերլուծեց վարչավայրի պաշտպանական գոտու նախամատուցներում մղված մարտական գործողութիւնները: Նշելով, որ հրամանատարութիւնը գոհ է դիվիզիայի գործողութիւններից, կորպուսի հրամանատարն արեց մի շարք դիտողութիւններ, որոնք զբաղվորապէս վերաբերում էին հետախուզութեանը: Նա հրամայեց հավաքի արդյունքները հասցնել դիվիզիայի ողջ անձնակազմին: Դա նշանակում էր՝ երկարատեւ մարտերից հետո դիվիզիան հանգրստի չի գնալու:

Մեզ հայտնի էր, որ դիվիզիան անցնելու է Նարեւ: Այս կապակցութեամբ գործամասերում ու ստորաբաժանումներում լայնորեն ուսումնասիրվեց խոշոր ջրային արգելքների հաղթահարման փորձը: Զորամասերում անցկացվող սպայական հավաքներում, կարմիրբանակայինների ժողովներում ելույթ էին ունենում Գնեպրի, Արեւմտյան Բուզի եւ այլ գետերի կովանցման մեծ փորձ ունեցող

հրամանատարներն ու մարտիկները: Գումարտակի հրամանատար կապիտան Ավդեենկոն, օրինակ, հանդես եկավ «Ինչպէս կովանցել խոշոր գետը եւ ինչպէս ամրանալ գրաված պլացդարմում» զեկուցմամբ: Նա ավարտեց այսպէս. «Աշխարհի բոլոր գետերն էլ անցանելի են, ասել է Սովորովը: Եվ մենք ձեզ հետ միասին այդ բանը կապացուցենք գործով»: Վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Բրիժակինը իր ռազմիկներին հաղորդեց Արեւմտյան Բուզի կովանցման փորձը: Բրիժակինը հատկապէս նշեց պլացդարմ գրաված մարտիկների տոկունութիւնը: «Մեզ համար անելանելի դրութիւն չկա, — ասաց նա, — երբ թշնամին հակադրուում է, անխնա ոչընչացրու նրան: Միշտ հիշիր, որ դու սովետական մարտիկ ես»: Յուրինը պատմեց՝ ինչպէս կարմիրբանակային կոմունիստ Գանիչևը վիրավոր վիճակում օգնութեան հասավ ծանր վիրավոր ընկերոջը եւ իր ուսերի վրա նրան դուրս բերեց կրակի դաշտից: Թշնամու զընդակը կտրեց հերոս Գանիչևի կյանքի թելը, իսկ նրա տեղափոխած ռազմիկ ընկերոջ կյանքը փրկվեց: Նա այսպէս եմ մտածում՝ մենք այն պատճառով ենք անցնում կրակի ու մահվան միջով, շենք վախենում մահից, շենք խնայում մեր կյանքն ու արյունը, որովհետեւ մեզ հետ է հայրենիքը: Նա մեր մտքի մեջ է, մեր սրտում»: Կըրտսեր սերժանտ Շեստոպալովը իր վաշտում պատմեց, թե ինչպէս են ինքն ու իր ընկերները իրենց ձեռքում պահել Բուզի փոքրիկ պլացդարմը, երբ թշնամին հակադրուում է իրենց վրա: Հետո նա գնդացրորդներին խորհուրդ տվեց, թե ինչպէս լավ կլինի գնդացրով անցնել գետը: Սերժանտ Բրեխեի ելույթի թեման տարբերվում էր մյուսներից: Նա գովաբանեց անվեհեր կովոզներին եւ դժգոհութիւն հայտնեց իր զինակից ընկերոջից՝ կարմիրբանակային Մողրիսից. «Թշնամու դեմ Մողրիսը կովում է ալարկոտ, դանդաղ եւ առանց հնարամտութեան: Կըքով չի կովում նա... Ծաշիզմի դեմ անկիրք կովելը բանի նման չէ»:

Այս փաստերը իրենք են խոսում իրենց մասին: Մարդիկ լարված պատրաստվում էին նոր սխրանքների, նոր գոտեմարտերի: Միաժամանակ պատրաստվում եւ մոտ էին բերվում նաև գետանցման միջոցները: Օգոստոսի 30-ին քաղաքովին անցկացրեց դիվիզիայի հետախուզիկները, իսկ 31-ին՝ հրետանային սպաների հավաք: Առաջին հավաքում քննարկվեցին հետախուզիկների խնդիրները առաջիկա մարտերում: Այնուհետեւ հետախուզութեան պետ մա-

յոր Բեսսոնովը գործնական հետախուզություն կազմակերպեց դի-
վիզիայի առաջիկա գործողությունների հավանական ուղղություն-
ներում: Հրետանային սպաների հավաքում ելույթ ունեցան դիվի-
զիայի հրամանատար Ա. Շացկովը և հրետանու հրամանատար
Գ. Տոլմաչյովը: Այդ օրերին մեծ աշխատանք կատարվեց վաշտա-
յին կուսակցական կազմակերպությունների վերականգնման ուղ-
ղությամբ, բացառապես կուսակցության մեջ նոր անդամների և
անդամության թեկնածուների ընդունելության հաշվին: Գետանց-
ման նախօրերին վաշտային կուսակցական կազմակերպությունների
ժողովներում քննարկվեցին կոմունիստների խնդիրները Նարևի
կուլանցման ժամանակ:

Սեպտեմբերի 6-ի գիշերը դիվիզիան Վիշկով քաղաքից մոտ
5 կիլոմետր արևելք անցավ Արևմտյան Բուզը: Մեր աջ թևում գոր-
ծում էր գեներալ Բատովի 5-րդ հարվածային բանակը, ձախում
Բուզն էր, առջևում՝ Նարևը: Տեղանքը համատարած անտառապատ
էր: Գործում էր հետախուզությունը, կատարվում էր տեղազննում:

Նարևի արևմտյան ափ... Գետի երկարությամբ համատարած
խրամատներ, մինչև գետափ հասնող ականապատված դաշտեր,
խիտ դասավորված կրակակետեր... Սերոցկ քաղաքը ամբողջովին
վերածվել էր կրակային դիրքերի, քաղաքային խոշոր կառույցները
հյուսիսային կողմից վերածվել էին հենակետերի, հարմարեցված
լինելով շրջանաձև պաշտպանության: Կրակակետերը պաշտպա-
նում էին միմյանց: Առաջավոր գիծը խորքից պաշտպանում էին
հրետանին, տանկերը, ինքնագնացները, ինչպես նաև ռեզերվային
ստորաբաժանումները: Սերոցկը պաշտպանում էին 7-րդ հետևա-
կային դիվիզիայի 62-րդ գունդը և ՍՍ-ի «Գոյչլանդ» դիվիզիայի
500-րդ գրոհային գումարտակը: Գատելով ամեն ինչից, հակառա-
կորդը սպասում էր մեր կողմից Նարևի կուլանցմանը, մանավանդ
որ մեր հատվածից աջ 186-րդ դիվիզիան արդեն կառչել էր գետի
արևմտյան ափի փոքր պլացդարմից:

Սերոցկում պաշտպանվող հակառակորդի նկատմամբ 61-րդ
դիվիզիան ուներ հրանոթների ու ավտոմատ զենքերի գերակշռու-
թյուն: Բայց հրետանին կարող էր գետանցել միայն Սերոցկը գրա-
վելուց հետո, իսկ հրաձգային ստորաբաժանումները սկզբում կա-
րող էին անցնել մանր խմբերով, պլացդարմ գրավել հակառակոր-
դի կրակի տակ: Զրային մակերեսը զնդակոծվում էր: Բուլոր զըն-

դերը միանգամից շփն կարող անցնել գետը: Ամենից առաջ Նարևի
գետանցումը պլանավորված էր այն հաշվով, որ թշնամին մշտա-
պես գտնվի թյուրիմացության մեջ, գետանցումը կատարվի թա-
քուն և հանկարծակի: Ամենայն հավանականությամբ թշնամին
ենթադրում էր, որ գետանցում կկատարվի 186-րդ դիվիզիայի
հատվածում, բացի դրանից, անցումից առաջ սպասում էր հրետա-
նային պատրաստության, ինչպես դա լինում էր սովորաբար: Հրե-
տանային ստորաբաժանումների մոտեցումը նույնպես պետք է թա-
քուն կատարվեր: Այս ամենը կարելի էր կատարել միայն գիշերով:
Նարևի անցումը և պլացդարմի գրավումը կատարվելու էր
արևելյան ուղղությամբ՝ գետի ոլորանում, Սերոցկից հյուսիս:

Գիվիզիայի հրամանատարը որոշեց գետն անցնել հրաձգային
երկու գնդերի ուժերով: Աջ թևում գետն անցավ 307-րդ գունդը,
առաջադրանք ունենալով գրավել պլացդարմ, վեժբիցա կալվածա-
տունը և Մաշիդոյի ուղղությամբ զարգացնելով հաջողությունը,
դուրս գալ Զաբլոցե-Ստանիսլավովո բնագիծը և հյուսիսից շրջան-
ցել Սերոցկը: 66-րդ գնդի խնդիրն էր՝ գրավել պլացդարմ, գործել
Սերոցկի ուղղությամբ, քաղաքում գամել նրա ուժերը և դրանով
իսկ 307-րդ գնդին հնարավորություն տալ, թեև անցելով Սերոցկը,
զխափոր հարվածը հասցնել աջից: 221-րդ գունդը պետք է գետն
անցներ 307-րդ գնդից հետո և մարտի մեջ մտներ այն ժամանակ,
երբ 307-րդ գունդը, շրջանցելով Սերոցկը, թեքվեր հարավ, նրա
հաջողությունը զարգացներ Սերոցկից արևմուտք:

Որոշվեց գետանցումը կատարել առանց հրետանային պատ-
րաստության: Բայց հրետանավորները դիրքեր գրավեցին ափի
մոտ և պատրաստ էին կրակի: Մեր հարևանը պետք է հարձակվեր
պլացդարմից, եթե հակառակորդը նկատեր գետն անցնող մեր
ստորաբաժանումներին և արգելք հանդիսանար գետանցմանը:

Գնդերը թաքուն առաջ շարժվեցին՝ գետափին ելման դիրքեր
գրավելու համար: Սեպտեմբերի 7-ի ժամը 2-ին երկու հրաձգային
գնդերն էլ միաժամանակ նավակներով ու լաստերով սկսեցին գե-
տանցումը. նրանցից յուրաքանչյուրն ուժեղացված էր զնդացրային
դասակով, հակատանկային հրացանների ջոկով և սակրային դա-
սակով: Գետանցումն հաջող անցավ: Հակառակորդը մեր վաշտերն
հայտնաբերեց, երբ նրանք ամրացել էին արևմտյան ափին:

66-րդ գնդի այն վաշտը, որի հրամանատարն էր ավագ լեյ-

տենանտ Բրիժակինը, կառչեց Սերոցկի հյուսիս-արևմտյան ծայրամասից: Խիզախ հրամանատարը բազմիցս իր ռազմիկներին տարել էր դժվարին խնդիրների կատարման և անհողող մնացել: Գերմանացիները Բրիժակինի վաշտի վրա փոթորկալի կրակ բացեցին: Գնդի գետանցումն ընդհատվեց: Վաշտը մեծ կորուստներ կրեց... Բայց մնաց անդրդվելի:

307-րդ գնդի վաշտերից մեկը՝ ավագ լեյտենանտ Կուլեսնիկովի հրամանատարությամբ, նույնպես մի փոքրիկ պլացդարմ գրավեց: Օգտվելով այն բանից, որ հակառակորդն իր կրակը հիմնականում կենտրոնացրել է 66-րդ գնդի վրա, 307-րդ գնդի հրամանատար փոխգնդապետ Վալկովը արագորեն գետի մյուս ափը փոխադրեց կապիտան Կուլեսնիկովի ամբողջ 2-րդ գումարտակը: Լուսաղեմին գունդն ուներ 700 մետր ճակատով և 100—150 մետր խորությամբ մի պլացդարմ: Սակայն պլացդարմն ընդարձակելու փորձերն անհաջող անցան: Գերմանացիներն անհապաղ Վեժբիցի ազարակատուն փոխադրեցին մի նոր գումարտակ: Մինչև ժամը 16-ը միայն Կուլեսնիկովի գումարտակը կարողացավ ետ մղել թշնամու հակադրոհները: Այդ նույն ժամանակ փոխգնդապետ Վալկովը գետի արևմտյան ափ փոխադրեց ամբողջ գունդը և ամրացավ պլացդարմում:

Բրիժակինի վաշտի դրուժյունն ավելի վատացավ, դարձավ անհուսալի: Օրվա ընթացքում գերմանացիներն անընդհատ հակադրոհեցին վաշտի վրա և վերջում նրա դեմ նետեցին ՍՍ-ի «Գոյչլանդ» դիվիզիայի 500-րդ գումարտակը: 66-րդ գունդը, ինչպես և դիվիզիան, զրկված էին վաշտին օգնելու հնարավորությունից: Հրետանին նույնպես չէր կարող օգնել, երկյուղ կրելով, որ կարող է գնդակոծել մեր դիրքերը: Միակ կրակային աջակցությունը Կուլեսնիկովի ձախթևյան պլացդարմից էր տրվում: Բրիժակինի արնաբամ վաշտը մեկ օրվա ընթացքում հերոսաբար ետ մղեց գերմանացիների բոլոր հակադրոհները և ոչ մի քառակուսի մետր հող չդիջեց գրաված պլացդարմից: Նա անխնա կոտորեց էսէսականներին: Վաշտի ձախ թևում կովում էր կարմիրբանակային Յուրչիկի դասակը, որի կազմում մնացել էր ընդամենը երեք մարդ՝ Յուրչիկը, Յազրովը և Մալինովսկին: Նրանց դեմ հակադրոհի էր ելել էսէսականների մեկ վաշտ: Յուրչիկը պառկեց հաստոցավոր զրնդացրի մոտ, Մալինովսկին ու Յազրովը օժանդակեցին նրան և



Փառքի շքանշանակիր զինվորներ



Բարայան. 55-րդ հրետ. գնդի
մարտկոցի հրամանատար



Վ. Ն. Կիյաշկո.
վաշտի հրամանատար



Գիվիզիայի կուսանձնաժողովը նիստի ժամանակ



Գիվիզիայի թայգայի անձնակազմը պատերազմի վերջին
դրձմեռի ժամանակահատվածում



Գնդերի մի խումբ հրամանատարներ և քաղաշխատողներ

կրակեցին ավտոմատներից, նետեցին նոնակներ: Էսէսականները նորից ու նորից անցնում էին հակազրոհի: Տասնհինգ էսէսականների հաջողվեց ներխուժել դասակի խրամատները, բայց հերոսները նրանց ետ շարտեցին և մատնեցին փախուստի: Թող ընթերցողին զարմանալի շթվա, որ մենք խոսում ենք դասակի մասին: Այո, սովետական երեք ռազմիկները փոխարինում էին մեկ ամբողջ դասակի:

Օրվա երկրորդ կեսին դիվիզիայի հրետանին հզոր և կենտրոնացված կրակ բացեց ազարակատան և Սերոցկի հյուսիսային ծայրամասի վրա: 307-րդ գունդն անցավ հարձակման: Ստորաբաժանումները գրավեցին խրամատների առաջին գիծը և ազարակատունը, կտրեցին խճուղին և ամրացան գրաված դիրքերում:

Սեպտեմբերի 8-ի գիշերը գետն անցան նաև 66-րդ և 221-րդ գնդերը: 307-րդ գունդը կարողացավ իր հրետանին ևս անցկացնել գետը: Առավոտվանից դիվիզիայի հրետանին հզոր հարվածներ հասցրեց քաղաքում գտնվող հակառակորդի կրակային դիրքերին: Մեծ հրդեհներ ծագեցին: Երեք գնդերն էլ հարձակման անցան: 307-րդ գունդը քաղաքը շրջանցեց հյուսիսից և իր ձախ թևով ներխուժեց նրա հյուսիսային ծայրամասը: 66-րդ գունդը գրավեց քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասը: 221-րդ գնդի գումարտակը տիրեց խրամատներին և ցատկ կատարեց խորքը, զավթելով թըշնամու հրետանին: Հակառակորդի ջախջախված մնացորդները թողեցին քաղաքը: Դիվիզիան գրավեց քաղաքը և մեծ պլացդարմ ստեղծեց: Մարտական առաջադրանքը կատարվեց հաջողությամբ:

Հաջողության գրավականն ամենից առաջ ռազմիկների բարոյա-քաղաքական բարձր ոգին էր, նրանց դիմացկունությունը, տուկունությունը և հաղթելու վճռականությունը: Հայրենիքի քաջարի զավակներ՝ ավագ լեյտենանտներ Բրիժակինը և Կոլեսնիկովը, կապիտաններ Կուչերենկոն, Ավդեենկոն և Նադտոշին, գումարտակի կուսկազմակերպիչ Ջաշիան, կոմերիտական կազմակերպիչ Ավերշուկը, սակրավորներ՝ լեյտենանտ Աղաջանյանը, կարմիրբանակայիններ և սերժանտներ Յուրչիկը, Յադրովը, Մալինովսկին, Ստեպուրկոն, Ջավլալովը, Ռոդիոնովը, Գոշկովը, Իվանովը, Կոզլովը, Ալիևը, Կրիլովը, Սոլոմատինը, Բուլոնյակը, Տուգակովը, Մեդվեդովսկին և շատ ուրիշներ իրենց կատարած սխրագործություններով փառավոր էջեր գրեցին դիվիզիայի հերոսագրքում:

1945 թվականի հունվարին դիվիզիայի գրաված պլացդարմից Սովետական Միության մարշալ Ռոկոսսովսկին հարձակում սկսեց զեպի Վիսլա և Օդեր:

Դեռ չէինք հասցրել ամրանալ նարևի պլացդարմում, երբ ստացվեց Գերազույն գլխավոր հրամանատարության Զորակայանի հրամանը 28-րդ բանակը Զորակայանի ռեզերվ դուրս բերելու մասին: Բանակը գնաց, իսկ 61-րդ դիվիզիան մնաց պլացդարմում: Ռազմաճակատի հրամանատարը հնարավորություն չունեցավ այդ ժամանակ դիվիզիան փոխարինել ուրիշ միավորումով:

Սեպտեմբերի 10-ին դիվիզիան պլացդարմը հանձնեց ռազմաճակատի մյուս զորամասերին և դուրս եկավ երթի: Սեպտեմբերի 11-ի գիշերը նա կենտրոնացավ Դաշի Լերետտո շրջանում, Լիվեց գետի գետաբերանի մոտ, որտեղ նա կարգի բերեց իրեն, մի փոքր հանգստացավ և պատրաստվեց երթի:

Գնում էինք միայն գիշերով: Սկզբում մենք գնում էինք հարավ-արևելյան՝ Սոկոլով-Պոդլյասկի ուղղությամբ, հետո կտրուկ թեքվեցինք արևելք: Անցնելով 260 կիլոմետր ճանապարհ, դիվիզիան ոտք դրեց սովետական հողի վրա: Դիվիզիայի անցած մարտական ուղու արդյունքները գոհացուցիչ էին: Լեհաստանի ազատագրման համար մղված մարտերում դիվիզիան ջախջախեց և արևմուտք շարտեց հիտլերյան բանակի 216, 211, 102, 7-րդ հետևակային և 5-րդ թեթև-հրաձգային դիվիզիաները, ՍՍ-ի «Դոյչանդ» դիվիզիայի 500-րդ գումարտակը և 504-րդ աշխատանքային գումարտակը:

61-րդ դիվիզիայի ռազմիկների համար սովորական էր դարձել մի բան՝ եթե ռեզերվում են, ուրեմն պետք է պատրաստ լինեն ճեղքման՝ ռազմաճակատի մի ուրիշ հատվածում:

Դիվիզիան կրկին Բելոռուսիայում է: Նրա զորամասերը կենտրոնացել են Կոբրինից 20 կիլոմետր հյուսիս: Շտաբը տեղափոխվել է Խարկի գյուղում: Այստեղ 10 օրվա ընթացքում դիվիզիան համալրվեց, լրացրեց սպառազինության պակասը և ձեռնամուխ եղավ կազմակերպական այլ բնույթի աշխատանքների ծավալմանը ստորաբաժանումներում: Գերազույն գլխավոր հրամանատարության Զորակայանի ներկայացուցիչ գեներալ-լեյտենանտ Կուլիկը (նախկինում՝ Սովետական Միության մարշալ) ձգտում էր, որ դիվիզիան որքան հնարավոր է կարճ ժամկետում պատրաստ լինի: 221-րդ գնդի՝ հրամանատարությունն ստանձնեց 24-ժամյա փոխգնդապետ Իվան Ստեպչենկոն: Ընդունելով գունդը, նա շարքի առջև հայտարարեց. «Երդվում եմ ձեր առաջ, որ կաշխատեմ արժանի լինել գնդի տրադիցիաներին և նրա նախկին հրամանատարներ Ակոպովին ու Զաբոլոտսկուն»: Գունդն իր նոր հրամանատարի խոսքերը ծածկեց «ուռա» բացականչությամբ:

Հոկտեմբերի 1-ին դիվիզիան երթի ելավ զեպի հյուսիս: Նրա ճանապարհն անցնում էր Պրուժանի, Նուլի Դվուր, Պորոզովո, Վալկովիսկ, Ռոս, Վոլպե, Լուննա բնակավայրերով: Նեմանի ափին, Սկիդել քաղաքից հարավ, դիվիզիան կանգ առավ երկօրյա դադարի: Մենք կուսհեցինք, որ մասնակցելու ենք Արևելյան Պրուսիայում մղվող մարտերին: Անցնելով Ալիտուս և Վիլկավիշկիս քաղաքների միջով, հոկտեմբերի 18-ին դիվիզիան կենտրոնացավ Լիտվայի սահմանում, Վերբալիս քաղաքի մոտ:

1. «ԱՀԱ ԱՅՆ՝ ԱՆԻԾՅԱԼ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՆ»

Ռազմաճակատում թե թիկունքում, ժամանակավորապես օկուպացված տերիտորիայում թե մահվան ճամբարներում, նահանջի ծանր օրերին թե հարձակման հրձվալից ժամին՝ սովետական մարդկանց մեջ կուտակված ատելությունը ֆաշիզմի նկատմամբ վերածվել էր մի անդիմադրելի, այրող ցանկություն՝ ֆաշիստական զազանին ոչնչացնել նրա իսկ որջում:

Ետևում էին մնացել ծանր պատերազմի 1214 երկար ու ձիգ օրերը: Սովետական զորամիավորումները փառաբանված զորավար բանակի գեներալ Ի. Գ. Չեռնյախովսկու հրամանատարությամբ առաջինն անցան ֆաշիստական Գերմանիայի սահմանը և առաջինը իրենց հաղթական դրոշները տարան Արևելյան Պրուսիա: Հասել էր հիտլերյան մարդակերներին իրենց տերիտորիայում պատժելու, Հիտլերին և նրա հետ միասին նաև գերմանական ֆաշիզմը ոչնչացնելու ժամանակը:

Սովետական ժողովուրդը և նրա բանակը բոլոր հիմքերն ունեին պատժելու ֆաշիստական ճիվաղին՝ վրեժ լուծելու հայրենիքի տառապանքների, սովետական մարդկանց պատվի համար, միլիոնավոր անմեղ մարդկանց թափած արյան համար: Հիտլերն ուզում էր ոչնչացնել սովետական սոցիալիստական պետությունը և նրա ժողովրդին, նրանց հետ միասին թաղել կոմունիզմի գաղափարները: Սովետական Միության դեմ պատերազմի նպատակը նա սահմանում էր այսպես. «Խոսքը ոչնչացնելու պայքարի մասին է», «սովետական ինտելիգենցիան պետք է ոչնչացվի», «Վելիկոռուսիայում անհրաժեշտ է կիրառել ամենադաժան բռնությունը... գնդակահարել յուրաքանչյուրին, ով թեկուզ մի խեթ հայացք կենտի»: «ՍՍՀՄ-ի ժողովուրդները իրենց գոյության համար միայն մի արդարացում ունեն՝ օգտակար լինել մեզ տնտեսական տեսակետից», այսինքն՝ լինել սարուկներ: Այս էր «Բարբարոսայի» սլա-նի ղեկավար սկզբունքը:

Սովետական Միությունում չկա մի ընտանիք, որ կրած չլինի ֆաշիստական ներխուժման տառապանքները: Այդ տառապանքների համար ֆաշիստներից վրեժ լուծելու դատը գտնվում էր կարմիր բանակի ձեռքում, որը նա պետք է կիրառեր լիակատար իրավուն-

քով: Չէ որ մեծ գերմանացի Գյոթեն է ասել. «Այն դատավորը, որ ընդունակ չէ պատժելու, վերջիվերջո դառնում է հանցագործի մեղսակիցը»: Պատժել ֆաշիզմը՝ նշանակում է պատմական, մարդասիրական մեծ միսիա կատարել: Արևելյան Պրուսիայի սահմանի վրա կարգալուծ «Ահա այն՝ անիծյալ ֆաշիստական Գերմանիան», մարտիկների նզովքն ու ատելությունը միախառնվեցին թշնամու հողի վրա առաջինը ոտք դնելու ուրախության զգացմունքի հետ: Հեղեղի նման նամակներ գնացին թիկունք՝ ուղղված հարազատներին, բարեկամներին, ընկերներին, որոնցում մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները արտահայտում էին իրենց երջանկությունը, հրձվանքն ու հպարտությունը նշանավոր իրադարձության՝ ֆաշիստական Գերմանիայի սահմանը առաջիններից մեկն անցնելու պատվին արժանանալու համար: Ոմանք գրում էին. «Մեր երազանքը կատարվեց... Մենք մտանք Գերմանիայի տերիտորիան— ոչ թե որպես հյուրեր, այլ որպես հաղթողներ». մյուսները խոստանում էին վրեժ լուծել իրենց ժողովրդի կրած բոլոր տառապանքների համար, սթափ դատողությամբ նշելով, որ «առջևում դեռ դժվարին ճանապարհներ կան». երրորդներն իրենց գերագույն երջանկությունն էին արտահայտում, հարազատներին ու ընկերներին տեղեկացնելով, որ իրավունք են վաստակել լինելու մեծ կենինի կուսակցության շարքերում:

Երբ ոտք դրեցինք թշնամական հողին՝ մարդկանց մոտ, բնականաբար, ծագեցին շատ հարցեր, որոնց պարզաբանումը ծառայության բերումով բաժին էր ընկնում մեզ՝ քաղաշխատողներին: Ահա այդ հարցերից մի քանիսը.

«Ի՞նչ նշանակություն ունի ժամանակի գործոնը պատերազմում հիտլերյան Գերմանիայի համար: Արդյոք պատերազմի ձրգ-ձրգումը փոփոխություն չի՞ մտցնի Գերմանիայի նկատմամբ մեր դաշնակիցների վերաբերմունքի մեջ»,— հարցնում էր լեյտենանտ Զախարովը: «Ի՞նչ նպատակ էին հետապնդում գերմանական դավադիր գեներալները»,— հարցնում էր լեյտենանտ Երմոլովը: «Գերմանացիները արդյոք կարո՞ղ են հուսալ, որ Սովետական Միությունը զթասրտություն կցուցաբերի իրենց նկատմամբ»,— հարցնում էր լեյտենանտ Բադդասարովը: «Արդյոք գերմանացիներից պահանջելո՞ւ ենք հատուցել մեր երկրին պատճառած վնասը», «Ինչպե՞ս են վերադարձվելու ՍՍՀՄ-ից կողոպտված արժեքնե-

րը», — հարցնում էր կարմիրբանակային Ռեպկինը: «Ի՞նչ հասարակարգ է լինելու Գերմանիայում պատերազմից հետո: Քաղաքական ի՞նչ ուժերից է կազմվելու գերմանական առաջին կառավարությունը», — հետաքրքրվում էին շատերը: Այս և նման այլ հարցերի պատասխաններն ստանալուց հետո նրանք առիթը բաց չէին թողնում կրկին պատմելու ֆաշիստական գազանությունների, իրենց հարազատների նկատմամբ հիտլերականների դաժան հաշվեհարդարի մասին: Ոմանք հարցը դնում էին ուղղակի. ինչպե՞ս ենք վրեժխնդիր լինելու մեր հարազատների համար և այլն և այլն:

Եթե առաջին խումբը հարցերն ու պատասխանները հենվում էին այն ժամանակ հայտնի տվյալների ու դիրքորոշումների վրա, ապա վերջին խումբը հարցերի պատասխանը մեկն էր. «Հիտլերականներից վրեժ լուծելը յուրաքանչյուր սովետական ռազմիկի սրբազան պարտքն է: Ձեր առջև ֆաշիստներ են: Անխնա ոչնչացրեք նրանց, և դուք կմոտեցնեք հաղթանակը: Իսկ երբ կլինենք Գերմանիայում, հիտլերականներն էլ ավելի մեծ կատաղությամբ կդիմադրեն: Գթության մասին խոսք լինել չի կարող: Անխնա ոչնչացրեք դիմադրող թշնամուն»:

Քաղբաժնում լայն աշխատանքներ ծավալվեցին այդ ուղղությամբ: Երբ մեր զորքերը, հիտլերականներին վռնդելով մեր երկրից, պատրաստվում էին թշնամուն հետապնդել նրա իսկ տերիտորիայում, մեր կուսակցության Կենտրոնական կոմիտեն դիրեկտիվ տվեց թշնամու և մյուս երկրների տերիտորիայում կարմիր բանակի վարքագծի վերաբերյալ: Մենք հասկանում էինք, որ մեր արտահայտությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ հոգու ճիշդ, որի ազդուրը այն աննկարագրելի տառապանքներն էին, որոնք երբեք չեն մոռացվում: Բայց միաժամանակ այն փաստը, որ մարդիկ նման հարցեր տալիս էին այն ժամանակ, երբ մարտերը տեղափոխվում էին թշնամու տերիտորիա, վկայում էր մեր հայրենիքի հեղինակության համար մարտիկների բարձր պատասխանատվության զգացման և սովետական զինվորի բարոյական կերպարի մասին: Քաղաքական աշխատանքի հիմնական շեշտը դրվում էր ֆաշիստական բանակի, նրա հրամանատարության և ֆաշիստական պետության ախնա ոչնչացման վրա: Գերմանիայում պետք է ոչընչացվի ամբողջ մարդկության ոխերիմ թշնամին՝ հիտլերյան ֆաշիզմը: Մեր զինվորները դրսևորում էին բարձր կազմակերպվածու-

թյուն: Վկայակոչենք մի օրինակ: Կարմիրբանակային Իվան Տոպուլը դեռևս Բելոռուսիայում, Ուկրաինայում բնակվող իր զոքանչից ստացավ մի նամակ. նա հայտնում էր նրա ընտանիքի ողբերգություն մասին. ֆաշիստները բանտարկել էին նրա կնոջը, ծանակել, հետո գազանաբար սպանել. երկու փոքրիկները մնացել են անտեր: էվակուացիայից վերադառնալով, նա իմանում է աղջկա ողբերգության մասին, սկսում է փնտրել երեխաներին և գտնում: «Բարի մարդիկ ապաստան էին տվել նրանց»: Ի. Տոպուլը մասնակցել էր ֆիննական կամպանիային: Նա 61-րդ դիվիզիա էր եկել հոսպիտալից: Նա ծառայում էր քաղբաժնում որպես վարորդ: Հենց որ ստացավ ընտանիքի ողբերգության լուրը, օրինակելի կարմիրբանակայինը անձանաշելիորեն փոխվեց. «Շուտով կմրտնենք Գերմանիա, կսպանենք հենց առաջին հանդիպած գերմանացուն... առանց խտրություն», — ասաց Իվանը, իսկ խոսքերը մնացին կոկորդում: Լալիս էին ոչ թե աչքերը, այլ սիրտը: Տոպուլը վիրավորվեց, բայց չգնաց հոսպիտալ, վախենում էր թողնեն թիկունքային զորամասում:

— Ո՛չ, Իվան, դու երեխա չես սպանի, — ասացի նրան:

Տոպուլը մոնչում էր ցավից ու կատաղությունից:

— Ինչո՞ւ չեմ սպանի, նրանք սպանել են կնոջս, անապաստան թողել Կրեխաներիս, խոշտանգել են հայրենիքս ու ինձ, իսկ ես նրանց չեմ սպանի: Կսպանեմ: Եվ ոչ մեկին: Այ, կտեսներ:

Նա ուզում էր, որ հավատային իր խոսքերին: Ես ասացի նրան:

— Քո շարությունը, Իվան, արդարացի է: Քո մեջ խոսում են ցավն ու վիրավորանքը: Բայց մենք գիտենք քեզ, դու ընդունակ չես շարագործության: Տեսնելով քո առջև կանգնած սարսափից դողացող երեխային, դու ակամայից վայր կզցես ատրճանակդ, կդատապարտես ինքդ քեզ: Եվ դա այն պատճառով, որ դու սովետական մարդ ես, հասկանո՞ւմ ես, սովետական մարդ:

Տոպուլը լռեց: Անցավ մի քանի օր:

Արդեն մարտեր էին մղվում Արևելյան Պրուսիայում: Ռազմաճակատի ռազմական խորհուրդը զնալու ճանապարհին գիշերով անցանք հենց նոր մեր զորքերի կողմից գրավված փոքրիկ քաղաքի միջով: Փողոցի երկու կողմերում դեռ այրվում էին տները: Իվան Տոպուլը դժգոհ փնթփնթաց:

— էս հրդեհն ինչու չեն հանգրբել...

— Քեզ չեմ հասկանում, Իվան, — ասացի ես, դու մեկ խոսում ես առանց խտրութեան բոլորին սպանելու մասին, մեկ էլ... մեկ էլ ափսոսում ես, որ այրվում են պրուսացիների տները:

Իվանը դժգոհ փնթփնթաց ու լռեց:

Իվան Եգորովիչի հետ անցանք ամբողջ Արևելյան Պրուսիան, եղանք Բեռլինում և գերմանական ուրիշ շատ քաղաքներում ու գյուղերում: Գյուղերից մեկում պարետը մեզ տրամադրեց մի սենյակ: Գերմանացի տանտերերը բարձրացան երկրորդ հարկ ու փակվեցին սենյակում... Հանկարծ բակում հայտնվեց 4—5 տարեկան մի աղջնակ: Պատուհանից երևում էր, թե ինչպես Իվան Տոպոլը ջանում էր իր վրա գրավել փոքրիկի ուշադրությունը: Նրա բառապաշարում մի տասնյակ գերմաներեն բառ կար: Երեխան չէր հասկանում ու մոտ չէր գնում նրան: Մի քանի րոպե հետո Իվանը պարտեզից մի ծաղիկ պոկեց ու մեկնեց երեխային: Սա անվստահ մոտեցավ, վերցրեց այն: Իվանը նստեց եզրաքարին, իսկ փոքրիկ գերմանուհին, նրա ծնկներին նստած, մեծ բավականությամբ շոկոլադ էր ուտում: Իվանը փաղաքշում էր նրան, ինչպես սիրող հայրերը: Ահա սովետական զինվորի իսկական վարքագիծը: Իսկ Իվան Տոպոլը միլիոններից մեկն էր:

Քաղաշխատանքի ընթացքում մարտիկներին պարզաբանում էինք, որ առաջիկայում կատաղի մարտեր են լինելու, հուսահատ թշնամին իր տերիտորիայում կգործադրի վերջին ճիգերը, որպեսզի հետաձգի իր կործանման ժամը: Մենք կոչ էինք անում՝ «Բեռլին տանող ճանապարհն անցնում է Արևելյան Պրուսիայով»: Մարդկանց կոչում էինք զգոնություն: Այսուհետև մենք գործելու էինք թշնամական տերիտորիայում: Թշնամական միջավայրում, թշնամին Պրուսիան պաշտպանելու էր մինչև վերջին հնարավորությունը, իսկ Պրուսիայի բնակչությունը ոչ միայն աջակցելու էր իր բանակին, այլև բոլոր անկյուններից կրակելու էր մեզ վրա: Թշնամին նենգ է, և այսուհետև միջավայրը հող է ստեղծում դրա համար: Այս կապակցությամբ առաջին պլան մղվեց պահանջկոտության կազմակերպվածության, կարգապահության և հեղափոխական զգոնության հարցը: Յուրաքանչյուր զինվոր պարտավոր էր մեթոդիկ ձևով գործադրել թշնամու վրա, լինել սովետական քաղաքացու բարոյականության օրինակ:

Հարցերի մյուս խումբը անձնակազմին զգուշացնում էր ամեն տեսակ գայթակղություններից: Այստեղից էլ հասկանալի էր դառնում, թե որքան մեծանում է հրամանատարների և քաղաշխատողների պատասխանատվությունը թշնամու հողի վրա մարտնչող սովետական զինվորների բարոյա-քաղաքական ոգին բարձր պահելու գործում:

3-րդ Բելոռուսական ռազմաճակատի զորքերը Արևելյան Պրուսիա մտնելու կապակցությամբ Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Ստալինը հատուկ հրաման տվեց: Այդ կապակցությամբ զորքերում անցկացվեցին միտինգներ: Միտինգները ցույց տվեցին, որ մեր զինվորները համակված են ատելի թշնամուն նրա իսկ տերիտորիայում ոչնչացնելու բուռն ցանկությամբ:

2. «ՌՈՒՍՆԵՐԸ ՄԻՇՏ ՀԱՂԹԵԼ ԵՆ ՊՐՈՒՍԱՅԻՆԵՐԻՆ»

Սովորովի այս խոսքերը կարդում էինք Պրուսիայի սահմանի վրա և ճանապարհների խաշմերուկներում: Դրանք այս անգամ էլ պրուսացիներին հաղթելու վստահություն էին ներշնչում:

Ռազմաճակատի ամբողջ երկարությամբ ու խորությամբ Արևելյան Պրուսիան վերածված էր խիստ ամրացված բազմաշերտ պաշտպանական շրջանի: Կառույցները, ջրային արգելքները, ճահիճները, բլուրները, անտառներն ու դաշտերը, բնակավայրերը, առանձնատները, ճանապարհներն ու ջրանցքները, հին ու երկարամյա ինժեներական կառույցները՝ յուրաքանչյուրն առանձին վերցրած՝ ու ամբողջության մեջ, վեր էին ածվել պաշտպանական գոտիների, դիմադրության հանգույցների ու հենակետերի: Համատարած խրամատներ՝ իրենց անցուղիներով ու թաքստոցներով, հակատանկային փոսեր, փշալարեր և ականապատված դաշտեր, ԴՕՏ-եր ու ԴՁՕՏ-ներ, երկաթբետոնե կառուցվածքներ, խնամքով սարքավորված հենակետեր՝ բլուրների վրա, գետափերին, անտառազանգվածներում և բնակավայրերում՝ տառացիորեն բոլոր փողոցներն ու տները... — Ահա 200 կիլոմետրից ավելի խորությամբ պաշտպանական այն հզոր սիստեմը, որի առանձին հանգույցների մի առ մի թվարկումն անգամ բավական մեծ ջանքեր կպահանջեր:

Պաշտպանական այսպիսի մի անառիկ սիստեմի տեսակետից հենց Արևելյան Պրուսիան գերմանական ռեակցիայի հաստատուն հենարանն էր: Այն պաշտպանում էր «Միտտե» — «Կենտրոն» բանակախումբը՝ գեներալ-գնդապետ Ռայնհարդտի հրամանատարությամբ: «Կենտրոն» բանակախումբը (1945 թվականի հունվարի վերջին օրերին վերանվանվեց «Հյուսիս») իր տրամադրության տակ ուներ հիտլերյան բանակի ընտիր միավորումների ու զորամասերի պատկանելի մի ուժ՝ 41 դիվիզիա և առանձին զորամասեր, որոնց կազմում կային 580.000 զինվոր ու սպա, 200.000 ֆուլկրաշտուրմական, ավելի քան 8.200 հրանոթ ու ականանետ, 700 տանկ ու զրահային հրանոթ, ավելի քան 500 մարտական ինքնաթիռ¹:

1944 թվականի սեպտեմբերի 21-ին գեներալ-ֆելդմարշալ Ռունդշտեդտը Հիտլերի զորակայանից ռայխսլայտերներին, Գաուլայտերներին ու միավորումների հրամանատարներին հանձնեց Հիտլերի հրամանը տոտալ մարտեր վարելու և դրանք «երևակայությամբ հորինելու» անհրաժեշտության մասին: «Մարտական գործողությունների գոտում, — ասվում էր հրամանում, — մեր պայքարը պետք է հասցնել ծայրահեղ համառության, իսկ յուրաքանչյուր մարտունակ անհատի օգտագործումը՝ առավելագույն աստիճանի: Յուրաքանչյուր բունկեր, գերմանական քաղաքի յուրաքանչյուր թաղամաս և յուրաքանչյուր գերմանական գյուղ պետք է վերածվի ամրոցի, որի առջև կամ հակառակորդը արյունաքամ կլինի, կամ էլ այդ ամրոցի կայազորը ձեռնամարտում կկործանվի դրա ավերակների մոտ: Կարող է խոսք լինել միայն դիրքերը պահելու կամ ոչնչանալու մասին»²:

Հոկտեմբերի կեսերին Ադոլֆ Հիտլերը ժամանում է Քյոնիգսբերգ: Այդ ժամանակից էլ Արևելյան Պրուսիայի Գաուլայտեր Կոխը ձեռնամուխ է լինում ֆուլկուշտուրմի ջոկատների ստեղծմանը: Հիտլերը ելույթ է ունենում ռադիոյով, Արևելյան Պրուսիայի 16-ից մինչև 60 տարեկան բնակիչներին կոչ է անում մտնել ֆուլկրաշտուրմի ջոկատները: «Կենտրոն» բանակախումբի հետ միասին ֆուլկուշտուրմի բազմաթիվ ջոկատներ կոչվում էին պաշտպանական

դիրքերում, և պետք է ասել, որ ֆուլկուշտուրմականները, մասնավորապես մոլեռանդ երիտասարդությունը, մարտերում իրենց պահում էին հանդուգն, կոչվում էին մինչև վերջին հնարավորությունը, համառորեն մնում դիրքերում: Արևելյան Պրուսիայում Հիտլերը հույսը դրել էր ոչ միայն անառիկ պաշտպանության վրա: Նա մշակում էր հարձակման նոր պլաններ, ներգրավելով Մերձբալթիկայում գտնվող ուժեղ խմբավորումը¹:

Չպետք է զարմանալ, որ Արևելյան Պրուսիայում մղվող մարտերը աչքի էին ընկնում բացառիկ կատաղության մեջ ու դաժանության մեջ: Հողի յուրաքանչյուր թիզը մեր զորքերը գրավում էին կամ պաշտպանվող հիտլերականներին լրիվ ջախջախելուց, կամ հրետանու կրակով նրանց պաշտպանական կառուցվածքները քարուքանդ անելուց հետո: Բոլոր այն վայրերում, ուր մարտեր էին տեղի ունենում, ինչպես ասում են, ողջ տեղ չկար: Արևելի պայթյուններից հերկվել էր ամբողջ հողը: Ամենուրեք ուժափոսեր էին, ավերակների կույտեր, քարուքանդ արված փշալարեր, խփված տանկեր ու ավտոմեքենաներ, ջարդված հրանոթներ, ականանետներ ու գնդացիներ, զանազան տձև զանգվածներ... Առաջ անցնելով նշենք, որ Քյոնիգսբերգից մինչև Պոլնան տանող ճանապարհը ծածկված էր խփված մարտական տեխնիկայով: 1945 թվականի ապրիլի առաջին կեսին անցնելով հենց նոր ավարտված մարտերի վայրերով, մեկ անգամ ևս համոզվում էինք, թե որքան կատաղի բնույթ են կրել Արևելյան Պրուսիայում մղված ճակատամարտերը: 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հարձակման գոտում ամեն ինչ հիմնահատակ ավերված էր, չկար ոչ մի շատ թե քիչ անվնաս մնացած շենք: Նույն Մյասսո, Բրոդնիցա և Տորուն (Տորն) քաղաքների շրջանում, որտեղ գործում էին 2-րդ Բելոռուսական ռազմաճակատի աջթևյան միավորումները՝ ընդգրկելով Արևելյան Պրուսիայի մի քանի հարավային շրջաններ, պատկերը նույնն էր: 2-րդ Բելոռուսական ռազմաճակատի աջ թևում մղվող մարտերը նույնպես կատաղի բնույթ էին կրում:

Սովետական բանակի Գերագույն զլխավոր հրամանատարությունը խնդիր էր դրել գերմանական «Կենտրոն» բանակների խումբը կտրել հյուսիսից ու հարավից, մեկուսացնել և ոչնչացնել:

¹ См. А. М. Василевский. Дело всей жизни, 1974, стр. 475.
² «Совершенно секретно. Для командования», изд. «Наука», 1967, стр. 553.

¹ См. «История второй мировой войны», М., 1956, стр. 466.

Հոկտեմբերի 10-ին 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի զորքերը՝ բանակի հրամանատար Ի. Գ. Չեռնյախովսկու հրամանատարութեամբ դուրս եկան պետական սահման և հոկտեմբերի 16-ին անցան հարձակման: Ճեղքելով գերմանացիների ուժեղ ամրացված երկարատև պաշտպանությունը, ռազմաճակատի զորքերը Արևելյան Պրուսիայում խորացան մինչև 60 կիլոմետր: Պատերազմական գործողությունները տեղափոխվեցին հակառակորդի տերիտորիան: Չորքերը գրավեցին մոտ 900 բնակավայր և անցան պաշտպանություն:

Դրանից անմիջապես հետո Արևելյան Պրուսիա մտան գեներալ-լեյտենանտ Լուչինսկու 28-րդ բանակի զորքերը: Հոկտեմբերի 23-ից մինչև նոյեմբերի 6-ը 61-րդ դիվիզիան Արևելյան Պրուսիայում անցկացրեց զորաշարժեր: Հրամայված ռուսական ստորաբաժիններում էր պատերազմական գործողությունների նոր թատերաբեմը: Շարունակվում էր նոր պայմաններում զորքերին մարտերի նախապատրաստելու աշխատանքը:

Գերմանական զորքերը ակտիվ, այդ թվում և մարտով հետախուզություն էին կատարում մեր ռազմաճակատում: Նրանք փորձում էին շոշափել ռազմաճակատի թույլ տեղերը: Սա նշանակում էր, որ թշնամին լրջորեն նախապատրաստվում է նոր հարձակման: Հիտլերը հրամայել էր Չեռնյախովսկու զորքերը ետ շարժել Արևելյան Պրուսիայից:

3-րդ Բելոռուսական ռազմաճակատի զորքերն անցան ակտիվ պաշտպանություն: Չորքերի մեջ տարվող աշխատանքը համապատասխանեցվում էր ստեղծված նոր պայմաններին: Հիմնական ուշադրությունը դարձվում էր հակառակորդի տանկային զորհները ետ մղելուն, հրետանային զորամասերը նախապատրաստելուն: Հոկտեմբերի 30-ին էյդկունեն քաղաքում անցկացվեց դիվիզիայի հրետանավորների հավաք: Մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները հաստատ խոստացան թշնամու ոչ մի տանկ մոտ չթողնել մեր զորամասերի մարտակարգերին:

Մեր զորքերի հարձակումից շատ առաջ գերմանական հրամանատարությունը ամբողջ տեղական բնակչությանն ու ունեցվածքը էվակուացրել էր արևմտյան շրջանները: Բնակավայրերն ամայացվել էին: Միակ բանը, որ գերմանացիները չէին հասցրել տեղափո-

խել արևմուտք, դաշտում մնացած ճակնդեղի բերքի մի մասն էր: Բայց դա չխանգարեց Գեբելսին նոյեմբերի սկզբին Քյոնիգսբերգում ունեցած իր ելույթում վայրահաչել գրավված շրջաններում բուլշևիկների կատարած «գազանությունների» և տեղական բնակիչների «գնդակահարությունների» մասին: «Ա՛յ թե փչում է կապիկը», — ասում էին զինվորները:

Այստեղ տեղին է հիշատակել «Զնամյա պոբեդի» թերթի խմբագիր մայոր Յա. Կրոնրոդի մի հանդուգն քայլի մասին: 1941 թվականին Կրոնրոդը ռազմաճակատ էր մեկնել Մոսկվայի աշխարհազորայինների հետ, նշանակվել էր աշխարհազորային դիվիզիայի գումարտակներից մեկի հրամանատար: 1944 թվականի մարտին նա 61-րդ դիվիզիա եկավ որպես թերթի խմբագիր: Պետք է ասել, որ լրագրողների փոքրիկ կոլեկտիվը գրեթե հոգս չէր պատճառում քաղաքային: Խմբագրությունն աշխատում էր սեփական նախաձեռնությամբ և խելամտորեն, թերթը ատելություն էր բորբոքում ֆաշիզմի նկատմամբ, ռազմիկներին ոգեշնչում մարտերի ընթացքում: Խմբագրության աշխատողները գրեթե միշտ գտնվում էին մարտի ամենավտանգավոր տեղերում, ջրային արգելքներն անցնում էին կտրիճների առաջին խմբերի հետ, իսկ խմբագրության քարտուղար Կոստյա Վաչնաձեն մի անգամ նույնիսկ դնաց հետախուզություն:

Բելոռուսիայում մղված մարտերում տպագրական մեքենան վնասվել էր: Թերթը լույս էր ընծայվում մեծ դժվարությամբ: Հաճախ ստիպված էինք լինում դիմել հարևանների օգնությանը: Նոր մեքենա տալ չէին խոստանում: Դիվիզիան հենց նոր էր մտել Արևելյան Պրուսիա: Ճիշտ այդ ժամանակ 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի տանկային զորամասերը խիզախ արշավ կատարեցին հակառակորդի թիկունքում, մտնելով Շտալուպենեն քաղաքը: Թերթի խմբագիր Կրոնրոդը, առանց երկար մտածելու, խմբագրության բեռնատար մեքենայով գնաց տանկերի ետևից: Մինչ տանկերը կգրոհեին քաղաքի վրա, Կրոնրոդը գտավ տպարանը, վերցրեց մի նոր տպագրական մեքենա, թղթի պաշար և տանկերի հետ բարեհաջող վերադարձավ դիվիզիա: Նրան այդ հանդուգն ու անմիտ քայլի համար խիստ հանդիմանեցինք: Բայց նա անվրդով ընդունեց դիտողությունը:

3. ՀԻՍՈՒՆ ՕՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 27-րդ տարեդարձը նշեցինք հենց շարժման ընթացքում, ստորաբաժանումներում կազմակերպեցինք կարճատև միտինգներ:

Նոյեմբերի 7-ի առավոտյան դիվիզիան կենտրոնացավ Տելիտցկեմեն նրկաթուղային կայարանից հյուսիս-արևմուտք, իսկ հաջորդ գիշերը Շտալուպենեն քաղաքից 20 կիլոմետր հարավ-արևելք փոխարինեց 83-րդ գվարդիական դիվիզիային, պաշտպանություն գրավելով Գրյունդվեյնշտեյն-Տելիտցկեմեն բնակավայրերի շրջանում. սա ամբողջ շրջապատում միակ հատվածն էր, որ գերմանացիները, պաշտպանական աշխատանքներ կատարելու իմաստով, թողել էին անձեռնմխելի: Հարձակման ժամանակ 83-րդ գվարդիական դիվիզիան հայտնվեց ճակատով մեկ ձգվող ամրացված բարձունքների շարքի առջևում, հակառակորդից 120—150 մետր հեռավորության վրա, շափազանց աննպաստ ցածրադիր մի վայրում, որը լավ վերահսկվում ու գնդակոծվում էր հակառակորդի գրաված բարձունքներից: Պաշտպանության առաջավոր գիծն անցնում էր Ռոմինտե գետի ուղղությամբ: Չկար ոչ մի թաքստոց: Պաշտպանության ամբողջ հատվածի միակ բնակավայրը ձախ թևի առաջավոր գծի վրա գտնվող Վոլտերկեմեն գյուղն էր:

Արժանին պետք է հատուցել դիվիզիայի հրամանատար Շացկովին և դիվիզիայի ամբողջ շտաբին, որոնք շատ արագ ու հմտորեն մշակեցին մեր դիվիզիայի պաշտպանության սխտեմը: Մի կողմից պաշտպանելով, դիվիզիան լարված աշխատանք էր տանում այդ սխտեմի ստեղծման վրա: Այն բաղկացած էր բազմաթիվ անցուղիներ, գետնատնակներ ունեցող վեց գիծ համատարած խրամատների երկու էջերից: Յուրաքանչյուր հրաձգային գումարտակ ուներ իր ռեզերվային դիրքերը, որոնք զբաղեցնում էին երկրորդ էջերի նրա ստորաբաժանումները, և պահեստի հրամանատարական կետ: Պաշտպանության սխտեմն ընդգրկում էր մի քանի հակատանկային հենակետ և հրազենի մի քանի հազար բջիջ: Հենակետերի հրանոթների մեծ մասը զրկված էր ուղիղ նշանառության: Ամբողջ կրակային սխտեմը կապված էր փոխգործողությամբ և մի ամբողջություն էր կազմում: Կարային կապը անց էր կացվում աննկատ, առվակների միջով: Գետափի երկարությամբ

ստեղծվում էին հակատանկային և հակահետեակային ականադաշտեր, իսկ տեղ-տեղ՝ նաև փշալարային արգելքներ: Պաշտպանական սխտեմի թիկունքում յուրաքանչյուր գումարտակ ստեղծում էր իր բաղնիքը:

Մանր պաշտպանություն պայմաններում այսքան մեծ աշխատանք կատարելու համար շատ ժամանակ պահանջվեց: Բացի դրանից, սկզբից անձրևների շրջանը: Անձրևների և տեղ-տեղ դուրս եկող ստորգետնյա ջրերը լցվեցին խրամատները, իսկ խրամատներից ջրերը դուրս բերելու ոչ մի միջոց չկար: Խրամատներում ցուրտ էր ու ցելխ: Սկսեցինք մարդկանց հերթով դուրս բերել խրամատներից ու տանել թիկունք, կազմակերպել նրանց զգեստի և կոշիկների շտրագման գործը: Բուժսանգումարտակին կից ստեղծվեց «հանգստի տուն», որտեղ դիվիզիայի մարտիկները 5-ից 10 օր հերթով հանգստանում էին: Սակայն մարդկանց մեծ թիվով և հաճախ դիրքերից հանել չէր կարելի, քանի որ ռազմաճակատը լայն էր, իսկ հակառակորդը գործում էր շատ ակտիվ: Սկսեցինք լայն էր, իսկ հակառակորդը գործում էր շատ ակտիվ: Սկսեցինք ջուրն ու ցելխը խրամատներից դուրս հանել բահերով ու կաթսայիկներով, պատրաստեցինք տախտամածներ: Զինվորները օրվա ընթացքում երկու անգամ տաք սնունդ էին ստանում: Հնարավոր չէ մի առ մի թվել բոլոր հոգսերը: Ակտիվ պաշտպանությունից բացի, առաջին երկու շաբաթներին դիվիզիայի ու գնդերի հրամանատարության հիմնական ուշադրությունն ու ջանքերն ուղղվեցին պաշտպանական աշխատանքների ու անձնակազմի կենցաղի կազմակերպմանը:

3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար բանակի գեներալ Ի. Դ. Չեռնյախովսկու հետ առաջին անգամ հանդիպեցինք նոյեմբերի 18-ին: Բարձրահասակ, բարեկազմ, թուխ միտղամարդ, իր տարիքից ավելի երիտասարդ էր երևում: Այն ժատղամարդ, իր տարիքից ավելի երիտասարդ էր երևում: Այն ժամանակ նա 37 տարեկան էր՝ ռազմաճակատների հրամանատարների մեջ ամենաերիտասարդը: Նա մեզ ծանոթացրեց ռազմաճակատի իրադրությանը, այնուհետև շարադրեց աշխատանքների ծավալուն ծրագիրը պաշտպանության ընթացքում: Տպավորությունը շատ մեծ էր, մեր առջև կանգնած էր տաղանդավոր ռազմական ու պետական մի գործիչ: Չեռնյախովսկին տվեց հետևյալ ցուցումները. կազմակերպել լարված պաշտպանություն. պաշտպանական բնագծի թիրուխյունները վերացնել մինչև նոյեմբերի 25-ը. հակա-

ռակորդին ուսումնասիրել հետախուզության բոլոր տեսակներով՝ վաշտից մինչև ռազմաճակատ. մանրագնին ուսումնասիրել հակառակորդի առաջավոր գիծը և մեր առաջավոր գիծը կազմակերպել հակառակորդից 200 մետր հեռավորության վրա. լրիվ ավարտել պաշտպանության կառուցումը, մի անգամ ևս մտածել կրակային սիստեմի կատարելագործման մասին, կազմելով կրակային նախաձեռնությունը վերցնելու միջոցառումների պլան. ճիշտ որոշել հակառակորդի հրամանատարական կետերի, դիտակետերի տեղերը. զորքերի շրջանում բարձրացնել զինվորական ու դաշտային կարգապահությունը. սանիտարական աշխատողներին ուղարկել խրամատները, մարտիկների մոտ, բարելավել մարտիկների ու հրամանատարների արտաքինը և նրանց կենցաղը. բոլոր հրամանատարները պետք է անուններով իմանան իրենց ենթականերին, իսկ վաշտի հրամանատարները՝ իրենց բոլոր մարտիկներին. անցկացնել առավոտյան և երեկոյան ստուգումներ. խստորեն կատարել օրվա կարգուկանոնի պահանջները. բարձրացնել կրտսեր հրամանատարների հեղինակությունը, մինչև նոյեմբերի 30-ը վերանայել նրանց կազմը. առաջ քաշել առավել ընդունակներին, խիստ կարգուկանոն ստեղծել առաջավոր գծում, կորուստները հասցնել զրոյի, 5 օր մեկ կատարել հաշվառում, լինել մշտական մարտական պատրաստության մեջ, ռազմամթերքի նորմաները կրակակետերում պետք է իմանան բոլորը. հաստիքից դուրս մարդիկ չպահել թիկունքում, թիկունքի ստորաբաժանումներում. պլանավորել և մինչև դեկտեմբերի 1-ը անցկացնել զորամասերի մարտական ստուգատես, ընդ որում յուրաքանչյուր ռազմիկ պետք է ունենա աղյուսակ. մշակել սպաների դաստիարակության միջոցառումների պլան: Վաշտերի, դասակների ու ջոկերի հրամանատարների հետ անցկացնել առանձին պարբերական խորհրդակցություններ՝ դիվիզիայի ու զորամասերի հրամանատարների ղեկավարությունը:

Դա երկարատև պաշտպանության ծրագիր էր:

Ռոմիտն գետի արևմտյան ափին, բարձունքների վրա տեղաբաշխված էր «Հերման Գյորինգ» համանուն կորպուսի երկրորդ զրենադերական պարաշյուտատանկային դիվիզիան: 1933 թվականին Գյորինգի անձնական պահպանության գումարտակի բա-

զայի վրա կազմավորվեց մի գունդ, իսկ 1942 թվականին այդ գնդի բազայի վրա ստեղծվեց «Հերման Գյորինգ» պարաշյուտատանկային դիվիզիան: Նա դաշնակիցների զորքերի դեմ կռվում էր Հյուսիսային Աֆրիկայում, Սիցիլիայում և Իտալիայում: 1944 թվականի հուլիսին նա փոխադրվեց Լեհաստան, մասնակցեց վարչավայի մատուցներում մղված մարտերին և մեծ կորուստներ կրեց: 1944 թվականի հոկտեմբերին «Հերման Գյորինգ» դիվիզիան փոխադրվեց Արևելյան Պրուսիա, որտեղ նա վերածվեց կորպուսի, որի կազմումն էին առաջին և երկրորդ զրենադերական պարաշյուտատանկային դիվիզիաները, տանկային մի դիվիզիա, առանձին զորամասեր ու ստորաբաժանումներ: Դրանք բոլորն էլ կրում էին Գյորինգի անունը: Կորպուսի անձնակազմը կոմպլեկտավորված էր 18-ից մինչև 26 տարեկան ՍՍ-ական երիտասարդությունից՝ գերազանցապես Գերմանիայի հարավային շրջաններից: 48 տանկ ունեցող մի գունդ եկել էր Բավարիայից: Կորպուսում կային ավստրիացիներ ու նույնիսկ լեհեր: Կորպուսի հրամանատարական ավստրիացիներ ու նույնպես մանրակրկիտ էր ընտրված: Օրինակ, 2-րդ պարաշյուտատանկային գնդի հրամանատար փոխգնդապետ Շուլցին գերինները բնութագրում էին որպես դիակների վրայով քայլող մի սպայի: Հետախուզության տվյալներով և գերինների ցուցմունքներով, կորպուսն ուներ լավ վարժեցված և ֆաշիստական վարչաներով, կորպուսն ուներ լավ վարժեցված և ֆաշիստական վարչաներով, կորպուսն ուներ լավ վարժեցված և ֆաշիստական վարչաներով, կորպուսն ուներ լավ վարժեցված և ֆաշիստական վարչաներով:

61-րդ դիվիզիային վիճակվեց իր ուժերը շափել «Հերման Գյորինգ» 2-րդ պարաշյուտատանկային դիվիզիայի հետ:

Ռազմաճակատի շատ հատվածներում մեր ռազմաճակատի պաշտպանության ամրությունը ստուգելու նպատակով գերմանացիները ցուցաբերեցին մեծ ակտիվություն: Պակաս ակտիվություն չցուցաբերեց նաև «Հերման Գյորինգ» 2-րդ դիվիզիան: Նոյեմբերի 10-ից 14-ը ամեն օր 61-րդ դիվիզիայի վրա գրոհում էր նրա պաշտպանության տարբեր հատվածներում, այնուհետև նույնը կրկնեց նաև նոյեմբերի 17-ին և 26-ին, բայց անհաջող: 307-րդ գնդի 5-րդ վաշտի հատվածում թշնամին ձգտում էր «Լեզու» վերց-

նել, բայց հաջողութիւն չունեցաւ: Հետեւելով թշնամու վարքագծին, 66-րդ զնդի 8-րդ վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Բրիթակինը նույն զնդի հարևան 9-րդ վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Շեչենկոյին զգուշացրեց. «Գերմանացիները մարտով հետախուզութիւն են պատրաստում: Պատրաստվեցեք»: Բրիթակինը շտաբով երկու վաշտն էլ ետ մղեցին գրոհը: Նույն օրվա առավոտյան հակառակորդը մարտով հետախուզութիւն կատարեց ձախ հարևանի՝ 152-րդ դիվիզիայի հատվածում, միաժամանակ խոցելով 307-րդ զնդի ձախ թևը: Մի քանի հիտլերականներ ներխուժեցին 307-րդ զնդի խրամատները, բայց ոչ ոք չվերադարձաւ. բոլորը ոչնչացվեցին:

Նոյեմբերի 27-ին Շտաբուպենենից հյուսիս գերմանացիները 70 տանկերի աջակցութեամբ անցան հարձակման: Կատաղի մարտ սկսվեց: Խոշոր կորուստներ կրելով թշնամին նահանջեց: Նոյեմբերի 30-ին նրանք խոշոր ուժերի «կենտրոնացում» ցուցադրեցին: Մոտորների աղմուկը շարունակվեց ամբողջ օրը: Զեռնարկվեցին «չեզու» վերցնելու մի քանի փորձեր: Օրինակ, դեկտեմբերի 5-ի առավոտյան գերմանացիների ուժեղացված վաշտը փորձեց «չեզու» գրավել 307-րդ զնդի 6-րդ վաշտի հատվածում: Մի խումբ հիտլերականներ ընդհուպ մոտեցան մեր խրամատին: Մարտ սկսվեց: Վաշտի հերթապահ լեյտենանտ Խիմշիաշվիլին մահացու վերք ստացաւ: Գասակի հրամանատար լեյտենանտ Մկրտչյանը մի մարտիկի հետ հաջողութեամբ ետ մղեց հիտլերականների խրամբի ճնշումը: Բայց նա «մոռացաւ» դեկավարել իր դասակի կրակը: Մթության մեջ դասակի զինվորները անկանոն կրակ տեղացին, որի հետևանքով հիտլերականները անպատիժ հեռացան: Այս հարցը դարձաւ զնդի գումարտակների սպայական կազմի քննութեան առարկա:

Այդ օրերին առանձնապես ակտիվ աշխատեց գերմանական պրոպագանդան, ուղիւստացողութիւններ էին տալիս մեր զորքերի պաշտպանութեան առաջավոր գծում, թուուցիկներ տարածում, նյութեր հաղորդում գեբելսյան խոհանոցից Քյոնիգսբերգի ուղիւստով: Գերմանական պրոպագանդայի բովանդակութիւնն ու տոնը այն չէր այլևս: Վաղուց արդեն նրանք չէին խոսում «կարմիր բանակի ջախջախման» մասին, չէին ասում «ձեր դրութիւնը անելանելի է» և այլն: Գերմանական ժողովրդին ու բանակին նա, մի կողմից,

խոստանում էր նոր հարձակում՝ «գաղտնի զենքի» օգնութեամբ, իսկ մյուս կողմից՝ ներշնչում էր. «Ուրախացեք պատերազմով, որովհետև խաղաղութիւնը սարսափելի կլինի», «Հաղթանակ կամ Սիբիր», նրանց ահաբեկում էր պատերազմի ահալոր հետևանքներով, սարսափ տարածում: Մեր զորքերը գերմանացիների հաղորդումները դիմավորում էին փոթորկալի կրակով: Հիտլերին ակտիվ ծառայութիւն էին մատուցում հայրենիքի դավաճանները՝ վլասովականները: Նրանք տարածում էին իրենց «մանիֆեստը», փորձելով ներկայանալ որպես Հոկտեմբերյան հեղափոխութեան նվաճումների «պաշտպաններ», որոնք «բոլշևիկների դեմ պայքարում են ի սեր սովետական իշխանութեան»: Հիտլերականները դավաճանների «մանիֆեստը» տարածում էին օդից: Վլասովականներն ակտիվ դիվերսիոն գործունեութեամբ էին զբաղվում մեր զորքերի թիկունքում: Նրանք կարմիրբանակայինի համազգեստով թաքնվելով խրամատներում, սպանում և ահաբեկում էին պատահած հատուկներ զինվորների ու սպաների, հիտլերականների օդտին կատարում էին հետախուզութիւն, դիվերսիոն ակտեր: Դեկտեմբերի 13-ի գիշերը մեր խրամատի առջև լսվեց ականի պայթյուն: Մարտիկները շրջապատեցին ու գերի վերցրին 5 վլասովականների, վեցերորդը պայթեց ականի վրա: Դավաճանները ջանում էին ներկայանալ որպես «փախստականներ»: Իսկ երբ նրանցից ցուցմունքներ պահանջվեցին հակառակորդի մասին, նրանք խուսափեցին ուղղակի պատասխանից:

Պաշտպանութեան առաջին օրվանից 61-րդ դիվիզիան պայքարում էր կրակային նախաձեռնութիւնը վերցնելու համար և շուտով այն խլեց հակառակորդից: Պաշտպանութեան երրորդ օրը, նոյեմբերի 10-ին, առաջին էշելոնի զնդերը քայլեր ձեռնարկեցին ի հայտ բերելու գերմանացիների պաշտպանութեան առաջավոր գծի կրակակետերը: Փոխզնդապետ Վեշտոմովի 66-րդ գունդը 5-րդ վաշտի ուժերով, հրետանու և ականանետների կրակային աջակցութեամբ, շոշափեց հակառակորդի առաջավոր գիծը: Վաշտն ընդհուպ մոտեցաւ հակառակորդի դիրքերին և համարձակ գրոհեց դրանք: Նա գրավեց փոքրիկ բարձունքը մի տնակի հետ և մարտ մղեց խրամատում: Այդ մարտի մանրամասները հետաքրքրութիւն են ներկայացնում ամենից առաջ մարտիկների շրջահայաց

գործողութիւնները տեսակետից: Ջոկի հրամանատար կուսակցութեան անդամ սերժանտ Վալիկը կարմիրբանակային Շուտկոյի հետ առաջ անցավ և ականապատված դաշտի միջով անցուղի բացեց դեպի բարձունքը: Ջոկը գնաց նրա հետևից: Վալիկն ու զինվորները շրջապատեցին տնակը, որտեղ գտնվում էին մի ջոկի չափ հիտլերականներ: Նրանցից 7-ը ոչնչացվեցին, իսկ մեկը գերվեց: Ամրանալով բարձունքի վրա և տնակում, ջոկը գրոհեց խրամատի վրա: Այդ ժամանակ սերժանտ Միզուրովը կտրեց գերմանացիների հեռախոսագիծը: Չեռնամարտում մեր մարտիկները ջարդեցին ևս մի ջոկ, իրենցից չկորցնելով և ոչ մեկին: Թշնամին մեր վաշտի վրա փոթորկալի կրակ բացեց այն բանից հետո, երբ մեր ջոկը ամրացավ նրա խրամատում: Հայտնաբերվեցին թշնամու պաշտպանութեան առաջավոր գծի կրակակետերը: Մի ամբողջ օր վաշտն իր ձեռքում պահեց բարձունքը, տնակը, խրամատը և դրանք գնդի հրամանատարի հրամանով թողեց հաջորդ գիշերը «լեզվի» հետ գունդ վերադառնալով:

Ուշագիշտ հետևելով հակառակորդի առաջավոր գծին, 307-րդ գնդի հետախուզական դասակի հրամանատար լեյտենանտ Զարիկաշվիլին պարզեց, որ հակառակորդի մարտակարգերի շրջանում, ձորակի մեջ, խոհանոց կա: Ուրեմն, այնտեղ կարող են սպաներ լինել, մտածեց նա և ստեղծեց 7 մարդուց բաղկացած գրոհային մի խումբ: Երկու սակրավոր փշալարերի միջով ուղի բացեցին դեպի հովիտ: Գրոհախումբը Զարիկաշվիլու գլխավորութեամբ սողեսող հասավ հովտին և թաքնվեց խոհանոցի ու առաջավոր գծի խրամատի միջև գտնվող ոչ-խոր մի փոսում: Մոտիկից անցան երկու հիտլերական: Զարիկաշվիլին հրամայեց նրանց ձեռք շտալ մինչև աջակցող խմբերը դիրքեր գրավեն: Շուտով երևացին երկու հիտլերականներ ևս: Մարտիկները նրանցից մեկին սվինահարեցին, իսկ մյուսի բերանը փակեցին և քար թռկալով փոսը: Քիչ հեռու հայտնաբերվեց մի գնդացի: Այն վտանգագրծելու նպատակով գրոհայինները սողալով մոտեցան դրան և սվինահարեցին գնդացորդին: Հետախուզները առանց կրակոցի վերադարձան «լեզվի» հետ:

Հետախուզները շատ շարժարվեցին սպա որսալու: Սակայն նրանք գերադասում էին զոհվել, գերի չէին հանձնվում: Նրանց ոչնչացնում էին, փաստաթղթերը վերցնում, իսկ որպես «լեզու»

քերում էին շարքայինների կամ ենթասպաների: Դեկտեմբերի 19-ի գիշերը 307-րդ գնդի հրաձգային դասակի հրամանատարներից մեկը, զինվորների փոքր խմբի գլուխ անցած, «գնաց սպա որսալու»: Հաջող քողարկվելով, նա իր կողքով բաց թողեց զինվորին: Սպասում էր սպայի հայտնվելուն: Ժամանակն անցնում էր, շուտով լույսը կբացվեր, բայց սպան չկար ու չկար: Հայտնվեցին երկու հիտլերական: Նրանցից մեկին սվինահարեցին, իսկ մյուսին՝ ենթասպային բերեցին շտաբ: Օրգեն Գրաբովը՝ 1925 թվականի ծնված, Լենդսբերգ քաղաքի բնակիչ, 1939 թվականից հիտլերյան երիտասարդական կազմակերպության անդամ, իսկ 1943 թվականի ապրիլից՝ նացիոնալ-սոցիալիստական կուսակցության անդամ, համոզված ֆաշիստ էր: Գրաբովը «Հերման Գյորինգ» դիվիզիա էր եկել ռազմա-օդային դպրոցի կուրսանտների հետ որպես համալրում: Նա պատմեց «Հերման Գյորինգ» երկրորդ դիվիզիայի պաշտպանութեան մասին: Նրա ցուցմունքները համընկան մեր հետախուզության տվյալների հետ:

Ծանր ու ակտիվ պաշտպանութիւնից պետք էր անցնել վրձնական հարձակման: Սա առաջին ու գլխավոր խնդիրն էր: Դիվիզիայի հրամանատարը գնդերի ու ստորաբաժանումների առջև խնդիր դրեց՝ պաշտպանական բնագիծը կատարելագործելու հետ միասին հայտնաբերել ու լռեցնել հակառակորդի կրակակետերը, խախտել նրա կրակային սիստեմը, որպեսզի դիվիզիան հարձակման ժամանակ կարողանա առանց զգալի կորուստների հաղթահարել թշնամու պաշտպանութիւնը: Սա դիտվեց որպես զորքերում տարվող մարտական ու քաղաքական աշխատանքի կարևորագույն խնդիր և լրացվեց յուրաքանչյուր մարտիկի ու սպայի՝ ակտիվ նախաձեռնութեամբ:

Դեռևս նոյեմբերի 7-ի ռազմերթի ժամանակ խնդիր դրվեց, որ յուրաքանչյուր մարտիկ պաշտպանութիւնում ոչնչացնի մեկ ֆաշիստ: Բնականաբար, այն ժամանակ չէինք կարող իմանալ, թե որքան ենք նստելու պաշտպանութիւնում: Այստեղ կարևորն այն էր, որ այս լուրունգը դարձավ որսորդ-սնայակերների շարժման լայն ծավալման առիթ: Այդ շարժումն ընդգրկեց նաև պաշտպանութեան երկրորդ էջելոնի հրաձգային ստորաբաժանները: Երեկվան եկան 221-րդ գնդի որսախմբեր, որոնք ցերեկը առաջավոր

գծում որսում էին ֆաշիստներին, իսկ գիշերը զբաղեցնում իրենց դիրքերը: Սնայպերական շարժման նախաձեռնողները դարձան փորձառու զինվորներ:

Քաղբաժինը հատուկ աշխատանք կատարեց սնայպերների հետ: Յուրաքանչյուր «որսորդի» գործունեությունը հաշվառման մեջ էր: Այնպիսի «որսորդների» անուններ, ինչպիսիք են Ջագայնովը, Պոնոմարենկոն, Սերոշտանը, Բելոմեստին և ուրիշներ, հայտնի դարձան ամբողջ 28-րդ բանակում: 1944 թվականի դեկտեմբերի 11-ին 28-րդ բանակի քաղբաժնում կայացավ վաշտային ազիտատորների հավաք, որտեղ առանձնապես դրվատվեց վաշտի կոմերիտական կազմակերպիչ ավագ սերժանտ Սերոշտանի գործունեությունը: Գերազանց սնայպերն ու սնայպերական շարժման կազմակերպիչը ճանաչվեց որպես բանակի ամենալավագույն ազիտատորը: Սերոշտանը «որսորդների» շարքն էր ընդգրկել վաշտի համարյա բոլոր կարմիրբանակայիններին: Պաշտպանության առաջին 20 օրում նրանց հաշվում կար 100 ոչնչացված հիտլերական: Դեկտեմբերի 22-ին տեղի ունեցավ բանակի սնայպերական հավաք: Բանակի քաղբաժինը պատրաստել էր նվեր՝ հարմոն, որը տրվելու էր բանակի ամենալավագույն սնայպերին: Այն հանձնվեց կարմիրբանակային Ջագայնովին: Որպես «որսորդ» Ջագայնովը աչքի էր ընկնում իր համբերատարությամբ: Առաջին օրերին նա խնամքով պատրաստվում էր, յուրաքանչյուր նպատակ դիտում էր տարբեր կետերից և չէր կրակում, քանի դեռ լրիվ հավատացած չէր, որ կդիպչի: Մյուս սնայպերների անձնական հաշիվներում արդեն ոչնչացված ֆաշիստներ կային, իսկ Ջագայնովը դեռ շարունակում էր դիտել: Եկավ գործելու ժամը: Առաջին 14 կրակոցներով նա ոչնչացրեց 14 ֆաշիստի և իսկույն դարձավ հանրահայտ սնայպեր: Պաշտպանության ամբողջ ժամանակաընթացքում Ջագայնովը ոչնչացրեց 50 ֆաշիստի: Պոնոմարենկոյի սնայպերական քարտում պաշտպանության առաջին 12 օրում գրանցված էր ոչնչացված 9 ֆաշիստ, իսկ ամբողջ ժամանակամիջոցում՝ 41:

Հակառակորդի հետ պրոպագանդան տարվում էր գրեթե ամեն օր: Մեր հետախույզները թուրքիկներ էին տարածում թշնամու պաշտպանության առաջավոր գծում: Երեկոյան ու առավոտյան ժամերին տրվում էին ռադիոհաղորդումներ, երբեմն կազմակերպվում էին գերի գերմանական զինվորների ելույթներ: Երբեմն

ելույթներ էին ունենում Սովետական Միությունում գերմանացի հակաֆաշիստների կազմակերպության ներկայացուցիչները: Հաղորդվում էին Հայրենական պատերազմի ռազմաճակատներում կարմիր բանակի ձեռք բերած հաղթանակների, արևմտյան ռազմաճակատում և Իտալիայում դաշնակիցների զորքերի հաջողությունների, հիտլերյան կռալիցիայի քայքայման մասին, մերկացվում էին հիտլերյան պրոպագանդայի կեղծիքն ու խաբեությունը և այլն: Այդ շրջանում մեր պրոպագանդան հատկապես ընդգծում էր գերմանական զորքերի դիմադրության անհույս լինելը:

Այդ կապակցությամբ կուզենայի համառոտ պատմել մի հիանալի քաղաշխատողի՝ Բորիս Ստեպանովի մասին: Մինչև պատերազմը Ստեպանովը ապրել ու սովորել էր Գոնի Ռոստովում, ավարտել էր ինստիտուտը, դարձել ինժեներ: Նա շհասցրեց աշխատել մասնագիտությամբ... Վրա հասավ պատերազմը: Ստեպանովին զորակոչեցին բանակ: Սկզբում սովորեց դասընթացներում: Գերմաններեն իմանալն այն ժամանակ, ըստ երևույթին, բանակում երիտասարդ ինժեներների աշխատանքի բնագավառը որոշելու միակ ցուցանիշն էր: Ստեպանովը կրտսեր քաղդեկի կոչումով նշանակվեց 61-րդ դիվիզիայի քաղբաժնի հրահանգիչ՝ հակառակորդի զորքերի կազմալուծման գծով: Երիտասարդ ինժեները և բոլորովին անփորձ քաղաշխատողը ծառայության ընկերների ընդհանուր կարծիքով սկզբում «իր տեղը չէր գտնում», կաշկանդված էր զգում նույնիսկ ծառայակիցներին դիմելիս: Բայց նրան միանգամից ճանաչելը հեշտ չէր: Ստեպանովը նախ համառ կերպով կատարելագործում էր գերմաներենի իր գիտելիքները, գրի էր առնում դարձվածքներ և անհրաժեշտ տվյալներ, ուսումնասիրում հակառակորդին: Ստեպանովի դեմքից երբեք չէր իջնում ժպիտը, միշտ սիրալիք էր շրջապատի նկատմամբ: Բայց զլխավորը նրա քախոսությունն էր, նուրբ հումորը, մտքի սրությունը: Շուտով այս բանը նկատեցին նաև ընկերները: Նա հաճախ էր լինում դիվիզիայի ու զնդերի հետախույզների մոտ, մտերմանում նրանց հետ, ինչպես հավասարը հավասարի հետ: Երբ սկսվեցին մարտերը, ի հայտ եկան Ստեպանովի մյուս հատկությունները՝ խիզախությունն ու հնարամտությունը: Հետախույզության պետ Սերգեյ Թեստնովի հետ միասին նա անց էր կացնում հետախույզների հրահանգավորումներ, նրանց միջոցով թուրքիկներ էր տարածում

հակառակորդի առաջավոր գծում, հարցաքննում գերիններին և այլն:

Երեկոներն ու լուսաբացը Ստեպանովը անց էր կացնում մեր զորքերի խրամատների առաջին գծում, երբեմն ավելի առաջ էր գնում, պրոպագանդիստական նյութեր հաղորդում: Գերմանացիները կատաղի գնդակոծում էին, իսկ նա, փոխելով տեղը, շարունակում էր իր հաղորդումները: Գնդացրային կրակահերթեր, ականանետների, արկերի պայթյուններ... Սարքերը հաճախ շարքից դուրս էին գալիս, նա դժգոհում էր. «Չեն թողնում, որ նորմալ աշխատես», — ասում էր նա, բայց աշխատանքը չէր դադարեցնում: Մի անգամ նրա գլխում միտք ծագեց. «Իսկ ի՞նչ կլինի, եթե ցերեկը աշխատեմ»:

Ստադրվեց և կատարեց: Ինչ-որ տեղից գտնելով Հիտլերի մեծադիր նկարը, Ստեպանովը այն բարձրացրեց խրամատի թմբի վրա, իսկ ինքն սպասեց լուսանալուն: Հիտլերականներն իրենց ֆյուրերին տեսան սովետական զորքերի խրամատների թմբի վրա և նրա ետևից լսեցին իրենց ուղղված հաղորդումը: Նրանք չհամարձակվեցին կրակել ֆյուրերի վրա: Այսպես աշխատեց Կուբանում, Ուկրաինայի առաջին մարտերի ժամանակ: «Նիկոպոլյան պլացդարմի» մարտերի շրջանում: Բայց մի անգամ հիտլերականները «խախտեցին կարգը», այնպիսի կրակ թափեցին «Հիտլերի» գլխին, որ Ստեպանովի հաղորդման սարքերը ցիրուցան եղան:

— Է՛հ, բարեկամս, քո հորինվածքն սպառեց իրեն, — ասում էին ընկերները: Մի ուրիշ բան հորինիր, — խորհուրդ տվին նրան:

— Հորինվածքս տապալվեց, բայց դրա փոխարեն հիտլերականները սովորեցին կրակել Հիտլերի վրա, — սրամտեց Ստեպանովը:

Արևելյան Պրուսիայում, շնայած գերմանացիների դաժան դիմադրությանն ու նրանց պրոպագանդայի ակտիվությանը, մեր հաղորդումները «նորմալ» տրվում էին, ոչ ոք չէր խանգարում: Սա տարակուսանք առաջացրեց:

— Գուցե մեզ չե՞ն լսում:

— Կատուղեմ, — ասաց Ստեպանովը:

Այդ օրը, նոյեմբերի 15-ին, ավարտելով հերթական հաղորդումը, Ստեպանովը դիմեց գերմանական դիմվորներին. «Գերմանական դիմվորներ, ինչպե՞ս եք լսում ինձ: Ես պատրաստվում եմ

վաղը ձեզ կարևոր լուր հաղորդել: Եթե լավ եք լսում, ապա ազդանշան տվեք երեքաստղանի հրթիռով: Սպասում եմ ձեր ազդանշանին»: Գերմանացիները տեղնուտեղը արձագանքեցին. օդում կախվեց երեքաստղանի հրթիռը:

Կատարելով ռազմաճակատի հրամանատար Չեռնյախովսկու ցուցումները: դիվիզիայում մեծ աշխատանք տարվեց հրամանատարական կազմի հետ: Միայն դեկտեմբերի 1-ից մինչև 12-ը անցկացվեցին.

— Երկօրյա պարապմունքներ դասակների, վաշտերի ու դումարտակների հրամանատարների հետ՝ օրական 8 ժամ յուրաքանչյուր խմբի հետ առանձին, 4 ժամը՝ նվիրված մարտական պատրաստությանը, 4 ժամը՝ ընդհանուր քաղաքական հարցերին.

— ստուգարքի ընդունում հետևակի մարտական կանոնադրքերից (1 և 2 մաս) գումարտակային և դիվիզիոնային օղակների հրամանատարներից ու քաղաքատղաններից.

— տեսական կոնֆերանս Ի. Ստալինի «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 27-րդ տարեդարձը» զեկուցման առթիվ. երկու սեմինար գնդերի հրամանատարների, նրանց քաղգծով տեղակալների, շտաբների պետերի, դիվիզիայի շտաբի ավագ սպաների, քաղբաժնի աշխատողների, գումարտակների ու դիվիզիոնների հրամանատարների և նրանց քաղգծով տեղակալների համար.

— զեկուցում դիվիզիայի վարչության և գնդերի հրամանատարա-քաղաքական կազմի համար՝ «Սովետական գաղափարախոսության հաղթանակը ֆաշիզմի գաղափարախոսության նկատմամբ երկրորդ համաշխարհային պատերազմում» թեմայով.

— 16 սեմինար զանազան թեմաներով՝ միջին հրամանատարա-քաղաքական կազմի համար գնդերում և առանձին ստորաբաժանումներում.

— դիվիզիայի հետախույզների հավաք.

— կուսակցական ակտիվի ժողով (դեկտեմբերի 6-ին) «Կուսակցական կազմակերպությունների խնդիրները զորամասերի ու ստորաբաժանումների քաղաքական-բարոյական վիճակի հետագա ամրապնդման ուղղությամբ» հարցի առթիվ:

Սա առաջին կուսակցական ակտիվի ժողովն էր հակառակորդի տերիտորիայում և բուռն ընթացք ունեցավ:

Այս թվարկման մեջ չեն մտնում այն միջոցառումները, որոնք անց էին կացվում զորամասերում նրանց հրամանատարների, քաղաշխատողների և կուսակազմակերպությունների կողմից: Գլխավորըն այն էր, որ անցկացվող ամբողջ աշխատանքը նպատակամղված էր զորքերի հարձակողական ոգու բարձրացմանը:

Գիվիզիայի (և ոչ միայն դիվիզիայի) անձնակազմը ուշիուշով հետևում էր դաշնակից զորքերի գործողություններին:

Հիտլերյան զորքերը դաշնակիցների զորքերին լուրջ դիմադրություն ցույց չէին տալիս, դրա հաշվին գերմանական հրամանատարությունը նորանոր ուժեր էր տեղափոխում Արևելյան ռազմաճակատ և մտադիր էր անցնել նոր հարձակման: Այս հանգամանքը որոշակի անհանգստություն առաջացրեց մեր մարդկանց շրջանում, որը զուրկ չէր հիմքից: Ինչպես երևում է գերմանական գեներալների հուշագրություններից, շատերն այն ժամանակ արդեն նախընտրում էին գործարք կնքել մեր դաշնակիցների հետ, որպեսզի թույլ չտան սովետական բանակի մուտքը Գերմանիա, իսկ հիտլերյան գեներալ Կուրտ Տիպելսկիրխը ուղղակի խոստովանում է, որ «Արևմուտքում պատերազմ վարելու բուն տակտիկան «առավելագույնս հեշտացրեց» դաշնակիցների զորքերի արագ ներխուժումը Գերմանիայի կենտրոնական շրջանները»¹:

Մեր մարտիկների անհանգստությունը ոչ թե թուլացնում, այլ, ընդհակառակն, ուժեղացնում էր նրանց հարձակողական ոգին և մեր նոր հարձակումը արագացնելու ձգտումը: Ամենևին չէր սասանում մինչև վերջ հիտլերյան ֆաշիզմը ջախջախելու նրանց կամքը: Ոչ ոք չէր կասկածում, որ հիտլերյան բանակի օրերը հաշվված են, ֆաշիստական ղեկավարությունն ինքն էլ ռեալ կերպով զգում էր հիտլերյան Գերմանիայի անխուսափելի կործանումը: Գոյություն ունեւր միայն մի մտավախություն, թե դաշնակիցները կարող են գործարքի մեջ մտնել ֆաշիստական Գերմանիայի հետ: Բացառված չէր, որ այս պայմաններում ֆաշիստական ղեկավարությունը կարող էր արևմուտքում բացել ռազմաճակատը, որպեսզի դաշնակիցներն օկուպացնեն Գերմանիան, ներառյալ Բեռլինը, և դրանով իսկ կասեցնեն սովետական բանակի ներխուժումը Գերմանիա ու Բեռլին: Այս ամբողջ անհանգստությունը

կենտրոնանում էր մի հարցի շուրջ՝ ո՞վ է գրավելու Բեռլինը: Իսկ պատասխանը մեկն էր՝ շուտով հարձակման անցնել, շուտով հասնել Բեռլին: Մարդիկ կովում էին Արևելյան Պրուսիայում, իսկ նրանց խոհերն ու մտքերն ուղղված էին Բեռլինին:

Քաղապարտը մեծ աշխատանք ծավալեց զորքերի շրջանում, լայնորեն պարզաբանեց կարմիր բանակի վճռական դերը հիտլերյան Գերմանիայի դեմ մղվող պատերազմում և նրա առջև կանգնած խնդիրները, լայնորեն պարզաբանվեցին հակահիտլերյան կռալիցիայի մեջ մտնող պետությունների դաշնակցային պարտավորությունները, մասնավորապես Թեհրանի կոնֆերանսի որոշումները: Նշվեց, որ, իհարկե, դաշնակիցների ռեակցիոն շրջանները կուզենային մեր հաշվին շագանակներ հանել կրակից, առաջինը մտնել Բեռլին: Բայց նրանք ազատ չեն այդ հարցում: Սովետական Միությունը և նրա զինված ուժերը իրենց ուսերի վրա տարել են պատերազմի գլխավոր ծանրությունը և թույլ չեն տա դաշնակիցների որևէ շեղում իրենց դաշնակցային պարտավորություններից:

Սովետական պետությունը անշեղորեն կատարում էր իր դաշնակցային պարտավորությունները և նույնը պահանջում էր դաշնակիցներից: Հիտլերյան պարագլուխների բոլոր փորձերը՝ սեպ խրել հակահիտլերյան կռալիցիայի երկրների միջև, ձախողվեց: Կարմիր բանակը մեկը մյուսին հաջորդող հուժկու հարվածներ հասցրեց հիտլերյան բանակին, սրընթաց առաջ սլացավ դեպի Բեռլին:

1945 թվականի շեմին դիվիզիայի «Զնամյա պորեդի» թերթը մարտիկներին դիմեց հետևյալ խնդրանքով. «Մեր՝ սովետական լավ սովորության համաձայն, ճանապարհելով հին տարին և դիմավորելով նորը, յուրաքանչյուր մարդ ամփոփում է անցյալի արդյունքները, երազում ապագայի մասին: «Պետք է երազել, — ասում էր վլադիմիր Իլյիչ Լենինը: — Երազանքը ոգևորում է մարդուն, օգնում էր վլադիմիր Իլյիչ Լենինը: — Նոր տարին մենք դիմավորում ենք հայրենիքից, մեր ընտանիքներից, ծնողներից հեռու, թշնամու դեմ մղվող դաժան մարտերում: Խմբագրությունը դիմում է ձեզ, թանկազին ընկեր, խնդրելով պատմել ձեր երազանքի մասին»:

Մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները ջերմորեն արձագանքեցին խմբագրության դիմումին: Հարյուրավոր

¹ Տե՛ս К. Типельскирх. История второй мировой войны, стр. 530.

նամականեր ստացվեցին: Բոլոր նամակաները տոգորված էին մի ցանկութեամբ. «Շուտով անցնել հարձակման», «Վերջ տալ գերմանական ֆաշիզմին»: Բայց ամեն մեկը յուրովի էր արտահայտում այն:

Կարմիրբանակային գնդացրորդ Միխայիլ Պոլիշչուկը գրում էր. «Ավարտվում է 1944 թվականը: Դա սովորական օրացուցային տարի չէ... Նոր՝ 1945 թվականը էլ ավելի հոյակապ կլինի:

Քաղաքացիական մասնագիտութեամբ ես ծովային եմ՝ նավի մեխանիկ... Գերմանացիներն ինձնից խել են ամենաթանկագինը՝ հարազատներիս և սիրածս մասնագիտութեամբ աշխատելու հնարավորությունը: Սակայն նրանք մի բան չկարողացան խել՝ հաղթանակի հավատը և երազելու ընդունակությունը:

Այո, ես մի քիչ սիրում եմ երազել: Ամենադաժան օրերին երազում էի գերմանացիներին ջախջախելու, հարազատներիս գրտնելու մասին, գերմանացիներին մեր հարազատ հողից վռնդելու մասին. մի երազանքս իրականացավ. թշնամին վռնդվեց մեր հողից: Կարմրադրոշ Բալթիական նավատորմում ծառայող երկու եղբայրներիս ու քրոջս հետ երազում եմ շուտով տոնել մեր հաղթանակը: Հաղթանակը տոնելու երազանքն այնքան հրապուրիչ է, որ առայժմ ավելին չեմ էլ երազում: Մնացածը ինքն իրեն կգա»:

Կրտսեր սերժանտ զրահահար Պյոտր Շելգաշևը գրում էր. «Մեզնից յուրաքանչյուրն ունի իր երազանքը, բայց ամենաթանկ երազանքը, հանուն որի մեր հայրենիքի լավագույն զավակները գնում են մահվանն ընդառաջ, հաղթանակն է: Թիկունքի և ռազմաճակատի բոլոր երազանքները միավորվում են մի ընդհանուր ցանկություն մեջ՝ շուտափույթ հաղթանակ: Որքան էլ թշնամին զազազի, որքան էլ ձգտի ձգձգել պարտության ժամը, մենք գիտենք՝ հաղթանակը հեռու չէ: Եվ մենք ասում ենք՝ Շնորհավոր նոր տարի: Մեզնից յուրաքանչյուրը, նոր ուժեր քաղած, հայրենիքի կանչով վճռական մարտի կելնի թշնամուն հողմացրիվ անելու համար»:

Դիվիզիոնի հրամանատարի քաղզծով տեղակալ կապիտան Վալենտին Խրոմովը գրում էր. «Փառահեղ ուղի ենք անցել 1944 թվականին՝ Դեկտրից մինչև թշնամու որջը՝ Արևելյան Պրուսիա: Նոր՝ 1945 թվականին երազում եմ լինել Բեռլինում և վրեժխնդիր լինել իմ սիրելի քաղաք Ռոստովի համար: Ամբողջ եռանդս ու կա-

րողություններս ի սպաս կղնեմ անձնակազմի դաստիարակության գործին, կձգտեմ հասնել այն բանին, որ ժամ առ ժամ աճի մեր հարվածի ուժը, որ մեր ահարկու հրանոթներից արձակած յուրաքանչյուր արկը մոտեցնի ֆաշիզմի մահվան ժամը»:

4. ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՎ

1944 թվականի դեկտեմբերի երկրորդ կեսին գերմանացիների հարձակումը Արդեններում շատ բանի մասին էր վկայում: Հարձակման առաջին իսկ օրերին հիտլերյան զորքերը հաջողությամբ անցան Ուր գետը: Սարսափ պատեց դաշնակից հրամանատարությանը: Չնայած գերակշռող ուժերին, դաշնակիցների զորքերը խուճապահար փախան, հիտլերականներին թողնելով ռազմական տեխնիկան ու գերիներ: Չերչիլը տազնապ բարձրացրեց, անհետաձգելի օգնություն խնդրելով Ստալինից:

Կատարելով իր դաշնակցային պարտքը, սովետական բանակի Գերագույն զլխավոր հրամանատարությունը արագացրեց հարձակման նախապատրաստությունը ամբողջ հսկայական ռազմաճակատով մեկ: 1945 թվականի հունվարի 12-ին միաժամանակ հաղթական հարձակման անցան սովետական յոթ ռազմաճակատների զորքերը:

Ընդհանուր հարձակման նախօրյակին Լուչինսկու 28-րդ բանակը կենտրոնացավ Գումբինենից (այժմ Գուսև) արևելք ընկած շրջանում, գրավեց ելման դրություն: Բանակի առջև խնդիր դրվեց՝ հակառակորդի ամրությունները ճեղքել Արևելյան Պրուսիայի կենտրոնական շրջանում, ուղղություն վերցնել դեպի արևմուտք հայլեզենբալլ քաղաքի շրջանում դուրս գալ Բալթիկ ծովի օփ:

Գեկտեմբերի 27-ին, պաշտպանությունում իր դիրքերը հանձնելով 32-րդ գվարդիական դիվիզիային, 61-րդ դիվիզիան կենտրոնացավ Գումբինենից 17 կիլոմետր արևելք, Բնուցենեն և Միլյունեն բնակավայրերի շրջանում, պատրաստվեց հարձակման:

¹ Տե՛ս «ՍՍՀՄ Միևիտրների սովետի նախագահի նամակագրությունը ևՄՆ-ի պրեզիդենտների և Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստրների հետ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ 1941—1945 թթ»։ «Հայաստան» հրատ., 1972, էջ 359—360:

Նկատի ունենալով առաջիկա մարտերի բացառիկ կատաղի բնույթը, բացի հարձակմանը նախապատրաստվելու սովորական աշխատանքից, դիվիզիայում անցկացվեցին մի շարք հատուկ միջոցառումներ, գումարվեցին զրահահարների հավաքներ, որտեղ մանրամասն քննարկվեցին թշնամու տանկերի, ԳՕՏ-երի և ԴՁՕՏ-ների, հրետանու, ականանետների, գնդացիների և այլ կրակակետերի ոչնչացման հետ կապված խնդիրները. անցկացվեցին վաշտերի և մարտկոցների կուսակազմակերպիչների սեմինարներ, որտեղ մանրամասն մշակվեցին կուսակցական անընդմեջ աշխատանքի խընդիրները, գրոհային խմբերի գործողությունները և կոմունիստների դերը նրանցում. դիվիզիայի բժիշկների և բուժսանաշխատողների հետ քննարկվեցին մարտադաշտից վիրավորներին դուրս բերելու, նրանց առաջին օգնություն ցույց տալու հարցերը: Մեծ աշխատանքներ տարվեցին հակառակորդի տերիտորիայում թիկունքային ծառայությունների մարտիկների զգոնությունն է՛լ ավելի բարձրացնելու ուղղությամբ:

Մեր հարձակման նախօրեին ռազմական իրադրությունը Գերմանիայի համար այնպիսին էր, որ եթե գերմանական բանակը ռազմաճակատի այս կամ այն հատվածում հասնում էր որևէ շքնչին հաջողության, Հիտլերը, խաղաքարտի վրա դնելով ամեն ինչ, մի կերպ բանակի ու ժողովրդի ոգին պահելու համար, բղավում էր գերմանական նոր հարձակման, նոր ղեկի մասին, իսկ նրա զենքերալները առերևույթ աշխատում էին արդարացնել իրենց ֆյուրերի հույսերը: Պրոպագանդան վկայակոչում էր Արդենների հարձակումը, պնդելով, թե իբր ամենամոտ ապագայում դաշնակիցները նորից կզգան ռայխի զորքերի հարվածների ուժը: Սակայն իզուր:

Սովետական ռազմիկները այս ամենի մեջ տեսնում էին գերմանական ֆաշիզմի ջղաձգությունը, նրա հոգեվարքը: Նրանք յուրովի էին մեկնաբանում գերմանացիների հարձակումը Արդեններում, ինչպես նաև Չերչիլի դիմումը Ստալինին: Մեր մարդիկ հըստակ գնահատական էին տալիս այդ իրադարձություններին: Նախ դաշնակիցների գերակշռող ուժերի նահանջը արևմուտքում վկայում էր նրանց զորքերի ցածր մարտական ու բարոյական հատկանիշների մասին: Հիտլերն օգտվում էր դրանից և ուզում էր դաշնակիցներին ստիպել դիմելու սեպարատ հաշտության: Երկրորդ,

դիմելով Ստալինին, Չերչիլը նենգամտորեն ուզում էր, որ այս անգամ էլ թշնամին ջախջախվի կարմիր բանակի արյան հաշվին: Նա դրանով փաստորեն իրենց զորքերի բուն գոյությունը տեսնում էր սովետական զորքերի նոր խոշոր հարձակման մեջ: Եվ, վերջապես, ամբողջ աշխարհն ընդունում էր, որ դարձյալ վճռական խոսքը մեզ է պատկանում: Եվ դա լավ էր: Ամբողջ աշխարհը կիմանա ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ տարած հաղթանակի գործում դաշնակիցների ավանդի գինը: Եվ այս ամենի հետևությունը մեկ էր. շուտով վերջ տալ ֆաշիզմին Արևելյան Պրուսիայում և առանց կանգ առնելու գնալ Բեռլինի վրա:

3-րդ Բելոռուսական ռազմաճակատը հարձակումն սկսեց մեկ օր ուշ՝ հունվարի 13-ին: Գերմանական զենքերալների արտահայտությունների մեջ ճշմարտության մասնիկ կար. նրանք ասում էին՝ սովետական զորքերի համար հեշտ չի լինի գրավել «Ռայխի արևելյան պատվարը»՝ Արևելյան Պրուսիան: Բայց նրանք գրավեցին, այն էլ հաջողությամբ:

28-րդ բանակի զորքերը հարձակման անցան Գումբինենից 16 կիլոմետր արևելք գտնվող շրջանից: Թշնամու ամբողջությունների ջախջախումն իրագործվեց մի քանի էտապով, քայլ առ քայլ հաղթահարելով նրա պաշտպանական յուրաքանչյուր գոտին:

61-րդ 61-րդի դեմ: Մեր 61-րդ դիվիզիան մարտի մեջ մտավ հունվարի 14-ի դիշերը: Օգտվելով բանակի մյուս զորամասերի հաջողություններից, նա մարտերով շրջանցեց Պակլեդիմեններ անտառը և լուսադեմին դուրս եկավ նրա արևմտյան եզրը: Քաղաշխատողները մարտիկներին ծանոթացրին 28-րդ բանակի ռազմական խորհրդի և քաղբաժնի «Քաջաբար ու պատվով կատարենք մեր մեծ պարտքը հայրենիքի հանդեպ» կոչի հետ: Մարտիկների պատասխանը այդ կոչին խտացավ կարմիրբանակային Միքելաձեի խոսքերի մեջ. «Ընկերներ՛ր, մենք վաղը պետք է գերմանացիների հետ կռվի բռնվենք Արևելյան Պրուսիայում: Այստեղ մեկընդմիշտ վերջ տանք ֆրիցներին»:

Գումբինենի համար մղված մարտերը բացառիկ լարված բնույթ կրեցին:

Հունվարի 14-ի առավոտյան մեր դիվիզիան ընդհարվեց հակառակորդի պաշտպանվող 61-րդ հետևակային դիվիզիայի հետ: Այն ուժեղացված էր ֆոլկսշտուրմի ջոկատներով, տանկերով ու

հրետանիով: Եթե հիմնահատակ ավերված շինությունում կամ կիսավեր պատի ետևում թաքնվել էր կենդանի մնացած թեկուզ մեկ հիտլերական, ապա դրանք, որպես կանոն, կարելի էր գրավել՝ այդ հիտլերականին ոչնացնելուց կամ ամեն ինչ մոխրի վերածելուց հետո միայն: Հիտլերականներն այդպես էին պաշտպանվում Գումբինենի մյուս դիրքերում ևս: Գիվիզիայի հրամանատար Շացկովը որոշեց Գումբինենը թևանցել հյուսիսից: Ժամը 10-ին առաջին էշելոնի զնդերը հակառակորդի դիրքերի վրա գրոհեցին Նոյ Բուդուպենեն բնակավայրի առջև տարածված դաշտում: 307-րդ զնդի 8-րդ վաշտը լեյտենանտ Գոդոնովի հրամանատարությամբ ներխուժեց թշնամու առաջին խրամատը: Հակառակորդը տեղնուտեղը տանկերի օգնությամբ անցավ հակադրոհի մեր զնդերի և աջ հարևանի՝ 55-րդ գվարդիական դիվիզիայի զորամասերի դեմ: Լեյտենանտ Գոդոնովի վաշտի վրա նետվեցին մոտ մեկ գումարտակ հետևակ և 9 տանկ: Ավագ լեյտենանտ Սամարինի դիվիզիոնի հրետանավորները ոչնչացրին հակառակորդի երկու տանկ և մյուսներին հարկադրեցին ետ դառնալ: Ավագ Սամազովսկին իր հրանոթով ոչնչացրեց հաստոցավոր զնդացիների երկու կրակակետ: Գոդոնովի մարտիկները հերոսաբար պաշտպանվեցին: 307-րդ գունդը իր ձեռքում պահեց զավթած խրամատը: 66-րդ գունդը շկարողացավ առաջ շարժվել ելման բնագծից: Իրիկնադեմին Շացկովը դիվիզիայի դիտակետում հաղորդեց.

— Այստեղ էր կորպուսի հրամանատար Բետիցկին: Շատ է զայրացած վեչտոմովի վրա: Հավանաբար նրան հանի պաշտոնից:

— Գնում եմ վեչտոմովի մոտ:

Արդեն մութն էր: 66-րդ զնդի հրամանատար փոխզնդապետ վեչտոմովի տրամադրությունն ընկած էր: Նա նույնիսկ չէր նկատել, որ շտաբային ստորաբաժանումներն ու մի քանի թիկունքայիններ տեղավորվել են դիտակետից ոչ հեռու՝ ստեղծելով անտեղի կուտակում: Նրան առաջարկվեց առաջին հերթին տարակենտրոնացնել և հեռացնել ավելորդ կուտակումները:

Քննելով իրադրությունը, որոշեցինք գիշերը հարձակվել 63,2 բարձունքի ուղղությամբ: 307-րդ զնդի հրամանատար փոխզնդապետ վալկովը նույնպես որոշեց գիշերային գրոհով գրավել Նոյ Բուդուպենենը: Գիշերը տեղանքը թեթևակի ծածկվեց ձյունով: Իհարկե, դա մեր օգտին չէր: Բայց որոշումը մնաց որոշում: Երկու



Բեուլինի Անգալտի ջրանցքի գրավումը



Գիվիզիայի հրետանին կրակում է Բեուլինի վրա



Լ. Գ. Ակոյով, 221-րդ գնդի հրամանատար



Մ. Գ. Զարյուտսկի, գնդի հրամանատար



Վ. Մ. Վայկով, 307-րդ գնդի հրամանատար



Բոյնսիշ, 55-րդ հրետ. գնդի հրամանատար

գունդն էլ հարձակվեցին միաժամանակ: 66-րդ գունդը ծանր մարտեր մղելով առաջ շարժվեց և ամրացավ 63,2 բարձունքի դիմաց: 307-րդ գնդի վաշտերը՝ ավագ լեյտենանտներ Նայդենկոյի և Ռոզենովի հրամանատարությամբ, սողալով շարժվեցին դեպի հակառակորդի խրամատները: Մնաց մոտ 100 մետր: Հրետանին սկսեց հարվածել թշնամու առաջավոր դծին: Հրետանային կրակի պաշտպանությունն ներքո կրտսեր լեյտենանտ Իվանովը, սերժանտներ Լյուտինը, Երշովը, Կատանովը, կարմիրբանակային Երմակովը և ուրիշներ, նռնակներ նետելով, մեկը մյուսի ետևից թույլ խրամատը և մարտի բռնվեցին հիտլերականների հետ: Հետևեց գումարտակների արագ հարձակումը Նոյ Բուդուպեննի վրա, և գիշերը զրավվեց այն: Այսպիսով, լուրջ ճեղքվածք առաջացավ գերմանացիների պաշտպանության առաջին գոտում:

Հունվարի 15-ի առավոտյան գերմանացիները, Նոյ Բուդուպեններ 307-րդ գնդից ետ խլելու նպատակով, մարտի մեջ մըտցրին լրացուցիչ երկու գումարտակ: Թշնամին միաժամանակ հակահարձակման անցավ 66-րդ գնդի դեմ:

Չնայած հակագրոհներին, Շացկովը որոշեց հարձակումը վերականգնել: Հրետանու կենտրոնացված կրակի և աջ կողմում գործող 82-րդ տանկային գնդի պաշտպանությամբ, ժամը 15-ին երկու գնդերն էլ սրընթաց գրոհեցին հակառակորդի վրա: 66-րդ գունդը ետ մղեց հակառակորդի գրոհը, անցավ հարձակման, գրավեց 63,2 բարձունքը, կտրեց խճուղին և դուրս եկավ Պուսպերն բնակավայրի մոտ, իսկ 307-րդ գունդը մեկ ուրիշ հատվածում կտրեց նույն ճանապարհը, գրավեց Բուբլաուկեն բնակավայրը և դուրս եկավ Կլայն Պուսպերն գյուղի մոտ:

Մարտերը գնում էին հակառակորդի պաշտպանական գոտու ներսում: Դիվիզիայի մարտիկները ցույց էին տալիս մասսայական հերոսության օրինակներ: Բերենք միայն երկու օրինակ: Թշնամու գնդացիները, հողաթմբով լավ պաշտպանված, փակում էր բաց դաշտից հարձակվող մարտիկների ճանապարհը: Ո՛չ արկերը, ոչ էլ նետված նռնակները չէին հասնում նպատակին: Եֆրեյտոր Պլիսենկոն փոթորկալի կրակի տակ սողալով հասավ հողաթմբին, մոտեցավ գնդացրին և նռնակով ոչնչացրեց գնդացրային անձնակազմը, բացեց մեր ուղղակիների առաջընթացի ճանապարհը: Այս

սխրագործութիւնը փաստորեն վճռեց պայքարի այդ փուլի հաջողութիւնը: 307-րդ զնդի գումարտակի կուսկազմակերպիչ Յանկոչը ամբողջ ժամանակ գտնվում էր մարտիկների առաջին շղթայում, կոչերով ու անձնական օրինակով ոգևորում էր նրանց: Հակառակորդի պաշտպանութիւն խորքում Յանկոչը, իմանալով, որ դասակի հրամանատարը շարքից դուրս է եկել, նետվեց մարտիկների մոտ և հրամանատարութիւնը վերցրեց իր ձեռքը: Գասակը գրոհով գրավեց թշնամու խրամատը:

Հունվարի 16-ի ժամը 11-ին դիվիզիան դուրս եկավ հակառակորդի պաշտպանական գոտու վերջին բնագծի մոտ, Գումբենների դիմաց: Առջևում բազմաթիվ ամրացված բնակավայրեր և ձյունածածկ ճահիճներ կային: Առաջ շարժվելու փորձերը հաջողութիւն չունեցան նաև հաջորդ օրը: Ծանր մարտեր էին գնում անձրևի տակ, հագուստները շորացնելու տեղ շկար, ավելին, անձրևին փոխարինեցին ուժեղ սառնամանիքները: Մարդիկ, հաղթահարելով բարակ սառցաշերտը, խրվում էին ճահիճները, գերմարդկային ճիգերի գնով հաղթահարում դրանք և առաջ գնում թշնամու պաշտպանական գոտու խորքը: Մեր մարդկանց ուղեկցում էր բարոյական բարձր ոգին և ֆիզիկական կոփվածքը:

Հաջորդ առավոտյան մեզ իր մոտ կանչեց Բատիցկին: Պարզվեց, որ նա եղել էր 221-րդ զնդում, խոսել մարդկանց հետ, հանդիպել զնդի հրամանատարին: Ըստ արժանաւույն գնահատելով ծանր պայմանները և մարդկանց վիճակը, զենքերալ Բատիցկին խորհուրդ տվեց առանց խնամքով պատրաստելու և հաղթանակի հաստատ վստահութիւն գրոհներ շնորհակցել, շատեղժել նյարդային վիճակ, ստորաբաժանումներին հնարավորութիւն տալ կարգի բերելու մարդկանց, շորացնել հագուստն ու կոշիկները: Անհրաժեշտ է, որ ավագ հրամանատարներն ու քաղաշխատողները այս օրերին ավելի հաճախ հանդիպեն զինվորների հետ:

Ես կորպուսի հրամանատարին զեկուցեցի, որ այս տեղանքում մնալով մեր մարդիկ կհիվանդանան, հարկավոր է գրավել առջևում եղած բնակավայրերը, ամրանալ այնտեղ և կարգի բերել զորամասերը:

Մենք որոշել ենք, ձեր թույլտվութեամբ, գիշերը ձեռքել հակառակորդի պաշտպանութիւնը և գրավել բնակավայրերը:

— Չե՞ք շտապում, — հարցրեց Բատիցկին և առանց պատասխանի սպասելու ասաց.

— Մի անգամ ևս կշռադատեցեք ամեն բան, անարդյունք գրոհի մի դիմեք:

Հունվարի 18-ի գիշերը դիվիզիայի և զնդերի սակրավորները մի քանի անցուղի բացեցին փշալարերի միջով, իսկ լուսադեմին երկու գունդը միաժամանակ անցան վճռական հարձակման՝ հրետանու կենտրոնացված կրակի պաշտպանութիւն տակ: Գնդերը ներխուժեցին խրամատների առաջին գիծը, բայց առաջ շարժվել չկարողացան: Դիվիզիայի հրամանատարը մարտի մեջ մտցրեց 221-րդ զնդի 1-ին գումարտակը և հրետանին դրեց ուղիղ նշանառութիւն: Մարտը շարունակվեց ամբողջ օրը և միայն ժամը 20-ին հակառակորդը ետ շարժվեց Գումբենների հյուսիսային ծայրամաս: Գուրս զալով ճահճուտներից, ստորաբաժանումներն արագ կարգի բերեցին իրենց:

Հունվարի 19-ից մինչև 22-ը անընդհատ համառ մարտեր մղվեցին, 28-րդ բանակի միավորումները արևելքից և հյուսիսից քնդհուպ մոտեցան Գումբեններին: 3-րդ Բելոռուսական ռազմաճաշից հաջողութիւններ ունեցան: Հունվարի 21-ի առավոտյան հակառակորդը դուրս մղվեց իր բնագծից: 307-րդ զնդի ձախթելյան գումարտակը՝ կապիտան Ժուկովի հրամանատարութեամբ, ներխուժեց Գումբեններ: Դիվիզիայի մյուս ուժերը հարձակվեցին արևմուտյան ուղղութեամբ: Երեկոյան դիվիզիան հակառակորդին գրոհեց բոլոր ուժերով,

Այնպես ստացվեց, որ հաջողութեամբ առաջ շարժվելով, զնդերն իրենց ետևում թողեցին հակառակորդի մի քանի հենակետեր: Դրանք ոչնչացրին երկրորդ էշելոնի ստորաբաժանումները: Հունվարի 22-ի երվա վերջին 28-րդ բանակի զորքերը գրավեցին Գումբենները:

Ահա դիվիզիայի մղած 8-օրյա մարտերի արդյունքը. գերմանական 61-րդ հետևակային դիվիզիան ջախջախվեց. գրավվեց 20 բնակավայր. հաղթահարվեց արևելապրուսական պաշտպանութիւն առաջին գոտին. դիվիզիան դեպի արևմուտք առաջ շարժվեց 22 կիլոմետր: Բայց դրանք ոչ թե սոսկ կիլոմետրեր էին, այլ ծանր մարտերով արևելապրուսական պաշտպանական ամրութիւնների մի-

չով անցնող կիրճերը: Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Վ. Ստալինի 1945 թվականի հունվարի 22-ի հրամանով դիվիզիային ի թիվս մյուս միավորումների, հայտարարվեց շնորհակալություն:

Գերմանացիների պաշտպանության երկրորդ գոտու ճեղքումը:
Պաշտպանությունյան այդ գոտու առաջավոր գիծն անցնում էր Անգերապ գետի երկու ափերով և գետի հյուսիսային կողմի անտառով: Այն պաշտպանում էին հակառակորդի 61-րդ հետևակային դիվիզիայի մնացորդները, 50-րդ հետևակային դիվիզիայի 123-րդ գունդը և ֆուլկսշտուրմի ջոկատը:

Հետապնդելով նահանջող հակառակորդին, մեր դիվիզիան հունվարի 22-ի առավոտյան գրոհեց Անգերապ գետի բնագիծը: 307-րդ գունդը գրոհեց 62,5 բարձունքը և Ցունկորտ բնակավայրը: Աջթևյան 221-րդ գունդը թշնամու պաշտպանություն կենտրոնին հասցրած սրբնթաց հարվածով գրավեց Զաբաչունենը և 61,5 բարձունքը: Այդ գնդի 7-րդ և 9-րդ վաշտերն առաջ շարժվեցին դեպի Անգերապ գետի կամուրջը:

Հիտլերականների հետևակային երկու գումարտակ, ուժեղացված ինքնագնաց հրանոթներով, գետափից և անտառից խեղույն հակադրոհեց 7-րդ և 9-րդ վաշտերի վրա: Վաշտերն ընկան շրջապատման մեջ և համագործակցելով գրավեցին շրջանաձև պաշտպանություն: Սկսվեց ծանր ու ահեղ մարտեր մղվել կամուրջի համար: Գիվիզիայի հրամանատարը ռադիոյով հրամայեց ինչ գնով լինի պահել կամուրջը: Վաշտերը գերմարդկային ջանքեր գործադրեցին և պահեցին կամուրջը: Սերժանտ Նոսովի ջոկի վրա հարձակվեց թշնամու վաշտը: Մեր մեկ մարտիկին ընկնում էր 8 հիտլերական: Ֆաշիստները կիպ մոտեցան ջոկին և առաջարկեցին անձնատուր լինել: Ի պատասխան այդ առաջարկի, ջոկը բարձրացավ գրոհի, նոնակներ նետեց թշնամու վրա: Ֆաշիստները շփմանցան ջոկի գրոհին, նահանջեցին: Այդ մարտում կարմիրբանակային Սերպինան ծանր վիրավորվեց: Զոկի հրամանատարը հրամայեց նրան ետ գնալ դեպի վաշտը: Սերպինան հրաժարվեց՝ ասելով. «Ուզում եմ թափած արյանս վրեժը լուծել»: Եվ Սերպինան կռվեց մինչև մարտի վերջը: 7-րդ վաշտի կապավոր Պասկևիչը նկատեց գերմանացիների քողարկված հաստոցավոր գնդիցիլը: Նա սողեսող մոտեցավ գնդացրին, նոնակով ոչնչացրեց անձնա-

կազմը և գնդացիլը կապելով իր ոտքից, թշնամու կրակի տակ քարշ տվեց իր վաշտը: Հետո նա թշնամու վրա կրակեց հենց այդ գնդացրից: Ֆաշիստները անընդհատ խցկվում էին դեպի կամուրջը, ջանում էին պայթեցնել այն: Կամուրջի վրա էին գալիս հետևակի մի մեծ խումբ և երկու ինքնագնաց: Գնդացրորդ սերժանտներ Լանկինը և Կուզնեցովը ոչնչացրին 20 հիտլերականի: Գերմանացիները բեռնատար ավտոմեքենայով նետեցին երկրորդ խումբը: Ընկնելով գնդացրային ուժեղ կրակի տակ, խումբը թողեց մեքենան ու դիմեց փախուստի: Կատարվեց կամուրջը պայթեցնելու մի փորձ ևս: Հիտլերականներից մեկը գաղտագողի սողալով մոտեցավ կամուրջին: Մեր մարտիկներից մեկը, որի անունը այդպես էլ անհայտ մնաց, նկատեց նրան ու ոչնչացրեց: Այս բոլորը կատարվեց շրջապատման մեջ: Վաշտերը շարունակեցին համառորեն մարտնչել: Նրանք իրենց ձեռքում պահեցին կամուրջը, որով շուտով անցավ դիվիզիայի հրետանին, իսկ հետո անցան նաև բանակի մյուս զորքերը:

Գիվիզիան այդ ժամանակ հարձակվում էր անտառով և գետի երկարությունը: 307-րդ գունդը անցավ գետը, գրավեց հակառակորդի խրամատը և շարունակեց առաջխաղացումը: Փոխգնդապետ Վալկովը մի քանի ստորաբաժանումներ շրջեց դեպի հյուսիսարևմուտք և հարվածեց 221-րդ գնդի 7-րդ և 9-րդ վաշտերին շրջապատած հակառակորդին, իսկ կապիտան Ժուկովի գումարտակը, թափանցելով հակառակորդի թիկունքը, գրավեց 62,5 բարձունքը: Այդ նույն ժամանակ հյուսիսից վճռական հարձակման անցավ 221-րդ գնդի այն գումարտակը, որի հրամանատարն էր կապիտան Օլեյնիկովը: Սա սպառնում էր դուրս գալ հակառակորդի թիկունքը: 221-րդ գնդի 2-րդ և 3-րդ գումարտակները դիվիզիայի հետախուզական վաշտի հետ գետի հյուսիսային ափին ջախջախեցին հակառակորդին, իսկ հետո փոխգործողության մեջ մտնելով 55-րդ գվարդիական դիվիզիայի որոշ ստորաբաժանումների հետ, անտառում շրջապատեցին ու լրիվ ոչնչացրին ֆուլկսշտուրմի գումարտակը:

Ստեղծվեց մի իրադրություն, որտեղ երկու կողմերն էլ աշխատում էին շրջապատել միմյանց: Իրար ետևից գոյանում էին շրջապատման օջախներ: Զաբաչենեն բնակավայրի շրջանում հակառակորդը փորձում էր շրջապատել ֆուլկսշտուրմի գումարտակի

Յիկունքը մտած կապիտան Նադտոշու գումարտակը, որն այդ ժամանակ գրավել էր 61,5 բարձունքը: Դրանով շրջապատման մեջ կրնկներ նաև 307-րդ գնդի կապիտան Ժուկովի գումարտակը: Դիվիզիայի հրամանատարը հրամայեց Նադտոշուն թշնամու պաշտպանությունը ճեղքել 62,5 բարձունքի ուղղությամբ և միանալ Ժուկովի գումարտակին: Այդ հրամանը հաջողությամբ կատարվեց:

Այսպիսով, հակառակորդի պաշտպանության երկրորդ գոտին ճեղքվեց հարձակման հենց առաջին օրը: Անգերապ գետի կամուրջի գրավումն ու մեր ձեռքում պահելը ապահովեց բանակի զորքերի գետանցումը: Հակառակորդի շրջապատված ստորաբաժանումներն ու խմբերը բնաջնջվեցին: Անգերապից հյուսիս գտնվող անտառում ջախջախվեցին մի գումարտակ և ֆուլկսշտուրմի ևս մի վաշտ: Վերջինիս առաջարկվեց հանձնվել, սակայն նրանք մերժեցին: Այն ժամանակ, երբ վաշտում մնաց ընդամենը 35 մարդ, ֆուլկսշտուրմականները վաշտի հրամանատարի գլխավորությամբ գերի հանձնվեցին:

Դիվիզիան թշնամու ջախջախված մնացորդներին հնարավորություն չէր տալիս ամրանալ հաջորդ բնագծերում: Հունվարի 25-ին դիվիզիան դուրս եկավ Շենվիզե գետի մոտ և ընթացքից անցավ այն: Այսպիսով, դիվիզիան շորս օրում ծանր մարտերով առաջ գնաց 80 կիլոմետր: Միայն Ավշենեն գետի պաշտպանության գոտում, թվով 8-րդ բնագծում, ուր հիտլերյան հրամանատարությունը հասցրել էր փոխադրել 50-րդ հետևակային դիվիզիայի 121-րդ գնդի, 2-րդ պարաշյուտատանկային դիվիզիայի, 4-րդ պարաշյուտատանկային գնդի մնացորդները և 61-րդ հետևակային դիվիզիայի հրացանակիրների գումարտակը, մեր հարձակումը մի փոքր հապաղեց:

Հունվարի 25-ի օրվա կեսին դիվիզիան 66-րդ և 307-րդ զրնգերի ուժերով շրջափակող հարված հասցրեց Ավշենեն գետի ոլորանում, իսկ 221-րդ գունդը մի հարվածով գրավեց Կլայն Գնիե բնակավայրը: Հաջողությամբ անցնելով գետը նրա ոլորանի երկու կողմերից, 66-րդ և 307-րդ գնդերը գրավեցին հակառակորդի խրամատները, ստեղծելով շրջապատման վտանգ: Օրվա վերջին դիվիզիան արդեն գրավել էր 8-րդ բնագիծը: Հունվարի 26-ի գիշերը դիվիզիան դուրս եկավ Մազուրի (Մազուրիշեր) ջրանցքի մոտ: Կեսօրին ջրանցքը հաղթահարվեց: Հակառակորդը նահանջեց դեպի

Գերդաունեն քաղաքը՝ արևելապրուսական պաշտպանության երկրորդ գոտու երկրորդ բնագիծը: Հետապնդելով հակառակորդին, դիվիզիան գրավեց ևս մի քանի բնակավայրեր և դուրս եկավ Ալլե գետի մոտ: Այդ հատվածում գետը շատ լայն էր: Նրա արևմտյան ափին երեք պլացդարմ գրավելուց հետո, զորամասերը հաջողությամբ անցան գետը: Դիվիզիան դուրս եկավ Արևելյան Պրուսիայում հակառակորդի պաշտպանության երրորդ գոտի:

Հունվարի 22-ից մինչև 27-ը մղված մարտերի ընթացքում 61-րդ դիվիզիան Անգերապ գետից մինչև Գերդաունեն քաղաքը ծայրեծայր ճեղքեց գերմանացիների պաշտպանության երկրորդ գոտին և անցավ Ալլե գետը: Չափազանց էֆեկտիվ գործեց դիվիզիայի հրետանին հատկապես Անգերապ, Աշվենեն և Մազուրյան ջրանքի բնագծերում հակառակորդի ամրությունները ճեղքելիս: Հրետանին դիրքեր գրավեց հետևակի շղթայի առջևում և սկսեց դիմահար գնդակոծել հակառակորդի կրակակետերն ու տեխնիկան: Սա էր թշնամու նկատմամբ տարված հաղթանակի վճռական պայմաններից մեկը: Դիվիզիայի սակրավորները ժամանակին անցումներ բացեցին հակառակորդի ականապատված դաշտերի ու փշալարերի միջով, ապահովեցին հրաձգային ստորաբաժանումների՝ առանց զգալի կորուստների արագ ելքը նշված ելման բնագծերը: Սակրավորները տեղ-տեղ կովի էին բռնվում հակառակորդի հետ, շարունակելով կատարել հրամանատարության հրամանը թշնամու ամրացված արգելքները հաղթահարելու մասին: Անբասիր աշխատեց լարային և ռադիոկապը: Հիտլերականների մի մեծ խումբ Ջաբաջենենի իր ամրությունից մեր հրաձիգներին հնարավորություն չէր տալիս բարձրանալ գրոհի: Դիվիզիայի 11 մարդուց բաղկացած հետախույզների խումբը՝ կապիտան Պոտոմցևի գլխավորությամբ, համարձակ գրոհեց հակառակորդի ամրությունը: Խումբը ոչնչացրեց 24 հիտլերականի և 8-ին դերեց, ռազմաավար վերցրեց 2 հաստոցավոր գնդացիր, 17 կարաբին ու ավտոմատ և մի քանի տասնյակ նոնակ: Հատկանշական էր հրաձգային ստորաբաժանումների փոխգործողությունը: Անգերապ գետի մոտ գերմանացիների պաշտպանությունը ճեղքելիս, շրջապատման կրկնակի օղակների առաջացման պայմաններում, նրանք գործում էին անթևի և արժանի էին գովեստի: Բոլոր օղակներում հրամանատարներն ու կոմունիստները հմտորեն ու արագ արձագանքում

էին իրադարձութիւններին: Խիզախութիւն, վճռականութիւն, հնարամտութիւն, նախաձեռնութիւն, հարեան ստորաբաժանումների հետ անխզելի կապ պաշտպանելու և փոխգործողութիւն մեջ մտնելու կարողութիւն և անձնական օրինակ գրոհներում՝ ահա թե ինչն էր բնութագրում նրանց որպէս կուսակցութիւն ու հայրենիքի զավակներ: Ուշագրավ էր վաշտային կուսակցական կազմակերպութիւնների ակտիվ աշխատանքը: Կոմունիստները գնում էին առջևից, իրենց ետևից տանելով մարտիկներին: Մարտիկների ու հրամանատարների քաջութիւն լավագույն օրինակները մարտերի քննաքննում դառնում էին բոլորի սեփականութիւնը, կենդանի խոսքի ու թոռացիկ-թերթիկների միջոցով: Ահա մի քանի օրինակ. «Այսօր բարձունքի համար մղված մարտերում հերոսաբար էր կռվում կրտսեր լեյտենանտ Գորբունովի դասակը: Նա առաջինը ներխուժեց խրամատ և ոչնչացրեց բոլոր գերմանացիներին: Դասակը պատվով կատարեց առաջադրանքը: Ընկերներ, գերմանացիներին խփեք այնպես, ինչպէս խփեցին Գորբունովի դասակի մեր կտրիճները»: Մյուս թերթիկում ասված էր. «1-ին հրաձգային վաշտի կուսակազմակերպիչ Կոմարովը, տեսնելով, որ մարտիկները հակառակորդի ուժեղ ականանետային կրակի տակ պառկել են և կարող են կորուստներ կրել, բարձրացավ տեղից և գոչեց. «Իմ ետևից, առաջ»: Նրա կոչով բարձրացան բոլոր զինվորները, արագ անցան կրակի գոտին և ներխուժեցին թշնամու խրամատը: «Փառք անվեհեր կոմունիստին»: Դասակի հրամանատար կոմունիստ Լոսկուտովը «Հանուն հայրենիքի» բացականչութիւնով իր ետևից գրոհի տարավ մարտիկներին: Այդ գրոհի ժամանակ Լոսկուտովը երկու անգամ վիրավորվեց, բայց շարունակեց գնալ դասակի առջևից, և դասակը պատվով կատարեց մարտական առաջադրանքը: Ամենուրեք կոմունիստներն այդպէս էին վարվում:

Նահանջող հակառակորդին հետապնդելիս ճանապարհին հանգիստեցին սովետական աղջիկների: Նրանք ֆաշիստական գերութիւնից էին փախչում: Օգտվելով տեղի բնակչութիւնի մեջ ստեղծված իրարանցումից ու խուճապից, աղջիկները թաքնվել էին իրենց տներէից և սպասում էին կարմիր բանակի դալուն: Այդպէս էին վարվել նաև ֆրանսուհիները, լեհուհիները և մյուսները: Աղջիկների այն խումբը, որի հետ մենք զրուցեցինք, տարվել էր Լենինգրադի

մարզից և Բելոռուսիայից: Սկզբում նրանք եղել էին ճամբարներում, հետո, «հատը» 20 մարկով վաճառվել շուկայում: Ստարի Ռուս քաղաքի աղջիկներից մեկը շփոթեց, թե քանի մարկով են վաճառել իրեն: Բայց գիտեց, որ տիրոջ սեփականութիւնն է: Նրանք բոլորն էլ պրուսացիների սեփականութիւնն էին, որպէս ստրկուհիներ աշխատում էին վաղ առավոտից մինչև ուշ երեկո:

Աղջիկների պատմածով, օկոսպացված շրջաններից բռնի տարված սովետական տղաներին գերմանացիները օգտագործում էին տաժանակիր աշխատանքներում, այդ թվում և պաշտպանական կառույցների շինարարութիւնում: Նրանց համար սահմանված էր դաժան ռեժիմ: Գերմանացիները վախենում էին, որ եթե նրանցից որեէ մեկին հաջողվի ճողոպրել գերութիւնից, ապա պաշտպանութիւն սիստեմը հայտնի կդառնա կարմիր բանակին: Սովետական երիտասարդների հետագա ճակատագրի մասին աղջիկները ոչինչ չգիտեին: Գերգառուն քաղաքի և մյուս բնակավայրերի պատերին փակցված ռուսերեն ու գերմաներեն զանազան հայտարարութիւններից ու հրամաններից մենք իմացանք, որ սովետական երիտասարդներին գնդակահարութիւնի սպառնալիքի տակ արգելել էին որեէ կապ ունենալ գերմանուհիների հետ: Նույնիսկ գերմանուհիներին ողջունելը դիտվում էր որպէս ծանրագույն հանցագործութիւն և պատժվում էր «արիական օրենքով»: Նրանք ևս, ովքեր աշխատում էին առանձին տներէի մոտ, իրավունք չունեին նայելու տիրոջ աղջկա կամ կնոջ վրա: Լեհ, ֆրանսիացի և բելգիացի աղջիկների հետ կապ պահպանելու համար տղաները ենթարկվում էին սոսկալի կտտանքների:

Պրեյսի Սյլաուի գրավումը: Փետրվարի 1-ին անցնելով Յրիդլանդ քաղաքի միջով, դիվիզիան կենտրոնացավ Պուշկայտեն բնակավայրի շրջանում: Հարկ եղավ մի անգամ ևս ընդհարվել գերմանացիների 61-րդ հետևակային դիվիզիայի հետ: Գերմանական հրամանատարութիւնը այն համալրել ու կարգի էր բերել: Այդ դիվիզիան, որի կազմի մեջ էին մտնում 151-րդ, 161-րդ և 162-րդ հետևակային զնդերն ու այլ ստորաբաժանումներ, պաշտպանութիւն էր գրավել Պրեյսի Սյլաու քաղաքում և Կնոուտտեն բնակավայրից հարավ գտնվող անտառում, Ռոմատտենից հարավ ընկած բարձունքում, Զոսենեն կալվածատան գծում և Կլայն Վալ-

դեկ, Պլենիտտեն ու Շտորկեյմ հենակետերում, որոնք գտնվում էին Պրեյսիշ Այլաուից 15 կիլոմետր հյուսիս-արևելք:

Մեր ուժերը քիչ էին: Արևելյան Պրուսիայում երեք սամիս անընդմեջ մղվող մարտերում նոսրացել էին զուստակները, վաշտերն ու դասակները: Նկատելիորեն թուլացել էին նաև գնդացրային, հրետանային և ականանետային ստորաբաժանումները: Ամբողջ դիվիզիայում կար ընդամենը 89 գնդացի: Կավ էին պահպանվել միայն 55-րդ հրետանային գունդը և ինքնագնաց հրանոթների 131-րդ առանձին դիվիզիոնը: Փոխվել էր հրաձգային ու տեխնիկական ստորաբաժանումների ուժերի հարաբերակցությունը: Հետևաբար, անհրաժեշտ էր փոխել նաև գործողությունների տակտիկան, գտնել մարտական առաջադրանքի կատարման պահանջներին համապատասխանող նոր եղանակ: Իսկ առաջադրանքը լուրջ էր՝ ճեղքել արևելապրուսական պաշտպանության երրորդ գոտին:

Կավ հիշում եմ, թե ինչպես այն ժամանակ գվարդիայի գրնդայետ Շացկովի հետ քննարկեցինք ուժերի հարաբերակցությունը: Պարզ գիտենալով, որ չենք կարող փոխել այդ հարաբերակցությունը, մենք հաշվեցինք ոչ թե հակառակորդի ուժերը, այլ Պրեյսիշ Այլաուի ամրացված նախամատուցի հենակետերը: Պարզվեց, որ հակառակորդը նախամատուցում ավելի շատ հենակետեր ունի, քան մենք կարող էինք հաղթահարելու գրոհային խմբեր ստեղծել: Հրանոթների ու ականանետների փողերի քանակով մեր ուժերը նույնպես դիջում էին հակառակորդին: Նկատի ունենալով այս հանգամանքը, բանակի հրամանատար Լուչինսկին դիվիզիան ուժեղացրեց հրետանային երկու (թեթև և հասարակային) գնդերով ու երկու դիվիզիոնով՝ ի հաշիվ ծանր թնդանոթների ու հրետանային կայանքների: Այսպիսով, մեր դիվիզիան տեխնիկայի գծով հասավ զգալի առավելության հակառակորդի նկատմամբ: Իսկ ընդհանրապես այդպիսի հզոր տեխնիկա մեր դիվիզիան երբեք չէր ունեցել: Սակայն ռազմաճակատը ընդարձակ էր: Մեկ կիլոմետրի փողերի հաշվով այդ տեխնիկական անբավարար էր: Ամբողջ ճակատով մեկ ամեն մի կիլոմետրին ընկնում էր հրետանու և ականանետների 70 փող: Այնուամենայնիվ, հիմնական դժվարություններն այլ էին. համատարած ցեխը, ճանապարհազրկությունը, անընդմեջ տեղացող անձրևները մի կողմից բացառում էին արկերի, ականների ու փամփուռաների փոխադրումը ավտոմեքենաներով, իսկ մյուս

կողմից խիստ սահմանափակում էին ծանր ռազմական տեխնիկայի՝ հրետանու մասերը:

Կշռադատելով բոլոր հանգամանքները, դիվիզիայի հրամանատար Շացկովը հանգեց այն հետևություն, որ հարկավոր է շարժական գրոհային խմբերով հերթականությամբ, մեթոդիկ կերպով ճեղքել հակառակորդի հենակետերը, որը փաստորեն կնեղացներ դիվիզիայի գործողությունների ճակատը: Ըստ էության օգտագործվում էր նախորդ մարտերի փորձը: Բայց այդ փորձը էական լրացվեց նոր տարրերով, այսինքն՝ գրոհային խմբերի մեջ մտցվեցին ինքնագնաց հրանոթներ, որոնց շնորհիվ խմբերը դարձան շարժունակ ու մանևրունակ:

Դիվիզիայի ու գնդերի շտաբները, մասնավորապես հրետանու շտաբը շափաղանց մեծ ծանրաբեռնվածությամբ մշակեց ու պլանավորեց հրետանու էֆեկտիվ օգտագործումը, ձևաբար տրանսպորտի միջոցով ռազմամթերքի տեղափոխումը: Թիկունքային ստորաբաժանումներն աշխատեցին մեծ լարվածությամբ: Երբեմն նրանք ստիպված էին լինում ուսերով տեղափոխել ռազմամթերքը:

Տասնօրյա համառ մարտերից հետո մեր զորամասերը գրավեցին Պրեյսիշ Այլաու քաղաքը: Փետրվարի 1-ի լույս 2-ի գիշերը դիվիզիան գրավեց Կլեյն Վալդեկ, Պլենիտտեն և Շտորկայմ հենակետերը և, հետապնդելով թշնամուն, ընդհուպ մոտեցավ Կնաուտենից հարավ գտնվող անտառի բնագծին՝ քաղաքից վեց կիլոմետր հեռու գտնվող Զոսենեն կալվածքին: Այդ գծի վրա մարտերը տևեցին երեք օր, որի ընթացքում 307-րդ գունդը ի վիճակի եղավ Զոսենենի ուղղությամբ տիրել միայն մի բարձունքի, իսկ 66-րդ գունդը ներխուժեց նրա ծայրամասը: Այդ փուլում դիվիզիան դրանից ավելի առաջ անցնել չկարողացավ:

Փետրվարի 2-ին 66-րդ գունդը գրոհեց Զոսենենի վրա, գնդի 6 խիզախներ առաջ անցան և գրավեցին խոտանոցը: Ֆաշիստները գնդի բոլոր տեսակներից կրակի տարափ տեղացին նրանց վրա: Վեց զինվորներն էլ ծանր վիրավորվեցին: Նրանցից երկուսը կորցնում են դիտակցությունը: Մյուս երեքը կարողանում են թաքնվել: Հիտլերականները լցվում են խոտանոց, ուշքի բերում զինվորներին, գաղանաբար տանջում նրանց ու ողջակեղ անում: Փետրվարի 4-ին գունդը գրավեց Զոսենենը: Խոտանոցում գտան սերժանտ Գուսեի, կարմիրբանակային Մաքսիմենկոյի կիսաայր-

ված դիակնեիրը, իսկ երրորդի անձնավորությունը պարզել հնարավոր չեղավ: Զոհված ընկերների աճյունների առաջ Սեմենիխինի և Տկաչևի գումարտակների զինվորները երգվեցին վրեժ լուծել գազազած թշնամուց, անխնա ջնջել նրանց:

Փետրվարի 3-ի առավոտյան մարտի մեջ մտցվեց 221-րդ գունդը: Նա հարավից շրջանցեց Կնաուտենը և աստիճանաբար խորացավ անտառում: Հակառակորդն այնտեղ նետեց 161-րդ հետևակային գունդը, որին աջակցում էին երկու տանկ և շորս ինքնագնաց հրանոթ: Փոխգնդապետ Ստեպչենկոն կատարեց վերախմբավորում և փետրվարի 4-ի ցերեկը մաքրեց անտառը: Այդ ժամանակ 307-րդ գունդը տիրացավ Զոսենենի մոտ գտնվող անանուն բարձունքին, իսկ 66-րդ գունդը գրավեց Զոսենենը: Հակառակորդը ետ շարժվեց հաջորդ՝ Պրեյսիշ Այլաուի բնագիծը: Այնտեղ հարկ եղավ հրետանու դիմահար կրակով քարուքանդ անել թշնամու կողմից սամբոյությունների վերածված քարե տները: Բայց հակառակորդը չէր զսպվում: Նա հաճախ անցնում էր հակազրոհի: Փետրվարի 7-ի իրիկնադեմին 221-րդ գունդը ներխուժեց Պրեյսիշ Այլաուից հյուսիս գտնվող Ալխոֆ բնակավայրը: Գերմանացիները գնդի գրոհային խմբի դեմ նետեցին մի հետևակային գումարտակ և 8 տանկ, խմբին սեղմելով Ալխոֆի հյուսիսային ծայրամասին: Բայց խումբն ամրացավ խրամատներում և դրանք ամուր պահեց իր ձեռքում: Այդ նույն օրը 66-րդ և 307-րդ գնդերը ներխուժեցին Շմոդիտտենի հյուսիսային ծայրամասը: Այսպիսով, մարտերը կենտրոնացան քաղաքից հյուսիս գտնվող բնակավայրերում: Փետրվարի 7-ից մինչև 9-ը դիվիզիան ետ մղեց թշնամու 37 հակազրոհ: Սա բավական վառ կերպով ցույց է տալիս Պրեյսիշ Այլաուի համար մղված մարտերի բացառիկ կատաղի բնույթը: Իսկ դիվիզիայի անձնակազմի խիզախության մասին վկայում է թեկուզ հետևյալ դրվագը:

Մեր 221-րդ գնդի գրոհային խմբերից մեկին հակազրոհեցին հիտլերականների 50 ավտոմատավորներ՝ երկու ինքնագնաց հրանոթների աջակցությամբ: Սերժանտ Նիկիտենկոն խմբի միակ գնդացրից կրակ բացեց թշնամու վրա: Ինքնագնաց հրանոթը կրակում էր գնդացրի վրա, բայց Նիկիտենկոն շարունակում էր հարվածել մերթ ինքնագնացին, մերթ ավտոմատավորներին: Փամփուշտները վերջանալու վրա էին, իսկ օգնականը՝ Աբրամովը, վի-

ջավորված էր: Նրան փոխարինեց ընկերը: Նիկիտենկոն մենակ վաքեց կրակը: Իսկ երբ ավտոմատավորները մոտեցան, խմբի մարտիկները նրանց դիմավորեցին նոնակներով: Մարտադաշտում թողնելով 17 դիակ, ֆաշիստները նահանջեցին:

Հակառակորդի ուժեղ կրակի տակ սերժանտ Պարաևի խումբը վազբով մոտեցավ թշնամու հենակետին և ներխուժեց այնտեղ: Սա հիտլերականների մեջ խառնաշփոթություն առաջացրեց: Նրանք ջախջախվեցին:

307-րդ գնդի ավտոմատավորների խմբին ուղեկցում էին լեյտենանտ Տոլոչկինի և ավագ սերժանտ Պոսոխինի ինքնագնաց հրանոթները: Լեյտենանտ Տոլոչկինը իր ինքնագնացը առաջ բերեց և գնդակոծեց Շմոդիտտենում գտնվող թշնամուն, իր վրա գրավելով հիտլերականների ուշադրությունը: Այդ ժամանակ գրոհային խումբը Պոսոխինի ինքնագնացի հետ ընդհուպ մոտեցավ հակառակորդի դիրքերին: Պոսոխինը ոչնչացրեց թշնամու հակատանկային հրանոթը և հաստոցավոր գնդացիների երկու կրակակետ: Խումբը ներխուժեց Շմոդիտտենի հյուսիսային ծայրամասը և գրավեց այն:

Երիտասարդ կոմունիստ, իր հնարամտությամբ դիվիզիայում հայտնի սերժանտ Բոգդանովի խումբը, մութն ընկնելուն պես առաջ շարժվեց դեպի Շմոդիտտեն, շղթա կազմեց ու պառկեց: Խումբն ուներ միայն ավտոմատներ ու նոնակներ: Բոգդանովը խումբը բաժանեց երկու մասի, նշանակեց հրամանատարներ ու հրամայեց. մի խմբին՝ նոնակի պայթյուն լսելուն պես գրոհել հենակետը, իսկ մյուսին՝ առանց կրակոցի արագ հասնել հակառակ կողմը, ներխուժել բնակավայր և խուճապ առաջացնելու նպատակով անկանոն կրակ բացել: Բոգդանովը մենակ գնաց առաջ, նրոնակով շարքից հանեց թշնամու գնդացրային բույնը: Ամեն ինչ ընթացավ պլանով: Խուճապահար գերմանացիները դիմեցին փախուստի:

Դիվիզիան Պրեյսիշ Այլաուն գրոհի ենթարկեց հյուսիս-արևմուտքից և ներխուժեց քաղաք: Երկօրյա փողոցային մարտերից հետո փետրվարի 10-ին գրավեց քաղաքը:

Դիվիզիան նորից արժանացավ Գերազույն գլխավոր հրամանատար Ի. Ստալինի շնորհակալությանը (հրաման № 272, 1945 թ., փետրվարի 10):

Հակառակորդը կատաղի դիմադրում էր: Մարտական զոր-
ծողութիւնները ընթացքում հիտլերյան հրամանատարութիւնը
իր հետեակը համալրում էր ավիացիոն և զենիթային զորամասե-
րից, զանազան զինվորական դպրոցներից, ֆուլկուտուրմական
խմբերից և այլ տեղերից վերցրած թարմ ուժերով: Ռասիզմի և
ֆաշիզմի ոգով դաստիարակված այդ երիտասարդութիւնը կովում
էր առանց ետ նայելու: Զախջախված զորամասերի և ստորաբա-
ժանումների մնացորդները, որոնք ընկնում էին շրջապատման մեջ,
չնայած անելանելի դրութիւնը, որպես կանոն, գերի չէին հանձն-
վում, շարունակում էին կովել մինչև վերջին մարտը:

Թշնամին, իր տրամադրութեան տակ ուներ հզոր հեռահար
հրետանի: Նահանջելով, նա վիթխարի քանակութեամբ հրետանի
էր կենտրոնացնում փոքր հատվածներում և սկսում կրակի մեծ
ինտենսիվութեամբ աջակցել առաջավոր զօր պաշտպանութեանը:
Պրեյսիշ Այլաուի շրջանում մղված տասնօրյա մարտերի ընթաց-
քում հակառակորդը ոչ մի վայրկյան չդադարեցրեց հրետանու
հարվածը: Անընդմեջ գնդակոծում էին դիվիզիայի և գնդերի հրա-
մանատարական կետերը, դիտակետերը և զորքերի դասավորու-
թիւնը: Փետրվարի 2-ին նա հրետանային հուժկու կրակ տեղաց
Իոհաննեսբուրգ ագարակատանը գտնվող մեր հրամանատարական
կետի վրա: Թեև այնտեղ մարդիկ քիչ կային, սակայն վիրավոր-
ներ, այնուամենայնիվ, եղան: Թշնամին հույս ուներ կազմալուծել
զորքերի կառավարումը: Լոյզկեյմ գյուղում գտնվող 307-րդ գնդի
հրամանատարական կետը Պրեյսիշ Այլաուի վրա հարձակման օրը
առավտից մինչև երեկո գտնվեց հրետանու և ականանետների
փոթորկալից կրակի տակ: Փոխգնդապետ Վալկովի հետ մենք,
այնուամենայնիվ, ստիպված եղանք իջնել նկուղ:

Պրեյսիշ Այլաուն Արևելյան Պրուսիայի առաջին քաղաքն էր,
որտեղ սովետական մարտիկները բնակիչներ տեսան: Հետո մենք
նրանց տեսանք և մյուս բնակավայրերում: Մնացել էին միայն
ծերունիներ, կանայք ու երեխաներ: Բայց բնակիչների մի մասը
էվակուացվել էր: Դաշտերում ու ճանապարհների վրա, ցեխի մեջ
այս ու այնտեղ թափված էր ամեն տեսակ տնային կահ-կարասի:
Սա վկայում էր, որ քաղաքում մնացած բնակիչները չէին կարող-
ացել հեռանալ արևմուտք, քանի որ մարշալ Ռոկոսովսկու զոր-

քերն այդ ժամանակ կտրել-անցել էին Արևելյան Պրուսիայի թի-
կունքը: Ալտհոֆ գյուղի մոտ մղված մարտերում տեղացի 13 գեր-
մանացի թաքուն անցան մեր կողմը: Նրանք պատմեցին, որ հիտ-
լերականները բնակավայրերից բռնի քշում էին նրանց, ովքեր չէին
էվակուացվել, իսկ եթե չէին ենթարկվում, ապա գնդակահարում
էին: Ալտհոֆի բնակիչները սպաներին խնդրել էին, ավերածու-
թիւններից ու մարդկանց ոչնչացումից խուսափելու համար,
պաշտպանական գիծ չստեղծել գյուղում, բայց սպաները նրանց
վճռեցին: Մի կին երկու երեխաների հետ փորձել էր անցնել մեր
կողմը: Հիտլերականները նկատել էին և գնդացրային կրակ բացել
նրանց վրա: Երեխաները սպանվել էին, իսկ մայրը վիրավորվել:
Մեր մարտիկները նրան վերցրին, ուզեցին փրկել, բայց վերքը
մահացու էր:

Արևելյան Պրուսիայում մնացած տեղացի բնակիչները խիստ
վախ էին ապրում: Նրանք լքեցին հավատում էին, թե իրենց
կգնդակահարեն կամ կախաղան կբարձրացնեն: Նրանցից ոմանք
դեռ շփոթութեան մեջ էին գերբուլյան պրոպագանդայից և մնացել
էին գերի այդ պրոպագանդային, ոմանք էլ սպասում էին հատուց-
ման՝ միլիոնավոր սովետական մարդկանց գազանային ոչնչացման
համար: Մենք հաճախ էինք խոսակցութիւններ լսում, թե, իբր,
պարտված գերմանացին իսկույն և անվերապահորեն ծնկի կգա
հաղթողի առջև, կհաշտվի իր դրութեան հետ և նույնիսկ ընդունակ
չէ այլ գործողութիւնների, դիվերսիայի և այլն: Պրեյսիշ Այլաուից
ոչ հեռու անհայտ գերմանացիներ սպանել էին կարմիր բանակի մի
լեյտենանտի ու թաքնվել: Դասակի հրամանատար լեյտենանտ
Գրիգորյանը անտառում, մեր զորքերի թիկունքում, հայտնաբերեց
40—50 տարեկան գինված գերմանացիների մի խումբ, որ բաղ-
կացած էր 6 մարդուց: Նրանք չէին ուզում հանձնվել, դիմադրու-
թիւն էին ցույց տալիս: Նրանց մոտ հայտնաբերվեց մեծ քանա-
կութեամբ զենք, ռազմամթերք և պայթուցիկ նյութեր: Հարկ կա՞
արդյոք բացատրելու, թե դրանք ինչ նպատակով էին թաքցրել:
Խումբը ոչնչացվեց:

Նահանջող հիտլերականները չհասցրին պայթեցնել զործա-
րանները, ռազմամթերքի և պարենամթերքի պահեստները, որոնք
մեզ շատ պետք եկան մարտերի ժամանակ: Մենք Դամտաուում
գրավեցինք 400 սարքին ավտոմեքենա և շատ ռազմամթերք:

Պրեյսիշ Այլաուի, Շտաբլակի, Դամտաուի շրջաններում ճանապարհներին ու դաշտերում թափված էին սպանված անասուններ: Սա ցույց էր տալիս, որ հիտլերականները Արևելյան Պրուսիայից բռնի էին նաև անասունները:

Յինտեն Բաղաբ-ամրոցը: Արևելյան Պրուսիայի բոլոր ամրություններից Յինտեն քաղաքը հավանաբար ամենամուրն էր: 15 կիլոմետր երթից հետո փետրվարի 16-ի գիշերը Յինտենի արևելյան ծայրամասում դիվիզիան փոխարինեց գեներալ-մայոր Պրովալովի 36 կորպուսի զորամասերին: Այստեղ նա անցավ գեներալ-մայոր Ալեքսանդրովի 3-րդ գվարդիական կորպուսի ենթակայությանը: Քաղաքը գտնվում էր գերմանացիների ձեռքում: Միայն արևելյան ծայրամասում, մի փողոցի արևելյան կողմի տները մի մասն էր զրավված մեր զորքերի կողմից: Նույն շարքի տները մյուս մասը գերմանացիների ձեռքումն էր:

Դիվիզիայի հրամանատարական կետը գտնվում էր Մարաուենեն գյուղում, Յինտենից ոչ հեռու: Ըհշտ գնահատելով մարտական իրադրությունը, դիվիզիայի հրամանատարը որոշեց դիվիզիայի և գնդերի շտաբներն ու շտաբային ստորաբաժանումները դասավորել տարակենտրոնացած ձևով:

Հակառակորդը իսկույն արձագանքեց Յինտենում զորամասերի փոխարինմանը: Հակառակորդը օրվա ընթացքում մի քանի անգամ հարձակվեց դիվիզիայի հրամանատարական կետի և մյուս բնակավայրերի վրա, ուր տեղավորված էին դիվիզիայի կառավարման զորամասերը, հրետանու և ականանետների միջոցով փոթորկալի գնդակոծեց Յինտենի բոլոր մատուցները: Ամեն մի ավելորդ շարժում, ամեն մի սխալմունք կարող էր զոհերի տեղիք տալ: Իմ ավտոմատավորներից մեկը՝ կարմիրբանակային Պավել Շումեյկոն, զոհվեց հրամանատարական կետում: Հակառակորդը մեր տեղը դտավ նաև հաջորդ օրը և գնդակոծեց: Միաժամանակ գրոհեց գնդերի վրա մերթ թևերից, մերթ կցվանքներում: Դիվիզիայի ստորաբաժանումներն ամուր պահեցին իրենց դիրքերը: Գերազանց զործեցին ավագ լեյտենանտ Բաբայանի հրետանավորները: Միայն թշնամու մի հակազորոհի ժամանակ նրանք այրեցին երկու ինքնազնաց հրանոթ, ոչնչացրին մի քանի հիտլերականի և մյուսներին ստիպեցին ետ քաշվել իրենց դիրքերը:

Գերմանացիների Յինտենի պաշտպանության գոտու ճեղքման համար ձեռնարկված հարձակողական մարտերն անցկացվեցին երկու փուլով: Առաջին փուլում պայքար գնաց քաղաք-ամրոցը գրավելու, երկրորդ փուլում՝ Յինտենի պաշտպանական շրջանի խորը էշելոնացված երկրորդ գծի լիկվիդացման համար: Յինտեն քաղաքը չափազանց նպաստավոր ստրատեգիական դիրք ուներ, նա լավ վերահսկում էր շրջակայքը: Նրա մատուցները պաշտպանվում էին դժվար հաղթահարելի կառուցվածքներով, որոնք ստեղծված էին խոր հեղեղատի երկարություններով՝ ձգվող զառիվեր բլուրների վրա և անտառում: Դրանք բոլորը, ի մի վերցրած, քաղաքը դարձրել էին անառիկ ամրոց: Բացի դրանից, քաղաքը հատկապես կառուցված և սարքավորված էր որպես ամրոց: Արևելյան կողմից համատարած բարձր քարե պատեր էին՝ իրենց հազվագեպ նեղ պատուհաններով և նման էին ամրոցապարսպի աշտարակներին: Յինտենը հսկում է աշխարհագրական բոլոր կողմերը տանող 7 խճուղիների վրա: Քաղաքը պաշտպանում էին հիտլերյան 23-րդ, 170-րդ և 547-րդ հետևակային ու 24-րդ տանկային դիվիզիաների զորամասերը, որոնք ուժեղացված էին հզոր կրակային միջոցներով՝ ծանր հրետանիով, տանկերով, ինքնազնաց հրանոթներով և վեցփողանի ականանետներով: Հրամանատարությունը զորքերին հրամայել էր պաշտպանել Յինտենը, հաշվի չառնելով զոհերը:

Այդ ամրոցը պետք է գրավել 61-րդ դիվիզիան: Նա համարում շատացավ, բայց որոշ շափով ուժեղացվեց 32-րդ հրանետ գումարտակից տրված ստորաբաժանումներով: Ելման դրուժյուն գրավելիս դիվիզիան ընկավ թևային գնդակոծության տակ, ընդ որում թևային գնդակոծման ենթարկվեցին առաջավոր գծի բոլոր մերձակա մատուցները: Ռազմամթերքի և սննդի փոխադրումը, վիրավորների էվակուացիան կարելի էր կատարել միայն գիշերը: Հրամանատարական կետը տեղափոխվեց Յինտեն: Փողոցի մի կողմից անընդհատ հակազորոհում էին հիտլերականները: Մարտերը համառ էին: Մենք պատրաստվում էինք գրավել քաղաքը: Փետրվարի 17-ի և 18-ի ընթացքում գնդերի ու դիվիզիայի բոլոր հրանոթները, բացի հաուբիցային դիվիզիոնից, առաջ բերվեցին և նկուղներում ու տներում դրվեցին ուղիղ նշանառության: Դիվիզիայի հրետանային մատակարարները կապիտան Յիզանկովի գլխավորությամբ հավաքել էին մեծ քանակությամբ ավարային ոսպ-

մամթերք: Բավական է նշել, որ միայն Յինտենում գերմանացիների վրա նետվեց 18.000 ավարային ական: Հրետանավորները դիմահար կրակում էին, հետախույզները այս ու այնտեղ շոշափում էին թշնամու թույլ տեղերը, հրաձգային ստորաբաժանումները հարձակման համար աստիճանաբար բարելավում էին իրենց դիրքերը, հրանետները դիրքեր էին գրավում առաջավոր գծի հրաձիգների կողքին, գրոհային խմբերն ընդհուպ մոտեցան գերմանացիների զբաղեցրած տներին, նոնակներ նետեցին, հրանետները հարվածեցին նկուղներին, հրկիզեցին:

Լեյտենանտ Շաբալինի գրոհային խումբը գիշերը գրոհեց մի տուն, որը պաշտպանում էին շուրջ 100 հիտլերական: Տան պատահանները փակված էին մի քանի շարք աղյուսներով, թողնելով միայն հրաձգության նեղ անցքեր: Տունը պաշտպանում էին երկու ինքնագնաց հրանոթ և քարե պարսպի ետևում հարմարեցված գնդացիորդ: Հենց որ մթնեց, Շաբալինը հետախույզներ Գուբարևին, Լուխնովիչին, Գլուշենկոյին և գնդացրորդ սերժանտ Տարազային հրամայեց կրակով պաշտպանել գրոհային խումբը նրա կարճ ցատկի ժամանակ: Հետախույզները ոչնչացրին թշնամու գնդացիորդ: Գրոհային խումբը ներխուժեց տան առաջին հարկը, այնտեղ ոչնչացրեց 20 հիտլերականի: Ինքնագնացները հեռացան: Մարտը տեղափոխվեց երկրորդ հարկ, և տունը անցավ մեր ռազմիկների ձեռքը:

Լեյտենանտ Դոդոնովի գրոհային խումբը գրոհեց մյուս տան վրա: Սերժանտ Կելերովը նոնակներով շքամուտքում ոչնչացրեց մի քանի հիտլերականի: Բակից նրա վրա եկան 10 հիտլերական: Այդ ժամանակ շքամուտք ներխուժեց կրտսեր սերժանտ Միրոնովը: Նա ավտոմատի կրակահերթով հնձեց հիտլերականներին, փրկելով Կելերովի կյանքը: Խումբը տան ներսում մարտ վարեց նոնակներով, իսկ բակում անցավ ձեռնամարտի, որտեղ առանձնապես աչքի ընկան լեյտենանտ Ֆեդոտովը և սնայպեր Դրագունը:

Այսպես, դիվիզիան տուն տան, հարկ հարկի ետևից գրավեց Յինտենի առաջին փողոցի արևելյան շարքը: Հնարավորություն ստեղծվեց բժիշկների և բուժսանգումարտակի աշխատողների մի խումբ՝ բժշկական ծառայության մայրը Ա. Կ. Չեյշվիլու գլխավորությամբ տեղափոխել Յինտեն և այնտեղ ծավալել աշխատանքը: Գործնականում բոլոր ակտիվ սվինները հավաքվեցին գումար-

տակների գրոհային խմբերի մեջ: Մարտական խնդրի կատարումը ապահովելու ուղղությամբ տարվող աշխատանքը կենտրոնացվեց գրոհային խմբերում ու մարտկոցներում: Որոշ գրոհային խմբեր գլխավորում էին գումարտակների հրամանատարների քաղզոմի տեղակալներն ու կուսակազմակերպիչները: Հրետանային գնդի և դիվիզիոնների քաղաշխատողները մշտապես գտնվում էին մարտկոցներում: Նրանց խնդիրն էր՝ ապահովել հրետանավորների բարձր մարտական ոգին և արագորեն արձագանքել գրոհային խմբերի գործողություններին: Գրոհային խմբերի հետ տարվող աշխատանքի մեջ ընդգրկվեցին նաև քաղբաժնի աշխատողները:

Գիվիզիայի հրամանատարը հրամայեց 221-րդ գնդին՝ գրավել Յինտենի հյուսիսային մասը և դուրս գալ նրա հյուսիս-արևելյան ծայրամասը, 66-րդ գնդին՝ գրավել քաղաքի կենտրոնական մասը և դուրս գալ երկաթուղագծի ու խճուղու հատման տեղը, 307-րդ գնդին՝ ուժերի մի մասով պաշտպանել դիվիզիայի ձախ թևը, իսկ գլխավոր ուժերով գրավել երկաթուղային կայարանը և արևմտյան կողմից նրա մերձակա մի քանի տները: Հրետանային գունդը, ինքնագնացների դիվիզիոնը և հրանետ գումարտակի ստորաբաժանումներն ուժեղացման կարգով տրվեցին հրաձգային գնդերին: Փետրվարի 19-ի ամբողջ օրվա ընթացքում դիվիզիան իր բոլոր միջոցներով գրոհեց հակառակորդի բոլոր դիրքերը: Երեք գնդեր հարձակվեցին միաժամանակ: Այդ օրը դիվիզիայի ամբողջ անձնակազմը՝ զինվորներից մինչև դիվիզիայի հրամանատարը, ծայրահեղ ջանքեր գործադրեց, տակայն հասավ աննշան հաջողության: Հակառակորդը հրետանու և ականանետների ինտենսիվ պատասխան կրակ վարեց ճակատից ու խորքից:

Քննարկելով իրադրությունը և մեր հնարավորությունները, եկանք այն եզրակացության, որ անհրաժեշտ է թևանցիկ հարված հասցնել հյուսիսից, նպատակ ունենալով հակառակորդի ուժերի մի մասը քաշել թևի կողմը և ստեղծել Յինտենը շրջապատելու վտանգ: Բանակի հրամանատար Լուչինսկին ընդունեց Շացկովի առաջարկությունը: Մարտի մեջ մտցվեց նաև 96-րդ գվարդիական դիվիզիան:

Գնդերի հրամանատարները կատարեցին ուժերի որոշ վերախմբավորում: Ակտիվ գործողություններ սկսվեցին գիշերը: Ոչ մի

մարտում այդպես լայն ու արդյունավետ շէին գործադրվել նոնակներն ու հրանետները, ինչպես Յինտենում: Հիտլերականների գրաված տների գրոհը, որպես կանոն, սկսվում էր նոնակի պայթյունից: Նկուղներից դիմահար խփում էր հրետանին, տների պատուհաններից ճարճատում էին գնդացիները, տանիքներին, բակերին ու փողոցներին հարվածում էին ականանետները, նկուղներն ու տները այրում էին հրանետները: Յինտենում մղված կռիվների ամենաբնորոշ տարրը ձեռնամարտն էր: Բայց թշնամին վիրավոր գազանի նման դիմադրում էր: Նա դիմադրում էր նկուղում, երբ տունը շրջափակված էր, իսկ վերին հարկերում գտնվում էին կարմիրբանակայիններ, կամ, ընդհակառակն, դիմադրում էր վերին հարկերում, երբ նկուղները գրավված էին կարմիրբանակայինների կողմից: Հիտլերականները շէին լքում նույնիսկ այն ժամանակ, երբ հրդեհ էր ընկնում տներում: Ոչ ոք չէր ուզում գերի հանձնվել: Ուրեմն, պետք էր միայն ոչնչացնել նրան և մեծ ավերվածություններ պատճառել:

Փետրվարի 20-ի ժամը 4-ին 221-րդ գունդը աջ թևում գրավեց քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասում գտնվող տները և անսպասելի հարվածեց կամուրջի ուղղությամբ: Փոխգնդապետ Ստեպանկոն գիտեր, որ գերմանացիները կձգտեն պայթեցնել կամուրջը և կասեցնել մեր գնդերի առաջխաղացումը: Նա դիմեց կտրուկ միջոցների: Գրոհային խմբի հրամանատար սերժանտ Օլխովսկին մարտական առաջադրանքի կատարման համար դիմեց անձնազոհության: Նա խմբին հրամայեց նոնակի պայթյունի ազդանշանով գրոհել կամուրջը պաշտպանող հիտլերականների վրա, իսկ ինքը սողեսող մոտեցավ կամուրջին և մեկը մյուսի ետևից նետեց նոնակները: Նա ոչնչացրեց 20 ֆաշիստի և ինքը զոհվեց հերոսաբար: Գրոհային խումբը մի ակնթարթում բարձրացավ և գրոհով գրավեց կամուրջը:

Դիվիզիայի հարձակման կենտրոնում 66-րդ գունդը ծանր մարտեր մղեց: Քաղաքի կենտրոնական մասում կար մի քարե հսկա տուն, որը հիտլերականները վերածել էին հենակետի: Անառիկ ամրոցի նմանվող այդ տունը իշխում էր շրջապատի վրա և չորս կողմ ամեն ինչ պահում կրակի տակ: Այդ հենակետը գրավելու կամ շրջանցելու բոլոր փորձերն ապարդյուն անցան: Մեզ արդեն ծանրթ սերժանտ Բոգդանովը աշալուրջ հետևում էր այդ

տանը և նրա կրակակետերին: Եկեղեցու գմբեթի նմանվող քարե քարձր ձեղնահարկում դրված հաստոցավոր գնդացիքը կրակի տակ էր պահում փողոցը՝ տան միակ մատույցը, պատուհաններից կրակում էին ձեռքի գնդացիներն ու ավտոմատները: «Առաջին հերթին պետք էր վերացնել հաստոցավոր գնդացիքը», — եզրակացրեց Բոգդանովը: Իսկ այն վերացնելու համար հարկավոր էր ներխուժել տուն: Նա գրոհային խմբից ընտրեց մի քանի խիզախների՝ տան վրա գրոհելու համար, իսկ մյուսներին հրամայեց պաշտպանության տակ վերցնել կտրիճների կարճ ցատկը: Հարմար պահ ընտրելով Բոգդանովը հրամայեց. «Իմ ետևից»: Խիզախները վազքով անցան փողոցը և ներխուժեցին տան առաջին հարկը: Այստեղ 30 րոպեանոց նոնակամարտից հետո նրանք գրավեցին առաջին հարկը: Երկու խիզախ թողնելով առաջին հարկում, Բոգդանովը մյուսների հետ գրոհեց երկրորդ հարկը: Աստիճաններով բարձրանալով, Բոգդանովը կոմունիստ Խուտովի հետ ներխուժեց սենյակներից մեկը, ոչնչացրեց անձնակազմը և գրավեց գնդացիքը: Մարտ ծավալվեց երկրորդ հարկում, հետո երրորդ և տեղ... 4 ժամ: Սակայն ձեղնահարկի ծանր գնդացիքը շարունակում էր փակել տան մատույցները: Բոգդանովը որոշեց գերել գնդացորդին: Նա բարձրացավ ձեղնահարկ: Գնդացորդը շահանքովեց, նետովեց Բոգդանովի վրա: Կռիվը երկար տևեց: Բոգդանովը հիտլերականին շրջապատեց հարվածով: Զգալով հետագա դիմադրության անհուսալիությունը, հիտլերականը իրեն նետեց ձեղնահարկից: Սովետական Միության հերոս Բոգդանովի գրոհային խումբը գնդի համար ճանապարհ բացեց դեպի քաղաքի կենտրոն:

Դիվիզիայի ձախ թևում 307-րդ գունդը, ինքնագնացների դիվիզիոնի հետ երկրորդական փողոցներում ճգմելով հակառակորդին, սրբնթաց հարվածեց և գրավեց երկաթուղային կայարանն ու դեպոն, գրավեց բեռնավորված 4 էշելոն: Փետրվարի 21-ի գիշերը թշնամին կայարանը ետ խլելու նպատակով դիմեց հակազոհի, բայց հաջողություն չունեցավ:

Փետրվարի 21-ին դիվիզիան համառ մարտեր էր մղում քաղաքի կենտրոնում: Այդ օրը 96-րդ զվարդիական դիվիզիան Յինտենից հյուսիս ճեղքեց գերմանացիների պաշտպանությունը և հաջողությամբ շարժվեց դեպի արևմուտք, սպառնալով շրջանցել Յինտենը: Սա հեշտացրեց մեր դիվիզիայի առաջադրանքի կատա-

րումը: Գիվիզիայի հրամանատարը ամբողջ հրետանին դրեց ուղիղ նշանառություն: Հիանալի գործեցին կապիտան Բաբալյանի մարտկոցը, Կուդրյավցևի և Խոջակիձեի հրետանային անձնակազմերը: Գերմանացիները նրանց դեմ նետեցին հրեք ինքնագնաց: Խոջակիձեն առաջին արկերով հրկիզեց նրանցից մեկը, բայց մյուս ինքնագնացները խփեցին նրա հրանոթը: Խոջակիձեն վազեց Կուդրյավցևին օգնելու: Վերջինս հրկիզեց մի ինքնագնաց և վնասեց մյուսը: Գնդերին հսկայական օգնություն ցույց տվին դիվիզիայի սակրավորները: Նրանք փոքր խմբերով գործեցին դիվիզիայի հարձակման ամբողջ ճակատով մեկ: Այս անգամ նրանք հանդես եկան որպես պայթեցնողներ: Հակառակորդի կրակի տակ նրանք դժվարությամբ հասան հիտլերականների զբաղեցրած տներին, պայթուցիկներ դրեցին և պայթեցրին: Լավ աշխատեցին հրանետների անձնակազմերը: Համագործակցելով հրաձիգների հետ, նրանք աջակցում էին հակառակորդի հենակետերի լիկվիդացմանը: Այդ օրը մեծ նշանակություն ունեցավ քաղաքի կենտրոնի եկեղեցու գրավումը: 221-րդ գնդի գրոհիչ խմբերից մեկը հարձակվեց եկեղեցու վրա, որը քաղաքի կենտրոնում, բարձունքի վրա վեր էր ածվել զրխավոր հենակետի: Այն գրավվեց ձեռնամարտով: Ավագ Մոսլովսկու հրամանով կարմիրբանակայիններ Սելյանինը, Գրուժենկոն և Դուդարը բարձրացան եկեղեցու գմբեթը և նրա վրա կարմիր դրոշակ բարձրացրին, որը երևում էր քաղաքի բոլոր ծայրերից և իրարանցում առաջացրեց հիտլերականների մեջ: Ուժեղացնելով ճնշումը, 221-րդ և 66-րդ գնդերը մաքրեցին քաղաքի կենտրոնը և ժամը 13-ին դուրս եկան նրա արևմտյան ծայրամասը: 307-րդ գունդը շկարողացավ երկաթուղային կայարանից այն կողմ անցնել: Նրան գնդակոծեցին և հակագրոհեցին բաց թևից՝ հարավից: Յինտենում մղված մարտերը շարունակվեցին նաև հաջորդ օրը՝ փետրվարի 22-ին: Կեսօրին քաղաքը լրիվ մաքրվեց հիտլերականներից: Գիվիզիան ոչնչացրեց և գրավեց 9 տանկ ու ինքնագնաց հրանոթ, 25 թնդանոթ, 106 գնդացի, 57 շոգեքարշ, 600 վազոն, ռազմամթերքի և այլ իրերի 9 պահեստ: Ոչնչացվեց և մասամբ էլ գերի վերցվեց 1700 հիտլերական: Միայն 221-րդ գունդը դեպի Յինտեն իր հարձակման ճանապարհին հաշվեց ավելի քան 500 հիտլերյան դիակ, իսկ գնդի կորուստները կազմեցին 80 սպանված ու վիրավոր: Կարմիր բանակի 27-րդ տարեդարձը դիվի-

զիան դիմավորեց Քյոնիգսբերգից հետո Արևելյան Պրուսիայի ամենաուժեղ ամրոցում՝ Յինտենում:

Գրավելով Յինտենը, դիվիզիան ձեռնամուխ եղավ գերմանացիներին՝ քաղաքից արևմուտք ընկած անտառի պաշտպանության լիկվիդացմանը: Սկսվեց Յինտենյան հզոր պաշտպանության ճեղքման երկրորդ փուլը: Ֆաշիստական հրամանատարության հրամանը ընդհանուր էր ամբողջ Յինտենի շրջանի համար՝ «հաշվի չառնել կորուստները»:

Գիվիզիան հինգ օր ոչ մի քայլ առաջ չգնաց: Հակառակորդին անտառից դուրս բշելու բոլոր փորձերն անցան ապարդյուն: Մարտի առաջին օրը դիվիզիան հարձակվեց բոլոր ուժերով: Անարդյունավետ կրակային մարտից հետո 66-րդ գնդում փոխգնդապետ Վեշտոմովի հետ որոշեցինք ինքնագնացով ներխուժել անտառեզրը: 12 հետախույզների նստեցնելով մեքենայի վրա և կազմակերպելով կրակային պաշտպանություն, Վեշտոմովը հրամայեց՝ «Առա՛ջ»: Ինքնագնացը սլացավ, հետախույզները ընթացքից նրոնակներ նետեցին և անմիջապես թռան խրամատը: Կրկին գործի դրեցին նոնտկները, իսկ հետո ավտոմատները: Խրամատում իրարանցում սկսվեց, հիտլերականները լքեցին այն, բայց ընկան զրնդացրային կրակի տակ: Ոչնչացվեց 70 ֆաշիստ: Գումարտակը ցատկ կատարեց դեպի խրամատը: Աջ թևում նման քայլի դիմեց նաև 221-րդ գնդի հրամանատար փոխգնդապետ Ստեպչենկոն: Մանր խմբերի բաժանված մարտիկներն սկսեցին բացազատվել անտառեզրում: Բայց առաջ շարժվել չկարողացան:

Եղանակը թռչեցային չէր, թշնամու ավիացիայի թռիչք չէր սպասվում: Շացկովը համաձայնեց զենիթային վաշտը բերել առաջավոր գիծ և 66-րդ գնդի հատվածում սանրել անտառը: Մարտիկներն սկսեցին կամաց-կամաց խորանալ անտառում: 307-րդ գունդը առաջ շարժվեց աջ թևում, իսկ ձախում դիմագրավեց թևից գնդակոծող հակառակորդին:

Թավ անտառում մեկ կիլոմետր առաջ շարժվելու համար հարկավոր էր հաղթահարել խոշոր ծառերի ետևից անցնող խրամատների 8—10 գիծ: Արևելքից արևմուտք ձգվող միակ ճանապարհը չէր կարող օգտագործվել, քանի դեռ հրաձգային ստորաբաժանումները չէին խորացել անտառում: Հետևաբար, բացառված

էին ինքնագնաց հրետանու և հետևակի համատեղ գործողութիւնները: Բացի դրանից, անտառի կենտրոնում՝ հյուսիսից հարավ բավական լայն շերտով ձգվում էին ճահիճները: Մեքենաքարշ հրետանին կարող էր անցնել միայն ճանապարհներով: Հակառակորդն օգտագործեց իր այս առավելութիւնները: Ճահիճներից այն կողմ ծառերի վրա նստեցրին սնայպերներ ու ավտոմատավորներ, որոնք որսում էին ճահիճը հաղթահարել փորձող մեր մարտիկներին: Սա ստիպեց մեզ մեր հրաձիգ-սնայպերների մի մասն առանձնացնել՝ ծառերի վրա նստած «ազդովներին» ոչնչացնելու: Մեծ աշխատանք բաժին ընկավ սակրավորներին, որովհետև անտառը համատարած ականապատված էր: Այսպիսով, անտառի յուրաքանչյուր մետրը նվաճվում էր կատաղի մարտերով:

Մարտի 6-ին մեր ստորաբաժանումներն անտառի խորքում դեմ առան մի խոշոր հենակետի: Բարեբախտաբար, այդ ժամանակ մոտենում էին ինքնագնաց հրանոթներն ու ականանետները: Կատաղի մարտ սկսվեց: Կոմարսկու, Ախմետովի և Ֆինկելսոնի ինքնագնացները ճանապարհից շրջվեցին և նոսր անտառով անցան հակառակորդի հենակետի թիկունքը, տրորելով նրա խրամատները: Գերմանացիները ծառերի վրայից կրակեցին նրանց վրա: Բայց ինքնագնացներին նստած ավտոմատավորները հաջողութեամբ ոչնչացրին «ազդովներին»: 45 մմ հրանոթի նշանառու սերժանտ Չումակը հրաձիգների օգնութեամբ առաջ բերեց հրանոթըն ու մոտ տարածութիւնից դիմահար կրակեց հենակետի վրա: Գնդացրորդներ Տարացայը և Ալիչը իրենց կրակով ճանապարհ էին հարթում ավտոմատավորների համար, որպեսզի ներխուժեն թշնամու հենակետը և ոչնչացնեն ֆրիցներին: Հենակետ ներխուժած մարտիկները ձեռնամարտի բռնկեցին ֆաշիստների հետ: Կարմիրբանակայիններ Սուխարևը, Անկուցինովը, Գևորգյանը, Իվանովը և Ռեան ձեռնամարտում ոչնչացրին մի քանի ֆաշիստի, իսկ Կուզնիկը բռնեց իր ձեռքն ընկած սպայի կոկորդից ու խեղդեց նրան: Լեյտենանտ Չոպիխինի ականաձիգներն սկզբում մոտիկ տարածութիւնից կրակում էին հենակետի վրա, իսկ հետո, երբ մեր մարտիկները ներխուժեցին հենակետ, կրակը տեղափոխեցին օգնութեան եկող հիտլերականների վրա:

Մարտադաշտում թողնելով 100 դիակ, 8 գնդացիր, շատ հրա-

ցաններ և «ֆաուստ-փամփուշտներ», հիտլերականները դիմեցին փախուստի:

Մարտի յոթն էր: Մեր ընկերներից շատերը զրույցի ժամանակ ասում էին. «Կարմիր բանակի տոնը դիմավորեցինք գերմանական ամբողջ Յինտենի գրավումով, իսկ կանանց տոնը դիմավորում ենք գեղեցկուհի անտառին տիրանալով, իսկ մայիսմեկյան տոնը կդիմավորենք Բեռլինում»:

Վերջին մարտերը Արևելյան Պրուսիայում: Քյոնիգսբերգից փախավ-արևմուտք գտնվող գերմանական զորքերի խմբավորման վախճանը: 61-րդ դիվիզիան գեներալ-մայոր Սիչովի 130-րդ դիվիզիայի գնդերից մեկի հետ մղում էր տեղական նշանակութեան մարտեր, անտառային որոշ հատվածներ մաքրելով հիտլերականներից: 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի ռազմական խորհուրդը և բաղվարչութիւնը կոչով դիմեցին ռազմաճակատի զորքերին՝ արագորեն ջախջախել հակառակորդի Արևելյան Պրուսիայի խմբավորումը: Այդ կոչը հասցվեց յուրաքանչյուր դիմվորի ու սպայի: Մավալվեց թշնամուն վճռական հարված հասցնելու մեծ աշխատանք: Տեղի ունեցան զրույցներ ու կարճատև միտինգներ, ուր մարտիկներն ու հրամանատարները հաստատ վճռականութեամբ հայտարարեցին՝ թշնամին գերեզման կգտնի Բալթիկայի ափերին: Մարտի 13-ին սկսվեց ռազմաճակատի ընդհանուր հարձակումը: Լուչինսկու 28-րդ բանակը գործում էր հարավ-արևմուտքից, ուղղութիւն վերցնելով դեպի Ֆրիշ-Հոֆ ծովածոցը:

Հարձակման առաջին երեք օրում 61-րդ դիվիզիան հաղթահարեց անտառային զանգվածները: Այդ մարտերում առանձնապես կարևոր դեր խաղացին փոխգնդապետ Սմիռնովի հրետանավորները: Մեր ստորաբաժանումները դժվարութեամբ կոտրեցին թշնամու դիմադրութիւնը: Գերմանացիների դիրքերի առաջին ճեղքումից հետո հակառակորդը հետևակի ու ինքնագնաց հրանոթների գերազանցող ուժերով անցավ հարձակման: Մեր փոքրաթիվ ստորաբաժանումները երերացին: Մարտադաշտում հայտնվեց փոխգնդապետ Ստեպանկոն: Նա նետվեց դեպի մարտիկների շրջափան և նրանց տարավ գրոհի: Փոխգնդապետ Սմիռնովը հրետանու կրակը տեղափոխեց հակազրոհի անցած հակառակորդի վրա և նրան ստիպեց նահանջել: Հակառակորդը ետ շարժվեց Իարֆու գետի և Ռեդերսդորֆ բնակավայրի միջև եղած բնագիծը: Հետա-

պընդելով հակառակորդին, 221-րդ գուղը գրավեց Լեռնապարտիզները: Բանակի հրամանատարը, համալրելու նպատակով, դիվիզիան հանեց մարտից: Դիվիզիայի շտաբը, հրաձգային զնդերի հրամանատարներն ու շտաբները սկսեցին համալրումը բաշխել ըստ ստորաբաժանումների: Վերականգնվեցին նաև վաշտային կուսակցական կազմակերպությունները:

Գրավելով ելման դրուժյուն, հրետանային պատրաստությունից հետո, մարտի 18-ին ժամը 10-ին դիվիզիան նորից մտավ մարտի մեջ և անցավ հարձակման: Խնդիրը Խարֆտ գետի հյուսիսային ափի մի քանի հենակետերի գրավումն էր: Սկզբում հարձակվեց միայն 307-րդ գունդը: Հաջողությամբ ճեղքելով հակառակորդի պաշտպանությունը, գունդը գրավեց Խարֆտ կալվածատունը: Կապիտան Ժուկովի գումարտակը ավելի առաջ անցավ և գրոհով գրավեց 93,0 իշխող բարձունքը: Թշնամին հակազդեցի անցավ Ժուկովի դեմ: Դիվիզիայի հրամանատարը որոշեց հարվածն ուժեղացնել: 66-րդ գունդը դուրս եկավ 307-րդ զնդի ձախ թևը և ընթացքից նոյ Վալդի արևելք գրոհեց հակառակորդի վրա: Մուժն ընկնելուն պես երկու զնդերն էլ հարձակվեցին նոյ Վալդի վրա: Վճռական հարված հասցրեց 66-րդ զնդի մայր Սեմենիսինի գումարտակը, որը գրոհով գրավեց գյուղը, ջախջախեց հիտլերականներին և վերցրեց 40 զերի: Գումարտակը ետ մղեց մի քանի հակազդեց, ոչնչացրեց տասնյակ հիտլերականների և վերցրեց 30 զերի ևս: Գլխավորն այն էր, որ Սեմենիսինի գումարտակը հակառակորդի պաշտպանության կենտրոնում 4 կիլոմետր խորությամբ ճեղք առաջացրեց: Հակառակորդն ստիպված էր իր ձախ թևից հանել մի գունդ և փակել ճեղքը: Սա թեթևացրեց մեր ձախ հարևանի վիճակը: Իսկ Շացկովը որոշեց օգտվել ճեղքից՝ ոչնչացնել հակառակորդի աճյուղի պաշտպանությունը: Նա մարտի մեջ մտցրեց 221-րդ գունդը, առաջադրանք տալով դիվիզիայի ձախ թևի առջև: Գրավել Յուրկենդորֆը: Գունդը հաջողությամբ կատարեց առաջադրանքը: Այս մարտերի շնորհիվ դիվիզիան դուրս եկավ Հայլինգենբայլի մերձակա մատույցները:

Արևելյան Պրուսիայում մղված մարտերի ընթացքում ոչ մի պարզ օր չեղավ. մառախլապատ երկինք, անձրևներ, խոնավություն, ցեխ: Զորքերը հարձակվում էին դժվարին պայմաններում:

Ճանապարհները դարձել էին անանցանելի, դաշտերում մարդիկ մինչև ծնկները թաղվում էին ցեխի մեջ: Դժվարացել էր անգամ կենդանաբարձ տրանսպորտի աշխատանքը: Ռազմամթերքը և սնունդը բերվում էր մարդկանց ուսերով: Թիկունքային ստորաբաժանումները շատ լարված էին աշխատում: Բայց այն բանի դիտակցումը, որ առջևում նդովյալ թշնամու վերջին բնագիծն է, մարդկանց ձգում էր հաշվի շառնել դժվարությունները, նրանք ձգտում էին օր առաջ թշնամուն սեղմել Բալթիկայի ափերին և ոչնչացնել:

Հակառակորդի պաշտպանական բնագիծը անցնում էր մինչև Հայլինգենբայլ ձգվող բլուրներով: Այդ բլուրների ետևի ընդարձակ հարթավայրը գերմանացիները ծածկել էին խրամատների խիտ ցանցով, որոնք զբաղեցված էին զորքերով: Հիտլերականներն այս շրջանում կենտրոնացրել էին հսկայական քանակությամբ զորք և ռազմական տեխնիկա, ստեղծել էին հրետանու և ականանետների խիտ ցանց, որը համագործակցելով առափնյա մարտկոցների ու մարտական նավերի հետ, մեր զորքերը պահում էր կենտրոնացված կրակի տակ:

Սեպտեմբերի խրվելով հակառակորդի պաշտպանության խորքը, 61-րդ դիվիզիան ընկավ նաև թևային կրակի տակ: Դիվիզիայի վրա կրակեցին նաև Ֆրիշ Հոֆ ծովածոցում գտնվող նավերը: Բայց դիվիզիան հարձակումը շղաղարեցրեց: Մարտի 20-ին նա հարձակվեց Գեդիլգենի՝ այդ շրջանում հակառակորդի պաշտպանության ամենակարևոր հենակետի վրա: Գերմանացիները ձգտում էին ամեն զնով պաշտպանել այն: Այնտեղից լավ դիտվում էր իրենց պաշտպանության առաջավոր գիծը, հարթավայրը և Հայլինգենբայլ բաղաբը: Մարտի 20-ի և 21-ի ընթացքում հիտլերականները գերակշիռ ուժերով բազմաթիվ հակազդեցներ ձեռնարկեցին, որպեսզի մեզ թույլ շտան գրավելու Գեդիլգենը: Անվերջ կրկնվող հակազդեցները մեր կողմից ետ մղվեցին, բայց մենք այդպես էլ հաջողություն չունեցանք: Մահացու վիրավորվեց 55-րդ հրետանու հրամանատար փոխգնդապետ Սմիլնովը: Նրան փոխարինեց փոխգնդապետ Գրիգորիան: Մարտի 21-ի ցերեկը մեր ինքնագնացները ներխուժեցին Գեդիլգեն, բայց ստիպված ետ դարձան: Գերմանացիները շղաղարեցրին հակազդեցները: Պաշտպանվելով հանդերձ,

մեր գնդերը հակառակորդին ոչնչացնող հարվածներ հասցրին»
Մարտադաշտը ծածկվեց ֆրիցյների դիակներով:

Մարտի 22-ի առավոտյան 221-րդ գունդը հարձակվեց Գեդիլ-
գենի վրա: Երկինքը մի փոքր պարզվեց: Հայտնվեց մեր գրոհային
ավիացիան: Նրանք աջակցեցին գնդին: Գնդի գրոհը ուղեկցվեց
նաև հրետանու հզոր կրակով: Գունդը գրավեց Գեդիլգենը: Կեսօ-
րին 307-րդ գունդը ծանր մարտերով ամրացավ Հայլիգենբայլ-
Քյոնիգսբերգ խճուղու երկու կողմում, իսկ 66-րդ գունդը տիրեց
27,1 բարձունքին: Չզիմանալով մեր գնդերի թևային հարվածնե-
րին, գերմանացիների պաշտպանությունն առաջին գծի զինվորները
խմբերով գերի հանձնվեցին: Գնդերը գրավեցին նրանց խրամատ-
ները:

Մինչև Հայլիգենբայլ մեկուկես կիլոմետր տարածություն էր
մնում: Սակայն նրա ճանապարհին ընկած դաշտի ամբողջ խրա-
մատները զբաղեցրել էին սպաները: Սրանք համարվեցին սպա-
ների ռեզերվային ուժերով: Սրանք կատաղի դիմադրություն ցույց
տվեցին: Այստեղ խիտ դասավորված հրանոթները և ականանետ-
ները կրակային ճնշում գործադրեցին մեր դիվիզիայի վրա: Սպա-
ները անընդհատ գրոհում էին: Մեր մարտիկները ետ էին մղում
այդ գրոհները: Գրոհող ավիացիան և հրետանին անընդհատ խփում
էին գերմանացիների դիրքերին: Դիրքային մարտը շարունակվեց
համարյա ամբողջ օրը: Գերմանացիները ամեն կերպ արգելակե-
ցին մեր զորքերի մուտքը քաղաք:

Մարտի 24-ին մեր ուժերը ծածկեցին ավիացիան ուժգին հարվածեց
Հայլիգենբայլին: Գրոհային ավիացիան քարուքանդ արեց հակա-
ռակորդի պաշտպանությունը: Քաղաքն ու ծովափը ծածկվեցին
ծխով: Մեր ճրճերը գնդերն ու ինքնագնաց հրանոթների դիվիզիոնը
հարձակվեցին Հայլիգենբայլի ամրացված մատուցների վրա, հրե-
տանին ուղեկցեց իր հուժկու կրակով: Մարտադաշտը ծածկվեց
հիտլերականների դիակներով: Այդ դիակների վրայով առաջինը
Հայլիգենբայլ ներխուժեց փոխգնդապետ Վեյտմոմի 66-րդ գուն-
դը, որը ընթացքից գրավեց օդանավակայանը և քաղաքի արևել-
յան ծայրամասում գտնվող փայտասղոցման գործարանը: Քա-
ղաք ներխուժեցին նաև 221-րդ և 307-րդ գնդերը: Քաղաքում մնա-
ցել էին դիմադրության առանձին կետեր, որոնք արագորեն լիկ-
վիդացվեցին: 221-րդ և 307-րդ գնդերը զուգահեռ շարժվեցին

Ռոզենբերգ քաղաքի վրա: Մարտի 26-ի գիշերը առաջինը Ռոզեն-
բերգ ներխուժեց փոխգնդապետ Ստեպանկոյի 221-րդ գունդը և
դուրս եկավ Բալթիկ ծովի ափը:

Դժվար է նկարագրել, թե ինչ հրճվանք էր համակել մեր մար-
տիկներին, հրամանատարներին ու քաղաշխատողներին: «Ծովե-
զերքը մերն է», — բղավում էին նրանք, և այս խոսքերում արտա-
հայտվում էր ամեն ինչ: Դեռևս մարտի 23-ին Գերագույն գլխավոր
հրամանատար Ի. Ստալինի № 317 հրամանով շնորհակալություն
էր հայտարարվել 3-րդ Բելոռուսական ռազմաճակատին, այդ թվում
նաև 61-րդ դիվիզիայի զորամասերին, որոնք Քյոնիգսբերգի մոտ
շրջապատել էին գերմանական խմբավորումը: Շրջապատված այդ
խմբավորումը արդեն ոչնչացվեց: Այս էր մեր մարտերի գլխավոր
հանրագումարը, սովետական ռազմիկների հրճվանքի աղբյուրը:

Մենք ժամանակ շունեինք լավ դիտելու Հայլիգենբայլը և Ռո-
զենբերգը: Սակայն այն, ինչ մենք տեսանք այդ քաղաքներով
անցնելիս, դժվար է նկարագրել: Սեփական քաղաքականություն
կործանման դատապարտված և իրենց հանցագործությունների
ժանրության տակ, հիտլերականներն իրենք էին պայմաններ
ստեղծում ավերածությունների ու հրդեհների համար: Հայլիգեն-
բայլի և Ռոզենբերգի նավահանգիստներն ու ծովեզերքը, փողոց-
ներն ու նրանց մատուցները, ինչպես նաև պաշտպանության գո-
տին վերածվել էին ավերակների կույտերի, ջարդուիշուր արված
մեքենաների և սարքավորումների կուտակման վայրերի: Ամենու-
րեք դիակներ էին, հրդեհ, ավերածություն...

Մարտի 25-ին և 26-ին դիվիզիայի կողմից գերված զինվորնե-
րի ու սպաների թիվը հասնում էր 2920-ի: Գերիներ կային 14, 56
և 292-րդ հետևակային դիվիզիաներից, 10-րդ հեծանվան զորայն-
բրիգադից, 63-րդ հրետանային գնդից, 607-րդ և 508-րդ հետևա-
կային գնդերից, 808-րդ առանձին և 603-րդ սակրային գումար-
տակներից: Քյոնիգսբերգից հարավ-արևմուտքում գերմանական
խմբավորումը շրջապատելու և ոչնչացնելու համար մղված մար-
տերի երկու շաբաթվա ընթացքում 61-րդ դիվիզիան գրավեց 149
թնդանոթ, 28 տանկ, 15 ականանետ, 353 գնդացի:

Ապրիլի 9-ին Քյոնիգսբերգն ընկավ: Դա Արևելյան Պրուսիայի
վախճանն էր:

61-րդ դիվիզիայի ռազմիկների կրծքին փայլում է «Քյոնիգսբերգի գրավման համար» մեդալը:

5. ՀԻՏԼԵՐԱԿԱՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՄԱՍԻՆ

1944 թվականի վերջին և 1945 թվականի սկզբներին ֆաշիստական Գերմանիան սեղմվեց աքցանի մեջ: 1944 թվականին սովետական բանակի ձեռք բերած վճռական հաղթանակները կանխորոշեցին Գերմանիայի կործանումը: Սովետական բանակը ազատագրեց Լեհաստանի մեծ մասը, Չեխոսլովակիայի և Հունգարիայի արևելյան մասերը, գերմանական զավթիչներին վռնդեց Ռումինիայից և Բուլղարիայից, ազատագրեց Հարավսլավիայի տերիտորիայի հսկայական մասը, իսկ հյուսիսում դուրս եկավ Ֆինլանդիայի ու Նորվեգիայի սահմանների մոտ, այսպիսով մեկուսացրեց հիտլերյան Գերմանիային և նրան զրկեց իր դաշնակիցներից ու վասալներից:

3-րդ Բելոռուսական ռազմաճակատի զորքերը Արևելյան Պրուսիայում հաջողությամբ ջախջախեցին հիտլերյան զորքերին: Արևմուտքում դաշնակցային զորքերն ընդհուպ մոտեցան Գերմանիայի սահմաններին, իսկ հարավում դաշնակից զորքերը մարտեր էին մղում Իտալիայի հյուսիսային մասում:

Հիտլերյան Գերմանիան ընկավ հակահիտլերյան կռալիցիայի երկրների բանակների կործանիչ հարվածների տակ: Հիտլերյան կռալիցիան քայքայվեց: Ոգեշնչված սովետական բանակի ազատագրական միսիայով և ռազմաճակատներում նրա ձեռք բերած հաջողություններով, Եվրոպայի ժողովուրդներն ակտիվացրին իրենց պայքարը օկուպանտների դեմ: Ընդլայնվեց հակաֆաշիստական շարժումը: Ակտիվացան հակաֆաշիստական ուժերը բուն Գերմանիայում:

Ֆաշիզմի քաղաքականությունից և պրոպագանդայից հիմարացած գերմանացին շեր հասկանում, որ Գերմանիայի կործանումըն անխուսափելի է, նա զրկված էր ողջախոհորեն դատելու և ճշմարտությունը հասու լինելու ընդունակությունից: Գերմանացի հեղինակ Ռուդոլֆ Զուլդամանը «Պրոպագանդան որպես զենք պատերազմում» հոդվածում բերում է Եվրոպայում դաշնակիցների

էքսպեդիցիոն զորքերի գլխավոր հրամանատարի շտաբին կից հոգեբանական պատերազմի ամերիկյան բաժնի կողմից 1944 թվականի երկրորդ կեսին և 1945 թվականի սկզբներին անցկացված գերմանական ռազմագերիների հարցաքննության տվյալները: Հարցաքննության նպատակն էր պարզել, թե գերմանական զինվորներն ինչպես են արձագանքում դաշնակիցների պրոպագանդային: Այս տվյալներից մենք առանձնացնում ենք սոսկ այն ցուցանիշները, որոնք վերաբերում են Արևելյան Պրուսիայում մղվող մարտերի ժամանակաշրջանին: 1944 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 30-ը հարցման ենթարկված 453 ռազմագերիներից՝ «Վատահո՞ւմ եք դուք Հիտլերին» հարցին «այո» է պատասխանել նրանց 64 տոկոսը, «ոչ»՝ 22 տոկոսը, անպատասխան է թողել 14 տոկոսը: «Հավատո՞ւմ եք դուք, թե Գերմանիան կշահի պատերազմը» հարցին «այո» է պատասխանել 50 տոկոսը, «ոչ»՝ 27 տոկոսը, անպատասխան՝ 23 տոկոսը: Այնուհետև, «Հավատո՞ւմ եք դուք, թե Գերմանիան ունի գաղտնի զենք, որը կարող է վճռականապես ազդել պատերազմի ելքի վրա» հարցին «այո» է պատասխանել 53 տոկոսը, «ոչ»՝ 29 տոկոսը, անպատասխան՝ 18 տոկոսը¹:

Նկատի ունենալով գերու հոգեբանությունը, կարելի է ձեռնպահ մնացածներին («անպատասխան») դասել «այո» պատասխան տվողների կատեգորիային: Այս դեպքում Հիտլերին հավատացողների տոկոսը կկազմի 74, Գերմանիայի հաղթանակին հավատացողներինը՝ 70, «գաղտնի զենքին» հավատացողներինը՝ 72 տոկոս:

Այժմ անդրադառնանք Արևելյան Պրուսիայում հարցաքննված գերիների ցուցմունքներին: Ի դեպ ասած՝ մեր կողմից գերված հիտլերականները վախ էին ապրում ոչ միայն գերելյան պրոպագանդայի, այլև սեփական հանցագործությունների համար: Բնականաբար, սա իր կնիքն էր դնում նրանց ցուցմունքների վրա:

Եֆրեյտեր Ռուդոլֆ Գրաուն ցուցմունք տվեց. «Մեր զինվորներից շատերը համոզված էին, որ ուսուցիչները ներթափանցումը Արևելյան Պրուսիա տեղի է ունեցել մեր ղեկավարության դավաճանության պատճառով»:

Մեկ ուրիշ եֆրեյտոր՝ Հերբերտ Լիբեկն ասաց. «Մեր զինվոր-

¹ Տե՛ս «История второй мировой войны», М., 1957, стр. 540.

ների մեծամասնությունը հավատացած է, որ պատերազմը հաջող
եւթ կունենա Գերմանիայի համար: Մենք համոզված ենք, որ հա-
մառորեն դիմադրելով բոլոր ռազմաճակատներում, մենք կշահենք
պատերազմը: Ամենամոտիկ ապագայում կօգտագործվի նոր
գաղտնի զենքը: Անգլիային այնպէ՛ս հարված կհասցվի, որ նա
կդադարի օդից ոչնչացնել մեր քաղաքներն ու ռազմական գործա-
բանները: Նոր զենքը արմատապես կփոխի ռազմաճակատներում
տիրող դրութիւնը հօգուտ Գերմանիայի»:

Արդեն մեր հիշատակած ենթասպա Իորգեն Գրաբովը իր
ցուցմունքում ասաց, որ «Հերման Գյորինգ» դիվիզիայի զինվորներն
ու սպաները հավատում են Գերմանիայի հաղթանակին: Նրանք հույ-
սը դրել են «նոր զենքի» վրա, որի օգնութեամբ գերմանացիները
կրկին կհասնեն «տեխնիկական գերազանցութեան»: Անձամբ Գրա-
բովը համոզված էր, որ «նոր զենքի» կիրառումով Ռուսաստանն ու
Անգլիան «ստիպված կլինեն համաձայնել հաշտութեան»:

«Հերման Գյորինգ» կորպուսի համանուն զնդի 5-րդ վաշտի
հրամանատար լեյտենանտ Վոլֆը ցուցմունք տվեց. «Զինվորների
տրամադրութիւնը համեմատաբար լավ է: Կարգապահութիւնը
միանգամայն բավարար է: Թեև մեր սպաներից շատերը լրջորեն
չեն հավատում Գերմանիայի համար պատերազմի հաղթական ա-
վարտի հնարավորութեանը, այնուամենայնիվ կարծում են, որ գեր-
մանացիները պետք է պայքարեն առավելագույն եռանդով, որ-
պեսզի խաղաղութեան հասնեն ավելի շահավետ պայմաններով,
քան առաջին համաշխարհայինի ժամանակ: Տեսնելով մեր համա-
ռութիւնը բոլոր ռազմաճակատներում և որքան կարելի է ավելի
երկար պայքարելու մտադրութիւնը, հակառակորդը կարող է մեզ
հաշտութեան առավել ընդունելի և արժանավայել պայմաններ ա-
ռաջարկել: Մենք՝ սպաներս, միայն սրանում ենք տեսնում մեր
գործերի պայքարի ու դիմադրութեան իմաստը»:

Ինչ էլ որ հորինեին հիտլերյան պարագլուխները, ինչ դրա-
կունյան միջոցներ էլ որ ձեռնարկեին բանակում, ինչքան էլ համա-
ռորեն դիմադրեին հիտլերյան բանակները, գերմանական ժողո-
վըրդի ու գերմանական գործերի դրութիւնը, նրանց բարոյական
վիճակը այդ շրջանում բնորոշվում էր գլխավոր փաստով՝ կարմիր
բանակը ջարդել էր հիտլերյան բանակի ողնաշարը: Հիտլերյան
Գերմանիայի կրախը անխուսափելի էր:

«Հերման Գյորինգ» կորպուսից գերի ընկած եֆրեյտոր Վիլի
Օշկոն իր ցուցմունքներում ասաց. «Մեր դրութիւնն անելանելի է
դարձել: Չնայած մինչև վերջ դիմադրելու խիստ հրամանին, մեր
վաշտի բոլոր զինվորները, ինչպես նաև վաշտի հրամանատար
օբերլեյտենանտ էլսները և դասակների հրամանատարները փա-
խան: Երեք վաշտ մարտից հետո միացան ու դարձան մեկ, որ-
տեղ 30 մարդ հազիվ հավաքվեց: Այնինչ մարտից առաջ յուրա-
բանչյուր վաշտում կար մինչև 100 մարդ»:

Գեներալները գորքին ահաբեկում էին. սպաները զինվորների
մարտունակութիւնը մի կերպ պահպանում էին «գաղտնի զենք»-
ով, իրենք էլ չհավատալով դրա գոյութեանը: Գերի օբերլեյտենանտ
Ֆրանց Վոլֆն ասաց. «Վերջերս նացիոնալ-սոցիալիստական դաս-
տիարակութեան գծով 2-րդ գումարտակի սպա լեյտենանտ Ֆիշերը
սպաներին պաշտոնապես տեղեկացրեց այն մասին, որ զինվոր-
ներին պետք է հայտնել «Ֆաու-2»-ի փորձարկման դրական ար-
յունքների մասին, որ շուտով այդ զենքը կսկսի ստացվել ռազ-
մաճակատում»:

Սակայն զինվորներից շատերն սկսեցին հասկանալ իրենց
անհուսալի դրութիւնը և դադարեցին հավատալ «գաղտնի զեն-
քին»: Գերի զինվոր Պլատեկը իր ցուցմունքում ասաց. «Զինվոր-
ներն սկսում են ծիծաղել «Ֆաու-2»-ի վրա: Եֆրեյտոր Բրունո
Ֆալկը ընկերների հետ զրուցելիս ցույց էր տալիս իր կարաբինը՝
ասելով. «Ահա Ֆաու-2-ը»: Մյուսները պատասխանում են.
«Ֆոլկսշտուրմ»:

Չհավատալով Գերմանիայի համար պատերազմի քիչ թե շատ
տանելի ելքի հնարավորութեանը, ֆաշիստներն այնուամենայ-
նիվ գերի չէին հանձնվում սովետական զորքերին: Նրանցից ո-
մանք գերադասում էին զոհվել խրամատներում, մյուսները՝ դիմա-
դրել էլ ավելի մեծ կատաղութեամբ: Չարագործութիւնների բեռը
գերիներին հարկադրում էր հիտլերական մնալով հանդերձ, որոշ
բաներ խոստովանել: Գերիների հարցաքննութիւնների ժամանակ
համոզվում էինք, որ գերի հիտլերականը ավելին չէ, քան կույր մի
գործիք, որն առանց հասկանալու սերտած նախադասութիւններ է
կրկնում մեխանիկորեն: Կարծես մարդ չի խոսում, այլ մեքենա է
հոնդում: Հիշում եմ մի խումբ գերիների հարցաքննութիւնը կա-
պիտան Ստեպանովի հետ 1945 թվականի հունվարի 22-ին Գում-

բենենի մոտ: Շատ մոտիկ մարտեր էին գնում, գերիները դողում էին, բղավում. «Հիտլեր կապուտ»: Նրանք մի տեսակ արդարանում էին՝ հրամայված է «դիմադրել մինչև վերջ»...

Նրբ ասում են, որ ֆաշիստները կորցրել են մարդկային կերպարանքը, քաղքենին շփոթվածի տեսք է ընդունում: Մինչդեռ դա հենց այդպես էր: Հիտլերականը չէր կարող գազան չլինել: Ռասայական «տեսությունը» և անասնական հակակոմունիզմը, որոնք բոլոր ոչ-գերմանական ժողովուրդներին դիտում են որպես «ոչ-լիարժեք» ժողովուրդներ, իսկ կոմունիզմը՝ որպես «հակայական վտանգ արիական ռասայի ապագայի համար», ներծծվել էին հիտլերականների ուղեղի մեջ, դարձել միա ու արյուն: Ըշմարտությունն այն է, որ շարագործություններ են կատարել բոլոր հիտլերականները՝ զինվորից սկսած մինչև բարձրագույն հրամանատարությունը: Կարմիր բանակի խորտակիչ հարվածների տակ նահանջելով ու գիտենալով, որ սովետական զորքերի հաղթական մուտքը Գերմանիա անխուսափելի է, հիտլերականները սոսկումով դիմում էին մոլեգնություն, դիմադրում էին ավելի կատաղի: Հենց որ մեր զորքերը մոտեցան Արևելյան Պրուսիայի սահմաններին, գերմանական հրամանատարությունը զորքերին հրամայեց անխտիր զնդակահարել սովետական բոլոր ռազմագերիներին՝ ոմանց անմիջապես, ոմանց էլ առաջին իսկ հարցաքննության ժամանակ: Մեր զորքերի ձեռքն ընկավ «Հերման Գյորինգ» դիվիզիայի 1-ին պարաշյուտատանկային գումարտակի հրամանը, որտեղ վաշտերի հրամանատարներին կարգադրված էր

«1. Մի քանի ռուս գերիներ վերցնելու դեպքում, նրանցից մեկին-երկուսին անհապաղ բերել գումարտակի շտաբ, մյուսներին զնդակահարել:

2. 1-ին հրաձիգ գումարտակի յուրաքանչյուր զինվորի մասին, որը գերի է վերցնում, զեկուցել գումարտակի շտաբին՝ նրան եռօրյա արձակուրդ տալու համար:

3. Յուրաքանչյուր վաշտի հրամանատար կատանա մի շիշ կոնյակ: Այդ կոնյակը արվում է հետախուզական խմբերի հրամանատարներին որպես խրախուսանք և պետք է դիտվի իբրև պարգև»¹:

Գերիներին չէին զնդակահարում: Նրանց ենթարկում էին սոս-

կալի կտտանքների, ծաղրուծանակի, այլանդակում էին նրանց մարմինները. դանակներով ծակծկում, եղունգների տակ ասեղ խրում, շիկացած երկաթով դաղում, ոլորում մատները, հանում աչքերը, խոցոտում դեմքերը, տրորում ցեխի մեջ և այդ բոլորից հետո միայն զնդակահարում:

Մինչև Հայլիգենբայլ քաղաքն ընդամենը միայն մի քանի կիլոմետր էր մնացել: Ավարտվում էր գերմանական խմբավորման շրջապատումը Քյոնիգսբերգից հարավ-արևմուտք: Ֆաշիստները չէին կարող շիմանալ, որ եթե չզոհվեն, ապա ամենաշատը մեկ-երկու օր հետո գերի կընկնեն սովետական զինվորների ձեռքը: Իրականում այդպես էլ կար: Բայց այս ուղամաններում անգամ նրանք ավելի էին գազազում: 1945 թվականի մարտի 20-ի երեկոյան մեր երկու զինվոր գրոհի ժամանակ ներխուժեցին Գեդիլգեն բնակավայրի ծայրամասը: Նրանք ընկան շրջապատման մեջ, կովի բռնվեցին ու վիրավորվեցին: Մարտի 21-ի առավոտյան Գեդիլգեն ներխուժեց մայր Վոյկովի առանձին ինքնագնաց դիվիզիոնը, փորձելով օգնության հասնել կտրիճներին: Սակայն ուշացավ: Այդ օրը մայր Վոյկովը քաղբաժին ներկայացրեց.

«Ակտ

Մենք, ներքոստորագրյալներս, մայր Յա. Ի. Վոյկովը, կապիտան Ա. Տ. Շուլցան, լեյտենանտ Մ. Կ. Սեմյոնովը, ավագ բժիշկ բուժօժանայության կապիտան Ա. Ի. Կորոլկինը, ավագ Ս. Ա. Պոպովը կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

1945 թվականի մարտի 21-ին, ժամը 11-ն անց 30 րոպեին, Գեդիլգեն կտվածատանը մարտական առաջադրանքը կատարելիս ավագ սերժանտ Սեմյոն Պետրովիչ Վասիլևը, 1909 թ. ծնված, և շարքային Տիմոֆեյ Վասիլևիչ Վեդյաշկինը, 1911 թ. ծնված, շրջապատվեցին մի մեծ խումբ գերմանացիների կողմից և վիրավոր վիճակում գերի ընկան: Մեր երկու զինվորների հետ գերմանացիները գաղանային հաշվեհարդար էին տեսել:

Ավագ սերժանտ Վասիլևին սաստիկ ծեծել էին, դեմքը, գլուխն ու մարմինը շերտ-շերտ կտրատել, կոշիկներով տրորել ցեխի մեջ ու սպանել:

Շարքային Վեդյաշկինին նույնպես ծեծել էին, գլխին սառը, բուժ զենքով մի քանի հարված հասցրել, աջ ձեռքը կտրատել երեք

¹ Բերվում է ռազմաճակատի քաղվարչության թուղթիկից:

տեղից, ձախ ձեռքի ոսկորը գնդակներով ծակծկել: Դրանից հետո վեղյաշկիներ նույնպես ոտքերով արորովել էր ցեխի մեջ և մահացել:
(ստորագրություն):

Գազանային էությունը հիտլերականին թույլ չէր տալիս նույնիսկ վերջին բուսաներին գերծ մնալ վայրագությունից: Կործանման դատապարտված ֆաշիստը նման էր վիրավոր գազանի: Ի՞նչ գթություն մասին կարող էին հուսալ նրանք: Տարօրինակ է, երբ հիտլերյան դահիճներն են խոսք բացում մարդասիրության մասին:

Երբ Գերբախի բերանով գերմանական բնակչության մեջ սարսափ էր տարածվում սովետական բանակի կողմից սպասվելիք դատաստանի մասին, ապա հազիվ թե դա զարմանք պատճառեր: Զարմանալի էր միայն այն, որ սովետական ռազմիկները, չնայած հիտլերականների գազանություններին, անթույլատրելի ոչ մի արարք չկատարեցին:

Ինչպիսին է հիտլերականի բարոյական կերպարը:

Մեր բերած փաստերը ֆաշիստական գազանությունների մեկմիլիոններորդ մասն անգամ չեն կազմում: Բայց դրանք էլ բավարար չափով արտացոլում են հիտլերականի՝ որպես ճիվաղի ու մարդասպանի, ներքին էությունն ու դեմքը: Հիտլերականը զուրկ է ինքնուրույն մտածելու ընդունակությունից, բայց դրա փոխարեն ընդունակ ու ազատ է իր գործողություններում, ինչպես ամեն մի գիշատիչ: Նա չէր մտածում, բայց հավատում էր ռասիզմին, ֆաշիզմին, Հիտլերին: Այդ հավատը պահպանվեց նույնիսկ այն բանից հետո, երբ կույրերն անգամ տեսնում էին ֆաշիստական Գերմանիայի անխուսափելի կործանումը:

Գերմանացիների համար ՍՍՀՄ-ի դեմ ուղղված պատերազմը կշեռքի նժարի վրա դրեց Գերմանիայի ու ֆաշիզմի ճակատագիրը: Հակառակ Գերմանիայի շահերի, ծանրությունը ֆաշիզմի կողմն էր: Ֆաշիստը ավելի շատ Հիտլերին էր հավատում, քան թե Գերմանիային: Հետևաբար, ֆաշիստը զուրկ է հայրենասիրական զգացմունքից, հայրենիքի շահերի գիտակցումից: Մարդասպանն ու կողոպտիչը չի կարող իսկական հայրենասիրության զգացմունք ունենալ: Սրանում է հիտլերականի բարոյական կերպարի էությունը:

ԲԵՌԼԻՆՅԱՆ ՕՊԵՐԱՅԻԱՆ

1. «ԴԵՊԻ ԲԵՌԼԻՆ»

Բալթիկայի ափերից 61-րդ դիվիզիան վերստին կենտրոնացավ Յինտենում, որտեղ նա մինչև ապրիլի 1-ը հանգստացավ, կարգի բերեց իրեն: Գերագույն գըլխավոր հրամանատարության Զորակայանի հրամանով 28-րդ բանակը տեղափոխվեց սովետա-գերմանական ռազմաճակատի կենտրոնական հատվածը: Ռազմերթ կատարելով դեպի Վալու (60 կմ Քյոնիգսբերգից արևելք), դիվիզիան ապրիլի 5—7-ը նստեց Կաունաս—Վիլնյուս, այնուհետև դեպի արևմուտք գնացող զնացքը: Հրետանային զույգը, ավտոտրանսպորտը և մի քանի այլ ստորաբաժանումներ մեխանիկական քարշով մեկնեցին Պոզնան: Դիվիզիայի հրամանատար Շացկովը մեկնեց զնացքով, էշելոնի հետ: Զրահատրանսպորտը նստած ավտոմատավորների ու գընդացրային անձնակազմի ուղեկցությամբ ես ավտոմեքենայով մեկնեցի դիվիզիայի կենտրոնացման նոր վայրը: Մեր ճանապարհը վալուից անցնում էր Ֆրիդլանդով, Պրեյսիշ Այլաուով, Լանդսբերգով, Հայսենբերգով, Գուաշտադտով, Ալենշտեյնով, Օստորոդեով, Դոյդշ-Այլաուով (Արևելյան Պրուսիա), այնուհետև Լեհաստանով՝ Նովո Մյաստոյով, Բրոդենիցայով, Տորնով (Տորունով), Նեշկայով, Պետրկովով, Տուրեկով, Պլեշևով, Կալեշով, Յարոցենով, Դոբժիցայով, Պոզնանով:

Երթի առաջադրանք տալով հրետանային զնդին ու զենիթային վաշտին, ապրիլի 10-ին զնացի էշելոնը դիմավորելու: Մենք դեպի արևմուտք շարժվեցինք Ռակոննիցեով, Վոշտինով, անցանք Օդերը, այնուհետև Ֆրեյշտադտը և Զագանը (Ժեգանը): Ամբողջ դիվիզիան ապրիլի 16-ին կենտրոնացավ Վալերսդորֆ գյուղի շրջանում: Սպասում էինք համալրման ժամանեկուն: Զորս օր պահանջ-

վեց համալրումն ստանալու, այն ըստ ստորաբաժանումների բաշխելու և ելման դրուժյան շրջանը՝ Ֆորստ քաղաքից 7 կիլոմետր հարավ-արևելք՝ Նեյսեի մոտ երթ կատարելու համար: Այստեղ 28-րդ բանակը մտավ 1-ին Ուկրաինական ռազմաճակատի կազմի մեջ, որի հրամանատարն էր Սովետական Միության մարշալ Ի. Ս. Կոնևը:

Պատերազմի վերջին գարունն էր: Լեհաստանի բնությունն արդեն արթնացել էր ձմեռային քնից, երկինքը ծածկված էր խոնավ ամպերով, ծառերը շիվեր էին արձակում, իսկ գետինը ծածկվում էր թարմ կանաչով... Շուտով ամեն ինչ կանաչ կհաղնի: Որքան շարժվում էինք գեպի արևմուտք, գարունն այնքան հաստատորեն էր մտնում իր իրավունքների մեջ:

Հասել էր ֆաշիստական զազանին ջախջախելու ժամը. Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը մոտենում էր իր ավարտին: ՍՍՀՄ զինված ուժերի գլխավոր հարվածն ուղղված էր Բեռլինին: Բեռլինի մոտակա մատույցներում կանգնած էին 1-ին Բելոռուսական ռազմաճակատի զորքերը՝ Սովետական Միության մարշալ Գ. Կ. ժուկովի հրամանատարությամբ: Սակայն, ինչպես վկայում է բանակի գեներալ Ս. Մ. Շտեմենկոն, Գերազույն գլխավոր հրամանատար Ի. Ստալինը որոշելով ռազմաճակատների սահմանադատիչ գիծը ասաց. «Ով առաջինը ներխուժի, թող նա էլ գրավի Բեռլինը»¹: Մարշալներ ժուկովն ու Կոնևը նույնպես նշում են, որ, քննարկելով գլխավոր շտաբի մշակած բեռլինյան օպերացիայի սլանը, Ստալինը 1-ին Բելոռուսական և 1-ին Ուկրաինական ռազմաճակատների միջև սահմանազատող գիծը անցկացրեց Լյոբարեն² քաղաքով, որը գտնվում է Բեռլինից 60 կիլոմետր հարավ-արևելք:

Այս որոշումը ռազմաճակատների հրամանատարներին հնարավորություններ է տալիս հանդես բերելու մեծ նախաձեռնություն, ձգտելով առաջինը ներխուժել Բեռլին: Բայց բանը միայն

սրանում չէր: Ստալինը այդպես վարվեց, որովհետև կուսակցության Կենտրոնական կոմիտեն, սովետական կառավարությունը և Գերազույն գլխավոր հրամանատարության Զորակայանը ամուր համոզմունք ունեին օպերացիայի հաջող ելքի համար, որովհետև նրանք լիովին վստահում էին զորքերին ու նրանց զորավարներին:

Թշնամու զորամասերում թագավորում էին հուսահատ կատաղությունն ու խուճապը: Բեռլինի պաշտպանական շրջանի հրամանատարության մարտի 3-ի հրամանի մեջ զորախմբերի ու ֆոլկսշտուրմի ջոկատների առջև խնդիր էր դրված: «Մայրաքաղաքը պաշտպանել մինչև վերջին մարզը և վերջին փամփուռը»: Նրանցից պահանջվում էր պայքարել «մոլեգին ֆանտազիայով, հակառակորդին մոլորության մեջ գցելու համար բոլոր միջոցների գործադրումով, ռազմական խորամանկությամբ, նենգությամբ և մոլեռանդությամբ»: Բեռլինի պաշտպանության համար օգտագործվում էին տառացիորեն բոլոր հնարավորությունները՝ սները, համալիրները, մետրոպոլիտենը, զանազան թունեղներ, հողաթրմբերը, երկաթուղային կայարանները, ջրանցքներն ու մյուս ինժեներական կառույցները ընդհուպ մինչև կոյուղու ցանցը: Նախատեսված էր ստորգետնյա ուղիներն օգտագործել սովետական զորքերի թիկունքում գրոհային խմբերի հանկարծակի հարձակումներ կազմակերպելու և թիկունքում, անտառներում «ժողովրդական պատերազմ» մղելու համար «առաջին հերթին գիշեր ժամանակ»¹:

Հայրենական մեծ պատերազմի պատմության ռազմա-պատմական գրականությունից քաջ հայտնի է, որ Բեռլինի, Օդերի և Նեյսեի միջև ընկած ամբողջ տարածությունը վերածված էր հզոր պաշտպանական սիստեմի: Բազմաթիվ գետերն ու լճերը, քարե և աղյուսե տները, բնակավայրերը, անտառային զանգվածները վերին աստիճանի էֆեկտիվ կերպով հարմարեցված էին պաշտպանության: Սա դաժան պաշտպանության բազմաշերտ մի սիստեմ էր: Բեռլինը գտնվում էր պաշտպանական կառուցվածքներով: Բեռլինյան պաշտպանության կազմակերպման սիստեմը և կրակի խտությունը կարելի էր համարել անթերի: Ամբողջ սիստեմը պաշտպանվում էր օդից: Կարճ ասած, ֆաշիստական պարագլուխները աշխատել էին անմատչելի պաշտպանություն ստեղծել:

¹ С. М. Штеменко. Генеральный штаб в годы войны, М., 1968, стр. 330.

² Г. К. Жуков. Воспоминания и размышления, М., 1969, стр. 443, И. С. Конев. Сорок пятый, стр. 92.

¹ «Совершенно секретно. Только для командования», стр. 572—574.

«Հակառակորդին ոչ մի բույս չի կարելի հանգիստ տալ,— ասվում էր նույն հրամանում,— նա պետք է թուլանա ու արնաքամ լինի հենակետերի, պաշտպանական հանգույցների ու դիմադրության օջախների խիտ ցանցում»:

Այս հրամանի հուսահատ խոսքերում հնչում էր ֆաշիստական հրամանատարության վերջին ճիշը: Մարտի 19-ին Հիտլերը հրամանատարական ինստանցիաներին, գառվայտերներին ու պաշտպանության պետական կոմիտեներին պարտավորեցրեց ամեն ինչ ջնջել գետնի երեսից. «Գերմանիայի տերիտորիայի վրա գտնվող բոլոր հաղորդակցության ուղիները, կապի միջոցները, արդյունաբերական ձեռնարկությունները, ինչպես նաև նյութական պաշարները, որոնցից հակառակորդը կարող է ինչ-որ շարժում օգտվել, անհապաղ կամ աննշան ժամանակ անցնելուց հետո ենթակա են ոչնչացման»¹: Սա «այրվող հողի» հրամանն էր:

1945 թվականի ապրիլի 16-ին 1-ին Բելոռուսական ռազմաճակատի զորքերը՝ Սովետական Միության մարշալ Գ. Կ. ժուկովի հրամանատարությամբ, և 1-ին Ուկրաինական ռազմաճակատի զորքերը՝ Սովետական Միության մարշալ Ի. Ս. Կոնևի հրամանատարությամբ, վճռական հարձակման անցան Բեռլինի ուղղությամբ: Հարձակման առաջին իսկ օրը 1-ին Ուկրաինական ռազմաճակատի զորքերը հակառակորդի պաշտպանությունը հաջողությամբ ճեղքեցին Նեյսե գետի մոտ և անցան այն: Ապրիլի 16-ից մինչև 18-ը ռազմաճակատի զորքերը ճեղքեցին հիտլերականների խորը էջելոնացված պաշտպանության երեք շերտ և, անցնելով հաջորդ շրջանի խոշոր արգելքը՝ Շպրենն, դուրս եկան օպերատիվ տարածություն: 1-ին Բելոռուսական ռազմաճակատի զորքերը գերմանացիների պաշտպանությունը ճեղքեցին Օդերի Ֆրանկֆուրտից հյուսիս, Օդեր գետի մոտ: Ռազմաճակատի աջթևյան բանակներն անցան Օդերը: Ապրիլի 18-ին ռազմաճակատի զորքերը, հաղթահարելով թշնամու համառ դիմադրությունը, գրավեցին Բեռլինի մատույցներում գտնվող ուժեղ հենակետեր Բառնաուն, Շարաուսբերգը և Մյունխբերգը:

Թշնամու պաշտպանության խորքում հաջողությամբ առաջ գնացին 1-ին Ուկրաինական ռազմաճակատի զորքերը: Սովին-

ֆորմբյուրոյի ապրիլի 20-ի ամփոփագրում հաղորդվում էր. «Գրեզդենի ուղղությամբ մեր զորքերը, անցնելով Նեյսե գետը, ճեղքեցին հակառակորդի ամրացված դիրքերը: Գոյացած ճեղքով առաջ շարժվեցին շարժական միավորումները: Չնայած անտառապատ տեղանքի դժվարին պայմաններին, լճերի ու գետերի առատությամբ, մեր զորքերը 15 կիլոմետր առաջ շարժվեցին և դուրս եկան Շպրեն գետի մոտ: Շպրենի մատույցներում հակառակորդը դիմադրում էր աներևակայելի կատաղությամբ: Իր զորքերն ուժեղացնելով երեք տանկային և մեկ մոտորացված դիվիզիաներով, հիտլերականները բազմիցս անցնում էին հակազորահերի»¹: Մեր զորքերը ոչնչացրին 56 տանկ, հազարավոր զինվորներ և Շպրենբերգ քաղաքից հարավ անցան Շպրենն:

Ապրիլի 20-ին Սովետական Միության մարշալ Կոնևի զորքերը հակառակորդի պաշտպանության խորքում առաջ էին շարժվել 70 կիլոմետր:

28-րդ բանակի զորքերին վիճակվեց Ռիբալկոյի տանկային բանակի հետ Բեռլինից հարավ-արևելք գերմանական խմբավորումը շրջապատելու և հարավից Բեռլին ներխուժելու պատիվը: «Այն ժամանակ,— գրում է մարշալ Կոնևը,— շատերն էին երազում ընկնել այստեղ, որպեսզի հենց այստեղ ավարտեն իրենց մարտական ուղին»: Պատահական չէ, որ 28-րդ բանակի դիվիզիաները «գնում էին ըստ գրաֆիկի և նույնիսկ առաջ էին ընկնում դրանից...»²: 61-րդ դիվիզիայի ռազմիկները օրինական հպարտություններով հարավ, որ 1-ին Ուկրաինական ռազմաճակատի 28-րդ բանակի կազմում և կարմիր բանակում առաջինը Ռիբալկոյի 3-րդ տանկային բանակի տանկիստների հետ ներխուժեցին հիտլերյան Գերմանիայի մայրաքաղաք Բեռլին:

Ապրիլի 20-ի հիշարժան օրը 61-րդ դիվիզիայի հրամանատարական կետ եկավ 28-րդ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Լուչինսկին: Համառոտակի ծանոթանալով դիվիզիայի մարտի մեջ մտնելու պատրաստականությունը, դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ա. Գ. Շացկովին հրամայեց. «...1945 թ. ապրիլի 21-ին, ժամը 7-ին, զբաղեցրա՛ք շրջանից ավտոտրանս-

¹ «Պրավդա» № 95, 21 ապրիլի 1945:

² И. С. Конев. Сорок пятый, стр. 153.

¹ «Совершенно секретно. Только для командования», стр. 574.

պորտով շարժվել Զիմերսդորֆ, Կոմպտենդորֆ, Գրեբկաու, Լյուկ-
կաու, Գոլսեն երթուղով և 21.4.45 թ. ժամը 14-ին կենտրոնանալ
Գոլսենի շրջանում: 21.4.45 թ. ժամը 16-ին 3-րդ տանկային բա-
նակի տանկային զորքերի փոխգործողության մեջ հակառակորդին
հետապնդել:

ա) գլխավոր ուժերով՝ Գելտոնի, Բատուտի, Յոսսենի, Գրոսս-
Շուլցենդորֆի, Բլանկենֆելդի, Գրոսս-Բենրնի, Տելտովի (Բեռլին)
ուղղությամբ:

բ) մեկ հրաձգային գնդով՝ Գոլսենի, Շպերենբերգի, Նուկրս-
դորֆի, Գեյսհազենի, Տելտովի (Բեռլին) ուղղությամբ»:

Բանակի հրամանատարը մեկնելուց առաջ հրամայեց կատա-
րել դիվիզիան՝ ուղղաճակատային ավտոտրանսպորտով տեղա-
փոխելու ստույգ հաշվարք:

Դիվիզիայի հրամանատարը հրավիրեց զորամասերի հրամա-
նատարներին ու նրանց քաղաքով տեղակալների և դիվիզիայի
շտաբի ու քաղաքաժնի աշխատողների համատեղ խորհրդակցու-
թյուն: Նա շարադրեց դիվիզիայի ու նրա զորամասերի խնդիրները,
եղնելով բանակի հրամանատարի պահանջներից, զորամասերի
շտաբներին հրամայեց անհապաղ դիվիզիայի շտաբի հետ մեկ-
տեղ, կազմել ավտոտրանսպորտով զորամասերի ու ստորաբաժա-
նումների փոխադրման հաշվարք և պատրաստ լինել շարժվելու
նշանակված ժամկետին: Խորհրդակցության մասնակիցների առջև
դրվեցին քաղաքական աշխատանքի կազմակերպման հարցերը,
որոնք կապակցվեցին Բեռլինի վրա մեր հարձակման խնդիրների
հետ:

Խորհրդակցությունից նոր էինք դուրս եկել, երբ մոտեցան եր-
կու սպա. սրանք իրենց հետ բերել էին անհրաժեշտ քանակու-
թյամբ ավտոմեքենաներ, որոնք 1-ին Ուկրաինական ուղղաճակա-
տին էին հանձնվել Զորակայանի ռեզերվային ավտոտրանսպոր-
տից:

Դիվիզիայի շտաբն սկսեց կազմել դիվիզիայի փոխադրման
շարժման պլանը, մենք մեկնեցինք զորամասեր ու ստորաբաժա-
նումներ:

Ի՞նչ տեսանք այնտեղ: Կարծես միասնական հրամանով ավ-
տոմեքենաների, թնդանոթների, ինքնագնաց հրանոթների, ակա-
նանետների, հաստոցավոր գնդացիների վահանակների, սայլերի,

զինվորական խոհանոցների վրա, ամեն տեղ, որտեղ հնարավոր
էր, զինվորներն սպիտակ ներկով գրել էին. «Դեպի Բեռլին»: Զար-
մանալի էր: Ոչ ոք չգիտեր հրամանատարի նոր հրամանի մասին:
Որտեղի՞ց էին ներկ ճարել: Ե՞րբ էին հասցրել գրել: Ո՞վ էր նա-
խաձեռնողը: Բայց մի՞թե դա էր կարևորը: Ո՞չ: Կարևորն այն էր,
որ այդ մակագրությունը արտացոլում էր մեր մարտիկների բարձր
մարտական ոգին, նրանց բարոյա-քաղաքական բարձր գիտակցու-
թյունը:

Հենց որ իմացան 28-րդ բանակի հրամանատարի մարտական
հրամանի մասին, ակնթարթորեն այն շղթայով փոխանցեցին բո-
լոր ստորաբաժանումներին: Հանպատրաստից տեղի ունեցան մի-
տինգներ: Գնդերի հրամանատարները և նրանց քաղաքով տեղա-
կալները, քաղաքաժնի աշխատողները չէին հասցնում ներկա լինել
միտինգներին, որտեղ պետք է էլույթ ունենային: Զերմ ու հըրճ-
վալից էին միտինգները, յուրաքանչյուր ոք ուզում էր դիմացինի
հետ բաժանել իր ջերմ զգացմունքը: «Ոչ մի դիմագրություն մեզ
չի կանգնեցնի Բեռլինի առաջ»: «Մենք կզնանք Բեռլին և հաղթող-
ների հաստատուն երթը կթնդա նրա կենտրոնում», — ասում էին
զինվորները: «Պատվավոր է ներկայիս խնդիրը՝ ֆաշիստներին
ոչնչացնել իրենց որջում՝ բուն Բեռլինում: Երջանիկ եմ, որ ապ-
րեցի մինչև այսօր», — ասաց փորձված զինվոր Դեմենտեր: — Երդ-
վում եմ, իմ մարտական ընկերներ, որ բոլոր ուժերս կտամ ֆա-
շիստների արագ ջախջախմանը Բեռլինում»: Կարմիրբանակային
Մաքսիմովը հայտարարեց. «Մեր առաջադրանքի կատարումից է
կախված պատերազմի շուտափուլյթ ավարտը: Երբ գնում ենք Բեռ-
լինի վրա, հոգնություն մասին խոսք անգամ չինել չի կարող: Չկան
այնպիսի դժվարություններ, որոնք կարողանային հտ պահել մեզ:
Առա՛ջ և առա՛ջ, բարեկամներս: Առա՛ջ, մինչև հաղթանակի դրոշմ
բարձրացվի Ռայխստագի վրա»:

Զինվորի այս պարզ ու անպաճույճ խոսքերը լի են ոչ միայն
թշնամուն սեփական որջում ջախջախելու վճռականությամբ, այլև
բացահայտում են սովետների երկրի մարդու ներքնաշխարհը,
բացում են սովետական զինվորի հայրենասիրության լեցուն ջերմ
սիրտը:

Անմոռանալի օրեր շատ են եղել: Մարտիկները խոսում էին
դրանց մասին ևս: Երբ նրանք Կովկասյան գլխավոր լեռնաշղթա-

յում անասելի ծանր գոտեմարտի էին բռնվում թշնամու հետ, նրանք առաջին հերթին մի ձգտում ունեին՝ ատելի թշնամուն շուտափույթ վռնդել հարազատ հողից: Նրանք ոչնչացնում էին ֆաշիստներին և հարազատ հողի ու նղբայրական կեհաստանի հողի վրայով հպարտ քայլում դեպի արևմուտք, պահանջ զգալով որքան կարելի է արագ անցնել հիտլերյան Գերմանիայի սահմանը և ֆաշիստական զազանին ոչնչացնել իր իսկ որջում: Երբ մտանք Արևելյան Պրուսիա, մարտիկներին ասացինք. Ոտներիդ տակ թշնամու հողն է: Ուրեմըն, եղիր աշալուրջ: Նրանք հասկանում էին, որ պատերազմը կավարտվի Բեռլինում, իսկ Բեռլին տանող ճանապարհը անցնում է Արևելյան Պրուսիայով:

Այսպես ուրեմն, հաջորդը Բեռլինն էր: Բեռլին... Հիտլերյան ճիվաղներն այն վերածել էին ատելության ու անեծքի օբյեկտի: Պատերազմի ընթացքում սովետական մարտիկներն անեծքով էին արտասանում այդ անունը, նզովում էին նրան: Հենց այդ ատելությանուն էլ ծնեց Բեռլինում որպես հաղթող քայլելու հպարտության զգացումը: «Դեպի Բեռլին»: Այս երկու հատիկ բառի մեջ հնչում էր անսահման երջանկություն, հպարտություն: Եվ դիվիզիայի քաղբաժինը կարմիրբանակայիններին, հրամանատարներին ու քաղաշխատողներին կոչ արեց այդ երջանկությունը ճաշակել մայիսի 1-ի օրը: Նա կոչ արեց. «Հաղթանակի դրոշը բարձրացնել Բեռլինի վրա մայիսի 1-ին»:

Երեկոյանում էր. կազմակերպական, մասսայական-քաղաքական միջոցառումների ընդարձակ պլանով նախատեսված աշխատանքները դեռ շարունակվում էին: Մի տեղ անց էր կացվում գրնդի կուսակցական բյուրոյի կարճատև նիստ, մի ուրիշ տեղ՝ գումարտակի կամ դիվիզիոնի կուսակցական-կոմերիտական ժողով, իսկ մյուս տեղերում՝ սպաների հավաք, որտեղ ավագ հրամանատարները զեկույցներ էին ընդունում ստորաբաժանումների պատրաստության մասին: Կայն աշխատանք էր ծավալվում վաշտային կուսակցական կազմակերպություններում: Գնդերի հրամանատարների քաղզոմով տեղակալներ Կորոտկովը, Տատարինովը, Կրուպնիկը և Գրիգորյանը, գնդերի կուսբյուրոնների քարտուղարներ և գումարտակների ու դիվիզիոնների հրամանատարների քաղզոմով տեղակալներ Շուլզան, Միքայելյանը, Ֆոմիչևը, Մանիյան, Խրոմովը, Մովսիսյանը, Ջաշխան և ուրիշներ, թերթի խմբագիր Կրոնրոզը,

քաղբաժնի պետի տեղակալ Տոկմակովը և քաղբաժնի մյուս աշխատողները զրուցում էին վաշտերի ու գումարտակների կոմունիստների հետ, նրանց հրահանգավորում առաջիկա մարտարշավի շրջանում նրանց կատարելիք աշխատանքի առթիվ, զոույցներ անցկացնում զինվորների հետ: Հավանաբար, բոլորից շատ աշխատում էր կուսահանձնաժողովի քարտուղար մայոր Գորոխինը: Այդ օրը շատ դիմումներ ստացվեցին կուսակցության մեջ ընդունվելու համար: Կուսակցական կազմակերպությունները և կուսահանձնաժողովները ամբողջ երեկոն նվիրեցին այդ դիմումների քննարկմանը: Այդ օրը կուսակցության մեջ ընդունվածներին կուսակցական տոմսեր հանձնվեցին Բեռլինում:

2. ՅԱՏԿ ԴԵՊԻ ԲԵՌԼԻՆ

1945 թվականի ապրիլի 21-ին, ժամը 7-ին, 61-րդ դիվիզիան մտավ գոյացած ճեղքի մեջ: Մարդկանց տրամագրությունը բարձր էր, բոլորն իրենց առույգ էին զգում, կարծես մի աներևույթ ձեռք միանգամից վերացրել էր այնքան ամիսների հոգնածությունը: Բուլոբը, բուլոբը, նույնիսկ հրետանու ձիերը, մեքենաների վրա էին: Աջից մարշալ Կոնևի զորքերը համառ մարտեր էին մղում գերմանական 4-րդ տանկային բանակի զորքերի խմբավորման դեմ, որը համառ կերպով դիմադրում էր և իր դիրքերը պահեց մինչև ապրիլի 25-ը: Զախից շարունակվում էին Շպրենբերգ քաղաքում գերմանական զորքերի շրջապատման համար մղվող մարտերը: Ծեղքի վայրը ժամանեց 1-ին Ուկրաինական ռազմաճակատի հրամանատար Սովետական Միության մարշալ Ի. Ս. Կոնևը, որը ծանոթանալով իրադրությանը, հրամայեց. «Թևերի կրակոցներին չպատասխանել: Ճատկ կատարել դեպի Լյուկկատու և շրջվել հյուսիս, դեպի Բեռլին՝ ահա ձեր խնդիրը»:

Դիվիզիան հարավային կողմից, դեպի Բեռլին տանող ավտոուղուն զուգահեռ, շարժվում էր 5—6 կիլոմետր լայնություն ունեցող ճեղքի նեղ շերտով: Տեղ-տեղ ճանապարհի վրա երևում էին գեներալ-գնդապետ Ռիբալկոյի տանկերի թրթուրների հետքերը: Հրաձգությունը լսվում էր ետևից: Գոլսեն ժամանեցինք բանակի հրամանատարի նշանակած ժամից փոքր-ինչ շուտ և միացանք

3-րդ տանկային բանակի զորամասերին: Այդ պահից դիվիզիան փոխզործողութեան մեջ մտավ գեներալ-գեդապետ Ռիբարկոյի տանկային բանակի երկու կորպուսների հետ: Կարճատև հանգստից հետո շարժվեցինք հյուսիս: Առաջ էինք գնում նաև գիշերը: Հրաձգային ստորաբաժանումների մի մասը նստեց տանկերի վրա այն հաշվով, որ հակառակորդին հանդիպելու դեպքում կարողանա դիվիզիայի հիմնական ուժերը բացազատել առանց կորուստների: Օրվա վերջում մենք անարգել կերպով հակառակորդի թիկունքում խորացել էինք ավելի քան 130 կիլոմետր: Ճանապարհին հանդիպում էին պաշտպանական կառուցվածքներ, բայց դրանցում հակառակորդի զորքեր չկային: Կա՛մ հիտլերյան հրամանատարութունը չէր սպասում սովետական զորքերի հայտնվելուն հարավից, վա՛մ հույսը դրել էր Օդերի, Նեյսեի և Շպրեեի պաշտպանության «անառիկության» վրա:

Միաժամանակ պետք է ասել, որ տանկերի ու հետևակի մուտքը ճեղքի նեղ միջանցքը և հակառակորդի թիկունք կատարված համարձակ ցատկը կապված էին արտակարգ ռիսկի հետ: Ինչպես վկայում է Կուրտ ֆոն Տիպելսկիրխը, Հիտլերը Կոտբուսի շրջանում զործող 4-րդ տանկային բանակի հրամանատարին հրամայել էր «Փակել Կոննի զորքերի բացած ճեղքը»¹: Արհամարհելով թևերի վտանգը, 1-ին Ուկրաինական ռազմաճակատի հրամանատար մարշալ Կոնևը ճեղքի մեջ մտցրեց երկու տանկային բանակ (3-րդն ու 4-րդը) և 61-րդ հրաձգային դիվիզիան, իսկ նրանցից անմիջապես հետո ամբողջ 28-րդ բանակը: Կասկածից վեր էր, այդ ռիսկը նախապատրաստված էր սովետա-գերմանական ամբողջ ռազմաճակատով մեկ սովետական զորքերի ձեռք բերած նախորդ հաջողութուններով և պայմանավորված էր Բեռլինյան ստրատեգիական օպերացիայով: Սովետական երկու ռազմաճակատների զորքերի վճռական հարձակումը գերմանական հրամանատարութեանը զորկեց ուժերի վերախմբավորման և մասների հնարավորութունից: Մեր զորքերը ռազմաճակատով մեկ իրենց կամքն էին թելադրում թշնամուն:

Գոլսենից սկսած դիվիզիան, 28-րդ բանակի հրամանատարի հրամանով, շարժվեց երկու ուղղությամբ: 307-րդ հրաձգային գուն-

դը խճուղով դեպի Յոսսեն՝ 6-րդ գվարդիական կորպուսի հետ, իսկ 66-րդ հրաձգային գունդը՝ նրան զուգահեռ արևմուտքից դեպի Շպրեմբերգ-Նունսդորֆ՝ 3-րդ տանկային բանակի 7-րդ տանկային կորպուսի հետ, 221-րդ հրաձգային և 55-րդ հրետանային գնդերն ու մյուս շտաբային ու առանձին ստորաբաժանումները դիվիզիայի շտաբի հետ շարժվեցին խճուղով, 307-րդ գնդի հետևից:

Առաջին ընդհարումը հակառակորդի հետ տեղի ունեցավ ապրիլի 22-ի գիշերը: Գեռես ապրիլի 21-ի երեկոյան դիվիզիայի հետախուզութունը պարզել էր, որ Յախցեն-Բրյուկ-Շպրեմբերգ շրջանում, 10—11 կիլոմետր Յոսսենից հարավ և հարավ-արևմուտք, գերմանացիները անտառում պաշտպանութուն ունեն: Բնագիծը պաշտպանում են «ՍՍ»-ի գումարտակը, 353-րդ պահակային ծառայության գումարտակը և ջախջախված 21-րդ տանկային դիվիզիայի զորամասերը: Հենց այդ ժամանակ 307-րդ և 66-րդ գնդերի ավանգարդային զորասյունները մոտենում էին սշված շրջանին: Գնդերը նախօրոք բացազատվեցին, որոշ ստորաբաժանումներ բաժանեցին մանր խմբերի և նստեցրին տանկերի վրա: Տանկերի ու հետևակի միահամուռ գրոհը թշնամուն հարկադրեց թողնել դիրքերը և ցրվել անտառային զանգվածով մեկ:

Հետագայում դիվիզիայի և տանկային կորպուսների ճանապարհին հանդիպում էին թշնամու մանր ստորաբաժանումները, որոնք առաջին կրակոցներից հետո փախչում էին: Բայց այս, թեև աննշան, մարտերը որոշ չափով կասեցրին առաջին էջելոնի գնդերի առաջխաղացումը: Գիշերվա ընթացքում նրանք առաջ շարժվեցին ընդամենը 9 կիլոմետր:

Հակառակորդը լուրջ դիմադրութուն ցույց տվեց Յոսսենում՝ Բեռլինից 20 կիլոմետր հարավ: Հիտլերականների պաշտպանության բնագիծը անցնում էր Յոսսենի և Մելանզիի միջով (Յոսսենից փոքր-ինչ հարավ-արևելք), ընդգրկելով նաև անտառային զանգվածները: Առաջինը հակառակորդի հետ ընդհարվեց 66-րդ գունդը: Սկսվեց գիշերային մարտը: Լուսադեմին գունդը գրավեց գունդը: Միավեց գիշերային մարտը: Լուսադեմին գունդը գրավեց Մելանզին և շարունակեց առաջ գնալ դեպի հյուսիս: Այդ նույն ժամանակ 307-րդ գունդը ուժեղ դիմադրութեան հանդիպեց Յոսսենի մոտ, որը պաշտպանության ուժեղ հենակետ էր: Քաղաք մտնող միակ խճուղին հարավից գնդակոծվում էր հրետանու ու ականանետների կողմից: Խճուղու մոտ գերմանացիները թաղել էին տան-

¹ К. Типельсрих. История второй мировой войны, стр. 543.

կեր ու հրանոթներ, դրանք ցեմենտով ամրացնելով՝ վերածել էին ԴՕՏ-երի: Յոսսենում մղված մարտը կասեցնում էր դիվիզիայի առաջընթացը: Դիվիզիայի հրամանատարը 307-րդ գնդի հրամանատար փոխգնդապետ Վոլկովին հրամայեց մի հրաձգային գումարտակով և տանկերով արևմուտքից շրջանցել Յոսսենը: Գումարտակին օգնելու համար առանձնացվեց մի սակրային վաշտ, որին առաջադրանք տրվեց կազմակերպել տանկերի անցումը ջրանցքով: Անցարանը կառուցվեց, բայց գումարտակը ուշացավ: Գերմանացիները օգտվեցին դրանից: Թողնելով առաջափակ, նրանք նահանջեցին դեպի Բեռլին: Ապրիլի 22-ի լուսաբացին գունդը գրավեց քաղաքը և սկսեց եռանդազին հետապնդել փախչող գերմանացիներին: Սակայն մշուշի մեջ հիտլերականներին հաջողվեց ցրվել անտառային զանգվածում:

Այն ժամանակ մենք չգիտեինք, որ Յոսսենում տեղավորված է եղել հիտլերյան բանակի գլխավոր շտաբը: Երբ գնում էր Գերմանիայի գլխավոր պատերազմական հանցագործների նյուրեմբերգյան դատավարությունը, հայտնի դարձավ, որ Յոսսենում է մշակվել ՍՍՀՄ-ի վրա ուխտադրուժ հարձակման պլանը՝ «Բարբարոսայի» պլանը: Մենք ամսոսեցինք, որ ժամանակին չէինք իմացել այդ մասին: Գուցե գտնեինք Յոսսենը օղակի մեջ վերցնելու միջոցը: Յոսսենի գրավումը այլ էֆեկտ կունենար:

Յոսսենի գրավումը և դիվիզիայի ու տանկային զորամասերի սրընթաց շարժումը դեպի Բեռլին, անտառներում մնացած գերմանական զորքերին զրկեց Բեռլին նահանջելու հնարավորությունից:

Այն ժամանակ դիվիզիայի և Ռիբբելդոյի տանկային բանակի զորամասերի համար իրադրությունն այսպիսին էր. խիտ անտառային զանգվածներում վատ էր տեսանելիությունը: Դիվիզիայի հիմնական ուժերն ու տանկերը փաստորեն գամված էին Յոսսենի մի ծայրից մյուսն անցնող խճուղում, որը չէր նպաստում արագորեն դեպի Բեռլին շարժվելուն: Աջ կողմում էր մնացել Ֆրանկֆուրտ-գուբենյան խմբավորումը, որը դասավորված էր Բեռլինի, Օդեր-Նեյսեի, Կոտբուսի և Ֆրանկֆուրտի միջև ընկած հսկայական շրջաններում: Լեյուշենկոյի 4-րդ գվարդիական տանկային բանակը գտնվում էր հարավ-արևմուտքում և շարժվում էր հյուսիս-արևմուտք, դեպի Բեռլին-Տրյոյենբրիցեն: Դիվիզիայի թիկունքում

նույնպես սովետական զորքեր չկային: Լուչինսկու բանակի գլխավոր ուժերը, որոնք նույնպես շարժվում էին դեպի Բեռլին, դեռևս գտնվում էին հեռու հարավում: Բացի դրանից, որքան շատ էինք մոտենում Բեռլինին, այնքան կատաղի էր դառնում հակառակորդի դիմադրությունը: Այս պայմաններում միանգամայն ճիշտ կլիներ ի մի հավաքել 221-րդ ռեզերվային գունդն ու մյուս ստորաբաժանումները և հարձակվող 307-րդ գնդի ետևից շարժվել տեսանելի հեռավորությամբ: Սակայն դիվիզիայի անկանգ առաջընթացումը համեմատաբար լայն ճակատով բնականաբար բարդացնում էր զորքերի կառավարումը: Գնդերի հետ գծային կապի մասին խոսք լինել չէր կարող: Գնդերի ռադիոկայանները շատ հաճախ խանգարվում էին: Ստիպված էինք զորքերի հետ կենդանի կապ պահպանել: Կապի սպաները ընդհանրապես հաջողությամբ կատարեցին իրենց բարդ ու ղժվարին խնդիրը: Դիվիզիայի հրամանատարը հիմնականում ժամանակին էր զեկուլցներ ստանում զբնդերի վիճակի մասին և ըստ այնմ էլ տալիս էր անհրաժեշտ հրամաններ: Եվ այնուամենայնիվ, երբեմն նույնիսկ կենդանի կապ չէր լինում: Ապրիլի 22-ի առավոտից, Յոսսենի գրավումից որոշ ժամանակ անց, խափանվեց փոխգնդապետ Վեշտոմովի 66-րդ գնդի հետ կապը: Այն վերականգնելու բազում փորձերն անհաջող անցան: Դիվիզիայի հրամանատարի բանավոր հրամանով գունդ ուղարկվեց շտաբի սպա մայոր Շկրիլովի ավտոմատավորների խումբը, սակայն գունդը չգտնելով տեղում, վերադարձավ անարդյունք: Հետախույզների խմբի հետ գունդը որոնելու դուրս եկավ հետախույզության պետ մայոր Բեսսոնովը: Սակայն նա երկար ժամանակ չվերադարձավ: Դիվիզիայի հրամանատարությունը խիստ անհանգստացավ: Դիվիզիայի շտաբի պետ փոխգնդապետ Իվչենկոն մեկնեց 307-րդ գունդ, նպատակ ունենալով 66-րդ գնդի որոնումը կազմակերպել 307-րդ գնդի ձախ թևից: Այս փորձը ևս արդյունք չտվեց: Գնդի որոնումը նա չդադարեցրեց և կապ պաշտպանեց Շացկովի հետ: Փոխգնդապետ Իվչենկոն լեյտենանտ Սաչկովի գլխավորությամբ ուղարկեց չորս մարդուց բաղկացած մի նոր խումբ: Սաչկովի խումբը նույնպես չվերադարձավ: Միայն պատերազմի ավարտից հետո պարզվեց, որ գերմանացիների խմբի հետ կարճատև մարտում վիրավորված Սաչկովին գտել է մի գերմանացի ու նրան թաքցրել հիտլերականներից: Մնացած ընկերների ճա-

կատարիրն այդպես էլ անհայտ մնաց: Չորս ավտոմատավորներիով գունդը որոնելու մեկնեցի նաև ես: Վերլուծելով գնդի որոնման արդյունքները, մենք որոշեցինք վերադառնալ այն վայրը, որտեղ առավոտյան գտնվում էր գունդը. գուցե այդպես հնարավոր լիներ գտնել նրա հետքը:

Հետևում թողնելով Յոսսենից հյուսիս-արևմուտք ընկած անտառային զանգվածը, մենք ղնացինք դեպի հյուսիս և սկսեցինք ուշադիր գննել շրջակայքը: Մեր բախտը բերեց, գտանք տանկերի ու ավտոմեքենաների հետքեր, որոնք մեզ առաջնորդեցին Յոսսենից 16—17 կիլոմետր հյուսիս-արևմուտք գտնվող Լենբերուկ ավանը: Պարզվեց, որ երթի ժամանակ, հանդիպելով հակատանկային և հակահետևակային մեծ արգելքների, Վեշտոմովը և տանկային այն զորամասի հրամանատարը, որի հետ նա փոխգործողության մեջ էր, որոշում են գնալ ավելի ձախից, իսկ հետո դուրս գալ դիվիզիայի հրամանատարի հրամանում նշված երթուղին: Նրանք շարժանցել էին ականապատված դաշտերը, որովհետև դրանց միջով ճանապարհ բանալը շատ ժամանակ կխլեր, գունդը դուրս կընկներ շարժման գրաֆիկից և կուշանար: Պարզվեց նաև, որ գնդի ռադիոապարատը փշացել է, Վեշտոմովը փորձել է դիվիզիայի հրամանատար Շացկովի հետ կապվել տանկիստների ռադիոյի միջոցով, բայց չի հաջողվել: Մենք նույնպես փորձեցինք կապվել Շացկովի հետ, բայց դարձյալ անհաջող: Քիչ հետո ռադիոստը պատահականորեն կապվեց 307-րդ գնդի հետ: Մեզ հրավիրեցին ռադիոկայանի մոտ: Մեզնից տեղեկություններ ստանալով 66-րդ գնդի մասին, իվչենկոն մեկնեց դիվիզիայի հրամանատարի մոտ: Ավելի ուշ վերադարձավ մայրը Բեսսոնովը: Նա հանդիպել էր մի խումբ հիտլերականների և ստիպված մարտի բռնվել նրանց հետ:

Մենք արդեն ընդհուպ մոտեցել էինք Բեռլինին: Փոխշնդապետ Վալկովի 307-րդ գունդը հարավից կտրեց-անցավ Բեռլինը օդակող ճանապարհը, ապրիլի 22-ի կեսօրին տանկային զորամասերի հետ գրավեց Բեռլինի առաջին արվարձանը՝ Բլանկենֆելդեն և, առանց կանգառի, շարժվեց դեպի Մալով արվարձանը: Փոխգնդապետ Վեշտոմովի 66-րդ գունդը և տանկային զորամասերը, գրավելով մի շարք բնակավայրեր, նույնպես հատեցին օդակային ճանապարհը և մարտ սկսեցին Բլանկենֆելդից արևմուտք ընկած անտառում, որը պաշտպանվում էր հիտլերականների բավական

ուժեղ խմբավորման կողմից: Գնդի և տանկերի վճռական հարձակումը ապահովեց հաջողությունը: Զորամասերը սլացան Բեռլինի վրա:

Արդեն գիշեր էր: Գնդերը և տանկային զորամասերը շարունակում էին մարտեր մղել: 66-րդ գունդը տիրեց արվարձանային բնակավայրեր Գրոս-Բերենին ու Ռուսդորֆին և դուրս եկավ Բեռլինի Տելտով քաղաքային շրջանին մոտ, իսկ 307-րդ գունդը գրավեց Մալովը:

Այսպիսով, 61-րդ դիվիզիան, գերմանական ռազմաճակատի խոր թիկունքում երկու օրում անցնելով ավելի քան 160 կիլոմետր ճանապարհ, 3-րդ տանկային բանակի զորամասերի հետ հակառակորդին դուրս մղեց Բեռլինի մատույցներում գրաված դիրքերից և 1945 թվականի ապրիլի 22-ի օրվա վերջին ներխուժեց Բեռլինի ծայրամասը:



Այդ նույն ժամանակ 1-ին Բելոռուսական ռազմաճակատի զորքերը արևելքից հզոր հարվածներ էին հասցնում և սրբնթաց շարժվում դեպի Բեռլին: Ապրիլի 22-ին ռազմաճակատի զորքերը գրավեցին Կալբերգե, Կլեյնշենբեկ, Յիխտենաու, Վիլհելմսհագեն քաղաքները և դուրս եկան Բեռլինից արևելք գտնվող Գամե դետի մերձակա մատույցները: Հյուսիսում մեր զորքերը գրավեցին Գլիննիկե, Լյուբարս, Ռոզենտալ, Մալսով քաղաքներն ու խոշոր բնակավայրերը, Բեռլինի արվարձան Իեյսենզեն և այլն¹: Բեռլինից հարավ-արևմուտք Լեյուշենկոյի 4-րդ զվարդիական տանկային բանակը, գրավելով Լուկենվալդե քաղաքը, թշնամուն հետապնդեց Պոտսդամի ուղղությամբ²: ՍՍՀՄ զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Ստալինի 1945 թվականի ապրիլի 23-ի № 339 և 40 հրամաններում նշվում էր, որ Օդերի և Նեյսեի մոտ հակառակորդի ճակատը ճեղքելու պահից 1-ին Բելոռուսական ռազ-

¹ Տե՛ս Սովինֆորմբյուրոյի ամփոփագիրը, «Պրավդա» № 97, 23 ապրիլի 1945:

² Տե՛ս И. С. Конев. Сорок пятый, стр. 142.

մաճակատի զորքերն առաջ շարժվեցին 60-ից մինչև 100 կիլոմետր
և գրավեցին Բեռլինի արվարձաններ Պանկովը (հյուսիսում),
Ֆրիդրիխսֆելդեն, Կարլսհարտը, Կեշնիկը և ներխուժեցին Գերմա-
նիայի մայրաքաղաք Բեռլին: 1-ին Ուկրաինական ռազմաճակատի
զորքերը առաջ շարժվեցին 80-ից մինչև 160 կիլոմետր և ներխու-
ժեցին Գերմանիայի մայրաքաղաք Բեռլին¹: № 340 հրամանում
հիշատակված քաղաքների մեջ նշված էին Յոսսենը և Բեռլինի Մա-
րիենֆելդե և Տելտով շրջանները, որոնք գրավել էին 61-րդ դիվի-
զիան և Ռիբալկոյի տանկային բանակը:

Յ. ԲԵՌԼԻՆՈՒՄ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԵՐԸ

Հիտլերյան պարագլուխները գիտեին, որ սովետական զորքե-
րի հուժկու հարվածների տակ իրենց բանակն ու ժողովուրդը բա-
րոյալքվել են: Ուստի հրաման էին արձակել առանց նախազու-
շացման հրետանային կրակ բացել զորամասերի ու ստորաբաժա-
նումների վրա, եթե նրանք թողնեին իրենց պաշտպանական բնա-
գծերը: Գեստապոն և հիտլերյան զորքերի հրամանատարութունը
դաժան պայքար ծավալեցին «շարամիտ լուրերի դեմ»: Յուրաքան-
չյուր քայլափոխի, փողոցների նկատելի ու սակավ նկատելի տե-
ղերում, թողարկված լայն սպառման ապրանքների վրա մարդ-
կային կերպարանքի սև ուրվագծեր էին՝ «քսե» (լոխ՝ր) մակագրու-
թյամբ: Գեքելսյան պրոպագանդան փորձում էր բանակն ու բնակ-
չությանը ահաբեկել՝ սովետական զորքերին վերագրելով այն, ինչ
բնորոշ էր միմիայն հիտլերյան բանակին: Հիտլերյան հրամանա-
տարության հրամանները խախտողներին մահապատժի էին են-
թարկում կախաղանի միջոցով: Ալբրեխտշտրասսե և Սեզանշտ-
րասսե փողոցների անկյունում, Տեմպելհոֆում (Բեռլինի կենտրո-
նական շրջաններից մեկը), մենք տեսանք սյունից կախված ջարդ-
ված գլխով տարեց ֆուկսշտուրմականի: Նրա վզից կախված էր
«Նա չէր ուզում մեր ընտանիքները պաշտպանել բուլղակներից»
հսկայական մակագրությունը: Գեստապոն այսպես էր վարվում
բոլոր նրանց հետ, ովքեր չէին ուզում աննպատակ դիմադրություն

ցույց տալ: Հիտլերյան հրամանատարությունը հայտարարում էր,
որ Հիտլերը հրամայել է արևմտյան ռազմաճակատից մի բանի դի-
վիզիա փոխադրել՝ Բեռլինի պաշտպանությունը ուժեղացնելու հա-
մար, խոստանում էր գործադրել այն «գաղտնի գննքը», որը
«կցնցի ողջ աշխարհը», Բեռլինի մոտ «լրիվ կոշնչացնի» սովետա-
կան բանակը:

Ապրիլի 23-ի լուսաբացին 307-րդ գունդը գրավեց Բեռլինի
Վիստենրադե շրջանի հարավային ծայրամասը, իսկ 66-րդ գուն-
դը՝ տանկերի փոխգործողությամբ՝ Բեռլինի Տելտով շրջանի հա-
րավային մասը: Մարտեր բորբոքվեցին յուրաքանչյուր թաղամա-
սի, յուրաքանչյուր փողոցի, յուրաքանչյուր տան համար: Հիտլե-
րականները զենքի բոլոր տեսակներից կրակում էին տների ձեղ-
նահարկերից, պատուհաններից ու նկուղներից: Նրանք մասսայա-
բար «ֆաուսափամփուշտներ» էին գործադրում: Ամենից ավելի
խոցելի տեղամասերն ու ամրացված տները, փողոցների անկյուննե-
րը պաշտպանում էին բեռլինյան ժանդարմերիայի, ՍՍ-ականների
ջոկատները և կանոնավոր ստորաբաժանումները: Լիխտենրադեում
թշնամին ուներ տանկեր, ինքնագնաց հրանոթներ և մոտոցիկլիստ-
ների խմբեր, որոնք շարունակ հայտնվում էին գնդի բաց թևերում:

Ապրիլի 23-ի առավոտից 307-րդ գնդի համար իրադրությու-
նը էապես փոխվեց: Գնդին տրված տանկային զորամասը նոր
մարտական առաջադրանք ստացավ և ուղևորվեց Տելտով շրջանը:
Գունդը Լիխտենրադեի գրավման մարտերը շարունակեց առանց
տանկերի: Ժամը 17-ին նա գրավեց Լիխտենրադեի մի մասը և
առաջ շարժվելով՝ հասավ նրա հյուսիսային ծայրամասը: Լիխտեն-
րադեում դիվիզիան ծանր կորուստ կրեց՝ մարտի առաջավոր գծում
զոհվեց գնդի երիտասարդ և տաղանդավոր հրամանատար Վասիլի
Վալկովը: Նա մեր աչքի առաջ լեյտենանտից աճել և դարձել էր
փոխգնդապետ, գնդի շտաբի պետի օգնականից՝ նրա հրամանա-
տար, արժանացել էր Սովետական Միության հերոսի բարձր կոչ-
ման: Քսաներեք տարեկան հասակում Վալկովը ավագ լեյտենանտի
կոչումով ընդունեց 307-րդ գնդի հրամանատարությունը և երկու-
սուկես տարի շարունակ գունդը ծանր մարտերով հաջողությամբ
Վուբանից, Ուկրաինայից, Բելոռուսիայից և Լեհաստանից հասցրեց
Արևելյան Պրուսիա և Բեռլին: Վալկովը աչքի էր ընկնում մեթոդիկ
մարտի վարպետությամբ: Վալկովը պարզևտարվել էր նաև Կար-

¹ Տե՛ս «Իզվեստիա» № 96, 24 ապրիլի 1945:

միր դրոշի երկու շքանշանով, Կուսուզուվի 3-րդ աստիճանի և Ալեքսանդր Նևսկու շքանշաններով, «Կովկասի պաշտպանության համար» և «Քյոնիգսբերգի գրավման համար» մեդալներով: Նա մեզնից հեռացավ իր կարճատև, բայց մեծ ու հիանալի կյանքի 26-րդ տարում: Մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները վերջին անգամ հրաժեշտ տալով մարտական ընկերոջն ու օրինակելի հրամանատարին, երգվեցին անխնա վրեժ լուծել ատելի թշնամուց: Գնդի հրամանատարությունն ստանձնեց մայրը Իովենկոն:

Չնայած տանկերի հեռանալուն, գունդը շարունակեց հաջողությամբ կատարել մարտական խնդիրը: Սակայն պայմանները գնալով բարդացան, դեպի հյուսիս խորանալուն համեմատ թևերն ափելի ու ափելի վտանգավոր դարձան: Բաց մնացած աջ թևի ետևվում, Բուկկովում և Գրոս-Յիտենում հակառակորդը բավական ուժեղ զորախումբ ուներ. երբ գունդը հասնել Լիխտենրադեի հյուսիսային ծայրամաս, հակառակորդի այդ ուժերը կարող էին նրան հակադրոհել թևից ու թիկունքից: Գնդի ձախ թևը նույնպես բաց էր: Մարիենֆելդում և Լիխտենրադեի հյուսիս-արևմտյան ծայրամասում գործում էին հակառակորդի զորքերի առանձին խմբեր և ֆուկսշտուրմի ջոկատներ: Նրանք մտ սպառնում էին թևից: Նլենլով իրադրությունից, գնդի աջ թևն ապահովելու նպատակով մայրը Իովենկոն կապիտան Պուշչինի գումարտակը բացազատեց ճակատով դեպի արևելք և մյուս ստորաբաժանումները նախապարտատեց Լիխտենրադեի հյուսիս-արևմտյան ծայրամասի և Մարիենֆելդի վրա հարձակվելու համար: Հարկավոր էր դրանք մաքրել հակառակորդից և դրանով իսկ կապ ստեղծել Տելտովում գործող 66-րդ գնդի հետ:

Հենց այդ օրն ամրանալով Տելտովի հարավային ծայրամասում, 66-րդ գունդը առավոտից պատրաստվեց գրավել այն: Բայց թշնամին Տելտովը պաշտպանում էր խոշոր ուժերով: Փոխգնդապետ Վեշտոմովը կատարեց ուժերի վերախմբավորում և տանկերի ու հրետանու օգնությամբ ճեղքեց-անցավ Տելտովի խորքը: Սկզբվեցին փողոցային ծանր մարտեր, որոնք տներում վերածվեցին ձեռնամարտի:

Հակառակորդին Տելտովում արագ վերջ տալու համար դիվիզիայի հրամանատարը առավոտից մարտի մեջ մտցրեց փոխ-

գնդապետ Ստեպանկոյի 221-րդ ռեզերվային գունդը: Երկու գրնդերը՝ 66-րդը հարավից և 221-րդը հյուսիս-արևելքից, տանկերի և հրետանու օժանդակությամբ գրոհեցին Տելտովի վրա: Նրանք կոտրեցին հակառակորդի դիմադրությունը, գրավեցին Տելտովը և ապրիլի 23-ի ժամը 10-ին դուրս եկան Տելտով ջրանցքի մոտ: Փոխգնդապետ Ստեպանկոն ընթացքից ջրանցքի հյուսիսային ափ ուղարկեց հետախույզների մի խումբ և փոքրիկ պլացդարմ գրավեց: Բայց օգնական ուժ ուղարկել չհաջողվեց: Ուժեղ մարտ սկզբվեց ջրանցքի մոտ:

Ապրիլի 23-ի կեսօրին Բեռլինի հարավային մասում էական փոփոխություն կատարվեց: Ավտոտրանսպորտով Տելտով եկավ 28-րդ բանակի 55-րդ գվարդիական դիվիզիան: Բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Լուչինսկին հրամայեց Տելտովի մեր դիրքերը հանձնել գվարդիական դիվիզիային: 66-րդ և 221-րդ գրնդերը ավտոտրանսպորտով անհապաղ փոխադրվեցին Լիխտենրադեի հյուսիսային ծայրամասի շրջանը: Նկատի ունենալով, որ գեներալ Ռիբարկոյի բանակի տանկային զորամասերի հիմնական ուժերը կենտրոնացել էին Տելտովի շրջանում, բանակի հրամանատար Լուչինսկին դիվիզիայի հրամանատար Շացկովի ենթակայությամբ հանձնեց այդ ժամանակ եկած 133-րդ և 421-րդ գվարդիական ականանետային գնդերը: Լուչինսկու բանակի մյուս միավորումները շարժվեցին դեպի Բեռլին:

Դիվիզիայի երկու գնդերի տեղափոխումը Տելտովից արևելք 307-րդ գնդի մարտական գործողությունների շրջան, պայմանավորված էր դիվիզիայի նոր մարտական առաջադրանքով: Ինչպես արդեն ասվել է, 1-ին Բելոռուսական ռազմաճակատի զորքերն արևելքից և հյուսիսից ընդհուպ մոտեցել էին Բեռլինին և գրավել նրա մի շարք արվարձանները: Գեներալ Վ. Ի. Չուլկովի բանակը դուրս եկավ Դամա գետի մոտ և հաջողությամբ առաջ շարժվեց դեպի Բեռլինի հարավ-արևելյան ծայրամասերը: Հիալերյան զորքերի Յրանկֆուրտ-գուբենյան խմբավորման շրջապատման ավարտումը Բեռլինից հարավ-արևելք և նրա մեկուսացումը բեռլինյան խմբավորումից՝ անհետաձգելի խնդիր էր: Բանակի հրամանատար Լուչինսկին դիվիզիայի առջև խնդիր դրեց՝ Չուլկովի բանակի հետ միանալու նպատակով հարձակվել դեպի արևելք և դեպի հյուսիս,

հակառակորդից մաքրել Բեռլինի հարավային մասի ընդարձակ շրջանները՝ Լիխտենբադեն, Բուկովը, Մարինֆելդեն ու Մարինդորֆը և Լինկվից-բրից բնագծում դուրս գալ Տելտով ջրանցքի մոտ:

Բեռլինի այս շրջանների գերմանական պաշտպանությունը մեր զորքերի առջև փակում էր հարավից դեպի քաղաքի կենտրոնական թաղամասերը տանող ուղիները: Փողոցները փակել էին բարիկադները, հակատանկային բազում արգելափակոցները: Հարավից, Լիխտենբադեի կողմից, քաղաք տանող ուղիները լավ զբնդակոծվում էին ինչպես տներից, այնպես էլ պաշտպանության խորքից:

Ապրիլի 23-ին, օրվա վերջին, լուրջ նախապատրաստությունից հետո դիվիզիան անցավ հարձակման: 55-րդ հրետանային գնդի մայր Սամարինի ղեկավարած դիվիզիոնով և 133-րդ գվարդիական ականանետային գնդով ուժեղացված 307-րդ գունդը հարձակվեց Մարինդորֆի վրա՝ դեպի հյուսիս ընդհանուր ուղղությամբ: 221-րդ գունդը, որ ուժեղացված էր փոխգնդապետ Գրիգուլի 55-րդ հրետանային երկու դիվիզիոնով և 421-րդ գվարդիական ականանետային գնդով, հարձակվեց արևելյան ուղղությամբ, Բուկովի վրա: 66-րդ գունդը թողնված էր դիվիզիայի հրամանատարի ղեկավարում: Հարձակվող գնդերը ունեցան որոշ հաջողություններ՝ 307-րդ գունդը գրավեց Մարինդորֆի հարավային ծայրամասը, իսկ 221-րդ գունդը՝ Բուկովի արևմտյան մասը: Հետագա առաջխաղացումը շատ դանդաղեց: Մարինդորֆը և Բուկովը գիշերային գրոհներով գրավելու փորձերն ապարդյուն անցան: Ապրիլի 24-ի առավոտյան գնդերն ուժեղացրին թշնամու ճնշումը: Բայց արդյունքն աննշան եղավ: Մարտերը շարունակվեցին: Գնեբրալ Վ. Ի. Չուլկովի բանակը ապրիլի 24-ին անցավ Դամե գետը, արևելքից շարժվեց դեպի արևմուտք և գրավեց Բեռլինի արվարձանները Ալտ-Գլինիկեն և Ռուդովը, որոնք գտնվում էին քաղաքի հարավ-արևելյան ծայրամասում, Բուկովից երկու կիլոմետր հարավ-արևելք: Փոխգնդապետ Ստեպանկոն օգտվեց դրանից: Հրետանային կարճ համադարկերից հետո նա 221-րդ գունդը բոլոր ուժերով տարավ վճռական հարձակման: Գրոհը հաջողվեց: Գունդը գրավեց Բուկովը: Այսպես միացան 1-ին Բելոռուսական ռազմաճակատի Չուլկովի բանակի 88-րդ և 1-ին Ուկրաինական ռազմաճակատի Լուչինսկու բանակի 61-րդ դիվիզիաները: Ավարտվեց

հակառակորդի Ֆրանկֆուրտ-գուբենյան խմբավորման՝ հիտլերյան զենեքալ Բրուսեի 9-րդ և 4-րդ տանկային բանակների շրջապատումը: Այդ խմբավորումը մեկուսացվեց Բեռլինից:

Բուկովը գրավելուց հետո դիվիզիայի հրամանատարը 221-րդ գունդը նրան տրված հրետանու և գվարդիական գնդի հետ շրջեց դեպի հյուսիս-արևմուտք՝ դեպի Մարինդորֆ, երկաթուղազծի երկարությամբ: Այդ ժամանակ 307-րդ գունդը դժվարին մարտերով գրավեց Մարինդորֆի հարավային մասը, հատելով Բերնհորն և Տիֆլիս փողոցները, ընդհուպ մոտեցավ Մարինդորֆի ձիարշավարանին: Սակայն, ընկնելով հակառակորդի փոթորկալից կրակի տակ, գունդն ստիպված եղավ ամրանալ գրաված բնագծում: 221-րդ գունդը գրավեց ձիարշավարանից հյուսիս-արևելք գտնվող ստադիոնը, բայց աջ թևից, Բրիցի կողմից, թշնամու հասցրած հարվածից կաշկանդվեց: Դիվիզիան փաստորեն դադարեցրեց առաջխաղացումը: Ակնհայտ դարձավ, որ մարտական առաջադրանքի կատարումը ձգձգվում է:

Ապրիլի 24-ի ցերեկը Լիխտենբադեի հյուսիսային ծայրամասում հրամանատարական կետ ժամանեցին բանակի հրամանատար զենեքալ-լեյտենանտ Լուչինսկին և ռազմական խորհրդի անդամ զենեքալ-մայոր Մելնիկովը: Նրանք անհանգստացած էին: Մարինդորֆի հարավային մասում դիվիզիան ուշացել էր: Բանակի ռազմական խորհուրդը գիտեր մեր դժվարությունները մասին. հակառակորդը խփում էր դիվիզիայի թևերին, Մարինդորֆը պաշտպանում էր խոշոր ուժերով: 28-րդ բանակն այդ ժամանակ Բեռլինի մոտ ղեկավարներ շուներ, ուստի շեր կարող դիվիզիային օգնել: Բայց մարտական խնդիրը պետք էր կատարել:

Տելտով ջրանցքի մոտ դուրս գալու համար դիվիզիայի հրամանատարը որոշեց 66-րդ ղեկավարային գնդի ուժերով հակառակորդին հարվածել Մարինդորֆի և Լինկվիցի միջև գտնվող երկաթուղու երկարությամբ, հարձակման գլխավոր ուղղության վրա ստեղծել որոշ գերակշռություն, փոքր-ինչ նեղացնել 307-րդ և 221-րդ գնդերի հարձակման ճակատը, որի մասին նա զեկուցեց բանակի հրամանատարին: Գնեբրալ Շացկովը ավելացրեց, որ նա վտանգի է ենթարկում 66-րդ գունդը, բայց հավատացած է, որ դիվիզիան հաջողության կհասնի:

Բանակի հրամանատարը հավանություն տվեց դիվիզիայի

հրամանատարի որոշմանը: Բայց, ըստ երևույթին հաջողության մեր վստահությունը ստուգելու համար, նա և ուղղակի խորհրդի անդամը հետաքրքրվեցին դիվիզիայի անձնակազմի տրամադրությունները: Շարքայինների ու սպաների տված պատասխաններից նրանք անձամբ համոզվեցին, որ մարդիկ լի են մարտական խրնդիրը կատարելու վճռականությամբ և որ ժամանակավոր հապաղումը չի կարող կոտրել նրանց հաղթանակի կամքը, մեկնեցին:

Չնայած հակառակորդի գերակշռությանը, մարտական տեսիլակալի առկայությունը, Մարիենգորֆում և դիվիզիայի հարձակման մյուս շրջաններում գերմանական զորքերը և Բեռլինի բնակչությունը բարոյալքված էին, նրանք կորցրել էին հավատը հիտլերյան հրամանատարության նկատմամբ: Պաշտպանության կատաղի դիմադրությունը չէր կարելի գնահատել այլ կերպ, քան դատապարտվածի կատաղություն: Նման դիմադրությունը հարատև լինել չէր կարող: Մենք նկատել էինք, որ Բեռլինի շրջանում պաշտպանվող հակառակորդի ուժերի փոխգործողությունը խախտված է, մեր կողմից հակառակորդի պաշտպանությունը գրոհելուց հետո թշնամին, չնայած կատաղությանը, շփոթվում էր: Մեր ստորաբաժանումները լայնորեն կիրառում էին հակառակորդի հենակետերի դեմ փոքրիկ գրոհային խմբերով պայքարելու փորձը: Մենք բազմիցս համոզվել էինք, որ երբ մեր գրոհային խումբը դրավում է հիտլերականների պաշտպանած շենքերը կամ թեկուզ մի հարկը կամ նույնիսկ մի սենյակը, ֆուկստուրմականները փախչում են: Նրանք չէին դիմանում ձեռնամարտին ու նոնակակուլին: Մեր զինվորների և հրամանատարների կազմակերպվածությունը, նրանց համերաշխ ու սրբնթաց գործողությունները, ատելի թշնամուն Բեռլինում ոչնչացնելու նրանց վճռականությունը բազմիցս գրոհներով էին նաև փողոցային մարտերում: Օրինակ, Լիխտենրադեում, որտեղ, ինչպես նշվեց, հակառակորդը շարժական ուժեր էր գործադրում, մեր մարտիկները հմտորեն ոչնչացնում էին նրանց:

Բերենք միայն երկու փոքրիկ օրինակ:

Մեր մարտիկները Լիխտենրադեում գրոհով գրավեցին մի մեծ շենք: Հրանոթի հրամանատար սերժանտ Մանոյլովը նկատեց, թե ինչպես մի տանկ ու մի ինքնագնաց հրանոթ գաղտագողի մոտե-

նում են շենքին: Մանոյլովը արագ գտավ ելքը, տանկից ավելի քան 200 մետր հեռավորության վրա հրանոթը դրեց ուղիղ նշանառության և առաջին իսկ արկով այրեց այն, հետո մի ակնթարթում կրակը տեղափոխեց ինքնագնացի վրա, մի քանի համազարկով խիեց նաև այն, թույլ շտալով նրան նույնիսկ մի գնդակ արձակելու:

Լեյտենանտ Ի. Պետրովը պատմեց. «Երբ մենք դուրս էինք գալիս Լիխտենրադեի հյուսիսային ծայրամասը, գերմանացիները փորձեցին մեզ հարվածել թեկերից: Թշնամու ավտոմեքենաները, որոնց վրա զինվորներ էին նստած, և երկու մոտոցիկլիստ զենդացորդներ փոթորկալից կրակ վարելով շրջանցում էին փողոցներից մեկը:

Գերմանացիները հենց նոր էին հայտնվել տեսանելիության գոտում, երբ ավագ լեյտենանտ Շպակը առաջ բերեց Սեդիխի հաստոցավոր գնդացիները, իսկ ինքն անցավ երկրորդ գնդացրի մոտ: Գերմանացի մոտոցիկլիստները մոտեցան: Նրանց հետևից հայտնվեցին ավտոմեքենաները: Կարմիրբանակային Իվանովը ավտոմատից կրակեց մոտոցիկլիստների վրա, նրանցից մեկն իսկույն տապալվեց: Նույն բանն արեց և Շպակը: Երկրորդ մոտոցիկլիստը և գերմանացի-դեսանտավորներից շատերն սպանվեցին, մյուսները թռչելով մեքենաներից, փախան-ցրվեցին»:

Գումարտականներից մեկը թողնելով դիվիզիայի հրամանատարի ռեզերվում, 66-րդ զուգըր գրավեց ելման դրություն և ժամը 15-ին հյուսիս-արևմտյան ուղղությամբ երկաթուղագծին զուգահեռ անցավ հարձակման: Աջից զուգըր փոխգործողության մեջ մտավ 307-րդ գնդի ձախ թևի հետ, իսկ ձախ թևից սպառնում էր հակառակորդը: Գունդն ուժեղացված էր 55-րդ հրետանային գնդի մի դիվիզիոնով, որը հանվել էր 221-րդ գնդի հատվածից: Հենց առաջին հարվածից 66-րդ զուգըր հաջողություն ունեցավ: Հակառակորդին ետ շարժելով Մարիենգորֆի ձիարշավարանից արևմուտք, զուգըր հաջողությամբ առաջ շարժվեց: Հակառակորդի մեջ իրարանցում սկսվեց ձիարշավարանի հյուսիսային մասում: Դրանից անհապաղ օգտվեց 307-րդ զուգըր և իսկույն գրավեց ձիարշավարանը, շարունակելով առաջ շարժվել դեպի հյուսիս: Օրվա երկրորդ կեսին դիվիզիան գրավեց Մարիենգորֆի կենտրոնը: Մինչև Տելտով ջրանցքը մնում էր 1200—1500 մետր: 221-րդ զուգըր, գրավելով ստադիոնը, իր ձախ թևով օժանդակեց 307-րդ գնդի առաջ-

խաղաղամանը Մարիենդորֆի խորքը, իսկ դիվիզիայի ձախ թևում առաջխաղացումը դանդաղեց:

Գուրս գալով Լանկվիզերշտրասսե, 66-րդ գունդը հանդիպեց հիտլերականների ուժեղ ամրացված դիրքերի: Հակառակորդին դուրս մղելով մի շարք մանր ձեռնարկություններից ու տներին, գունդը գազի խոշոր գործարանի մոտ կանգնեց: Այդ գործարանն իր խոշոր արտադրամասերով բավական ընդարձակ տարածություն էր գրավում: Բարձր քարե պարիսպը, մերձատար ուղիների հողաթմբերը, կից շինությունները վերածվել էին ուժեղացված հենակետերի: 66-րդ գնդի հրամանատար փոխգնդապետ Վեշտոմովը, կշռադատելով իրադրությունը, հրաժարվեց գործարանը ճակատային գրոհով գրավելու մտքից, իսկ այն շրջանցելը համարեց վտանգավոր, այս դեպքում հետլերականները կարող էին գնդին հարվածել թիկունքից: Հետախուզելով և համոզվելով, որ արտաքին պարիսպը ամբողջական չէ, նա վճռեց գործարանի տերիտորիա թափանցել մանր գրոհային խմբերով: Հետախուզները ինքնագնացների գրոհային խմբերին տարան կողքի փողոցներով և ցույց տվեցին գործարան տանող ուղիները: Այնուհետև հետախուզների խումբը ավտոմատային կրակ բացեց գործարանի գլխավոր կորպուսի անկյունից, ստեղծելով գործարանը շրջանցելու տպավորություն: Ինչպես վկայում էր լեյտենանտ Կոթենիկովը, կարմիրբանակայիններ Պոլչենկոն և Նոյդան սերժանտ Վալիևի գլխավորությամբ ներխուժեցին գործարանի գլխավոր կորպուսի առաջին հարկը և նոնակներ նետեցին հիտլերականների վրա: Մյուս գրոհային խումբը գրոհեց նույն կորպուսի երկրորդ հարկը: Ոչընչացնելով 20-ից ավելի հիտլերականի, այս երկու խմբերը գրավեցին գործարանի ամբողջ կորպուսը և հիտլերականների գնդացիները շուտ տվեցին հակառակորդի դեմ: Գազի գործարանի գերմանական պաշտպանությունը սասանվեց: Գնդի վաշտերից մեկը գրոհով ներխուժեց ու գրավեց գործարանը:

Մարիենդորֆի հյուսիսային թաղամասերում գնալով ավելի կատաղի դարձավ հիտլերականների դիմադրությունը: Այդ թաղամասերի ետևում, Տելտով ջրանցքից այն կողմ, համատարած կրակակետեր էին: Ով սիրտ աներ թողնել իր դիրքը, ջրանցքի մոտ կընկներ յուրայինների կրակի տակ: Բացի այդ, Մարիենդորֆի

հարավային թաղամասերից, ինչպես նաև Լիխտենրադեից և Մարենինֆելդից նահանջելով, հիտլերականները այդ թաղամասերում կենտրոնացրել էին մեծ քանակությամբ կենդանի ուժ և տեխնիկա: Դժվար էր գտնել որևէ մեծ թե փոքր տուն, նկուղ, պատուհան կամ ձեղնահարկ, որոնք կրակակետի վերածված չլինեին: Ամեն քայլափոխի հենակետեր էին, բարիկադներ և այլ խոշընդոտներ: Զրանցքից այն կողմ ստեղծված էր հրետանու և ականանետների խիտ ցանց: Դիվիզիայի հարձակման հատվածը գնդակոծվում էր նաև Բեռլինի պաշտպանություններից:

Յուրաքանչյուր տուն և յուրաքանչյուր հենակետ նվաճվում էր ծանր ձեռնամարտով: Մարտիկները գործում էին համարձակ, վստահ: Իրենց լավ դրսևորեցին հրետանավորներն ու գլխարդիական ականաձիգները: 55-րդ հրետանային գնդի կարմիրբանակային, կուսակցության անդամ Զայցլը կիս մոտեցավ կրակակետին և անսխալ նշագրեց այն: Գիշերը նա մնաց իր դիտակետում և կանոնավորեց իր մարտկոցի կրակը: Գիշերը մարտկոցը ոչնչացրեց հակառակորդի 4 հաստոցավոր գնդացի անձնակազմերի հետ և այլ կրակակետեր: Հրետանու գործողություններն այդ մարտերում բնորոշ էին ուղիղ նշանառու կրակով:

Քայլ առ քայլ ոչնչացնելով հակառակորդի կրակակետերը, տուն առ տուն գրավելով, տասնյակ հակադրոհներ էտ մղելով, դիվիզիան գնաց դեպի Տելտով ջրանցքը: Առաջինը Մարիենդորֆ երկաթուղային կամուրջի մոտ ջրանցքին հասավ 66-րդ գունդը: Դա ապրիլի 25-ի գիշերվա ժամը 3-ին էր: Գունդը շարունակեց իր ճակատն ընդլայնել ջրանցքի հարավային ափով, բայց ջրանցքը ընթացքից անցնելու փորձերը հաջողություն չունեցան:

Հարձակվելով Բեռլիներշտրասսեի երկարություն և գրավելով Մարիենդորֆի մի քանի թաղամասեր, 307-րդ գունդը ժամը 5-ին նույնպես դուրս եկավ ջրանցքի մոտ: Բայց 221-րդ գունդն ուշացավ, նրան խանգարեցին թևից՝ Բրիցի կողմից, որտեղ հիտլերականները դեռ կայուն էին: Բայց լուսադեմին նա ևս դուրս եկավ ջրանցքի մոտ և ամրացավ նրա հարավային ափին: Դիվիզիան իր մարտական առաջադրանքը կատարեց:

Այսպիսով, ապրիլի 22-ից մինչև 25-ը 61-րդ դիվիզիան գրավեց Բեռլինի Տելտով, Լիխտենրադե, Մարիենինֆելդ, Բուկով ու Մարիենդորֆ շրջանները և Լինկվից ու Բրից շրջանների միջև ընկած

հատվածում երկրորդ անգամ դուրս եկավ Տելտով ջրանցքի մոտ: Այդ շրջանները մաքրելով հիտլերյան զորքերից, դիվիզիան ֆաշիստական գերուձյունից ազատեց ճամբարներում տառապող 2300 սովետական ու ֆրանսիական ռազմագերիների և սովետական բազմաթիվ պատանիների ու աղջիկների: Մենք այսուհետև էլ չենք խոսելու դիվիզիայի վերցրած ռազմաավարի կամ գերիների մասին, քանի որ դրանք հաշվելու ժամանակ չկար:

Ապրիլի 25-ի լուսադեմին 61-րդ դիվիզիայի առջևումն էր լայն ու խոր, բետոնե ուղղահայաց ամբարձակ Տելտով ջրանցքը, որի հյուսիսային ամին, բոլոր բնակելի թաղամասերում ու մյուս շինություններում, հիտլերականներն ստեղծել էին ցամաքային զորքերով ու ռազմական տեխնիկայի բոլոր տեսակներով հագեցված ուժեղ պաշտպանական դոտի: Ջրանցքից հարավ, դիվիզիայի ձախ թևն ապահով էր, որովհետև այդ ժամանակ Ռիբբարիտցի գլխարկական տանկային բանակի զորամասերը գրավել էին Բեռլինի կինկվից շրջանը: Դիվիզիայի աջ թևում, Բրիցում, գերմանական զորամասեր էին, որոնք հաճախ փորձում էին հակազդուհի ենթարկել 221-րդ գունդը: Չուլկովի բանակի զորամասերը, որոնք գրավել էին Ռուդովը, ստիպված եղան փոքր-ինչ մնալ այնտեղ: Սակայն, հարձակվելով հյուսիս-արևելյան ուղղությամբ, նրանք սպառնացին Բրիցին և դրանով իսկ հեշտացրին մեր դիվիզիայի գրությունը աջ թևում:



Հայրենական մեծ պատերազմի մասին ռազմա-պատմական գրականությունից հայտնի է, որ Բեռլինը պաշտպանում էր հիտլերյան ավելի քան 200-հազարանոց զորքը: Հիտլերյան հրամանատարությունը քաղաքի պաշտպանության համար մոբիլիզացրել էր նաև ողջ բնակչությունը, ոստիկանություն, ժանդարմերիայի, «ՄՄ»-ի ջոկատները: Պաշտպանությունն ուժեղանում էր նաև Բեռլին նահանջող միավորների հաշվին: Տելտով ջրանցքի մոտ դուրս գալու ժամանակ մեր վերցրած գերիների կազմը ցույց էր տալիս Բեռլինի կայազորի զորքերի խայտաբղետությունը: Գերիներ կային 555-րդ հետևակային գնդից, 457-րդ պահեստային գրե-

նադերական բրիգադից, սպայական գրոհային վաշտից, կապի 76-րդ վարժական վաշտից, 599-րդ պահակային գումարտակից, 513-րդ զենիթային դիվիզիոնից, 4-րդ պահեստային ջոկատից, Պոտսդամի հրաժշտական ջոկատից, «Ֆուլկստուրմի» 301, 308 և 509-րդ գումարտակներից ու մի քանի այլ պահեստային զորամասերից ու ջոկատներից: Շատ ռազմագերիներ համազգեստի տակից քաղաքացիական հագուստ էին կրում, որպեսզի հարկ եղած դեպքում դեն նետեն համազգեստը և ներկայանային որպես քաղաքացիներ: Սրանում ևս հստակորեն դրսևորվում էր Բեռլինի պաշտպանների դատապարտված լինելը:

Մարիենֆորդի հյուսիսային ծայրամասում ևս զրույց ունեցա մի գերմանացու հետ, որը, իր խոսքերով ասած, հիտլերական չէր: Ապրիլի 25-ի առավոտյան պարետ ավագ լեյտենանտ Զայցելի ուղեկցությամբ մտա մի տուն՝ հանգստանալու: Զայցելն ասաց, որ մենատանը ոչ ոք չի ապրում: Բայց դեռ չէի պակել բազմոցին, երբ սենյակի դռների մոտ հայտնվեց բարձրահասակ, հիսնամյա մի գերմանացի: Նա բավական հստակ ուսերենով ողջունեց ինձ և ներկայացրավ որպես մենատան տեր: Իր մասին գերմանացին պատմեց, թե եղել է Բեռլինի բանկի դիրեկտորներից մեկը: Հիտլերի իշխանության գլուխ անցնելուց հետո առաջարկել են մտնել նացիոնալ-սոցիալիստական կուսակցության մեջ, բայց հրաժարվել է, այդ պատճառով էլ իջեցվել է հաշվապահի պաշտոնի: Սկսել է ուսաց լեզուն ուսումնասիրել 1921 թվականից, բանկում կազմակերպված դասընթացներում: Ունի կին, արու զավակ, որոնք գտնվում են մենատան թաքստոցում: Իմ այն հարցին, թե ինչո՞ւ նա և իր ընտանիքը չեն գնացել ուրապաստարան, գերմանացին պատասխանեց, որ վախեցել է մոբիլիզացնեն «Ֆուլկստուրմի» ջոկատները, իսկ տան նկուղը հուսալի ապաստարան է, որը դժվարությամբ կարելի է հայտնաբերել:

Ահա թե ինչն էր հետաքրքիր իմ զրույակցի պատմածներից.

— Բեռլինում սով է, մատակարարումը դադարեցված է, շատերը սնվում են կիսով չափ փշացած կարտոֆիլով: Հաց վաղուց չկա, այն միայն պատահականորեն կարելի է գտնել, այն էլ բարձր գնով: Գյուղացիները գյուղատնտեսական մթերքները քաղաք չեն բերում վաճառքի, մսի առևտուրը դադարեցված է: Պատերազ-

ժը ձանձրացրել է ժողովրդին: Մինչև վերջերս մեծ անհանգստություն էին պատճառում դաշնակիցների ուժակոծությունները: Բանկի շինովնիկները հաճախ աշխատանքի դուրս չեն գալիս, դրժ-գոհ են երկրի դրությունից ու իրենց կյանքից: «Նյարդերն հանգրստացնելու համար» իշխանություններն սկսել են աշխատանքի վայրում նրանց օղի բաժանել: Բեռլինի այն բնակիչները, որոնք չեն մոբիլիզացվել, ապրում են մետրոյում, թունելներում, նույնիսկ բունկերներում: Բանվորներն ու շինովնիկները աշխատանքից հետո տուն չեն վերադառնում, գնում են այնտեղ, ուր իրենց ընտանիքներն են պատսպարվել:

— Բեռլինում սարսափ է տիրում,— շարունակեց գերմանացին:— Ոմանք վախենում են սովետական զինվորներից ու սպաներից, գերադասում են մեռնել սովից ու թունելներում բռնկված համաճարակներից, իսկ ոմանք էլ սարսափում են իշխանությունների սպառնալիքներից: Բայց բնակչությունը հոգնել է պատերազմից: «Ինչ լինելու է, կլինի»,— ասում են շատերը,— քաղցած մահից ու ուժակոծության սարսափից ավելի վատը չի լինի»: Ժողովուրդը զիտե նացիոնալ-սոցիալիստական կուսակցության պարագլուխների ու գեներալների գծությունների մասին, ամեն ոք մտահոգված է իր ճակատագրով և սեփական գլուխը փրկելով: Բնակչությունը հիասթափված է, կորցրել է հավատը հիտլերյան ղեկավարության նկատմամբ:

Իշխանությունների հրամանները խախտողներին դատում են ռազմադաշտային դատարանները և կախաղան բարձրացնում փողոցներում: Մարիենդորֆում կախել էին մի քանիսին, բայց նախքան սովետական զորքերի հայտնվելը բոլոր դիակները հավաքեցին:

Գերմանացուն նախաձաշի հրավիրեցի... Պետք էր միայն նրան տեսնել, թե նա ինչպես նայեց ուտելիքին: Սկզբում հրաժարվեց կնոջն ու որդուն հրավիրել, ասելով թե «կվախենան»: Այնուամենայնիվ, գնաց նրանց ետևից: Վերադարձավ կնոջ հետ: Կինը վախվորած անվերջ ինձ էր նայում:

— Երևի բա՞ն է ուզում հարցնել տիկինը,— դիմեցի ես ամուսնուն: Նրանք սկսեցին իրար հետ խոսել գերմաներեն և ամուսինն ասաց.

— Նա ուզում է մի բլիթ խնդրել որդու համար:

— Ես ժպտալով ասացի.— Սեղանին եղած ուտելիքը թող լրիվ վերցնի,— և խոհարարին պատվիրեցի հաց տալ նրանց: Կինը ապշեց, չգիտեր ինչ ասի: Շփոթված գնաց նկուղ, իսկ տանտերը մտասուզվեց: Վերջապես հարցրեց.

— Ասացեք խնդրեմ, ինչո՞վ կարող եմ օգտակար լինել ձեզ:

— Իսկ դուք ինչո՞վ կարող եք օգնել, պատերազմ է,— հարցին հարցով պատասխանեցի ես:

Մի փոքր մտածելուց հետո գերմանացին շարունակեց.

— Գուցե, դուք վառելանյութի կարիք ունեք: Ձեր տանկերը, մեքենաները...

— Դա արդեն այլ բան է: Դուք գիտե՞ք պահեստների տեղը:

— Այստեղից ոչ հեռու մի գետնափեր պահեստ կա: Ես բավականությամբ ցույց կտամ այն:

Կանչելով Զայցելին, հանձնարարեցի վերցնել ավտոմատավորների մի խումբ, լրիվ զննել պահեստը և այնտեղ պահակներ կարգել, իսկ տան տիրոջն ուղեկցել տուն:

Դիվիզիան այդ պահեստից վերցրեց անհրաժեշտ քանակությամբ բենզին և մնացածը հանձնեց բանակի տնօրինությանը:

Շուտով եկավ բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Մեյնիկովը: Ես վերադարձա դիվիզիա:

4. ՄԱՐՏԵՐ ԲԵՌԼԻՆԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

1945 թվականի ապրիլի 25-ի առավոտյան դիվիզիայի հրամանատար գեներալ մայոր Շացկովը ստորագրեց մարտական մի նոր հրաման, որտեղ մատնանշվում էր, որ հակառակորդը Տելտով ջրանցքի մոտ կրակային համառ դիմադրություն է ցույց տալիս, ձգտում է կանխել մեր զորամասերի առաջխաղացումը: Մեր խնդիրն է՝ կռվանցել Տելտով ջրանցքը և դուրս գալ Անհալտի և Պոտսդամի կայարանների մոտ: Հրամանում նշված էին գնդերի ու թեղացման միջոցները, Տելտովի կռվանցման տեղամասերը և հարվածի ուղղությունը: 221-րդ գունդը պետք է ջրանցքն անցներ Տեպիլհոֆ արվարձանի արևելյան ծայրամասում, առաջադրանք ունենալով ապահովել դիվիզիայի աջ թևը. 307-րդ գունդը պետք է ջրանցքն անցներ 63,0 նշագծից հարավ արևելք ընկած շրջանում,

երկաթուղագծի արևելյան կողմից հայտնվելու և գրավելու երկաթուղային հանգույցը, իսկ հետո նաև Անհալտի կայարանը. 66-րդ գունդը (առանց մի գումարտակի) ջրանցքը պետք է անցնելու երկաթուղային կամուրջի շրջանում՝ 63,0 նշագծից հարավ-արևմուտք, հարձակվելու երկաթգծի արևմտյան կողմից, գրավելու Կոլոնենը շտաբասեի վրա գտնվող կայարանը, իսկ հետո՝ նաև Պոտսդամի կայարանը:

Դիվիզիայի աջ թևում, ջրանցքի երկու ափերին, հակառակորդի դիրքերն էին: Դիվիզիայից ձախ, Տելտովի և Շտրանսդորֆի շրջաններում, ապրիլի 23—24-ը կենտրոնացան 298-րդ բանակի 3-րդ ու 20-րդ գվարդիական և 128-րդ հրաձգային կորպուսների միավորումները: Նրանց խնդիրն էր՝ Ռիբալկոյի տանկային բանակի հետ կովանցել Տելտով ջրանցքը և հարձակվել դեպի հյուսիս, Ցելենդորֆ—Շտեգլից և Լիխտերֆելդե-Շյոնեբերգ ուղղությամբ: Քանի որ կորպուսների կողմից ջրանցքի կովանցման շրջանները գտնվում էին Հարավ—արևմտյան կողմում, նրանք կարող էին մեր դիվիզիայի ձախ թևը դուրս գալ միայն Լիխտերֆելդեն գրավելուց և Բեռլինի Շտեգլից ու Շյոնեբերգի շրջանները դուրս գալուց հետո: Նրանց և մեր դիվիզիայի միջև մնաց Շտեգլիցի և Շյոնեբերգի խիտ բնակեցված արևելյան մասը: Այսպիսով, Տելտով ջրանցքը կովանցելուց հետո 61-րդ դիվիզիան մարտական առաջադրանքը պետք է կատարեր բաց թևերով:

Կայն, խոր և ուղղահայաց ափեր ունեցող Տելտով ջրանցքը համարյա կիսաբոլորաձև գոտեկորում էր դիվիզիայի հարձակման ճակատը: Հակառակորդը գնդակոծում էր երկու կողմերից, ինչպես ասացինք, նրա աջ թևի հետևում, ջրանցքի հարավային ափին, Բրիցում դեռ հակառակորդի դիրքերն էին: Ջրանցքի հյուսիսային ափին գտնվող բոլոր 2, 3, 4 հարկանի տները և խոշոր շինությունները հիտլերականները վերածել էին դիմադրության հանգույցների ու հենակետերի: Հենակետերում կային գնդացիներ, թնդանոթներ և ավտոմատներով ու «ֆաուստ-փամփուշտներով» զինված զինվորների խմբեր: Ափի երկարությամբ և փողոցներով սփռված էին բազմաթիվ խրամատներ: Ջրանցքի հյուսիսային ափից հակառակորդը լավ վերահսկում ու գնդակոծում էր մեզ: Հիտլերականների պաշտպանական բնագիծը ծանր հրետանու կրակային օժանդակություն էր ստանում պաշտպանության խորքից: Ջրանցքի

կամուրջները պայթեցված էին, անվնաս էր մնացել միայն երկաթուղային կամուրջը: Տանկերը նրա վրայով անցնել չէին կարողանում: Կար նաև մի կիսաբանդ փայտե կամուրջ: Դրանք 66-րդ գնդի հատվածում էին: Մենք չէինք կասկածում, որ երկուսն էլ պատրաստված են պայթեցման:

Դիվիզիան եռանդուն կերպով պատրաստվում էր կովանցելու ջրանցքը: Հրետանին դասավորվել էր մի գծի վրա և դրվել ուղիղ նշանառության: Կատարվում էին անընդհատ դիտարկումներ: Հետախուզվեցին նշագրում էին հակառակորդի կրակակետերը: Լուրջ աշխատանք էր կատարում նաև ինժեներական հետախուզությունը: Դիվիզիայի ինժեներ մայոր Ակոպովը և սակրային գումարտակի հրամանատար մայոր Խոլոզովը որոշեցին Ռինգշտրասսեում ջրանցքի կիսաբանդ կամուրջն օգտագործել գետանցման համար:

Երբ դիվիզիայի հրամանատարը գնդերին խնդիր էր տալիս, բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Մելնիկովը, կռահելով, թե որտեղ կարելի է ավելի արագորեն հաջողության հասնել, ասաց.

— Վեչտոմով, հուսախաբ շանք:

Համարյա ամբողջ օրը կրակային մարտ մղվեց: Գումարտակների ու վաշտերի հրամանատարները, յուրաքանչյուրն իր հատվածում նշագրում էր հակառակորդի կրակակետերը, դիմադրության հանգույցները, սկսեց աշխատել հետախուզությունը: Հակառակորդի կրակային սիստեմը հայտնաբերվեց: 307-րդ գունդը ջրանցքի կովանցման անհաջող փորձ կատարեց:

Հաշվի առնելով հակառակորդի կրակային սիստեմի տվյալները և 307-րդ գնդի կովանցման անհաջող փորձը, Շացկովը եկավ այն համոզման, որ միաժամանակ երեք գնդով ջրանցքը կովանցել չի հաջողվի: Նա վճռեց՝ ջրանցքը կովանցելու է միայն 66-րդ գունդը: Այդ կապակցությամբ էական փոփոխություններ մտցրեց մարտական հրամաններում:

66-րդ գնդի հրամանատար փոխգնդապետ Վեչտոմովի մոտ միանգամից չհղացավ Տելտով ջրանցքի կովանցման պլանը: Մարտական առաջադրանք ստանալուց դեռ շատ առաջ նրա միտքն զբաղված էր դրանով: Երբ, վերջապես, այդ պլանը ավարտուն ձև ստացավ, Վեչտոմովը հավաքեց գումարտակների հրամանատարներին: Շարադրելով գնդի խնդիրները, նա ուշիուշով գննում էր

մերթ մեկ, մերթ մյուս գումարտակի հրամանատարին: Գնդի հրամանատարը ընտրեց երկրորդ գումարտակի հրամանատար մայոր Տկաչովին:

— Ոչ մի փոխադրամիջոց չկա և չի լինելու, — ասաց նա գումարտակի հրամանատար Տկաչովին:

— Գնեալրն անցել եմ տակառով, Բուզը՝ երկու անգամ սեփական ձեռքերով: Տեղտովը կանցնեմ գերմանական կամուրջով, — պատասխանեց Տկաչովը:

Գնդի հրամանատարի ընտրությունը պատահական չէր: Տկաչովը փորձված, հնարամիտ, վճռական, անհողորդ հրամանատար էր, կյանքը անիմաստ վտանգի չենթարկող: Շատ անգամ վիրավորվելով, Տկաչովը չէր լքել իր գումարտակը: Մարտիկները մարտերում հաճախ են տեսել վիրավոր հրամանատարին: Մի անգամ Տկաչովը չկատարեց իմ հրամանը և չհեռացավ մարտի դաշտից: Իսկ եթե պատահում էր, որ ստիպված էր լինում զնալ բուժսանգումարտակ, ապա իր փոխարեն ժամանակավորապես թողնում էր մեկին ու բուժվելուց հետո վերադառնում գումարտակ:

Հրավիրվեց գումարտակի կուսբյուրոյի կարճատև նիստ, որտեղ առանձնացվեցին կոմունիստներ՝ գրոհային խմբերի համար և սահմանվեցին նրանց խնդիրները: Զրանցքի կովանցումն սկսեց 25 հետախույզներից բաղկացած գրոհային խումբը, որի մեջ էին զնդային մի քանի հետախույզներ: Խումբը գլխավորեց Սովետական Միության հերոս սերժանտ Պ. Ն. Բոգդանովը: Նա խմբի մեջ մտցրեց երկու սակրավոր, և նրանց հետ անձամբ ուսումնասիրեց վնասված փայտե կամուրջն ու նրա շրջակայքը: Մուժն ընկնելուն պես դիվիզիայի հրետանին կրակեց հակառակորդի պաշտպանության ամբողջ առաջավոր գծի վրա: Բոգդանովի խումբը պատրաստվեց ցատկով անցնել փայտե կամուրջը: Առաջինը զեպի կամուրջը նետվեցին սակրավորները, կտրեցին լարերը, կանխեցին պայթյունը: Այդ ժամանակ Բոգդանովի խումբը վազբով հասավ կամրջին: Հիտլերականներն իսկույն իրենց կրակը կենտրոնացրին կամրջի վրա: Տախտակամածը բոցավառվեց: «Իմ ետևի՛ց» բղավելով, Բոգդանովը այրվող կամրջով արագ անցավ ջրանցքի մյուս ափը: Նրա ետևից վազբով զնացին մյուսները: Խումբը մեծ պլացդարմ գրավեց կամուրջից այն կողմ և ամրացավ: Դասակ առ դասակ, իրար ետևից այրվող կամուրջով վազբով անցան լեյտենանտ

Թուլբանյուկի, ավագ լեյտենանտ Պոտենյուկի, կրտսեր լեյտենանտ Ստաւենկոյի վաշտերը: Մարտիկների մի մասը մնաց հրդեհը հանգցնելու: Մեկ ուրիշ խումբ հասավ երկաթուղային կամրջին: Հենց այդ ժամանակ կամուրջը պայթյունից փլվեց: Հակառակորդի կրակի տակ դիվիզիայի սակրավորներն սկսեցին վերանորոգել փայտե կամուրջը:

Թե՛ մարտերով մայոր Տկաչովի գումարտակը պլացդարմ գրավեց և զգալիորեն առաջ շարժվեց զեպի հյուսիս: Ապրիլի 26-ի ժամը 2-ին 66-րդ գունդը լրիվ, առանց հրետանու, անցավ ջրանցքի հյուսիսային ափը և գրանով իսկ ապահովեց ամբողջ դիվիզիայի անցումը: Գունդը գրավեց սալայական ԴՕՏ-ը՝ քարտեզների և Տեպելհոֆի շրջանի պաշտպանության սխեմաների հետ:

Ապրիլի 26-ի առավոտյան դիվիզիայի հրաձգային գնդերը գտնվում էին Տելտով ջրանցքի հյուսիսային ափին: Նոր իրադրության մեջ փոխվեցին գնդերի գործողությունների ուղղությունները:

1945 թվականի ապրիլի 25-ը նշանավորվեց Բեռլինի շրջապատումով: «1-ին Բելոռուսական ռազմաճակատի զորքերը կտրեցին Բեռլինից արևմուտք տանող բոլոր ուղիները, և այսօր՝ ապրիլի 25-ին, Պոտսդամից հյուսիս-արևմուտք միացան 1-ին Ուկրաինական ռազմաճակատի զորքերի հետ, ավարտելով Բեռլինի լիակատար շրջապատումը», — ասված էր Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Ստալինի 1945 թ. ապրիլի 25-ի № 342 հրամանում: Բեռլինի շրջապատումն ավարտելու գերազանց գործողությունների համար Գերագույն գլխավոր հրամանատարը շնորհակալություն հայտնեց նաև 28-րդ բանակի զորքերին: Զորքերի շրջանում մեծ վերելք ստեղծվեց: «Բեռլինը օղակի մեջ է», — ուրախ միմյանց էին հայտնում մարտիկները:

Գիշերը 66-րդ գունդը դիրքերից բջեց հակառակորդի երկու հրաձգային գումարտակ և, հատելով Ատիլաշտրասսեն, գրավեց Մարիենդորֆ երկաթուղային կայարանը և Տեպելհոֆի հարավարևմտյան թաղամասը: Առավոտից գերմանացիները մի քանի անգամ, բայց անհաջող հակազորոհներ ձեռնարկեցին զնդի դեմ, իսկ ժամը 11-ին նոր ուժեր ավելացնելով, ինքնազնաց հրանոթների, հետևակի ստորաբաժանումների, ինչպես նաև հրետանու անխափան կրակով ուժեղացրեց ճնշումը: Ետ մղելով թշնամու հակազորոհները, 66-րդ գունդը ստիպված եղավ մնալ գրաված

բնագծում, որովհետև ետ էր մնացել հրետանին, շարքից դուրս էր եկել սակրավորների վերականգնած կամուրջը, և սակրավորներն ստիպված էին երկրորդ անգամ վերականգնել այն:

Ջրանցքն անցնելուց հետո 307-րդ և 221-րդ գնդերը առաջադրանք ստացան շարժվել նոր ուղղություներով: 307-րդ գունդը հարձակվում էր դեպի արևելք, ջրանցքին զուգահեռ, իսկ 221-րդը՝ դեպի հյուսիս: Հարվածելով թշնամու թևին, 307-րդ գունդը գրավեց Տեմպելհոֆի հարավային թաղամասերը և, հասնելով Բեռլիներշտրասսե, ձակատով շրջվեց դեպի հյուսիս: Նա գրոհեց Տեմպելհոֆի ու Տրիդրիխշտրասսեի միջև, բայց հակառակորդի ուժեղ հակազորահների պատճառով չկարողացավ առաջ շարժվել: 221-րդ գունդը մարտերով կտրեց-անցավ Ատիլաշտրասսեն և դուրս եկավ 63,0 նշագծի մոտ: Այսպիսով, մինչև ապրիլի 26-ի ժամը 11-ը Տելտով ջրանցքից հյուսիս խիտ բնակեցված Տեմպելհոֆ շրջանում ստեղծվեց 2 կիլոմետր ձակատով և 400—500 մետր խորությամբ պլացդարմ: Գերմանացիները անընդհատ հակազորահում էին, իսկ մեր գնդերը ետ էին մղում դրանք:

Ժամը 14-ին, հենց որ կամուրջը վերականգնվեց, սկսվեց հրետանու և տանկերի անցումը ջրանցքով: Գնդերի գրոհային խմբերը մեկը մյուսի ետևից ներխուժեցին տներն ու թաղամասերը: Դիվիզիան հաջողությամբ շարժվեց հյուսիս՝ ձախից դեպի Շենեբերգ, Անհալտի, Պոտսդամ կայարաններ տանող երկաթուղագծերի ուղղությամբ, աշից Բեռլիներշտրասսեն էջ: Ապրիլի 27-ի առավոտյան դիվիզիան գրավեց Մարիենֆորդ, Պրեստերվեգ, Շյոնեբերգ և Տեմպելհոֆ երկաթուղային կայարանները, որոնք Բեռլինի Տեմպելհոֆ շրջանը գոտևորում էին արևմուտքից, հյուսիսից և հյուսիս-արևելքից, ինչպես նաև 63,0 բլուրը և Շյոնեբերգի գերեզմանոցը: Տեմպելհոֆի շրջան դուրս եկան 1-ին Բելոռուսական ռազմաճակատի զորամասերը, որոնք գործում էին Բրիցից-Տեմպելհոֆ օդանավակայանի ուղղությամբ: Նկատի ունենալով այդ, դիվիզիայի հրամանատարը 307-րդ գունդը դուրս բեռեց երկրորդ էջելուն: Այդ պահից 61-րդ դիվիզիան իր աջ թևով՝ 221-րդ գնդով, փոխգործողության մեջ մտավ 1-ին Բելոռուսական ռազմաճակատի զորքերի առանձին զորամասերի հետ:

Դիվիզիայի գրաված Բեռլինի շրջաններում մենք հատուկենտ բնակիչներ էինք տեսնում: Այդ հատուկենտ մարդկանցով անգամ

զբաղվելու ժամանակ շունիկներ: Հաջորդ օրերին մենք տեսանք այն մղձավանջը, որի մեջ գտնվում էր Բեռլինի բնակչությունը: Մետրոն, որ ողողվել էր ջրով, թունելները և խոշոր տների նկուղները լեփլեցուն էին մարդկանցով: Ամենուրեք գարշահոտություն էր տիրում: Սովահար մարդիկ տանջվում էին կեղտի ու գարշահոտության մեջ, բայց թաքստոցներից դուրս չէին գալիս: Դրանք համահարակների օջախներ էին: Բայց այդ ամենը իրենք՝ գերմանացիներն էին ընտրել իրենց համար, կամովին ու կուրորեն: Վախենալով սովետական մարտիկներից, այդ գերմանացիներից ոմանք, այնուամենայնիվ, մերթ ընդ մերթ դուրս էին գալիս թաքստոցներից և, ձեռքերը երկարելով, մի կտոր հաց էին խնդրում կարմիրբանակայիններից: Թե ինչ էին կարմիրբանակայիններին ասում նրանք, մարտիկները չգիտեին, բացի «Հիտլեր կապուտ», «Ալես կապուտ» բառերից...

Մեր մարտիկներն իրենց պարկերից հանում էին հացը և բաժանում քաղցած գերմանացիներին: Նույնիսկ նրանք, ովքեր երեկ, ընկերներից չթաքցնելով իրենց ատելությունն ու ցասումը գերմանացիների հանդեպ, ովքեր բարձրաձայն հայտարարում էին, թե վրեժ կլուծեն «առանց խտրության», այժմ, տեսնելով քաղցած գերմանացուն, մտախոհ իրենց պարկից հանում էին հաց, երշիկ, պահածո և տալիս գերմանացուն, մեր երկրին ու մեր ժողովրդին այնքան դառնություն ու ավերածություն պատճառած գերմանացի զինվորի ընտանիքին: Առաջ անցնելով նշենք, որ Բեռլինի գրավումից հետո, երբ սովետական կառավարությունը որոշեց բնակիչներին սովից փրկելու համար Բեռլին ուղարկել պարենամթերքով էջելուններ, ոչ մի զինվոր, որն այնքան սաստիկ ատելություն էր տածում թշնամու նկատմամբ, զրանում անհանդուրժելի ոչինչ չէր տեսնում: Ահա սովետական մարդու բարոյական կերպարը, ահա նրա ազնիվ, մարդկային էությունը:

Գնալով Բեռլինի շրջապատման օդակը նեղանում էր, հակառակորդը սեղմվում էր քաղաքի կենտրոնին: Այնտեղ զլխավորապես պաշտպանվում էին ընտիր «ՍՍ»-ական զորքերը: Մարտերը ավելի էին շիկանում: Երկաթգծի արևելյան կողմով հարձակվելով դեպի հյուսիս, 221-րդ գունդը բավական արագ շարժվում էր առաջ: Դեպի Պոտսդամի ու Անհալտի կայարանները տանող երկաթգծի խիտ ցանցով համեմատաբար դանդաղ էր շարժվում ձախթև-

յան 66-րդ գունդը: Տեղանքը բաց էր, հրետանին մեծ վնասներ էր պատճառում: Հակառակորդը կրակում էր ճակատից ու բաց թևից: Կոլոնենշտրասսեից հարավ եղած հենակետերը կաշկանդում էին գնդին: Միայն մեր հրետանու հաճախակի ինտենսիվ կրակից ու հետևակի անընդմեջ գրոհներից հետո գունդը որոշ շափով առաջ շարժվեց: Նա ավելի ուժեղ դիմադրություն հանդիպեց մարզահրապարակի ու Մոնոմենտենշտրասսեի գերեզմանատան մոտ: Այդ հատվածները գրավելու համար վիթխարի ջանքեր պահանջվեցին: Օրվա վերջին 221-րդ գունդը, հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը, դուրս եկավ Անհալտի կայարանից հարավ՝ երկաթուղային կամուրջի շրջանում գտնվող Լանդվեր շրանցքի մոտ և գրոհեց այն, բայց հաջողություն չունեցավ:

Մոսկվայի ռադիոն մեզ ուրախություն պատճառեց. «1-ին Ուկրաինական ռադամականատի զորքերը և դաշնակից անգլո-ամերիկյան զորքերը,— ասվում էր Գերագույն գլխավոր հրամանատարի 1945 թվականի ապրիլի 27-ի № 346 հրամանում,— արևելքից ու արևմուտքից կատարած հարվածով ճեղքեցին գերմանական զորքերի ճակատը և ապրիլի 25-ին, ժամը 13,30-ին միացան Գերմանիայի կենտրոնում, Տորգաու քաղաքի շրջանում: Գրանով իսկ Հյուսիսային Գերմանիայում գտնվող գերմանական զորքերը կտրվեցին Գերմանիայի հարավային շրջանների գերմանական զորքերից»¹:

Չեմ կարող չհիշել ինձ համար չափազանց հետաքրքիր մի անակնկալի մասին: Բեռլինի շրջան Տեմպելհոֆի արևմտյան մասում, նախաճաշի ժամանակ, ներս մտավ հանձնակատար Վանո Շավիլոշվիլին և, թեթևակի ժպտալով, սեղանին դրեց... Շուտովի գործարանի մի շիշ կոնյակ: Պիտակի վրա նշված էր «1921 թ.»: Շացկովը, Իվչենկոն և ես զարմացած նայեցինք իրար:

- Որտեղի՞ց,— հարցրի հանձնակատարին:
- Չեր մեքենայից,— պատասխանեց նա:
- Ինչպե՞ս: Որտեղի՞ց այն հայտնվեց մեքենայում:
- Զգիտե՛մ, Իվանին հարցրեք,— ասաց Վանոն:

Ավելի ուշ վարորդ Իվան Տոպոլը պատմեց. մի քանի ընկերների հետ, հետաքրքրությունից մղված, մտել է մեր հրամանա-

¹ Տե՛ս «Պրավդա» № 101, ապրիլի 28, 1945:

տարական կետից ոչ հեռու գտնվող մի նկուղ և հայտնվել զինու պահեստում: Ինչ-որ մեկը բացել է արկղը, հանել մի շիշ, նայել պիտակին ու դեն նետել: Շիշը կտրվել է: Տոպոլը հոտից հասկացել է՝ «կոնյակ է»: Նայելով պիտակին, պարզել է, որ Շուտովի գործարանի կոնյակ է, որի մասին նա լսել էր դեռ Հայաստանում եղած ժամանակ: Նա ուշադիր զննել և գտել է միայն երկու միանման աշկղ, դուրս է բերել նկուղից և տեղավորել մեքենայի մեջ: Ո՞վ գիտե, թե երբ և ինչ ձևով է Շուտովի կոնյակը 1921 թվականի պիտակով ընկել Բեռլին: Դա այդպես էլ առեղծված մնաց:

Գերագույն գլխավոր հրամանատարի № 346 հրամանը հնչեց որպես պատերազմի հաղթական վախճանի ազդանշան: Ապրիլի 28-ի առավոտյան դիվիզիայի զորամասերում տարածվեցին քաղքածնի թուռցիկները.

«Քաջարի մարտիկներ».

Մենք թշնամուն ոչնչացնում ենք Բեռլինի կենտրոնում: Արդեն քիչ է մնացել, թշնամին կջնջվի, կկործանվի Բեռլինում: Ուժը մեր ձեռքին է: Հոսցրեք մեկ վերջին հզոր հարված ևս:

Դիմումը վերջանում էր «Փա՛ռք սովետական ռազմիկներին, որոնք հաղթանակի դրոշ քարձրացրին Բեռլինի վրա» արտահայտությամբ:

Գիշերվա ընթացքում 221-րդ գունդը պատրաստվեց կռվանցել Լանդվեր շրանցքը: Հրետանին առաջ բերվեց հետևակի մարտակարգերը և դրվեց ուղիղ նշանառություն: Գրոհային խմբերն ուժեղացվեցին: Միաժամանակ կատարվեց ինժեներական հետախուզություն: Կուտակվեցին գետանցման օժանդակ միջոցներ: Հակառակորդի հրետանին հյուսիսից կրակով փակում էր գնդի գրաված կամուրջի մատուցները: Գիվիզիայի հրամանատար Շացկովը, լինելով գնդում, անձամբ ղեկավարեց օպերացիան: Ապրիլի 28-ի ժամը 5-ին գործի անցավ մեր հրետանին: Ջրանցքի հյուսիսային ափը ծխով ծածկվեց: Ջրանցքն անցնելու ամբողջ հաշվառքը կառուցված էր գրավված կամրջի վրա: Թվում էր, թե ուրիշ ելք չկա:

Պատրաստվելով ջրային արգելքն անցնել, վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Սավինը դիմեց մի հանդուգն քայլի, որի մեջ գրսևորվեց նրա հնարամտությունն ու անվահերությունը: Թաքուն հասնելով ջրանցքի ափին, Սավինը ճոպանուղու տապալված

պողպատյա ձողի մոտ նկատեց անվնաս մնացած ճոպանը: Եվ որոշեց օգտվել այդ «անցամիջոցից»: Նա զրուցեց մարտիկների հետ, կարգավորեց ճոպանուղին և պատրաստվեց անցնել ջրանցքը. կազմեց կտրիճների կամավոր մի խումբ և իր պլանի մասին զեկուցեց գումարտակի հրամանատարին, իսկ ինքը մտորեց. «Կրիմանա՞ն արդյոք կտրիճների ձեռքերը»: Երբ որոշումն ընդունվեց, Սավինը վաշտին հրամայեց խումբը պաշտպանել կրակով, գումարտակի հրամանատարին խնդրեց տեղամասը հրետանու միջոցով ծածկել ծխով և խմբի հետ գնաց «անցատեղը»: Սավինը առաջինը կախվեց ճոպանից՝ ասելով. «Գնացի՛ք»: Հրամանատարի ետևից «գնացին» ավագ Ցիգանկովը, սերժանտներ Շիլդակևն ու Ելանովը, կարմիրբանակայիններ Պիլիպենկոն, Կոզլովը, Գրապը և ուրիշներ: Ինչ-որ մեկն ընկավ ջրանցքը, բայց հյուսիսային ավհասած ընկերները թռկի ծայրը նետեցին ջուրը և շուրջ քաշեցին նրան: Միաժամակույթի մեջ հակառակորդը չնկատեց խմբին և շփոթեց «անցատեղը»: Սավինի խումբը հանկարծակի ներխուժեց Մեկկենշտրասսեի վրա գտնվող մեծ տունը և ընթացքից նոսակներ նետելով, ոչնչացրեց 10-ից ավելի հիտլերական, գրավեց մի հաստոցավոր գնդացի և մի քանի հարյուր «Ֆաուստ-փամփուռ», որոնք օգտագործվեցին հիտլերականների դեմ: Խումբը հարվածեց թշնամու թևերին և պաշտպանեց գնդի անցումը ջրանցքով:

Չորս ժամ տեղեց կամրջի մոտ տեղի ունեցող մարտը, գունդը կարողացավ պլացդարմ գրավել Լանդվեր ջրանցքի հյուսիսային ափին և Անհալտի կայարանի մատույցներում գրավել մի թաղամաս: Սակայն պլացդարմ գրավելը դեռ չէր նշանակում, թե ապահովված է ջրանցքն անցնելու անվտանգությունը: Հարկավոր էր այն կողմ անցկացնել հրետանին, ինքնազնացներ, տանկեր: Իսկ կամուրջը վնասված էր: Գնդի հրամանատար փոխգնդապետ Ստեպլչենկոն վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Մինասյանին հրամայեց վերականգնել կամուրջը:

— Կա՛, վերականգնել կամուրջը, — հրամանը կրկնեց Մինասյանը, բայց ինքն իրեն ասաց: «Երբեք կամուրջ չեմ կառուցել»:

Մարտիկներն սկսեցին գերաններ ու ռելսեր տեղափոխել: Թշնամու կրակի տակ աշխատանքը ետում էր: Վաշտը դեռ չէր հասցրել ավարտել աշխատանքը, երբ պայթեց թերմիտային ար-

կը, և հրդեհ բռնկեց: Այրվեց Մինասյանի շինհրապարակը: Մարտիկներն սկսեցին հանգցնել հրդեհը՝ ոմանք ավազով, ոմանք էլ սեփական շինելով: Երեք անգամ այրվեց կամուրջը և երեք անգամ էլ մարտիկները հանգցրին հրդեհն ու վերականգնեցին այն: Հատկապես ջանասիրությամբ աշխատեց կարմիրբանակային Գայդուկը: Նրա ամբողջ համազգեստը այրվեց, մարմինը ծածկվեց քերծվածքներով ու բեկորային թեթև վերքերով, բայց նա աշխատեց և աշխատեցրեց իր ընկերներին: Վերջին անգամ, երբ հրդեհ բռնկվեց, Գայդուկը նետվեց այն հանգցնելու: Նա չհասցրեց տեղից բարձրանալ, թշնամու գնդակը խոցեց անվահեր մարտիկին: Նա զոհվեց կամրջի վրա, բայց հրետանին ու տանկերն անցան: Հերոս մարտիկի գերեզմանաթմբին մի փոքրիկ սյուն դրվեց, որի վրա գրվեց.

«Կարմիրբանակային Գայդուկ, կուտնտեսական՝ Նիկոլաեի մարդից, վերականգնեց այս կամուրջը և հերոսաբար զոհվեց դրա վրա»:

Ապրիլի 28-ի կեսերին 221-րդ գունդը 120—150 մետր հեռավորությունից պատրաստվում էր գրոհել Անհալտի կայարանը: Այդ ժամանակ 66-րդ գունդը հսկայական ջանքերի դնով հաղթահարեց հիտլերականների համառ դիմադրությունը, գրավեց Բեռլինի Շյունբերգ շրջանի հյուսիսային կայարանը և արագ շարժվեց դեպի հյուսիս, Պոտսդամից հարավ դուրս եկավ Լանդվեր ջրանցքի երկաթուղային կամրջի մոտ և պատրաստվեց կովանցել ջրանցքը: 221-րդ գունդը մարտեր էր մղում Անհալտ կայարանի համար: Մինչև Ռայխստագ մտնում էր 1200—1250 մետր, իսկ Տիրգարտեն պարկը ավելի մոտ էր: Մարտիկների մտքերն ու հայացքները այդ րոպեներին գամված էին Ռայխստագին: 66-րդ գունդը պատրաստվում էր հարձակվել Պոտսդամի կայարանի վրա:

Սակայն դիվիզիային վիճակված չէր գնալ Ռայխստագի վրա: Ժամը 16-ին ստացվեց 28-րդ բանակի հրամանատարի նոր հրամանը, որի համաձայն 66-րդ գունդն սկսեց Լանդվեր ջրանցքի հարավային ափի երկարությամբ հարձակվել դեպի արևմուտք, առաջադրանք ստանալով գրավել Տիրգարտենի հարավ-արևմտյան մասը՝ կենդանաբանական այգու շրջանը: Գործելով կուտցով-շտրասսե և Բյուլովշտրասսե փողոցների երկարությամբ, գունդը գրավեց մի քանի թաղամասեր, դուրս եկավ կոյցովի և վիտեն-

բերգի հրապարակը և ամրացավ կենդանաբանական այգուց 200 մետր հեռավորութեան վրա: Պոտսդամի կայսրանի գրավումը գրվեց 221-րդ գնդի վրա: Այստեղ դիվիզիայի հարձակումը դադարեցվեց:

Ապրիլի 29-ի վաղ առավոտյան 28-րդ բանակի հրամանատարի հրամանով դիվիզիան իր բնագիծը հանձնեց 1-ին Բելոռուսական ռազմաճակատի՝ Չուլկովի բանակի ձախթեւյան զորամասերին և շտապ կենտրոնացավ Բեռլինի կիսկվից շրջանում, Տելտով ջրանցքի հարավային ափի մոտ:

Ինչպես արդեն նշվեց, Բեռլինի կենտրոնի ուղղութեամբ հարձակվելու օրերին 61-րդ դիվիզիայի ձախ թևը բաց էր մնացել: Բեռլինի Շտեզլից շրջանը հարվածից դուրս էր մնացել: Այդ շրջանը պաշտպանող գերմանական զորքերը, կենտրոնանալով Շտեզլիցի արևելյան ծայրամասում, սկսեցին Տելտով ջրանցքի երկու ափերով տարածվել դեպի արևելք և ապրիլի 28-ի գիշերը գրավել անցարանը, կտրել դիվիզիայի անցուղիները: Մեր փոքր առաջակալ զորամասը՝ կապիտան Կուլեսնիկովի վաշտը, որին դիվիզիան թողել էր անցարանը պաշտպանելու համար, չդիմացավ հակառակորդի ճնշմանը: Օգտվելով այն բանից, որ սովետական զորքերը շարժվում են դեպի Բեռլինի կենտրոնական շրջանները, հակառակորդի այդ խմբավորումը փորձում էր գնալ դեպի արևելք, նպատակ ունենալով միանալ Բեռլինի հարավ-արևելքում շրջապատված Ֆրանկֆուրտ-գուբենյան խմբավորման հետ:

Ապրիլի 28-ին դիվիզիայի հրամանատարը կապիտան Կուլեսնիկովի վաշտն ուժեղացրեց հրետանային մարտկոցով՝ ու երկու ինքնագնաց հրանոթով, դրանք հանելով կանգվեր ջրանցքի մոտից: Վաշտը հակառակորդից ետ գրավեց անցատեղը և ամրացավ այնտեղ, բայց լրիվ չկարողացավ վերականգնել դրությունը: Հակառակորդը գերակշիռ ուժեր ուներ: Ապրիլի 29-ի օրվա վերջին դիվիզիան հարձակվեց Շտեզլիցի ու կիսկվիցի վրա, ուր ծավալվել էր հակառակորդը: 307-րդ գունդը հարձակվեց դեպի արևմուտք՝ Շտեզլիցի վրա, իսկ 221-րդ գունդը՝ կիսկվիցի հյուսիսային թաղամասերով ճակատով դեպի արևմուտք, ձախից ընդգրկելով Կայզեր Վիլհելմշտրասսեի մի հատվածը, աջից՝ Տելտով ջրանցքը: Գիշերվա ընթացքում գնդերը գլավեցին մի բանի թաղամասեր և առաջ շարժվեցին: Ապրիլի 30-ի առավոտյան

307-րդ գունդը մաքրեց արևմուտքից Ֆրիդրիխշտրասսեին հարող թաղամասերը, այնուհետև ընդունեց նաև 221-րդ գնդի հարձակման տեղամասը: Ապրիլի 30-ից մինչև մայիսի 2-ը 307-րդ գունդը մաքրեց կիսկվից և Շտեզլից շրջաններն ու մայիսի 2-ի լուսադեմին Շտեզլից կայսրանի գրավումով ավարտեց օպերացիան: Սա 61-րդ դիվիզիայի վերջին գոտեմարտն էր Բեռլինում, մի մասնիկն այն մեծագույն ճակատամարտերի, որոնք 1945 թվականի մայիսի 2-ին ավարտվեցին Ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինի լիակատար ու անվերապահ կապիտուլյացիայով:

5. ՄԱՐՏԵՐ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ

Երբ սովետական զորքերը հարավից ու արևելքից ճեղքեցին՝ դուրս եկան Բեռլինի մոտ, Հիտլերի հրամանով գեներալ Վենկի 12-րդ բանակը հանվեց արևմտյան ռազմաճակատից և տեղափոխվեց Բեռլինի շրջան՝ բլոկադան վերացնելու: Վենկի բանակը դեպի արևելք շարժվեց Բրանդենբուրգի շրջանից, այնուհետև փորձեց օգնութեան հասնել Բեռլինի հարավ-արևելքում շրջապատված գեներալ Բուսեի 9-րդ բանակին: Վերջինս հրաման ուներ Վենկի բանակին միանալու համար ճեղքել-դուրս գալ արևմուտք: Հիտլերյան այս երկու բանակները, Բեռլինի հարավում միանալու նպատակով, հարձակողական գործողություններ ձեռնարկեցին արևմուտքից ու արևելքից և արգելք հանդիսացան 1-ին Ուկրաինական ռազմաճակատի զորքերի հանդիպական ճեղքումների համար: Հիտլերյան զորքերը ճնշում գործադրեցին 1-ին Ուկրաինական ռազմաճակատի առանձին դիվիզիաների վրա, ապրիլի վերջին կրճատեցին իրենց միջև եղած տարածությունը: Գրանով Հիտլերը փորձում էր նոր համատարած պաշտպանական գիծ ստեղծել իր բանակի համար և փրկել Բեռլինը¹:

Այդ պատճառով Բեռլինի վրա հարձակվող 1-ին Ուկրաինական ռազմաճակատի զորքերի համար ստեղծվեց չափազանց լուրջ ու բարդ դրություն. արևմուտքում նրանք համառ մարտեր էին մղում էլքայի մոտ դուրս գալու, Բեռլինը հարավ-արևմուտքից շրջապա-

¹ См. К. Типельских. История второй мировой войны, М., 1956, стр. 544.

տելու և միաժամանակ 12-րդ գերմանական բանակի հարձակումը ձախողելու համար. հյուսիսում՝ ծանր փողոցային մարտեր էին գնում Բեռլինում. արևելքում պայքար էր գնում զորքերի Ֆրանկֆուրտ-գուրենյան խմբավորումը ոչնչացնելու համար, խմբավորում, որն իր հերթին համառորեն ձգտում էր ճեղքել-դուրս գալ արևմուտք: Լուչինսկու 28-րդ բանակի դիվիզիաների մի մասը Բեռլինից հարավ ծանր մարտեր էր մղում Բուսեի 9-րդ բանակի դեմ:

Ապրիլի 30-ի վաղ առավոտյան 28-րդ բանակի հրամանատարի հրամանով 61-րդ դիվիզիան, առանց 307-րդ գնդի, ավտոտանսպորտով Բեռլինից շտապ տեղափոխվեց Ցոսսեն քաղաքին հարող անտառները: Այդ հրամանն ուղղված էր հակառակորդի Ֆրանկֆուրտ-գուրենյան խմբավորման մնացորդների դեմ, որոնք փորձում էին ճեղքել շրջապատման օղակը և գնալ դեպի արևմուտք: Գիվիզիան խնդիր ուներ Ցոսսենի անտառային շրջաններում կտրել գերմանացիների նահանջի ուղիները և ոչնչացնել նրանց:

Դեռևս այն օրերին, երբ 61-րդ դիվիզիան մարտեր էր մղում Բեռլինի արվարձաններում, հակառակորդի Ֆրանկֆուրտ-գուրենյան խմբավորման մի քանի զորամասեր փորձեցին ճեղքել-անցնել մեր թիկունքը և գնալ դեպի արևմուտք: Նման մի դեպքի մասին պատմեց դիվիզիայի քաղբաժնի պետի տեղակալ մայոր Տոկմակովը.

«Են Ցոսսենով անցնող ճանապարհով տանում էի կենդանաքարշ տրանսպորտի շարասյունը: Մեր ետևից հետիոտն գալիս էր գեներալ-մայոր Ս. Ն. Կուզնեցովի 96-րդ գվարդիական հրաձգային դիվիզիան:

Շարասյան աջ եզրին պաշտպանությունը նկատեց մի մեծ զորախմբի շարժումը դեպի արևմուտք: Պարզելով ինչու՞մն է բանը, ես հրամայեցի շարասյունը թաքցնել անտառում, իսկ ինքս մեկնեցի գեներալ-մայոր Կուզնեցովի մոտ: Վերջինս անհապաղ միջոցներ ձեռնարկեց՝ կազմակերպեց հետախուզություն, հետևեց գերմանացիների շարժմանը, ամբողջ դիվիզիան բացազատեց խճուղու երկարությամբ՝ ճակատով դեպի արևելք, տեղադրեց հրետանին:

Երբ գերմանացիները դուրս եկան բաց դաշտ և մոտեցան ճանապարհին, Կուզնեցովը անսպասելի հրետանա-ականանետային

կենտրոնացված կրակ տեղաց թշնամու վրա, հետևակը միահամուռ ելավ դրոհի:

Համեմատաբար կարճատև այդ մարտի արդյունքը շափազանց փայլուն էր: Գերմանացիների զորասյուները ջախջախվեցին: Մոտ 4000 գերմանացի զորի հանձնվեց: Եվ միայն առանձին մասր խմբերի հաջողվեց թաքնվել անտառում»:

Ապրիլի վերջին Բեռլինից հարավ գտնվող անտառային զանգվածներում իրադրությունն այնպիսին էր, որ հակառակորդի Ֆրանկֆուրտ-գուրենյան խմբավորման զորքերի մի մասը, որին հաջողվել էր դուրս պրծնել շրջապատման օղակից, հայտնվեց Ցոսսենից հարավ և արևմուտք, գրավեց Վյունսդորֆ, Շպրեմբերգ, Կոմերսդորֆ և Լյուկենվալդե քաղաքները, նրանց հարող բնակավայրերը և հայտնվեց Լուչինսկու 28-րդ բանակի և Ռիբակովի 3-րդ գվարդիական տանկային բանակի կոմունիկացիաներում, փորձեց ճեղքել-դուրս գալ Պոտսդամի մոտ, միանալ Վենկի 12-րդ բանակին:

Գրավելով ելման դրուժյուն, 61-րդ դիվիզիան ապրիլի 30-ի ժամը 15-ից մինչև մայիսի 1-ի ժամը 11-ը հակառակորդին շրջապատելու և ոչնչացնելու նպատակով հաջող մարտեր մղեց Շպրեմբերգի ու Կլաուդորֆի շրջաններում, անտառային զանգվածները մաքրեց հակառակորդից: Առաջինը դուրս գալով Բեռլինից, 221-րդ գունդը փոխզնդապետ Ստեպլենկոյի հրամանատարությամբ Տրեբբին-Նունսդորֆ հատվածում կտրեց հակառակորդի ճանապարհը դեպի Պոտսդամ: Հենց առաջին գոտեմարտում 221-րդ գունդը կոտորեց գերմանացիներին, գերիներ վերցրեց, այդ թվում մի գնդապետի: 66-րդ գունդը փոխզնդապետ Վեչտամովի գլխավորությամբ կտրեց հակառակորդի նահանջի ուղիները և մարտով գրավեց Ֆերն-Նոենդորֆ բնակավայրը և գերիներ վերցրեց: Գերմանացիները բազմիցս դիմեցին հակազրոհի, փորձելով ճեղքել-դուրս գալ հյուսիս-արևմուտք, բայց հաջողություն չունեցան: Գիշերը փորձ կատարեցին ճեղքել-դուրս գալ արևմուտք՝ անզուամեթրիկյան զորքերին հանձնվելու համար, կամ Պոտսդամ հասնելու նպատակով շրջվել հյուսիս:

Այդ ժամանակ դիվիզիան արագացված երթով հակառակորդին զուգահեռ գնաց արևմուտք, նպատակ ունենալով նորից կտրել նրա նահանջի ուղիները: Գիվիզիայի հրամանատար Շացկովը գնում էր

221-րդ գնդի հետ: Մայիսի 1-ի ժամը 21-ին հրաձգային զնգերը դիրքեր գրավեցին և սկսեցին կռվել հակառակորդի դեմ: Գերմանացիները մեծ գերակշռություն ունեին: Նրանց տրամադրության տակ կային 5 տանկ, 20 զրահատրանսպորտայր, 5000-ից ավելի սվին, որոնցից շատերը զինված էին «ֆաուստ-նոնակներով»: Հաշվի առնելով իրենց գերակշռությունը, նրանք 221-րդ գնդին չխոչընդոտեցին խորանալ անտառում, հետո նրան հանկարծակիի բերելու համար: Բայց Շացկովը կռահեց հակառակորդի մտադրությունը և Ստեպանկոյին հրամայեց գրոհել: Սկսված մարտում գունդը գրավեց Մարտենսշոլա բնակավայրը, որի վրա հենվում էր թշնամին և վերջրեց 400 գերի: 66-րդ գունդը շարժվեց դեպի հյուսիս-արևմուտք՝ Հաննիկենդորֆի ուղղությամբ: Գիշերային մարտում գունդը ջախջախեց «ՍՍ»-ի երկու գումարտակ և մայիսի 2-ի առավոտյան գրավեց Հաննիկենդորֆը:

Այսպիսով, մայիսի 2-ի առավոտյան հակառակորդի շարժման ուղիները դեպի Պոտսդամ կտրվեցին կյուկենվալդեից հյուսիս-արևմուտքում՝ Հաննիկենդորֆ-կիբեց բնազծում: Մարտեր ծավալվեցին հակառակորդի ոչնչացման և ամբողջ անտառային շրջանը մաքրելու համար: Մայիսի 2-ի ժամը 22-ին առաջադրանքը կատարվեց: Երկօրյա մարտերի ընթացքում դիվիզիան ոչնչացրեց ու գերի վերցրեց հակառակորդի 3000-ից ավելի զինվոր ու սպա և գրավեց մեծ ռազմավար:

Պետք է ասել, որ Բեռլինից հարավ գտնվող անտառներում գերմանացիները հանկարծակի հայտնվեցին: Մեկուսացվելով, նրանք Յոսսենի անտառներում կորցրին կողմնորոշումը: Չնայած ուժերի գերակշռությանը, գերմանացիները մեր զորքերին հանդիպելիս մատնվում էին խուճապի և սարսափահար գերի հանձնվում: Նույնիսկ դիվիզիայի բուժսանգումարտակը, որ այն ժամանակ բաղկացած էր մոտ 90 մարդուց, առավելապես կանացից, մի անգամ 129 գերի վերցրեց:

Շարժվելով դեպի Պոտսդամ, գերմանացի զինվորները դեռ չգիտեին Բեռլինի շրջապատման, Պոտսդամի գրավման մասին: Այդ մասին են վկայում գերիների ցուցմունքները: Կյուկենդորֆ գյուղի մոտ գերվեց «ՍՍ»-ական երկու սպա: Սրանց հարցաքննեց դիվիզիայի շտաբի օպերատիվ բաժանմունքի պետ փոխգնդապետ Սերգեյ Ֆիլիպովիչ Բեգունովը: Ահա թե ինչ պատմեց նա.

«Ապրիլի 30-ի իրիկնադեմին էր: Մենք կյուկենդորֆի հրամանատարական կետում էինք: Ինձ ներկայացնելով գերմանական մի կապիտանի և մի լեյտենանտի, կապիտան Ստրախովն ասաց, որ մինչև վերջ դիմադրում էին: Սպաները էսէսականներ էին: Ես նրանց հարցաքննեցի թարգմանի միջոցով: Ներկա էր նաև կապիտան Ստեպանովը: Էսէսական կապիտանը լկտի էր, ոչ մի հարցի չէր պատասխանում: Էսէսական լեյտենանտը համեմատաբար մեղմ էր, բայց հարցերին չէր պատասխանում, միշտ նայում էր կապիտանին: Ես կապիտանին նախազգուշացրի, որ նրա դիմադրությունն անիմաստ է, մեր զորքերն արդեն գրավել են Բեռլինը, մենք ամեն ինչ գիտենք: Էսէսականն ընդհատեց թարգմանին և շափից դուրս վտահ պատասխանեց: «Զեմ հավատում, չի կարող պատահել, Հիսլերը Բեռլինը չի հանձնի»: Պարզվեց, որ նրանք երկուսն էլ Բեռլինցի են. ես հարցրի, թե որտեղ են ապրում նրանց ընտանիքները: Ի զարմանս ինձ, էսէսական կապիտանը ապրում էր այն փողոցում, որով մենք անցել էինք Բեռլինում մղված մարտերի ժամանակ: Ես հանգիստ ասացի, որ մենք արդեն եղել ենք Շտեյնմերդտրասսեում և հիշեցրի մի բանի մանրամասներ: Կապիտանն իսկույն գունատվեց ու ակամայից զոռաց «Կապուտ, ալես կապուտ» և բռնեց իր մազերից: Հետո նա մեղմացավ, սկզբեց պատմել այն ամենը, ինչ հայտնի էր իրեն: Սպաների ցուցմունքներից ես իմացա, որ գերմանական խմբավորումը մտադիր էր գալ Պոտսդամի մոտ, հարկ եղած դեպքում հասնել դաշնակիցներին և հանձնվել նրանց՝ «Անգլիան ու Ամերիկան թույլ չեն տա, որ բուլշևիկները մնան Եվրոպայում»:



1945 թվականի մայիսի 2-ին Բեռլինը կապիտուլացվեց: Նույն օրը ավարտվեց Ֆրանկֆուրտ-գուբենյան խմբավորման ոչնչացումը: ՍՍՀՄ զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարի 1945 թվականի մայիսի 2-ի № 359 հրամանն ամբողջ աշխարհին ազդարարեց.

«1-ին Բելոռուսական ռազմաճակատի զորքերը՝ Սովետական Միության մարշալ Ժուկովի հրամանատարությամբ, 1-ին Ուկրաին-

նական ռազմաճակատի զորքերի օժանդակությամբ, որի հրամանատարն է Սովետական Միության մարշալ Կոնևը, փողոցային համառ մարտերից հետո ավարտեցին գերմանական զորքերի բեռլինյան խմբավորման ջախջախումը և այսօր՝ մայիսի 2-ին, լրիվ գրավեցին Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինը՝ գերմանական իմպերիալիզմի կենտրոնը և գերմանական ագրեսիայի օջախը:

Քաղաքը պաշտպանող կայազորը Բեռլինի պաշտպանության պետ հրետանու գեներալ Վեյտլինգի ու նրա շտաբի գլխավորությունամբ այսօր, ժամը 15-ին, դադարեցրեց դիմադրությունը, զենքը վայր դրեց և գերի հանձնվեց:

Մայիսի 2-ի ժամը 9-ին Բեռլին քաղաքում մեր զորքերը գերի վերցրին ավելի քան 70.000 գերմանական զինվոր ու սպա¹:

Նույն օրը հրապարակվեց Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանը Բեռլինից հարավ-արևելք գերմանական զորքերի խմբավորման լիկվիդացումն ավարտելու մասին: Հաղորդվում էր, որ ապրիլի 26-ից մինչև մայիսի 2-ը տեղի ունեցած մարտերում գերի է վերցվել 120000 գերմանական զինվոր ու սպա²:

Գերագույն գլխավոր հրամանատարի երկու հրամաններում նշվում էր նաև 61-րդ դիվիզիայի անձնակազմի գերազանց գործողությունները: Մեկ օրվա ընթացքում դիվիզիայի ռազմիկները երկու անգամ արժանացան Գերագույն գլխավոր հրամանատարի շնորհակալությունը:

Հանրագումարի բերելով Բեռլինի գրավման և հակառակորդի Ֆրանկֆուրտ-գուբենյան խմբավորման լիկվիդացման համար 61-րդ դիվիզիայի մղած մարտերի արդյունքները, գեներալ-լեյտենանտ Լուչինսկին հաղորդեց, որ 1-ին Ուկրաինական ռազմաճակատի հրամանատար Սովետական Միության մարշալ Կոնևը բարձր գնահատական է տվել մարտական խնդիրների կատարման ժամանակ դիվիզիայի կազմակերպվածությանը, շարժունակությանն ու հմուտ գործողություններին:

Դիվիզիայի քաղաքիսն իսկույն մասսայականացրեց այդ փաստաթղթերը: «Ձնամյա պոբեդի» թերթի տպարանում տպագրվեցին հատուկ տեղեկանքներ, որոնք հավերժացնում էին դիվի-

զիայի մարտիկների, հրամանատարների, քաղաշխատողների մասնակցությունը Բեռլինի գրավման և Բեռլինից հարավ-արևելք գերմանական զորքերի խմբավորման լիկվիդացման համար մղված մարտերին: Այդ տեղեկանքներում պատկերված էին սովետական զորքերի գրոհը Բեռլինի փողոցներում, կարմիրբանակայինի վիթխարի ֆիզուրը՝ հաղթանակի դրոշը ձեռքին և հաղթանակի սալլուտը Մոսկվայում: Այդ տեղեկանքները հանդիսավորությունամբ հանձնվում էին յուրաքանչյուր մարտիկի, հրամանատարի ու քաղաշխատողի:

Ահա այդ տեղեկանքներից մեկի տեքստը.

«Բեռլինի համար մղված մարտերի մասնակից

Ընկ

Գերագույն գլխավոր հրամանատար Սովետական Միության մարշալ ընկեր Ստալինի 1945 թվականի մայիսի 2-ի № 359 հրամանով Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինի գրավման համար մեր միավորման ամբողջ անձնակազմին, այդ թվում և Ձեզ՝ Բեռլինի համար մղված մարտերի մասնակցին, հայտնված է շնորհակալություն:

69788 զորամիավորման հրամանատար
գլխավորդիպի գեներալ-մայոր (Շացկով)»:

Հիտլերյան Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինի անկումը նախապատրաստված էր Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի ընթացքով: Գերմանա-ֆաշիստական բանակի ողնաշարը ջարդված էր: Ռազմաճակատներում արյունաքամ անելով գերմանական բանակին, սովետական բանակը նրան, հավասարապես և հիտլերյան պետությանը դրեց անխուսափելի կրախի առաջ:

Փայլուն կերպով նախապատրաստված և վարպետորեն անցկացված Բեռլինի օպերացիան ըստ էության փշրեց հիտլերյան Գերմանիայի պետության և նրա բանակի ողնաշարը և օրերի հարց դարձրեց վերջնական հաղթանակը: Գերագույն գլխավոր հրամանատարի 1945 թվականի մայիսի 2-ի հրամանում ասվում էր, որ «գերմանական իմպերիալիզմի սանձազերծած համաշխարհա-

¹ «Պրավդա», 3 մայիսի 1945:

² Նույն տեղը:

չին պատերազմը մոտենում է ավարտին: Հիտլերյան Գերմանիայի խորտակումը ամենամոտ ապագայի գործ է»¹:



Բեռլինում մղված մարտերի տասն օրում դիվիզիան ամբու-
թյունների միջով անցավ 20 կիլոմետր տարածություն: Գրավեց
Անհալտ կայարանը և Տելտով ջրանցքից հարավ գտնվող արվար-
ձանիների ու քաղաքային շրջանների մի ընդարձակ տարածություն՝
Բլանկենֆելդը, Մալովը, Գրոսս-Բենրենը, Տելտովը, Լիխտենբա-
դենը, Մարիենֆելդը, Բոսկովը, Լինկվիցը, Մարինդորֆը և Բեռլինի
կենտրոնական շրջաններ Տեմպելհոֆը, Շտեգլիցն ու Շյոնեբերգի
մի մասը: Այդ ժամանակում դիվիզիան հաղթահարեց երկու
դժվարին ջրային արգելք՝ Տելտովը և Կանովերը, գրավեց մի
տասնյակ երկաթուղային կայարան և բազում արդյունաբե-
րական ձեռնարկություններ: Դիվիզիան մարտեր մղեց Բեռ-
լինի ավելի քան 100 փողոցներում: Դիվիզիան ջախջախեց ու գե-
րեց հակառակորդի Ֆրանկֆուրտ-գուբենյան խմբավորման այն
զորամասերն ու ստորաբաժանումները, որոնք ձեռքել-գուրս էին
եկել արևմուտք՝ Յոսսենի անտառային շրջանները:

61-րդ դիվիզիան Բեռլինում կռվում էր գերազանցապես բաց
թևերի պայմաններում: Հաճախ էսէսականները թևերից թափան-
ցում էին մեր հարձակվող զորամասերի թիկունքում մնացած թա-
ղամասերը, փորձում էին խախտել մեր զորամասերի մարտակար-
գերը: Որքան առաջ էինք շարժվում Բեռլինի պաշտպանության
խորքը, այնքան ավելի համառ և կատաղի էին դառնում մարտերը:
Քաղաքի կենտրոնական շրջաններում պաշտպանություն էին զրա-
վում հիտլերյան ղեկավարությանն առավել նվիրված կանոնավոր
ՍՍ-ի զորքերը և ոստիկանության ջոկատները: Դրանք ուժեղացված
էին նահանջող զորքերի մնացորդների հաշվին: Փողոցային մար-
տերում թշնամին գործադրում էր «Ֆաուստ-փամփուշտներ», «Ֆա-
ուստ-նոնակներ» և զենիթային խոշոր տրամաշափի զնդացիրներ:
Բեռլինի պաշտպանական գոտու զորամասերը մեկուսացվել

¹ Հրաման № 20, «Պրավդա» № 104, 1 մայիսի 1945:

էին գերմանական զորքերի Ֆրանկֆուրտ-գուբենյան խմբավորու-
մից: Մեր զորքերը գերմանական ռազմաճակատը ձեռքեցին ամ-
բողջ խորությունը և էլբայի մոտ միացան դաշնակիցների զորքե-
րին: Բեռլինը դրսից որևէ օգնություն ստանալ չէր կարող: Նրա
ժամերը հաշվված էին: Բուն Բեռլինում մեր քաջարի զորքերը
մասնատեցին գերմանական պաշտպանությունը և մաս-մաս ջախ-
ջախեցին նրա զորքերը: Բեռլինում մղած մարտերում դրսե-
վորվեց սովետական հրամանատարության գերազանց զորավա-
րական արվեստը, սովետական մարտիկի մասսայական հերոսու-
թյունը:

Ավարտելով Բեռլինում 61-րդ դիվիզիայի մղած մարտերի
պատմությունը, հաճելի է հիշել նրանց, ովքեր իրենց կյանքը
չլեռնացրին մեր հայրենիքի ազատության համար մղվող պայքա-
րում, զենքը ձեռքներին Կովկասյան նախալեռներից հասան մինչև
Բեռլին և Պրագա, փառքով պսակելով իրենց: Նրանցից շատերն
ընկան հերոսի մահով մեր հաղթանակի ճանապարհին և փայլուն
էջեր գրեցին Հայրենական մեծ պատերազմի տարեգրության մեջ:

61-րդ դիվիզիան իր անցած մարտական գործողություններում
երբեք չի նահանջել: Բայց դա չի նշանակում, թե նա չի ունեցել
անհաջողություններ ու արգելքներ: Պատերազմը պատերազմ է:
Դեպքեր են եղել ելք գրոհից հետո, հակառակորդի ճնշման տակ,
ստորաբաժանումներն ստիպված են ետ քաշվել ելման դիրքերը:
Նման հարկադիր նահանջի դեպքում անգամ մեր մարտիկները
համառորեն դիմադրում էին հակառակորդին, թշնամին չէր տես-
նում մեր մարտիկների թիկունքը: Հրամանատարությունը, քաղա-
պարատը, կուսակցական-կոմերիտական կազմակերպություննե-
րը պատերազմական սանդուղքի բոլոր աստիճաններում կոփեցին
մեր զինվորի հաղթանակի անկոտրում կամքը, մարմնավորեցին
հարաճուն ռազմական արվեստը՝ ներառյալ յուրաքանչյուր մար-
տիկի մաները, խիզախությունը, քաջությունը մարտում և զորա-
յին թիկունքի աշխատանքի ներդաշնակությունը: Մեծ ծառայու-
թյուն մատուցեցին կոմունիստները: Նրանք վայելում էին անբա-
սիր հեղինակություն, ամենադժվարին պահին զնում էին առջևից:
Մարտիկները ձգտում էին նմանվել նրանց: Միայն Բեռլինում
մղված մարտերում կուսակցության շարքերը մտավ ավելի քան

100 մարդ: Մարտի ամենաթեթև պահին քաղաքայինը նրանց հանձնեց կուսակցական տոմսերը: Մարտական խնդիրների կատարումն ապահովող կուսակցական-քաղաքական աշխատանքը տարվում էր ռազմա-քաղաքական խոշոր պլանով: Քաղաքական լողուններն ու ռազմական կոչերը արտացոլում էին պատերազմի վերջնական նպատակը՝ գերմանական բանակի և ֆաշիզմի ջախջախումը. հաղթանակի դրոշմը բարձրացնել հիտլերյան Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինի վրա: Կատարելով սովետական բանակի ազատագրական մեծ միսիան, ազատագրել Հիտլերի ստրկացրած Եվրոպայի ժողովուրդներին. ցուցադրել սոցիալիստական կարգերի առավելությունը, ուժն ու հզորությունը. էլ ավելի բարձրացնել Սովետական Միության և նրա կարմիր բանակի հեղինակությունը. ապահովել ժողովուրդների ետպատերազմյան կայուն խաղաղությունը:

1. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Լուչինակու բանակը մայիսի 3-ի երեկոյան արագացված երթի դուրս եկավ Յոսսեն-Կոտրուս ուղղությամբ և, անցնելով վերջինիս մոտով, զնաց դեպի հարավ՝ մեկ օրում անցնելով 60 կիլոմետր ճանապարհ: Մայիսի 7-ի գիշերը դիվիզիան նեսկի և Յիշել-Մյուլե գյուղերի շրջանում նորից հանդիպեց հակառակորդին և ընթացքից բացազատվեց:

1-ին Ուկրաինական ռազմաճակատի զորքերը հակառակորդի Պրագայի խմբավորումը ջախջախելու համար պետք է նախ հարվածեին Դրեզդենի խմբավորմանը: Լուչինակու 28-րդ և Կորոտենեի 52-րդ բանակները պետք է գործեին Յիտտաու-Մլադա-Բոլեսլավ-Պրագա ընդհանուր ուղղությամբ: Հենց այս տեղամասում գեներալ-ֆելդմարշալ Շերների զորքերի միլիոնանոց խմբավորումը իր տրամադրության տակ ուներ առավել հզոր պաշտպանական կառույցներ և զորքերի անհամեմատ մեծ կենտրոնացում. նա այստեղ էր սպասում սովետական զորքերի գլխավոր հարվածին: Թշնամին Սուդեթյան լեռների մատուցյանը զառիթափ բարձունքների լայն գոտում պաշտպանում էր խոր էշելոնացված պաշտպանական սիստեմով:

Այդ օրը առավոտյան 61-րդ դիվիզիան և բանակի մյուս միավորումները անցան հարձակման: Ճեղքելով պաշտպանությունը, դիվիզիան սկսեց հետապնդել նահանջող թշնամուն: Գերմանացիները դիմադրություն ցույց տվեցին միայն միջանկյալ բնագծերում: Դիվիզիայի առաջարժումը, այնուամենայնիվ, դանդաղեց: Ճանապարհներն ու անտառային բացատները ականապատված էին: Գերմանացիներն ստեղծել էին անտառային արգելապատնեղներ, ճանապարհների լայնքով դրել էին խոշորդոտ-կոճղեր: Սակրավոր-

ներն ստիպված եղան լարված աշխատանք կատարել: Բավական է ասել, որ օրվա ընթացքում միայն լեյտենանտ Կոչետովի դասակը վերացրեց անտառային 4 արգելապատնեշ և 6 խոշընդոտ, իսկ լեյտենանտ Աղաջանյանի դասակը վնասազերծեց 395 ական:

Դիվիզիայի շտաբի պետ փոխգնդապետ Իվչենկոյի հետ գնում էինք 307-րդ գնդի մարտակարգերը: Ճանապարհին դիվիզիայի հրամանատարին սպասելու նպատակով մտանք մոտակա դղյակը: Հյուրասենյակի սեղանին դրված էին բյուրեղապակյա գավաթներ, զանազան խմիչքներ: Կարծես ինչ-որ մեկը հյուրերի էր սպասում: Պատի մոտ դրված էր քարտարանի արկղիկներ ունեցող պահարան: Ավտոմատավորն ստուգեց... դրված էին զանազան դեղորայքներ և գայթակղիչ իրեր, որոնց մեջ նա զտավ կանացի ոսկե ժամացույց:

— Պետք է անհապաղ թողնել դղյակը, — ասացի:

Իվչենկոն դժվարությամբ վեր կացավ դիվանի վրայից: Դեռ 200 մետր էլ չէինք հեռացել դղյակից, երբ թնդաց պայթյունը: Ինչ-որ տեղ զանգաղ գործողության ուժը էր դրված: Դղյակից ոչ հեռու Իվչենկոյի մեքենան ընկավ ականի վրա: Մեքենայի արագությունը փրկեց, ականը պայթեց մեքենայի ետևում:

Այդ օրը դիվիզիան անցավ 30 կիլոմետր, գրավելով 20-ից ավելի բնակավայր, այդ թվում Վեյսենբերգ և Լիբաու քաղաքները, և մայիսի 8-ի առավոտյան հասավ Լիբաուից հարավ ընկած Գրոս Շվեյնից շրջանը:

Հակառակորդը Շպրեե գետի վերին հոսանքում գրավեց նախօրոք պատրաստված բնագիծը, դիմադրություն ցույց տվեց, իսկ մենք ուղղամթերք քիչ ունեինք: Բանակի թիկունքայինները չէին հասնում զորքերի ետևից: Ավտոմեքենաներն ուղարկեցինք ուղղամթերք բերելու, հրամայելով ժամը 14-ին տեղ հասցնել երկու մարտակոմպլեկտ:

Անհրաժեշտ էր թշնամուն այնպիսի հարված հասցնել, որ նա չկարողանար ամրանալ Սուդեթներում:

Ռազմամթերքն ստացվեց: Հրամայվեց ժամը 15-ին հակառակորդին հարվածել զենքի բոլոր տեսակներով: Գերմանացիները վայրկենական արագությամբ մեզնից առաջ ընկան: Բայց դա մեր հրետանավորներին ու ականաձիգներին չխանգարեց կատարելու իրենց գործը: Գերմանացիների պաշտպանության ամբողջ գոտին

ծածկվեց ծխով: Նրանք սկսեցին նահանջել, բայց ծուխը դեռ կանգնած էր: Գնդերն առաջ շարժվեցին:

Մեր ճանապարհին դարձյալ կային կոճղեր, անտառային արգելապատնեշներ, ականներ... Բայց հակառակորդն արդեն չէր շտապում, նա կտրվել էր մեզնից: Ճանապարհին մեզ հանդիպում էին զինվորներ, որոնք թաքնվել էին անտառներում՝ գերի հանձնը վելու: Նրանք ցուցմունք էին տալիս, որ Շերների զինվորների մի մասը դեն է նետել զենքը, ցրվել անտառներում՝ զգեստափոխվել, որպեսզի խուսափի գերությունից:

Այդ օրը 1-ին Ուկրաինական ռազմաճակատի ռազմական խորհուրդը դիմեց ռազմաճակատի ղորքերին, գերմանական բանակին ու Գերմանիայի բնակչությանը, որով ծանուցում էր գերմանական բանակի լիակատար ու անվերապահ կապիտուլացիայի ակտի ստորագրման և մինչև օրվա վերջը ռազմական գործողությունների դադարեցման մասին: Մենք նույնպես մեր հերթին ռազիոյով հաղորդեցինք ռազմական խորհրդի դիմումը: Բայց զենեքալ-ֆելդմարշալ Շերները հրաժարվեց վայր դնել զենքը:

Մեր դիվիզիայի ճանապարհին հանդիպեցին շատ բնակավայրեր: Բնակիչների որոշ մասը մնացել էր տեղում, բայց ոչ ոք փողոց դուրս չէր գալիս: Նեյգերսդորֆ քաղաքում մենք հանդիպեցինք լեհերի, հարավսլավացիների, ֆրանսիացիների, բելգիացիների խմբերի: Նրանք ջերմորեն ողջունում էին կարմիր բանակին՝ Ֆաշիստական գերությունից իրենց ազատողին: Քաղաքներում ու գյուղերում, սկսած Շպիցկուրհերդորֆ բնակավայրից, ամբողջ հոսանքով մեզ մոտ էին գալիս ստրկության մեջ տառապած սովետական աղջիկներ ու գրկախառնվում մեր մարտիկների հետ: «Աղատություն», — հրճվանքով բղավում էին նրանք, ուրախության արցունքներ էին հորդում նրանց աչքերից: Շուտով հայտնվեցին նաև նրանք, գերմանացիները, որոնք թաքնվել էին անտառներում, իրենց հետ տանելով երեխաներին, տան կահ-կարասին: Իսկ Վերնզդորֆ քաղաքում ծխում էին գործարանային ծխնելույզները, փողոցներում մարդիկ կային, խանութներում առևտուր էր գնում...:

Գնում էինք Սուդեթներով: Հետախույզները քայլում էին առջևից: Կյանքում դեպքեր են լինում, երբ մարդն իր սեփական անշքբազայացությունից ընկնում է տհաճ դրության մեջ: Նրեկոյա-

նում էր. նշանակված տեղում հետախույզները կապավորներ չէին թողել, ոչ ոք չկար: Իրադրությունը պարզելու նպատակով մենք հինգ հոգով, մարդատար ավտոմեքենայով գնացինք առաջ, մի փոքր կտրվեցինք մեր գլխային ստորաբաժանումներից և հանդիպեցինք հակառակորդի վերջափակ ջոկատի: Գերմանացիները ճանապարհի երկու կողմից անտառից, կրակեցին մեզ վրա: Դուրս թռչելով մեքենայից, պառկեցինք ճանապարհի եզրին և պատասխան կրակ բացեցինք: Բոլորս էլ ահաճ զգացողություն ունեինք... Ամբողջ պատերազմն անցկացնել և զոհվել հիմար մահով... Մոտեցան մերոնք: Երկու զրահատրանսպորտյոր գնդացիներով հրնձեցին ճանապարհի եզրերի ֆաշիստներին, սանրեցին անտառը, մենք փրկվեցինք:

Սուդեթյան լեռներն անցանք 791 և 579,7 բարձունքների միջև ընկած շրջանում: Զորքերը հոգնեցին անընդհատ վերելքից, ռազմական զործողությունները դադարեցին: Կարծես ճակատագրի բերումով դիվիզիան պատերազմ սկսեց Կովկասյան լեռներում, անցավ լեռնանցքներով, այն ավարտեց Սուդեթյան լեռների կիրճերում ու լեռնանցքերում: Դիվիզիայի հրամանատար զենքերալ-մայոր Շացկովը հրամայեց դադար առնել՝ դիշերելու:

Խոր գիշեր էր: Ինձ արթնացրեց դիվիզիայի ակումբի պետ կապիտան Զասլավսկին: Նա ինձ հանձնեց Ի. Վ. Ստալինի՝ ժողովրդին ուղղված դիմումի, կարմիր բանակի և ռազմա-ծովային նավատորմի զորքերին ուղղված Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանի և մայիսի 9-ը Հաղթանակի օր հայտարարելու մասին ՄՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրի՝ ռազիոհաղորդումներից կատարված գրառումները: Ուրախալի լուրերը կայծակի արագությամբ տարածվեցին մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների մեջ: Օդ բարձրացան բազմերանգ հրթիռներ, ճարճատեցին գնդացիներ, ավտոմատներ, հրացաններ ու ատրճանակներ: Սկսեցին որոտալ նույնիսկ թնդանոթները: Հնչեցին հրձվալից բացակահանություններ: Դիվիզիայի «Զնամյա պոբեդի» թերթի հերթական համարում, որը լույս տեսավ առավոտյան, տպագրվեցին մեծագույն հաղթանակի պատմական փաստաթղթերը:

Դիվիզիան շարժվեց «Դեպի Պրագա» լողունգով: Երթի ժամանակ ստեղծվեց «Առաջամաս ջոկատ», որի կազմի մեջ մտան

221-րդ դնդի մեկ հրաձգային զումարտակ, մեկ ինքնագնաց դիվիզիոն, 55-րդ հրետանային գնդի մեկ դիվիզիոն և սակրավորներ լի մեկ դասակ. ջոկատի խնդիրն էր՝ արագ հասնել դեպի Պրագա նահանջող հակառակորդին և ոչնչացնել նրան: Զոկատը մասնակցեց Պրագա քաղաքը հիտլերականների մնացորդներից մաքրելու և քաղաքի հյուսիս-արևմուտքում հիտլերականների վերջին խմբերի լիկվիդացման օպերացիային:

Առաջ անցնելով գլխային ստորաբաժանումներից, քաղաքում հրահանգիչ Բորիս Ստեպանովի և երկու ավտոմատավորների հետ գնացինք լեռների հարավային ստորոտին ընկած Օնկա գյուղը: Բնակիչները, որ գերմանացիներ էին, թաքնվեցին: Մի կին թաքնվեց տան դռան հետևում և սկսեց հայացքով հետևել մեզ: Շտապելու ոչինչ չունեինք, զորքերը գալիս էին մեր էտեից: Մեքենայից իջանք: Գյուղում ոչ մի շարժում չկար, կինը շարունակում էր հայացքով հետևել մեզ և չէր կարող շնկատել, որ մեր ավտոմատավորները իր վրա ուշադրություն չեն դարձնում: Վերջապես, հայտնվեց մի ծնրունի: Նա ողջունեց և ասաց, որ ուրախ է պատերազմը ավարտվելու առթիվ, անընդհատ կրկնելով՝ «Կապուտ, ալես կապուտ»: Պատասխանելով մեր հարցերին, ծերունին հայտնեց, որ գերմանական զորքերը ճանապարհով գնում են Պրագայի կողմը, իսկ վերջափակ զորամասը գյուղից հեռացել էր մեր գալուց 20—25 րոպե առաջ: Նահանջում էին ավտոմեքենաներով: Մոտեցավ նաև մեզ հետևող կինը: Նա մի ձեռքով բռնել էր փոքրիկին, իսկ մյուսով՝ սրճամանով ու բաժակներով մատուցարանը: Նա խոնարհվեց, մատուցարանը դրեց խոտի վրա, բաժակները լցրեց սուրճով և առաջ մեկնեց: Այս ամենը նա անում էր մի ձեռքով, մյուս ձեռքով երեխային էր պահում: Մենք շնորհակալություն հայտնեցինք, հրաժարվելով հյուրասիրությունից: Այդ ժամանակ կինը խմեց բաժակներից մեկի սուրճը, ողողեց ջրով, սըրբեց և նորից սուրճ լցրեց. նա ենթադրեց, որ մենք վախենում ենք թունավորելուց: Միծաղեցինք: Վախեցած կինը բոլորովին կորցրեց իրեն, քիչ էր մնում երեխային վայր գցեր: Նա ցույց տվեց «մաուզերը» և իր քունքը, ուղում էր ասել. «Ձե՞ք սպանի»: Բորիս Ստեպանովը գերմաներեն բացատրեց. «Մենք ֆաշիստ չենք, ձեր դիվիզիոնի նման չենք, խաղաղ բնակիչներին չենք սպանում: Ձերոնք սպանում էին մեր կանանց, երեխաներին, ծերերին՝ բո-

լորին, ով պատահեց: Մենք եկել ենք ձեզ ազատելու ֆաշիզմից»: Մոտեցավ մի գերմանացի ևս՝ հենափայտերով: Նա օղաչու է եղել, վիրավորվել է Ֆրանսիայում, արևելյան ռազմաճակատում «չի եղել»: Կինը նույնպես ասաց, որ իր ամուսինը արևմտյան ռազմաճակատում է, «Ռուսաստանի դեմ չի կռվել»:

Մտովի անդրադառնալով անցած-գնացած օրերին, ուզում եմ նշել մի հանգամանք: Հայրենական պատերազմում արմատական բեկում ստեղծելուց հետո գերի ընկած գերմանացիները, որպես կանոն, նկատելիորեն փորձում էին պնդել, որ իբր իրենք ոչ մի կապ չեն ունեցել ժամանակավորապես օկուպացված սովետական տերիտորիաներում հիտլերականների կատարած դազանությունների հետ, արևելյան ռազմաճակատում «առաջին անգամն են», «հենց նոր են եկել»: Հիտլերյան բանակի հաշմանդամ զինվորներն ու սպաները, որոնց հետ հանդիպում էինք Գերմանիայում, միաբերան հայտարարում էին, թե իբր վիրավորվել են արևմտյան ռազմաճակատում, Ռուսաստանում «չեն եղել»: Սրանք սարսափ էին ապրում իրենց կատարած շարագործությունների համար և ջանում էին ամեն կերպ ներկայանալ որպես «անմեղներ»: Սակայն նրանք մոռանում էին, որ անմեղ մարդկանց արյունը հատուցում է պահանջում:

2. ՉԵՆՈՍԱՆՈՎԱԿԻԱՅՈՒՄ

Չորքերն անցան Օկնայի մոտով, մենք նորից առաջ անցանք: Առջևում Լոբաչ գյուղն էր՝ մեր դիվիզիայի ճանապարհին ընկած առաջին շխտական գյուղը: Հարթ ճանապարհներ էին: Շատ արագ էինք գնում: Անցանք հարթավայրը. քիչ էր մնում խրվելինք փոքր բարձունքի ետևում խոնված բազմություն մեջ: Թե ինչ էր կատարվում այնտեղ՝ դժվար է նկարագրել: Ինչպես դուրս եկանք մեքենայից, ինչպես ընկանք բազմության մեջ, չեմ հիշում: Միայն հիշում եմ, որ մեքենան ծածկվեց ծաղիկներով, շորս բոլորը գոշում էին, անընդհատ կրկնում՝ «Նազդար»: Հետո հասկացանք, որ «Նազդար» նշանակում է կեցցե:

Հենց որ գերմանացիները փախչում են, գյուղացիները հավաքվում են ճանապարհի խաչմերուկում՝ կարմիր բանակին դիմավորելու: Հանդիպումը ջերմ էր ու սրտառու: Բոլորն ուզում էին

անձամբ շնորհակալություն հայտնել կարմիր բանակին ու նրա մարտիկներին, ողջագուրվել կարմիրբանակայինների ու հրամանատարների հետ: Շատերի աչքերում ուրախություն արցունքներ կային: Դա երկար սպասման պոռթկում էր: Երեխաները «Նազդար» գոշելով խցկվում էին մեծերի արանքը, որպեսզի ողջունեն մեզ: Ես զրկեցի 3—4 տարեկան մի տղայի, նա փաթաթվեց վզովս: Նորից պոռթկաց ազմուկը, կրկնվեցին «Նազդար» բացականչությունները: Հենց որ մի փոքր հանդարտվեցին, աղջիկները թողեցին բազմությունը և վազեցին դեպի գյուղ: Շուտով նրանք վերադարձան դարեջրով լի սափորներ ու թեյնիկներ՝ ձեռքներին: Վարորդ Իվան Եգորովիչը տարավ փողային նվազախումբը՝ զլխային զորասյան առջև բերելու հրամանը: Մի քանի բոպեից լավեց քայերգի ձայնը: Երիտասարդները նետվեցին ընդառաջ: Նվազախումբը կանդ առավ ճանապարհի մոտ, և զորքերն անցան քայերգի ներքո: Հավանաբար, դա իր տեսակի մեջ միակ դեպքն էր՝ աղջիկները ռազմիկների կողքից քայլում էին թևանցուկ, դարեջուր հյուրասիրելով նրանց:

Դիվիզիան տեղավորվեց էլբա գետի ափերին, Պրագայից ոչ հեռու: Մտորաբաժանումներն սկսեցին իրենց կարգի բերել: Սկզբվեց խաղաղ ժամանակվա կյանքը: Պրագայում քաղաքացիները սիրով էին դիմավորում մեր մարտիկներին, որոնք ցանկություն էին հայտնում ծանոթանալ քաղաքի տեսարժան վայրերին, կամավոր ստանձնելով դիդի ֆունկցիաները:

Մեր մի խումբ ընկերներ՝ 55-րդ հրետանային գնդի 2-րդ դիվիզիոնի հրամանատարի քաղզոնով տեղակալ մայոր Սամվել Մովսիսյանի զլխավորությամբ, փնտրում էին այն տունը, որտեղ կայացել էր ՌՄԴ(բ)Կ Պրագայի կոնֆերանսը: Այնքան էլ հեշտ չէր պատերազմի ավերի ու թոհուրթոհի մեջ իսկույն գտնել այն մարդուն, որը կարող լիներ ցույց տալ տունը: Բայց բավական եղավ դիմել քաղաքացիներից մեկին, և նա սիրով փնտրեց տունը և ուղեկցեց մեր ընկերներին: Վերադառնալով, Մովսիսյանը պատմեց, թե հանդիպել է այն տարեց մարդուն, որը այդ հիշարժան ժամանակներում եղել է այդ տան դուստպանը: Տարեց չեխը պատմել է՝ ինչպես հավաքվածներն անհամբեր սպասել են «մի կարևոր պարոնի», իսկ պարզվել է, որ այդ պարոնը եկել է բոլորից շուտ, նստել սենյակներից մեկում և թերթ է կարդում: Հետո նա պատմել

է՛ ինչպես իրենք ուզեցել են տեսնել «կարևոր պարոնին», բայց չի հաջողվել: Միայն շատ տարիներ անց նա իմացել է, որ այդ «կարևոր պարոնը» կենինն է եղել: Սամվել Մովսիսյանի տպավորութիւններն ուղարկվեցին «Սովետական Հայաստան» թերթին:

Էլբայի մոտ դիվիզիայի շտաբը տեղավորվեց Խրաստ դուղում: Գիվիզիայի հրամանատար Շացկովը ապրում էր գյուղի ծայրամասում, բյուրեղապակյա իրերի ֆաբրիկատիրոջ տանը: Նրա կողքի փոքրիկ մենատանն ապրում էի ես: Մենատունը պատկանում էր Պատվալների ընտանիքին: Տանտերերը ուրիշ սեփականություն չունեին: Ընտանիքի ավագը՝ ծերունի Պատվալը, ամբողջ կյանքում աշխատել է խանութների սեփականատիրոջ մոտ, նրա ավագ որդին ծառայել է բանկում, իսկ կրտսերը՝ բանակում: Չեխոսլովակիայի օկուպացիայի ժամանակ վերջինիս՝ չեխոսլովակյան բանակի լեյտենանտին, տարել են ռազմադերիներին համակենտրոնացման ճամբար: Այնտեղ նրան տանջել են, տուն է վերադարձել անդամալուծ, նրան ման էին ածում սալակով: Ավագ որդին տանը չէր, կինն ու մայրն անհանգստանում էին, չգիտեին որտեղ է նա: Մի անգամ, մայիսի 12-ի օրվա երկրորդ կեսին, ինձ արթնացրեց վիթխարահասակ մի անծանոթ և ինձ դիմեց եղբայր բառով:

— Ես տանտիրոջ որդին եմ: Մենք ընտանիքով խնդրում ենք այսօր երեկոյան լինել մեր հյուրը: Կարող եք գալ ձեր ընկերների հետ, մենք ուրախ կլինենք նրանց ընդունելու որպես մեր բարեկամների:

Վարորդ Իվան Տոպոլը և հանձնակատար Վանո Շավիլուշվիլին իմացել էին, որ Պատվալի ընտանիքը վատ է ապրում, սննդամթերք չունի: Ուստի մեր խոհարարը 10 մարդու համար ընթրիք է պատրաստում և սպասում հրամանի: 1-ին Ուկրաինական ռազմաճակատի շտաբից գործով մեզ մոտ էր եկել մի փոխգնդապետ: Հենց նա էլ դարձավ իմ ընկերը:

Մենք ծանոթ չէինք չեխերի սովորութիւններին: Տնային պայմաններում առաջին անգամ էինք հանդիպում: Սեղանի շուրջը նստած էր Պատվալների ամբողջ ընտանիքը և մենք՝ սովետական երկու սպա: Բավական երկար զրուցեցինք... Պատերազմից, սովետա-չեխական հարաբերութիւններից, Պրագայի ապստամբութիւններից... Պարզվեց, որ տանտիրոջ ավագ որդին ապստամբութիւն

մասնակից է եղել և որոշ դեր է խաղացել նրանում: Սեղանի վրա նույնիսկ սփռոց չկար: Տանտիրոջ ավագ որդին ինչ-որ բան ասաց իր կնոջը, կինը դուրս եկավ և վերադարձավ կացինը ձեռքին: Ամուսինը վեր կացավ և կացնի օդնությամբ բարձրացրեց տան անկյունի տախտակներից մեկը: Չոքեց ու շշեր հանեց, կինը սրբիչով սրբեց դրանք: Շշերը դրվեցին սեղանին... տարբեր զինիներ, ֆրանսիական կոնյակ և չեխոսլովակյան լիկյոր... 12 շիշ: Բերեցին փոքրիկ գավաթներ: Պատվալն ասաց.

— Այս խմիչքները դնել ենք Չեխոսլովակիայի օկուպացման նախօրեին ընտանեկան տոնի համար, բայց դրանք թաքցրի ու երգվեցի խմել նրանց հետ, ովքեր Չեխոսլովակիան կազատեն ֆաշիստական բռնութիւնից:— Եվ լցրեց գավաթները:

Պատվալի խոսքերը շատ հուզիչ էին:

Համոզվելով, որ նրանք ուտելիք չունեն, ես որոշ բաներ ասացի բարեկամների սովորութիւնները հարգելու անհրաժեշտութիւն մասին, հետո առաջարկեցի մեր երեկոն շարունակել չեխական և ռուսական սովորությամբ. տանտերերը ուրախությամբ համաձայնեցին, դեռ գլխի շրնկներով, թե ինչ կնշանակեր դա: Սեղանին դրվեց բավական առատ ընթրիք, և մենք գոհ եղանք, որ տանտերերը այնքան սիրալիր վերաբերվեցին մեր խոհանոցին:

Հաջորդ առավոտյան Պատվալն առաջարկեց միասին գնալ Պրագա: Ես զբաղված էի. ենթագրեցի, թե նրան մեքենա է պետք, ուստի առաջարկեցի վերցնել իմ մեքենան:

— Ոչ, ես ուզում եմ, որ միասին գնանք,— ասաց նա:

Գնացինք մի փոքր ուշ: Մեզ հետ էին նաև Պատվալի դուստրը՝ Իվաննան, դիվիզիայի թերթի խմբագիր Կրոնրոզը, քաղբաժնի ավագ հրահանգիչ Ստեպանովը և բուժսանդուհարտակի բժիշկներ Չուբինիձեն և Իգիթխանյանը: Պատվալը մեզ տարավ ուղիղ Պրագայի Գրադ (Կրեմլ): Մենք մի անգամ փորձել էինք լինել Կրեմլում, բայց այն փակ էր: Մեզ թողնելով դարպասի մոտ, Պատվալը գնաց ինչ-որ տեղ և վերադարձավ մի խուրձ բանալիներով: Նա մեզ տարավ Կրեմլի բոլոր պալատներն ու տաճարները և քաջահմուտ զիզի պես պատմեց միջնադարյան ճարտարապետութիւն գլուխ-գործոցների մասին: Հետո ուղղվեցինք դեպի «Պրագայի արևը»: Բայց այդ շտեսանք, դեռ գտնվում էր ինչ-որ թաքստոցում: Այն պահել էին հիտլերականներից և դեռ չէին վերադարձրել իր

տեղը: Մերքենան կանգնեցնելով Պրագայի օպերային թատրոնի մոտ, Պատվալը խնդրեց միասին մտնել թատրոն: Արդեն սկսել էին թատրոնի նորոգումը: «Ափսոս», — ինքն իրեն ասաց Պատվալը և ետ դարձավ: Մեր հարցին, թե ինչ էր ուզում ցույց տալ, ասաց.

— Հետո, եղբայրս, հետո:

Վերջապես, կանգ առանք փողոցում, և Պատվալը, խնդրելով սպասել, գնաց: Երկու բոպե անց հինգերորդ հարկից մեզ ողջունեց մի երիտասարդ կին և խնդրեց բարձրանալ վերև: Շքամուտքի մոտ հայտնվեց Պատվալը և ներս տարավ մեզ: Կինը բացեց դուռը, իսկ Պատվալը խնդրեց ներս անցնել՝ ասելով.

— Քույրս է, Մարիան՝ Պրագայի օպերային թատրոնի առաջին դերասանուհին, ինչպես ձեր Բարսովան:

Մինչ այդ Պատվալը չէր խոսել քրոջ մասին: Մենք հասկացանք. նա հպարտանում էր քրոջով:

Մանոթացանք Պատվալովայի ամուսնու հետ, որը մեզ վրա համեստ ու կուլտուրական մարդու տպավորություն թողեց. նա մասնագիտությամբ իրավաբան էր, բայց զբաղվում էր միայն գրականությամբ, պոեզիայով: Ընդունելությունը սրտառուչ էր: Մեզ փոքրիկ դավաթներով սուրճ և օղի հյուրասիրեցին: Մարիա Պատվալովան ամուսնու հետ համեստ էր ապրում: Նրանք համեստ վաստակ ունեին: Երկար գրուցեցինք, շուտով այն պատերազմի թեմայից անցավ կուլտուրայի և արվեստի բնագավառը. մենք պատմեցինք Սովետական Միության արվեստի գործիչների կյանքի մասին: Երբ Կրոնրոդն ասաց, թե ինչպես են Սովետական Միությունում վարձատրվում երգիչ-երգչուհիները և տվեց Բարսովայի անունը, Մարիա Պատվալովան զարմանքից աչքերը շռեց.

— Դա իսկական բուրժուա է:

Ես քաղցրավենիք չեմ սիրում, բայց իմ հանձնակատար Շավիշովիին միշտ քաղցրավենիք էր պահում. ես հյուրասիրում էի երեսաներին: Այս անգամ ես պետք եղավ այն: Հրաժեշտից առաջ ես դերասանուհուն մի տուփ շոկոլադ նվիրեցի:

— Այ քեզ նվե՛ր: Հինգ տարի նման վերաբերմունքի չէի արժանացել: Դուք իմ եղբայրն եք, — անկեղծորեն բացականչեց նա:

Պատվալների ծանոթությունը շուտով պետք եկավ: Մայիսի 15-ի առավոտյան բանակի հրամանատար Լուչինսկին զանգահարեց Շացկովին, ասելով, որ Չեխոսլովակիայի հասարակայնու-

թյան ներկայացուցիչներն ունկնդրություն են խնդրում հրամանատարություն հետ, և նա նպատակահարմար է գտնում, որ հանդիպումը տեղի ունենա 61-րդ դիվիզիայում: Բանակի հրամանատարը հրամայեց պատրաստվել ընդունելությունը, նկատի ունենալով 45—50 մարդ: Հասկանալի է, մենք մանրակրկիտ պատրաստվեցինք ընդունելությանը, որը տեղի բնեցավ ֆաբրիկատիրոջ այգում: Ժամանակը ազատություն էր տալիս մարդկանց ցանկություններին: Չէ որ հենց նոր էր ավարտվել Հայրենական մեծ պատերազմը: Ջախջախվել էր համայն մարդկության ամենաոխերիմ թշնամին՝ գերմանական ֆաշիզմը: Մեր հանդիպումը տեղի էր ունենում ազատագրված Չեխոսլովակիայում, որի ժողովուրդը ավելի քան վեց տարի տառապել էր ֆաշիզմի լծի տակ: Ընդունելությունը վերածվեց մեծ բարեկամության վառ ցույցի:

Մայիսի 16-ին 66-րդ գնդի հրամանատար Վեշտոմովի, 28-րդ բանակի քաղբաժնի տեսուչ Վարդանովի և մի քանի այլ սպաների հետ գնացի Պրագա՝ միտինգի: Չեխոսլովակիա էր վերադարձել պրեզիդենտ էդուարդ Բենեշը: Յան Հուսի հրապարակ տանող բոլոր փողոցները լիփ-լիցուն էին ցուցարարներով: Հրապարակ թողնում էին միայն հատուկ անցագրերով: Բայց մեզանից ոչ ոք անցագիր չհարցրեց, անցագիր ծառայեց սովետական ռազմիկի համազգեստը: Ոստիկանները սիրով մեզ ուղեկցեցին մինչև հրապարակ, իսկ ցուցարարները խիտ բազմության մեջ ճանապարհ բացեցին մեզ համար: Այդպես հայտնվեցինք ամբիոնի կողքին: Ամեն ինչ զարմանալիորեն գեղեցիկ էր: Չեխերն ու սլովակները հանդիսություն էին եկել ազգային տարազով: Չլունափայլ տոնական զգեստներ հագած աղջիկների խումբը շրջապատել էր Յան Հուսի հուշարձանը. բոլորը նստած էին պատվանդանին, հուշարձանի հետ կազմում էին մի ամբողջություն: Ապշեցուցիչն այն էր, որ միտինգի հավաքված հարյուր-հազարավոր մարդիկ, առանց տարիքի տարբերության, միահամուռ, նույն տակտով երգում էին իրենց երկրի հիմնը: Անընդհատ թնդում էր. «Ադ ժիե Սովետսկի Սվազ», «Ադ ժիե Ռուդա Արմատա», «Ադ ժիե մարշալ Ստալին», «Ադ ժիե մարշալ Կոնև», «Ադ ժիե Չեխոսլովակիա»: Ցուցարարները վանկարկում էին այդ լողունները, նրանց միանում էր փողոցներում հավաքված բազմությունը: Այնուհետև լսվում էր մի քանի անգամ կրկնվող «Նազդար»-ը: Չեխերի ու սլովակների սիր-

տըն ու հոգին լի էին Սովետական Միության նկատմամբ երախտագիտութեան ու շնորհակալութեան զգացմունքներով:

Չեխոսլովակիայում դիվիզիան մնաց ավելի քան մեկ ամիս: Էլբայի ափերից նա վերատեղաբաշխվեց Դոկսի քաղաքից արևելք, իսկ հետո Սպլավի կայարանի շրջանում: Դիվիզիայի շտաբը տեղավորվեց Սպլավի ամառանոցային փոքրիկ քաղաքում: Այնտեղ բնակչություն չկար, գերմանացի բնակիչները հեռացել էին: Դիվիզիայի վերատեղաբաշխումը մեզ հնարավորություն տվեց ավելի լայն պատկերացում կազմել գերմանական ֆաշիզմի նկատմամբ չեխերի ու սլովակների տածած ատելություն մասին: Ատելություն՝ բառիս իսկական իմաստով: Բնակչությունը պահանջում էր նացիստների նկատմամբ կիրառել խստագույն պատիժ:

Մի անգամ զանգահարեց փոխգնդապետ Վեշմետովը և հայտնեց, որ ինձ մոտ է ուզում գալ Դոկսի քաղաքի կուսակցական կազմակերպության քարտուղարը: Քարտուղարը բողոքում էր պրեզիդենտ Բենեշից: Իմ բոլոր ջանքերը՝ բացատրելու, որ մենք չենք կարող խառնվել Չեխոսլովակիայի ներքին գործերին, քաղաքային կազմակերպության քարտուղարը հաշվի չառավ: Նա ասաց, որ Դոկսիի կոմունիստներն ու առաջադեմ ուժերը հավանություն չեն տալիս բոլոր գերմանացիներին Չեխոսլովակիայից արտաքսելու Բենեշի քաղաքականությանը: Գերմանացիների մեջ կան կոմունիստներ ու պրոգրեսիվ մարդիկ, որոնք չեխերի հետ մասնակցել են ընդհատակյա աշխատանքին ու նացիստների դեմ ուղղված պարտիզանական պայքարին, մենք չենք ուզում, որ նրանք արտաքսվեն մեր երկրից:

Ընդհատելով քարտուղարին, ես ասացի, որ այդ հարցով կարող է դիմել ՉԿԿ Կենտկոմին: Բայց նա շարունակում էր պնդել, որ մենք միջամտենք: Նա խնդրեց, որ իրեն կապենք Ստալինի հետ: «Բենեշը Արևմուտքի բարեկամն է, — ասաց նա, — Ստալինը պետք է այդ մասին իմանա»: Քարտուղարը գտնում էր, որ այսուհետև մենք մի ամբողջություն ենք և մեր հոգսերի մասին պետք է իմանա Ստալինը: Շատ դժվարությամբ այդ քարտուղարին համոզեցինք, որ Մոսկվայի հետ կապվել հնարավոր չէ, բացի դրանից, Չեխոսլովակիայի ներքին կյանքի հարցերը պետք է լուծեն իրենք՝ չեխերն ու սլովակները:

◆
Հայրենիք վերադառնալու հրամանը մեր ռազմիկներն ընդունեցին մեծ ցնծությամբ: Հունիսի 14-ին դիվիզիան ոտքի ելավ հրետանին, ինքնագնաց հրանոթները, ականանետներն ու ծանր զենքի մյուս տեսակները, թիկունքային հիմնարկները իրենց ունեցվածքով և ավտոտրանսպորտը ուղարկվեցին երկաթուղով: Հետևակի հետ մնաց թիկունքային զորքերի այն մասը, որը ռազմերթի ընթացքում սպասարկում էր զորքերին:

Չեխոսլովակյան Դոկսի, Միմոն, Յարլոնի քաղաքների և մյուս բնակավայրերի բնակիչները ջերմորեն ճանապարհեցին մեզ: Հետագա ճանապարհն անցավ բազմաթիվ քաղաքներով ու դյուղերով՝ Յիտտաու-Ֆրիդլանտ-Բրեսլաու (Բրեսլավլ)-Լյուբլին-Բրեստ-Պինսկ ընդհանուր ուղղությամբ: Ամենուրեք բնակչությունն ու կահաստանի դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչները դիվիզիայի անձնակազմին ընդունում ու ճանապարհում էին երախտագիտությամբ, ծաղիկներով և Սովետական Միության հետ հավերժ բարեկամության կոչող լողունգներով: «Օջա» (Բարեկամություն) լավում էր ամենուրեք: Ռազմերթն անցնում էր էտապներով՝ հանգստի համար երկօրյա և մեկշաբաթյա կարճատև դադարներով:

Լյուբլին քաղաքից արևմուտք մեր դադարի ժամանակ մենք իմացանք, որ Լյուբլինում դիվիզիային կդիմավորի լեհական կառավարությունը: Հուլիսի 28-ի ժամը 9-ին քաղաքի ծայրամասում դիվիզիային ողջունեց լեհական բանակի վաշտը և նրան ուղեկցեց գլխավոր փողոցով: Քաղաքի հրապարակի ամբիոնի վրա էին լեհական կառավարության անդամները, Լյուբլինի ղեկավարները,

28-րդ բանակի նոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Շահրոնովը և 128-րդ կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Բատիցկին: Նրանք ջերմորեն ողջունեցին դիվիզիայի անձնակազմին: Փողային նվազախմբի երաժշտության ներքո գնդերն անցան հանդիսավոր երթով: Գլխավոր փողոցի երկարությամբ և հրապարակում քաղաքային բնակիչների մեծ բազմություն էր հավաքվել: Նրանք եկել էին ծաղիկներով, որոնք շաղ էին տալիս զորասյուների առջև, նվիրում էին ռազմիկներին: Հանդիսավոր երթն ուղեկցվում էր «Օջա», «Կեցցե կարմիր բանակը», «Բարեկամություն» բացականչություններով:

Բազմօրյա ռազմերթն անցավ կազմակերպված: Կարգապահությունը, կարգ ու կանոնը անթերի էին:



Ամառային արևը թեքվում էր արևմուտք, դիվիզիայի զորասյունները շարժվում էին դեպի ՍՍՀՄ պետական սահմանները: Մինչև Բրեստ շատ քիչ էր մնում: 1945 թվականի օգոստոսի 1-ն էր: Զորասյուններում աշխույժ խոսակցություն էր գնում: Մարդիկ հիշում էին իրենց և ընկերների անցած մարտական ուղին, դրվագներ պատմում գանազան մարտերից... Ըստ էության սա նշանակում էր, որ նրանք ոչ-պաշտոնական հաշիվ էին տալիս, թե ինչով են վերադառնում հայրենիք: Հայրենական պատերազմը ռազմիկների բարեկամությունը ամրապնդեց արյունով, իսկ արյունը չի կիսվում: Չի կիսվում նաև արյունով ողողված հողը:

Դիվիզիան դեպի հայրենիքի սահմաններն էր գնում մարտական պատկառելի հաշվեկշռով. գերմանական օկուպանտներից ազատագրել էր Սովետական Միության 560 քաղաք ու գյուղ, որոնց թվում Նիկոպոլը, Նիկոլանը, Կախովկան, Բրեստը. եղբայրական լեհաստանի 9 քաղաք ու շատ բնակավայրեր. Գերմանիայում գրավեց 100-ից ավելի խոշոր բնակավայր և մասնակցեց Բեռլինի գրավմանը. ազատագրեց եղբայրական Չեխոսլովակիայի տասնյակ բնակավայրեր: Մարտերի ընթացքում դիվիզիան ոչնչացրեց 27.500 հիտլերյան զինվոր ու սպա, վերցրեց 8740 գերի: Ոչընչացրեց ու հակառակորդից գրավեց 156 տանկ, 698 հրանոթ ու ականանետ, 1830 զնդացիր, 1000 ավտոմեքենա, ռազմամթերքի և

պարենամթերքի 88 պահեստ, 322 շոգեքարշ, 6800 վագոն և ռազմական այլ գույք:

Դիվիզիայի մարտական դրոշը զարդարում են լենինի, Կարմիր դրոշի, Սովորովի 2-րդ աստիճանի շքանշանները, ինչպես և «Նիկոպոլյան» անվանումը. 66-րդ գնդինը՝ Սովորովի 3-րդ աստիճանի շքանշանը. 221-րդ գնդինը՝ Կուսուզովի 3-րդ աստիճանի շքանշանը և «Բեռլինյան» անվանումը. 307-րդ գնդինը՝ Կարմիր դրոշի շքանշանը. 56-րդ հրետանային գնդինը՝ Սովորովի 3-րդ աստիճանի շքանշանը. 112-րդ սակրային գումարտակինը՝ Ալեքսանդր Նևսկու շքանշանը: Դիվիզիայի ռազմիկներն արժանացան 14.341 կառավարական շքանշանի ու մեդալի: Անձնակազմի մեծամասնությունն ստացավ «Կովկասի պաշտպանության համար», «Քյոնիգսբերգի գրավման համար», «Բեռլինի գրավման համար», «Պրագայի ազատագրման համար» մեդալներ:

Բրեստ ժամանելու նախօրեին ես մոտեցա սահմանապահներին՝ դիվիզիայի ընդունման հարցում պայմանավորվելու: Նրանց հետ դուրս եկանք զորքերին դիմավորելու: Գլխային զորասյունը կանգնեց Բուգի կամուրջի մոտ, առաջ թողնելով դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Շացկովին: Սահմանի մոտ, կամարի վրա գրված էր՝ «Փառք հաղթողներին»: Փողային նվազախումբը նվագեց քայլերգը: Մարդկանց բազմություն հավաքվեց: Զորքերն անցան կամուրջը:

Հենց որ գլխային զորասյունն անցավ կամուրջը, մարդիկ, կարծես հրամանով, թափվեցին գետին ու սկսեցին համբուրել հայրենի հողը: Տարեց գեներալի աչքերում արցունքներ երևացին: Հուզմունքից սեղմվեց կոկորդս: «Ահա նա, իսկական հայրենասիրությունը», — մտածեցի ես:

Թագմիկները համբուրեցին հայրենի հողը, որը կանգուն մնաց մեր զինվորի ոտքի տակ և որպես սրբազան մասունք օգնեց հաղթելու անարգ թշնամուն: Նրանք այդ համբույրով նոր երդում էին տալիս, իրենց պատրաստակամությունը հայտնում՝ կյանք շինաչել և պաշտպանել լենինյան լույսով պսակված սովետների երկրի սրբազան հողը: Դա նաև պատվիրան էր սերունդներին՝ աչքի լույսի պես պահպանել սովետական հայրենիքը:

ՎԵՐՉԱՔԱՆԻ ՓՈՒՍԱՐԵՆ: 60-ՕՐՅԱ ԵՐԹ

Հետպատերազմյան զարգացումը լրիվ հաստատեց Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի հեղափոխական բնույթը: Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի կազմավորումը, իմպերիալիզմի գաղութային սիստեմի կրախը, համաշխարհային հեղափոխական պրոցեսի և հակաիմպերիալիստական ընդհանուր ճակատի հզոր հոսանքի ստեղծումը երկրորդ համաշխարհային պատերազմում Սովետական Միության մեծագույն հաղթանակի հեղափոխականացնող նշանակության էությունն է: Յուրաքանչյուր սթ, ով կատարել է իր պարտքը մեծ Հոկտեմբերի նվաճումների պաշտպանության գործում, իր լուծան է մուծել ֆաշիզմի նկատմամբ կոմունիզմի տարած հաղթանակի մեջ: Շատերն ընկան այդ պայքարում, փառքով պսակեցին իրենց անունները, հավիտյանս մտան կոմունիզմի դադափարների համար մարտնչողների շարքերը:

Ընթերցողը իսկույն կարող է նկատել, որ այս աշխատության գլխավոր նպատակն է՝ գործողությամբ ցույց տալ Սովետական Միության կոմունիստական կուսակցության և լենինիզմի գաղափարների վճռական դերը ֆաշիզմի հանդեպ մեր հաղթանակն ապահովելու գործում և այդ լույսի տակ պատմել զորքերի շրջանում տարվող քաղաքական աշխատանքի մասին, ցույց տալ, թե ինչպես սովետական մարդիկ հանուն մեծ Լենինի գաղափարների, հանուն հայրենիքի շին խնայում իրենց կյանքը և քաջաբար կռվում էին ատելի թշնամու դեմ:

Միջուկային զենքի դարում պետական քաղաքականության քարձր առաքինությունը կայուն խաղաղության ապահովումն է, սոցիալական տարբեր կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքները ազրեսիայի ուժերի դեմ ուղղելը:

Նման քաղաքականությունը ապահովում է սոցիալիզմի ու կոմունիզմի խաղաղ կառուցման պայմաններ, նպաստում է ազգային անկախությունն ստացած ժողովուրդների հետամնացությունը լիկվիդացնելու գործի արագացմանը, ժողովուրդներին մոբիլիզացնում է ազրեսիայի քաղաքականության դեմ մղվող պայքարի: Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը խաղաղության իր քաղաքականությունը կենսագործում է սոցիալիստական երկրների հետ համատեղ: Խաղաղության հաստատուն երաշխիք է հանդիսանում նաև սոցիալիստական համագործակցության երկրների տնտեսության ու էկոնոմիկայի անշեղ աճը:

Կայուն խաղաղության համար մղվող պայքարի հաջողությունները շեն բացառում իմպերիալիզմի ո՛չ ազրեսիվ պլանները, ոչ էլ, առավել ևս, շեն փոխում նրա գիշատիչ-զավթողական բնույթը: Այսօր շկան հիտլերներ, բայց կան նեոֆաշիստներ, դեռ պահպանվում է իմպերիալիզմը: Հիտլերյան զեներալները դեռևս գոռում են ունանշի մասին: Գեներալ Գուդերիանը հայտարարել է, որ «Այն տեղությունները, որոնք իր ժամանակին հավանություն են տվել գերմանացիներին արևելյան շրջաններից արտաքսելու շարամիտ որոշմանը, այժմ, հավանաբար, արդեն հասկացել են իրենց սխալը: Թող նրանք այդ սխալն ուղղելու քաջությամբ զինվեն և օգնեն մեզ հասնելու մեր պահանջի կատարմանը»¹: Ինչպես հայտնի է, վերջինները հրավերի շսպասեցին: Նրանք ստեղծեցին ռազմա-քաղաքական բլոկներ և բլոկների բլոկը՝ ՆԱՏՕ-ն, կապիտալիստական աշխարհի ընդարձակ տերիտորիաները ծածկվեցին ռազմական բաղաներով: Ինչպես անցյալում «Բարբարոսայի» պլանի, այժմ էլ ՆԱՏՕ-ի վրա հենվելով է հիտլերյան զեներալ ֆոն Մանդլիֆելը առաջարկում ոչնչացնել սովետական պետությունը: Գուդերիանը ճգնում է Արևմտյան Գերմանիայի երիտասարդությանը համոզել, որ հիտլերականները «չպետք է ամաշեն» Սովետական Միության օկուպացված տերիտորիաներում իրենց կատարած գաղանությունների համար, գտնում է, որ նորից «պատերազմի որոշումը պետք է փնտրել Գերմանիայից արևելք»²: Եվ, կրկնելով Ֆրիդրիխ II-ին,

¹ Гейту Гудерман. Можно ли защитить Западную Европу, М., 1954, стр. 51.

² Նույն տեղը էջ 26:

լկտիաբար առաջարկում է. «Ռուսներին պետք է կրկնակի գնդակահարել և հետո էլի հրել, որ նրանք վերջապես ընկնեն»¹:

Իհարկե, ժամանակները փոխվել են, փոխվել է համաշխարհային ուժերի հարաբերակցությունը հօգուտ սոցիալիզմի, ագրեսորը չի կարող անպատիժ մնալ, դրված է միջազգային լարվածության թուլացման հիմքը: Բայց միջազգային կոմունիզմի առաջին պետական օջախի՝ ՍՍՀՄ-ի, և սոցիալիստական համագործակցության երկրների պաշտպանությունը մնում է որպես կարևորագույն հարցերից մեկը: Միայն մեր հզորությունը և մեր երկրի ու եղբայրական սոցիալիստական երկրների խաղաղ գոյակցության քաղաքականությունը ագրեսորին կատիպի հրաժարվել իր խելացնոր պլաններից, իսկ տարբեր հասարակական կարգ ունեցող երկրներին՝ համագործակցել մեզ հետ:

Հայրենական մեծ պատերազմը ցուցադրեց սովետական սոցիալիստական կարգի անհաղթահարելի ուժը: Սովետական իշխանությունն արհմիներին կոմունիստական կուսակցությունը լենինիզմի գաղափարները մարմնավորեց սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարի մեջ, դրանք վերածեց սովետական մարդկանց հասարակական էությունը բնորոշող գործոնի: Անխորտակելի է ՍՍՀՄ ժողովուրդների բարոյա-քաղաքական միասնությունը և անխախտ՝ եղբայրական բարեկամությունը: Լենինի կուսակցությունը նրանց դաստիարակել է հեղափոխական տրադիցիաների ոգով, կոփել ու միաձուլ է դարձրել: Սովետական հայրենասիրության և մեր ժողովրդի միաձուլության փայլուն դրսևորումը եղավ ֆաշիստական անողոր թշնամու դեմ մեր տարած պատմական հաղթանակը: Սովետական մարդկանց համար խորթ է ազգային ամեն տեսակ սահմանափակությունը: Պատմության մեջ ոչ մի ժողովուրդ չի հասել և չի կարող հասնել բարոյա-քաղաքական այնպիսի միասնության, որին հասել է բազմազգ սովետական ժողովուրդը՝ սոցիալիզմի ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների հիման վրա:

Սովետական հայրենասիրության դաստիարակումը վերացական հասկացություն չէ: Պայքարի յուրաքանչյուր էտապում Սովե-

տական Միության կոմունիստական կուսակցությունը սահմանում է երկրի զարգացման ու Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանության գլխավոր խնդիրները: Հայրենական պատերազմի տարիներին ռազմիկների հայրենասիրական դաստիարակության մեջ կարևոր տեղ էին զբաղում Սովետական Միության ժողովուրդների մարտական հայրենասիրական տրադիցիաները՝ նրանց անցյալի հերոսականությունը: Այդ տրադիցիաները մտել են ՍՍՀՄ զինված ուժերի մարտական ու բարոյական զինանոցը: Ռուսական բանակի, նրա զինվորի նվիրվածությունը հայրենիքի և իր հրամանատարի հանդեպ դարձել են սովետական ռազմիկների սեփականությունը: «Չապաև» կինոֆիլմում ցույց է տրված, թե ինչպես մահացու վիրավոր Պետկան վերջին պահին գլուխը բարձրացնում է՝ համոզվելու համար, թե արդյոք Չապաևը հասցրե՞ց լողալով անցնել գետը: Մարտերում մենք բազմիցս համոզվել ենք դրանում, ամբողջ կյանքում երախտապարտ մնալով ռուս զինվորին: Ոչ մի պատահականություն չկա այն բանում, որ Հայրենական պատերազմում ևս ռուս զինվորն օրինակ դարձավ բոլորի համար:

¹ Гейту Гудерман. Можно ли защитить Западную Европу, М., 1954, стр. 26.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Երկու խոսք	3
I. Պատերազմի սկիզբը	5
II. Կվարդիային՝ փառք	15
1. Առաջին փորձություն	19
2. Կլեյստի տանկերի դեմ-հանդիման	26
3. Գոնի Ռոստովի համար մղված մարտերը	56
4. Քաղրամնում	64
5. Գերայցեկոյի մոտ	83
III. Ղրիմի ռազմաճակատում	102
1. Առաջին տպավորությունները	103
2. Մանոթություն դիվիզիայի հետ	106
3. Պաշտպանության առօրյան	121
4. Գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի ջախջախումը	127
5. Կոյ-Ասանի մարտերը	135
6. Ռազմաճակատի ռեզերվում	139
7. Տաղնապալից օրեր	154
8. Կերչում	170
9. Անցած օրերի տպավորություններ	178
IV. Կովկասի նախալեռներում	187
1. 61-րդ հրաձգայինը	188
2. Լեռնանցքների պաշտպանությունը	191
3. Անհետաձգելի հոգսեր	198
4. 50 օր լեռներում	201
V. Կուրանում	218
1. Հարձակման հետքերով	218
2. Առաջին մարտերը	224
3. Մարտեր Ղրիմակայայի մոտ	230

4. Մահվան բացատր	239
5. 114,1 բարձունք	244

VI. Ուկրաինայի տափաստաններում 251

1. Գերմանացիների պաշտպանության ճեղքումը Մոլոչնայա գետի մոտ: Կախովկայի ազատագրումը	251
2. Կարմրագրոշ-նիկոպոլյանը	260
3. Գնեպրի գետանցումը	270
4. Նիկոլանի ազատագրումը	276

VII. Քելոռուսիայի ազատագրման գլխավոր հատվածի ուղղությունը 280

1. Զորակայանի ռեզերվում	280
2. Ճեղքման զորքերի հետքերով	284
3. Գլխավոր հատվածի ուղղությամբ	289
4. Հակառակորդի շրջապատումը Բրեստում	295

VIII. Ահաստանի ազատագրման մարտերում 304

1. Արևմտյան Բուդից մինչև Վարշավյան Պրազա	305
2. Ազատագրված լեհերը	312
2. Նարևի գետանցումը	316

IX. Պրուսականության միջնաբերդում 323

1. «Ահա այն՝ անիծյալ ֆաշիստական Գերմանիան»	324
2. «Ռուսները միշտ հաղթել են պրուսացիներին»	329
3. Հիսուն օր պաշտպանությունում	334
4. Ֆաշիստական ամրությունների միջով	349
5. Հիտլերականները իրենց մասին	382

X. Բեռլինյան օպերացիան 389

1. «Գեպի Բեռլին»	389
2. Ցատկ դեպի Բեռլին	397
3. Բեռլինում մղված մարտերի առաջին օրերը	404
4. Մարտեր Բեռլինի կենտրոնում	417
5. Մարտեր անտառներում	429

XI. Գեպի Պրազա 439

1. Պատերազմի վերջին օրերը	439
2. Զեխոստովակիայում	444
Վերջաբանի փոխաբեն: 60-օրյա երբ.	451

Սուրեն Հակոբի Քովմասյան

Մեծ հայրենականի նամականերով

Сурен Акопович Товмасын

ДОРОГАМИ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван — 1975

Խմբագիր՝ Վ. Մ. Սահակյան

Նկարիչ՝ Վ. Ք. Մանդակունի

Գեղ. խմբագիր՝ Գ. Գ. Սարգսյան

Տեխն. խմբագիր՝ Ի. Գ. Ավետիսյան

Վերատպող սրբագրիչներ՝ Լ. Ն. Թեկոյան,

Ս. Ք. Մարկոսյան

Հանձնված է շարվածքի 10/III 1975 թ.: Ստորագրված է
տպագրության 15/IX 1975 թ.: Քուղթ տպագրական № 1,
60×84¹/₁₆, տպագր. 28,75 մամ. = 26,73 պայմ. մամ., հրատ.
22,2 մամ.: Պատվեր 1384: ՎՖ 07845: Տպարանակ 5000:
Գինը՝ 1 ս. 13 կ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլի-
գրաֆիայի և գրքի անտրի գործերի պետական-կոմիտեի
№ 6 տպարան, Երևան, Քուսանյան փողոց № 23/1: